Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Vwb V
188

1999

ՍԻՈՒՆ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՆՎԱՂԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1895.

h. 8-186.

Дозволено Цензурою. Тифлисъ, 24-го Февраля 1895 года

ՀՍՍՌ-Արմ.-ՍՍՀ
Ա. ՄՅՈՒՆԻԽԻՈՍԻ ԱՆՎԱՆ
g. 188

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿ

Իբրև հոգևոր որդի Ձերդ Վեհափառու-թեան՝ պարտաւոր զգացի արտայայտել իմ ամե-նախորին երախտագիտութիւնը մի վայելուչ ընծայով: Այս պատճառաւ երկար մտածեցի ըն-ծայել իմ Հոգևոր Ծնողին այնպիսի մի նուէր, որ թէ արժանաւոր լինի և թէ մշտակայ: Բայց որովհետև սիրում է Ձերդ Վեհափառութիւն հայրենի հնութիւնները և աստուածակոխ Ս. երկիրը, ինչպէս ամենևին է Ձերդ Հայրութեան արտաշարժ և հոգեշունչ բանահիւսութիւնից— «Հրաւիրակ երկրին Արարատայ» և «Հրաւիրակ երկրին Աւետեաց», վասն որոյ բարւոք համա-րեցի նուիրել Հոգեծին և Բազմերախտ Հօրդ իմոյ՝ «Արցախ»-ը, որ պատկերացնում է Մեծն-Հայաստանի 15 նահանգներից մէկի հայկական աւերակների և հնութեանց փոշիները և Յի-սուս Քրիստոսի ձեռագիր աւետարանների յի-շատակարանների փշրանքները:

Յուսալով արժանանալ ընդունելութեան և Հայրական օրհնութեան մնամ նուաստ որդի Ձեր Հոգևոր

Մ. եպիսկոպոս Բարխուտարեանց:

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարները:

Մէն մի հայրենի նահանգ հետազօտելն անկ է ընկերութեանց եւ հարուստ անձանց, որպէս զի կարողանան նիւթականի ուժով՝ մանագէտ, հմուտ անձանց եւ ականաւոր լուսանկարների ձեռնով՝ ի լոյս հանել նախնական ամեն մի հնութիւն եւ արձանագրութիւն իւրեանց իսկական ոճով եւ ձեւերով: Սակայն տեսնելով որ ժամանակի անողոք ձիրաններն լափում եւ եղծում են մեր թանկագին հայրենիքի—Արցախի—ամենապատուական հնութիւնները եւ արձանագրութիւնները. տեսնելով որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան աւանդները. տեսնելով որ ցեցերն կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները եւ խոնաւութիւնն ու անհոգութիւնն կլանում են պատմական ակունքները. վերջապէս տեսնելով որ ընկերութիւններն եւ հարուստներն ցարդ չձեռնարկեցին Արցախի հետազօտութեան գործին, վասն որոյ պարտք համարեցի սիրով կրել ամեն

նեղութիւն, աղքատօրէն հետազօտել, գէթ ազատել մնացեալ յիշատակարանները աւերիչ ձեռքերից, ցեցերից եւ խոնաւութիւնից եւ ժամանակի ճիրաններից եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մանագէտների համար: Զօր օրինակ մեղուն ծաղկից ծաղիկ ոստոստելով հաւաքում է ծաղկանց ընտիր հիւթերը եւ կազմում պատուական մեղր. նոյնպէս շրջելով գաւառից գաւառ, գիւղից գիւղ, աւերակից աւերակ եւ սարից դաշտ՝ կազմեցի «Արցախ-ը»:

Գործիս մէջ յականէ յանուանէ նշանակեցի Արցախեան նահանգի նախկին եւ փոփոխեալ սահմանագլուխները եւ սոցա մէջ գտնուած լեռները եւ լեռնակները, դաշտերը եւ դաշտակները, գետերը եւ գետակները, մեծ-աղբիւրները եւ լճակները, նաւթահանքը եւ հանքային ջուրերը, ոսկու եւ արծաթի, պղնձի եւ հիպի, երկաթի եւ պողպատի, երկանաքարի եւ շինութեանց քարերի հանքերը, քարայրերը եւ վիմափորները, անտառները եւ մացառները, պտղատու եւ անպտուղ ծառերի եւ թփերի տեսակների անունները: Երկասիրութեանս մէջ զետեղեցի ինքնաբոյս եւ ցանուած ծանօթ բանջարեղինաց եւ կանաչեղինաց, ծաղիկների եւ խոտերի, ընտանի անասնոց եւ գրաստուց, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ գազանաց, քնիկ եւ երթեւեկ հաւքերի, սողունների եւ զեռունների, օձերի եւ միջատների, ճանճերի եւ մժղուկների եւ միանգամայն տեղական քերքերի տեսակների անունները (տեղ տեղ տեղական քարբառով):

Ըստ հափու ձեռնհասութեանս որոշակի նշանակեցի Ուտիական եւ Արցախական բոլոր գաւառների սահմանները [1]) քացի մի քանի գաւառների միջնասահման գծերից,

[1]) *Գաւառների սահմանագծերը որոշելու համար՝ հնարաւոր զգուշութեամբ հետեւած եմ պատմութեանց, վանքերի արձանագրութեանց, մի քանի ձեռագիր աւետարանների յիշատակարաններին, Աղուանից կաթուղիկոսներին տուած շահական հրովարտակներին, Էջմիածնի և Աղուանից կաթուղիկոսների կոնդակներին մատնանիշ արած սահմանագծերին և բազմադարեան չարաշահած աւանդութեանց կանոնի զօրութիւն ստացած սրամադրութեանց.*

զորս անհնարին եղաւ ճշտիւ որոշել, վասն զի չկային միջնագիծ սահմանները որոշող բնական նշանները, ինչպէս են գետերը, ձորերը, լեռները, եւայլն: Իսկ մնացեալ բոլոր գաւառների չորս սահմանագլուխները որոշելուց յետոյ՝ կարգաւ նշանակեցի նոյն չորս սահմանների միջեւ գտնուած շէն, կիսաւեր եւ աւերակ քաղաքների եւ գիւղերի, վանքերի եւ անապատների, մատուռների եւ բեմերի, բերդերի եւ դղեակների տեղը, դիրքը, անունները, բնակչաց ծխաթիւը, արականաց եւ իգականաց որքանութիւնը, քահանայից եւ եկեղեցեաց քանակութիւնը, միամեայ ծնելոց, պսակելոց եւ ննջեցելոց թիւերը, վարելահողերի եւ պտղաբերութեանց աստիճանները, օդի, կլիմայի եւ ջրի յատկութիւնները եւ ամենից երկար ապրողի տարեթիւը:

Համառօտ ծանօթութիւնները գրեցի մէն մի երեսի ստորոտում, իսկ ընդարձակները՝ գլխիս վերջում, ուր առանձին առանձին զետեղուած են նաեւ բոլոր յատուկ անուանց, շէն եւ աւերակ քաղաքների, գիւղաքաղաքների, գիւղերի, վանքերի եւ բերդերի ցանկերն եւս: Այս ամենը յայտնելուց յետոյ՝ յայտնում եմ նաեւ.

Ա. Հետազօտութեանց ժամանակ ոչ կռատանց հետք գտայ եւ ոչ մեհեանների, ոչ Արցախական եւ ոչ Ուտիական նահանգներում: Միայն գտայ որ կռապաշտ դարերի ընթացքում ամփոփուած են ննջեցեալներն չորս ձեւով.

Նախ՝ ահագին, խեցեղէն կարասներում:

Երկրորդ՝ երեք ահագին քարերի տակ՝ կոնկի վերայ երկարցրած:

Երրորդ՝ մեծ մեծ քարերի տակ նստեցրած դիրքով:

Չորրորդ՝ աւազանանման վիմափոր տապաններում, որք ունին եւ կափարիչ քարեր: Ուրախանչիւր ամփոփեալ, թէ արական եւ թէ իգական, իւր հետ ունի զերեզմանում իւր զէնքերը եւ զարդերը: Բացի իգականաց զարդերից լինում են խեցեղէն պուլիկներով լի ուլունքներ:

Բ. Մի մղոնը գործ ածած եմ 7 վերստի տեղ, այլապէս 7 վերստն հաւասար է մի մղոնի:

Գ. Չափելու համար գործ ածած եմ մետր չափը, որովհետեւ զրեթէ ընդհանրացած է չափս ամենուրեք:

Դ. Անխտիր չափած չեմ բոլոր վանքերի, եկեղեցիների եւ բերդերի երկարութիւնները եւ լայնութիւնները, այլ միայն չափած եմ հարկ համարածներս:

Ե. Գործ ածեցի ժողովրդական սեռ բառը, որ կարճ, զեղեցիկ եւ իսկական իմաստը յայտնող է եւ որ նշանակում է լեռների եւ լեռնակների թրաձեւ երկարած զագաթնագիծը: Ըստ մեր կարծեաց սեռ արմատիս հետ բարդուած է շարականի սեռակնածել սեռ-ակն-ծել բառն. այսպէս է եւ ճախարակի իլկի լիսեռն, լի-սեռ բառն:

Զ. Առանց ծանրանալու ընդօրինակեցի բոլոր գրչագիրների յիշատակարաններից (արժան համարուած) հատուածները եւ պատմական հետաքրքիր կտորներ եւ վանքերի, եկեղեցիների, անապատների, մատուռների, ապարանների, խաչարձանների, մատնաքների, եւ մահարձանների արձանագրութիւնները, մանաւանդ պատմականները:

Է. Արցախեան ջրերից գետ անուանեցի միայն Թարթառը, Հակարին եւ Աղստեւը, իսկ գետակ եւ վտակ մնացեալ ջուրերը, քանզի ամբողջ ամառ եղանակներում չեն հասնում կուր գետին:

Ը. Համարեա թէ շատ լեռների, լեռնակների, բլուրների եւ բլրակների եւ սեռերի վերայ արձանացած են վաղեմի, քարեայ, անպաճուճ եւ անարձանագիր խաչեր: Այս անիսօս խաչարձանների մասին աւանդութիւն ասում է. Մի մասն տնկուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի հրամանաւ, մի մասն Ս. Գրիգորիսի եւ միւսն՝ Ս. Մեսրովպի:

Թ. Հնարաւոր եղածին չափ նշանակեցի ուսումնարանաց անունները, թիւը, աշակերտաց որքանութիւնը եւ դրամական մտից եւ ելից քանակութիւնը:

Ժ. Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպ-

հական վանքը եւ իւր առանձին զաւառակալ առաջնորդը միաբաններով հանդերձ, որ նստելով իւր իսկ վանքում հովուած է նոյն զաւառի քանաւոր հօտը. օրինակ Դիզակ զաւառն իբրեւ եպիսկոպոսարան նախ ունեցած է Դիզափայտ վանքը, ապա Կաւաք, ապա Գտիչ եւ յետոյ Սպիտակ-Խաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հիրհերի տաճարը եւ երբեմն Քոշիզի շինութիւնը. Խաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-իրանաց վանքը եւ Մայրաքաղաք, Ըռստակ զաւառն՝ Դատի վանքը, Ջրաբերդն՝ Ջրվշտկի կամ Եղիշ-առաքեալի վանքը, Մեծ-Կողմանք կամ Կիւլստանն՝ նախ Հոռեկայ եւ ապա Ամենափրկիչ վանքերը, Գարդմանն նախ Մշկնաքերդ եւ յետոյ Թարգմանչաց վանքերը, Փառիսոն՝ նախ Փառիսոսի, ապա Խորանաշատի եւ յետոյ Զարեքայ վանքերը, Քուստի կամ Քաւս զաւառն Շիմուրատայ եւ Վարագայ վանքերը, եւայլն, եւայլն: Դեռ 1828-ին շէն եւ պայծառ եղած են վանքերս, ինչպէս վկայում են ականատեսները: 1764 թուին հետեւեալ վանքերում զահակալում էին Աղուանից հետեւեալ եպիսկոպոսները

Մելքիսեթ արքեպիսկոպոս առաջնորդ Եղիշաոաքեալի,
Ազարիա եպիսկոպոս „ Հոռեկայ,
Զաքարիա եպիսկոպոս „ Գանձակի,
Իսրայէլ արքեպիսկոպոս „ Թարգմանչաց,
Օհաննէս „ „ Փառիսոսի վանից:

Հայց յայտնի է թէ Աղուանից կաթուղիկոսութեան մահից յետոյ, այս է 1828 թուականից յետոյ վանքերն հետզհետէ սկսած են զրկուիլ եւ անզաւականալ միաբանական խմբերից եւ անհնամ մնալով քայքայուիլ մեծ մասամբ: Լուսահոգի Բաղդասար մետրապոլտի կենդանութեան ժամանակ շէն եւ պայծառ տեսած եմ Եղիշ-առաքեալը, Հին մասը, Գանձասարը, Ս. Յակովբը, Պտկեսքերզը, Ամարասը, Գտիչը եւ Սպիտակ-Խաչը եւ Ղեւոնդեանց անապատը վանահայրերով, միաբաններով եւ ուսումնարաններով:

Զոր օրինակ քաղաքական քուռն հոսանքներից ստիպ-

եալ տեղից տեղ փոխադրուած է յաճախակի Հայոց ընդհանրական վեհարանն, նոյնպէս ստէպ ստէպ տեղից տեղ փոխադրուած է եւ Աղուանից կաթուղիկոսարանն. որ հաստատուած է

Ա. Դարբանդ կամ Ձորա.
Բ. Գիս (ըստ աւանդութեան).
Գ. Պարտաւ
Դ. Կթողկոսարան (Դոնի շինի հանդէպ).
Ե. Եղիշ-առաքեալ կամ Ջրվշտիկ
Զ. Գանձակ,
Է. Քարահերձ.
Ը. Խաչի վանք,
Թ. Հաղբատ.
Ժ. Գանձասար.
ԺԱ. Ջալէթ
ԺԲ. Վերստին Գանձասար, ուր եւ վախճանուած է կաթուղիկոսութիւնն Աղուանից եւ թաղուած վերջին Սարգիս կաթուղիկոս Ջալալեանցի գերեզմանում: Աղուանից կաթուղիկոսների մասին զրելու եմ «Աղուանից պատմութեան» մէջ եւ ոչ այստեղ:

ԺԱ. Որովհետեւ արդէն զրած եմ «Աղ. երկ. եւ Դրացիք» զրքում, վասն որոյ աւելորդ համարեցի զրել Արցախի կրօնական եւ քաղաքական կենաց մասին եւ գիւղական հիւանդութիւնների եւ ժշկութիւնների եւ կերակուրների մասին, որք զրեթէ նոյն են ամենայն մասամբ, միայն Արցախն չունի խնկաւ կերակուրը:

ԺԲ. Հող. զրեթէ առհասարակ Ջրարքի, բազմարդիւն (այժմ բացի Մուղանի դաշտից) եւ գաճային են ամբողջ դաշտային զաւառների հողերն, որովք վարձատրուում են երկրագործներն եւ հովիւներն եւ անասնապահներն առատագոյն ցորենով, գարիով, քոժոժով, քամբակով եւ ամենատեսակ ազնիւ պտուղներով, եւ ազնիւ ոչխարով, տաւարով, գոմէշով, ձիով եւ ուղտով: Միջակ արդիւնաւէտ եւ

անջրդի են Դիզակի եւ Վարանդայի եւ Բերդաձորի հողերն, նուազ արդիւնաբեր՝ Խաչենի, Հարճլանքի, Վակունիսի, Ծարի, Ըռստակի, Ջրաբերդի, Կիւլստանի, Գարդմանի, Փառիսոսի, Քաւսի եւ Ջաւէի վերնամասի հողերն:

ԺԳ. Ջուր. Համարեա թէ ընդհանրապէս առատ, ամենապատուական եւ վճիտ են Արցախի բոլոր գաւառների ջուրերն եւ միանգամայն ակնառուրէս. իսկ դաշտայինն (Ուտիական նահանգինն) առհասարակ գետերի, գետակների, առուների եւ առուակների եւ ուրեք ուրեք ջրհորի ջուրեր են, որք լինում են յաճախակի պղտոր եւ անախորժ, սակայն ոչ վատառողջ:

ԺԴ. Որթ. Բացի Գանձակի որթից, որ ջրարբի է, սակայն հեծած չէ ծառի վերայ, դաշտային բոլոր որթերն (այգիներն) ամբողջապէս ջրարբի են եւ բարձրացած ծառերի վերայ. Արցախեան գաւառներինն ընդհանրապէս անջրդի են, որոց մատերը (ծայրերը) ամեն գարնան յապաւում են եւ կապոտում մարդաչափ բարձրութեամբ ցցած սարու (ձողերի) վերայ, ինչպէս եւ Գանձակինն:

ԺԵ. Հագուստ. Թէ արականաց եւ թէ իգականաց զգեստներն ունին իւրեանց յատուկ ձեւը, զորս տեսած կը լինի ամեն ոք, քանզի համարեա թէ ամեն ուրեք գտնուում են արցախեցիներ: Սակայն հարկ է յայտնել թէ մի քանի տարիներից վեր մուտ գործած են յԱրցախ Թիֆլիսի եւ Եւրոպայի սեպհական արականաց եւ իգականաց զգեստների ձեւերն:

ԺԶ. Բնակարան. Գաւառներում տակաւին ամենամեծ մասամբ գետնափոր են բնակարանները եւ անշուք. բայց նոր՝ի նորոյ սկսած են շինել եւ երկյարկանի գեղեցիկ բնակարաններ: Ամենամեծ մասամբ գեղեցկաշէն են քաղաքների բնակարանները:

ԺԷ. Վանքեր, մատուռներ եւ քէմեր. Կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով եւ ուխտատեղիներով, ինչպէս Արցախ-

եան նահանգն. քայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն:

ԺԸ. Ցրուած եւ գերուած հայեր. Բոլորովին զարմանում եւ սրտաճմլիկ դրութեան մէջ է ընկնում հետազօտող հայն, երբ տեսնում է միլիօնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո, դատարկուած են իւրեանց հայ եւ հայազգաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանոտ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ, Ուտի-առանձնակ, Շիկաշէն, Կողթ, Բերդաձոր, Հարճլանք, Վակունիս, Ծար եւ Ըռստակ գաւառները. իսկ կիսով չափ կամ ամենամեծ մասամբ դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառները: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն:— Մի մասն կերակուր եղաւ 1798—1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շաքի եւ Շամախի, մի մասն Կախեթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա: Տասնից մին հազիւ մնացած է այսօր, սիրելի ընթերցող, եթէ չես հաւատում՝ ինձ, ականէ աւերակների ցանկը, որ կայ գրքիս վերջում:

ԺԹ. Օտար ցեղեր. Դաշտային գաւառներում բնակում են այժմ Արաբ, Սուննու եւ Շիա մահմետականները. որք առհասարակ երթեւեկում են ամառանոց եւ ձմերանոց եւ տարուայ մեծ մասը անցուցանում են թաղիքեայ վրաններում: Թաթարաց ցեղից մնացորդներն բնակում են Զակամ կայարանից վերեւ համանուն գետակի հովիտներում: Մարաց ցեղից քուրդեր բնակում են Ծար, Վակունիս, Հարճլանք եւ Բերդաձոր գաւառներում: իսկ Քոլանի կոչուած ցեղն՝ Ըռստակ գաւառում: Սոքա

պոհասարակ յետոյ մուտ գործած են:

Ի. Արտահանութիւն. Նահանգս արտահանում է ցորեն, գարի, բոժոժ, քամբակ, բուրդ, բրինձ, լուբիայ քակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպղին, ճակնդեղ, ձմերուկ, սեխ, վարունկ, խաղող, գինի. օղի, ընկուզ, լուղ, պանիր, մեղր, կով, եզն, գոմէշ, ոչխար, այծ, խոզ, ձի, Ջորի, ուղտ, արջենի, աղուէսենի, ընձենի, գայլենի, սամուր (ղէլէ) գոմէշենի, տաւարի, ոչխարի, ձիու, Ջորու, խոզի կաշիները եւ մորթիները, պատուական գորգ, կարպետ, մափռաշ, խուրջին, Ջրաղացաքար, տապանաքար, ծուկն, ձկնհաւկիթ եւ ձկնապուխտ:

ԻԱ. Շրջակայութեանս ժամանակ կրեցի մեծ նեղութիւն. երեք անգամ ազատուեցայ արիւնարբու աւազակաց ձեռքն ընկնելուց, երեք անգամ ձիու տակ մնացի վտանգաւոր տեղերում, այս է սահեցաւ ձիու ոտքերն, ընկաւ ուժգնակի գետնին եւ ես մնացի ձիու ներքեւ. երեք օր մնացի անտուաղ ծար գաւառում հաց չգտնելու պատճառաւ:

ԻԲ. Այս ամենը յայտնելուց յետոյ՝ յայտնում եմ հրապարակաւ իմ երախտագիտութեան խորին յարգանքը եւ ջերմ շնորհակալութիւնը այն ամեն վարդապետ, քահանայ արժ. եղբարց, վարժապետ, երիտասարդ, պատանի սիրելեաց, ազնիւ տանուտեարց, որք անձնուիրաբար օժանդակեցին ինձ այս ձանրագոյն գործում, որոց վասն մնամ միշտ աղօթարար

Մակար եպիս. Բարխուտարեանց:

ԱՐՁԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

I

ԱՐՑԱԽԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ

Մեծ-Հայոց 15 նահանգներից մինն է Արցախն, որի սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ Երասխ գետն, Արցախական ամենաբարձր սարերի գագաթնագիծն և Հնարակերտ ամրոցն [1]: Այս սահմանների և Կուր գետի և Կովկաս մեծ սարի մէջ ընկած տարածութեան վերայ Կուսակալ կարգուած էր Սիսական Առանն նոյն Վաղարշակ թագաւորից: Բայց երբ ծնում է և Աղուանից Արշակունի թագաւորութիւնն էս, ծագում է սահմանի համար հակառակութիւն Հայոց և Աղուանից թագաւորութեանց մէջ. այն ժամանակ Արցախի և Աղուանից երկրի մէջ սահմանագիծ որոշուում է Կուր գետն [2]: Ե. դարում Աղուանից թագաւորութեան ենթարկուում է և ամբողջ Արցախեան նահանգն: Ծար, Վակունիք, Աղահէճ, Բերդաձոր գաւառներն, որք պատկանում էին Արցախին, Մեծ-Սիւնեաց թագաւորներն ճգնած էին իւրացնել, վասն որոյ ծագում է երկարատև հակառակութիւն և խռովութիւն Մեծ-Սիւնեաց և Աղուանից թագաւորութեանց և հոգևոր իշխանութեանց մէջ և զբաղեցնում Հայոց շատ կաթուղիկոսները: Այս խռովութեանց ընդ միշտ վերջ տալու և սէր ու խաղաղութիւնը վերահաստատելու համար սոյն երկու դրացի թագաւորութեանց և հոգևոր իշխանութեանց մէջ՝ ամենայն Հայոց Սարգիս կաթուղիկոսն՝ Հայոց ՆԾԵ. թուին արձակում է մի շրջաբերական կոնդակ [3] որի սկզբում գրուած է. «առ նախագահ և աստուածամեծար տունդ Սիւնեաց յաստուածապսակ թագաւորդ Վասակ և յաստուածապահ իշխանդ Սևադայ և Աշոտ և առ այլ ազատսդ, եւայլն»: Վերջաբանի մօտ. «իսկ բոլորովին, որում բազում հակառակութիւնք լեալ էին [4] և մե-

[1]) Խոր. Բ. գիրք Ը. Գլ. և Մով. Կաղ. Ա. հատ. Դ. Գլ.:
[2]) Փաւս. Բուզ. Ե. դպր. ԺԳ. Գլ.:
[3]) Շրջաբերականիս բնագրի օրինակը տես Ս. Օրբէլեան Տէ. գլ.:
[4]) Աղուանից և Մեծ-Սիւնեաց մէջ:

ծամեծ նզովիւք ամրացուցեալ էին Կաթուղիկոսք Հայոց՝ հատանէ զսահմանն Աղուանից՝ Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէջ, ընդ որ Աղուանոյ գետն [1]) հատանէ մինչ ի Քարավազի կամուրջն (Երասխ գետն)»։ Ի վերջոյ շարայարում է. «թէ ոք հակառակել կամի այդմ աթոռոյ և կամ խանգարման պատճառ լինի այդմ հայրապետադիր սահմանի.. և վիճակի և ժառանգութեանց եկեղեցւոյ, զանբաւ հրահոսան անէծսն ժառանգեսցէ, որ յառաջին սուրբ հայրապետացն կարգեալ է և կրկնապատիկ 'ի մէնջ իսկ, ևն»։ Ուրեմն Ե. դարում և ՆԾԵ. թուականից ցարդ Արցախի սահմանագիծն եղած է Երասխ, Կուր, Խրամ և Ձորագետ (միացած) և Հակարի գետերի և Կայենի, Թիլիջանի, Գեղամեան ամենաբարձր լեռների գագաթնագծի մէջ եղած տարածութիւնն։ Քանզի Խորենացին թէ և գրած է թէ 13 գաւառ ունի Արցախն [2]) սակայն ԻԶ. նահանգի գաւառների շարքում գրած է. «և այլ գաւառս (Արցախայ) զորս ի Հայոց հանեալ է (թագաւորն Աղուանից) Շիկաշէն, Գարդման, Կողթ և Ձաւէ և այլ քսան գաւառ մինչև ցխառնուման Երասխայ ի Կուր գետ [3])։ Քսան և չորս գաւառը ամբողջացնում է այսպէս—13 Արցախի, 6 Ուտի գաւառի [4]), 4 վերևի գաւառներն, որք են Շիկաշէն ևայլն. Վարդանակերտ գաւառ, որ գտնուում է Կուր և Երասխ գետերի խառնուրդի մէջ, որով ամբողջանում են Արցախեան նահանգի 24 գաւառներն։

Այս նահանգն զանազան դարերում փոփոխութիւններ կրելով Հայերից կոչուած է Գարգար [5]), Արցախ [6]), Փոքըր-Սիւնիք [7]) Խաչենք, Սեաւ Այգի [8]) իսկ Պարսիկներից և Տաճիկներից՝ Ղարաբաղ։

[1]) Հակարի գետի վերնամասն։

[2]) «Արցախ երի կայ Սիւնեաց. գաւառք են՝ ի նմա երեքտասան, զորս Աղուանք ունին Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պանծկանք, Սիսական ոստան, Քուստի, Փառնէս, Ռոստակ» (Մատ. Խոր. եր. 609 և այլ ձեռագիրք։

[3]) Մատ. Խոր. եր. 606 և այլ և այլ ձեռագիրք։

[4]) «Ուտի առ մօից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ, ունի գաւառս եօթն, զորս Աղուանք ունին, Արանոռս, Տոի, Ռոզպատեան, Աղուէ, Տուչքատակ . . . Ուտի առանձնակ» (նոյն դիրք որ. 610 և ձեռագիրք։

[5]) Մատ. Խոր. եր. 78, 168, 248։

[6]) „ „ „ 607, Ասող. եր. 65 ևայլն։

[7]) Խոր. Գ. դիրք Գ. Գլ. Մով. Կաղ. եր. 272. Ասող. 107 Սամ. Անեց. եր. 192։

[8]) Սամ. Անեց. եր. 193։

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼԵՌՆԵՐ.

Սարերից ամենամեծն է Արցախեան լեռնաշղթան, որ ընկած է Երասխի և Ձորագետի մէջ։ Լեռնաշղթայիս ամենաբարձր գագաթներն են—Արուքիւնայ սարն [1]) Արցախի Գարդման գաւառի վերի ծայրում, Մռաւ սարի արևմտեան և արևելեան գագաթներն Հաթերքի հիւսիս-արևմտեան կողմում և Կիւլստանի հարաւային հանդէպ. Քիթ և Քեթի սարերն Ծար գաւառից վերև. Քիրսն Վարանդայ գաւառի վերի ծայրում և Դիզափայտ Դիզակ գաւառի վերի ծայրում։ Ամբան կանաչազարդ են լեռնաշղթայիս վերնամասերն իսկ անտառապատ հիւսիսահայեաց լանջերն և միանգամայն առատաջուր։ Բարձր և երկար լեռնաշղթաս, որ ընկած է Երասխի և Ձորագետի մէջ, տարածած է դէպի իւր հիւսիսահայեաց կողմերն հազարաւոր և բազմաճղի լեռնագօտիներ, սարաւանդներ և լեռնաբազուկներ, որք աղխաղխելով միմեանց կազմում են բազմաթիւ անդնդախոր ձորեր և ահարկու վիհեր, սարսափելի կիրճեր և սոսկալի նեղուցներ, օձապտոյտ ձորակներ և մերկ ապառաժներ, բարձրագոյն քերծեր և զարհուրելի քարայրեր և միանգամայն սագաձև, ձկնաձև, ձուաձև, լիսեռնաձև և թամբաձև լեռներ և լեռնակներ, բլուրներ և բլրակներ, թումբեր և խութեր։ Փոքր լեռնաշղթաներ. երկարաձիգ լեռնաշղթան, որ սկսուած է Ձորագետի և Խրամի խառնուրդի աջ կողմից, հասած է մինչև Երասխի ձախ կողմն շարունակ Արցախեան դաշտաբերանով։ Ամբողջապէս լեռնաշղթայիս վերայ են Ձաւէ, Քուստի կամ Քաւս, Փառիսոս, Գարդման, Մեծ-կողմանք, Մեծ-իրանք, Հաբանդ կամ Վարանդայ, Դիզակ և Պանծկանք [2]) գաւառներն։

[1]) Թուրքերէն Ղոչ-ղարադաղ։

[2]) Աւելի լաւ էր Բազկանք անուանել վերջին գաւառս, վասն զի գաւառս ամբողջապէս բազկացած է լեռնաբազուկներից, որք թեքուած են դէպի Երասխի ձախ ափն։ Կայ և մի այլ լեռնակ, Կախա անուն որ ընկած է Կուր գետի աջ եզերքով (Գանձակ գաւառում)։ Աւելի բարձր է Ղազարլու արևմտեան գագաթն, որ է 1723 ոտք. իսկ Կախան-արևմտեանն 1284 ոտք։

Այս լեռնաշղթան ևս, որ տարածուած է ամենաբարձր լեռնաշղթայի և դաշտաբերանի մէջ, նմանապէս արձակած է լեռնաբազուկներ, խոր խոր ձորեր, և ոլոր մոլոր ձորակներ, նեղուցներ և կիրճեր, տեղ տեղ ուռած և բարձրացրած սարեր և սարակներ, բլուրներ և բլրակներ, թումբեր և թումփակներ, և ուրեք ուրեք անձրևատար հեղեղատներ, միայն թէ ամենամեծ մասամբ զբդարուած են թանձր անտառներով և մացառուտներով, այգիներով և պարտէզներով: Լեռնագօտուս ամենաբարձր գագաթներն են Կայենի լեռներն Չաւէ կամ Կայենի գաւառում, Մրղուզ՝ Քուստի կամ Քաւս գաւառում. Սուրբ Գէորգի սարն՝ Խաչենում, Բողրխան և Քեաթուկ՝ Վարանդում, Դող-բերդ, Թաղլարի և Հատրութի սարերն Դիզակում:

ԴԱՇՏԵՐ.

Ա. Ամենամեծ դաշտն է Գարգարացւոց կամ Արցախի և կամ Մուղանի դաշտն, որի մասին արդէն գրուած է «Աղուանից Եր. և Դրաց.» գրքի մէջ.

Բ. Գագայ դաշտն, որ նոյն դաշտի շարունակութիւնից տարածուած է Չաւէ կամ ըստ այժմեան Ղազախ գաւառի ոտորին մասում, Գագայ սուրբ Սարգիս սարի աջ ու ձախ կողմերում. այսինքն Ոսկեպար վտակի և Կուր գետի հովիտներում:

ԴԱՇՏԱԿՆԵՐ.

Ա. Գտնուում է Մեծ-կողմանց կամ Կիւլստան գաւառի մէջ տարածուած Ղարաչինար և Ներքի շէն գիւղերի մէջ, որի միջով հոսում է Սև գետակն (Ղարաչայ)

Բ. Վարանդայ գաւառի ոտորին մասում Ղըզղալա գիւղի կալերի մօտ:

Գ, Նոր-շէնի մօտ, որ ընկած է երկու լեռների մէջ:

Դ, Դաշտակն ընկած է Կիշի Պառաւաթումբ, Սպիտակ շէն (Աղքեանդ) գիւղերի մէջ:

Ե, Խունըշինակ գիւղի դաշտակն:

Զ, Ձարտարեցւոց կալատեղերի մօտ եղած դաշտակն:

Է, Դողայ դաշտակն, որ ընկած է Կաւաք սարի, Ազոխի, Զրակուսի, ԵՒն գիւղերի մէջ: Հարկ է յայտնել որ բոլոր դաշտակներս գրեթէ Գարգարացւոց Մեծ դաշտի շարունակութիւնից իբր դաշտակեզու մտած են տեղ տեղ փոքր լեռնաշղթայիս մէջ: Այսպէս են համարեա թէ Ամարասայ, Հատրութի և Զաբրայէլի դաշտակներն:

Ը. Բելուկանայ դաշտակն որ ընկած է Երասխ և Հակարի գետերի ձախ ափերի մէջ:

ՀՈՎԻՏՆԵՐ.

Գեղեցիկ են Աղտաւի, Թարսա չայի, Ղուլալուի, Վերին-Զակամի, Շամքորի, Գետաշէնի, Կիւլստանի, Հաթերքի [1]), Խաչենագետի, Պետրեցւոց (Խոջալլու), Գարգար, գետակների և Հակարի գետի հովիտներն, մանաւանդ բոլոր լեռնահովիտներն:

ԳԵՏԵՐ ԵՒ ԳԵՏԱԿՆԵՐ.

Ամենամեծերն են Կուր և Երասխ, որոց մասին արդէն խօսած ենք «Աղուան. երկ. և Դր.» գրքի 31 թուահամարում: Այս—տեղ միայն ասում ենք—համարեա թէ Արցախեան նահանգն մի կատարեալ թերակղզի է, որ ընկած է Կուր և Երասխ, Ձորագետ և Հակարի գետերի մէջ:

Երասխ գետին ձախ կողմից միանում է Հակարին, վերջինս, որ սկիզբն է առնում Սիսական և Վակունիք գաւառների հարաւահայեաց լանջերից, ընդունում է իւր ձախ կողմից գետակներ և առուակներ. Հարճլանք գաւառից ընդունում է Հազարագետ և Վաղագին, (Շոր-Ջուր), Յարարի ջուր և Ղոգլու վտակները Բերդձոր գաւառից:

Երասխիս նմանապէս ձախ կողմից, խառնուում է և Թաղլարի և Դողայ միախառնուղ գետակն և առուն, որք միա-

[1]) «ՑՀոռոտակ գաւառն Մեծ կողմանց ի Զղախեան հովիտն յԱպարիսական դաշտակն առ ափն Տրտուական գետոյն» (Մով. Կաղ. եր. 163 տպ. Մոսկ.)

նալով կոչուում են Ղ ու բ ու չ այ։ Առաջինն սկիզբն է առնում Փիզափայտ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից, կազմում երեք գլխաւոր առուակ, որք միանում են Տումի գիւղից բաւական վար։ Երկրորդն՝ հոսում է Մոխրենիս և Թաղոտ գիւղերի լեռներից, նոյն լեռնաշղթայի շարունակութիւնից՝ միանում Դողայ մօտ և խառնուում վերջի աւանից վար՝ Թաղլարի գետակին հետ։

Ք ե օ ն դ ա լ ա ն գետակն, որ բաղկանում է գլխաւորաբար երկու վտակներից, որոց առաջինն իւր սկիզբը առնում է Քիրս լեռնաշղթայից և հոսում Աւետարանոց աւանի հարաւային ստորոտով։ Իսկ երկրորդն սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայից, հոսում Ղևոնդեանց անապատի սարին հարաւային ստորոտով և միանում առաջի վտակին նոյն անապատից բաւական վար և մանր ջրեր ընդունելով հոսում արևելահարաւ և խառնուում Երասխին (գարնան ժամանակ միայն)։ Արցախեան ամենաբարձր լեռնաշղթայից բղխում են գետակներ և հոսելով միանում Կուր գետին, որք են.

Գ ա ր գ ա ր գետակն, որ սահմանագիծ է Խաչեն և Վարանդայ գաւառների, կազմուում է հինգ գլխաւոր վտակներից. որք են՝ Ա.-բուն Գարգար, որ բղխում է Քիրս լեռնաշղթայի Ջառխտ սարերի հիւսիսային և հարաւային լանջերից և հոսում Շուշի քաղաքի հիւսիս-արևմտեան անդնդախոր ձորով։ Բ, բղխում է Քիրս լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից և հոսում ահարկու ապառաժների միջով՝ յիշեալ քաղաքի հարաւ-արևելեան կողմով։ Երկու վտակներս միանում են Մազի կամրջի ստորոտում։ Բայց բուն Գարգարն՝ սկսեալ կամրջից մինչև վտակախառնուրդն՝ երկար դարերի ընթացքում ճեղքած է ապառաժ սալ քարը և բաւականին խորացնելով շինած ոլոր մոլոր ճանապարհ իւր համար։ Գ. վտակն բղխում է նոյն լեռնաշղթայի շարունակութիւնից— Խանածախ գիւղի սարից—և միանում Գարգարին փոշտի ճանապարհի տակով։ Դ. վտակն սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայի շարունակութեան հիւսիսահայեաց կողմերից—Բալ-

լուջայի սարից, առուակներ ընդունելով իւր աջ ու ձախ կողմերից՝ միանում Գարգարին նոյն ճանապարհի տակով։ Ե. վտակն՝ բղխելով նոյն լեռնաշղթայից—Պետրեցւոց սարերից առուակներ ընդունելով աջից ձախից, միանում է բուն Գարգարին, որ հոսելով դէպի արևելահիւսիս և կտրելով Արցախի դաշտի կէսը, ապա անյայտանում աւազի տակ և յետոյ երևնում բաւականին վար և թափուում է Կուր գետի մէջ հեղեղների ժամանակ։

Խ աչ ե ն ա գ ե տ—գետակ—որ սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայից, նախ հոսում դէպի արևելք, ընդունում իւր աջ ու ձախ կողմերից մանր վտակներ, ապա իւր աջ կողմից Աղուանք կոչուած պարսպի տակով ընդունում Քոլատակի վտակը, որ բղխում է Խոխանայ և Կաչաղակայ բերդերի սարերից։ Խաչենագետս շատ տարիներ չէ հասնում Կուր գետին, այլ ցամաքում է։

Թ ա ր թ ա ռ գ ե տ. Ամենից մեծն և ամենից արդիւնաւոր գետն է այս և Արցախի փառքն ու պարծանքն։ Գետիս ակունքները բղխում են Ղ ա մ բ ի խ ո ռ կամ այժմեան անուամբ Ռումբասար լեռնաշղթայի արցախահայեաց, Մռաւ սարի հարաւահայեաց և Ծար գաւառի արևելահայեաց և հիւսիսահայեաց լանջերից։

Միջին վտակն հոսում է սրընթաց Ծար գիւղաքաղաքի հարաւային կողմով, որին խառնուում է վերին ջերմուկն կամ Տաք—ջրի վտակն։

Սորա առաջին օժանդակն զմայլելի ջրվէժներ կազմելով հոսում է Ծարի հարաւային ձորով նոյն իսկ պարսպի քերծի տակով և միանում միջի վտակին՝ վանքին մօտ։ Գ. վտակն հոսում է Ծար գիւղաքաղաքի հիւսիսային քերծի տակով, միանում մի այլ վտակի, ապա միասին միախառնուում միջի գետակին Ծարի ստորոտում։ Միջին գետակս, որ ընդունելով յիշեալ վտակները՝ եղաւ մեծ գետակ, հոսում է մի խոր և աւազակաց որջ եղած ձորով և ընդունում իւր աջ կողմից Ներքի—տ ա ք—ջ ու ր ը և իւր երկու կողմերից ուրիշ շատ

վտակները՝ շարունակում իւր ճանապարհը։ Դ. վտակն սկիզբն է առնում նոյն իսկ Ըռմբի խոռից, և իւր աջ ու ձախ կողմերից ստանալով առուակները և բարակ ջրեր հոսում դէպի հիւսիս-արևելք։ Ե. Զ և Է. վտակներն սկիզբն են առնում Մռաւի հարաւահայեաց լանջերից, անցնում Լևա գիւղի աջ ու ձախ կողմերով, նախ միանում Դ. վտակին և ապա վերև յիշուած գետակին։ Ե. Զ. Է և Դ. վտակներին միանում է և Եանշաղ [1]) վտակն, որ բղխում է Մռաւի հարաւահայեաց լանջերից և հոսում դէպի արևմուտք, յետոյ խառնուում միւս վտակներին։ Սոյն ջրերը իւր հետ միացնելուց յետոյ՝ Թարթառն իւր ձախ կողմերից ընդունում է մանր մունր ջրեր իւր ծոցն, ապա Թրղին գետակը, որ բղխում է Մռաւ սարի վերնամասի հարաւահայեաց լանջերից, հոսում մութ մութ ձորերով և Երեք-Մանկունք վանքի արևմտեան և հարաւային կողմի ձորով և ապա միանում Թարթառին Ջրաբերդ ամրոցի արևմտեան վիմահերձը քերելով։ Ձախ կողմից ընդունած Թարթառի վերջին ջուրը Ջրվշտիկ վտակն է և Դոնի-շէնի և Մատաղիս շէնի առուակները։ Իսկ իւր աջ կողմից Թարթառն ստանում է մի քանի առուակներ, որոց գլխաւորն է Դուրխուռ գետակն, Հաւքախաղացի, Խաթրա վանքի, Վաղահաս գիւղի և Ամենափրկիչ վանքի վտակները։ Ձոր օրինակ Նեղոս գետն է Եգիպտոսի առատութեան և ժանուրթեան պատճառն, նոյնպէս Թարթառս է Արցախի առատութեան և ժանուրթեան պատճառն, քանզի բազմաթիւ առուներով ջրում է Ուտի առանձնակ և ուրիշ գաւառներ։ Այս է հին պատմիչներից Տրտու կամ Դրտու, իսկ տաճկերէն Թարթառ կոչուած գետն, որի բազմաթիւ առուներով ջուր բաշխելու մասին երգած է մի Հայ աշուղ թուրքերէն լեզուաւ։

«Ռու Թարթառ նաշի Թարչառ,
Զայլաբըն բաշը Թարթառ.
Արազինան մուսայիլ,
Ֆիուռն եօլտաշը Թարթառ։

[1]) Անընդհատ խօսող. իսկ այստեղ փոխաբերաբար միշտ շը ռ շը ռ ձայն հանող։

Իչ իւզ ալթմըշ ալթը
Արխըն անասը կենա կոչա Թարթառ»։

Սև գետակ կամ Ղարա-չայ. գետակիս օժանդակն հոսում է Կիւլստան գիւղի հարաւային կողմով և կոչուում է Բարակ (Ինջա)։ Մի ուրիշ օժանդակ ևս հոսում է վտակիս հարաւային կողմով—Ամենափրկիչ վանքի հարաւային կողքով և կոչուում Սռնաւոր (խոստ ցուրտ), որ միանում է Բարակին Կիւլստանից վերև։ Սև գետակս իւր սկիզբը առնում է Մռաւի Գինալ գագաթի հիւսիսային լանջերից, հոսում է Բարակի հիւսիսային կողմով Վերի շէն, Ներքի շէն, Ղահթուռթ, Նորաշէն, Նոր—Խրխափոր և Ղարա-չինար գիւղերի առջևից։ Երկու ջրերս, միանում են ու կոչուում Սև գետակ։

Կուրակ գետ, որ սահմանագլուխ է Արցախի և Թիֆլիզի առաջնորդութեանց հոգևոր իշխանութեանց, առնում է իւր սկիզբը նոյն Մռաւ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից և ընդունում հետզհետէ իւր աջ ու ձախ կողմերից օժանդակ առուներ, ապա հոսում դէպի Կուր գետն։

Ոսկանապատի կամ Գանձակ գետակ, առնում է իւր սկիզբը նոյն լեռնաշղթայից, և Արութիւնայ հարաւային լանջերից, հետզհետէ ընդունում վտակներ իւր աջ ու ձախ կողմերից, հոսում Ոսկանապատ գիւղի հարաւային ստորոտով, ապա Գանձակի միջով դէպի Կուր գետն (կոչուում է և Գանձակի գետ)։

Բանանց գետակ (Ղոչ-ղարա), առնում է իւր սկիզբը Արութիւնայ սարից, իւր աջ ու ձախ կողմերից ընդունում Քարհատ և Խաչակապ գիւղերի վտակները ևս, և հոսում Բանանց գիւղի հարաւային ստորոտով։

Եամքոր գետակ. բուն միջի վտակն առնում է իւր սկիզբը Գեղամայ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից, ընդունելով ջրեր՝ հոսում Փառիսոս քաղաքի (Ղալաքեանդ) աւերակի միջով, այնուհետև իւր աջ կողմից ընդունում Փառիս վտակը, որ բղխում է Արութիւնայ սարից, Գարդման վտակը, որ բղխում է նոյն սարի ստորոտներից, Փիփ գիւղի

ջուրը և Ծծերի առուակը: Իսկ ձախ կողմից Սև աղբիւրի (Ղարա-բուլաղ), Գետաբակի, Գառնակեր և Բարսում գիւղերի, ևն. ջրերը և հոսում դէպի Կուր գետն:

Ձակամ գետակ, որ բաղկացած է 3 գլխաւոր վտակներից, միջի վտակն բղխում է նոյն լեռնաշղթայից, Բ-ն հիւսիսայինն նոյնպէս, որ հոսում է Նովի-Սարաթովկայ մալականի գիւղի հարաւային եզերքով և միանում միջի վտակին, փոքր ինչ վար: Իսկ հարաւային օժանդակն, որ առած է իւր սկիզբը Փառիսոս բերդի հիւսիսային լանջերից և որ հոսում է Մեծ-Ղարամուրատի արևելեան կողմով, միանում է առաջի 2 վտակներին: Միացեալ ջրերս հոսում են ապա դէպի Կուր գետն:

Տաւուշ կամ Թովուզ գետակ, որ բաղկացած է 2 գլխաւոր վտակից. Ա-ն վազում է Ղուլալի գիւղի հիւսիսային ստորոտով Ախնջի անուամբ, իսկ Բ-ն Բերդ գիւղի հարաւային ստորոտով: Երկու վտակներս ևս բղխում են Մրղուզ լեռնաշղթայի հարաւային և արևելեան ստորոտներից և լանջերից, միախառնուում Մովսէս գիւղից վար և թափուում Կուր գետի մէջ:

Հասան վտակ, որ իւր սկիզբը առնում է Մրղուզ լեռնաշղթայի հիւսիսահայեաց ստորոտներից և հետզհետէ ընդունելով բարակ ջրեր՝ հոսում դէպի վար:

Ադստև գետ, որ առնում է իւր սկիզբը Բամբակի լեռներից, իւր աջ կողմից գլխաւորապէս հետզհետէ ընդունում է Իլիջանի կամ Պղնձահանք, Թարսա-չայ [1]) և Կարավանսարա վտակները. իսկ ձախ կողմից՝ Ջոխտակ-Վանքի, Պօղոս քիլիսէ, Հաղարծնի, Մթնաձորի, Ներքին-Ադամանի, Հաչաջրի և Ոսկեպարի վտակներն և ջրերն:

Ձորագետ, որ հոսում է Շինող գիւղի հիւսիսային կողմով, իւր աջ կողմից ընդունում Շինողի վտակը և հետզհետէ ընդունելով նոյն կողմից այլ ջրեր, միանում է բաւական վար Խրամի հետ և խառնուում Կուր գետին:

[1]) Առած է իւր սկիզբը Գեղամեան մեծ լեռնաշղթայի Փուռ (8727 ոտք բարձր Ալրիջայ) սարի հիւսիսային լանջերից:

ՄԵԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ.

Նախ՝ գտնուում է Փառիսոս գաւառում, Փառիսոս (Ղալաքեանդ) աւերակ քաղաքի արևելահիւսիս կողմում: Ղարաբուլաղ է կոչուում այժմ աղբիւրս, որ դարձնում է երկու ջրաղաց:

Երկրորդ մեծ աղբիւրն, որ դարձնում է 2 ջրաղաց և ունի պատուական ջուր, գտնուում է Զաւէ կամ Կայենի գաւառում, Հաղարծնի վանքի մօտ:

Երրորդ մեծ աղբիւրն գտնուում է Քուստի կամ Քաւս գաւառում, Կարաւանսարայից վերև մեծ ճանապարհից ոչ այնքան հեռի և կոչուում է Զրուչ:

Չորրորդ մեծ աղբիւրն գտնուում է Սիսական կամ Ծար գաւառում, Զբիլ գիւղի արևմտեան կողմի ստորոտի ձորում:

Հինգերորդն՝ գտնուում է Տիգրանակերտ աւերակ աւանի մօտ. տես «Ա.ղ. երկիր և դրացիք» եր. 52:

Վեցերորդն՝ Վարանդայ գաւառում Ղարաբուլաղ գիւղի մօտ, որ դարձնում է մի ջրաղաց:

Եօթներորդն՝ Ջաբրայէլ գիւղաքաղաքի մօտ, բայց այս ինքնաբուղխ չէ, այլ ականափոր է:

ՀԱՆՔԱՅԻՆ ՍԱՌՆ ՋՐԵՐ

Ա. Երկաթաջուր. գտնուում է Շուշուց վերև Քիրս լեռնաշղթայի մի սարի հիւսիսահայեաց ձորի մէջ, մեծ ճանապարհի վարի կողմում: Ցուրտ է ջուրս, որ բղխում է ձորիս ձախ ափից:

Բ, Թթու ջուր կոչուածն, (գելտերսկի), որ բղխում է նոյն ձորի նոյն ափից փոքր ինչ վերև երկաթաջրից:

Գ. Ջրիս յար և նմանն գտնուում է Քուստի կամ Քաւս գաւառում Ներքին-Ձամբարակ գիւղից ներքև, Թարսա-չայի ձախ ափին ճանապարհի վերայ: Ջուրս տաճկական բարբառով կոչուում է Ղոթուր-Բուլաղ:

ՀԱՆՔԱՅԻՆ ՏԱՔ ՋՐԵՐ.

Ա. Ամենալաւն և օգտակարն գտնուում է Սիսական կամ Ծար գաւառում, Զրիլ գիւղի հարաւային կողմի խոր ձորում: Ջուրս, որ բաւական առատ է, բղխում է վտակի ալ կողմից: Բայց չունի շինուածիւններ և պատսպարուելու բնակարաններ: Ամրան ամիսներում խռնում է այս պրոբատիկէի մօտ շրջակայ նահանգներից և գաւառներից ցաւագար անձանց մեծ բազմութիւն և առողջանալով վերադառնում: Ափսոս որ այս պատուական ջերմուկի հօրիզօն խիստ նեղ է և տեղն անյարմար:

Բ. Ջերմուկն, որի ջերմութեան աստիճանն ստոր է Ա-ից, բղխում է նոյնպէս նոյն վտակաձորի ալ կողմից, սակայն գտնուում է Ծարից բաւական վար:

Գ. Ջերմուկն եղած է Հաղարծին վանքի կողմերում, բայց այժմ յայտնի չէ տեղն, զի անյայտացրած են (տես նոյն վանքի նկարագրութեանց շարքում):

ԼՃԱԿՆԵՐ.

Առաջին լճակն է Ալհարակ, որ մօտաւորապէս մի և կէս մղոն հեռի է Գետաշէնից դէպի Մռաւ լեռնաշղթան: Լճակս շրջապատուած է անտառախիտ լեռներով, որոց մէջ ամենաբարձրն է Կեփաս [1]) ըստ Տաճ. Քեաֆտզ ապառաժ քարեայ սարն, որ հպարտօրէն արձանացած է լճի արևելեան հարաւային կողմում: Լճակս բաժանուած է երկու մասի, վերնամասն կոչուում է «Ըստծու ծով (Աստուծոյ ծով)»: Երկու մասերի մակերևութի տարածութիւնն է մօտ 54 օրավարաչափ: Լճակից, որի եզերքներով տեղ տեղ դիզուած են ահագին քարեր, ելնում են ընդհանրապէս 3 տեսակ ձուկն:

Ա. տեսակն, որ ազնիւ է միւսերից, որոշուում է իւր սպիտակութեամբ և կարմիր ու սև բծերով:

Բ. տեսակն ևս ունի սպիտակ գոյն, սակայն ունի միայն սև բծեր:

Գ. տեսակն ունի միայն սև գոյն և մեծ մեծ սև սև բծեր: Վերջապէս բացի լճակիս հիւսիսային կողմից ելած ձկներից՝ համեղ են միւս կողմերից հանուած բոլոր ձկներն:

Երկրորդ լճակն, որ գտնուում է Գօշայ վանքի հարաւային կողմում կէս մղոնաչափ հեռի, կոչուում է Տզրկածով, որի մէջ չկայ ձուկն, այլ միայն տզրուկ, գորդ և մանր օձեր:

Երրորդ լճակն, որ փոքրիկ է, գտնուում է Ծար գաւառի Պղնձահանքի հարաւային կողմում եղած մեծ սարի ստորոտում:

Չորրորդն Գեօլ-եայլաղը կոչուած տեղում Լև գիւղի արևմտեան կողմում:

Հինգերորդն գտնուում է Լև գիւղի հիւսիսային կողմում, որ կոչուում է Տզրկածով (Զալի-գեօլ):

Վեցերորդ՝ 3 լճակները, որք կոչուում են Բեադր—գեօլլարը:

Եօթներորդ՝ Մարդասպան (Ղանլը-գեօլ) Իրիցի շէնի գլխին [1]):

Ութերորդ Ղամշոտ ծով, որ գտնուում է Խաչենի Աբուլթիւնայ շինի անդում, 2 ամենափոքր լճակներ, որոց եզերքներն բուսնում են եղեգներ:

Իններորդ լճակն է Վարանդայ գաւառի Նինկի գիւղի անդում եղածն, որ կոչուում է Սիւլիւկնածով:

Տասներորդ՝ 2 ամենափոքր լճակներ Ծովատեղ գիւղի մօտ:

Տասն և մէկերորդ՝ 2 աղի լճակներ, որք գտնուում են Աբանուոտ գաւառում:

Զենք նշանակում Կուր գետի ալ ափերում տեղ տեղ եղած լճացեալ անշարժ ջուրերը, քանզի բազմիցս լի են լճակ-

[1]) Սարիս գագաթի վերայ կայ գերեզմանն, որի տապանաքարի վերայ գրուած է. «Կեփաս ճղնաւորի գերեզմանն է»: Հաւանական է թէ Ալհարակ անունն յետոյ տեղի տուած է Կեփաս անուանս ճղնաւորիս անուան պատճառաւ, որը մահմետականք չկարողանալով ուղիղ հնչել, արտասանում են Քեաֆտզ:

[1]) Ծար գաւառում եղած Գ. Դ. Ե. Զ և Է. լճակներս ամենափոքր են ամբողջապէս և զուրկ լուղակներից, միայն տզրուկ ունի Տզրկածովն:

ներս, երբ յորդում է գետն. և երբեմն ցամաքած, երբ ե-
րաշտ է: Սակայն և այնպէս կան որ անցամաքելի են:

Ա.ՆՏԱՌՆԵՐ.

Արցախական նահանգն ընդհանրապէս հարուստ է (բա-
ցի Մուղանի դաշտից) ոչ միայն անտառներով և մացառնե-
րով, այլ և վայրի պտղատու ծառերով, տեսակ տեսակ թփե-
րով, տարբեր տարբեր բուսեղէններով, սուրբ կենդանիներով
և գազաններով, սուրբ թռչուններով և անսուրբ հաւքերով,
ոսկու և արծաթի, պղնձի և երկաթի հանքերով, ամարա-
նոցներով և ձմերանոցներով: Ձորագետից մինչև Երասխի
մօտ տարածուած լեռնաշղթայի վերնամասերն գալարագեղ
ամարանոցներ են, իսկ մնացեալ մասերն ծածկուած են խտա-
ցեալ անտառներով. իսկ փոքր լեռնագօտին՝ մացառներով և
շամբերով: Բայց հարկ է յայտնել որ նշանաւոր անտառներն
գտնուում են Դիլիջանի, Հաղարծնի, Գետաշէնի, Երից-ման-
կանց, Եղիշէի, Թարթառի, Խաչենագետի, Քոլատակի և Պետ-
րեցւոց գետակի ձորերում, Քոլ կոչուած անտառում և Կուր
գետի աջ եզերքում:

Ա.ՆՊՏՈՒՂ ԾԱՌԵՐ.

Համարեա թէ բոլոր անտառներում կան կաղնի, հա-
ճարկի, լայնատերևի, կռզենենի, տխկի, թեղի, հացի, բեխի,
կիչի, լորի, տոսախի, ջղանի, ճապկի և կոռելի ծառեր: Բայց
սաղուզի, ծառերն սուտ ընկուզի և կարմրափայտ
(ըստ տաճ. եալան-ղոզի և Ղզըլ-աղաջ) միայն գտնուում են
Կուր գետի անտառում և Քոլ կոչուած տեղում: Բռշնի և
թիքեռնի ծառերն գտնուում են անդերում, գենի (գի) և
բևեկնի՝ Կիւլստանի անտառներում, Թարթառի ձորերում և
Դիզակ գաւառի Դիզափայտի լեռնաշղթայի, մանաւանդ գէպի
Երասխն խոնարհուած մասերում, մայրի և վայրենի ուռենի
ծառեր միայն Դիլիջանի անտառներում, իսկ արջախնդեղնի՝
մեծ լեռների անտառներում. կաղամախի, սօսի և բարտի և

փշատի (փշաշատի) ծառեր միայն դաշտային մասերում և ու-
ռենի գետահովիտներում:

ՊՏՂԱՏՈՒ ՎԱՅՐԻ ԾԱՌԵՐ.

Գրեթէ բոլոր անտառներում գտնուում են ճըռ տանձի,
ծտի-տանձի, ճըռ խնձորի, գկռի (զղեարի), սզնի, սալորի,
հունի, տկողնի (արքայակաղնի), ընկուզի, իսկ անդերում
գտնուում են միայն մոխրատանձի և լկրթնի:

ԹՈՒՓԵՐ.

Մացառներում և շամբերում լինում են ցախաւելի
կամ հովմառկի, գերմասրի, թբլղի, գժնիկ, տատասկ, ծմա-
կամոշ (մորենի-մալինա), սևամոշ, մռամոշ, գետամոշ [1]), մա-
սուրի, կծըխուրի, ցրդի, վարդենի:

ԻՆՔՆԱԲՈՅՍ ՈՒՏԵԼԻ ԿԱՆԱՉԵՂԷՆՆԵՐ.

Ծմակներում լինում են խազազ, կոմզուկ, ամնդուկ,
ծմակլթափան, սոկոն կամ սունկ:

Անդերում ձնեբեկ, փիփերտ (ամենքեօմաչի) խնչլոզ,
շրիշ-խնչլոզ, կնձմնձուկ, տտըպաշար, ուտումտիտեմ, սիբեղ,
թարթանչուկ, պառաւապորտ, եզնաճակատ: գինազոխ, շու-
շան, եղինճ, շրիշ, աւելուկ, շէպ և բոխի:

Ջրերի մէջ կամ մօտերքում ջրիկուտեմ, դաղձ, ջրա-
փափուկ ճուճռուկ:

Արցախի դաշտերում՝ շոմին (վայրի սպանախ), տոմ-
բալան (նման է գետնախնձորի և կուտուի միայն խորոված),
սամիթ և կապար:

Խոտ, առոյտ, խնձործաղիկ, կոռթնը, արջաթանթուլ,
տխտրկոռնը, շնավարունկ, լօշտակ, սուտ եղինճ, կածուկ,

[1]) Ինչպէս մորենիների թուփերն նոյնպէս և պտուղներն չորս տեսակ են, այդ. են ծմակամոշ՝ մալինա, սևամոշ՝ անդերում եղածն, մռա-
մոշ, որոց ցօղուններն 2—3 թիզ միայն կբարձրանան, իսկ գետամոշն վենամէ սովորաբար գետերի և այլ ջրերի հովիտներում:

բիլբիսարի. ագռաւի սողան, նրկարար, ալակիզ, բէսանկի, պլանուկ։

ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿՆԵՐ։

Վարդ, ծմակավարդ (սպիտակ, դեղին և կարմիր և մանուշակի չափ բարձրացող), զրավարդ (մասուրի վարդ), մանուշակ, ձնծաղիկ, նովրուզ, խնձաղայ, նարկիզ, մշահամուկ (անթառամ ծաղիկ), նունուփար, կակաչ, հարսնածաղիկ, շուշան, մխակ, ձիւնածաղիկ, զամբաղ, լուսածաղիկ և ն. ն։

ՎԱՅՐԻ ՍՈՒՐԲ ԿԵՆԴԱՆԻՔ.

Մեծ և բարձր սարերում և անտառներում լինում են քօշ, այծ, եղջերու, եղն, կինճ և խոզ, իսկ ամայի դաշտերում հօրաններով այծեամն, բայց անդերում նապաստակ։

ԳԱԶԱՆ ԿԱՄ ԳԻՇԱԿԵՐ.

Առիւծ՝ խիստ սակաւ, վագր՝ նոյնպէս, ինձ, բորենի, արջ, գայլ, աղուէս, չաղալ, գիշերի, սևականջ (դարաղուլաղ) սամոյր, սկիւռ, առնէտ, խլուրդ, մուկն և ջրաշուն (Թարթառ գետում)։

ՍՈՒՐԲ ԹՌՉՈՒՆ.

Անտառներում և անդերում՝ փասեան, սալամն, կաքաւ, հաւփալ, աղաւնի, տատրակ, լորամարգի, չարտ, մոշահաւ կամ մշահաւ, որի (տուլաշ), արտուտ, սուրբ Յակովբի թռչուն, ճնճղուկ, չլածիտ։

Մեծ դաշտերում՝ կատակ հաւ (թուրաջ)։

Կուր գետի վերայ՝ արոս, սագ, բադ։

ԳԻՇԱԿԵՐ ԿԱՄ ԱՆՍՈՒՐԲ ԹՌՉՈՒՆ.

Արծիւ, անգղ, բազէ չորս տեսակ, ա. թաւաք-ղուշ, բ. թառլան-ղուշ, գ. ղզըլ-ղուշ, դ. ղիրղի, լելակ, ցին, ուրուր, չորթանագող, բու, հողմահար, գայլագռաւ, ակռաւ. կաչաղակ, ներկարար, կոցահար (ծառակուտակուտ) ճանճագող, կու, չղջիկ, ջրալին՝ ձկնկուլ, ճայ, Ղուլ։

ԵՐԳԵՑԻԿ ԹՌՉՈՒՆ.

Կու, կուկու, յոպոպ, սոխակ, լծի, բաբաճըզտ, չլածետ, դեղձանիկ, զոզոան, ջրըպըզտպըզտ, չափարծակի, շիլոշիլոյ, մշահաւ և ուրիշ հարիւրաւոր մանր թռչուններ, որոց անուններըը ոչ ժողովուրդն գիտէ և ոչ մենք։

ՁՈՒՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐ.

Կռունկ, արագիլ, սասարք, սարեակ, ծիծեռնակ։

ՍՈՂՈՒՆ ԵՒ ՁԵՌՈՒՆ.

Օձ՝ բազմատեսակ, որք են՝ Ե ա հ մ ա ր, ե լ մ ա ր, լիժ, քարը, թևաւոր [1]), գ ե ր զ ա և ջրի օձեր զանազան մեծութեամբ և զանազան գոյներով [2]), լոկ, քարաթոթոշ, կանաչ մողէզ, մողէզ, կրիա, խեցգետին, ոզնի, գորտ, կարիճ, իշախառանջ, մորմ, (Մուղանի դաշտում), քառասնոտեայ, մրջիւն, թևաւոր մրջիւն, ձիաւոր մրջիւն։

Մ իջատներ. շանաճանճ, բոռ, ճախարակ, մլակ, փընթիւռն, ճպուռն, մարախ, սևաճանճ, մեծ ճանճ, կանաչ ճանճ, ձիաճանճ, պիծակ, լուսատիկ, կետ, Աստուծոյ կով, Աստուծոյ եղն, զատիկ, ականջմտուկ, ոթեւս, մոշաթռի, ոսկեպղոջ, սարդ, թիթեռնիկ, աղօթարար (ունի կանաչ գոյն և երկար ոտքեր)։

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ.

Արցախն հարուստ է և ընտանի կենդանիներով, որք են.

Սուրբ անասուններ. գոմէշ, եզն, կով, արջառ, երինջ, ոչխար, այծ և խոզ։

ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ.

Հնդկահաւ, սագ, բադ, հաւ, աղաւնի։

---

[1]) Խիստ սակաւ է օձի այս տեսակն, որ ընդհանրապէս լինում է բարակ, կարճ, մուգ մոխրագոյն և արագաշարժ։

[2]) Աւելի մեծերն և թունաւորներն գտնուում են Մուղանի դաշտում։

188

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ... ՀԱՅԿ. ՍՍՌ-Ի ...

ԱՆՍՈՒՐԲ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ.

Ուղտ, ձի, ջորի և էշ։

ՆԱՀԱՆԳԻՍ ԲԵՐՔԵՐՆ.

Ցորեն, գարի, կորեկ, որիզ, գարնանի, գարնագարի, հաճար, սորեկ, կտաւհատ, ոսպ, սիսեռ, ոլոռն, բակլայ, լուբիայ, մաշ, խաշխաշ, վարունկ, դդում բազմատեսակ, սոխ, սխտոր, բողկ [1]) ճակնդեղ, գազար, գետնախնձոր, սեխ բազմատեսակ, ձմերուկ, սմբուկ (սև բաթլիջան) կարմիր տոմաթ, պղպեղ, տանձ, խնձոր, դեղձ, սևկևիլ, թուզ, նուռն, ընկուզ, գղեար, արքայակաղին, խաղող, գինի, օղի, բօժօժ, մետաքս, բամբակ, բուրդ։

Արդէն խօսած ենք Արցախեան ամարանոցների մասին «Աղ։ եր. և Դրացիք» գրքի 56 երեսում, վասն որոյ աւելորդ է վերստին գրել։

ՈՍԿԻ

Ոսկի ելնում է (խառն պղնձի հետ) Գարդման գաւառի Քարհատ գիւղի մօտի հանքից և Փառիսոս գաւառի Գետաբակ գիւղի հանքերից։

ԱՐԾԱԹ

Վաղ ժամանակից առատօրէն հանած են Ջրաբերդ գաւառի Մէհմանայ աւերակ գիւղի մօտ եղած արծաթահանքից. բայց այժմ մնում է անգործադրելի։

ՊՂՆՁԱՀԱՆՔ

Ա. Գտնուում է Ծար գաւառի Ռմբասարի արևելեան լանջի վերայ, որ սեպհականութիւն է Խոթա վանքին. հնուց գործածուած է հանքս, իսկ այժմ անգործածելի։

Բ. Գարդման գաւառի Քարհատ գիւղի մօտ, որ սեպհականութիւն էր Գարդմանայ իշխաններին. իսկ այժմ բանեցնում է գանձակեցի Ներսէս-բէկ Տէր-Ներսիսեանցն։

[1]) Բազմատեսակ—սև, սպիտակ, կարմիր, ամառկան։

Գ. Փառիսոս գաւառի Գետաբակ գիւղի մօտ, որ կանխաւ պատկանում է գաւառիս իշխաններին, ապա Զաքարէ և Իւանէ սպասալար իշխաններին, ապա Վահրամ իշխանին և յետոյ Կիւրիկեան թագաւորներին. այժմ գործ է ածում մի գերմանացի։

Դ. Գտնուում են շատ հանքեր Քուստի կամ Քաւս գաւառի Մրղուզ սարի հիւսիսահայեաց ստորոտների ձորերում. 1) զուտ և պատուական պղնձահանք կայ Թովուզ գետակի աջ կողմում Արջաքար կոչուած օժանդակի աջ ափի վերայ ջրախառնուրդի մօտ։ 2) Բրտանոց կամ Բիւլոր-Բիւթի ձորում, փոքր ինչ վերև առաջնից, Ե. օժանդակի աջ ափի վերայ ջրախառնուրդի մօտ։ 3) և 4) Հանքն, զուտ պղինձ, 2-ից (երկրորդից) փոքր ինչ վերև նոյն գետակի ձորում։ 5) Պղնձահանքն [1]) կայ նոյն գետակաձորի վերայ՝ Բուղդալու անուանեալ Օժանդակի վերի կողման մօտ [2])։ Կան պղնձահանքեր նաև նոյն գաւառի Նաւուրայ--ջուր—ջրաձորում, Հասան վտակի վերնամասում. նախ աջ կողմից խառնուող առուակների վերայ, ապա Զաթախ առուակի վերայ Դանիէլի-զաշ կոչուածի տակ, և ապա Արջի-կոխեր անուն ջրաձորում։ Վերջինս գործ դրուած է երբեմն։ Այժմ բոլորովին անգործածելի են գաւառիս բոլոր հանքերն։

Ներքին-Թանդիրլուի ջրաձորում կայ արծաթախառն արճճի հանք. Վերին-Թանդիրլուի ջրաձորում՝ արծաթպղինձ խառն արճիճ. Մեծ-Սադիր կոչուած առուակի վերայ կայ պղնձախառն արջասպի հանք։ Ինէկ (կով) դաղի ձորում, վերի կողմում կայ պղինձ, իսկ վարի կողմում՝ ցինկ։ Կայ նաև պատուական քարածուխ Մրղուզ սարի վերի կողմերում։

Ե. Պղնձահանք կայ նաև Դիլիջանից վերևի ձորում։

ԵՐԿԱԹԱՀԱՆՔ

Գտնուում է Գարդման գաւառի Բանանց գիւղից վերև, Բանանց գետակի ձորի աջ ու ձախ կողմերում։ Հանքերիս

[1]) Հանքս գործածութեան մէջ եղած է երբեմն։

[2]) Այս տեղերքում կան նաև երկաթախառն պղինձ և ծծմբախառն այլ բաղադրութիւններ։

արտադրած քարերում կայ և պողպատաքար. նոյնպէս և Ջաւէ գաւառի Կողբ գիւղի Բովեր կոչուած սարում [1]:

ԵՐԿԱՆԱՔԱՐԻ ՀԱՆՔ

Ա. կարգի և ամենալաւն է Խաչէն գաւառում Գանձասար վանքի սեվհական Ջրաղացաքարի հանքից ելածն, որ կայ Վանք գիւղից վերև:

Բ. Նոյն գաւառում Առաջաձոր գիւղի մօտ:

Գ. Փառիսոս գաւառում, Խամշի վանքի արևելեան կողմում Ջոքէ քարահանքից ելածն:

ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՔԱՐԱՀԱՆՔԵՐ.

Ա. կարգի և մարմարանման քարահանքն գտնուում է Գարգման գաւառի Քարհատ գիւղի մօտ: Հանքիս մօտ կան և շինութեան ուրիշ քարահանքեր ևս:

Բ. կարգի ագնիւ քարի հանք կայ Խաչէն և Տիգրանակերտ գաւառների սահմանագլուխ սարում, որի շարունակութիւնն հասած է մինչև Ջրաբերդ և Կողթ գաւառի վերջի սահմանն:—Սալիտակ են երկու քարահանքերիցս ելած քարերն ևս: Համարեա թէ լեռնային բոլոր գաւառներում ևս կան սալիտակ, մոխրագոյն և տորոնագոյն քարահանքեր. օր.

Գ. Խազազի սալիտակ քարահանքն Վարանդում:

Դ. Տորոնագոյն քարահանքն Դող բերդի մօտ Դիզակում:

Ե. Մոխրագոյն քարահանք Շուշում, Քառասնի, Դաշբուլաղ, Բալլուջա, Խանձք, և այլն գիւղերի մօտ եղած լեռներում. (Խաչենում): Տորոնագոյն ագնիւ քարահանք Ծմակահող գիւղից վերև, որով շինուած է Գանձասար վանքն. այսպէս են Խոթայ, Խաթրայ և Ծարայ, Վարագայ, Գօշայ և Հաղարծնի վանքերի քարահանքերն: Իսկ մոխրագոյն են կամ մուք գորշագոյն միւս վանքերի շինութեանց քարերն:

[1]) Այժմ գործածական է միայն Գետապակի, Քարհատի և Դիլիջանի հանքերն: Անգործածելի են և արծաթահանքն, նոյնպէս և երկաթահանքերն:

ՆԱԻԹԱՀԱՆՔ [1])

Գտնուում է Ուտի—առանձնակ գաւառում Մարալեան գիւղի արևմտեան կողմում: Հանքից ելնում է սև նաւթ, որ թանձր է քան Բագուի նաւթերն: Նաւթից գրեթէ չեն պատրաստում վառելու, զի թանձր է հեղուկն, այլ պատրաստում են մի քանի տեսակ իւղեր, որք գործածական են զանազան մեքենաների համար:

ԱՐՑԱԽԵԱՆ ԳԱԻԱՌՆԵՐ.

Գարգարացւոց բնակութեան տեղին, որ սկզբում կոչուած էր Գարգար [2]), հետզհետէ ընդունում է Արցախ [3]), Փոքր-Սիւնիք [4]), Խաչենք [5]), Սեաւ այգի [6]) և Ղարաբաղ [7]) անունները:

Անհաւասիկ այսպիսի փոփոխութեանց ենթարկուած են նաև նահանգիս բոլոր գաւառաց անուններն: Մեր յարգելի բանասէրները և ընթերցողները այսչափ փոփոխութեանց ծանօթացնելու համար՝ հարկ համարեցինք կարգաւ դասաւորել այստեղ գաւառներիս նախկին, փոփոխեալ և այժմեան անունները ծանօթագրութեամբ հանդերձ:

Բնութեան ճարտարապետն երեք մասի բաժանած է Արցախի բոլոր գաւառները՝ որք են Դաշտային, Լեռնային և Հարաւային և կամ Ստորին, Միջին և Վերին: Դաշտային կամ ստորին գաւառներն ընկած են Երասխ և Կուր գետերի, Աղստև գետի և Փոքր-լեռնաշղթայի միջավայրի տարածութեան վերայ: Լեռնային կամ Միջին գաւառներն ըն-

[1]) Փորելու, հանելու, և այլ գործիքներն նոյն են, ինչպէս են Բագուի հորերինն:

[2]) Յարդ ևս Գարդար է կոչուում գետակն, որ իւր սկիզբը առնում է Ջաւախա սարից, բաժանում իրրև սահման Խաչէն գաւառը Վարանդայից, հոսում Գարգարացւոց դաշտի միջով և թափուում Կուր գետի մէջ:

[3]) Խոր. Գ. գիրք Գ. գլ. Ասող. եր. 65 ևն:

[4]) Խոր. Գ. գիրք Գ. գլ. Ասող. եր. 65. տպ. Մոսկ. և Սամ. Ան. եր. 192:

[5]) Ասող. եր. 107 և 256:

[6]) Սամ. Ան. եր. 193:

[7]) Մատենագրութեանց մէջ առաջին անգամ պատահում ենք Ղարաբաղ անուան, որ գործ ածած է 1388 թիւ. Փրկ. Թով. Մեծ. եր. 20:

կած են Փոքր-լեռնաշղթայի և Մեծ-լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերի և Ձորագետի միջև տարածուած մասի վերայ։ Հարաւային կամ վերջին գաւառներն ընկած են Հակարի գետի ձախ ափերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ Երասխից մինչև Ծար գաւառի սահմանն։

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԱՄ ՍՏՈՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ.

Ա. Գաւառն, որ ընկած է Երասխի և Ղուրու չայ գետակի ձախ ափերի, դաշտաբերանի և Մուխանք գաւառի սահմանի մէջ, կոչուած է Պիանք [1]), այժմ Ջաբրայէլի գաւառ։

Բ. Գաւառն, որ ընկած է Երասխի ձախ ափի, Վարդանակերտ գաւառի և դաշտաբերանի տարածութեան մէջ, ստացած է Մուխանք [2]), Մուղան [3]) այժմ Միլին դաշտ անուննները։

Գ, Դ, Ե և Զ գաւառներն, որք ընկած են Կուր գետի և Գարգար գետակի աջ ափերի, դաշտաբերանի և Մուխանք գաւառի սահմանի մէջ, ստացած են Արանռուտ, Տռի, Ռոցպատեան և Աղուէ [4]) այժմ երկուքն միասին՝ Քեաբիրլու։ Իսկ վերջին երկուսն՝ Ջաւանշիր։

Է. Գաւառն, որ ընկած է Կուր գետի և Խաչենագետի աջ և Գարգարի ձախ ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Տուչքատակ [5]), Տիգրանակերտ [6]) Թառնագիւտ այժմ Շահ-բուլաղ անուննները։

Ը. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Խաչենագետի,

[1]) Մաս. Խոր. եր. 609։
[2]) ,, ,, ,, 609։
[3]) Կիր. Վարդ. Բարձ. Եսայի Կաթ.։
[4]) Մաս. Խոր. եր. 610 և ձեռագիրներ։ Հարկ է յայտնել, որ անհնարին է գտնել գաւառներիս մէջ ընկած միջնաադահմանները, քանզի ամենևին չկայ որոշող բնական մի նշան։ Մով. Կաղականդուացին կիշում է միայն Մուխանք, Տրի և Աղուէ այժմ (Ալուանդ) գաւառները (եր. 264),
[5]) Մաս. Խոր. եր. 610։
[6]) Սեբ. եր. 92։ Մով. Կաղ. եր. 241. Տկռանակերտ. և այլն։

Կուրակ գետակի և դաշտաբերանի մէջ, ստացած է Ուտիառանձնակ [1]), Ուտի գաւառ, այժմ Ջուանշիր։

Թ. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Կուրակ և Շամքոր գետակների և դաշտաբերանի մէջ, ստացած է Շիկաշէն [2]), Շակաշէն [3]) Արշակաշէն [4]) Գանձակ, Գեանջա, այժմ Ելիսաւետապօլի գաւառ։

Ժ. Գաւառն, որ ընկած է Շամքոր գետակի ձախ, Կուր և Աղստև գետերի աջ ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Կողթ [5]), Շամքոր [6]) և Ջակամ [7]). այժմ Շամշադին և Ղազախ անուննները։ (Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ և Ժ գաւառներն երբեմն պատկանում էին Ուտի նահանգին)։

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ ԿԱՄ ՄԻՋՆ-ԱՐՑԱԽ.

ԺԱ. Գաւառն, որ ընկած է Երասխ գետի ձախ և Ղուրուջայի աջ ափերի, Հագրութի և Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագծի մէջ, ստացած է Պազկանք [8]), Պանձկանք [9]), Դիզակ [10]), այժմ Ջաբրայէլ անուննները։

ԺԲ. Գաւառն, որ ընկած է Ղուրու չայի ձախ և Գարգար գետակի աջ ափերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի գագաթնագծի և դաշտաբերանի մէջ, ստացած է Մխէս-Հաբանդ [11]) կամ Հաբանդ—Ամարաս [12]) Վարանդայ [13]) այժմ ևս Վարանդայ։ անուննները։

[1]) Մաս. Խոր. եր. 610։
[2]) ,, ,, ,, ,,
[3]) Բուզ. եր. 210. Մով. Կաղ. 251
[4]) Մով. Կաղ. եր. 265։
[5]) Բուզ. եր. 176—177։ Մաս. Խոր. 610։ Մով. Կաղ. եր. 244։
[6]) Մով. Կաղ. եր. 252։ Կիր. եր. 114։
[7]) Առ. պատմ. եր. 9։ Ես. Կաթ. 23։ Հարկ է յայտնել, որ գաւառիս արևելեան կողմն այժմ կոչուում է Շամքոր, արևմտեանն՝ Ղազախ, իսկ միջավայրն Ջակամ։
[8]) Մաս. Խոր. եր. 609։
[9]) Ձեռագիրներում Բազկանք, Պանձկանք։
[10]) Ես. Կաթ. եր. 36։ Գազա. եր. 195։
[11]) Մաս. Խոր. եր. 609։
[12]) Մով. Կաղ. եր. 264. «Հաբանդ և Ամարաս». իսկ ուրիշ տեղերում երբեմն Ամարաս։
[13]) Ես. Կաթ. եր. 37։ Գազանիք. եր. 201։

ԺԳ. Գաւառն, որ ընկած է Գարգար գետակի ձախ և Թարթառ գետի աջ ափերի, դաշտաբերանի և Քիրս լեռնաշղթայի շարունակութեան գագաթնագծի մէջ, ստացած է Մեծ-իրանք [1]), Մեծարանք [2]), Ներքին-Խաչեն [3]) այժմ Խաչեն անունները:

ԺԴ. Գաւառակն, որ ընկած է Թարթառի և Եանշաղի ձախ և Թրղու աջ ափերի մէջ, ստացած է Ըստխսական [4]) Ըռստակ [5]) Հաթերք անունները:

ԺԵ. Գաւառն, որ ընկած է Մռաւ բարձր լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի և Թարթառ ջրերի ձախ և Կուրակ գետակի աջ ափերի մէջ, ստացած է Մեծ-կողմանք [6]) Մեծկուանք [7]), Զարաբերդ [8]), Թալիշ, Կիւլստան Զրաբերդ [9]) այժմ Ջուանշիր անունները:

ԺԶ. Գաւառն, որ ընկած է Կուրակ և Շամքոր գետակների, դաշտաբերանի և Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ, ստացած է Գարդման [10]), Գարդմանաց ձոր [11]), Գարթմանիկ [12]) այժմ Գանձակի գաւառ անունները:

ԺԷ. Գաւառն, որ ընկած է Շամքոր գետակի միջին օժանդակի և Գեղամայ լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան և Տաւուշ գետակի հարաւ-արևելեան օժանդակի (Ախնէի) ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Փառնէս [13])

[1]) Մատ. Խոր. եր. 609: Մով. Կաղ. եր. 263:
[2]) Տէս Արձան. Վանուց Մեծիրանաց դրքիս:
[3]) Գաւառիս ներքին մասն կոչուում է Ներքին-Խաչեն (Վարդ. Բարձր. եր. 184):
[4]) Մատ. Խոր. եր. 606: Ձեռագիրք Ռաստակ.
[5]) Մով. Կաղ. եր. 163:
[6]) ,, ,, եր. 94 և 163:
[7]) Մատ. Խոր. եր. 609:
[8]) Մով. Կաղ. եր. 124. Կիր. Գանձ. եր. 216:
[9]) Գաղատ. եր. 205:
[10]) Մատ. Խոր. եր. 258, 606 610.
[11]) ,, ,, եր. 258:
[12]) Վարդ. աշխարհ. «Գարդման գաւառ Գարթմանիկ է»:
[13]) Մատ. Խոր. եր. 609: Մով, Կաղ. եր. 273 և 279:

Փառիս [1]), Փառիսոս [2]): այժմ Շամշատին անունները:

ԺԸ. Գաւառն, որ ընկած է Տաւուշ կամ Թովուզ գետակի Հարաւային (Ախնջի) օժանդակի, Աղստև գետի և Գեղամեան լեռնաշղթայի և դաշտաբերանի մէջ, ստացած է Քուստի [3]), Քաւս [4]), այժմ Ղազախ անունները (մեծ մասն Շամշադին):

ԺԹ. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Ձորագետի, Խրամի, Աղստև գետի, Պօղոս-քիլիսայի և Կայենի լեռների գագաթնագծերի մէջ, ստացած է Ձաւէ [5]), Ձորագետ, Երկիր Սևորդեաց [6]), երկիր Կայենոյ [7]) այժմ Ղազախի գաւառ անունները:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ.

Ի. Գաւառն, որ ընկած է Պազկանց գաւառի, Երասխ և Հակարի գետերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի Հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Բերդաձոր [8]), Բերդձոր [9]), Բելուկան [10]), Ղալաղշլաղի ձոր, Ղալա-գրասի անունները, այժմ Համարուում է Ջաբրայէլի գաւառ:

ԻԱ. Գաւառն, որ ընկած է նոյն լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան, Տուշուց Կօրիս տանող մեծ ճանապարհի և նոյն Հակարի գետի մէջ, ստացած է Հարճ-

[1]) Մով. Կաղ. եր. 273:
[2]) Վարդ. Բարձր. եր. 134 և Ասող. եր. 154, 198, 256 և 283:
[3]) Մատ. Խոր. եր. 906. Քստակ, Քուստի, ձեռագիրք Քուստի:
[4]) Մով. Կաղ. եր. 273. «Սահակ, որ և Սևադայ կոչեցաւ... առհասարակ տիրեաց Գարդմանայ, Քաւայ և Փառնայ գաւառաց, այլ և Ձորագետոյն բովանդակ եղև իշխան»:
[5]) Մատ. Խոր. եր. 606:
[6]) Յով. Կաթ. եր. 234:
[7]) Վարդ. Բարձր. եր. 184, և Կիր. եր. 122 «յաշխարհն Կայենոյ» «ի գաւառին Կայենոյ». Հարկ է յայտնել, որ Ձորագետ էր կոչուում գաւառիս ձորագետի կողմերն. իսկ Կայենոյ գաւառ՝ գաւառիս հարաւային վերնամասն:
[8]) Մատ. Խոր. եր. 609:
[9]) Մով. Կաղ. եր. 264:
[10]) «Վիճակեցաւ և սահմանով ի յԱղուանայ գետոյ մինչ'ի Երասխն.. Վակունիս, Ջառիստ.. Հաքարի.. Դիզակ, Բելուկան» (Արձան. Գուչայ Վանուց):

լանք [1]) Զառիստ [2]) այժմ Հաճի Սամլու կամ Հաճիլար։

Իբ. Գաւառն, որ ընկած է Հարճլանք և Ծար գաւառի սահմանների մէջ, ստացած է Վակունիք [3]), Վերին-Վայկունիք [4]) անունները։

Իգ. Գաւառն, որ ընկած է Մուսա սարի հարաւահայեաց լանջերի, Ոմբասարի գագաթնագծի, Վակունիք և Ուստակ գաւառների սահմանների մէջ, ստացած է Սիսական-Ոստան [5]), Սիսական [6]), Ծար [7]) Զար [8]), այժմ Զար գաւառ։

Երևի թէ Խորենացին գաւառներիս հետ հաշուած է և Վարդանակերտ գաւառը, որով լրանում է ուղիղ քսան և չորս գաւառներն Արցախեան նահանգի։

Ա. ՊԻԱՆ ԳԱՒԱՌ.

Խիստ պակաս է գաւառիս ջուրն։ Համարեա թէ ջուր գտնուում է միայն Երասխի, Ղուրու չայի և Քեօնդալանի եզերքներում. վասնորոյ սակաւ են և գաւառիս բնակիչներն, որք են միայն մահմետականներ։ Ինչպէս երևում է հին առուի հետքից, Աղուանից թագաւորների ժամանակ ջուր բերուած է երասխից, որով ջրուած է ոչ միայն Պիան այլ և Մուխանք և այլ գաւառներն։ Հայաբնակ էր գաւառս վաղուց. բայց հայկական հնութիւնները խպատ անհետացած են մահմետական բնակիչների ձեռնով։

---

[1]) Մատ. Խոր. եր. 609։

[2]) Արձանագ. Գուչայ վանուց։

[3]) Մատ. Խոր. նոյն եր.

[4]) Մով. Կաղ. «Կալեալ զգաւառսն... որք են այսօքիկ՝ Վերին Վայկոյնիք, Բերդձոր, Սիսական»։

[5]) Մատ. Խոր. եր. 609։

[6]) Մով. Կաղ. եր. 264։

[7]) Ստ. Օրբ. Ծէ. գլ.։

[8]) Պարսից Շահերն Աղուանից Կաթուղիկոսներին տուած հրովարտակների մէջ յաճախ յանուանէ յիշում էին այսպէս. «Պետրոս Կաթուղիկոսին (Աղուանից) Գանձակայ, Ղարաբաղու, Ջառ-Ջրիլու (ոսկին առատ Ծար գաւառ) և Շամախու, ևն.» (Սար. Ջալ. ձան. եր. 491)։

Բ. ՄՈՒԽԱՆՔ ԿԱՄ ՄՈՒՂԱՆ ԳԱՒԱՌ (1)

Ընդարձակ է այս բոլոր գաւառներից, բայց այժմ ապարդիւն, անբնակ և անջուր է։ Այժմ համարեա թէ ամայի է լայնածաւալ դաշտս։ Բայց կայ մի հնութիւն—Աւերակ բերդ [1]). (Էօրան ղալա) անուն, որից մինչև Ամարաս մօտաւորապէս $8^1/_2$ մղոն է։ Բերդս պարսպուած է թրծեալ մեծ մեծ և հաստ հաստ աղիւսով, որից շատ մասը քանդած և տարած են Աղջաբադեցիք և Աղախանլու մահմետականներն, որ Երասխից շատ հեռի չեն։ Բերդումս կան հին շինութեանց շատ աւերակներ։ Երևում են բաւականին փոքրուածքներ, քանդուած տեղերից, ինչպէս վկայում են, գտած են ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ դրամներ և խեցեղէն անօթներ։

Բերդիցս քառորդ մղոնաչափ վար կայ հայկական հնգտարան, որի մէջ կան խաչազարդ տապանաքարեր։ Պարսիկներն հնգտարանիս մօտ կառուցած են Փեյղամպեր անուն մի գմբեթ, որի մէջ կայ մի զոյգ գերեզման կից միմեանց, խաչանիշ տապանաքարերով։ Մահմետականաց համար մեծ ուխտատեղի է այս։ Հարուստ շիաներն գմբեթիս շրջապատում են թաղում իւրեանց մեռելները։ Գմբեթիս մօտ շինուած են մի քանի բնակարաններ թէ կարգացող մոլա պահապանների և թէ ուխտաւորների համար։ Անտանելի են այստեղ ամրան օդն և կլիման, քանզի այստեղ կան թունաւոր օձեր, կարիճներ, մորմ, մոծակ, բոռ և ուրիշ մժղուկներ։ Բայց կան, և հօրաններով այծեամներ գաւառիս դաշտումն, ուր չկան այժմ ոչ անտառ և ոչ ջուր։

Գ. Գ. Ե. և Զ. [2]) գաւառներն որք են Արանռոտ, Տուի,

---

[1]) Աւերակիցս տեղափոխուած են Դիզակ գաւառի Թաղասեռ և Որդնաշատ գիւղերի բնակիչներն։ Աւերակս կոչուում է և Մխիին քաղաք և դաշտս Մխիին դիւղ։

[2]) Արցախի բուն գաւառներին են վերաբերում Պիանք և Մուխանք գաւառներն. բայց որովհետև գոնուում են դաշտային մասում, վասն որոյ դասուեցան ի շարս դաշտային գաւառաց—Ուտի նահանգի։ Սակայն յայտնի են արդէն Ուտի նահանգի գաւառներն։

Ռոցպատեան և Աղուէ, (2) նմանապէս մահմետականաբնակ են այժմ։ Գաւառներիս բնակիչներն շարունակ երթևեկում են ամարանոց և ձմերանոց։ Գաւառներս հարուստ են ոչխարներով, տաւարներով, ձիերով և ուղտերով։ Գաւառներս առհասարակ ուտիաբնակ եղած են։ Մահմետականք այնպէս անյայտացրած են եկեղեցեաց և հանգստարանների քարերը, որ նշաններն անգամ չեն գտնուում կամ հազիւ ուրեք։

Է. ԳԱՒԱՌ ՏՈՒՉՔԱՏԱԿ, **ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ**, ԵԻ ԱՅԼՆ.

Գաւառս խիստ արդիւնաբեր է և հարուստ այգիներով, պարտէզներով, ցորենի, գարու, կորեկի, ձմերուկի, սեխի, վարնկի, և այլ նշանաւոր մրգեղինաց բերքերով. և չորքոտանի սուրբ և անսուրբ անասուններով. սակայն հարկ է ասել, որ պակաս է գաւառիս ստորին մասի ջուրն։

Գաւառիս վերնամասումն է Տիգրանակերտ [1]) աւանն, որ աւերակ է այժմ։ Բայց հարկ է յայտնել որ ընդարձակ գիւղաքաղաք եղած է այս և երբեմն առաջնորդանիստ և գաւառագլուխ. տակաւին մնում է ընդարձակ եկեղեցու աւերակն, շուկայի և տների և բաղանիսների կիսաւեր քարուկիր շինութիւններն են։ Աւերակիս ստորոտումն է Շահ-բուլաղ մեծ աղբիւրն, իսկ վերի ծայրումն՝ հանգստարանն։ Իսկ աւերակիցս վերև է Վանքասարն և Հովուի սարն. որոց հետ կապուած է աւանդական պատմութիւն (տես ծանօթ. 3)։ Աւերակիս մօտ է և մի նոր բերդակ, որ շինուած է ամբողջապէս սրբատաշ քարով և կոչուում է Թառնագիւտի կամ Շահբուլաղի բերդ։

Գաւառիս ստորին մասումն են Սոլթան-պուտ հողեայ բերդն, որ բլուր ձևացած է իւր բարձրութեամբ և Բելուկան աւերակ քաղաքատեղին Գարգարի ձախ կողմում, որ այժմ կոչուում է Բայեաթ և ուրիշ 7 հողաբլուրներ։

---

[1]) Եսայի Կաթողիկոս (տպ. ի Շուշի), Սէբէոս և այլք Տիգրանակերտ են անուանում, իսկ տպ. յԵրուսաղ. սխալմամբ Ականակերտ, այլք Տգրանակերտ, Տգռանակերտ։

Ը. ՈՒՏԻ—ԱՌԱՆՁՆԱԿ ԳԱՒԱՌ (4)

Ոչ ինչ պակաս հարուստ է և գաւառս ցորենով, գարիով, որիզով և բամբակով։ Ձմերուկ, նշանաւոր սեխ (չորս տեսակ), բրինձ, մաշ, սոխ, սխտոր, գազար, սևկևիլ, խաղող, և այլն կազմում են գաւառիս բերքերն։ Գաւառիս ամեն կողմերով առատօրէն վազում են առուներ, որք հանուած են Թարթառ գետից, վասնորոյ և բազմարդիւն է գաւառս և արգաւանդ հողս։

Գաւառումս է Աղուանից երկրորդ մայրաքաղաքն Պարտաւ, որ հիմնուած է Թարթառ գետի ձախ կողմում և որ հեռի է Եւլախի—երկաթուղու կայարանից երեք մղոնից փոքր ինչ աւելի ճանապարհաւ։ Այժմ համարեա թէ մի գիւղ է Պարտաւն, զրկուած իւր մեծութեան և հարստութեան փառքից, սակայն հնութիւններն և աւերակներն այնքան շատ են, որք պահպանած են քաղաքի յատկութիւն։ Քաղաքս ունեցած է համարեա թէ մի մղոն երկարութիւն և կէս մղոնից աւելի լայնութիւն, ինչպէս երևում է աւերակի հեաքերից և փորուածքների նշաններից։ Հին շէնքերն ընդհանրապէս շինուած են եղել եփած աղիւսով և պարզ հողեայ ցեխով, զոր օրինակ երևում են նոր ի նորոյ քանդած ստորերկրեայ հնութիւններից։ Հողն ունի կաճային զօրութիւն, որ անքակ պահած է մօտ հազար տարի ստորերկրեայ բնակարանները։ Մինչև 6 մեթր փորուածքներից ելնում են ոսկի, արծաթ, պղինձ հին դրամներ և անօթներ և երկաթեղէն ու խեցեղէն գործիքներ, կարասիներ և ամաններ։

Այժմ անհետացած են քաղաքիս շրջապարսպի պատերն, բայց տակաւին մնում են երեք միջնաբերդեր, որոց պարիսպներն շինուած են հողեայ ցեխով։ Առաջին միջնաբերդն, որ գտնուում է փոշտի ճանապարհի տակին, այս է արևելեան կողմում, ունի վեց բարձրագոյն բուրգեր և հաստ ու բարձր պարիսպ. որի արևելեան կողմից խախտուած է փոքր ինչ տեղ։ Շրջապարսպիս մէջ տեղում արձանացած է մի երկյարկ աշտարակ, որ շինուած է թրծեալ աղիւսով և կրաշաղախ

ցեխով։ Աշտարակս ունի կլորակ ձև, $31^1/_2$ մետր հաստութիւն (արտաքուստ չափելով) և մօտ 11 մետր բարձրութիւն։ Խաչաձև շինուած է գետնայարկն, որի առաստաղի թաղն փլած է այժմ։

Խաչաձևի մէն մի թևից բացուած է մի մի լուսամուտ, որոց վերի ծայրերն հասած են մինչև վերնայարկի ստորոտն։ Երևի թէ գերեզմաններ կան գետնայարկումս, որք ծածկուած են փլուած թաղի տակ։ Արտաքուստ զարդարուած է վերնայարկն կարմիր, կանաչ և սպիտակ մանր աղիւսներով։ Վերնայարկիս վերի կողմին մօտ կան արաբական սպիտակ գրեր. իսկ ստորին կողմին մօտ մանր աղիւսներ [1])։ Տեղ տեղ քանդուած են՝ վերի յարկից գլխի կողմն և վարի յարկից՝ 1 մետր և 80 սան. և միանգամայն երկու յարկերի դռներն։ Բերդումս է արքունի ուսումնարանն և վարժապետի բնակարանն։

Երկրորդ բերդակն, որ նմանապէս շինուած է հողեայ ցեխով, առանց բուրգի է և կիսաւեր և գտնուում է մեծ ճանապարհի արևմտեան եզրի մօտ և ունի 104 մետր երկարութիւն և 93 լայնութիւն։ Բերդակիցս շատ հեռի չեն և միւս միջնաբերդերն։

ՈՒԽՏԱՏԵՂԻ

Միևնոյն ճանապարգի արևելեան կողմում է Իմամզատէ կոչուած մահմետականաց ուխտատեղին, որ ունի թրծեալ աղիւսով և կրաշաղախ ցեխով շինուած մի շինութիւն, որ ունի երեք դուռն մի՝ հարաւային, մի արևմտեան և մի հիւսիսային կողմից։ Շինութիւնս գրեթէ իւր մէջ տեղում ունի մի խաչաձև, միջակ, գմբեթաւոր և սեներկանման յարկ, որի մէջ տեղում ամփոփուած են երկու սուրբ անձանց մարմիններն։ Գերեզմաններիս վերայ, որ թաղուած են կից, ծածկուած է մի մանրաչեայ, փայտաշէն վանդակ, իսկ վերջնոյս վերայ թանկագին և ոսկեթել ծածկոց։ Վանդակիս

[1]) Ոմանք կարծած են և կարծում են թէ արաբական գրեր են սոյն աղիւսներն։

տակ յայտնի երևում են գոյգ տապանաքարերն. իսկ սորա աչքերից կապուած և կախուած են հազարաւոր, գոյնզգոյն թելեր և մետաքսեայ ու բամբակեայ ծուէններ, որք կապուած են մահմետական ուխտաւորներից մի մի խնդրուածքի համար։ Ուխտատեղի մզկիթս ունի շրջապարիսպ, որի հիւսիսային ներսի կողմում շինուած են սենեակներ թէ կարդացող մոլլաների համար և թէ աղօթաւոր ուխտաւորների։ Թէ պարսպի ներսն և թէ դուրսն լի է սրածայր և նախշուն տապանաքարերով և գերեզմաններով։

Ուխտատեղիցս մի քանի քայլ դէպի արևելք կայ վեցաչեայ մի գմբեթ՝ ծածկուած բլրի տակ։ Գմբեթիս աչքերն ներքուստ զարդարուած են սպիտակ, սև և դեղին յախճապակեայ աղիւսով։ Այս ևս ուխտատեղի է մահմետականաց և հանգստարան։

Շիա աղանդին են պատկանում Պարտաւիս այժմեան բնակիչներն։ Այստեղ կայ շուկա և օրավաճառ, որ լինում է ամենայն ուրբաթ օրեր, ուր համախմբուում են ամեն կողմերից բազմաթիւ առևտրականներ։

ՀԻՆ ԿԱՄՈՒՐՋ.

Հեղեղատներից երևում է որ Թարթառ գետն երեք անգամ փոխած է իւր ընթացքը Պարտաւի մօտերքում—նախ հոսած է Պարտաւի հարաւային կողմով կէս մղոնաչափ հեռի, որի անջրդի հեղեղատն այժմ կանաչազարդ հովիտ է. երկրորդ՝ հոսած է Պարտաւից մօտ քառորդ մղոն հեռաւորութեամբ, որի վերայ շինուած է վաղուց մի քարուկիր կամուրջ, բայց անջրդի է այժմ և այս վովիտ ձևացած հեղեղատն. իսկ այժմ հոսում է Թարթառն ո՛չ այս և ո՛չ այն հովտով, այլ երկու հին ճանապարհների միջնավայրով բացած է իւր համար նոր ճանապարհ, որից հոսում է այժմ։

Կամուրջս ունի 170 մետր երկարութիւն, 5 մետր լայնութիւն և 16 աչք, որոց կամարներն արդէն քանդուած են և մնում են միայն ոտներն և երկու կողմերի պատերն։ Սրբատաշ եղած են բոլոր անկիւնաքարերն, իսկ

անտառ՝ մնացեալ քարերն։ Ինչպէս վկայում են ուշեցած է հայերէն արձանագրութիւն, բայց անյայտացած է, չ'կայ այժմ։ Աւանդաբար ասում են թէ Աղուանից Վաչէ Բ. թագաւորն շինած է կամուրջս։

Ա. ՀԱՍԱՆ-ՂԱՅԱ

Հայաբնակ գիւղս, որ մօտ մղոնաչափ հեռի է Պարտաւից, հիմնուած է նոյն դաշտի վերայ Թարթառի ձախ կողմում։ Բնակիչք բնիկ, հողն բեկական, ջրարբի և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն. ամրան ծանր օդն և կլիման և տենդաբեր ջուրն (Թարթառի ջրից չէ, այլ սև ջուր) երկար կեանք 55—60 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին, գետնափոր, հողաշէն. ծուխ 46, քահանան գալիս է Մարալեան—Սարովից. արական 158, իգական 160։

Գիւղիս հայ ժողովուրդն զզուելով իւր Պարսիկ-բէկի անկարգ արարմունքներից՝ 1880 թուին տեղափոխուում է Փիրումեանց Նիկալայ-բէկի կալուածն, որ գտնուում է Մարաղայ գիւղից վերև, և բնակութիւն հաստատում նոյն կալուածի մէջ։ Սակայն 1883-ին՝ որպէս թէ անհամաձայնութեան պատճառու՝ վերստին վերադառնում են իւրեանց նախկին գիւղն Հասան-Ղայա ինչ ինչ հանգամանքներից ստիպեալ։

Հարկ է յայտնել որ Թարթառ գետիս ձախ կողմի մարմնաւոր գործերն պատկանում են Գանձակի մարմնաւոր դատարաններին, իսկ հոգևոր գործերն՝ Արցախի առաջնորդութեան։

Բ. ՂԱՀՐԻԼԱՐ ԿԱՄ ԽՈՐՈՋԼՈՒ.

Շէնս հիմնարկուած է նոյնպէս Թարթառի ձախ կողմում. բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, նոյն են նաև օդն, կլիման, ջուրն և երկար կեանքն. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Մարալեան—Սարովից։ Ծուխ 20, ար. 60, իգ. 53։

Գ. ՂԱՐԱՄԱՆԼՈՒ.

Գտնուում է Ղահրիլարի հիւսիսային կողմում, փոշտի հին ճանապարհի վերայ։ Ամբողջապէս հայ եղած են գիւղիս նախկին բնակիչներն [1]), բայց այժմ մնացած է միայն եօթն գերդաստան հայ, իսկ մահմետական են ամենամեծ մասամբ մնացեալներն։ Հայոց հոգևոր պէտքերը կատարուում է Սարով գիւղի եկեղեցում Սարովի քահանայի ձեռնով։ Ծուխ, 7. ար. 29. իգ. 28։

Դ. ՍԱՐՈՎ.

Գիւղս, որ գտնուում է Ղարամանլուի հիւսիս-արևմտեան հանդէպ, խիստ մօտ, նոյն դաշտի վերայ, ծածկուած է այգիներով։ Բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն. տեղական բերքերն նոյն (այստեղ լինում է առատ կապար, վայրի սամիթ, ղարաղան, որից շինում են օճառաքար, և մատուտակ)։ Օդն և կլիման ծանր ամրան, ջուրն Թարթառից, երկար կեանք 70—75 տարի. եկեղեցին նորաշէն, հոյակապ, բոլոր անկիւնաքարերն և կամարներն շինուած սրբատաշ քարով, որի երկարութիւնն է 22 մետր 28 սանթ. և լայնութիւնն՝ 12 մետր 35 սանթ. [2]) քահանայ մի։ Գիւղիս հանգստարանում ամփոփուած են ցարդ և ամփոփուում են Սարովիս, Ղահրիլարի, Բօզլուի և Մարալեան-Սարովի ննջեցեալներն, որոց մէջ մի տապանաքարի վերայ փորագրուած է. «Ծապանս Մէլիքին. Ռձիբ. էր»։ Ծուխ 141. ար. 484, իգ. 440։

Ե. ՄԱՐԱԼԵԱՆ-ՍԱՐՈՎ.

Հիմնուած է Սարովի հիւսիսային կողմում. բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն. տեղական

[1]) Աւանդաբար պատմում են թէ Բօզի եղած է գիւղիս նախկին անունն, իւր հիմնադիր Բօզու անուամբ, որ մի քաջ և ազդու մարդ եղած է։ Յետոյ պակասած են բնակիչներն. թրքաբնակ լինելուց վերջն փոխուած է Ղարամանլու։

[2]) Հին եկեղեցու աւազանի արձանագրութիւնն. «Ցիշատակ է սուրբ աւազանս Սարովեցւոց Սուրբ Աստուածածնայ եկեղեցուն Թվ. ՌՄՂԷ»։

բերքերն, օդն, կլիման, ջուրն և երկար կեանքն՝ նոյն. եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի, որ հովուում է և Ղահրիլարի հոգևոր հօտը: Ծուխ 32. ար. 126. իգ. 124:

Չ. ԵԱՐՄՋԱՆ.

Հիմնուած է Թարթառ գետի աջ կողմում, խիստ մօտ Սէյսուլան գիւղին. հողն բէկական, բազմարդիւն. տեղական բերքերն նոյն. օդն և կլիման՝ ծանր ամրան. եր. կեանք 65. եկեղեցին և քահանան Սէյսիւլանինն են: Ծուխ 11. ար. 30. իգ. 25:

Է. ՍԷՅՍԻԼԱՆ.

Հիմնուած է Թարթառի աջ կողմում, Մարաղա գիւղից բաւական ներքև, բնակիչք բնիկ ուտիացի, թրքախօս, հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն. օդն և կլիման ծանր ամրան, երկար կեանք 65. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 35. ար. 106. իգ. 103:

Ը. ՄԱՐԱՂԱ [1]

Հիմնուած է Թարթառի աջ ափի վերայ դաշտաբերանում. բնակիչք 1828—ին գաղթած են Պարսկաստանի Մարաղայից և նոյն իսկ անուամբ հիմնած գիւղս. հողն արքունի, ջրարբի, որիզաբեր, բամբակաբեր և բազմարդիւն. տեղական բերքերն նոյն. օդն և կլիման ոչ այնքան ծանր. երկար կեանք 75—80 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանայ մի: Ծուխ 104. ար. 286. իգ. 254:

[1]) Մարաղա գիւղիս շրջակայքում գանուում են մի տեսակ բոյս, որ գործ է ածուում իբրև թէյ: Հաւատացնում են որ շատ տարբեր չէ Չինաստանի թէյից. ափսոս որ այժմ անխնամ թողած են գիւղացիք այս հաղուագիւտ բերքի մշակութիւնը:

ԲՕՐՈՄԻ Ա.ԻԵՐԱԿՆ

Գտնուում է Կուր գետի աջ կողմում Մինկեաչեւրիւր անցքի (Հուն) արևմտեան կողմում: Այս մի ընդարձակ գիւղաքաղաքի աւերակ է, որի մէջ կայ Ս. Յովհաննէս անուն մի ուխտատեղի:

Թ. ՇԱԿԱՇԷՆ ԿԱՄ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌ

Ուտի—առանձնակ գաւառի արևմտեան կողմին կից է Շակաշէն կամ Գանձակի գաւառն: Հարկ է նախ խօսել Գանձակ քաղաքի մասին և ապա գաւառների գիւղօրէից մասին, որ ամենատեսակ բարեմասնութիւններով աւելի է Ուտի—առանձնակ գաւառից:

ՆՈՐ-ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔ (5)

Հիմնուած է Գանձակ գետակի աջ ու ձախ ափերի վերայ՝ երկաթուղու գծի հարաւային կողմում: Մինչդեռ առաջ գաւառական մի աննշան քաղաք էր Գանձակս, մի քանի տարիներից ցարդ եղած է նահանգագլուխ քաղաք, որի այժմեան տարածութիւնն մի մղոն է այգիներով հանդերձ, որովք զարդարուած է քաղաքս և նոյն իսկ բնակարաններից շատերն: Հին շուկայի և քաղաքամիջի արդն ու զարդն են կաղամախի ծերունազարդ ծառերն, որք տալիս են քաղաքիս առանձին շքեղութիւն և վեհութիւն: Հին է քաղաքիս վերնամասի շինութիւնն, մանաւանդ Քիլիսաքեանդ կոչուած Հայոց թաղն, որի մէջ է մայր եկեղեցին Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, իսկ ստորին մասում Պարսից թաղն, որի մասին, ասում են թէ, հիմնուած է Ա. Շահ-Աբասից:

Հայք ունին քաղաքումս 1600 ծուխ, 4 եկեղեցի—սուրբ Յովհաննէս Մկրտիչ և սուրբ Լուսաւորիչ՝ Հայոց թաղումն. Սուրբ Գէորգ Նոր-Շուկայի մօտ, և Սուրբ Աստուածածին Նորաշէն կամ Երևանցւոց թաղումն: Հայք զբաղուում են այգեգործութեամբ, վաճառականութեամբ և զանազան արհեստներով:

Սուրբ Յովհաննէս-Մկրտիչ մայր եկեղեցին շինուած է քարուկիր, վեց միապաղաղ և բոլորշի սիւների վերայ միջակ բարձրութեամբ։ Ունի կանանց վերնատուն, երկու դուռն արևմտեան և հարաւային կողմերից, մի աւագ և չորս միմեանց վերայ շինուած փոքր խորաններ, վերին խորանների վերելակ սանտուղներն բարձրանում են աւագ խորանի աջ ու ձախ կողմերից։ Հարաւային վարի փոքր խորանում կայ երկու գերեզման. առաջնոյն տապանաքարի վերայ փորագրուած է.

«Տէր Յիսուս Քրիստոս, ՌՃՂԱ. թվին.
Այս է տապան Սուրբ Ներսէսի
Եւ Աղուանից Կաթուղիկոսի.
Եղև վախճան Հանդիսի
Երկյօբելեան կեանս հասի. (Հարիւրամեայ)
Ապա կոչումն Տեառն լսի
Փոխեալ աստէն յերկինս դասի.
Հազար երկու հարիւր ամի.
ԲՃ. (Երկոտասան) թուի
Եւ Բարագասի
Ներ սորա անուղղ յիշատակի»։

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎԵՐԱՅ

«Այս է Հանգիստ Իսրայէլին,
Որ է ազնիւ և գովելին,
Նման արդարոյն Աբէլին,
Եւ որդի Մելիք Հաթամին.
Ութոտասան կեանք սակի
Առնու անանց պարգևս լի
Եւ մեզ եթող տրտմութեամբ լի
ՌՄԻԵ. թուի
Եւ ՃԵ. Մայիսի»։

Եկեղեցուս հիւսիսային կողմի երկրորդ սիւնի վերայ խոյակին մօտ գրուած է. «Խանի» [1]։ Նոյն խոյակի արևելեան

[1]) Պատմում են թէ՝ Ջաւատ-խանն ամեն կիւրակէ օրերում գալիս է եղել և ներկայ գտնուելիս պատարագին։ Խանն սովորաբար կանգնելիս է եղել սիւնիս տակ, որն այժմ ևս կոչուում է խ ա ն ի ս ի ւ ն։

կողմում. «Լղար էրեց»։ Եկեղեցուս շինութեան բուն արձանագրութիւնն գտնուում է արտաքուստ հարաւային որմի վերայ, արևի ժամացոյցի տակ, որ է.

«Ի ժամանակին Ովանէս Կաթուղիկոսի Թվին ՌՁԲ. ամի շինեցաւ սուրբ Ովանէս եկեղեցին (ս)»։

Ներքուստ հիւսիսային որմի Ա. լուսամտի գլխին

«Յիշատակ է լուսամուտս Մայիլեանց Ղահրամանին ու ծնողաց նորին Աւագին և Եղիսաբէթին 1839 ամի»։

Բ. Լուսամտի գլխին. «Յիշատակ է սուրբ աւազանս և լուսամուտս Մահտեսի Աղաջան Խաչատուրեանի ... և ծնողաց և եղբարց 1839 ամի»։

Գաւիթ. Յետոյ շինուած են քարուկիր գաւիթ, որ կից է եկեղեցուս արևմտեան կողմին և զանգակատունն եւ կաթուղիկէն։

Եկեղեցուս արևմտեան դրան գլխին արտաքուստ.

«Հիմնեցաւ ի հիմանէ գաւիթ սուրբ Յովհաննէս եկեղեցոյս ի հայրապետութեան տեառն Եփրեմայ և առաջնորդութեան տեառն Ներսէսի Սրբազան արքեպիսկոպոսի արդեամբ և ծախիւք Մահտեսի Տէր Գէորգի Տէր Յովհաննիսեան. հայցեմ առ սիրելի եղբարցդ՝ որք հանդիպիք ընթեռնուլ՝ զմէկ բերան ղողորմի խնդրեցէք առ Աստուած 1816 ամի»։

Գաւիթս ունի երեք դուռն- հարաւային, հիւսիսային և արևմտեան կողմերից և կանանց վերնատուն որի, դուռն՝ իւր հիւսիս—արևելեան կողմից է. ներքուստ ունի $32^1/_2$ մետր երկարութիւն և 13 մետր 30 սանթ. լայնութիւն (միասին չափելով եկեղեցին և գաւիթը)։ Հարաւային դրան վերայ քանդակուած է. «Շինեցաւ դուռնս արդեամբ Յովսէփ Ջաւափ Գրիգորեանի յիշատակ 1860 ամի»։ Գաւթումս բուն տաճարի արևմտեան դրան հարաւային կողմում.

«Ի թուին Հայոց ՌՅԹԱ. շնորհիւն Աստուծոյ ես Մահտեսի Աղաջան Խաչատուրեան իմով սեպհական արդեամբ կառուցի նորաձև կաթուղիկէս Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի յիշատակ հոգւոյ իմոյ և ամենայն ննջեցելոց և կենդանեաց իմոց։ Աղա-

չեմ գտանդիպողսդ, յիշեսջիք զմեզ յարժանաւոր մաղթանս ձեր, զի միջնորդութեամբ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց ջնջեսցէ Տէր զձեռագիր յանցանաց իմոց, յամի տեառն 1862-ին Գանձակ»։

Գալթումն ամփոփուած են.

«Այս է տապան սուրբ Եղիշէի առաջնորդ Վա . . . վարդապետին Թվ. ՌՄԶ.»։

«Այս է տապան Զարաբերդցի Ալթանաս վարդապետի . . . ՌՄԾԳ.»։

«Այս է չիրիմ Սուրբ Երուսաղէմայ նուիրակ Թոխաթցի Ֆարաւան վարդապետի ՌՄԼԵ.»։

«Այս է տապան Մուտ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետի ՌՄԽԹ. յունիս ԺԶ.-ին»։

«Այս է տապան Սուրբ Ստեփաննոս Նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապետի ՌՄԶԳ.»։

Կան և քահանայից գերեզմաններ գալթիս ներսումն։ Արտաքուստ գալթիս արևմտեան դրան առաջ ամփոփուած է Գաղտնիք Ղարաբաղի գրքի հերոսներից *Դալի-Մահրասայի մարմինն*, որի տապանաքարի վերայ փորագրուած է մի ցուպ և սոյն արձանագրութիւնն. «Այս է տապան Աւագ վարդապետին, որ է Զարապերտու Մեծ—Կուէնից [1]) ՌՄԽԵ.»։ Երկրորդ հերոսն է *Թիւլի-Աղզուման*, որի գերեզմանն գըտնուում է գալթիս հիւսիսային կողմում եղած պարտիզի հանգստարանում, որի շիրմաքարի վերայ քանդակուած է. «Այս է տապան Զարաբերդցի Սարգսի որդի Աղզուման ուզպաշուն ՌՄԽԵ. թուին»։

Արտաքուստ գալթիս հիւսիսային դրան առաջ.

«Այս տապան Կորգի որդի Մէլիք Մնացականին ՌՄԻ.»։ Շարունակութիւն ունեցած չէ սորա մելիքութիւնն, այսինքն յարատևած չէ որդոց-որդի, այլ սկսուած է Մէլիք-Մնացականով և վերջացած սորա մահուամբ։

[1]) Գաւառի հին անունն է, որ այժմ կոչուում է Ջրաբերդ, իսկ Դալի-Մահրասային բուն ծննդավայրն է Նոր-Մեծ—շէն գիւղն։

Սուրբ Յովհաննէս եկեղեցիս ունի չորս քահանայ և հետևեալ ձեռագրերը։

Ա. Աւետարան միջակ գիրքով, մագաղաթեայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ և արծաթեայ կողակալներ։ Սակայն գեղեցիկ չեն պատկերներն, թուչնագրերն և ծաղկանկարներն։ Կարևոր համարուեցաւ ընդօրինակել յիշատակարանից հետևեալը.

«Արդ՝ ով սուրբ հարք և առաքելազումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ եղեմատունկ, աստուածառոյգ վտակաց քառառաջեայ հոսանաց կենդանական աստուածային աւետարանական բանից, մանաւանդ յորժամ քառնայք ի վերայ ուսոց ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յոլջոյն ձեր զաւրք հրեշտակաց և սքողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, նովին սուրբ աւետարանաւդ և միջնորդական հրաշիւք կենդանարար սուրբ պատարագին, յիշեսջիք զտացուղ սորին զբարեպաշտ Թագուհին Կեռան հանդերձ սուրբ Թագաւորաւն Լևոնիւ և զծնողս իւրեանց և զդեռաբոյս ծիրանածին մանկունս նոցա։ Զի կենդանիքն պարագայց ամաւք և երկար խաղաղութեամբ անվտրձ պահեսցին և հանգուցելոցն հանգիստ և ողորմութիւն շնորհեսցի յամենառատ բարերարէն Աստուծոյ։

Արդ գրեցաւ գիրս ձեռամբ ամենամեղ քահ(անայ) Ստեփաննոսի ի Թռւականիս Հայոց ՉԼԲ. (1283) ի հայրապետութեան տեառն Յակովբայ և ի Թագաւորութեան Լևոնի որդւոյ Հեթմոյ ի մեծանուն սուրբ ուխտս Սկևռայ ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և մաւր լուսոյ Աստուածածնիս և կենսակիր Սուրբ Նշանիս մերձ յանմատոյց դղեակս Լամբրոն, որ է ի գլուխ Տարսոնի և ի ստորոտ մեծի լերինս Տաւրոսի, յորում ամի բարեբեն և բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ և այժմ տիրէ աստուածապահ դղեկիս և այլ չուրջակայ գաւառացս, զոր յուսամ և մաղթեմ ի Բարերարէն Աստուծոյ անվտրձ մնալ սորա ի յարդիսս բազում ամաւք ընդ երկայն աւուրս անուանի և յաղ-

թաւղ լինել ի վերայ երկրիս։ Եւս առաւել աղաչեմ յիշել ի Քրիստոս զնախայիշատակեալ ստացաւղ տառիս և զբնաւ զարմն իւր զկենդանիս և զհանգու.....[1])»։

Բ. Աւետարան մեծագիր, մագաղաթեայ, կաշեկազմ, որի սկզբից և վերջից [2]) պակաս են շատ թերթեր, որոց հետ և յիշատակարանն։ Ամբողջապէս գրուած է գլխատառերով, որոց ձևերն ապացոյց են հեռաւոր հնութեան։ Մատթէոսի վերջում գրուած է մանր գրերով առանց թուականի. «Ով սուրբ ընթերցողք, աղաչեմ զձեզ երկրամերձ գիմաւք ապիկար Թուումէս յիշման արժանի արարէք ի մաքրափայլ աղաւթս ձեր։ Թէպէտ և անարժան եմ այլ վասն աշխատութեան յիշեցէք զիս և զծնողսն իմ, աղաչեմ զձեզ։ Զի մագաղաթս խոշոր էր և նորոգողս տգէտ, անմեղադիր լերուք։ Զնորոգողս յիշեսջիք ի Քրիստոս»։ Խնդրում է յիշել նաև Մարկոսի վերջում։

Ցետին ժամանակներումն գրուած է.

«Պատճառ գրոյս այս է. ես Մէհրիզատս որդի Մկրտչին՝ իմ աղբէրորդի Հապուլի Է. (7) թուման պարտք ունէր, որ կէսն կանէր Գ. թուման ու կէս։ Ես Մէհրիզատս առի զսուրբ աւետարանս և չատ երկիր շրջեցի և իմ աղբերորդի Հապուլի Է. թուման պարտքը տուի։ Ով որ յետոյ, առաջ պաղին հողին և կամ տանն խօսող լինի, Է. թուման տայ։ Ես Կոստանդս վկայ, Փանոս վկայ, Մռաւս վկայ, Ամիրս վկայ. ես Աւի չինեցի տէր Մեսրոպս վկայ»։ Ապա գրուած է. «Ես ծառայ Աստուծոյ Սաւարչէս տանուտէր Քուչկայ գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ և ծնողացն իմոց հաւրն իմոյ Այտինին և մաւրն իմոյ Խութլու խաթունին և ամուսնոյն իմոյ Էմխաթունին և որդւոցն իմոց Այտինին, Գունդուզին, Ջալալին և եղբաւրորդոյն իմոյ Ահիին։..... Դարձեալ ծանիք (ծանիջիք) որ հետի (վասն) սուրբ աւետարանիս չատ տաւի եղաւ ի ներհակաց. չարիաթով և դատաստանաւ հաղ (իրաւունք) ինձ

[1]) Ընկած է թերթն և կորած։

[2]) Պակաս են նաև Ղազարոսի աւետարանի սոյն խօսքերից մինչև վերջն. «Զև ևս էր եկեալ Յիսուս ի գեաւղն»

եղաւ։ Յայսմհետէ ով որ տաւի անէ յիմոց կամ յաւտարաց, նզովեալ եղիցի ի սուրբ աւետարանէս. ամէն»։

Գ. Աւետարան միջակ գիրքով, որ ունի ազնիւ մագաղաթ, ընտիր պատկերներ, նուրբ գիչ և գեղարուեստի վայելուն ճաշակ։ Ընտիր են նախշերն, ծաղիկներն և թուչնագրերն, առհասարակ գեղեցիկ են և գիւրաւ—վերծանելի փոքր գրերն և վայելուչ ներկերով ներկուած չորս աւետարանչաց պատկերներն։ Աւետարանիս սկզբում գրուած է ոսկետառ գրերով. «Դու ստացաւղ քոյոցս բանի և զարդարաւղ այսմ տաւի և ծառայի քո Սարգսի զրեա զանուն ի գիր քո կենդանի, որ փոխեցաւ ի թուականիս յիվն հարիւր խ. երորդին և պՅուսէփայ փիլիսոփայի գնոգիս ընկալ Հովիւ բարի և ընդ նմին Զոհագի».

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑՆ.

«Բայց զրեցաւ լուսազարդեալ աւետարանս ի լուսալրական ժամանակի սկզբանց արարչութեանն մինչև առ մեզ ՅՈՋ. (6606), իսկ ի Կենարարին գալստենէն ՌՃՁԳ. (1183), իսկ Խոսրովայն Պարսից սկսեալ ի մերս թիւ ՉՖԴ. (744) և զրեցաւ յանապատիս Դրազարկ կոչեցեալ։ Այդ եղև զրաւ կատարման սորա ի թուիս ՉՖԴ. յորում դեղերել կամք առ զրան սորա՝ ակն ունելով ամենաւրհնեալ մաւրն լուսոյ Աստուածածնին խնդրել ողորմութիւն մեզ և նեղեալ եղբայրութեանս և ամենայն աշխարհի, թագաւորաց քրիստոնէից ևս և բարեպաշտ թագաւորին Հեթմոյ, որ ի յարգասիս մանկութեան իւրոյ բարձեալ բերէ յինքեան զամենայն գործս առաքինութեան, նմանեալ թագաւորացն սրբոց, զոր աջն Աստուծոյ պահեսցէ զնա և զեղբարս սորա հանդերձ ամենայն մերձաւորաւք և հնազանդեցելովք իւրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութեան. քահանայապետական աթոռոյ սուրբ և անբիծ հայրապետն մեր Քրիստոս պահեսցէ զսա.....։ Եւ արդ ես մեղաւք մեռեալ հոգիս անպիտան և հողս Յովսէփ փիլիսոփայ ետու զրել զսուրբ աւետարանս ի յողորմութենէն Աստուծոյ։... Այդ զրեաց զերեք աւետարանն սուրբ և պատուական հայրն մեր և վարդապետն Թորոս փիլիսոփայն... իսկ զմիւս ևս աւետարանն զղջուխն

զսուրբ աստուածաբանն Յովհաննէս գրեաց Յովհան գրիչ և հոգեկրայրն մեր և զարդարեաց պէսպէս երանգով և գունով»։

Դ. Աւետարանն գրուած է թղթի վերայ, որ ունի մէջակ գիրք և գիւրաւ վերծանելի տառեր, բայց չունի ոչ թուական և ոչ պատկեր։

Ե. Աւետարանը գրած է Եսայի անուն ոմն. «Ընորհիւ Աստուծոյ յանկ ելեալ կատարեցի ի թուականութեանս ՌՃԺԲ... ի թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին և ի հայրապետութեան Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան կաթուղիկոսի ի յերկիրս Ծարայ ի գեաւղն...[1])»։ Իսկ ստացողն եղած է Սիմէօն անուն ոմն։

Զ. Աւետարան գրուած թղթի վերայ Ղուկաս անուն քահանայից. «յիշել զգծող սորա Ղուկաս անուն քահանայ... ի Թվին ՌՃԻԷ- զստացող սուրբ աւետարանիս զբարեմիտ պարոն Ամիրխան»։

Է. Աւետարան նոյնպէս գրուած թղթի վերայ ոմն Մկրտիչ անուն անձից ՌԴ. Հայոց Թուին։

Ը. Աւետարան գրուած թղթի վերայ Տէր-Մարտիրոսից ՌՃԿ. Թուին։ Երկրորդ անգամ ծախուում է աւետարանս, որը գնում է Ելենու որդին, բայց չէ կամենում սա յայտնել իւր անունը՝ գրելով. «որ չեմ զանունս յիշելոյ ի սուրբ աւետարանս»։ «Գնեցաւ աւետարեր վտակս ի ՋԾԴ. Թուականիս ի յերկիրս Վրաց ի անուանի աշխարհս Կախեթի ի թագաւորութեան (Վրաց) բարեպաշտ Ալէքսանդրին և որդւոյ իւր պարոն Կաւրկոյ... ի ժամանակս յորում զաւրացեալ էր Զարևաններ (՞) առ աղգս Շիխ.. Իլպաշ կոչի, որ ելաւ ի արևելից և էառ զթագաստն Թաւրիզոյ և կոտորեաց և կորոյս զազգն Թիւրքմանին և էառ զաշխարհս ամենայն և աւերեաց բազում զաւառ Հայոց և Տաճկաց և Թողին զամենայն հայրենական բնակութիւնս և եկին ի Վրաստանս. վերջն Աստուծոյ է գիտելի թէ ինչ կու լինի»։

Թ. Աւետարան գրուած թղթի վերայ, պատկերազարդ,

[1]) Պակաս է.

մէջակ գիրքով, որի սկզբում կայ սոյն ծանօթութիւնն. «.... Արդ ես մեղապարտ և անարժան Պանաղուրցի Ալլահվերտի քօխաս (պիւղապետս) տեսի աստուածաշունչ սուրբ աւետարանս ի ձեռս անօրինաց գերի անկեալ, ի արդեանց և ի հալալ ընչից իմոց ազատեցի սուրբ աւետարանս և ընդ սմին մէկ Թագ և մէկ չուրջառ և ետու վախմ սուրբ Երից մանկանց վառաւոր վանիցն յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձաւոր որդոյ իմոյ և դստերաց իմոց... ՌՃՂԴ. Թվին Նոյեմբեր ամսոյ ԺԲ. գրեցաւ»։ Չունի յիշատակարան։

Ժ. Աւետարան, գրուած թղթի վերայ, Ղուկասի վերջում գրուած է. «Ի թուաբերութեան Հայոց ՌՃՀԴ. ապրիլի ԺԸ. առի (դնեցի) աստուածախօս աւետարանս ես մեղապարտ և անարժան Մէլիք Եսայիս յերկրէն Զարապերթու և ի գեղճէն բնակ Մոխրաթաղու։ Արդ լուայ զձայն աստուածայինն, որ ասէ. Երանի այնորիկ, որ ունի որդի Սիոնի և ընտանի ի Երուսաղէմ և ի գութ չարժեալ որդւոյ իմոյ՝ առի զաստուածախօս սուրբ աւետարանս յիշատակ իմ և ծնողաց մարմնաւորաց իմոց և մօրն իմ ևս կողակցին իմոյ Հուրին և որդւոյն իմ Յովսէփին, Մէժլումին, Դանիէլին, Իսրայէլին և դստերացն իմոց և տուի յիշատակ և վախմ սուրբ Երից մանկանց... ի հայրապետութեան Աղուանից տեառն Ներսէսի հեզահոգի կաթուղիկոսին»։

ԺԱ. Աւետարան միջակ գիրքով, գրուած թղթի վերայ։ Յիշատակարանից. «Արդ՝ գրեցաւ սուրբ աստուածանկար աւետարանս ձեռամբ անարժան Յովհաննիսի ի յերկիրս Գանջայ ի գեօղն Հարցհանկիստ ի գրան սուրբ Մալաղնաբերիցին ի հայրապետութեան երից երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան կաթուղիկոսին, յեպիսկոպոսութեան սուրբ Ամենափրկչին քաջ և արի բապունապետի Խաչատուր վարդապետի և թագաւորութեան Պարսից փոքր Շահ Աբասին, խանութեան երկրիս Աւղուրլու խանին ի թվականութեանս Հայոց ՌՃԺԵ. ամի»։

ՄԱՍՈՒՆՔՆԵՐ.

Ա. Մասն *Տեառնեղբօր* Յակովբոսի մի արծաթեայ, փոքրիկ խաչի մէջ, որ «Յիշատակ է սուրբ նշխարս Տիրացու Գրիգորի թվ. ՌՄՀ.»:

Բ. Մասն *Յովհաննէս Կարապետի* մի արծաթաթել հիւսկէն (չիւթիչի) փոքր խաչի մէջ, որի վերայ գրուած է. «Այս է թիկն Յովհաննու Կարապետի»:

Գ. Մասն *Պանդալիոն* բժշկի մի արծաթեայ, ոսկեզօծ և փոքր խաչի մէջ, որ «Յիշատակ է սուրբ Պանդալիոնայ եկեղեցւոյն մասունքս պահպանութիւն հասարակ ուխտաւորաց և Տէր Սարգիս Տէր Ազարեանցին ծախիւքն 1859 ամի»:

Դ. Մասն *սուրբ Մինասայ* մի արծաթաթել հիւսկէն, փոքրիկ խաչում, որ կրում է, «Ի վայելումն ազնիւ Վահանին»:

Ե. Անյայտ մասն մի արծաթեայ, ականակուռ և մեծագիր խաչի մէջ, որի արձանագրութիւնն անկարելի եղաւ կարդալ:

Եկեղեցիս իբրև անշարժ կալուած ունի մի բաղանիս, որի արդիւնքն յատկացած է ծխական երկսեռ ուսումնարաններին:

Ծխական երկսեռ ուս. Ս. Յով. եկեղեցուս.

Երկդասեան երկսեռ ուսումնարանս կանգնած է եկեղեցուս արևելեան հանդէպ:

Ուսանում են աշակերտ . . . 140
աշակերտուհի . 194

Վճարուում է բոլոր վարժապետաց և վարժուհեայ 3000 րուբ. որք գումարուում են մոմավաճառութիւնից, թոշակադրամներից և կտակադրամներից:

Բ. ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. [1]

Եկեղեցիս, որ հիմնարկուած է քաղաքիս վերի թաղումն բազմամարդ հայոց մէջ, շինուած է հոյակապ, ընդարձակ, բարձրաշէն, չորս սիւների վերայ: Եքեղ և մեծադիր են լուսամուտներն և դռներն: Բացի լուսամուտների մեծութիւնից, տաճարիս ձևն և մեծութիւնն նման է Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակովբեանց վանքին: Եկեղեցիս ունի երեք դուռն— հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից, մէն մի դուռն արտաքուստ ունի փոքր գաւիթ: Տաճարիս երկարութիւնն է $30^1/_2$ մետր, լայնութիւնն 19 մետր 70 սանթիմ:

Եկեղեցուս հարաւային սեան վերայ. «Շինեցաւ սիւնս արդեամբք Քերովբէ Տէր Մարտիրոսեանցի ՚ի յիշատակ ծնողաց իւրոց 1857 ամի»:

Արձանագր. տոճարիս արեւել. կող, արտաքուստ.

Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն Սեպտեմբերի 1853 ամի և յետ աւարտելոյն տրուէք բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ՚ի կայսրութեան ամենայն Ռուսաց Ալեքսանդր Բ. և ՚ի հայրապետութեան տեառն Գէորգ Դ. Օձաւ յ9 Նոյեմբերի 1869 ամի ՚ի Սրբազան Մակար արքեպիսկոպոսէ առաջնորդէ Վրաստանի և Իմերէթի և անուանեցաւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի մեծի հայրապետին Ազգիս: Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի և աւարտեցաւ 1869 ամի»:

Եկեղեցիս ունի հինգ քահանայ և միայն մի գրչագիր աւետարան, որի *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ զսուրբ աւետարանս ՚ի թուականութեանս Հայոց ՌՃԺԷ. ՚ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին և առաջնորդութեան սուրբ աթոռոյս Ամենափրկչին պարոն տէր Յովհաննիսին, թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին . . խանութեան Ուղուրլու խանին և իշխանութեան երկրիս մեծաշուք և բարեպաշտ Սիմաւոն Մելիքին: Գրեցաւ ձեռամբ անարժան սուտանուն Յովհաննիսի ՚ի յերկիրս Գանջայ ՚ի գիւղս որ կոչի Հարցանկիս (տ) ՚ի դրան սուրբ Մղինաբերդին. ամէն»:

Եկեղեցիս ունի և շրջապարիսպ, որ շինուած է սրբատաշ քարով: Պարսպիս հարաւային դրան կամարի սեղ քա-

[1] Երկու եկեղեցիքս ևս հիմնուած են Գանձակ գետակի աջ կողմում:

ըից շինած է վարպետն մի շղթայ և որի ստորին ծայրում մի խաչ։ Քարեայ շղթաս և խաչս արտայայտում են արուեստաւորի ճարտարութիւնը և գեղեցկագործութիւնը։ Ոչինչ պակաս գեղարուեստ ճարտարութեամբ շինուած են երկու փողահար հրեշտակապետաց քարեայ արձանները, որք դրուած են նոյն դրան վերայ. Երջապարսպի վերայ շարուած են երկաթեայ գեղեցիկ վանդակներ։ Թաղիս Հայ ժողովրդեան ջերմեռանդ բարեպաշտութեան և կրօնասիրութեան ապացոյց են հոյակապ տաճարս, իւր շրջապարիսպն և ուսումնարանն։

ՄԻԱԴԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՒ ԾԽ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.

Աշակերտ	90
Աշակերտուհիք	94
Վճարուում են բոլոր վարժապետաց և վարժուհեաց տարեկան . . .	3650 ր.,

որք գոյանում են մոմի արդիւնքից, թոշակագրամներից, նպաստներից և դրամագլխի տոկոսներից։

Գ. ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Շինուած է նոյն գետակի ձախ կողմում Մեծ-Շուկայի մօտ, հողաշէն և անշուք է։ Եկեղեցումս կայ սուրբ Գէորգայ մասունք, վասն որոյ ուխտատեղի է այս ոչ միայն Հայոց համար, այլ և այլազգեաց։ Մասունքս բերած է եկեղեցուս ծխական ժողովուրդն Երևանից, որից գաղթած է այստեղ 1814 թուին. Եկեղեցիս ունի իբր սեպհական կալուած մի քանի խանութներ և սենեակներ իւր բակում և մի քահանայ։

Դ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Հիմնարկուած է քաղաքիս հիւսիսային կողմում Նորաշէն կոչուած թաղում։

Եկեղեցուս ծխական ժողովուրդն գաղթած է Երևանի կողմերից մօտ 1712-ին։ Եկեղեցիս, որ շինուած է Հայոց Ռ՚ՃԿԲ. թուին, քարուկիր, հոյակապ, բարձրաշէն և ընդար-

ձակ է՝ կառուցեալ վեց միապաղաղ սիւների վերայ։ Բայց որովհետև արևելքից արևմուտք ճաքած են եկեղեցուս հիւսիսային կողմի կամարներն, վասնորոյ արտաքուստ շինած են նոյն կողմից քարուկիր յենարաններ և մի գաւիթ դրան վերայ։ Եկեղեցուս երկարութիւնն է $26^1/_2$ մետր, լայնութիւնն 16։

Եկեղեցումս կայ մի մեծագիր և ձեռագիր աւետարան, գրուած թղթի վերայ։ *Ցիշատակարանից.* «Ցամի թուականութեանս հայկազեան տոհմի ՉՀԱ. (1322) Ներսէս քահանայ ստացող աւետարանիս։ Գրեցաւ սուրբ աւետարանս ի ժամանակիս վերջացեալ դարիս, ըստ այնմ՝ որ ասէ. Յոտից մինչև ցգլուխ չիք առողջութիւն. ա՛լս, աւա՛լս և ո՛ւխ. առ սմա ելեալն ժպիրը ազգին որ քրիստոսադաւան ազգիս հասուցին մինչև ՚ի դրունս մահու....։ Ես անպիտանս ՚ի կարգս կրօնաւորաց սուտանուն գրիչ Վ.դ... գրեցի զաստուածային տառս ՚ի գեղջն, որ կոչի Պէշկենա Գոմեր առ դրան սուրբ Զաւրավարին Գէորգեայ»։

Կայ նաև Թադէոս սրբազան առաքեալի մասունքն՝ հաստատուած մի արծաթեայ փոքր խաչի մէջ, որ կրում է սոյն արձանագրութիւնը. «Ցիշատակ է սուրբ խաչս Մնացական Գրիգորեանց Վասակով, որ ետ Նորաշէն սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, որ և այժմ Նորոգեաց որդի Նորին Գէորգ Վասակով 1868 ամի ի սմա է ամփոփեալ բոլոն Թադէոսի առաքելոյն Ա. Գ. Թ.»։

Եկեղեցիս ունի երկու քահանայ։

Քաղաքիս չորս եկեղեցիներն միասին ունին 12 քահանայ. ծուխ 1600. արական 4751, իգական 4516. մի տարում պատահած է ար. ծնունդ 273, իգ. 226. պսակ 103. ար. ննջեցեալ 138, իգ. 104։

Քաղաքումս է նստում նահանգապետն, քաղաքումս կան՝ բարձր ուսումնարան [1]), արուեստաւորաց ուսումն. [2]) և քաղաքական ուսումնարանն [3])։

---

[1]) Գիմնազիա, որի մէջ (բացի այլ աշակերտներից) կայ 93 հայ։

[2]) Ուսանում են այգեգործութիւն, շերամապահութիւն. հիւսնութիւն, ատաղձագործութիւն, փականագործութիւն տակառագործութիւն, ևն. ևն.։

[3]) Այդ ուսումնարաններում եղած բոլոր հայ աշակերտաց թիւն է մօտ 130 հոգի։

Արժ. Գրիգոր աւագ-քահանայ Թումանեանցի մօտ տեսայ մի կոնդակ՝ հայոց Փիլիպպոս կաթուղիկոսից գրուած, որ ուղղած է առ ժողովուրդն, որք բնակում էին մի քանի գիւղերում: Արժան համարեցինք զետեղել այստեղ ընդօրինակութիւնը: Կոնդակս իւր ճակատին վերայ կրում է կարմիր թանաքով կնքուած կաթուղիկոսական կնիքը, որի մէջ գրուած է. «Աստուած Յիսուս Քրիստոս. Տէր Փիլիպպոս Կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Վաղարշապատու, Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս վարդապետ ի վճկիդ. Գղմ. (վիճակիդ Գեղամայ)»:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Վաղարշապատու երկնահանգէտ և աղինասարաս քրիստոսահիմն և լուսանկատ սրբոյ աթոռոյ Էջմիածնի, յորմէ ժամանեալ հասցէ զիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական և աստուածային աւրհնութիւնն. ի վերայ Սուրբ Եղիշէի առաքելոյ վանից աստուածախնամ.. և վիճակի սեպհական ժողովրդեան իւրաքանչիւր գեղջ Հաթերքու, Ականու [1]) Ջանկաթաղու, Կուլաթաղայ, Մոխրաթաղու, Կիսապատու, Մեծ չինու, Մահմնու, Մալատկանու, Ջարտախին, Վերին Շնաթաղու, Ափիտուլա, Սահլապատայ, Թրթռուտին, Ուղտակայ, Կոկթափին, Եղակերու, Ծակառաչինու, Վանքին, Գետաչենու. Սլուքեցւոյ, Բաղչիքու, Մրցնու, Հաճիչինու, Քօչկայ, Հատիսու, Էիրլօղայ, Միրզիկուայ, Ոսկանապատի,.. Ցնծահալայ, Գետամիջու, Համասրապակուց եկեղեցեաց, քահանայից..... Եւ ընդ աւրհնութեանս ծաներուք վերոյգրեալ Սուրբ Եղիշէի առաքելոյ վանից առհասարակ սեպհական քահանայք և ժողովուրդք, զի մեր ճշմարտապէս լուեալ և ականատես իսկ եղեալ վանից ձերոց խաւար և աւեր մնալոյն և մանաւանդ թէ զձեզ ևս տեսեալ այդպէս առանց հովուի և առաջնորդի, լիապէտ և կարծեք մինչ ցայս-

[1]) Այժմ աւերակ են Ականայ, Մահմնու, Մալաական, Վերին Շնաթաղ, Ափիտուլա, Սահլապատ, Թթուտ, Ուղտակաւ, Հատիս, Էիրլօղա գիւղերն. Թրքաբնակ՝ Ծակառաչէն, Քօչկայ, Ցնծահալայ, Համասրապակ և Մրցնա գիւղերն. Հաճիչէնն ամբարանոց արած են Գանձակի համար:

վայր եղեալ, քանզի ի վերայ ժողովրդեան, որոյ աստուածային խնամքն և ողորմութիւնն լինի, թողլ ոչ տայ Աստուած, այլ այնպիսեացն բարի առաջնորդ և հովիւն..... [1]) որ և մեք ընտրութեամբն աստուածային այսօր առ ձեզ խոստացաք տալ ձեզ հովիւ և առաջնորդ զհոգևոր բազուկ իմ և նեցուկ սրտիս զտէր Կիրակոս վարդապետն հաւանութեամբ ձերով և խնդրուածովք..... և տնաւ զհաս և զիրաւունս ձեր՝ աթոռոյ ձերում ի ձեռս դորին անթերի.... զհոգեբաժինն, զաթոռահաւկն, զխաչահանէքն.. զկոլոպատաս, զդիպաստրդս... տանց մելիքներաց, տանց աղատաց, տանց քահանայից, տանց երեսփոխանաց, տանց տանուտեարց.., յանկարծամահիցն զամենայն առաջնորդին է..... յամսեան յուն...»:

Հայրապետական կոնդակիցս պարզ երևում է, որ յիշեալ բոլոր գիւղերն սեպհական թեմ եղած է Զրվշտիկ—Եղիշէ—առաքեալ վանքին. թէ վանքս էր յատկապէս յաջորդանիստ աթոռն և թէ քանի՛ քանի՛ զուտ Հայաբնակ գիւղեր աւերակ են այժմ կամ թրքաբնակ:

Ահա և Ներսէս Ե. կաթուղիկոսի արձակած կոնդակի իսկական պատճէնն, որը մեծ սիրով յանձնեց ինձ իմ ազնիւ բարեկամ Գանձակեցի պ. Աղեքսանդր Խահակեանցն՝ ընդօրինակելով բնագրիցն, որ ուղղուած է իւր հանգուցեալ հօր:

«Ներսէս ծառայ Քրիստոսի և անհատանելի կամօքն Աստուծոյ [2]) եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի: Ամենապատուելի հասարակութեան Հայոց Ելիսաւետապոլ քաղաքի ընկալաք զխնդրագիր ձեր զրեալ այսր ամսոյ 5. ստորագրութեամբ եօթանասուն և չորս անձանց յաղագս կարգելոյ ի տեղի զանձապետի Սրբոյ Երուսաղէմի Տիրացու Պօղոսի Զա-

[1]) Կէտադրեալ բառերից կայնն, որ անհնթեռնլի էին, կայինն՝ որ անյայտացած էին թղթի պատառեալ մասի հետ և կայինն, զորս Թողինք համառօտագրութեան համար:

[2]) Ինքոյ մէջ գրուած է. «Է. Ներսէս եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց ԹՄԳՌ. 1843»:

ռափեանց՝ զաղայ Աւետամն Ափանասեան երեք տարի ժամանակաւ այնու պայմանաւ, զի բոլոր գումարն դանձանակաց և կրպակաց պատկանելոց սրբոյ վանիցն առաքելոյն Յակովբայ՝ որ յԵրուսաղէմ՝ եղիցի ի ձեռս Ափանասեանցին տասնին մէկ շահով, ընդ նմին խնդրէք զիոյլատրութիւն մեր վասն գնելոց եղեալ աւ ձեռն գումարաւ զկրպակս յանուն նոյն Աթոռոյն, աւ որ ծանուցանեմք ձեզ, եթէ ի սկզբանէ անտի լուսաւորութեան Հայաստանի քրիստոնէական սուրբ հաւատով, եկեղեցիք մեր և վանօրայք չունին զնշանաւոր ինչ գումար, և այժմ ևս գումարք բաղում եկեղեցեաց մնալով ի ձեռս երեսփոխանաց և դանձապետաց՝ մատնեալ են ըստ ձախող դիպուածոց ժամանակին ի կորուստ, որոց ալագաւ չարունակի ցարդ գրագրութիւն ի հոգևոր իշխանութեան։ Մեք ունելով ըստ մերում կոչմանց և պարտաւորութեանց զառաւել իրաւունս քան զՊատրիարքն Երուսաղէմի և այլոց վիճակաւոր առաջնորդաց յաղագս պաշտպանութեանց կառավարութեանց և չինութեանց վանեըէից և եկեղեցեաց յանձնելոց մերում Ծայրագոյն տեսչութեանց՝ բարւոք համարեցաք վասն ապահովելոյ զվիճակն սրբոյ վանիցն առաքելոյն Յակովբայ՝ որ յԵրուսաղէմ, եղաք յարբունի բանկն զտասն և մէկ հազար րուբլիս արծաթոյ զտացեալն մեօք ի բազմաշխատ դանձապետէն Սրբոյ Երուսաղէմի ի Թիֆլիզու քաղաքացի Աղա Յովհաննէսէ Մնացականեանց, և ստացաք ի բանկէն զբիլեթ յանուն նոյն աթոռոյ, զոր և առաքեցաք առ սրբազան Պատրիարքն Երուսաղէմի. Եւ այժմ ևս զբոլոր գումարն եղեալս առ դանձապետ Տիրացու Պօղոսն Զառափեանց մտաբերեմք նոյնպէս առաքել ի բանկն յանուն սրբոյ Երուսաղէմի և զբիլեթն առաքել առ սրբազան Պատրիարքն, որոյ վասն զրեցաք յիշեալ Զառափեանցին առաքել առ մեզ՝ զեղեալ առ ինքն բոլոր գումարն դանձանակաց և վարձուց կրպակաց։ Եւ յաղագս փոխելոց զնա՝ որպէս թէ ի պատճառս ծերութեան և անզիտութեան հաշուոց, մեք ոչ գտանեմք զօրեղ պատճառս, ըստ որում չիք ինչ դժուարութիւն յայնմ պաշտաման, զի զժողովեալ դանձանակս ունի պահել և զվարձս կրպակաց ստանալ և

յաւարտ ամին առաքել առ մեզ. և որպէս ունիմք զգրաւոր տեղեկութիւնս, նա ընտրեալ է յամին անցելոյ համաձայնութեամբ երևելեացն ի ժողովուրդս և է ինքն անձն բարեպաշտ և հարազատաւ սուրբ եկեղեցին։

Յաղագս գնելոց զկրպակս՝ նախապէս պարտին յայտնի լինել մեզ և Սինօդին սրբոյ Էջմիածնի. մանրամասն հանգամանք շինութեանց, տեղեաց, տարեկան վարձուց և ծախուց նոցին, որք եթէ արժան համարեսցեն, յայնժամ տնօրինեսցեն վասն գնելոց զոյնս. իսկ յաղագս տալոց մասնաւոր անձանց զգումարս որ և իցէ եկեղեցեաց կամ վանօրէից, ըստ զօրութեան Բարձրագոյն կարգադրութեան հաստատելոց յամին 1836 ի Մարտի 11. պարտի լինիլ գրաւականօք հաստատեցելովք ի դատարանի, այնպէս զի գրաւականն երկպատիկ և աւելի արժիցէ քան զգլուխս դրամն. իսկ պատասխանատուութիւնն կորստեան եկեղեցական դրամոց եղեալ կայ ի վերայ հոգևոր իշխանութեան. ուստի այսոցիկ հանգամանաց լաւ համարեմք գնել ի բանկն զառ ձեռն եղեալ դրամս առ Տիրացու Պօղոսն Զառափեանց վասն ապահով և անկորուստ մնալոյ, յօգուտ սրբոյ վանիցն Յակովբայ Առաքելոյն։

Կաթուղիկոս ամենայն Հայոց Ներսէս.

Թուահամար 124.
յամի ազգական 1302 և Քրիստական 1853.
ի մարտի ի Թիֆլիզ»։

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՈՒԽՏԱՏԵՂԻ.

Քաղաքիս Հարաւային կողմում կայ մի քարուկիր մատուռ սուրբ Աստուածածնին անուամբ, որ շրջապատուած է այգիներով, և ունի այս արձանագրութիւնը.

«Կառուցաւ այս տաճար Միածնի,
Յանուն Սրբուհւոյ Աստուածածնի.
Արդեամբ Յովհաննէս Մելրումեանցի,
Յիշատակ հոգւոյ իւր կենդանի։
Ի 1 Օգոստոսի 1867 ամի»։

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՈՒ.

Քաղաքիս Հիւսիսային կողմում Նորաշէն թաղի մօտ կայ մի հողաշէն մատուռ սուրբ Սարգիս անուն, որ ուխտատեղի է։ Երկու ուխտատեղեացս արդիւնքները յատկացրած են ուսումնարաններին։

Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՏԱ.

Պարոն Նաբաթեան եղբարց այգում գտնուած է մի գերեզման, որի տապանաքարը՝ որ խաչազարդ է, վերցնելու ժամանակ չարգուում է և լինում չորս կտոր։ Մի կտորի վերայ փորագրուած է «Սուրբ Կիրակոս», երկրորդին վերայ՝ «Սուրբ Յուղիտա» և «Թուա», երրորդին վերայ՝ «Նահիճ...»։ Թէ խաչերն և թէ գրերն հին են և ունին ԺԱ. դարի ձևերը և տիպերը։

Արդէն գիտենք որ Հայոց եկեղեցին յիշատակում է ի շարս տօնուած սրբոց «Կիրակոս և մայր սորա Յուղիտայ». գիտենք նաև որ սոքա—Կիրակոս և իւր մայրն Յուղիտա Փոքր—Ասիոյ Իկոնիոն քաղաքից էին և թագաւորական ցեղից և նահատակուեցան Կիլիկեցւոց Տարսոն քաղաքում (յայսմաւուրք յուլիս 15)։ Սակայն չգիտենք թէ ո՛վ են ուրեմն Գանձակի Կիրակոսն և իւր մայրն, բոլորովին տարբեր անձեր են սոքա, գուցէ նահատակուած և ամփոփուած են այստեղ և անյայտ մնացած են գրականութեան սոցա անուններն և նահատակութեան դէպքն, և թէ յիշատակուած սրբոց անուամբ շինուած սեղանաքար է կամ գերեզման։

ԳԱՆՁԱԿԻՍ ԽԱՂՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ

1) Լկենի [1]) գինու խաղող (սև)՝
2) Թաւրիզենի [2]) գինու խաղող (սպիտակ)՝
3) Տեղացի գինու խաղող (սև),

[1]) Արցախեան բարբառով լակ նշանակում է առատաջուր, մէջի հիւթն շատ,—լակենի—։

[2]) Նշանակում է թէ խաղողի այս տեսակի որթն բերուած է Թաւրիզից։

4) Իճապտուկ կարմիր ուտելի խաղող.
5) ,, սև ,, ,,
6) Կանաչկենի կարմիր ,, ,,
7) Մարանդենի [1]) ,, ,,

Շակաշէն գաւառիս մէջ այժմ կայ միայն երեք հայաբնակ և դաշտային գիւղեր, որք են.

Ա. Ջարկեալաը կամ Խոյլըլար, որ շինուած է Կուրակ գետակի ձախ կողմում, փոշտի հին ճանապարհի գլխին. բնակիչք գաղթած են Խոյից, Հողն արքունի, Ջրաբերի և բեղմնաւոր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, բոժոժ, բամբակ, խաղող, գինի, դեղձ, սեւկեւիլ, արքայակաղին և այլն. օդն և կլիման ծանր ամրան և տենդաբեր և ջուրն՝ անախորժ. երկար կեանք 60—65 տարի. եկեղեցին Սուրբ Աստուածածին, հողաշէն և անշուք, քահանան գալիս է Ղարադաղու գիւղից։ Ծուխ 38, արակ. 61, իգ. 60, միամեայ ար. ծնունդ 2, իգ. 2, պսակ 1, ար. ննջ, 1, իգ. 1.։

Բ. Ղալաղալու կամ Խանջեանդ. գիւղս, որ հիմնուած է նոյն գետակի ձախ ափում, շատ հեռի չէ Ջարկեալար գիւղից. բնակիչք գաղթած են Ղարադաղից և Խոյից. հողն արքունի, ամենայն ինչ նոյն. եկեղեցին Սուրբ Գէորգ, աղիւսաշէն և գեղեցիկ, որ ունի սոյն արձանագրութիւնը. «1855 ամի 20 մարտի ի սէր սիրելի իմոց հայրենեաց որդոց Սիօնի փոքունց և մեծաց այս տաճար փոքրիկ ի հիմանց անտի բարեպաշտ կամօք աստ կառուցանի սեպհական արդեամբ մեծ իշխանի Աղա-Ռուստամի որդոյ Դանիէլի յանուն սրբոյ Գէորգայ մեծի, չքեղ հանդիսիւ աստէն օծանի»։ Քահանայ մի, ծուխ 75, ար. 174, իգ. 166, ար. ծն. 8, իգ. 7, պսակ 4, ար. ննջ. 6; իգ. 6։

Գ. Սարով. գիւղս հիմնուած է նոյն գետակի ձախ կողմում. բնակիչք տեղափոխուած են տեղս Ուտի-առանձնակ

[1]) Որթն բերուած Մարանդ գաւառից։ Մինչդեռ Արցախի դաշտային գաւառների որթերն ընդհանրապէս բարձրացրած են ծառերի վերայ, Գանձակում ընդհակառակն բարձրացնում են սարու վերայ։ Սարիներն առհասարակ եղեգնեայ են. մէն մի որթի յենարանն՝ երեք եղեգն է։

գաւառի Սարովից և իւրեանց նախկին գիւղի անուամբ Սարով անուանած. գիւղիս հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն, նոյն են բերքերն, օդն և կլիման, երկար կեանքն և նոյն քահանան, եկեղեցին Սուրբ Աստուածածինն, հողաշէն և անշուք: Ծուխ 31, ար. 86, իգ. 77, ար. ծն. 4, իգ. ծն. 3, պսակ 1. ար. ննջեց. 1, իգ. 1:

ՂԱՓԱՆԼՈՒ ԱԻԵՐԱԿ.

Գաւառիս ստորին մասում, այս է Կուր գետի, Կուրակ և Շամքոր գետակների և երկաթուղու գծի միջև եղած տարածութեան վերայ պակաս չեն հայկական աւերակներ, այժմ մեծ մասամբ մահմետականաբնակ գիւղեր են, հանգստարաններ և եկեղեցեաց բեկորներ: Մասնաւորապէս *Ղափանլու աւերակն*, որ ընկած է երկաթուղու, Շամքոր գետակի աջ ափերի և Կուր գետի մէջ: Աւերակիս երկարութիւնն մօտ մի մղոն է, ընդարձակութիւնս կարծել է տալիս թէ գիւղաքաղաք եղած է Ղափանլուս, որ ծածկուած է ընկուզենի, կաղամախի և այլ զառամեալ ծառերով: Հնագոյն բնակարանները շինուած են հաստ հաստ և մեծ մեծ աղիւսներով, որոց երկարութիւնն է 40 սանթիմետր և հաստութիւնն՝ 9: Փորուածներից ելնում են վաղեմի կարասներ, կճուճներ և այլ խեցեղէն անօթներ, արծաթեայ և պղնձեայ դրամներ և հին աղիւսներ: Այժմ թրքաբնակ է աւերակս. թէ ինչ եղած են գիւղաքաղաքիս հայ բնակիչները,—չգիտենք, միայն գիտենք որ մի քանի գերդաստան այստեղից փոխադրուած են Գանձակ մօտ հարիւր տարի առաջ: Մահմետականները անյայտացրած են եկեղեցեաց և գերեզմանների քարերը....:

ԵԼԵՆԴՕՐՖ

Գիւղաքաղաք է այս Գերմանական գաղթականութեան, որ 1819 թուին հիմնարկուած է դաշտաբերանում Գանձակից վերև նոյն անուն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ: Ուղղագիծ, լայն և շար ի շար են փողոցներն, որոց աջ ու ձախ եզերքներով շինուած են բնակարանները և շարքարգ տնկուած են կաղամախի, սօսի և բարտի ծառեր, որոց գեղեցկութիւնն առանձին վայլ է տալիս գիւղաքաղաքիս: Իւրաքանչիւր ծուխ ունի աղիւսաշէն (կայ և քարով շինուած) և մի քանի սենեակներից բաղկացած կանոնաւոր տուն, առանձին խնամքով մշակուած այգի, կարգ ու սարքով ցանուած բանջարանոց, կով, եզն, ձի, հնդկահաւ, սագ, բադ, հաւ և աղաւնի: Այս պատճառաւ Գանձակն համարեա թէ տարուան ամեն եղանակներում ունենում է թարմ կանաչի, կաթ և կարագ, սեր և իւղ: Վերջապէս սոցա մէջ կայ եւրոպական ամեն տեսակ կարգ և կանոն թէ ներքին և թէ արտաքին կենցաղավարութեան և յարաբերութեանց մէջ:

Այստեղ կան Գանձակեցի և Ոսկանապատ, Գետաշէն, Սուլակ, Միրզիկ, Հարցհանգիստ (Զաւդաւ), Բանանց և Բրաջուր գիւղերից թէ ընտանեօք և թէ սոսկական հայեր, որք զբաղուում են վաճառականութեամբ և տեսակ տեսակ արուեստներով: Ընտանեօք հայերն բաղկացած են 30 գերդաստանից, իսկ սոսկական՝ 30 անձից: Գիւղաքաղաքիս արևմտեան կողմում, Գանձակ գետակի հովտում գոյանում են ինքնաբոյս տորոն և ընկուզի շատ ծառեր:

Ժ. ԿՈՂԹ ԳԱՒԱՌ (6)

Գաւառս կից է Շիկաշէն գաւառին արևմտեան կողմին և անջատուում է միայն Շամքոր գետակով: Թէև միևնոյն Շիկաշէնի հողը ունի և գաւառս, սակայն չունի նոյնի հարուստ բարեմասնութիւնները, քանզի ամբողջապէս թրքաբնակ է գաւառս: Մահմետականք գրեթէ ոչնչացրած են հայկական բոլոր հնութիւններ, վասնորոյ հազուագիւտ են գաւառումս եկեղեցեաց, մատուռների, հանգստարանների և խաչարձանների քարեր.

ՇԱՄՔՈՐ ԱԻԵՐԱԿ ՔԱՂԱՔ (7).

Շամքոր քաղաքի աւերակն երևում է Շամքոր գետակի ձախ ափում՝ երկաթուղու գծի վերի և վարի կողմերում: Մեծ եղած է քաղաքիս ծաւալն, ինչպէս երևում է աւերակիս մե-

ծուլթիւնից, մօտ մի մղոն երկարութիւն ունեցած է քաղաքս իւր արուարձանով միասին և կէս մղոնից պակաս՝ լայնութիւն: Տակաւին գտնում են աւերակներից ոսկի, արծաթ, և պղինձ դրամներ և պղնձեղէն, երկաթեղէն և խեցեղէն գործիքներ, կարասիներ և անօթներ: Այժմ ամենայն ինչ կործանեալ դրութեան մէջ է. միայն կիսաւեր է բերդն:

Ամրոցս՝ հիւսիսայինն, հարաւայինն և արևմտեան կողմերից շրջապատուած է քաղաքիս աւերակներովն, իսկ արևելեան կողմից (պարսպի տակով) հոսում է Շամքոր գետակն: Բերդս ունի շատ բուրգեր, հաստ պարիսպ և հաստատուն ամրութիւն: Պարսպի և բուրգերի վերայ համարեա թէ մի մի շար թրծեալ աղիւս շարած է և մի մի շար անտաշ գետաքար կրաշաղախ ցեխի հետ միասին: Ահա այսպէս շինուած է բերդս, որ ունի 130 մետր երկարութիւն, 70 մետր և 50 սանթիմ լայնութիւն, 2 մետր և 45 սանթիմ պատի հաստութիւն և 2 դուռն՝ մին հարաւային և միւսն հիւսիսային կողմից: Բացի բերդիս պարսպից՝ կայ և մի ընդարձակ պարիսպ, որ սկսուած է բուն բերդի հարաւային պարսպի շարունակութիւնից և պաեելով արևմտեան կողմով՝ կցուած ապա բուն բերդի հիւսիսային կողմի պարսպին: Բայց այս պարիսպն հիւսուած է տեղ տեղ քարուկիր և տեղ տեղ անեփ աղիւսով: Երկաթուղին տակաւին չ'սկսած այստեղ էր փոշտի մի կայարանն, որ կոչուում էր Շամքորի կայարան:

Այժմ քաղաքիս աւերակներում բնակում են մի քանի մահմետական գերդաստան:

ԴԻՏԱՐԱՆՆԵՐ.

Առաջին բարձրագոյն դիտարանն, որ եղած է Բ. բերդի հիւսիսային կողմում, փլած է 1844 թուին:

Երկրորդ դիտարանն՝ Շամքոր գետակի ձախ կողմում՝ դաշտաբերանումն է:

Երրորդ և չորրորդն՝ որ կանգուն են, արձանացած են Աղդան սարի ստորոտին մօտ: Ամբողջապէս քարուկիր են բոլոր դիտարան բուրգերն:

ՉԱԿԱՄ

Կողջ գաւառիս միջի մասն է կազմում Չակամ գետակի դաշտերն և արևմտեան մասն՝ Աղստև գետակի աջ ափերի մէջ ընկած տարածութիւնն: Երկու Չակամ կայ—Վերին—Չակամ և Ներքին—Չակամ. առաջնոյն մասին յետոյ, իսկ վերջնոյս մասին այժմ: Ներքին Չակամիս մէջ այժմ չէ գըտնուում հետաքրքրաշարժ հնութիւններ, բայց գիտենք, թէ այս մասի մէջ էր Խաղխաղ քաղաքն:

ԽԱԼԽԱԼ. (8).

Չակամ գետակի հովիտն իբրև երկրալեզու դաշտի շարունակութիւնից մտած է լեռների մէջ: Հովտալեզուս՝ սեղմուելով արևելեան և արևմտեան լեռներից՝ գետակի ընթացքով մտած է նոյն լեռների մէջ, ապա փոքր ինչ վերևում ստացած լայնագոգ ձև, մանաւանդ ջրաձորի ձախ ափերում: Արևելեան կողմից Ընկուզուտ (Ղոզլու), հարաւայինն կողմից Մամռուտ (Մամրթլու) սարերն պատած են լայնագոգ հովիտս իբր բնական շրջապարիսպ, գետակի աջ ու ձախ կողմերով: Հովիտս ներկայացնում է հետաքրքիր հնութեան բեկորներ և հետքեր—աւերակների թափուած քարեր, հին և կոպիտ խեցեղէն անօթների բեկորներ, իսկ ստորերկրեայ փորուածներից ելնում են կրով և աղիւսով շինուած պատեր և *ահագին տաքարներ:* Սովորականից չափազանց հաստ, երկար և լայն են աղիւսներն, այս է 31 քառակուսի սանթիմետր:

Խեցեղէն խողովակներով աղբիւրներ բերուած են աւերակ քաղաքատեղիս խիստ հնուց, որոց հետքերն ակներև է Զուլկատարով Համիտ-բէկի քանդած երկարաշար կոպիտ խողովակներից, որ գտնուում են աւերակիս արևմտեան կողմերում: Ափսոս, որ իսպառ անհետացել են եկեղեցեաց աւերակներն:

Այժմ մի գիւղ է աւերակիս տեղն, որն ծածկուած է պարտէզներով և այգիներով. սակայն հասակաւոր բնակիչք

խոստովանում են, որ քաղաք եղած է այստեղ։

Աւերակիս արևելեան և արևմտեան կողմերում կան աւերակ գիւղատեղիներ և հանգստարաններ, բայց անարձանագիր են տապանաքարերն։ Այժմ տիրապետում են աւերակիս Զուլկատարեան եղբարք, որք են. Ալլահեար-բէկ, Մեհրալի-բէկ, Համիտ-բէկ և Ադիլ-բէկ։ Ամեզ յարգանօք հիւրասիրողն էր Համիտ-բէկն, որ յայտնեց, թէ իւր նախնիքն Քրիստոսի 653 թուականին նախ՝ Բակտրիայից եկած են Շիրազ քաղաք, որից ապա Տիգրանակերտ և ապա, շատ յետոյ՝ այստեղ։

Խաղխազ աւերակիս շրջապատում կան հետևեալ սրբավայրերն և աւերակ դղեակներն.

1) Սուրբ Ղազար, որ է երեք գերեզման Խաղխազիս արևելեան կողմում եղած սարի գլխին։

2) Սորա արևմտեան կողմում, ոչ այնքան հեռի, կայ մի աւերակ մատուռ,

3) Մի աւերակ դղեակ, որ շատ հեռի չէ աւերակ մատուռից և կոչւում է Շահ-Փեքար կամ Աղաճ-ղալա։ Բարձր քերծեր են դղեկիս հարաւային, արևելեան և արևմտեան կողմերն, իսկ քարուկիր պարսպուած (այժմ կիսաւեր) հիւսիսային կողմն։ Համարեա թէ հարթ է դղեկիս մակերևոյթն։ Բայց թէ ինչ եղած է վաղեմի դղեկիս իսկական անունն.— ոչ ոք չ'գիտէ։

4) Դղեկիս արևելեան կողմում կայ մի փոքրիկ վանք, որ ամբողջապէս կանգուն է, որի հարաւային հանդէպ կայ մի փոքր եկեղեցի, գիւղատեղի և հանգստարան։

5) Ընդարձակ և աւերակ գիւղատեղի և հանգստարան կայ նաև նոյն դղեկին հարաւ-արևելեան կողմում, որ կոչւում է Քեշիշ-Քեանդ։

6) Ղազանչի աւերակ և կիսաւեր եկեղեցի և հանգստարան, որք գտնուում են Քեշիշ-Քեանդի արևելեան կողմում, ոչ այնքան հեռի։

7) Երկու անանուն դղեակներ ևս, յորոց մին գտնուում է Ղազանչի աւերակի արևելեան կողմում, ոչ այնքան հեռի

և միւսն հիւսիսային կողմում։ Անյայտ և անճանօթ են բերդակներիս իսկական անուններն և անցեալն։

8) Զակամ գետակիս Ջրաձորի աջ ու ձախ կողմերում կան նաև եկեղեցու վեց աւերակներ և հանգստարաններ։

ԿՈՋԷՆ ԳԻՒՂ.

Հիմնուած է Կուր գետի աջ ափում՝ մօտ $2^1/_2$ մղոն հեռի Թովուզ երկաթուղու կայարանից։ Սուլթանի կամրջից ներքև միանում են բուն Տաւուշ (Թովուզ) և իւր օժանդակ Ախնջին, ապա խառնուում Կուր գետին Կոզենի արևելեան կողմով։ Բուն Ուտեաց մնացորդներից են գիւղիս բնակիչներն, որք ունին և առանձին բարբառ (Ուտիերէն), բայց գիտեն և հայերէն։ Մօտ 700 տուն եղած է գիւղումս, բայց այսօր մնացած է միայն 30 ծուխ. պատճառն այն է, որ օդն և կլիման խիստ ծանր են ամրան։ Այս պատճառաւ համեմատելով ամեն տարուայ ծնածները մեռելոց հետ՝ միշտ աւելի եղած է վախճանուածների թիւն։ Չհաշուելով Կուր գետի քանդած տարածը՝ քառորդ մղոնից պակաս չէ հանգստարանի ծաւալն։ Հողն արքունի, ջրարբի և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն և կլիման տենդաբեր ամրան և մահատու. երկար կեանք 50, եկեղեցին սուրբ Յովհաննէս. քահանան գալիս է Մովսէս գիւղից։

Գիւղիս մօտ կայ և հին գիւղատեղի և հին հանգստարան և քարուկիր եկեղեցի, որից այժմ մնացած է միայն խորանի կլոր շինուածքն։ Հանգստարանումս կայ մինչև 600 տարուան գրուած տապանաքար։ Արձանագրութիւններից երևում է որ ամփոփուած են այստեղ Թաւրիզեցի, Հալապցի, Կարնեցի և այլ քաղաքներից վաճառականներ։ Նշանաւոր է գիւղիս բուժուժն կամ մետաքսաթելն, վասնորոյ հաւանական է որ գիւղս բազմամարդ եղած ժամանակներում, արտադրած է մեծ քանակութեամբ մետաքսաթել, որը գնելու համար եկած լինին հանգուցեալ վաճառականներն։ Կան նաև գիւղիս իշխող Մելիք-Ջհանկիրի տապանաքարն և *Աւետարան* անուն մի ուխտատեղի մատուռ։ Ծուխ 30, ար. 90, իգ. 80։

ՀՈՂԱԲԵՐԴ (ԹՈՓՐԱՂ ՂԱԼԱ)

Կռղենից կէս մղոնաչափ վերև նոյնպէս Կուր գետի աջ կողմում կայ մի հողեայ բլուր, որը անուանում են Հողաբերդ։ Գեղեցիկ հարթակ է բլրի գագաթն, որից ելնում են կարասներ, հին հրացաններ և պղնձեղէն ու խեցեղէն անօթներ։ Մօտ քառասուն տարի առաջ գտած են այս տեղից վեց սափոր լի արաբական և պարսկական դրամներ։

ՂԱԶԱԽ—ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔ.

Նոր-քաղաքս հիմնուած է Աղստև գետակի աջ ափի բարձրութեան վերայ 1881 փետրվ. 13-ին։ Բնակիչներն են հայ, պարսիկ և ռուս։ Հայերն մեծաւ մասամբ եկած են Գանձակից, Շուշուց, Արցախի և Ղազախի գիւղերից. բայց Բանանց գիւղից եկածներն ունին տներ և խանութներ։ Հայերն կազմում են բոլոր բնակչաց երեք մասից երկուսն։ Նոր քաղաքումս կայ հիւանդանոց, դեղատուն, բժիշկ, գաւառապետ. գաւառապետի օգնական, հաշտարար դատաւոր, զօրանոց, փոշտ, հեռագրատուն, գանձարան և երկդասեան քաղաքական ուսումնարան հանդերձ ամենայն պարագայիւք։ Կայ նաև շուկայ, վաճառականի և արուեստաւորի խանութներ, որք ըստ մեծի մասին հայեր են։ Օդն և կլիման տենդաբեր ամրան. եկեղեցին նորաշէն և կիսատ տակաւին. որը շինել է տալիս պ. Մկրտիչ Ջաղէթեանցն թրծեալ աղիւսով և կրացեխով։ Ծուխ 50, 10 տուն ևս վակզալում։ ար. 120, իգ. 110։

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

ԺԱ. ՊԱՋԿԱՆՔ ԿԱՄ ԴԻՋԱԿ ԳԱՒԱՌ.

Գաւառիս հարաւային սահմաններն են Երասխ գետն, արևելեանն՝ Պիան, հիւսիսայինն՝ Վարանդայ և արևմտեանն՝ Բերդաձոր գաւառների սահմաններն։

ՋԱԲՐԱՅԵԼ (9).

Այժմ գաւառագլուխ է նոր և փոքրիկ քաղաքս, որ հիմ-

նուած է մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորակներ են։ Դիրքն նայում է Երասխ գետին, որի հեռաւորութիւնն գուցէ փոքր ինչ աւելի լինի մի մղոնից։ Բնակիչք հայ, ռուս և թուրք—հաւասքաճոյ են։ Ինչ քաղաքական հաստատութիւն որ ունի Ղազախ քաղաքն—դատարաններ, փոշտ, հեռագիր, ևն. նոյնը ունի և Ջաբրայէլս. և ի վերայ այսր ամենայնի ունի և մաքսատուն, ուր առնում են Պարսկաստանից բերուած ապրանքների մաքսը. կան նաև սահմանապահ ռուս զօրք և կոզակներ, շուկայ և բազմաթիւ ծառայողներ։ Օդն և կլիման անախորժ և ծանր ամրան, ջուրն ականի է և ոչ աղբիւրի։ Դեռ եկեղեցի չունին հայերն. քահանան գալիս է Նոր-Աւաքել գիւղից։ Հայք ունին 20 ծուխ։

ՋԱԲՐԱՅԵԼԻ ՋՈՒՐՆ.

Որովհետև վազող ջուր չունի Ջաբրայէլս, վասնորոյ շատ հին ժամանակից նախ փորած են արևմտեան ձորակի միջով մի ստորերկրեայ ական, ապա փորած են շատ ականներ, որոց ստորին ծայրերն սկսուած են մայր ականից և վերի ծայրերն տարածուած դէպի ձորակի աջ ու ձախ կողմերն։ Ահա այս բոլոր ականների ջրերն հաւաքուելով մայր ականի մէջ՝ արտավիժում են մի լաւ ջրաղացի ջուր, որից թէ խմում են և թէ ջրում են այգիները, որք խնամուած են առանձին հոգատարութեամբ։

ԱՒԵՐԱԿՆԵՐ.

Ջաբրայէլից բաւական ներքև Երասխի ձախ եզերքներում կան հայկական աւերակ գիւղատեղիներ, հանգստարանները և եկեղեցիների հետքեր։ Հայոց և Աղուանից թագաւորութեանց կենդանութեան ժամանակ շէն եղած են և խիտ առխիտ հայկական բազմամարդ գիւղերով լի գաւառիս բոլոր կողմերն. իսկ այժմ գիւղերից շատերն աւերակ են և շատերն մահմետականաբնակ։

ԽՈՒՏԱՓԻՐԻՆ ԿԱՄՈՒՐՋ.

Ամբողջ հինգ մղոն է Ջաբրայէլից մինչև կամուրջս, որ շինուած է Երասխ գետի վերայ։ Գետս, որ ընկած է Դիւռի երկու սարերի մէջ, հետզհետէ դարերի ընթացքում կտրած է ապառաժ սալ քարերը և խորացրած ու սեղմած իւր յատակը։ Երկու կամուրջ կայ այստեղ—Վերին և Ներքին։ Խիստ հնաշէն և համակ սրբատաշ քարով շինուած է վերին կամուրջն, որ ունի իննաչէք, որոց ոտքերն հաստատուած են բնութենաստեղծ վէմ քարերի վերայ։ Աչքերի կամարներից կանգուն են չորսն և քանդուած՝ հինգն։ Իսկ վարի կամուրջն հիմնարկուած է նոյնպէս բնական վէմ քարերի վերայ, որ ունի տասնևհինգ աչք, որոց ոտքերն շինուած են քարով և թաղերն թրծեալ աղիւսով և կրաշաղախ ցեխով։ Վերջին կամրջիս ձախ կողմի դրան կանգնած են Ռուսաց սահմանապահ զինուորականներ, իսկ աջ կողմում Պարսից սահմանապահներն, քանզի գետս է երկու տէրութեանցս այժմեան սահմանագլուխն։

ՄԱՋԱՆ-ՆԱՆԷ.

Խուգափիրին կամրջի հիւսիսային հանդէպ է Դիւռի սարն, որի վերայ կայ աւերակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որ այժմ ուխտատեղի արած են մահմետականք և կոչում են *Մազան—նանէ*: Երջանպարիսպ ունեցած է եկեղեցիս, բայց այժմ աւերուած է։ Ասում են թէ Հին-Թաղլարի ժողովուրդն տեղափոխուած է աւերակ գիւղիցս։

ՋԱԼԱՊԼԱՐ-ՀԱՃԻ-ԿԱՐԱՄ.

Աւերակ գիւղատեղիս գտնուում է Հակարի գետի արևելեան կողմում։ Այստեղ ևս կայ հայկական հանգստարան և եկեղեցի, որը նոյնպէս ուխտատեղի փոխած են մահմետականք, որք անուանում են *Ջալապլար—Հաճի Կարամ*:

Ա. ՆՈՐ-ԱՌԱՔԵԼ, գիւղս, գտնուում է Ջաբրայէլի արևմտեան կողմում, ականաձորակից վերև, հիմնուած է մի ձորակի

և երկու սեռի վերայ, բնակիչք գաղթած են Ղարադաղից և Ղափանի Սևաքար գիւղից 1840 թուին, հողն լեռնային, անջրդի, սակաւ և մեծ մասամբ բէկական, տեղական գլխաւոր բերքերն ցորեն, գարի, խաղող, գինի և բոժոժ, օդն և կլիման սննդարար, ջուրն՝ ականափոր, երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածկն փայտաշէն, քահանայ մի։ Ծուխ, 90. ար. 340. իգ. 312։

ՀԻՆ-ԱՌԱՔԵԼ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂ. Նորի արևմտեան կողմում՝ գիւղից վերև, ուր մնում է եկեղեցու աւերակն, որը՝ բարեպաշտ ոմն Մասան անուն՝ նորոգելով շինել տուած է մատուռ։ Հին գիւղատեղի, հանգստարան և աւերակ եկեղեցի կայ նաև սորա հարաւ արևմտեան հանդէպ՝ *Անապատ* անուն։

Բ. ՋԻԼԱՆ ԳԻՒՂ. շինուած է Աւաքել գիւղի հարաւ արևմտեան հանդէպ սարի վերայ, բնակիչք գաղթած են նոյնպէս Ղարադաղից և Ղափանից (Բաղք, Բաղաց գիւղերից) 1840 թուին, հողն կիսով չափ արքունի և կիսով չափ բէկական, ամենայն ինչ նոյն, ունին և ոչխար, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Նոր-Աւաքելից։ Ծուխ 28. ար. 105. իգ. 95։

Գ. ԲԻՆԵԱԹԼՈՒ ՇԷՆ. Հիմնարկուած է Ջիլանի սարի շաբունակութեան վերայ, բնակիչք գաղթած Ղարադաղից նոյն թուականին, հողն արքունի և ապարդիւն կամ խիստ նուազ արդիւնաւէտ. օդն, կլիման և ջուրն սննդարար. երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, նորաշէն, ծածկն փայտաշէն, քահանան գալիս է, Նոր-Աւաքելից. Ծուխ 26. ար. 80. իգ. 75։

Դ. ԾԱՄ-ՁՈՐ. Հիմնուած է Բինեաթլու շէնից վերև մի ձորի երկու լանջերին վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական, սակաւ, աւազուտ և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, շինուած Ռձխե. թուին, երկարութիւնն 18 մետր, լայնութիւնն 12

մետր 33 սանթիմ, քահանայ երեք. ծուխ 100 ար. 350. իգ. 270։

ՀԱՆԴԻՆ ՁԵՒՔ. Քարուկիր և փոքր մատուռ է շինուած Ծամ-ձորի արևմտեան հիւսիսային կողմում։ Աւանդաբար ասում են. «Սուրբ Նաղախն նահատակուելու ժամանակ փախչում է, բայց փախչելիս՝ անօրէններն կտրում են մի ձեռն, որ մնում է այս տեղ. յետոյ կտրուած ձեռնին վերայ շինում են մատուռ։ Բայց որովհետև արնաշաղախ է լինում նահատակուելիս, այս պատճառաւ կոչուում է Շաղախ—շաղախուած արիւնով»։

Ե. ՇԱՂԱԽ-ԳԻՒՂ—Սարի ձէն—Հիմնուած է Քարագլուխ գիւղի սարի վերայ. բնակիչք գաղթած Ղարադաղից, հողն արքունի, տեղական բերքերն նոյն (ոչխար, հաճար, գարնանի, կտաւհատ, կորեկ) գերազանց օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 115 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Ծամ-ձորից։ Ծուխ 70, արակ. 275, իգ. 230։

Զ. ՔԱՐԱԳԼՈՒԽ, ձէնս հիմնուած է Ծամ-ձորի հիւսիսային կողմում մի քերծի գլխին, բնակիչք մեծ մասամբ բնիկ. փոքր մասն գաղթած Ղարադաղից. հողն արքունի և սակաւ արդիւնաւոր, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն գերազանց. երկար կեանք 115 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Ծամ-ձորից. Ծուխ 25. ար. 108. իգ. 95։

Է. ԲԱՆԱՁՈՒՐ. գիւղս հիմնուած է մի ապառաժուտ ձորի ալ լանջի վերայ Յոր գիւղի հարաւային կողմում, բնակիչք բնիկ, հողն բեկական, ոչ այնքան բարեբեր, բայց նշանաւոր գինին. տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն վատառողջ, երկար կեանք 70—80 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, կառուցեալ չորս սիւների վերայ, որի երկարութիւնն է 18 մետր 40 սանթիմ, լայնութիւնն 11 մետր. քահանայ մի։ Ծուխ 150, ար. 575. իգ. 430։

ՍՊԻՏԱԿ ՏՂԱՅ (ԱՂ-ՕՂԼԱՆ ՈՒԽՏԱՏԵՂԻ)

Շինուած է գիւղիս արևելահարաւ կողմում սպիտակ շերտաքարով։ Մատուռս ունի միջակ մեծութիւն, հիանալի տեսարան և պատուական օդ։

Ը. ՅՈՐ. [1]) Հիմնուած է մի խոր ձորում, որ գտնուում է Վէլիջանի բերդի հարաւային ստորոտում. բնակիչք բնիկ, հողն արքունի, սակաւ և խիստ նուազ արդիւնաբեր, զի աւազուտ և խեճուտ է հողն, բայց պատուական է խաղողն, պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 90—95 տ. եկեղեցին՝ Ամենափրկիչ, կառուցեալ չորս սիւների վերայ, բարձրաշէն և գեղեցիկ, բեմի ժողովրդահայեաց ճակատն նրբաքանդակ նախշած. երկարութիւնն է 22 մ., լայնութիւնն 12 մ. 35 սանթ. դրան ճակատակալ քարի վերայ արտաքուստ. «Յիշատակ է Ն. Թվ.». քահանայ մի. Ծուխ 75. ար. 290 իգ. 270։

ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ.

Գիւղիս հարաւային կողմի ձորի ձախ եզերքի բարձրութեան վերայ կայ մի փոքր հարթակ, որի վերայ շինուած է վաղուց մի հին և անտաշ քարով եկեղեցի։ Փոքր տաճարիս շուրջն հանգստարան է, բայց երևում են խուցեր. Թուի թէ փոքրիկ միաբանութիւն եղած է այստեղ։

Ստորերկրեայ Դամբարան. Անապատիս մօտ կայ մի ստորերկրեայ, քարուկիր դամբարան, որի մէջ կայ մի գերեզման, որ ունի շերմաքար և մեծ ուխտատ է։

Թ. ՂՈՒՇՋԻԼԱՐ. Հիմնուած է գիւղս Վէլիջան-իշխանի բերդասարից դէպի արևելք խոնարհուած լանջի վերայ. բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն բէկական և միջակ արդիւնաբեր. պատուական օդն, կլիման, ջուրն և տեսարանն. երկար կեանք 110 տ. եկեղեցին՝ Բերդավանք, քարուկիր. քահանան գալիս է Նորաշէնից։ Ծուխ. 12. ար. 36. իգ. 27։

[1]) Համարեա թէ բոլոր գիւղերիս դոմերն փորուած են գետնի տակ որը անուանում են կ օ հ օ լ (առանց փայտի)։

Ա. ՆՈՐԱՇԵՆ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, բնակչաց մի մասն բնիկ և միւս մասն գաղթած Ղարադաղից, հողն բէկական, խիստ սակաւ, և նուազ արդիւնաբեր, պատուական օդն, կլիման, ջուրն և տեսարանն, երկար կեանք 113 տ. եկեղեցին նորաշէն և տակաւին առանց օծելու։ Քահանայ մի. Ծուխ 20, ար. 120. իգ. 105։

ԺԱ. ՏԱՒ ԳԻԻՂ. Հիմնուած միևնոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակչաց կէս մասն բնիկ և միւս կէսն գաղթած Ղարադաղից, հողն բէկական, սակաւ և նուազ արդիւնաբեր, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք՝ 100 տ. եկեղեցին նորակառոյց, քարուկիր, Սուրբ Մեսրոպ, քահանան գալիս է Վանք գիւղից. Ծուխ 35. ար. 175. իգ. 135։

ԺԲ. ՎԱՆՔ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ՝ Հատրուէթ գիւղի հարաւային հանդէպ. բնակիչք բնիկ, հողն բէկական, սակաւ և կարի նուազ արգիւնաբեր, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սպիտակ-Խաչ-Վանք, քահանայ՝ մի։ Ծուխ 35. ար. 155, իգ. 114.

ՍՊԻՏԱԿ-ԽԱՉ-ՎԱՆՔ.

Հիմնուած է Վանք գիւղից ներքև մի տեսարանաւոր հարթակի վերայ, շինուած է անտաշ քարով և կրացեխով։ Վանքս ունի փոքր կաթուղիկէ և գաւիթ։ Տաճար և գաւիթ ի միասին չափելով երկարութիւնն է 15 մ. 75 սանթ. լայնութիւնն 7 մ. 10 սանթ.։ Վանքս, որ եկեղեցի համարուած է Վանք գիւղացւոցն, բայց միևնոյն ժամանակ մեծ ուխտատեղի է գաւառիս հայ բնակչաց։ Տաճարիս ներսում հիւսիսային խաչարձանի վերայ, որ հաստատուած է կամարի տակ։

«Ես Սիրաք կանգնեցի զխաչս հաւր իմոյ Խուրշտիի թվ. ՉՉՒ. (1333)»։

Դրան հարաւային կամարի վերայ. «Շինեցաւ ՌՃՉԴ. այն տարին էր Թահմազ խան»։

Զանգակատան յիշատակարանն. «Յիշատակ է զանկատունս Սուրապի որդոյ Ավանէս եպիսկոպոսին»[1]։ *Արեւմտեան լուսամտի տակ արտաքուստ.*

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս... Վրդանէս Թ. ՌՃԽԹ»։

ԲԵՄ

*Տաճարիս արեւմտեան կողմում, դրան մօտ հանգստարանում կայ մի բեմ, որ շինուած է սրբատաշ քարով։ Բեմիս արեւմտահայեաց երեսին մէջ գետեղուած է մի դեղեցկաքանդակ խաչարձան, որի գլխին փորագրուած է. «Ես աջամի որդի իշխանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Աստւարայ, որք կարդէք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, աղաչեմ. ի թվիս ՉՂԷ.»։

Բեմիս առաջ՝ մի մէջքն կլոր քարի վերայ. «Այս է հանգիստ բարեպաշտին Աստւարայ, որ կէսաւրեայ ժամանակաւ ի Քրիստոս փոխեցաւ, ով կարդայ....»

Սորա մօտ. «Այս է հանգիստ բարեպաշտ Վալիճանայ, որ կէսաւրէ ժամանակաւ ի Քրիստոս փոխեցաւ, ով..»։ Վալիճան-բէկիս հայրն գրել տուած է տապանի միւս երեսին. «Ես Ախիջան որդի Ջալալայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Վէլիճանին, որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէք թվին ՋԻԷ.»։

Տապանիս մօտ. «Այս է հանգիստ Խոնտբեկուն դուստր Ախիճանին, կողակից Կոստանտելին և քոր Վէլիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ թվ. ՋԿԱ.»։

Ուխտաւորաց համար վանուցս հիւսիսային կողմին մօտ կայ մի մեծ սենեակ, որի դրան ճակատակալ քարին վերայ փորագրուած է. «Ես Մակրտիչս.. յիշատակ է թանապէս (մեծ սենեակ) Սուրապի որդի Ավանէս եպիսկոպոսի. շինեցաւ ՌՃՉԴ. թվին. այն տարին էր Թահմազ խան, Օսմանլուն երկրէս դուրս արաւ»։

---

[1]) Վանուցս հարաւային կողմում ամփոփուած են Յովհաննէս, Մկրտիչ և Պետրոս եպիսկոպոսների մարմիններն։ Աւանդաբար պատմում են. «Յովհաննէս եպիսկոպոսը եկած է Մլին քաղաքից (Փէյդամբարից) իր ժողովրդով միասին. ինքն նստած է վանքումս, իր հետ բերած ժողովուրդը բնակեցնում է Որդնաշատ, Թղասեռ և Հատրուէթ գիւղերում։

Վիմափոր խուցեր. Մեծ սենեկիս հիւսիսային կողմին մօտ կայ երկու վիմափոր խուցեր, որոց մուտքն մի է: Կարծես խուցերիցս մին եղած է ճգնարան և միւսն ննջարան:

Վանքումս եղած է մի սպիտակ խաչ, որ ունեցած է չափազանց ուխտաւոր, սակայն գողացած են սոյն թանկագին հնութիւնը. որի հետ և մի քանի կոնդակներ, որք գրուած են եղել Աղուանից Եսայի, Ներսէս և Յովհաննէս կաթուղիկոսներից:

ԺԳ. ՀԱՏՐՈՒԹ ԱԻԱՆ. Հիմնուած է մի խոր ձորում, որի հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերը պատած են բարձր սարեր, միայն բաց է արևելեան կողմն: Բնակչաց մի մասն քնիկ, մի մասն գաղթած Ղազանչուց (Գողթան գաւառից), մի մասն տեղափոխուած Մլղին քաղաքից, և փոքր մասն Բարկիւշատից, Ղարադաղից, Ցորից և Թիփլիզից. հողն բէկական, չափազանց սակաւ [1]), ամենափոքր մասն ջրարբի և այգեւէտ, տեղական բերքերն նոյն, միայն չկայ ոչխար, գովելի օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 110 տարի. եկեղեցին Սուրբ Յարութիւն. քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն 18 մետր 35 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 4 սանթիմ: Հիւսիսային երկրորդ կամարի խոյակից ներքև. «թվ. ՌՃՀ.» որ է շինութեան թուականն. քահանայ երկու: Ծուխ 260. ար. 1060. իգ. 850:

Աւանումս կան շուկայ, վաճառանոց և արուեստաւորներն—դերձակ, հիւսն, սափրիչ, կօշկակար, որմահիւս, դարբին, ոսկերիչ, մսագործ, ևն. ևն.:

Կայ նաև *միղասեան* ծխական երկսեռ ուսումնարան, ուր ուսանում են 130 աշակերտ և աշակերտուհի: Ուսումնարանիս մուտքն գոյանում է

Թոշակադրամներից	. . . . .	400 ռուբ.
Ննջեցելոց նուէրներից	. . . . .	200 ,,
Կշռից (Ղափանից)	. . . . .	200 ,,

[1]) Մօտ 300 ծուխ Հատրութն ունի միայն վեցհարիւր օրավար հող

Մարդասիր. Ընկեր. նուէր.	. . .	120 րուբ.
Մասնաւոր նուէրներից.	. . . .	150 ,,
Բարեկր. Մեսրոպ քահանայ Տէր-Ոսկանեանի նուիրած 1000 րուբլոյ տոկոս		40 ,,
Ժամհարեան եղբայրներից նուէր	.	25 ,,
Ընդ ամենն		1135 ր.
Տրք. տարեկան ռոճիկ վարժապետի.	. .	450 րուբ.
,, ,, վարժուհւոյ.	. .	440 ,,
բնակարանի վարձ	. . . . .	180 ,,
Ընդ ամենն		1080 ր.

Աւանումս կայ նաև մետաքս քաշելու գործարան, հեռագրատուն, արքունի զօրանոց, որի մէջ սովորաբար նստում է 1500 զինուորական—հեծելազօր կօզակ:

ԺԴ. ՈՐԴՆԱՇԱՏ. Գիւղս հիմնուած է Հատրութի արևմտեան կողմում եղած սարի ստորոտում, բնակիչք տեղափոխուած *Մլղ* քաղաքից, հողն բէկական և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն. գովելի օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 110 տարի, եկեղեցին Սուրբ Հռիփսիմէ, քարուկիր, քահանայ մի: Ծուխ 50. ար. 195. իգ. 190:

ԺԵ. ԹՂԱՍԵՌ. Գիւղս խիստ մօտ է Որդնաշատին. բնակիչք տեղափոխուած են *Մլղ* քաղաքից, հողն արքունի, ամենայն ինչ նոյն ըստ Որդնաշատի, եկեղեցին Ամենափրկիչ [1]), փայտաշէն, քահանայ մի: Ձեռագիր աւետարան եկեղեցւոյս, պահուած անխնամ, չունի յիշատակարան, քանզի գողացած են և անյայտացրած: Ծուխ 110. ար. 770. իգ. 390:

Անապատ. Գիւղիս արևմտեան կողմում կայ մի փոքր եկեղեցի՝ կառուցեալ մի բլրակի վերայ սոյն անուամբ, որ կանգուն է:

ԺԶ. ԿԱՐՄՐԱԳՈՒՃ. Գիւղս հիմնուած է Հատրութի հիւսիսային կողմի սարի ստորոտում մի խոր ձորի մէջ. բնակիչք

[1]) Գիւղիս նախկին բնակչաց եկեղեցին, որ շինուած է մի բլրակի վերայ և գտնուում է գիւղիս և Կարմրագուճի մէջ, քարուկիր է և կոչւում է Հին-Թղատեռի եկեղեցի, որի մօտ է աւերակ գիւղատեղին և հանգստարանն:

կէսով չափ բնիկ և կէսով չափ տեղափոխուած Ղափանից. Հողն արքունի, սակաւ և նուազ արդիւնաւէտ, օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 80 տ. եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր, երկարութիւնն 12 մետր 80 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 38 սանթիմ, քահանայ մի. Ծուխ 50. ար. 240 իգ. 228։

ԹԷ. ՔՈՉԲԻԿ. Շէնս հիմնուած է նոյն սարի արևելեան կողմում, հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական, մասամբ ջրարբի և հացատու, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն սննդարար, երկար կեանք 80—90 տարի, եկեղեցին Սուրբ Յարութիւն, քարուկիր. քահանան գալիս է Հատրութից։ Ծուխ 25. ար. 75. իգ. 60։

ԹԸ. ՄԵԼԻՔՋԱՆԼՈՒ. Հիմնուած է նոյն սարի հարաւահայեաց մի բլրի վերայ, բնակիչք գաղթած Ղարադաղից, հողն արքունի, տեղական բերքերն նոյն (չիք այգի, թթենի, բոժոժ և ոչխար), պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85—90 տ. եկեղեցին նորաշէն, քարուկիր, քահանան գալիս է Հատրութից. Ծուխ 32. ար. 155. իգ. 132։

ԺԹ. ՊԼԵԹԱՆՑ (Պլըթան). Հիմնուած է նոյն սարին մի ձորի արևմտահայեաց լանջին վերայ. բնակիչք բնիկ, հողն արքունի, ունի նաև այգի, բոժոժ և պարտէզ, անվնաս օդն, կլիման և ջուրն. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, քահանան գալիս է Հատրութից։ Ծուխ 20. ար. 90 իգ. 70։

Ի. ԽԱՐՄԱՆՋՈՒՂ. Հիմնուած է նոյն սարի արևելահայեաց լանջի վերայ. բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն արքունի, ամենայն ինչ նոյն (միայն չունի այգի, թթենի և բոժոժ). եկեղեցին Ծաղկավանք, քարուկիր, նորաշէն, քահանայ մի. Ծուխ 40. ար. 160. իգ. 150։

ԻԱ. Ա.Ղ-ԲՈՒԼԱՂ. Հիմնուած է միևնոյն սարի արևելեան կողմում, բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն արքունի, անջրդի, սակաւ, բայց հացատու, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ձեղունն փայտաշէն, քահանան գալիս է Խարմանջուղից։ Ծուխ 32. ար, 122. իգ. 110։

ԻԲ. ԸԽԵՑԻՔ. Հիմնուած է միևնոյն սարի արևելեան ստորոտում. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, սակայն հացատու, ամենայն ինչ միևնոյն են օդն, կլիման, ջուրն, երկար կեանքն, եկեղեցին և քահանան։ Ծուխ 20. ար. 65. իգ. 50։

ԻԳ. ԻՏԵԼԵՑԻՔ. Հիմնուած է նոյն սարի արևելեան ստորոտում. բնակիչք բնիկ, հողն արքունի, մասամբ ջրարբի, տեղական բերքերն նոյն (ունին այգի, թթենի, մետաքսաթել), սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, փոքր. քահանան գալիս է Հատրութից։ Ծուխ 60. ար. 265. իգ 235։

ԿԱՒԱՌ.

Ուխտատեղիս գտնուում է այն սարի վերայ, որ ընկած է Ղուրու-չայի աջ կողմում գրեթէ, արևելքից արևմուտք՝ առանձնացած ամեն կողմերից։ Այս մի հին միջակ վանք է՝ շինուած չորս սիւների վերայ կոփածոյ քարով և կրացեխով. բայց արևելքից արևմուտք ճաքած է վանքիս գագաթն։ Հնուց ունեցած է և ամուր շրջապարիսպ, միաբանից խուցեր և ուխտաւորաց սենեակներ. սակայն աւերակ են այժմ։ Սուրբ Յակովբայ մարմինն ամփոփուած է հարաւային փոքր խորանի մէջ։ Մեծ ուխտատեղի է, սպիտակ տապանաքարն սևացած է շատ մոմեր փակցնելուց։ «Յակովկայ և Իրաւփառայ» է վանքս ըստ պատմչին Ա.ղուանից։

ԻԴ. ՀԻՒՔԻՒՐԱԹԱՂ. Հիմնուած է միևնոյն սարի հիւսիսային կողմում, բնակչաց մեծ մասն գաղթած Ղարադաղից, հողն բէկական, անջրդի, բայց այգևէտ. տեղական բերքերն նոյն. օդն և կլիման փոքր ինչ ծանր ամրան, երկար կեանք 75 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Հատրութից։ Ծուխ 26. ար. 112. իգ. 114։

ԻԵ. ՈՂԵՐ. Հիմնուած միևնոյն սարի հիւսիսային կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն (միայն չ'ունի այգի և բոժոժ), եկեղեցին կիսատ, քահանան նոյն։ Ծուխ 15. ար. 75. իգ. 55։

ԻԶ. ՋՐԱԿՈՅՍ. Հիմնուած միևնոյն սարի հիւսիսահայեաց կողմում մի ձորի ձախ լանջի վերայ, բնակիչներից եօթն ծուխ բնիկ և մնացեալներն գաղթած Ղարադաղից. հողն բէկական, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 90 տ. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, կառուցեալ չորս սիւների վերայ. երկարութիւնն 17 մ. 55 սանթ., լայնութիւնն 11 մետր 24 սանթիմ. «Յիշատակ է Սուրբ Խստեփաննոյս (Ստեփաննոս) եկեղեցիս Ձարակոյսա ռամիկ ժողովրդեան թվ. ՌՃԽԷ.»: Քահանան գալիս է Ծակուռուց: Ծուխ 37. ար. 156. իգ. 153:

ԻԷ. ՄԱՄԱՏԱԶՈՐ. Հիմնուած նոյն սարի հիւսիսային կողմում երկու ձորերի մէջ կախուած մի սեռի վերայ. բնակչաց կէս մասն բնիկ. իսկ մնացեալ կէսն գաղթած Ղարադաղից և եկած Դողից. հողն արքունի և անջրդի, տեղական բերքերն նոյն. օդն, կլիման և ջուրն գովելի. երկար կեանք 110 տ. եկեղեցին Սուրբ Մինաս, հնաշէն, կառուցեալ երկու կամարների վերայ. երկարութիւնն 14 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 95 սանթիմ. քահանան գալիս է Ծակուռուց: Եկեղեցուս հիւսիսային կամարի վերայ. «Ես Ազարիա աբղա (աբեղայ) Դաւիթ Էրեց, որ շինող եկեղեցոյ շինեցի տէր»: Նոյն կամարի միւս կողմում. «Խաչս Բաղդասարին է, իւր կողակցին . . . (եղծուած)»: Դրան գլխին. «Թվ. ՌԾ.»: Ծուխ 33. ար. 110. իգ. 117:

ԻԸ. ԾԱԿՈՒՌԻ [1]) գիւղ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմում, Վանէսայ սարի ստորոտում, մի ձորի երկու լանջերի վերայ. բնակչաց մի մասն բնիկ և միւս մասն գաղթած Ղարադաղից. հողն բէկական, սակաւ և անջրդի, վասնորոյ սակաւ այգիներն. տեղական բերքերն նոյն, նշանաւոր են տանձն և խնձորն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տ. եկեղեցին Ծաղկավանք, հոյակապ, կառուցեալ երկու սիւների վերայ, քահանայ մի: Դասից վերև

[1]) Մի քանի հայ գերդաստան կայ Պակաթաղում:

ունեցած է կաթուղիկէ. բայց խոնարհած է: Երևի թէ վանք եղած է այս, յետոյ փոխած են եկեղեցու, որի երկարութիւնն է 15 մետր 25 սանթիմ, լայնութիւնն 12 մետր: Մի խաչարձան քարի վերայ, որ կարծեմ հանգստարանից բերած են, փորագրուած է. «Թիւ ՈՒԽ.»: Արձանագրութիւն դրան գլխին ճակատակալ քարի վերայ, «Ես Յակովբ վարդապետ՝ աշակերտ մեծին Եսաիա վարդապետին Կրճևանցոյ՝ ի գիւղաքաղաք գեղջէն Թաղլարցի. յազգէն Թանկոց առաջնորդ կարգեալ ի հայրապետէն Աղուանից տեառն Երեմիայ մի քանի գիւղօրէից Ղուզաց [1]), ոչ թողին բնակիլ ի հայրենի աթոռն մեր: Այլ որն ելա և շրջեցա, և ոչ գտի առաւել քան զայս և հաճեցայ բնակիլ աստ և հրդել (հարթեալ) զՅնդուսար ի տեղի բնակութեան և սկիզբն արարեալ շինեցի եկեղեցիս ի կաթուղիկէն յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց հօրն իմոյ Դալվաթի սորան և մօրն Մարիամին և դահեակ սնուցիչ երկու քոռն իմոյ Սաւին, Յաշաքին՝ ողորմութեան, ապաչեմ կենաց. շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ Յակովբ վարդապետին ի թվին ՌՃԼԱ.»: Ծուխ 40. ար. 140. իգ. 128:

ԻԹ. ՀԿԱԿՈՒ ՇԷՆ (Հակակ) Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմի մի ձորում, բնակիչք բնիկ, հողն արքունի. տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն սննդարար. երկար կեանք 80—85. եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, փոքր, քահանայ մի: Ծուխ 25. ար. 79. իգ. 72:

Լ. ԹԱՂՈՑ գիւղ. Հիմնուած է Դող աւանի հարաւային կողմում, Մոխրենիսի ձորից հոսող առուի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Դաբաբաս գիւղից, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին սուրբ Յովհաննէս, քարուկիր. քահանայ երեք: Ծուխ 70. ար. 256. իգ. 219:

ԼԱ. ԴՈՂ ԱՒԱՆ. Հիմնուած է համանուն բերդասարի արևելահայեաց լանջին վերայ՝ ստորոտին մօտ. տեսարանն

[1]) Ղուզի նշանակում է՝ արեգդէմ չէ. իսկ այս տեղ նշանակում է սարիս հիւսիսահայեաց լանջերի վերայ եղած գիւղօրէից:

գեղեցիկ, բնակիչք բնիկ, բայց մասամբ եկած Ղազանչուց, հողն մէլիքական, պտղատու և արդիւնաւոր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, հոյակապ, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն 21 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 12 մետր 92 սանթիմ: Եկեղեցիս ունի և կաթուղիկէ և երկու քահանայ: Դրան ճակատակալ քարին վերայ փորագրուած է. «Թվին ՌՃՁԵ. այս սուրբ Ոհանէս եկեղեցւս գլուխն նորոգեց Ղուկազ վարդապետի որդի Մէլիք-Եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ, ով որ կարդայ մէկ բերան Աստուած ողորմի ասէ»:

Եկեղեցիս ունի քարեայ խաչկալ, որի *հիւսիսային* դրան վերայ փորագրուած է. «Որ ողորմի Քրիստոս Աստուած. յիշատակ է խաչկալս պարոն Մէլիք Եկանիս և ծնողաց իմոց Մօսէս, Ղուկաս վարդապետին, մօրն իւր Շհօին և ծնողին իմ Մարխամին և եղբարն իմ Աբրամին և քոյրն իմ Խանում, կողակիցն Խանում աղին, որդի Աբրամին, Ըսայուն (Եսայուն) Պաղտամին, Օսէփին, Պաղրին, Առաքելին, Սափարին, Պաղումին, Վերտին, կողակիցն Գոզալին, դուստր Թավարին, Խանպաճին, Խաթուն Խաթայուն, և այլն եղելոց ողորմի ասէք, ամեն. Թիւն ՌՃԷ.»: Ծուխ 280. ար. 765. իգ. 695:

ԵԿԵՂԵՑՈՒՄՍ ԿԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՆ.

1) *Կենաց փայտ* արծաթեայ խաչի մէջ:

2) Մի արծաթեայ խաչում, որի վերայ քանդակուած է. «Այս է մասունք և նշխարք սրբոյ *Առաքելոյն Թովմայի և Յակովբայ* զմահատ (՞) նահատակին. ես Շուլթեցի Մարգարիտ ապաշխարող ետու զայս նշխարքս քեզ ծերունի Սարգիս վարդապետիդ յիշատակ հոգոյ իմոյ ի վայելումն յաւիտենական քո, Թվ. Ճ.»:

3) Այլ արծաթեայ խաչում. «Յիշատակ է Մէլիք Եսայի (ու) որդի Սափարի բէկին, որ ետ Դողա կուսանաց Անապատին. սա է *Յակովբ հայրապետին և Թէոդորոսի* մասունք...»:

4) Մասն սրբոյն *Յակովբայ*՝ նոյն տեսակ խաչում. «Ես Գրիգոր չինել տվի սուրբ խաչս յիշատակ ինձ առաջ անմահական է՝ի Քրիստոս Աստուած հաւատաց է Սուրբ Ակովիկ, որ է Դիզակ [1]): Հաթերքեցի ոսկերիչ Մուրատս չինեցի. Թվ. ՌՂ. էր»:

5) Մասն *Բարսղի Կեսարացւոյն*, մի արծաթեայ ոսկեզօծ աջում. «Այս է աջն սրբոյն Բարսեղի հայրապետին Կեսարու, որ ես Սարգիս վարդապետս վերստին նորոգել տվի յիշատակ ինձ և ծնողաց իմոց Օհանին և Եղիսապետին ի դուռն Սուրբ Աստուածածին Թվ. ՈՃԵ- ին. այժմոյս (Փրկչական) ՌՃԾԲ. ի գիւղն Կողպ»:

ԴՈՂ ԱՒԱՆԻՍ ՄԷԼԻՔՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆՆ.

Եկեղեցուս հարաւային կողմին պատկից շինուած է մի նեղ և երկար մատուռ իբրև դամբարան, որի մէջ ամփոփուած են բոլոր մէլիքներն և մէլիքազուններն:

«Այս է տապան Մէլիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. Թվին ՌՃԿԴ.»:

«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մէլիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ Պարսից աղգէն
Քան զիշխանս Հայոց երկրին... ՌՃՂԴ.»:

«Այս է տապան քաջ իշխանին
Մէլիք Եկանի որդի պարոն Մէլիք Աբրամին,
Որ շատ սիրական էր Նատիր Շահին,
Որ յառաջ վախճանեցաւ հայր սորին,
Որ շահապաճ ունէր Նատիր Շահին,

[1]) Դիզակ գաւառում:

Որ է Բ. հաքիմ էլաւ Ե. մուհալին.
Շահն ոզեց (ուղեց) Արամ տարաւ,
ԶՌ (6000) Թուման ջարմայ առաւ,
Ուրախ սրտով յղի (ուղի) արաւ,
Մէկ ամ կացաւ, վախճանեցաւ.
Ողորմի Թվ. ՌՃՂԴ.
Որ փոխեցաւ առ Աստուած,

Որ ընթեռնուք, մէկ բերան Աստուած ողորմի ասացէք».

«Այս է տապան մեծին Մէլիք Եկանի որդի Մէլիք Եսայուն և էր սա իշխան կարգեալ Նատիր Շահէն. ԼԴ. ամ տիրեաց երկրիս Դիզակու և արար բազում քաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն, և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր և Թել կենաց սորա և կամաւ Աստուծոյ վաղճանեցաւ Թվ. ՌՄԼ. հոգտեմբերին բ.-ին գշ. որ ընթեռնուք, մէկ Հայր մեղայ ասացէք. ամէն»։

«Այս տապան լուսահոգի Մէլիք Արամի որդի Բաղր բէկին. Թվ. ՌՄԼԸ. էր»։

Մելիք-Եկանի ապարանն գտնուում է աւանիս մէջ, որ բաղկացած է երկյարկ շինութիւնից, որ կառուցեալ է համակ սրբատաշ քարով։ Հետևեալն քանդակուած է գետնայարկի դրան գլխի ճակատակալ քարին և սեմերին վերայ.

«Թիւն ՌՃՃԶ. յիշատակ է *Թանապատ*. այս է, որ ես Ղուկազ վարդապետի որդի, որ իմ անուն Մէլիք Եկան, առաջ խելխն (խալխն-ժողովուրդն) ջամ դեւին [1]), ինձ կարգեցին քօխայ, յետ նորա որ օլքան [2]) սալամաթ եղաւ։ Դեռ Աւշաւ Սուլթան Հիւսէնիյ (ինի) տղայ Ղահթմիշ երեքն որ 'ի յէն չափաղուլ [3]) ողարկէ. որ պիրաւ ինձ. տու չ'ես [4]) Մէլիքութիւն տվաւ։ Այլ Օսմանլուն եկաւ առաւ 'ի ձեռն որ Աւյնիյ (Աղուանից) որ ան էլ սա չափաղուլ ուղարկէ որ պերէն։ Ես Թողեցի ոչ [5]) Հայաստանաս [6]) եսիր տալու... [բ]ինչ տվաւ սօվ Լղար ա-

[1]) Դումարուեցան։
[2]) Երկիրն խաղաղացաւ։
[3]) Որ Ղահթմիշն երեք գունդ զօրք առպատակ սիրէ։
[4]) Պիրաւ—բերաւ. և ասաց—Դու չ'ես Եկանն։ Երբ իմացաւ որ ես եմ, մելիքութիւն տուաւ.
[5]) Թողեցի ոչ—չ'Թողի։
[6]) Հայաստանէաւ Աղուանից երկրի հայերից։

ղին [7])։ Շահ Նայդիր զօրէղ Թալաւոր եկաւ, զօրով առաւ օլքաս 'ի ձեռէս Օսմանլուէնանայ (Օսմանցիներից), նոր ահս (այս) շափաղուլ կողարկէ, որ բերաւ ինձ այս եզմոհիլիս. ազկ քրիստից (ազգ քրիստոնէից) որ մէկն Թալիշ, մէկն Զմյուլթ (Զաբաբերդ), մէկն Խաչէն, մէկն Վարանդայ, մէկն Քոչէզ, մէկն Տուզաղ. այսդունց [8]) (սոցա) խանը պակլար պէկայ տեղ ար ինձ շափաղաթ արաւ։ Ով որ յեդով կարդէ այս գիր, էս իմանայ որ մեր որպիսութիւն այսպէս իլաւ. մին ողորմեայ այսէ (ասէ), եղև. ամեն»։

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ.

Աւանիս հարաւային կողմի հանգստարանում կայ մի քարուկիր եկեղեցի, որ շինուած է մեծ մեծ քարերով։ Դրան ճակատակալ քարի վերայ.

«Թվ. ՌՃՂԶ. յիշատակ է սուրբ Ըստեփանոս եկեղեցուս գլուխն, որ նորոգեց Մէլիք Եկան և որդին Մէլիք Եսային, յիշատակ է հոգոյ»։

Դրանն սեմերի վերայ. «Ովանէս եպիսկոպոս, Մանուէլ եպիսկոպոս»։ Եկեղեցիս խիստ հին է, այն է առնուազն վեց-հարիւր տարուան շէնք է։

ԱՆԱՊԱՏ.

Հանգստարանիս վերևի ծայրում կայ մի այլ քարուկիր եկեղեցի ևս, կառուցեալ մի կամարի վերայ, որի ճակատի խաչի վերայ փորագրուած է. «Խաչս Վարդան»։ Եկեղեցուս մէջ է Մէլիք-Բախտամի գերեզմանն, որ ծածկուած է հողով։ Եկեղեցուս մօտ նշմարուում են խուցերի և կացարանների բակեր և բեկորներ, որոց մասին պատմում են թէ կուսանոց եղած է անապատս։

Դող աւանս ունեցած է ամուր շրջապարիսպ, բայց այժմ այնպէս քանդած և քարերը տարած են, որ հազիւ է նշմարուում շրջապարսպի հետքերն ուրեք ուրեք։ Սակայն տա-

[7]) Սովն վախտ աղային հարուած տուաւ։
[8]) Դիզակ գաւառս հաւաքուողների վերայ դիս իշխան կարգեց Շահն,

կաւին ապրում են մարդիկ, որք յաճախ կանգուն տեսած են պարիսպը։

Գրչագիր Աստուածաշունչ. Աւանումս կայ մի ընտիր ձեռագիր աստուածաշունչ, որի մէջ նախաղրութիւնները կայ բոլոր գրոց համար առանձին առանձին հատուածներով։ Միայն ափսոս որ անխնամ պահուած է, վասնորոյ շատ տեղերում իրարու փակած են թերթերն և բորբոսնած։ Ընկած և անյայտացած են մի քանի թերթեր, որոց հետ և յիշատակարանն։ Երկար թերթելուց վերջն հազիւ կարողացայ գտնել միայն. «Ջատացող սուրբ գրոցս զՍիմէօն բարուն զաշակերտ մեծին Գրիգորի և զանխմաստ ծրող սորին զՅովհաննէս եպիսկոպոս Անւոյ, աղաչեմ զձեզ դասք լուսերամից, յիշման առնել զմեզ արժանի, զի և դուք յիշեալ լիջիք 'ի բարիս բարերարին Աստուծոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս. ամէն»։ Աստուածաշունչս, որ գտնուում է պ. Տէր-Սարգսեանցի մօտ. չունի թուական։

ԼԲ. ՄՈՒՐԵՆԻՍ գիւղ. Հիմնուած է Թաղոտ գիւղի արևմտեան կողմում, ջրաձորի ձախ կողմի լանջի վերայ, դիրքն արևելահայեաց. բնակիչք բնիկ, հողն մելիքական, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն գերազանց, երկար կեանք 100. եկեղեցին սուրբ Սարգիս, քարուկիր, քահանայ մի։ Ծուխ 40 ար. 180. իգ. 170։

Օխտը դռնէ (Եօթն դուռ ունեցող)

Ուխտատեղիս գտնուում է գիւղիցս վերև մի լեռնալերակի վերայ։ Շինուած է եղել տորոնագոյն տաշած քարով, որ այժմ կիսաւեր դրութեան մէջ է։

ԼԳ. ՏՈՒՄԻ. Հիմնուած է գիւղս Մոխրենիսի արևմտեան կողմում Շնաքարի գետ կոչուած վտակի ձախ ափի բարձրութեան վերայ, դիրքն հարաւ-արևելահայեաց. բնակիչք բնիկ. հողն բէկական, լեռնալին, անջրդի, բայց հացատու. տեղական բերքերն նոյն (կայ նաև խոզ) [1]), օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 85—95. եկեղեցին սուրբ Յով-

[1]) Գիւղս իւր անդերով և անտառներով պատկանում է մեծ. Մովսէսբէկ Աթաբէկեանցին։

հաննէս, քարուկիր, կամարակապ, առանց սիւնի, քահանայ երկու։ Ծուխ 120. ար. 563. իգ. 470։

ԿԱՐՄԻՐ ԵԿԵՂԵՑԻ.

Գիւղիս հարաւային կողմում, ձորակի աջ կողմի սեռի վերայ, շինուած է հասարակ քարով։ Ամբողջապէս փլած է եկեղեցուս հարաւային պատն և թաղն կամարներով միասին։ Ունեցած է երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից։ Երկարութիւնն 11 մետր, լայնութիւնն 6 մետր 45 սանթիմ։ Արտաքուստ արևմտեան լուսամտի գլխին փորագրուած է։

«Ի ՆԽԹ. թվ. և ի թագաւորութեանս տեառն Գագիկայ (Աղուանից) Որդոյ Մուսէի ես Ոսկի դուստր Մուսէի շինեցի տուն Աստուծոյ 'ի փրկութիւն հոգւո իմո և ծնողաց իմոց»։ Եկեղեցիս հանգստարանի մէջ է. վաղեմի հանգստարանիս մէջ կան խիստ հին ամփոփեալներ, որոց տապանաքարերն անարձանագիր են ամենամեծ մասամբ։

ԹԱԳԱՒՈՐԻ ՊԱԼԱՏ.

Հանգստարանիցս փոքր ինչ վերև, մի առանձնացած սարահարթի վերայ կան քարուկիր շինութեանց բեկորներ։ Հետքերից յայտնի երևում է որ շրջապարսպով ամրափակուած է եղել սարահարթս։ Խեցեղէն խոզովակների շարքերից նշմարուած է որ ջուր բերուած է ժամանակաւ սարահարթս։ Ծողովուրդն աւանդաբար *Թագաւորի պալատ* անունը յատկացրած է աւերակ հնութիւն կրող սարահարթիս։

ԹԱԳԱՒՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆ [1]).

Պալատատեղուցս դէպի հարաւ՝ փոքր ինչ հեռի՝ մի կոնաձև բարձրացած բլրի մօտ կայ մի հին և առանձին այլ հանգստարան, որի մէջ երևում է մի մատրան աւերակ։ Աւերակիս հարաւային կողմին մօտ կայ մի տապանաքար, որ ու-

[1]) Ըստ մեր կարծեաց այս է գերեզման Աղուանից ներսէհ իշխանի որդի Գագիկ իշխանին, որ էր հայր Աբու-Մուսէի, որի մասին տես ծանօթ. 12։

նի 2 մետր 3 սանթիմ երկարութիւն և 73 սանթիմ լայնութիւն և 5 գծով նախշեր, սակայն չունի արձանագրութիւն։ Ահա այս է որգուց որդի աւանդաբար մատնանիշ արած *Թագաւորի գերեզմանն*։

ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂԲԻՒՐ.

Պալատատեղու հիւսիսայինն ձորակում, որ կայ գիւղի և *Կարմիր եկեղեցու* միջև, կայ մի պատուական աղբիւր, որի վերայ վաղուց շինուած է եղել սրբատաշ քարով կառուցեալ գեղեցիկ շէնք։ Ահաւասիկ այս է *Թագաւորի աղբիւրն*։ Ցաւալի է, այո՛, խիստ ցաւալի որ գիւղացիքս չիմարաբար քանդած և տարած են թէ՛ Կարմիր եկեղեցու թէ՛ Պալատի և պարսպի և մատրանն և թէ՛ աղբիւրիս քարերը։

ԳԱՒԱՌԻՍ ՎԱՆՔԵՐՆ

ԳՏՋԱՅ ՎԱՆՔ.

Արդէն ծանօթացանք Հատրուքի մօտի վանքին. այժմ ծանօթանանք Գտչայ վանուց, որ հիմնարկուած է մի գեղեցկատես և հիւսիսահայեաց սարահարթակի վերայ, Թաղլար աւանի հանդէպ, Ղուրու-չայ գետակի աջ կողմի բարձրութեան վերայ։ Շինուած է համակ սրբատաշ տորոնագոյն քարով (որի հանքն շատ հեռի չէ վանքիցս) խաչաձև, քառակուսի, չորս կամարներով, որոց վերայ բարձրացած է գեղեցկաձև կաթուղիկէն, որի վերայ բուսած է մի ճապկի և մի խնձորի ծառ։ Վանքս ունի մի աւագ, չորս փոքր խորան, տասներեք լուսամուտ, մի դուռն, 10 մետր երկարութիւն և 7 մետր 50 սանթիմ լայնութիւն։ 1868-ի մեծ շարժով արտաքուստ թափուած է տաճարիս արևելեան հարաւային անկիւնի քարերն։

Վանքիս *հիւսիսային որմի վերայ* փորագրուած է.

«Յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ես Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսք հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ. (1241) թվիս. շատ աշխատութեամբ աւագ խորանն խփեցաւ և եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ։ Ես տէր Վրդանէս կատարեցի բազում աշխատութեամբ և հալալ արդեամբք իմովք ՈՂԵ. թվիս ի դաւն և ի նեղ ժամանակիս՝ որ ազգն նետողաց զբազում գաւառս աւերեաց և մնաց այլասեռից աթոռ և վիճակ սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատեալ աջով և սուրբ նշանաւն և գաւազանաւն սրբով. վիճակեցաւ և սահմանով ի յԱղուանոյ գետոյ մինչ ի Երասխն, մինչ ի Աւազն Գատուհատի, Վակունիս Վաղաղնապետով, ի Քարատնիս և Խոզանապետովն, Զաւիստ իւր գետովն. Հաքարի Հազարապետովն, Քրտագետ իւր գետովն, իւր սահմանովն, Դիզակ, Բէլուկան իւր գետովն և հայրենիքն եկեղեցւոյս տուինք, Փարախն և Գատանոցն, Եկեղեցաձորն իւր սահմանովն. Ա. լուծ հող ի Տայիս. Ա. լուծ ի Դող ի Գաղս, Ա. ի Մոխրենիս. ով որ այս սահմանէս յետ առնէ կաթուղիկոս կամ իշխան կամ հայրապետ, երէք սուրբ ժողովոյն նզոված եղիցի, յԱստուծոյ և յամենայն սրբոց անիծեալ, մասն և բաժին ընդ Յուդայի առցէ»։

Ներքուստ հարաւային փոքր խորանի ճակատին.

«Ի թվին ՈՂԵ. ես Տէր Վրդանէս չինեցի զեկեղեցիս և զցրուեալ վիճակս, հաստատեցի և զհայրենիքս և արձանի գրեցի հանապազ ուրբաթն անչիշատակաց ժամն, և տարւոջն Ծ, ժամ ինձ և Ծ. ժամ Տէր Սարգսի։ Յինանցն Ա. ժամ Ուխտանէս եղբարն իմ, Ա. ժամ Մովսիսի իմ քվեր որդու, որ խափանէ մեր մեղացն տէր է առ Աստուած»։

Հիւսիսային փոքր խորանի ճակատին. «Ես Ջերգամ և որդի իմ Ղարաք միաբանեցաք սուրբ ուխտիս տէր Վրդանէս իւր կամաւ զժամատունն ինձ երետ և ես իմ հալալ արդիւնն ընծա բերի Սուրբ աստուծոյս (աստուծոյս)»։

Վանքս ունի և հնաշէն գաւիթ, որի գոյութիւնն խիստ հին է քան վանքինն։ Գաւթումս, որ կառուցեալ է մի կամարի վերայ, կայ երկու խաչարձան կանգնեցրած տաճարի դրան աջ ու ձախ կողմերում։

Հարաւային կողմի գեղեցկաքանդակ խաչի վերայ

«Թվին ՈՂԵ. Ես տէր Վրդանէս կանգնեցի զխաչս ի փըրկութիւն հոգւոյ իմոյ»։

Հիւսիսային կողմի խաչարձանի վերայ

«Յիշատակ է Սուրբ տաճարիս կաթուղիկէն Դողեցի Սարգսի որդի Սայուն և իւր կողակից Հերիքնազին թվին ՌՃԿԶ.»։

Գաւթումս ամփոփուած են մի քանի եպիսկոպոսների և վարդապետների մարմիններ, որոց վերայ կան տապանաքարեր։ Գաւթիս արևելեան հիւսիսային կողմին կից է մի աւելի հին եկեղեցի, որի դրան առաջ մի տապանաքարի վերայ փորագրուած է.

«Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոբ վարդապետին թվին ՌՃՀԲ.։ Լուսահոգի Մէլիք Եկանն ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց Կոտիչոյ վանքին առաջնորդ։ Որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂԶ. ով որ կարդայ, մէկ բերան ողորմի ասէ»։

Վանքս ունի մի քանի հնոտի սենեակներ և մի աշխարհական պահապան։ Հետզհետէ քայքայուում է պատուական վանքս. գրեթէ ամբողջապէս յափշտակուած են վանքիս հողերն....։

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

ՋԱԼԱԼԵԱՆ ՎԵԼԻՋԱՆ-ԻՇԽԱՆԻ ԲԵՐԴՆ կամ ՅՕՐԱԲԵՐԴ (10)

Մի բարձրագոյն սար է բերդատեղին (5019 ոտք), որ առանձնացած է ամեն կողմերից, երկարած արևմուտքից դէպի արևելք և արձանացած Վանք, Տագ, Յոր և այլ գիւղօրէից մէջ։ Բարձր քերծեր են բերդիս հարաւային կողմերն, իսկ ամուր պատերով պարսպուած մնացեալ կողմերն։ Մակերևոյթի մեծ մասն հարթ է, տեսարանն ղմայլելի և օդն դեղազանց։ Երկու դռներ ունեցած է, մին արևելեան և միւսն արևմտեան կողմից։ Բայց այժմ տեղ տեղ քանդուած և թափուած են պարսպի պատերն և դռներից անգամ։ Պարսպի

հաստութեան չափն է մօտ 2 մետր. որ հիւսուած է անտաշ քարով և կրացեխով։ Ջուր չկայ բերդումս, բայց ուրեք ուրեք երևում են անձրևի քանդած տեղերում մեծ մեծ և հաստ հաստ խեցեղէն խողովակներ. այս երևոյթն նշան է, որ ջուր բերուած է բերդս Շաղախ գիւղի և ուխտատեղու մօտից։ Հետզհետէ գտնում են բերդիցս մեծ-մեծ կարասներ, անօթներ և ուրիշ գործիքներ, և քարուկիր շինուած հորեր։

ՎՆԷՍԱՅ ՂԱԼԱ (ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԲԵՐԴ). (11)

Հիմնուած է Հիւքիւրաթաղից վերև եղած մի բոլորշի բարձրացած սարի գագաթին վերայ [1]) (500 ոտք) Անդնդախոր ձորեր են ամրոցիս արևմտեան, հիւսիսային, արևելեան և հարաւային կողմերն. միայն մի սեռով կցուած է հոմանուն Վանէսայ սարին։ Ամրոցս ունի քարուկիր շրջապարիսպ, որ բոլորուած է գագաթի դիրքի ձևով, երկու բարձր և ամուր բուրգ և մի դուռն։ Բայց տեղ տեղ քանդուած են պատերն և դուռնն, կանգուն մնում են միայն բուրգերն։ Պարսպի ամենաբարձր մասն երկու աշտարակների կողմն է։ Հարթ և հաւասար է ամրոցիս մակերևոյթն, որ համարեա թէ հարիւր քառակուսի մետր է և ունի ուշագրաւ տեսարան և վեհ դիրք։ Ամրոցիս յատակն լի է բնակարանների քարուկիր բակերով. իսկ վերնամասում շինուած է իբրև միջնաբերդ մի փոքրիկ դղեակ, որի մէջ է քարուկիր շինուած մի ընդարձակ ջրաւազան, որի մէջ տակաւին կայ ջուր, բայց անմաքուր։ Աւանդաբար ասում են, որ սորա ջուրն խողովակներով բերուած է եղել բերդիս հարաւային կողմում եղած աղբիւրների ջրերից, որք կան ճանապարհի վերայ։

ԴՈՂ ԲԵՐԴ (4892 բարձ.) (12).

Բերդասարս, որ բոլորովին առանձնացած է իւր շրջապատից, հսկայաբար արձանացած է Թաղլար, Դող, Մոխրե-

[1]) Բերդասարս հիւղաւորուած է Դիզափայտ լեռնաշղթայից և ձգուած հարաւային արևմուտքից դէպի հիւսիս արևելք և վերջացած դաշտաբերանում։ Բերդս կոչուում է և Աւան-Իւզբաշու բերդ։

նիս և Տումի գիւղօրէից մէջ։ Վիմահերձ, ապառաժ և բարձր քերծեր են բերդիս հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմերն, իսկ անտառապատ և քարակոյտ արևելեան կողմն։ Գագաթի բաց տեղն պարսպուած է վերևից վիմահերձից վիմահերձ, իսկ վարից փորուած է ահագին խրամ. վերջապէս ունի խիստ նշանաւոր, բայց անբացատրելի ամրութիւն։ Գագաթի վերայ եղած է հարիւրքառասնի չափ բնակարան, որոց պատերն այժմ դեռ մնում են կիսաւեր։

Բնակարաններիս վերի կողմում արևմտեան վիմահերձի գլխին է անտաշ քարով շինուած եկեղեցին, որ քարուկիր է և ամբողջապէս կանգուն, սակայն բաւականին հնաշէն։ Եկեղեցիս ունի երկու դուռն արևմտեան և հարաւային կողմերից, երկու լուսամուտ արևմտեան և արևելեան կողմերից և 9 մետր 3 սանթիմ երկարութիւն և 6 մետր լայնութիւն։ Մի փոքր տեղ վնասուած է հիւսիսային կողմից։ Տաճարումս կան սպիտակ շերտաքարից շինուած հինգ քարեայ փոքր խաչեր, որոց վերայ քանդակուած է. «Խաչս Նաղաղին». «Խաչս Մրհապետին». «Խաչս Շահումին». «Խաչս Ղազարայ». «Խաչս Եղուայ»։

Արտաքուստ հարաւային դրան արևելեան սեմի վերայ քանդակուած է Սուրբ Աստուածածնայ պատկերն, որ գրկած է մանկացեալ Յիսուս Քրիստոսը և մի աղերսարկու վեղարաւոր վարդապետի պատկերն, իսկ արևմտեան սեմի վերայ՝ երկու աղօթաւոր վարդապետի պատկերներն և մի խաչ։ Ափսոս, որ թուական չունի եկեղեցիս. սակայն բաւական հին են թէ տաճարիս շինուածքն և թէ խաչերի ձևերն և տառերն։

Եկեղեցուս [1]) արևելեան կողմում մի քանի քայլ հեռի կայ մի վարդապետի գերեզման, որի տապանաքարի վերայ փորուած է *երկգլխի*, օձաձև գաւազան և մի ձեռաց թաթ. որ բռնած է գաւազանը, և այս արձանագրութիւնն, «Թվին ՉՋ. (1257) այս է տապան Մովսէս վարդապետին.....»։

[1]) Սպիտակ են եկեղեցուս քարերն և բոլորովին նման Յակովկայ տաճարի քարին, երևի թէ քարերս բերուած են Կաւաքայ սարի հանքից։

Օրն տարաժամեայ լինելու պատճառաւ հազիւ կարողացանք կարդալ այսչափ, մնացեալը չ'ժամանեցինք ընթեռնուլ։

Դիտելիք. Եկեղեցուս հարաւային կողմում կայ չորս կալչափ մեծութեամբ մի լճակ, որ միշտ լի է անձրևաջրով և ձիւնաջրով։ Թուի թէ պատերազմների ժամանակ պաշարեալներն կառավարուած են ջրով։

ԴԻԶԱՓԱՅՏԻ ԲԵՐԴ (5994)

Բերդասարս իբրև լեռնաբազուկ Դիզափայտի արևմտեան կողմից կախուած է Տումի գիւղի վերայ և առանձնացած ամեն կողմերից։ Պարսպուած է սարիս հարաւային և արևելեան կողմերն և կասկածաւոր նեղուցներն ու կիրճերն, ուր եղած են։ Մուտքն արևմտեան կողմից է և պարիսպն չունի բուրգեր։ Պարսպիս ներսում կան բնակութեանց բակեր, թէ և հարթ չէ բերդիս անտառապատ մակերևոյթն։ Ջուր չկայ և այս ամրոցում, վասն որոյ շինուած են յատկապէս հարաւային կողմում հորեր և ամաններով ջուր բերած բերդիս արևմտեան ստորոտում եղած Թաղալ անուն պատուական աղբիւրից։ Հարկ է յայտնել որ բերդս չունի Դողայ բերդի բոլորովին ապահով ամրութիւնը։ Ամրոցիս շատ հեռի չէ Դիզափայտի հին վանքի տեղն, ուր շինած են այժմ մի մատուռ (13)։ Ամրոցիս հիւսիսային կողմում քերծի գլխին՝ ծառերի տակ կայ մի աւերակ մատուռ *Օխտը-դռնէ-խուճ* անուն, որ տարբեր է և այլ նախորդ յիշուածից։

ԺԲ. ՎԱՐԱՆԴԱՅ ԳԱՒԱՌ.

Գաւառիս սահմաններն են Ղուրու-չայ և Գարգար գետակներն, դաշտաբերանն, Քիրս և Դիզափայտ լեռնաշղթաների գագաթնագիծն։ Ինչպէս Դիզակ, նոյնպէս և Վարանդայ գաւառիս ջուրն պակաս է. սակայն հարուստ է հացով և հայ բնակիչներով։

Ա. ԹՈՂԼՈՒՐ ԱԻԱՆ. Հիմնուած է այն սարի հարաւահայեաց լանջի վերայ, որ իբր լեռնաբազուկ սկսուած է Փոքր-Քիրս սարից և երկարած մինչև Դրախտիկ։ Բնակիչք տեղա-

փոխուած են այստեղ Հին-Թաղլարից, հողն արքունի, լեռնային, ամենամեծ մասամբ աւազուտ, խիստ սակաւ և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, գարնանի, հաճար, գարնագարի, սորեկ, կտաւհատ, բողկ, գազար, սոխ, սխտոր, լուբիա, բակլա, խաշխաշ, թուրթ, տանձ, խնձոր, գինձ (համեմ), կուտեմ, անանուխ, թարխուն, սուսամբար, և այլն: Օդն, կլիման և ջուրն պատուական, տեսարանն գեղեցիկ, երկար կեանք 100. եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր, թաղակապ երկու կամարների վերայ առանց միջնասիւնների. երկարութիւնն 19 մետր. 45 սանթիմ: Եկեղեցիս շինուած է աւանիս հասարակութեան ծախքով. երկու նոր լուսամուտներ բացուած են հարաւային կողմից: «Այս է լուսամուտներս յիշատակ է որդոյ Շահնազար Պասալեանցին 1892»: Քահանայ չորս: Ծուխ 450. արակ. 1400, իգ. 1070:

Եկեղեցումս կայ մի ձեռագիր աւետարան միջակ գիրքով, գրուած մագաղաթի վերայ, պատկերազարդ, բայց անճաշակ և անարուեստ: Յիշատակարանից:

«Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Որոտեան ի գիւղս, որ կոչի Լոր, ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ զորավարի ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի և փոխանորդ սուրբ լուսաւորչին Հայոց տեառն Յակովբ սրբազան Կաթուղիկոսի, և մերոյ Ստեփէի սուրբ աթոռոյս Յովհաննէս քաջ բարունապետի և Նետողաց Տաճկաց Շահ Սէլիմանի ի թուաբերութեանս Հայոց ՌՃԻԲ. ամի: Գրեցաւ Աստուածախօս սուրբ տառս սուտանուն Արիստակէս սարկաւագի...: Արդ ստացող սուրբ աւետարանիս... բարեմիտ քահանայն տէր Վրդանէս, որ է սա երկրէն Կաքաւաբերդու ի գեղջէն Մահրաւու...»: Յետոյ գրուած է. «Յիշեսջիք վերստին ստացող... աւետարանս Թաղլարեցի Պաղունց Պօղոսի որդի.. պարոն Աբրահամն. տեսեալ այլազգաց ձեռն, հալալ արդեանց իւրոց ետ և էառ և ետ ի դուռն Տեղու (մեծ-գիւղ Մեծ-Սիւնիքում) սուրբ Գէորգ եկեղեցուն իւր և ծնողաց...»: Հուսկ յետոյ գրած է վերջին ստացող և եկեղեցուս նուիրողն. «Յիշատակ է զսուրբ

աւետարանս և ետու սրբոյն Ամենափրկչի եկեղեցւոյն՝ ծնողացն իմոց Պօղոսին Բաղդասարեան Թաղլարեցի, և մօրն իմոյ Խաթունին, Աբրահամ Պօղոսեան»:

Սուրբ Սահակեան տղայոց միդասեան ուսումնարան. ուր կայ 50 աշակերտ. թոշակաւոր 38, ձրիավարժ՝ 15, տարեկան ռոճիկ վարժապետաց 315 րուբլի:

Մար-Խաթուն (Մայր-Խաթուն) 4199 ոտք բարձ.

Հին գիւղատեղի, հանգստարան և մատուռ, որք գտնուում են Շեխեր գիւղի հարաւային կողմի բարձրութեան վերայ: Մատրանս շինութեան թուականն է. «Թվ. ՌԾԲ.»:

Ծծախաչ (Շմանէք).

Երկու ահագին քարայրներ են, որք կան Թաղլարից վար, Ղուրու-չայի ձախ եղերքին մօտ Ծծախաչ անուն: Վարի քարայրից կաթկաթում է ջուր:

Հշխանի գիւղատեղի (Ըշխնեցէք).

Գտնուում է Թաղլարի հարաւային հանդէսի, նոյն Ղուրու չայ գետակի աջ կողմի լանջի վերայ, ուր կայ նաև հանգստարան:

Ոզակուց կամ Հայկազն գիւղատեղի.

Այս անուն աւերակ գիւղ, հանգստարան և մատուռ կայ բուն Ղուրու չայ գետակի (միջի վտակի) ձախ կողմի լանջի վերայ, Տումի գիւղի արևմտեան կողմում: Սակայն այժմ այս տեղն պատկանում է Տումու հողերին:

Հանգած-եղեգէ (եկեղեցի).

Թաղլարի արևմտեան կողմում ոչ այնքան հեռի կայ գիւղատեղի, հանգստարան և աւերակ եկեղեցի:

Բ. ԱՋՈՒ գիւղ. Հիմնուած է նոյն սարի հարաւ-արևելեան ստորոտում, մի ձորի հովտում. բնակիչք ամենամեծ մասամբ գաղթած են Ղարադաղից, իսկ մնացեալք բնիկ. հողն բէկական, սակաւ, բայց միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն, օդն և կլիման ամրան տօթագին, ջուրն պատուական, երկար կեանք 75—80. եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ, եր-

կարուքիւնն 14 մետր 70 սանթիմ. լայնուքիւնն 8 մետր 17 սանթիմ, քահանայ մի։ Եկեղեցւոմս կայ մի ձեռագիր աւետարան միջակ դիրքով, առանց պատկերի, գրուած մանր գրերով թղթի վերայ, ոչ այնքան գեղեցիկ. չունի յիշատակարան, միայն յայտնի է որ գրած է Սարգիս անուն ծերացեալ ոմն քահանայ։ Ծուխ 140. ար. 427. իգ. 380։

ՈՐՎԱՆ ՔԱՐԱՅՐ

Գիւղիս արևելեան կողմում, ձորակի ձախ կողմի բարձրութեան վերայ կայ մի խիստ խոր, խաւարամած և միանգամայն ահարկու քարայր, որի մէջ կայ մի կնոջ արձան, որ գրկած է մի մանուկ։ Արձանս կոփուած է քարից, կնոջ զգեստի տարազն և գլխի շինուքեան ձևն ներկայացնում են Արցախի կանանց հագուստների և փաթաթոցներով շինած գլուխների տիպը։ Երկիւղալի է առանց գէնքի և լուսի միայնակ ներս մտնելն. հարկ է զգուշանալ։

Գ. ՆՈՐ-ԴՐԱԽՏԻԿ գիւղ [1]). Հիմնուած է նոյն սարի ծայրում. մի արևելահայեաց լանջի վերայ, դիրքն վեհապանծ, տեսարանն զմայլելի. բնակիչք բնիկ. տեղական բերքերն նոյն, հողն բէկական, անջրդի և կարի սակաւ արդիւնաւէտ. գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 60—65 տարի [2]). եկեղեցին սուրբ Գրիգոր Նարեկացի. քարուկիր, շինուած ՌԳ. թուին Հայոց մի բարձրահայեաց բլրի վերայ, որի հարթակն լի է ծերունի ծառերով և հանգիստներով. քահանայ մի։ Ծուխ 47, ար. 136, իգ. 116։

Կախան. Հին-Դրախտիկից հիւսիս մի բարձր բլրի գագաթին վերայ կայ մի ուխտատեղի *Կախան* անուն։ Երևում է որ աւերակ է այս մի հին, փոքր վանուց, որ զարդարուած

[1]) Հին-Դրախտիկն իւր քարուկիր եկեղեցիով ճեռում է նորից վար՝ կալերի մէջ։

[2]) Զարմանալու է ընթերցողն օդի. կլիմայի և ջրի գերազանց լինելը համեմատելով բնակչաց կեանքի կարճութեան հետ, պատճառն այն է, որ սոցա հունձն և կալերն ընկած են Պիան գաւառի դաշտի վերայ ամրան ամենաթեզ միջոցին գործում են դաշտումն։

է զառամեալ ծառոց փառաւոր հովանիներով, որոց՝ ոչ ոք չէ համարձակում կացին զարկել։

Դ. ՇԵԽԵՐ շէն. Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմում, դիրքն հիւսիսահայեաց. բնակիչք տեղափոխուած են Թաղլարից և Աւետարանոց աւանից, հողն բէկական և արդիւնաւոր, տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80. եկեղեցին սուրբ Վարդան, քարուկիր և փոքր. քահանան գալիս է Նոր-Դրախտիկից։

Ծուխ 65 (բէկեր են 42 ծուխն), ար. 240, իգ. 114։

Ե. ՆԵՐՔԻՆ-ԹԱՂԱՎԱՐԴ. Հիմնուած նոյն սարի հիւսիսային կողմում, Քեօնդալան գետակի աջ կողմի բարձրութեան վերայ, գիւղի դիրքն արևելահայեաց լանջ. բնակիչք բնիկ. հողն բէկական, անջրդի, բարեբեր, տեղական բերքերն նոյն (կայ այգի և թթենի), օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Աստուածածին, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն 17 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 9 մետր։ Դրան ճակատակալ քարի վերայ. «Շինեցաւ եկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածածնին արդեամբ և ծախիւք աղնիւ Բէրամ աղայի որդւոյ պօղոսովնիկ Մէլիք Ջիւմշիտեան Շահնազարեանց ի յիշատակ կենդանեաց և համայն նննջեցելոց իւրեանց ի Քրիստոս 1840 թվ. ՌՄԾԷ. [1])» Քահանայ երեք։ Ծուխ 170. ար. 590. իգ. 550։

Այստեղ կայ Սուրբ Մեսրոպեան տղայոց միգասեան ուսումնարան. աշակերտ 40, թոշակատու 33, ձրիավարժ 7. ուսուցչաց միամեայ ռոճիկ 300 բուբ.։

Հին-Ներքին-Թաղավարդ, որ նորից $^1/_7$ մղոն ներքև է։ Վնասուած եկեղեցին, որ կառուցեալ է երեք կամարների վերայ. դրան գլխին մի քարի վերայ. «Ես անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին առաջնորդութիւն Տաւուքին որդին, Նոր Պասպասին Ամիրպեկին, այնպէս սէրուն էր, որ պիշերն քուն չկէ»։

[1]) Սխալ է ՌՄԾԷ. թիւն, քանզի Փրկչական 1840 թուականն հաւասար է Հայոց ՌՄՁԹ.—ին։

Բրդահոնջին (Բերդաունջին) եղցին

Քեօնդալանի աջ կողմում, Եեխեր տանող ճանապարհի գլխին բարձր սարահարթի վերայ կայ մի հին եկեղեցի, որի դուռն աւերուած է և շինութիւնն տեղ տեղ խախտուած: Հիւսիսային որմի մէջ խաչքարի վերայ. «Խաչս Տահումին»: Եկեղեցուս արևմտեան կողմում, քարընկէց հեռաւորութեան վերայ կայ քարուկիր հին շինութիւն, որ նման է սենեակների: Մեզ թուում է թէ վանք եղած է այս. քանզի եթէ եկեղեցի եղած լինէր, անշուշտ կունենար գիւղատեղու աւերակ և հանգստարան. բայց չունի ո՛չ այս և ո՛չ այն:

Զ. ՎԵՐԻՆ-ԹԱՂԱՎԱՐԴ. Հիմնուած է միևնոյն սարի հիւսիսային կողմում, նոյն ուղղութեամբ փոքր ինչ հեռի դէպի արևմուտք. գիւղի դիրքն արևելահայեաց. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Խնձորեսկ, Տեղ և Տաթև գիւղերից. հողն բէկական, անջրդի, պակաս, սակայն հացատու, նշանաւոր է ցորենն և գարին, պատուական օդն, կլիման և ջուրն և դուրալի տեսարանն. երկար կեանք 105. եկեղեցին նորաշէն ժողովրդեան ծախքով, քարուկիր և տակաւին առանց օծուելու, երկարութիւնն 18 մետր 35 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 65 սանթիմ, քահանայ մի: Ծուխ 137. ար. 497. իգ, 398:

ՋՈՒՏ-ՊՈՒՐԻԱԾԱՌ (Զույգ սպառաւածառ).

Գիւղիս հարաւային կողմում, միևնոյն լեռնաբազկի վերայ (որ ձգուած է Փոքր-Ֆիրս [1] սարից մինչև Դրախտիկ) բարձրացած է ձուաձև մի բլրակ, որի վերայ վաղ ժամանակից շինուած է մի վանք անտաշ քարով: Շինութիւնս ունի նեղ և երկար ձև, որ կիսաւեր է արդէն, քանզի բաղկացած է վանքից և գաւթից: Փոքր վանքիս խորանի մէջ մի խաչ քարի վերայ. Սուրբ Յովհաննէս. Սուրբ Ովհաննէս.....»: Այլ քարի վերայ. «Յիսուս Քրիստոս Աստուած. Ուսէփ էրեց»: Այլ քարի վերայ ևս. «Հոգևոր հարք և եղբարք. զՍողոմոն երայց

[1]) Մեծ-Ֆիրան ունի 7340 ոտ. Փոքր-Ֆիրան՝ 4009:

(երէց). կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք, աղաչեմ ամէն»: Կրկին այլ խաչքարի վերայ. «Յիսուս Քրիստոս, Հայոց Թվ. ՈՀԷ. ես Ալի որդի Զենովբին եկի 'ի Պարսից, շինեցի զսուրբ եկեղեցիս Աստուծոյ, փրկութիւն հոգոյ իմոյ, որք երկրպագէք, զիս յաղաւթս յիշեսջիք և Աստուած զձեզ յիշեսցէ»: Այլ ջարդուած քարի վերայ խոնչալի մի երեսին. «Սուրբ Պաւղոս. յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին և պետութեան տեառն Գաղիկա [1]) Աղուանից իշխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւրորդի Կոկոնա»: Խոնչալի միւս կէս երեսին վերայ. «Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս 'ի փրկութիւն հոգւոց իմոց: Արդ որք երկրպագէք սուրբ նշանիս, զիս յաղաւթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ. ՆՒԶ. էր»: Բայց թէ քնչ եկած վանքիս անունն՝ Ս. Յովհաննէս, Պօղոս Պետրոս՝ չգիտենք:

Հարկ է յայտնել, որ բարեպաշտ գիւղական ոմն դուրս թափած է աւերակիս փլուածքը և մաքրած գաւիթը և փոքր տաճարի յատակը, որպէս զի նորոգէ ի հիմանէ: Ուխտատեղի է աւերակս, որն ժամանակաւ ունեցած է և շրջապարիսպ, որի հետքերն երևում են ակներև: Այժմ գրեթէ բլուրս ծածկուած է մեծ մեծ ծառերով: Բլրիս բարձր. մօտ 3600 ոտք:

Ջոխտակ եղցի

Միմեանց կից շինուած են երկու եկեղեցիներ, որք նոյնպէս կիսաւեր են: Հազիւ թէ քարընկէց հեռի են երկու աւերակ եկեղեցիներս վանքի աւերակիցն: Մենք կարծում ենք թէ այս երկու կիսաւեր շինութիւններն ևս վանք եղած լինին. քանզի ո՛չ մօտ գիւղատեղի կայ և ո՛չ հանգստարան:

Գեօզ ուխտատեղի

Մի մատրան աւերակ է, որ գտնուում է Վերի և Ներքի Թաղավարդների միջև: Մատրանս շուրջն հանգստարան է: Ուխտի օրն է ամեն Համբարձման տօնն:

Է. ՄՈՇ-ԽՄՀԱՏ գիւղ. Հիմնուած է Վերին-Թաղավարդի արևմտեան կողմում մի խոր ձորի աջ լանջի վերայ, որի հիւ-

[1]) Գաղիկ իշխանաց իշխանս է. երևի թէ, որ թագաւոր է անուանում սորա թոռն Ոսկին գուսարն Աբու-Մուսէի, որպէս տեսանք կարմիր-եկեղեցու արձանագրութեանց մէջ:

սիսալին կողմի ձորով հոսում է Քեօնդալանի օժանդակն։ Բնակիչք բնիկ. հողն բէկական և միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն նոյն (չկայ այգի և թթենի) պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանան գալիս է Ղևոնդեանց անապատից։ Ծուխ 50, ար. 155, իգ. 120։

ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԱՆԱՊԱՏ (3220 ոտք).

Հիմնուած է մի բարձր սարի գագաթին վերայ, որ ձուաձև արձանացած է Աւետարանոց աւանի, Սարգսաշէնի, Վերին-Թաղավարդի և Մոշ-Իմհատի կեդրոնում։ Փոքր մատուռ է անապատս՝ կառուցեալ անտաշ քարով յանուն Ղևոնդեանց առանց կամարի։ Արևմտեան կողմին կից է մի գաւիթ, նոյնպէս նեղ դիրքով, որպիսին էր Ջոխտ-Պռըւածառի աւերակ անապատն։ Գաւիթ և անապատ միասին չափելով երկարութիւն 13 մետր 40 սանթիմ, լայնութիւն 5 մետր 10 սանթիմ։ Անապատիս դրան հիւսիսային սեմին վերայ. «Թվ. ՌԼՃ.» (թիւ Փրկչ.)։ Գաւթի դրան նոյն կողմի սեմի վերայ.

«ՌՄԻԷ.-ին, յիշատակ է գաւիթս. Զաքարիա, Յովսէփ և Մելքոն վարդապետացն»։

Անապատումս կան հետևեալ մասունքներն.

1) *Մասն Թադէոսի առաքելոյն* մի արծաթեայ փոքրիկ և տափակ խաչում, որ ունի սոյն արձանագրութիւնը. «Յիշատակ է. մասունքս է Թադէոս առաքել, որ եղ Մուսաէլ»։

2) *Մասն Յովհաննու Մկրտչի* գետեղուած մի արծաթեայ փոքր խաչում, որի վերայ քանդակուած է. «Յիշատակ է սուրբ խաչս, մասունք Յովհաննու Կարապետին, Զախմախսաղ—Պետրոսի որդի Աղըմանին և իւր կողակից Անուն ՌՄԿԶ.»։

3) Մի արծաթեայ մեծ խաչում. «Սուրբ *Յովհաննէս Մկրտչի* մասունքն է այս»։

4) Մի արծաթեայ միջակ խաչ.

«Սուրբ *Նշանս* յիշատակ է սուրբ Ղևոնդիա անապատին Յարութիւն հապեղին (արեղային) թվ. ՌՄԼԹ.»։

5) *Մասունք Ղևոնդեանց* մի արծաթ միջակ խաչում. «ընծայեցաւ սուրբ խաչս Ղևոնդեայ հայրապետին Մարքարիտ Մէլիք Ջիմշիւտեանց 1876 ամի»։

Արտաքուստ վանուցս հարաւային կողմում ամփոփուած են մի քանի վարդապետաց մարմիններն, որոց մէջ է և հետևեալն.

«Աստանօր հանգչի մարմին Յակովբայ սուրբ վարդապետի որդւոյ Թովմասայ Աւան Լալաեան յազգէն Իւղբազեանց յաւետարանոց գեղջէն, Վարանդայ սրբակրօն ճգնաւորական արար իւր կենաց զբարւոք վախճան 33 ամաց 1845 Նոյեմ. 25-ին»։

Պարսպուած է անապատիս շուրջն, արևմտեան և հարաւային կողմում, պարսպի ներսում շինուած են մի քանի սենեակներ, որք կիսաւեր են այժմ մեծ մասամբ։ Անապատս ունի վարելահող, անտառ, պարտէզ, ընկուզ, տանձ, խնձոր, շագանակ, գկեռ և սալոր։ Ապաստան է մի քահանայի։

Ը. ՍԱՐԳՍԱՇԷՆ ԳԻՒՂ. Հիմնարկուած է Քեօնդալան գետակի աջ կողմում. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, բայց բազմարդիւն. տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 80, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, սակայն անշուք. քահանայ մի։ Ծուխ 90, ար. 325, իգ. 254։

Թ. ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒՂ. Հիմնուած է Քեօնդալան գետակի ձորի ձախ կողմում, Սև աղբիւր (Ղարա-բուլաղ) յորդառատ աղբիւրի մօտ. բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն (գոյ թթենի), օդն, կլիման ծանր ամբան, ջուրն ոչ գովելի. երկար կեանք 85—80. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, բայց վտանգուած. քահանայ երկու։ Ծուխ 35. ար. 162. իգ. 135.

ՂԱՐԱԼԻ ԱՒԵՐԱԿ

Այստեղ կայ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցու աւերակ։

Ժ. ԱԼԱՄԱՆՑ ԳՈՄԵՐ. Շինուած է նոյն ջրաձորի վե-

բայ. բնակիչք բնիկ, հողն բէկական և բարեբեր. նոյն տեղական բերքերն, օդն, կլիման և այլն. եկեղեցին է Ղևոնդեանց անապատն և քահանան նորա վանահայր քահանան: Գիւղումս ծննուած է բանաստեղծ Պետրոս Մատաթեանցն, *վասնորոյ կոչուում է և Մատաթ-քեանդ:* Ծուխ 35. ար. 115. իգ. 92:

ԺԱ. ՋԱՂԱՑՆԵՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Աւետարանոցից փոքր ինչ վար. բնակիչք հատուած Աւետարանոց աւանից. հողն արքունի, տեղական բերքերն նոյն (կայ և այգի), սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, նորաշէն, քարուկիր. քահանան գալիս է Աւետարանոցից: Ծուխ 65. ար. 248. իգ. 181:

ԺԲ. ԱԻԵՏԱՐԱՆՈՑ ԱԻԱՆ. Հիմնուած է միևնոյն Քեօնդալան ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ, դիրքն արևելահայեաց. բնակիչք բնիկ, հողն մէլիքական [1]), բայց այժմ արքունի, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ կառուցեալ չորս սիւների վերայ. ունի մի փոքր կաթուղիկէ. երկարութիւն 27 մետր 35 սանթիմ, լայնութիւն 15 մետր 30 սանթիմ: Դրան ճակատակալ քարի վերայ. «Թվ. ՌՃ.»: Ֆահանայ երկու: Ծուխ 257, ար. 936, իգ. 804:

Եկեղեցումս կան հետևեալ *զրչագիրներն և մասունքներն:*

Ա. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, պատկերազարդ, որ գրուած է Աւետարանոց աւանումս ՌՃԻ. թուին, բայց անյայտ է գրողի անունն:

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, գեղեցիկ. նըրբաճաշակ են չորս աւետարանչաց պատկերներն, նախշերն, ծաղիկներն և թռչնագրերն: Յիշատակարանից. «աւարտեցաւ... աւետարանս ձեռամբ բազմամեղ Գրիգոր անուամբ երիցու ի թուականութեանս Հայոց ռճնը. երորդի ի մարտ ամսոյ ի.....

[1]) 25 ծուխ մելիքգաղուն բէկեր կան, որոց հողերն սեփականութիւն է պապենական: իսկ բնակչաց մեծ մասն տեղափոխուած է Սոթից և Մազրայից:

և ծալվեցի երբն երբն դունովք և ոսկեզօծ որակօք..... եղև աւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գանձայ ի գիւղս, որ կոչի Քարահատ ընդ հովանեաւ սուրբ աստուածածնիս ի ժամանակս Շահ Աբասին փոքոյ և ի կաթուղիկոսութեան հայոցս Աղուանից տեառն տէր Պետրոսի մաքրասուն և սուրբ հայրապետի և կրկին լուսաւորչի, որ և խնամօքն Աստուծոյ..... լուսաւորեաց զիսաւարեալ տունս Աղուանից և պայծառացոյց զեկեղեցիս կարգօք.... և մերում եպիսկոպոսութեան բազմահանճար, պատուական քաւչապետի տեառն տէր Անտոնի վերադիտողի սուրբ ամոցդն կաթուղիկէի վանից.....»:

Յետոյ գրուած է այլ գրիչ աւետարանիս սկզբումն. «Սուրբ աւետարան սրբագիր և ոսկեզօծ վաճամ և յիշատակ է Աբրահամ պարոն-Տէրին, որ տվան Մէլիք Պաղտն կուսակրօն դստերացն Հռուբսիմին և Գալաթին և Շահանդուխտին ձեռքն ի վայելումն.... գրեցաւ մատամբ տէր Եղիազարին մայիսի Իե. օրն թվ. ՌՃՁՋ. էր.....»:

1) *Մասն կենաց փայտիցն* զետեղուած մի քառաթև, արծաթ խաչումս:

2) Մասն առաջին լուսաւորչացն *Թադէոսի և Բարդուղիմէոսի:*

3) Մասն *Պանդալիոնի* բժշկին:

Մելիք-Շահնազարեանների ապարանի դրան ճակատին

«Այս ամարաթս Մէլիք-Շահնազարի (Գ-ի) որդի Սէյին բէկին, որ է այս շինութիւնս, որ շինել տուած չէնքն է թ. ՌՄԼԵ.»:

ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ.

Հիմնուած է հիւսիսից դէպի հարաւ թեքուած մի բարձրաւանդակի վերայ, որ կից է աւանիս հարաւային կողմին: Բարձրաւանդակին վերի ծայրն հասած է մինչև բերդի վերի ծայրն: Անապատս շինուած է անտաշ քարով երկու կամարի վերայ, որի երկարութիւնն է 11 մետր. և լայնութիւնն 9, (խիստ անմաքուր է): Վէմ քարի վերայ քանդակուած է. «Թվ. ՌԿԵ. ես Աբաս Հիմսզչի (՞) կանչնեցի խաչս ի հայր իմ (հայրենի) վիճակին»: Դրան ճակատակալ քարին վերայ.

«Եկեղեցիս թվ. ՌԿԵ. (շինեցաւ)»։

«Թվական ՌՃԻԵ. Շահնազարին և վարդապետին Գրիգորի, յիշատակ է դուռս կոյս Խոսրովին և ծնողացն»։

Անապատս ունի և գաւիթ, որ շինուած է նոյն ոճով, երկարութիւնն 5 մետր 75 սանթիմ, լայնութիւն 8 մետր 90 սանթիմ (Հարաւից Հիւսիս)։ Ինչպէս անապատս եղած է յատուկ կուսանաց, նոյնպէս գաւիթս եղած է յատկապէս գամբարան Մէլիք Շահնազարեանի իշխանական ցեղին։ Գաւթումս ամփոփուած են Մանուէլ վարդապետի, Մէլիք-Միրզայի, Մէլիք-Յիւսէյինի, Մէլիք-Յովսէփի և սոցա տիկնանց մարմիններն։

Ամուր պատերով պարսպուած է եղել անապատիս շուրջն՝ համեմատ տեղի դիրքին, քանզի հարաւային կողմն քերծ է։ Պարսպի ներսում եղել են շատ սենեակներ՝ միաբան կուսանաց համար։ Բայց այժմ տեղ տեղ աւերուած են պարսպի պատերն և սենեակների ամենամեծ մասն։

Աւետարանոցս իբրև մէլիքանիստ աւան և գաւառագլուխ, ունեցած է ամուր պարիսպ, որով շրջապատուած է եղել ամբողջ աւանս։ Պարսպիցն այժմ կանգուն մնում է միայն լեռնակողմինն, որ բրգաշատ է և ձգուած է կուսանաց անապատիցն մինչև սարի գլուխ, պատած հիւսիսային և արևելեան կողմերով և միացած անապատի հարաւային ժայռին. Սակայն այժմ հիւսիսային և արևելեան կողմերի պարիսպներն քանդուած են տեղ տեղ։ Պարիսպս շինող որմահիւս վարպետի գերեզմանն գտնուում է աւանիս միջում պարոն Առաստամի (մականուանեալ Ուամախան) պարտիզումն։ Տապանաքարի հարաւային երեսին. «Անուան Մէլիք Շահնազարին (Գ-ին), որ է որդի Մէլիք Սէյինի. այն ժամանակն որ Կուրջին եկաւ (Վրացի զօրք) թուին ՌՃՂԹ. էր, որ զալաս (Աւետարանոցի բերդը) շինեցի, ով որ կարդա, մէկ բերան Աստուած ողորմի ասի. ամէն»։ Միւս երեսին. «Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին թ. ՌՄԽԸ»։

ՄԷԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՆԵՐ.

Մէլիք-Բաղու ապարանն, որ մօտ է Կուսանաց անապատին, բաղկացած է երկու յարկից. գետնայարկում կայ երեք արցախական, քարուկիր տուն, որք մնում են ցարդ նոյնութեամբ։ Իսկ վերնայարկը քանդել տուած է ռազմագէտ գեներալ Առաստամ [1]) Գիւլիեան Մատաթեանցն և շինած իւր համար բնակարան. որ աւերակ է այժմ։

Մէլիք-Յիւսէյին Ա-նի ապարանն գտնուում է բերդի պարսպի լեռնային մասում-արևմտեան կողմում—որ աւերակ է այժմ։

Մէլիք-Շահնազար Բ-ի ապարանն գտնուում է աւանիս հիւսիսային կողմում պարսպի ներսում։ Այժմ նստում են բնակարանումս սոյն մէլիքի յետագաներն։

Մէլիք—ժառանգների հանգստարան.

Աւանիս հին հանգստարանից մի քանի քայլ ներքև է մնացեալ Մէլիք Շահնազարեանների հանգստարանն։

«Այս է տապան Մէլիք Շահնազարին (Գ-ին)
Որ է որդի Մէլիք Յիւսէյինին,
Աշրցախ պատառաց իշխանին
Վարանդու տիրապետողին,
Սա էր հայր Մէլիք Ջիմշիտին,
Ըստ Ռուսաց պլկովնիկին,
Աղնիւ ոմն Հայոց աղգին,
Արի և քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային
ՌՄԽ. թվին» (1792)։

«Այս է տապան Մէլիք Ջիմշիտին.....
(Եղծուած են կէտադրեալ բառերն) Սա էր
Թոռն մեծասեռին
Աղնիւ Մէլիք Յիւսէյինին (Բ-ին)
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային
Թվ. ՌՄԿԱ. աբրիլի ԻԵ.» (1712)։

[1]) Առաստամ եղած է կնեազ-Մատաթովի անուն, իսկ իւր հօր անունն՝ Գիւդի (Գրիգոր)։

«Այս է տապան Մէլիք Ջհանբախշին
Իշխող Վարանդայ գաւառին
Աղնիւ որդոյ Մէլիք Շահնազարին
Վախճանեցաւ 1822»։

«Մէլիք Խուդաթ իշխող Վարանդայ
Թոռն ըստ մարմնոյ Մէլիք Ջիւմշիւտայ
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ և յարակայ,
Ամայ քառասնից եւ սա յաշխարհէ,
Զերծ արդ գտանի յամեն չարէ.
Զայս վէմ ետ շինել առն իւրում ի ձօն,
Ի պատիւ սորա Կին սորին զգօն,
Թվ, ՌՄԶԲ. էր»։ 1833)։

«Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի.. Աւաքճանին թ. ՌՄՀԲ.»։

«Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի Մանասան բէկին թ. ՌՄԾԶ.»։

«Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յուսէյինին (Բ-ի) թ. ՌՄԾ. էր (1802)։

Հանգստարանիս Հիւսիսայինն կողման մօտ, ընկուզի ծառի տակ մի հին և խաչազարդ քարի վերայ. «Այս խաչս Թորոս այղայ թվ. ՈՋ. ար (էր)»։ Տապանաքարիս վերայ շինուած է Թորոս աղայի պատկերն, որ լարած է աղեղը և թռցնում է նետը մի եղջերուի վերայ։

Տապանաքարիցս փոքր վերև կայ մի այլ տապանաքար, որի մէջքն կլոր է և իւր աջ կողմում ունի մի թագաւորի պատկեր, խաչը ձեռին, որ հեծած է ձին և բարձրացրած խաչը, գնում է առաջ։ Բայց մի ահագին վիշապ օձ, լայն բացած իւր կզակը և ընկած է թագաւորիս ետևից։ Խաչազարդ է տապանաքարիս միւս երեսն և քանդակուած մէջքի վերայ, որ կարդացուում է խիստ դժուարութեամբ. «Ի ՈՂ. Ննճեց Հա.. թզաորի Աղվց . . . . . ես տէր Մասուն գրեցիք. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ։ Այս է հանգիստ Մուրադի

Ղաթիւնա գաջի (քաջի) Իարանդայ գավառ հմուտոյն ասպարաբետի» (սպարապետի)։ Տապանաքարիս մօտ կայ նաև մի այլ ձիու վերայ մի թագուհու պատկեր, բայց տապանաքարիս վրայ չ'կայ արձանագրութիւն։

ՃԳ. ՍՂՆԱՂ ԳԻՒՂ. *Հիմնուած է գրեթէ Աւետարանոցի արևմտեան կողմում. բնակիչք բնիկ. հողն արքունի. միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն նոյն (չիք այգի), տնվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին սուրբ Աստուածածին, քահանայ մի։ Ծուխ 55. ար. 236. իգ. 188։*

ՃԴ. ՎԵՐԻՆ-ՍԶՆԷՔ ԳԻՒՂ. (*Այն լեռնաբազուկն, որ սկսուած է Քիրս մեծ սարի արևելեան կողմից, անցած Շօշու գիւղի հարաւասրևելեան կողմից և հասած Պողոբխանայ սարն։ Ասպա սարից ճիւղաւորուած է երեք լեռնագօտի, Ա-ն ուղղակի ձգուած է մինչև Վարազաբուն գիւղն. Բ-ն դէպի Կղարճի, Ղզղալա, Աշան և այլ գիւղերն. Գ-ն դէպի Սարուշէն, Մաւաս, Սխտորաշէն և Խազազի սարն). Հիմնուած է վերջին լեռնաշղթայիս Հարաւային կողմում. բնակիչք գաղթած են Պարսկաստանից (Ղարադաղից), հողն բէկական և խիստ սակաւ, տեղական բերքերն նոյն (ոչ այգի ունին և ոչ պարտէզ). օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 85, եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Ներքին-Սզնէքից։ Ծուխ 46. ար. 175. իգ. 148։*

ՃԵ. ՆԵՐՔԻՆ-ՍԶՆԷՔ ԳԻՒՂ. *Հիմնուած է մօտ Վերին-Սզնէքին, հողն, բերքերն և այլն նոյն. եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանայ երեք։ Ծուխ 92. ար. 377. իգ. 350։*

ՃԶ. ԽԱՉՄԱՉ ԳԻՒՂ (*խաչերի մէջ եղած գիւղ, զի գիւղիս չորս կողմերում կան քարեայ խաչարձանները*). *Հիմնուած նոյն լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ. բնակչաց կէս մասն բնիկ և միւս կէս մասն գաղթած Բարկիւշադից և տեղափոխուած Հին-Քեաթուկ գիւղից (այժմ աւերակ), հողն բէկական, անջրդի, բայց հացաւէտ, տեղական բերքերն նոյն,*

օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 90. եկեղեցին սուրբ Ստեփաննոս, կառուցեալ մի կամարի վերայ առանց սիւների, որ ունի մի փոքր կամուղիկէ, երկարութիւնն 13 մետր 90 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 32 սանթիմ: Դրան արևելեան սեմին վերայ. «Ես ուստա Յուսէփ և Գէորգ (Գէորգ) Ըմմանայ եկեղեցիս շինեցի յիշատակ, ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ»: Իսկ դրան ճակատակալ քարի վերայ. «Թվին ՌՃ.»: Ձահանայ մի: Ծուխ 62. ար. 290. իգ. 220:

Գիւղիս քահանային մօտ կայ երկու գրչագիր սաղմոս.

Ա. Սաղմոս մագաղաթեայ, գեղեցկագիր, որ ունի իւր սկզբում. «Յառաջաբանութիւն Դաւթի Մարգարէին մեկնութեան՝ Աթանասի եպիսկոպոսի արարեալ»:

Բ. Սաղմոս, գրուած թղթի վերայ, պակասաւոր, այս է վերջից թափուած են թերթեր:

Գիւղիցս փոքր ինչ ներքև կայ մի հին գիւղատեղի և ընդարձակ հանգստարան:

ՇՕՇԿԱՅ ՎԱՆՔ (4669 ոտք)

Հիմնուած է նոյն լեռնագօտու գագաթնագծի վերայ, Խաչմաչ և Մամնայ գիւղերի մէջ. շինուած է մի կամարի վերայ եկեղեցու ձևով: Երևում է հիմքերից՝ որ խիստ հին եղած է վանքս. բայց ժամանակ առ ժամանակ նորոգուած է սպիտակ անտաշ քարով: Ունի միայն մի խորան, երեք լուսամուտ և մի դուռն արևմտեան կողմից և խաչագարդ բեմ, որոց մէն մին յիշատակ եղած է առանձին առանձին մարդից: Երկարութիւնն 9 մետր 18 սանթիմ, լայնութիւնն 6 մետր 25 սանթիմ:

ԾԷ. ՍԱՐՈՒՇԷՆ. Հիմնուած է նոյն սարի հարաւ արևմտահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100. տեսարանն գեղեցիկ, եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ, հնաշէն և նորոգուած քանիցս. երկարութիւնն 13 մետր 50 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 45 սանթիմ: Գաւառիս բոլոր եկեղեցեաց մէջ առաջնակարգ տեղ բռնած է եկեղեցուս ներքին և արտաքին պայծառութիւնն, զարդն ու զարդարանքն: Այս պայծառութիւնը պարտական ենք Գերապնիւ Գրիգոր աղա Այվազեանցին հոգատար խնամոցն: Ձահանայ մի: Ծուխ 70. ար. 331. իգ. 253:

Եկեղեցումս է *Սարուշէնի* հռչակուած ձեռագիր *աւետարանն*, որի մօտ ուխտի են գալիս ոչ միայն Արցախի շատ կողմերից, այլ Բագուից, Թիֆլիզից, այլ և մահմէտականք: Աւետարանս մագաղաթեայ և մեծագիր է, որ ունի *Ուստակէս*, *Վրդանէս* և *Ստեփաննոս* վարդապետների պատկերները, բայց անճաշակ նկարուած.

Առաջնոյն մօտ գրուած է. «ՁՈստակէս գրիչ յիշեսջիք, սիրելի եղբարք»: Ապա վախճանուելուց յետոյ գրուած է այլ գրողից. «որ փոխեցաւ առ Քրիստոս, որ գրեց զՄատթէոս և զՄարկոս» (աւետարանները): Երկրորդին մօտ գրուած է. «ԶՎրդանէս գրիչ՝ որ գրեցի զՂուկաս և զՅովհաննէս գվիրաւոր մեղաւք յիշեսջիք ով պատուական եղբարք, զի չիք մարդ մեղաւոր բան զիս յերկրի...»: Երրորդին մօտ գրուած է միայն իւր անունն: Անճաշակ են պատկերներն, նախշերն և ծաղիկներն. սակայն գեղեցիկ է մագաղաթն և ամբողջապէս գրուած է գլխագրերով: Սկզբում ունի յիշատակարանի նման մի գրութիւն, որն կարդացուում է խիստ դժուարութեամբ, ուր ի միջի այլոց գրուած է.

«Բայց գրեցաւ սուրբ աւետարանս ... յաբեթեանս թուականին ՈԼՍ..»: Իսկ Մատթէոսի պատկերի տեղում գրուած է փակագրի ձևով.

«Տէր Աստուած ողորմեա Յակովբայ նկարչի»: Նոյնպէս գրուած է սկզբում. «Յամի Տեառն 1827 և ի թուականիս (Հայոց) ՌՄՀԶ. սուրբ աւետարանս, որ գերի էր ընկել Պարսից տէրութիւնն, ես Ղարաբաղու Շուշի Ղալի բնակիչ Միրզայ Օհաննէսեան Զարկարեանցովս տեսի զսուրբ աւետարանս

ի ձեռս անօրէն այլազգեաց ի քաղաք Թաւրէզ, վասն որոյ դրամս ետու և գնեցի ի արդար վաստակոց իմոց և բերեալ ի աւմուրս Շուշի և յանձնեցինք այն տեղն, ուր կայր և այժմ 1833 ամի և յամսեան մայիսի 12-ին. բերաք տեղս վասն մեր ուխտադրուժեանն Նորոգելուժեամբ աւետարանս, ահա Նորոգեցինք և պայծառացուցինք ի յիշատակ մեր համայն կենդանեաց և ննջեցելոց.. Միրզայ Օհանեան»։

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Գիւղումս կայ և երկսեռ միդասեան ուսումնարան, որի երկյարկ շէնքը կառուցանել տուած է վերոյիշեալ բագուաբնակ Գերազնիւ Գրիգոր աղա Թովմասեան Այվազեանցն։ Գետնայարկն ծառայում է իբրև փայտատուն, իսկ վերնայարկն՝ ուսումնարան, որի մէջ կայ չորս սեղեակ, մի մեծ դահլիճ և մի գեղեցիկ սրահ, որի մէջ է հետևեալ արձանագրութիւնն.

«Շինեցաւ ուսումնարանս այդեամբ և յիշատակ Բագուաբնակ Գրիգոր Թօմասեան Այվազեանցին 1890 թիւ Դեկտեմբեր»։ Վերնայարկն ունի գեղեցիկ պատշգամբներ, նոր ձևի շինուած. պատուական նստարաններ և գրատախտակներ աշակերտաց և աշակերտուհեաց համար։ Ծխական ուսումնարանիս երկարութիւնն 29 մետր է, լայնութիւնն 11 մետր 48 սանթիմ։ Ուսանում են մօտ 60 աշակերտ և աշակերտուհի։

Տարեկան ռոճիկ վարժապետի . . .	500	րուբլի.
,, ,, վարժուհու . . .	400	,,
Լրագիր, գիրք, և զանազան նիւթեր .	300	,,
Միամեայ ընդհանուր ծախք . .	1200	րուբ.

Այս բոլոր ծախքերը ամեն տարի անում է միևնոյն բարերար Գրիգոր աղա Այվազեանցն։ Բացի ծախքերից Նորին Գերազնուժիւնն անում է հագուստ մի քանի որբ աշակերտաց և աշակերտուհեաց համար։ Երջանիկ է Սարուշէնն, որ ունի այսպիսի բարերար։

ԺԸ. ՄԱՒՍԻՍ ՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու գա-

գաթնագիծ սարահարթի վերայ. բնակիչք տեղափոխուած են Ջրաբերդից. հողն բէկական, աւազուտ և սակաւ արգիւնաւէտ, տեղական բերքերն նոյն, ձմրան խիստ, ամրան գերազանց օդն, կլիման, տեսարանն և ջուրն. երկար կեանք 90—100. եկեղեցին Երեք մանկունք. քարաշէն, որ կրում է սոյն արձանագրութիւնը. «Ընորհօքն Աստուծոյ ես տիկին Քալոյ Յովսէփ-բէկ Մէլիք Շահնազարեանց կառուցի զայս Երից մանկանց եկեղեցիս յարդար վաստակոց իմոց 1854 թուին»։ Քահանայ մի։ Ծուխ 34. ար. 114. իգ. 87։

ՄԱՄԱՍԷԻ ՎԱՆՔ

Այսպէս է անուանում Արցախի Հասարակութիւնն այն վանքը, որ շատ վաղուց շինուած է շենիս մօտ բարձր բլրի վերայ, որի արևելեան և հիւսիսային կողմերն վիմահերձ բարձրութիւնները են։ Վանքս, որ կառուցեալ է երկու սիւների վերայ, ունի եկեղեցու ձև։ Խորանի տակ կայ չորս գերեզմանաձև շիրիմ, որ նորոգուած է երբեմն երբեմն տաճարիս հետ միասին։ Մեծ ուխտատեղի է վանքս և շիրիմներս։ Վանքիս մօտ եղած են խուցեր միաբանից համար, որք աւերակ են այժմ բոլորովին։ Երևում են նաև պարսպի հետքերն, որով պատած են վիմահերձից վիմահերձ։

ԺԹ. ԲԼԲԼԱԿ ՇԷՆ. Հիմնուած նոյն լեռնագօտու հարաւահայեաց լանջի վերայ։ Բնակիչք բնիկ. հողն բէկական, տեղական բերքերն նոյն. չունին եկեղեցի. հոգևոր պէտքերն կատարուում են Սխտորաշինում։ Ծուխ 15. ար. 65. իգ. 65։

Ի. ՍԽՏՈՐԱՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն (ունին այգի, պարտէզ և թթենի), օդն, կլիման և ջուրն անվնաս. երկար կեանք 75—80. եկեղեցին նորաշէն և կիսատ տակաւին, քահանան գալիս է Ծովատեղ գիւղից։ Ծուխ 65. ար. 281. իգ. 203։

Շինիս այգիների ազբիւրի մօտ կայ մի թեղի բազմադարեան ծառ, որի հաստութիւնն է 22 մետր, 75 սանթիմ։

ԻԱ. ՀԻՐՀԵՐ ԳԻԻՂ. Հիմնարկուած է նոյն լեռնագօտու հիւսիսային կողմում. գիւղի դիրքն արևելահայեաց. բնակիչք բնիկ, հողն կիսով չափ արքունի և կիսով չափ բէկական, բայց բարեբեր և պտղատու, տեղական բերքերն նոյն, առատ է տանձն և խնձորն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100. քահանայ մի. ծուխ 80. ար. 325. իգ. 255: Եկեղեցին Սուրբ Գրիգորիս, հոյակապ, համակ սրբատաշ քարով շինուած, կառուցեալ չորս սիւների վերայ, արտաքուստ խաչաձև. ներքուստ, ժողովրդեան կանգնած տեղից, վերև գմբէթի. երկարութիւնն 19 մետր 24 սանթիմ, լայնութիւնն 13 մետր 63 սանթիմ: Բեմի ժողովրդահայեաց երեսին փորագրուած է.

«Կամաւն Աստուծոյ ես Պետրոս Կաթուղիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արևի եպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու և Քոշիզու, քանզի վերեկտեալ և պատռեալ էին ղվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զգանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արևի եպիսկոպոսն, որ և հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ Հովարան Ամարասայ, զոր և շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. և աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու և Քոշիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի: Ոյ որ զայս վիճակս բաժանել և զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթուղիկոս իցէ կամ եպիսկոպոս Տէր զայնպիսին՝ նզովեալ եղիցի ՅԾԸ. հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեսցի. Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ և արձանագիր յաւիտեան մնայ հաստատ»:

Հարաւային փոքր խորանի հիւսիսային սեմի վերայ.

«Մեք Հիրհերայ ճամիաթիս տանուտէր Ղասումս, մեծ և փոքր ճանապարճի գլխի տափն ի սկզբանէ վախմ էր սուրբ Աստուածածնին. մեք ևս վախմ արարաք Սուրբ Գրիգորիսիս. ով քակէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ»:

Հիւսիսային փոքր խորանի հարաւային սեմի վերայ.

«Աստուած ողորմի տնտես Մարիամին, որ է. (7) տարի եկեղեցուս հացն և ճաշն արաւ»:

Աւագ խորանի հիւսիսային կամարակալ սեան վերայ.

«Կամաւն Աստուծոյ... եկի սուրբ Աս... թիւն Հայոց ՌՃԵ. ին հանդերձ Յս.. Ալէքսան, Եղիայ. և Մարտիրոս եպիսկոպոսօքս, որ առ Աստուած փոխեցան, որ թիւն էր ՌՃՃԶ. ի ա. յուլ. հիմնարկեցաւ սուրբ տաճարիս.. արնա սուրբ Գրիգորիսի ձեռնտուութեամբ.... ի թիւ... աշխատանս արարի... Մահդասի Գէսուն.... ցէ ըստ աշխար... անց... յիշեցէք... ցս ոս.. [1])»:

Արեւմտեան դրան ճակատակալ քարին վերայ.

«Ես Պետրոս կաթուղիկոս աշակերտ Ղուկաս վարդապետին եաու շինել կաթուղիկէս յիշատակ ինձ և աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին. յիշեցէք ի Քրիստոս»:

«Աստուած աւրհնէ Քոշիզու ժողովուրդն այն աւրհնութեամբն, որ ոչ անցանէ, ձեռնտու եղեն կրին և քարին»:

«Զաւրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն և ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ եկեր զերկիրս Աղուանից և աւերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին և իշխանութեան երկրիս Վարանդու Մէլիք Բաղու որդի Մէլիք Շահնազարին և օժանդակութեան (թեամբ) Ովանիսին և քահանայից և տանուտէարց, մեծամեծաց և փոքունց ամէն. թվին ՌՃԻԲ.»:

Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ

«Ընորհօքն Քրիստոսի ես Բարսեղ եպիսկոպոս աշակերտ Պետրոս կաթուղիկոսին և ծնողն իմ Աղայն և Գիւլաղայն ի դառնէն Վարանդու, ի գեղջէ Գիշուն՝ նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, զեկեղեցիս չքեղացուցաք զարդուք, տուաք շինել զեկեղեցիս անուամբ Սրբոյն Գրիգորիսի

[1]) Եղծուած են կէտադրեալ բառերն և գրերն։

Հովարան սուրբ աթոռոյն Ամարասայ, որ և մասն բերեալ ի նմանէ ամփոփեցաք աստ, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ. թվին, կատարեցաւ ՌՃԻԵ. ին»։

Գիւղիս հին հանգստարանում կայ մի հնաշէն մատուռ Սուրբ Աստուածածին անուամբ, որ խարխուլ է արդէն և քայքայւում է։

Ի Ե. ԾՈՎԱՏԵՂ ԳԻՒՂ. Շինուած է նոյն սարի հիւսիսային կողմում ոչ այնքան հեռի Հիրհերից. բնակիչք քնիկ, հողն արքունի, անջրդի, միջակ արդիւնաբեր, բայց պտղատու. տեղական բերքերն նոյն (նշանաւոր են տանձն ու խընձորն), պատուական օդն, կլիման, տեսարանն և ջուրն. երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ. քահանայ մի։ Ծուխ 86. ար. 306. իգ. 276։

ԿԱՐՄԻՐ ԵԿԵՂԵՑԻ.

Այս անուամբ է կոչուում Մէլիք Փաշաեանցների Դամբարանն, որ կայ գիւղիս արևելեան կողմում, ոչ այնքան հեռի, մի բլրակի վերայ։ Դամբարանիս շուրջն հանգիստներ են հնուց խիտ առ խիտ ամփոփուած, որի մէջ կան և խաչազարդ տապանաքարեր։ Դամբարանս ստորերկրեայ է և բաղկացած չորս պատկից մատուռներից, որոց Ա.-ն մեծ. Բ.-ն միջակ մատուռներ են։ Գ.-ն եկեղեցի է՝ Դ.-ն փոքր մատուռ է։ Լայնութիւնից լայնութիւն պատկից մատուռներս հաղորդակցութիւն ունին միմեանց միջնադռներով։ Ա.-ն մեծ մատուռն— վնասուած է գագաթնագիծ ճեղքուածով, որի հարաւային պատն և գուռնն միայն են երևում. քանզի ստորերկրեայ են բոլոր մատուռներս։

Ա. Մատրան ճակատակալ քարի վերայ.

«Թվ. ՌՀ. Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան և շիրիմ մերոց նախնեաց»։

Մատրանս հորանի հարաւային կողմի խաչին վերայ.

«Թվ. ՌԼԵ. ի հայրապետութեան Դաւիթ, առաջնորդի Մէլիք Փաշիկ [1]), Պետրոս եպիսկոպոս»։

[1]) Այսինքն՝ ի մէլիքութեան կամ պարոնութեան։

Վէմ քարի ժողովրդահայեաց երեսին.

«Դաւիթ եպիսկոպոս»։

Բեմի խաչի վերայ.

«Դաւիթ արեղա կանգնեցի զխաչս Առան վարդապետի Տարսոնե.. և զիս լուա (յիշեա)»։

Հորանի հիւսիսային կողմի խաչքարի վերայ.

«Թվ. ՌԻԵ. ի հայրապետութիւն տէր Յովհանիսի. առաջնորդութիւն Մէլիք Փաշին, յանուն Աստուծոյ ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն եղբաւր մերոյ Ղազարին, աղաւթս յիշեցէք» (14)։

Բ. Մատրան մէջ հարաւային պատում մի կիսատ խաչի վերայ.

«Անուն Տեառն Աստուծոյ ես Մելիկ Հացգերգ (?) կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Սադիկայ և որ Եւայ ու Արղուն ձորոյ խոց. Աստուած ողորմի.....»։

Մի մեծ խաչի կէս երեսին վերայ.

«Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ....»։ *Միւս կողմի վերայ։* «Անուամբն Աստուծոյ ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ խան այանս կանգնեցինք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին, աղաւթեցէք»։

Դ. Մատրան մէջ մի գեղեցկաքանդակ խաչքարի վերայ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մէլիք Աւան կանգնեցի զխաչս ՚ի փրկութիւն իմոյ Մէլիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին, ով որ յիշէք ՚ի Տէր, յիշեսջիք առ Աստուած թվ. ՌԺԵ. ին»։

Ուրիշ խաչի վերայ

«Կամաւ Ամենակալին Աստուծոյ ես Մէլիք Աղամ որդի Մէլիք Պապին որդոյ Հախիջանայ Թոռանց որդոյն Թոմասին որդոյ մեծի իշխանին Աւանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն նախնեաց մերոց....»։

Այլ խաչարձանի վերայ

«Իշխանութեան Թահմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի և առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի...»։

Սարսափելի մութ, խոնաւ և անմաքուր են մատուռներս և լի ջղիկներով, մաշուած, տեղ տեղ եղծուած և դժուարաւ ընթեռնլի են արձանագրութիւններն. վասնորոյ հազիւ թէ երկու օրում կարողացանք ընդօրինակել մեծ զգուշութեամբ այդ արձանագրութիւններդ: Թողում ասել որ յաճախակի յարձակուելով ջղիկներն մեր վառ մոմերի վերայ՝ անցուցանում էին զայն և զմեզ թողնում դժոխային մթութեան մէջ:

Արդէն խօսած ենք լճակների շարքում երկու փոքր լճակներին մասին, որք կան Ծովատեղ գիւղի և Խերխան շինի միջև: Ոմանք ասում են թէ Ծովատեղ գիւղն լճերից ստացած է իւր *Ծովատեղ* անունը:

ԻԳ. ԽԵՐԽԱՆ ՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հիւսիսային լանջի վերայ. բնակիչք բնիկ [1]), հողն բէկական. ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սուրբ Գրիգոր, քարուկիր, քահանան գալիս է Ծողատեղից: Ծուխ 31. ար. 150 իգ. 120:

ԻԴ. ՄԱՇԱԴԻ ՇԷՆ. Հիմնուած է մի ձորի երկու լանջերին, որ գտնուում է Մամնայ գիւղի արևելեան կողմում. բնակիչք բնիկ. հողն բէկական և բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 75—80. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանայ մի: Ծուխ 120. ար. 510. իգ. 433:

ԻԵ. ՄՄՄՆԱՅ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հիւսիսային կողմում, Եօշկայ վանքի արևելեան ձորի լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման, տեսարանն և ջուրն, երկար կեանք 89—90. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ. քահանան գալիս է Ղաւախան գիւղից: Ծուխ 70. ար. 260. իգ. 230:

ԻԶ. ՀՂՈՐԴԻ ԳԻՒՂ. Հիմնուած է մի բարձր սարի արևելահայեաց լանջին վերայ. բնակիչք բնիկ. հողն բէկական,

[1]) Սոքա կանխաւ բնակած են հին գիւղում, որ կայ այժմեան շինից ներքև, որի մէջ դեռ երևում է Ռևալ (երևայ, երևի) անուն եկեղեցին և որի մօտ՝ հին հանգստարանն:

տեղական բերքերն նոյն, գերազանց օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90—100. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանայ մի: Ծուխ 136. ար. 624. իգ. 508:

Միդասեան ուսումնարան տղայոց. աշակերտք 35. թոշակատու 25, ձրիավարժ 10, տարեկան ռոճիկ վարժապետի 220 րուբլի:

ԲՈՂՐԽԱՆԻ ՎԱՆՔ (սարիս բարձ 5326 ոտ.)

Հիմնուած է համանուն սարի հարաւ արևելեան կողմում մի փոքր ձորակի ձախ լանջում մի հարթակի վերայ: Ըստ ամենայնի ունի եկեղեցու ձև կառուցեալ անտաշ կաթնագոյն քարով մի կամարի վերայ: Ունի մի մեծ և միայն մի փոքր խորան, մի դուռն, երեք լուսամուտ, երկու խորհրդարան. 9 մետր 65 սանթիմ երկարութիւն, 5 մետր 50 սանթիմ լայնութիւն: Մի կոտրած և փոքր խաչքարի վերայ. «Խաչս տանն Արխի»: Այլ փոքր խաչքարի վերայ. «Խաչս Կ. հս Ե. Հ.»:

Ունի շրջապարիսպ քառակուսի ձևով պատուած, որ ունի միայն մի դուռն: Պարսպի հարաւային և արևմտեան կողմում ներքուստ շինուած են թաղակապ խուցեր, անվնաս մնում է միայն վանահօր սենեակն, ամբողջապէս խոնարհուած են միաբանից սենեակների գլուխներն: Պարսպի երկարութիւնն է 40 մետր, լայնութիւնն՝ 18 մետր 50 սանթիմ: Անտառապատ է վանքիս շուրջն, որ ունի պատուական ջուր և մաքուր օդ:

ԻԷ. ՀԱՐԱՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Ա. լեռնագօտու [1]) հիւսիսային կողմում մի ձորակի աջ կողմի բարձրութեան վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական և սակաւաբեր, բարեխառն օդն և կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 85 տարի, եկեղեցին սուրբ Մեսրոպ, քարուկիր, քահանայ մի: Ծուխ 65. ար. 245. իգ. 200:

ԻԸ. ՆԻՆԿԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Բ. կամ միջին լեռնա-

[1]) Բարձր դադաթն է Խաչախութ 5028 ոտք:

գօտու Հարաւահայեաց լանջին վերայ, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի, բայց բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, քահանայ երկու։ Ծուխ 230. ար. 1041. իգ. 818։

ԾԱՌԵԽ ՈՒԽՏԱՏԵՂԻ.

Գիւղիս հիւսիսային կողմում մի բարձր սեռի վերայ կայ հնուց մնացեալ մի մատրան աւերակ, որի մէջ դրուած է մի խիստ հին քարեայ խաչ։ Ա.հա խաչս է ուխտատեղին, որի շուրջն բուսած են ծերունի ծառեր, որք անձեռնմխելի մնացած են իբր նուիրական ծառեր գիւղացու կացնի հարուածներից։

Ի Թ. ՂԱԻԱԽԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է մի ձորի մէջ, խեղդուած է տեսարանն և սեղմուած հօրիզոնն շրջապատող լեռներով [1]). բնակիչք կիսով չափ բնիկ, կիսով չափ տեղափոխուած Ղափանից, Խանձաձորից և չորս գերդաստան Խնձորստանից, հողն բէկական, բարեբեր, ամրան ծանր օդն և կլիման, երկար կեանք 65—75, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, երկարութիւնն 17 մետր 40 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 65 սանթիմ. «Շինեցաւ այս եկեղեցիս Ղաւախանու հասարակութեան աշխատանօք 1871 ամի»։ Քահանայ մի։ Ծուխ 34, ար. 149, իգ. 131։

Գիւղիս հիւսիսային կողմում կայ հին հանգստարան և քարուկիր մատուռ, որի մէջ կան խաչարձաններ, որից միոյն վերայ. «Թվ. ՋՂԷ ես Շահաւոր կանգնեցի խաչս հայր Պախա, մայր իմ Շահմար...»։

Լ. ԵՆԿԻՋԱՆ գիւղ. Հիմնուած է Նինկի գիւղից բաւական ներքև նոյն գիւղի ջրաձորի ձախ կողմում մի սեռի վերայ. բնակիչք հատուած և եկած Նինկի գիւղից. ամենայն ինչ նոյն, եկեղեցին նոր շինել է տալիս պ. Գալուստ Գաբ-

[1]) Արևելեան սարի բարձ. 3780 ոտք։

րիէլեան իւր սեպհական ծախքով, քահանան գալիս է Նինկի գիւղից։ Ծուխ 20. ար. 115. իգ. 95։

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ծառեխի սարի շարունակութեան վերջի ծայրին մօտ՝ բարձր սեռի վերայ շինուած է կաթնագոյն անտաշ քարով մի փոքր և հին եկեղեցի, որ ուխտատեղի է։ Աւանդաբար ասում են թէ Սուրբ Գրիգորիս Աղուանից Ա. կաթուղիկոսն հիմնարկել տուած է յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Դարերի ընթացքում քանիցս նորոգուած է։

Լ.Ա. ՊԱՌԱԻԱԹՈՒՄԲ. Հիմնուած է սուրբ Լուսաւորչի եկեղեցու սարի վերջացած տեղի հիւսիսային ստորոտում, ջրաձորի աջ կողմում. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Պղնձահանքի մօտից, հողն արքունի և բարեբեր, տեղական բերքերն նոյն (մանաւանդ տանձ, խնձոր, բոժոժ), սննդարար օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Կղարծուց։ Ծուխը (Հաշուած է Կղարծի գիւղի վերայ)։

Լ.Ի. ԿՂԱՅԾԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Ա. լեռնագօտու հարաւային կողմում, Պառաւաթմբի հիւսիսային հանդէպ, նոյն ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ, դիրքն արևելահայեաց, բնակիչք բնիկ, հողն բէկական, արդիւնաւէտ. տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100. եկեղեցին յանուն Սրբոց Թարգմանչաց, քարուկիր, հոյակապ չորս սիւների վերայ, շինուած բնակչաց ծախքով, երկարութիւնն 18 մետր 75 սանթիմ, լայնութիւնն 12 մետր 60 սանթ. քահանայ մի։ Ծուխ 165. ար. 604. իգ. 585։

Նկեղեցումն կայ.

Ա. Մասն *կենաց փայտից* զետեղուած մի արծաթեայ խաչում։

Բ. Աւետարան գրչագիր, գրուած հասարակ թղթի վերայ, մեծադիր, պատկերազարդ։

Ցիշատակարանից «Զաւրութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ աւետարանս զայս յաստուածախնամ կղզիս Աղթամար., ի հայրապետութեան տեառն Զաքարիայի և ի թուաբերութեան Հայկազեանս տումարի ՋԻԶ. ի գառն և ի նեղ ժամանակիս։

Արդ ես Յովհաննէս ետու գծագրել զսուրբ աւետարանս..»։ Շատ յետոյ գրուած է. «Ի վերջին գառն և ի նեղ ժամանակ խուժադուժ ազգ նետողաց՝ տաճկաց ազգաց չարամահ եղեն. Համզաբէկ անուն պարոն և այլ անթիւ զաւրք հրամանաւ ինքնակալին՝ որ կոչի Շահ Իսմայիլ՝ գնացին ի վերայ աշխարհին Քուրդստանայ, աւերումն բազմապատիկ ածին ի վերայ Հայոց, զորն սպանելով և զոր գերելով, գիւղ և քաղաք, վանք և անապատ միահաւոյ (ոյն) յափշտակեցին զՀայք և բերին զսուրբ աւետարանս գերմամբ ի յերկիրն՝ որ կոչի Արցախ, և հանդիպեալ այսմ աստուածաշունչ բուրաստանիս քահանայ մի և տեսեալ զսա... և գնեաց զանգին մարդարիտս ի հալալ ընչից իւրոց, ետ զին սորա ՃՈ. դահեկան և ետ յառաջնորդ Գանձասարու աթոռոյն և ծախեաց զսա ի Թաւրոս էրեց....»։

Մատթէ ուխտատեղի.

Գիւղիս հիւսիսային հանդէպ մի տեսարանաւոր բլրի վերայ կայ մի հին մատուռ, որ շրջապատուած է ծերունի ծառերով։ Ասում են աւանդաբար. «Խաչարձանիս տակ ամփոփուած է Մատթէ անուն քահանան, որ նահատակուած է անհաւատ բռնաւորներից հին ժամանակներում»։

ԼԳ. ՄՋԿԱՊԱՏ [1]) գիւղ. Հիմնուած է այն բարձր լեռնաշղթայի վերայ, որ ճիւղաւորուած է Ս. լեռնագօտուց և հասած մինչև Ամարաս վանքի հիւսիսային կողմն. բնակիչք բնիկ. հողն արքունի և բէկական և արդիւնաւոր. տեղական բերքերն նոյն. օդն և կլիման գերազանց, ջուրն պատուական, երկար կեանք 100 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին [2]), քարուկիր, քահանայ մի։ Ծուխ 83. ար. 465. խգ. 362։

ԼԴ. ՔԱՐԱՀՈՒՆՋ (ունչ) ԳԻՒՂ. Հիմնուած նոյն լեռնաշղթայի հարաւային կողմում. բնակիչք բնիկ, հողն արքու-

[1]) Մէջքն (եանի կողմն) պատուած, քանզի բերդն շատ հեռի չէ գիւղից։
[2]) Եկեղեցուս մօտ է Վարդան անուն նահատակի մատուռն։

նի, միջակ արդիւնաւոր, տեղական բերքերն նոյն, օդն և կլիման ոչ այնքան լաւ. երկար կեանք 65—70. եկեղեցի չկայ, քահանան գալիս է Քերթից, որ խիստ մօտ է։ Ծուխ 36, ար. 125. խգ. 95։

ԼԵ. ՔԵՐԹ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի հարաւ արևելահայեաց ստորոտում, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի և ջաղմարդիւն, տեղական բերքերն նոյն, ջուրն պատուական, օդն և կլիման փոքր ինչ բարեխառն, երկար կեանք 75—80. եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, քահանայ մի։ Ծուխ 56. ար. 194. խգ. 150։

ԱՄԱՐԱՍ ՎԱՆՔ (15)

Հիմնուած է այն երկրալեզուի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խազազի և Լուսաւորչի սարերի մէջ և կազմած դուրալի հովիտ, որի միջից հոսում է Ամարաս վտակն [1])։ Վանքս ի հիմանէ նորոգ կառուցեալ է 1858-ին չորս հաստատուն սիւների վերայ ամբողջապէս սրբատաշ կաթնագոյն քարով։ Ունի մի աւագ և երկու փոքր խորաններ, տասն մեծ մեծ լուսամուտ, մի գուռն արևմտեան կողմից, երկու խորհրդարան, մի աւազան և մի փոքր կաթուղիկէ։ Աւագ խորանի տակ է շատ վաղուց շինուած հնութիւնն, որի մուտքն բացուած է դասի հարաւային կողմի բեմի մօտից. տասնևւթ սանդուղներով իջնում է մինչև յատակի մատուռն։ Ստորերկրեայ շինութեանս երկարութիւնն (ներսից չափելով) 3 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 1 մետր 90 սանթիմ։ Փոքրիկ մատուռս, որ ամբողջապէս շինուած է Խազազի հանքի սրբատաշ քարով, բացի հարաւային մուտքից ունեցած է և միւս մուտք արևելեան կողմից, որ փակ է այժմ։

Հիւսիսային դասում առաջին լուսամտին պատկից շինուած է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփուած

[1]) Վտակս առնում է իւր սկիզբը Սօս, Քերթ, Քարահունջ, Հիրհեր, Թերխան գիւղերի աղբիւրներից և մօտերքից և ջրում Ամարասի արտերը, այգիները և պարտէզները։

Սուրբ Լուսաւորչի Թոռին-Աղուանից Ա. կաթուղիկոս Գրիգորիսի մարմինն: Ահա այս է գլխաւոր ուխտատեղին: Վանքիս երկարութիւնն է 23 մետր, լայնութիւնն 13 մետր 33 սանթիմ:

Տաճարումս է *Մասն սրբոյն Գրիգորիսի* գետեղուած մի արծաթեայ, ոսկեզօծ, ականակուռ և մատանիներով զարդարուած աջի մէջ, որ կրում է.

«Աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից հայրապետին. շինեցաւ յամին 1870 ի Շուշի քաղաքի անվարձ աշխատութեամբ շուշեցի ոսկերիչ Մկրտչանայ Խոջաբաղրեանց, Գրիգորի Բատամեանց և Առաքելի Յարութիւնեանց»:

Տաճարս ունի քարաշէն, ամրակազմ, քառակուսի և բարձրագոյն շրջապարիսպ, չորս անկիւններում չորս աշտարակներ և պատերի վերնամասից հրացան արձակելու ծակեր, որք շինուած են ռուսներից, երբ այստեղ էր մաքսատունն: Պարսպիս երկարութիւնն արևելքից արևմուտք 94 մետր է, լայնութիւնն 56 մետր 40 սանթիմ: Պարսպիս ներսում արևելեան կողմում կայ 5 մեծ սենեակ (այժմ գոմ), հարաւային ,, ,, 6 ,, արևմտեան ,, ,, 5 ,, (այժմ 4-ն անկարգ) հիւսիս. ,, ,, 8 ,, (,, 5-ն ,,):

Հարաւային մասում միայն կայ վերնայարկ երկու աւերուած սենեակ: Շինութեան մէջ ամենաշքեղ մասն եղած է միայն սենեակներս, որք շինուած են տաշուած կաթնագոյն քարով և ունին չորս կողմերից զոյգ զոյգ լուսամուտներ և մէն մի լուսամուտ ունի մի մի բաժանարար քարեայ սիւն [1]): Ահա այս եղած է երբեմն կաթուղիկոսարան Աղուանից: Ընդհանրապէս անմաքուր, անկարգ և անխնամ է այս պատուական վանքն ամենայն մասամբ, որ այժմ ընկած է բարոյապէս և նիւթապէս:

Վանուցս անշարժ կալուածներն են.

Ա. Վարելահողեր,

Բ. Այգի և թթենեաց պարտէզ,

Գ. Մի ջրաղաց: Վանահայրն է մի տիրացու....:

[1]) Յաւելի է տեսնել որ քանդուած է այս հնադարեան պատուական հնութիւնն: Ասում են թէ «Մի տիրացու քանդած է առանց հրամանի.....»:

Ամարաս աւերակ գիւղաքաղաք.

Վանքիս հարաւային կողմում, ջրի աջ կողմի բարձր լանջի վերայ կայ ընդարձակ աւերակ: Տնաբակերից երևում է, որ տներից ամենամեծ մասն շինուած է եղել Արցախի յատուկ և հին ձևով—գետնափոր:—Ոչինչ պակաս ընդարձակ է և գիւղաքաղաքիս հանգստարանն, որ մօտ է աւերակիս:

ԼՋ. ՍՕՍ ԳԻԻՂ. Հիմնուած է Լուսաւորչի սարի արևմըտահայեաց ստորոտին մօտ լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն կիսով չափ արքունի և կիսով չափ բէկական, անջրդի, բայց բարեբեր և հացաւէտ. տեղական բերքերն նոյն, օդն և կլիման սննդարար, ջուրն գովելի, երկար կեանք 85—90. եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, առանց կամարի և սեան. երկարութիւնն է 12 մետր 60 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 90 սանթիմ: Դրան ճակատակալ քարի վերայ. «Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս»: Քահանայ երկու: Ծուխ 107. ար. 385. իգ. 302:

Լուսաւորչի սար. Բարձրացած է գիւղիս գլխին վերև արևելեան հանդէպ: Սարիս կատարին վերայ կան շատ թափուած քարեր, տնաբակեր և եկեղեցու աւերակ:

Աւանդութիւն. Աւանդաբար պատմում են. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կողմերումս քարոզելու և եկեղեցիներ հիմնարկելու ժամանակ գիշերն բարձրացած է սարիս գլուխն և աղօթքով լուսացրած գիշերները: Սուրբ Գրիգորիս Աղուանից կաթուղիկոսի մարմինը երբ փախցրած բերում են նորա աշակերտներն Դարբանտից այստեղ, նահատակել տուող Թագաւորի զօրականներն, փախցնողների ետևից ընկած, գալիս են մինչև այստեղ: Սակայն աշակերտներն ապաւինելով յԱստուած և դիմելով Սուրբ Լուսաւորչի աղօթած տեղն, ազատ են մնում հալածողներից և ապա նահատակուած Սուրբ Գրիգորիսի մարմինը տանում թաղում Ամարասի վանքում և իրանք փախչում դէպի Հայաստան»:

ԵՂԻՇԱՅ ԿՈՒՍԻ Ա.ՆԱ.ՊԱՏ.

Հիմնարկուած է այն բարձրագոյն գագաթի վերայ, որ

արձանացած է Սօսի, Լուսաւորչի սարի, Քերթի և Ղուզի-Ճարտարի մէջ։ Հանգստարան է անապատիս շուրջն. գագաթս զարդարուած է թեղի և տխկի ծառերով և հին ու նոր տապանաքարերով։ Մենաստանս շինուած է անտաշ որձաքարով, իսկ կամարներն և բոլոր անկիւնաքարերն սրբատաշ քարով։ Մենաստանս, որ կանգնած է երկու սիւների վերայ, ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, աւազան, վեց լուսամուտ, քարեայ խաչկալ, մի դուռն արևմտեան կողմից, մի փոքր կամուղիկէ իբրև զանգատուն և մի փոքրիկ խորանաձև գերեզման՝ աւագ խորանի բեմի տակ, որի դուռն բաց է դէպի դասի մէջ տեղն։ Ահա այս է Եղիշա Կուսի գերեզմանն, որ մեծ ուխտատեղի է։ Անապատիս երկարութիւնն է 15 մետր 95 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 70 սանթիմ։ Քարեայ խաչկալի հարաւային դրան հիւսիսային սեմի վերայ. «Յիշատակ է Համասուտանց Միլոզախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս. եղբարքն իմ Պապան և Վանդալան, քորար (քորք) իմ Գուլասմար, Ինթալիհ, ծնողքն իմ Մումխանոիմ, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահպատ, Սիրուն, Վռամին, Մազրվանին և դստերն իմ Բաջուն, Թօսդաշին թվ. ՌՃԳ.»։

Խաչկալի հիւսիսային կողմում մի խաչքարի վերայ.

«Ղազար, կողակից ուր (իւր) Նազլու թվ. ՌՃԳ.»։

Հիւսիսային խորանի ճակատակալ քարի վերայ.

«Ես Աղէս կանգնեցի զխաչս փրկութիւն ինձ և կենակցին իմոյ, որդւոյ և դստերաց իմոց ՋՀ.»։ Կարծում ենք որ խաչքարս գերեզմանից վեր առած և դրուած է այստեղ։

Դրան ճակատակալ քարի վերայ [1])

«Կարողութեամբ ամենազօրին Աստուծոյ ես նուաստ տէր Յոհան անձամբ տկար արեղայս և որդէգիր Փոքր տէր Յոհանս շինեցաք սոյն զեկեղեցիս ըստ անուան Սրբուհոյ Կուսին Եղիշէի ի կաթուղիկոսութեան տեառն Երեմիայի և տանս Աղուա-

[1]) Դրանս հիւսիսային սեմի վերայ, «Տէր Եղիազարս որ ձեռնադրեցաւ յարեղայ ՌՃՀԳ.»։

նից որ ի մայր աթոռոյն Գանձասարայ վանորոյ յիշել աղաչեմք հանդերձ ծնողովք մերովք ՌՃԻԲ.»։ Անապատիս որմին արևմտեան արտաքին երեսն խաչազարդուած է խաչքարերով։

Սոյն երեսի լուսամուտի գլխին.

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կարապետս շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարդա, մէկ բերան ողորմի ասէ. խաչս յիշատակ է Գաբրիելիս և ծնողաց իմոց և դստերաց և որդոց իմոց»։

ԼԷ. ՂՈՒԶԻ-ՃԱՐՏԱՐ (Հիւսիսահայեաց Ճարտար). Շինուած է նոյն սարի հիւսիսային կողմում, բնակիչք բնիկ, հողն արքունի, առատաբեր, տեղական բերքերն նոյն, նշանաւոր է ցորենն և գարին, գերազանց օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 110 տարի, եկեղեցին Սուրբ Գէորգ, կառուցեալ մի կամարի վերայ, երկարութիւնն 15 մետր 50 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 60 սանթիմ, քահանայ երկու։ Ծուխ 145. ար. 580. իգ. 465։

Եկեղեցւոմս կայ մի փոքրագիր, թղթեայ ձեռագիր աւետարան, պատկերազարդ, անյայտ է գրողի անունն, միայն յայտնի է, որ ստացած է Յովհաննէս անուն ոմն։

Մատուռք *Երից մանկանց* մի արձաթեայ փոքր խաչի մէջ։

ԼԸ. ԿԻՒՆԻ-ՃԱՐՏԱՐ (Արեգդէմ Ճարտար) Հիմնուած է բերդասարի հարաւային կողմում. դիրքն հարաւ-արևելահայեաց, միայն մի ձորակով բաժանուած Ղուզի-Ճարտարից. բնակիչք բնիկ. հողն արքունի, անջրդի, սակայն բազմարդիւն, տեղական բերքերն նոյն (այգի, թթենի գովելի, հռչակուած է գիւղիս ցորենն), գերազանց օդն, կլիման, ջուրն և տեսարանն. երկար կեանք 111 տարի, եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ, ունի միայն աւագ խորան. երկարութիւնն է 11 մետր 95 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 55 սանթիմ։ Դրան ճակատակալ քարին վերայ. «ՌՄԼԶ. թվին. այս է Ամենափրկչին սուրբ եկեղեցիս, սա եղէւ որևոր յիշատակ տէր.... Իյ. Խանումն»։ Իսկ վերև.

«Ուստայ Թիւնի» (Յարութիւն շինող վարպետի անունն է)։ Ֆահանայ մի։ Ծուխ 260. ար. 1095. իգ. 855։

Գիւղումս կայ Ս. Գրիգորեան միգասեան ուսումնարան տղայոց, աշակերտք մօտ 50, թոշակառու 38, Ձրիավարժ 10. միամեայ ռոճիկ վարժապետին 220 ր.

ԿՈՀԱԿ ՈՒԽՏԱՏԵՂԻ

Մի աւերակ մատուռ է *Կոհակ* ամուսամբ, որ հիմնուած է գիւղիս անդում մի խութի վերայ։ Աւերակս ծածկուած է ճապկի ծառերով։ Խութիս գագաթն ունի մօտ երկու կալաչափ մեծութիւն։ Ուխտի օրն է ամեն Համբարձման տօնն։

Դաւէ-չիւէք

Այս անունը կրող աղբիւրն բղխում է գիւղիս արեւմտեան հանդէպ եղած քերծիցն և թափուում իւր տակի փոսին մէջ։ Կարմրուկ (տեղական բարբառով խաւարթինը) ախտով հիւանդացեալները բերում և լողացնում են փոսի միջի ջրովն, որով բժշկուում է հիւանդն։

Բերդի նահատակ

Աղբիւրիցս վերև մի բարձր ապառաժի վերայ կայ մի կիսաւեր մատուռ, որ իւր մէջ կրում է իւր արեամբ ներկուած մի նահատակի մարմինը, որի անունն անյայտ է։ Միայն յայտնի է որ ուխտատեղի է խիստ հին դարերից աւանդաբար մնացեալ։

Լթ. ԽՈՒՆԸՇԻՆԱԿ (Խուն-շինակ). Հիմնուած է բերդասարի արևելահայեաց լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի բայց բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն և կլիման փոքր ինչ ծանր ամրան, տեսարանն պատուական, ջուրն սննդարար, երկար կեանք 80—85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, կամարակապ, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն 17 մետր 45 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 80 սանթիմ, քահանայ երկու։

Արձանագրութիւն դրան ճակատակալ քարի վերայ.

«Ի ՌՅԹ. (1860) Կամաւն Աստուծոյ կառուցաւ եկեղեցիս

Խնչինագ գեղջ անուն սուրբ Աստուածածնի սեպհական արդեամբք և ծախիւք Շուշի քաղքցի բարեպաշտոն, աղնուազգի աղա Հայրապետ բէկի Թօլուխանեանց ի յիշատակ հոգւոյ իւրոյ և աղնուհւոյ ամուսնոյն իւրոյ Բակումայ Մէլիք Բէկլարեանց և ծնողաց իւրոց հօրն Բաղդասար բէկի, մօրն Նազլու Խանին»։

Ձեռագիր աւետարան փոքր դիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ (ընկած է Ղուկաս աւետարանչի պատկերն)։ Գեղեցիկ և ճարտարարուեստ են պատկերներն, նախշերն, ծաղիկներն և թուչնագրերն, ընտիր ոսկեզօծն և ներկերն։

Ցիշատակարանից. «Որ (Ամեն. Երրորդութիւն) ետ կարողութիւն տկար և մեղապարտ, անարժան Գրիգոր երիցու, որ ծալկեցի գիւա (գայս) և հասայ ՚ի յաւարտ սուրբ աւետարանիս. ծրագրեաց սա ՚ի յաւնդանց [1]) ձեռամբ Վարդան երիցու.... Մահտեսի Թաղիաջի խոջա Գազպարն և որդի նորա խոջա Յակովբջանն յայսմ տարւոջ եկին ի Վան, որ էր թուականիս Հայոց ՌՃ և ԻԱ. և ստացան զսա ի հալալ վաստակոյ իւրեանց ի յիշատակ իւրեանց և իւրեանց ծնողացն»։

Չգիտենք ինչ պատճառաւ յետոյ աւետարանս ընկած է Աւետարանոց աւանն. «Գրեցաւ ի 1845 ամի փետ. 18-ին. այս յիշատակ հայերէն աւետարանս տուեալ եղև ի գիւղն Խունիշինակ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ է ընծայողն Ջանաղչու (Աւետարանոց) գիւղին բնակիչ Մէլիք Ջահանբաղչի որդի դուստր Նանակուլ Մէլիք Շահնազարեանց և այլ մին սուրջառ (չուրջառ) իւր արծաթի չափաստուին...»։

Գրչագիր մաշտոց. գրուած է թղթի վերայ, «Արդ աղաչեմ զՁեզ... յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զԱստուածատուրն և զեղբայրն իւր զՄարգարէն և զծնողսն նորա և զՅակովբ քահանայ և զՍիմէոն քահանայ, որ աշխատեցաւ ի գրելն...»։ Մաշտոցս եկեղեցուս նուիրած է շուշեցի տիրացու Անաստաս Տէր-Մկրտչեանց 1855-ին դեկ. 1-ին։ Ծուխ 96. ար. 485. իգ. 325։

---

[1]) Թերևս գծագրեցաւ այս ընտիր արիւնակաց։

Խ. ԿԻՇԻ ԳԻՒՂ. Հիմնուած է բերդասարին հիւսիսային կողմում մի հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք բնիկ. հողն բէկական, ամենամեծ մասամբ անջրդի, բայց արդիւնաւէտ, տեղական բերքերն նոյն (բուժուժ, թութ, խաղող առատ են), օդն, կլիման և ջուրն պատուական, տեսարանն զմայլելի, երկար կեանք 60. եկեղեցի Սուրբ Մինաս, թաղակապ, երկարութիւնն 16 միտր 65 սանթիմ, լայնութիւնն 7 միտր 85 սանթիմ. քահանայ մի: Գիւղումս կայ եօթանասուն այրի կին: Պատճառն այն է, որ մարդիկ ամրան ջերմ ամիսներում աշխատում են Մուղանի դաշտաբերանում և վախճանուում անժամանակ: Ծուխ 127. ար. 584. իգ. 481:

ՈՍԿԵԱՆՑ ԽԱՉ

Այս անուամբ կոչուում է այն վաղեմի սրբավայրն, որ կայ գիւղիս աղբիւրի մօտ, ջրաձորի աջ ափում և որ ունի այժմ քառակուսի ձև, քարուկիր շինուած: Այժմ բայց է շինութեանս գլուխն և մի ծերունի թթենի ծառ բուսած է սրբավայրիս մէջ, ուր կայ և մի քարեայ խաչ, որի վերայ վառում են մոմեր: Դրան սեմի վերայ.

«Թվ. ՌՅ. յիշատակս յօրինեցաք Սայեամ կամ (և) Բաղդասար Յարութիւնեան Բաղրեանց»: Սրբավայրիս մօտ եղած հին հանգստարանում. «Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ բոխային (գիւղապետին) ՌՃՀԲ.»:

ԽԱ. ՍՊԻՏԱԿ ՇԷՆ. Հիմնուած է Կիշի գիւղի հիւսիսային կողմում, մի հարաւ արևելահայեաց սարալանջի վերայ: Այն գեղեցիկ հովիտն, որ վտակաձորով [1]) ներս մտած է Մուղանից իբրև երկրալեզու, բաժանած է Սպիտակ գիւղի սարս Կիշու սարից: Բնակիչք գաղթած են Խոյից. հողն բէկական և արդիւնաւոր, տեսարանն հիանալի և նախանձելի, տեղական բերքերն նոյն, գերազանց օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, երկարութիւնն է 15 մետր 33 սանթիմ, լայնու-

[1]) Վտակս առնում է իր սկիզբը Նինկի, Կղարծի և Պառաւաթումբ գիւղերի և անդերի աղբիւրներից:

թիւնն 7 մետր. քահանայ մի: Ծուխ 70. ար. 220. իգ. 180:

Ամէնափրկիչ (Զարկեա մարագ) *ուխտատեղի.*

Սպիտակ շէն և Եմիշլեան գիւղերի միջև մի բարձրավանդակի վերայ (3192 ոտք) խիստ հնուց շինուած է մի մատուռ, որ այժմ կիսաւեր է: Բայց կանգուն մնում է տակաւին վէմ քարն և մի խաչարձան:

Ուխտատեղիս ծածկուած է մեծ մեծ ծառերի փառաւոր հովանու ներքև, իսկ իւր շրջապատն լի է հին և նոր խիտառխիտ ամփոփեալներով: Կանխաւ ուխտատեղուս մօտ եղած է շարքով շինուած մարագներ, վանորոյ կոչուած է և *Զարկեա մարագ:*

ԽԲ. ԵՄԻՇՋԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Ամենափրկչիս հիւսիսային ստորոտում մի սարահարթի վերայ, բնակիչք մեծ մասամբ տեղացի, իսկ փոքր մասամբ գաղթած Պարսկաստանից. հողն կիսով չափ արքունի և կիսով չափ բէկական, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, ծածքն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 62. ար. 222. իգ. 180:

ԽԳ. ԱՇԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է գրեթէ Եմիշլեան գիւղի արևմտեան կողմում, մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ. բնակչաց կէս մասն բնիկ, իսկ մնացեալ մասն տեղափոխուած է Զրաբերդից. հողն մասամբ արքունի և մասամբ բէկական, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 95 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, շինուած հասարակութեան ծախքով երեք կամարների վերայ. երկարութիւնն 17 մետր 95 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 85 սանթիմ: Աւազանի վերայ. «Յիշատակ Դաստանց Թա.»: «Յիշատակ Սահակ Աբրահամեան»: Քահանայ մի: Ծուխ 104. ար. 415 իգ. 270:

Կարմիր աւետարան

Գիւղիս մէջ մի մատուռում, որ հիմնուած է ձորի ձախ կողմում, կայ մի ձեռագիր աւետարան մեծագիր, գրուած

թղթի վերայ, պակասաւոր (թափուած են թերթերից) անյայտացած է և յիշատակարանն։

Յիշատակարան

Գիւղումս պ. Յակովբ Իշխանեանցի մօտ կայ մի հնատիպ ճաշոց, որի մէջ համբարձման պատկերի եռւ գրուած է. «Ի հայրապետութիւն Աղուանից տէր Ներսէս Կաթուղիկոսն էր ամաց ՃԻ. էր փիթեալ (փիթեալ, զառամեալ) իբրև ծերունի».... «Յիշատակ է ճաշոց գիրքս իշխանի որդի Բալու քոխին (գիւղապետին) և իւրեան թոռն իշխանին, իւր կողակից Մարեանին, և իւր մայր Խանփերին և իշխանին և իւր կողակից Քամիլին և որդի Սարգիսին և դուստր Աղիզգուլին, Բալուի որդի Սւթանդիլին, Գրիգորին, իւրեան դուստր Անային, իմ քոյր Խանումին, Ակուլին իւրոյ... որ է ի գաւառէն Վարանդու ի գեղջէն Աչանու ի ձեռն գերընդիր... Մարտիրոս վարդապետին.... Թուական մեր Հայոց ՌՃՂԸ. էր... Մարասու (Ամարասայ) առաջնորդն էր Գասպար վարթապետն, իշխանն էր Ալլահդուլի Սոլթանն, որ է Զարայսերթու, այսինքն աղգաւ հայ և քաջամարդ, հախթող ընդ թշնամին իւր, Աստուած ինքն երկար կենօք պահեսցէ ամենայն պատայհարաց, ամէն»։

ԽԴ. ՂԶՂԱԼԱ ԳԻՒՂ. Հիմնուած է Աշանի արևելեան կողմում, սարերի մէջ մի գոգաւոր ձորի արևելահայեաց լանջին վերայ. բնակչաց ամենամեծ մասն քնիկ, մի քանիսն փոխադրուած Ջրաբերդի Եղակեր գիւղից, հողն բէկական, գինեվէտ և բարեբեր, տեղական բերքերն նոյն, (նշանաւոր է գինին, թուրթն, նուռն, դեղձն, թուզն և տոմբալանն), պատուական օդն, կլիման և ջուրն, գովելի տեսարանն, երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ. երկարութիւնն է 14 մետր 30 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 12 սանթիմ։

Եկեղեցուս դրան ներսում, արևելեան Բ. կամարի վերայ. «Ես Ոհաննէս չինեցի եկեղեցիս ի հալալ ինչից իմոց, հայրն իմ Թուման և մայրն իմ Իւսան, կողակիցն իմ Խանում,

հանդուցեալ որդին իմ Ս...»։ Միւնոյն կամարի հիւսիսայլին կողմի վերայ. «Ես Յովհաննէս եպիսկոպոս վերակացու չինեցի եկեղեցիս, հայրն իմ Տաղտան, մայրն իմ Խոնտի։ Եւ Եղիա քահանայն, տէր Պողոս, տանուտէրն Վէլիճան, եկեղեցուս վարպետ Կէսբեր Յակոբ»։ Քահանայ մի։ Ծուխ 103. ար. 471. խգ. 337։

Եկեղեցումս կայ մի *փոքրագիր* ձեռագիր *աւետարան*, առանց պատկերի և միանգամայն պակասաւոր։ *Յիշատակարանից*. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌՀԲ. ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Աւետիքի ի քաղաքն Հալասպ ի դուռն սուրբ Քառասնից ի գառն և ի նեղ ժամանակիս։ Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտացող սուրբ աւետարանիս Գիպխիսցի լսոճա Մահտեսի Հովաղեղն և զկողակից Խասխաթունն... Հովաղեղն որ գնաց ի Երուսաղէմ և հանդիպեցաւ ի Հալասպ, էառ զսուրբ աւետարանս յիշատակ ի դուռն Կաթուղիկէ Սուրբ Աստուածածնին»։

Ձեռագիր մաշտոց

Գիւղիս հոգևոր հովիւ բարեկրօն Թովմաս քահանայ Տէր-Գրիգորեանցի մօտ կայ մի ձեռագիր մաշտոց, որի յիշատակարանից կարողացանք քաղել միայն հետևեալը. «Գրեցաւ գիրքս, որ կոչի մաշտոց, ձեռամբ... Թուին Հայոց ՌՃԻ.»։

Մաշտոցիս առաջին թերթի առաջին երեսին. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Աստուծոյ տէր Գրիգորէս գրեցի. ես առէ (գնեցի) մաշտէց (մաշտոցս) ա. Թուման Եղապրցի Մեծ տէր Սարգսի որդի Աւրհամի որդի տէր Գրիգորէս առ էս մաշտէս, որ Փաթալի խանն [1]) եկաւ Շուշի զալին երայ (վերայ) կուլի Թուին ՌՄԾ.»։

Փոքր նահատակ

Կոչուում է այն նորաշէն և կիսատ մատուռն, որ կայ գիւղիս արևելեան հանդէպ մի բարձրագոյն բլրի գագաթին վերայ։ Նահատակն վաղուց ամփոփուած է. իսկ մատրանս շէնքն քանիցս նորոգուած է՝ի հիմանէ։

[1]) Ուրմեցի Փաթալի-Խանն։ Տես Գաղանիք եր. 40։

Մեծ նահատակ

Մի քարուկիր մատուռ է, շինուած այն բարձր սարի գագաթին վերայ (2492 ոտք), որ սահման է Աշան, Նոր-շէն և Ղզղալա գիւղերի և որ առանձնացած նայում է Աղուէ գաւառի դաշտի վերայ: Նահատակի գերեզմանն գտնուում է մատրանս մէջ, որի շրջապատում կան խուցեր: Երևի թէ փոքր միաբանութիւն եղած է այս տեղ. մինչև ց'այսօր *վարդապետի տափ* (գետին) են անուանում արտավարը, որ կայ մատրանս ստորոտում փոքր ներքև սարալանջին վերայ, որի մէջ կայ մի շուքարան ծառ: Մատրանս մօտ ևս կայ հանգըստարան:

ԽԵ. ՆՈՐ-ՇԷՆ. Հիմնուած է Հացի գիւղի արևելեան կողմում, մի բարձր սարի ստորոտի մօտ. դիրքն արևելահայեաց. բնակիչք գաղթած Ղարագաղից, Կիւլտանից, Կուսապատից, Բանանց գիւղից և Ծամ-ձորից. հողն բէկական, խիստ սակաւ, անջրդի, բայց այգեւէտ, բարեխառն օդն և կլիման, սննդարար ջուրն, երկար կեանք 95—105. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, խիստ վտանգուած, քահանայ մի: Ծուխ 70. ար. 272. իգ. 205:

ԽԶ. ՀԱՑԻ ԳԻԻՂ. Հիմնուած է Կղարծի գիւղի հիւսիսային և Նոր-շէնի արևմտեան կողմում մի խոր ձորի հարաւարևելահայեաց լանջի վերայ (լանջիս ետևն—արևմտեան կողմն քարեայ բարձր սար է [1]) բնակիչք քնիկ, հողն արքունի, բարեբեր, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման և գովելի ջուրն, բայց խեղդուած տեսարանն լեռներով, երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ, շինուած հասարակութեան ծախքով, քահանայ երկու՝ հայր և որդի: Ծուխ 143. ար. 545. իգ. 450:

ԲՈՒ ԵՂՑԷ (եկեղեցի)

Այսպէս է անուանում ժողովուրդն այն ընդարձակ և հին հանգստարանը և եկեղեցիները, որք կան գիւղից ներ-

[1]) Որ ունի 3829 ոտք, կոչուում է Պակեսբերք Վարանդի:

քև ջրաձորի ձախ ափի ճանապարհի գլխին: Հանգստարանիս մէջ կայ երկու մատուռ, երեք բեմ և երկու եկեղեցի: Մատուռների և եկեղեցեաց մէջ նստած են յատկապէս վանահայրեր: Կարծում ենք որ Աղուանից թագաւորազների և իշխանազների մարմիններն ամփոփուած լինին այս առանձնապէս պատրաստուած շինութեանց մէջ և աղօթաւոր վարդապետներ կարգուած պաշտօնապէս: Այսպէս էին Խոթայ, Խաթրոց, Գանձասարայ, Եղիշառաքելի, Հոռեկայ և այլն վանքերն ևս:

Ա. մատուռն փոքր է և լանջի ստորոտում: Խաչազարդ է մատրանս արևմտեան արտաքին ճակատն և խոնարհուած ամբողջ գլխի ծածքն, որի դրան հիւսիսային սեմին վերայ.

«Զ. Շահէն վարդապետ հկեղեցոյս յիշեցէք ի Տէր»: Աջ-տաքուստ դռնից վերև. «.... քահանայ և եղբայր իմ Վարհամ և Վարհայր... ունափա շինեցաք զեկեղեցիս բաղում աշխատանաւք յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսին և տէր Ներսիսի յիշատակ հոգոց ազգաց և ծնողաց մերոց, որք կարդայք, յաղաւթս յիշեցէք աշխատողք եկեղեցոյս»:

Բ. մատուռն, որ ողջամբ կանգուն է, ունի 6 մետր 50 սանթիմ երկարութիւն, 4 մետր 12 սանթիմ լայնութիւն և սիրամարգի պատկերներ և սոյն արձանագրութիւնը. «Զխաչենիկ վարդապետ սուրբ եկեղեցոյս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս»:

Ա. բեմն շինուած է Ա. մատուռից փոքր ինչ վերև: Բեմիս բարձրութիւնն 3 մետր 58 սանթիմ է, լայնութիւնն՝ 3 մետր 22 սանթիմ, հաստութիւնն 1 մետր 85 սանթիմ, որի արևմտեան ճակատում գետեղուած են չորս գեղեցկաքանդակ խաչարձաններ: Հազար ափսոս, որ ժամանակի մշտագործ մուրճն հարուածելով եղծած և թափած է խաչարձանիս ընդարձակ արձանագրութիւնը, այսու ամենայնիւ արտագրում եմ պակասները լցուցանելով կէտագրութեամբ:

«ՆԱ. թիւս..... տէր Վարթ..... ի տարին Ի. ժամ..... աղտատե..... անէաքս..... մեր սու..... աղաչեմ»:

Հիւսիսայինն կողմի վերայ.

«Ես Խաչենե.. կանգնեցի վարդապետ սուրբ Նշանաւս որդի Վարհամա, որք կարդէք (կարդայը) յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս»։

Բ. բեմն շինուած է առաջնոյն հարաւայինն կողմին մօտ, որ ամեն ինչով նման է Ա-ին.

«..... իւրո մա..... Մխիթարս ոմ այրեցայ.... բենա... ասվաքչին զիսն պատյի.. տէր.... Մնպատա ոչ յիսա զգերլելոց..... ի թարա է մին պետ.... ի մինսն պատ..... սուրբ աղաւթս ձեր....»։

Գ. Բեմն, որ փոքր ինչ հեռի է Բ-ից, յար և նման է միւսերին. թափուած են իւր միջի երկու խաչերի նախշերն և տեղ տեղ արձանագրութեան բառերից գրեր.

«Թվ. ՉԾ. Թ... ի կաթուղիկոսութեան տէր լստեփաննոսի և յեպիսկոպոսութեան հայր տէր Ներսէսի Աստուծով մեր եղբարցս... ուց այդ եղայ Վարդս.. այար կաթ.... բամիկս.. յորդեացս..... և ծնողաց մերոց... աղգականաց... բար....»։

Ա. Եկեղեցին հիմնուած է հանգստարանիս հիւսիսայինն կողմում, բարձր հարթակի վերայ շինուած սպիտակ անտաշ քարով։ Ունի և գաւիթ իւր արևմտեան կողմին կից, երկուսն միասին չափելով երկարութիւնն 14 մետր 75 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 20։ Ունի և սոյն արձանագրութիւնը.

«Թվ. ՉԾԹ... ի տէրութեան.... տր Ստեփանոսի յե.... սիսի (յեպիսկոպոսութեան Ներսիսի) Ես մխիթար որդի... կանգնեցի զխաչս»։

Բ. Եկեղեցին, առաջնոյն արևմտեան կողմում մի քանի քայլ միայն հեռի. փոքր է և ամբաշէն։ Շատ կարելի է որ պատուաւոր ամփոփեալները լինին եկեղեցեացս և մատուռներիս մէջ և մանաւանդ գաւթումս, բայց ծածկուած լինին թափուածքների ներքև, քանզի խիստ անմաքուր են յատակներն։ Արձանագրութեանց մեծ մասն եղծուած են թէ տապանաքարելի և թէ խաչարձանների վերայից։ Թողում ասել

ջարդած, կոտրած և փշրած շէրմաքարերը, որոց թիւն խիստ մեծ է և որոց վերայ կան արձանագրութիւններ, բայց անվերծանելի, զի անյայտացած են կոտորներն։ Վերջին եկեղեցուս մօտերքում մի ջարդուած քարի վերայ.

«Այս է տապան խմիչի որդուն Սարքիսին. էն ժամանակն որ Պապա Ուշաղին թվ. ՌՃՀԴ. որ եկն, ես թապուդի առաջք տուտզ իլի (դուրս ելայ). այանին ճդումն (պարանոց) ապանեցէն, հերբերանցս Ա[ստ]ծոյին, Հերիքիս [1]»։

Խէ. Ս.ՎՏՈՒՌ ԳԻՒՂ. Հիմնուած է Հացի գիւղի արևմտեան կողմում մի ձորի երկու լանջերի վերայ. բնակիչք բնիկ. հողն բէկական, անջրդի, բազմարգիւն և պտղաւէտ, պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 90. եկեղեցին սուրբ Աստուածածին, կամարակապ, որը իւրեանց ծախքով շինել տուած են մեծ. Սարգիս-բէկ և Յարութիւնբէկ Ղազեանց, քահանայ մի։ Ծուխ 125. ար. 477. իգ. 370։

ԽԸ. ՄԻՒՐԻՇԵՆ. Հիմնուած է Ավտուռի արևմտեան կողմում. դիրքն արևելյահյեաց լանջ, բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն, նմանապէս օդն, կլիման և ջուրն և երկար կեանքն, եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, թաղակապ, քահանան գալիս է Ավտուռից։ Ծուխ 31. ար. 150. իգ. 130։

ԽԹ. ՄԻՒՐԻՇԱՒԼՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Աղուէ գաւառի դաշտաբերանում, բնակիչք տեղափոխուած Բէլուկան քաղաքից շատ վաղուց, հողն բէկական, բեղմնաւոր, տեղական բերքերն նոյն, օդն և կլիման ծանր ամրան, երկար կեանք 65—70, եկեղեցին սուրբ Գէորգ, խախտեալ, քահանան գալիս է Դահրազից։ Ծուխ 55. ար. 194. իգ. 175։

Ծ. ՎԱՐԱԶԱԲՈՒՆ [2]) ԳԻՒՂ. (Արանգամի) Հիմնուած է

---

[1]) Հարկ է բացատրել արձանագրութիւնս մթութիւնը, որ է այսպէս ըստ մեր կարծեաց. 1725-ին Սարգսի վախճանուած ժամանակ Արցախիս վերայ զօրքով եկաւ Պապա-Ուշաղին, ես դիմաւորեցի, բայց սպանեցին մայրս, հօրաքոյրերս—Աթայ և Հերիք։

[2]) Ոմանք կարծում են թէ այս եղած է Առանի ամարանոցն, նոյնպէս և Վարազ—Տրդատ և Վարազ—Գրիգոր իշխաններին, վասն որոյ կոչուած է Վարազաբուն—բուն Վարազ—Տրդատ իշխանի բնակութեան տեղին։

Ա. լեռնագօտու Աղուէ գաւառի դաշտաբերանի վերայ կախուած՝ արևելահայեաց վերջին լանջի վերայ. բնակիչք գաղթած Պարսկաստանի Ղարադաղ նահանգից. հողն բէկական, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրըն, երկար կեանք, 85—90. եկեղեցին սուրբ Աստուածածին, քահանան նոր վախճանեալ։ Ծուխ 155. ար. 540. իգ. 415.

Տղայոց միդասեան ս. Գրիգորեան ուսումնարան. աշակերտ 40, թոշակառու 38, տարեկան ռոճիկ վարժապետին 360 րբլի.։

ԾԱ. ՓԻՐ—ՁԱՄԱԼ [1]) ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի արևելահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, ոմանք տեղափոխուած Ջրաբերդից, սակաւք Հին—Քեաթուկից և Բէլուկանից, հողն բէկական, անջրդի, այգեւէտ, բայց հացատու, օդն, կլիման և ջուրն նշանաւոր. երկար կեանք 100, եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, որը կառուցանել տուած են իւրեանց ծախքով Շուշեցի բարեպաշտ Մահտեսի Շահկեալդին և Փիր-Ձամալեցի Հանգուցեալ Բաղդասար Շամխալեանն.քահանայ մի։ Ծուխ 146. ար. 475. իգ. 357։

Ղոքա ուխտատեղի

Գիւղիս անդումն է այս անուն ուխտատեղին, այս է երկու փոքրիկ մատուռները, որոց մէջ, ասում են աւանդաբար, թէ ամփոփուած են նահատակուած *Փիրու և Ճամալի* մարմիններն, վասն որոյ ուխտատեղի է յարգուած ոչ միայն հայերից, այլ և մահմետականներից։

ԾԲ. ՆԱԽԻՋԵՒԱՆԻԿ ԳԻՒՂ. Հիմնուած նոյն սարի արևելահայեաց լանջի վերայ, բնակիչք գաղթած են Հին-Նախիջևանի կողմից, հողն բէկական, կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն միևնոյն, բարեխառն օդն և կլիման և աննդաբար ջուրն, երկար կեանք 80 տարի, եկեղեցին Սուրբ Աս-

[1]) Աւանդութիւն. Ասում են. «Հարազատ եղբարք են Փիր և Ճամալ. երկուքն ևս հաստատ Ճեալով իւրեանց լոյս հատարքի վերայ՝ նահատակուում են անօրէններից։ Ցետոյ երկու եղբարցս անուամբ կոչուում է գիւղս Փիր-Ճամալ։ Իսկ սոցա քոյրն նահատակուած է Նախջուանիկ գիւղի հիւսիսային կողմում»։

տուածածին, քարուկիր բայց խախտուած, քահանայ երկու։ Ծուխ 193. ար. 618. իգ. 521։

Նահատակուն

Գիւղիս և Ասկեարան բերդի միջև կայ մի ուխտատեղի, որի մասին ինչպէս ասացինք, Փիրու և Ճամալի քոյրն է, որպէս վկայում է աւանդութիւնն։

ԾԳ. ՆՈՐ-ՔԵԱԹՈՒԿ. Հիմնուած է միևնոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, Ասկեարանից բարձր մի ձորի գլխին, բնակիչք ամենամեծ մասամբ տեղափոխուած Հին-Քեաթուկից, հողն արքունի, կիսով չափ լեռնային և անջրդի և կիսով չափ հովտային և ջրարբի (Գարգար գետակից), տեղական բերքերն նոյն (չիք այգի, առատ են թթենեաց պարտէզները), օդն, կլիման և ջուրն վնասակար, տենդաբեր և մահատու, երկար կեանք արականաց նկատմամբ 50, այրի կանայք բազմաթիւ, եկեղեցին Սուրբ Աստուածածին. քարուկիր, կամարակապ, քահանայ մի։ Ծուխ 25. ար. 60. իգ. 64։

Հին-Քեաթուկ. Մօտ կէս մղոնաչափ վերև է աւերակս, որ ունի ընդարձակ ծաւալ։ Աւանդութիւնն ասում է թէ 400—500 ծուխ եղած է Հին-Քեաթուկս, բայց ներկայ դարուս սկզբում՝ ստիպեալ սովի և ժանտախտի անողորմ երեսից՝ գաղթում և տեղափոխուում են գանազան տեղեր, որպէս տեսանք։ Այժմ մնում է աւերակ եկեղեցին և մեծ հանգստարանն։

Սպիտակ-Հէօլ (ուլ այծի) այսպէս է անուանուում այն աւերակ եկեղեցին, հանգստարանն, որ գտնուում է Հին-Քեաթուկի մօտ։ Ուխտատեղի են նոյնպէս թէ աւերակ եկեղեցիս և թէ *Զինաւոր* կոչուածն, որ փոքր ինչ վերև է իւր հանգըստարանով Սպիտակ-Հէօլիցս։

ԾԴ. ԴԱՀՐԱԶ-ԳԻՒՂ. Հիմնուած է Միրիշալլուից բաւական վերև, դիրքն արևելահայեաց, բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն (այգի չունին), պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 95—100, եկեղեցին Սուրբ Աստուածածին, որ շինուած է հանգուցեալ Դաւիթ

Ադամեանի և Բաղդասար Սողոմոնեանի ծախքով, կամարակապ և գեղեցիկ, քահանայ մի։ Ծուխ 65. ար. 249. իգ. 214։

Ծե. ՓՈՒԱՍՆԻ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն իսկ Պողրխան սարի հիւսիսային ստորոտում, բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն (բացի այգուց և բոժոժից), բարեխառն օդն և կլիման և աննդարար ջուրն, երկար կեանք 80, եկեղեցին Սուրբ Հռիփսիմէ, քարուկիր. քահանայ մի։ Ծուխ 50. ար. 207. իգ. 168։

ԾԶ. ԴԱՇՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Քռասնու արևմտեան կողմում, գիրքն արևմտահայեաց, բնակիչք բնիկ. հողն արքունի, աւազուտ, անօգուտ. տեղական բերքերն՝ ցորեն, գարի և կորեկ, բարեխառն օդն և կլիման և անվնաս ջուրն. երկար կեանք 70—75, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քահանայ մի։ Ծուխ 40. ար. 245. իգ. 125։

Սուրբ Սրաբեկ. Ուխտատեղի նահատակ գիւղիս հիւսիսային կողմում։ Թափուած քարերից երևում է, որ հնուց մատուռ եղած է նահատակիս վերայ, բայց կործանուած է հիմնայատակ։ Այժմ ծերունի ծառերի փառաւոր հովանուտակ շարուած են չոր քարեր իբր պատ, որի մէջ գրուած է մի հնաշէն քարեայ խաչ միջակ մեծութեամբ՝ յենած մի մեծ ծառի։ Ահա խաչս է ուխտատեղի, որի ուխտաւորն ամառ, ձմեռ անպակաս է, մանաւանդ Շուշուց, որ շատ հեռի չէ։ Նշանաւոր է արդարև Սրաբեկիս աղբիւրի ջուրն, որի մօտ կայ մի քանի սենեակ։

Ներքի-շէն և Սողոմոնի շէն աւերակներն, որոց բնակիչք փոխադրուած են Շուշի 1860-ին, կան Գարգար գետակի աջ ափի բարձրութեան վերայ։ Սակայն տակաւին մնում են Ներքի-շէնի կիսաւեր եկեղեցին, հանգստարանն և թթենի ծառերն։

ԾԷ. ԴՈՆԱՎԱՐՋ ԳԻՒՂ. Հիմնուած է Պողրխանայ սարի հարաւ արևմտահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն արքունի, աւազուտ, անջրդի և սակաւ արդիւնաւէտ, տեսարանն գովելի, տեղական բերքերն նոյն բացի այգուց,

պարտիզից և բոժոժից, ամրան ջերմ օդն և կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 90—100, եկեղեցին Սուրբ Աստուածածին, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն 17 մետր 60 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 90 սանթիմ, հիմնարկուած Հայոց ՌՄՂ. թուականին, քահանայ երեք։ Ծուխ 128. ար. 466. իգ. 362։

Տղայոց միդասեան ուսումնարան, աշակերտ 65, թոշակատու 60, տարեկան վարժապետին 250 րուբլի։

Աղին Նահատակ

Գիւղիս հիւսիսային կողմում մի բլրակի վերայ անտաշ քարով շինուած է շատ հնուց մի փոքրիկ եկեղեցի, որ կոչուում է այս անուամբ։ Երկարութիւն 7 մետր 94 սանթիմ, լայնութիւն 5 մետր 12 սանթիմ։ Խաչազարդ է բեմի ժողովրդահայեաց երեսն և հանգստարան եկեղեցուս շուրջն, ուր կայ և մի սենեակ, իսկ բլրի վարի կողմում գիւղատեղի։ Խաչարձանին վերայ, որ թեքուած է տաճարիս արևելեան կողմում. «Ես Սահակ կանգնեցի զխաչս»։ Սենեկի վերայ. «Ես Աղամս Աստուծով սուրբ խաչս կանգնեցի»։

Բեմ

Եկեղեցուս փոքր ինչ վերև է սրբատաշ չիչ քարով շինուած բեմն, որ ունի երեք մետր լայնութիւն, 2 հաստութիւն և 5 մետր բարձրութիւն։ Բեմիս արևմտահայեաց ճակատում գետեղուած է երեք դեղեցկաքանդակ և նրբագործ խաչարձան, որոց վերև գրուած է.

«Թվ. ՇԻ. կամաւ ամենակալին Աստուծոյ ես... Գրիգոր... Աստուծոյ միաբան եղբարքս լա... զխաչս իշխանութեան.. և հայրապետութեան.. Օհանէսի տէր Ներսէսի ո... աղաւթեցէք»։

ԾԸ. ՇՕՇՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է մի հիւսիսահայեաց ձորի աջ ու ձախ լանջերին վերայ, որ կայ Շուշի քաղաքի արևելեան և Դռնավարզի արևմտեան կողմում, Գարգար գետակի հարաւային օժանդակ վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակչաց փոքր մասն բնիկ. մեծ մասն տեղափոխուած

Մէլիք-Բաղու հետ Սոթիից, մի քանի ծուխ Զրաբերդից և մի ծուխ Պարսկաստանից, հողն արքունի, ամենաոսկաւ, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, կայ և թթենի, օդն, կլիման և ջուրն պատուական. երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն 17 մետր 50 սանթիմ, լայնութիւնն 10 մետր 60 սանթիմ, քահանայ երեք. հիւսիսային կամարի վերայ ներքուստ «ՌՃԻԸ»։

Դրան ճակատակալ քարին վերայ.

«Փորր ծոմով ուր պա.. հասայ քև Տէր. ոտարք չինեցյաք զՍուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց և ննջեցելոց ի հայրապետութեան Սպուանիցս տեառն Երեմիայի.. և ի մերոցս նահանգի աթոռն, որ Ղույ (?) տէր Գրիգոր և տէր Դաւիթ եպիսկոպոսաց. ես մեղաւորս տէր Դաւիթ էրեցս եղէ պատկառ յիշ (ատակի) ի Տէր հանդերձ ԾԵ. քահանայիս, զտէր Աւաքել քահանայն յիշեցէք ի Տէր, թվ. ՌՃԳ. էր, յաղաւթս յիշեցէք։ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն»։

Երևի թէ Սոթիից և Մազրայից եկած *ոտարք*—օտարք—հայերն շինած են եկեղեցիս *Ամենափրկիչ* անուամբ, բայց օծողն անուանած է ՍուրբՍտեփաննոս։ Ծուխ 367. ար. 1248. իգ. 1100։

Հին-եկեղեցի. գիւղիս հիւսիսային հանդէպ ձորի միւս կողմում կայ մի հնաշէն և խարխլուած եկեղեցի, որի արևմտեան լուսամուտի մէջ մի խաչքարի վերայ։ «Թվ. ՋԷ. (1458) ես Ղոչ սարկաւագ գոյարեցի (կանգնեցի՞) խաչս Սղիղա մաւր իմ»։ Վաղեմի և ընդարձակ հանգստարան է եկեղեցուս շուջն։

Պըլը-Պուղու գերեզմանն.

Գիւղիս արևմտեան կողմում, մի փոքր քարայրի մէջ, որ գրեթէ սահման է Շօշու գիւղի և Արկաթալու շէնի հողերին, ամփոփուած է Պըլը-Պուղու մարմինն, որ գուարճաբան էր Մէլիք-Շահնազար Գ-ի մօտ։

ԾԹ. ԱՐԿԱԹԱԼՈՒ ՇԷՆ, Հիմնուած է Պըլը-Պուղու գերեզմանի հարաւ-արևմտեան կողմում մի հովտանման ձորա-

կում, որ շատ հեռի չէ. բնակիչք բնիկ. հողն արքունի. տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80—90. եկեղեցին Սուրբ Աստուածածին. քահանայ մի։ Ծուխ 26. ար. 120. իգ. 108։

Կ. ՀԻՒՆՈՑ ՇԷՆ (Հուն ալաղի անուամբ) Հիմնուած է Գարգար գետակի հարաւային օժանդակի ձախ ափի վերայ, մի սարսափելի խոր ձորում, որի գլխին է Շուշի քաղաքն և խիստ նեղ է հօրիզոնն. բացի ջրաղացներից չունին ուրիշ և ոչինչ։ Ծուխ 19. ար. 70. իգ. 60։

ՀՈՒՆՈՑԻ ԿԱՐԱՆ (քարայր)

Երկար դարերի ընթացքում օժանդակս միջից ճեղքած է այն ապառաժ քարեայ սարը, որ միացած է եղել Շուշու սարի հետ։ Հետզհետէ խորացնելով այս ջրատար ճեղքը շինած է մի կատարեալ անդունդ։ Նեղ, խոր և ահարկու ճեղքուածքիս երկու կողմերն ձևացած են անձեռագործ, բայց յաւիտենական պարիսպներ։ Օժանդակ վտակիս ձորին երկու կողմերում ևս կան շատ *քարայրներ*, որոց առաջինն գտնուում է Հունոտի մօտ, օժանդակիս աջ ափի բարձրութեան վերայ։ Մի նեղ, զառիվեր և միանգամայն վտանգաւոր քարեայ կածան առաջնորդում է դէպի քարայրն։ Սոսկալի է կածանիս վտակի կողմն. Տէրն մի արասցէ, եթէ սահեց կամ մի փոքր ծռուեց ոտքդ, թաւալգլոր կորած ես մութ անդընդում։ Քարայրիս առաջին մուտքն որ քարուկիր է, ներկայացնում է պահասլանի կամ դռնապանի բնակարան, երկրորդ տեղն ծառաների, իսկ երրորդն ընդարձակ և գեղեցիկ քարայր է, որ է իշխողի բնակարանն։ Քարայրիս մէջ կայ և ազնիւ ջուր։

ԿԱ. ՔԱՐԻՆ-ՏԱԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Շուշի քաղաքի հարաւային ստորոտում, նոյն օժանդակի ձախ ափի վերայ, մի խոր ձորում. բնակիչք տեղափոխուած Բերդաձոր գաւառի Խցաբերդ գիւղից. հողն արքունի, բայց կարի սակաւ և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն ցորեն, գարի, կորեկ, գարնանի, սորեկ, հաճար, թթենի, ունին և ջրաղացներ, բարե-

խառն օդն և կլիման, պատուական ջուրն, բայց խեղդուած տեսարանն և նեղ հօրիզօն. երկար կեանք 80—85. եկեղեցին Սուրբ Աստուածածնայն, քարուկիր և հոյակապ, քահանայ երկու: Ծուխ 174. ար. 625. իգ. 443:

Բ. Աւանայ-կարան—քարայր—որ կայ գիւղիս հիւսիսային հանդէպ Աւանայ քերծում: Մուտքն կլորակ է, բայց դժուարաւ բարձրանալի. խիստ խոր, սոսկալի մութ և բաւական երկար է քարայրս, որի ծայրն հասնում է համարեա թէ մինչև Շուշու տակն, այս է Կոհար-ազայի տան տակն: Առանց լապտերի անհնարին է մտնել և յառաջ գնալ, քարայրիս բունաշունչ հողմն անցուցանում է մոմը: Քարայրիս խորքումն ևս կայ ջուր (16):

Գ. Ալեքսանայ ղուզուն կարան

Դ. Շուղունիկի կարան (աղաւնու քարայր). որք կան նոյն օժանդակի աջ կողմի բարձր լանջերի վերայ:

ԱՄԱՐԱԹՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ [1])

Դարձեալ գժուարամատչելի և հին քարայրներ են, որոց առաջքն պատուած են տեղ տեղ և գտնուում են նոյնպէս նոյն վտակին աջ կողմի բարձրութեան վերայ: 1886 թուին մի կատաղի վագր գալիս և մտնում է քարայրներիս մէջ. յանյայտ մնում է մի քանի օր, ապա յայտնուում և սարսափ տարածում առհասարակ գիւղականաց և քաղաքացիների վերայ, ապա անսպասելի կերպով յանկարծ մի գիշեր յայտնուում է Գանձակում և վերջապէս մի օր սպանուում Ջաբրայէլում:

Պակաս չեն աւերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարան Ջուխտում և սորա շրջականերում:

ԳԱԻԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ.

Ա. ԲՐԴԱՀՈՆՋԻՆ (բերդաւանչ) ՂԱԼԱ (3300)

Զորս կողմերից առանձնացած և ձուաձև բարձրացած մի սար է բերդատեղիս, որ կայ Ներքին-Թաղավարդի արևելեան

[1]) Նշանակում է *պապանների շինութիւն*:

հանդէպ, որի արևմտեան, հարաւային և արևելեան կողմերն սեպացեալ վիմահերձեր են գագաթին մօտ, իսկ հիւսիսային կողմն սարսափելի զառիվայն: Զառիվայր կողմովս վիմահերձից վիմահերձ ձգուած է կրկնապարիսպ, արտաքին պարիսպն ունի և բուրգեր: Ամրոցս ունի միայն մի դուռն արևելեան կողմից, որից մտնելով ուղին պատում է հիւսիսից, ապա մըտնում միջնաբերդն: Այժմ գրեթէ անվնաս մնում են պարիսպներն ամուր շինութեան պատճառաւ: Բերդիս մակերևոյթն չունի հարթութիւն, այլ անհարթ է սարի ձևովն: Միջնաբերդում նշմարուում են բնակարանների շատ բակեր: Արժանի է բերդս *անառիկ* տիտղոսին. միայն ափսոս որ չունի ջուր իւր մէջ: Բայց բերդիս արևելեան ստորոտում կայ մի աղբիւր, որի ջուրն աննման է: Ահա ջրից բերած և լցրած են այն աւազանների մէջ, որ կան բերդումս: Այժմ անտառապատ է թէ բերդիս ներսի և թէ դրսի կողմերն:

Բ. Բերդն է *Աւետարանոցն*, որի մասին արդէն խօսած ենք:

Գ. Բերդն է *Ղալին-Խութ* (բերդասար) կոչուածն (17), որ ընկած է Կիշու, Մշկապատի և Կիւնի-Ձարտարի միջև: Բաւական բարձր է բերդասարս (3735), որի հարաւային և արևմտեան կողմերն անմերձենալի քերծեր են, իսկ արևելեան և հիւսիսային կողմերն պարսպաւած են ամուր պատով առանց բուրգերի: Այժմ տեղ տեղ աւերուած են պարիսպներն: Ամրոցիս մակերևոյթն, որ այժմ հերկուում է, տանում է մօտ 14 չուալ [1]) սերմացուրեն: Հարթ է ամրոցիս մակերևութի հարաւային մասն, իսկ փոքր ինչ լանջ՝ դէպի Կիշի թեքուած՝ հիւսիսային մասն: Այս մասի մէջ՝ պարսպի ստորոտումն է աղբիւրն, որ ունի գերազանց ջուր, որից տարած և լցրած են ջրաւազանները ի պաշար պատերազմի: Քերծերիս մէջ պակաս չեն քարայրներ:

Դ. *Աղջկայ քերդ* (Ղզղալա)

Աղուէ գաւառում դաշտաբերանի վերայ արձանացած է մի

[1]) Մի չուալն հաւասար է 7 փութի:

բարձր սար, ոչ առանձնացած է բոլորովին ամեն կողմերից։ Սարիս Հարաւային հանդէպ է Ղզղալա գիւղն և իւր ստորոտում նոյն գիւղացւոց կալերն։ Սարիս արևելեան, հարաւային և արևմտեան կողմերն վիմահերձ և սարսափելի բարձր ժայռեր են. իսկ հիւսիսային կողմն սաստիկ զառիվայր, որի ստորոտով փորուած է հնուց խիստ խոր և լայն խրամ և տեղ տեղ պարսպուած, ինչպէս երևում է հետքերից։ Սարիս կատարի հարթակին վերայ շինուած են ստորերկրեայ շատ շինութիւններ, որք կարծես թէ հաղորդակցութիւն ունին միմեանց հետ։ Բերդիս գիւղահայեաց լանջի վերայ, շինութիւններից ոչ այնքան հեռի, երեք տեղ մօտ առ մօտ շինուած են երեք վիմափոր ջրաւազաններ, որք ունին բաւական մեծութիւն և խորութիւն։

Խեցեղէն խողովակների շարունակութեան հետքն Ղզղալա գիւղից եղած է մինչև բերդիս ստորոտն—կալերի մօտ. աւանդութիւնն ասում է որ «Եմիշջան գիւղի արևելեան կողմից խողովակներովն ջուր բերուած է բերդս»։

Հիանալի տեսարան ունի բերդս, հիւսիսային և արևելեան կողմերում տարածուած է Արցախեան—Գարգարացւոց լայնատարած դաշտն, արևմտեան և հարաւային կողմերում Ղզղալի, Աշանի, Մեծ-նահատակի և Խաչեն գաւառի ստորին լեռներն և Տիգրանակերտ գաւառն։

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ (50 0 տաք)

Հիմնուած է մի բարձրագոյն սարահարթի վերայ, որ գրեթէ առանձնացած է իւր չորս կողմերից։ Լայն հօրիզօն և անդնդախոր ձոր է հիւսիսային և արևմտեան կողմերն. որից հոսում է բուն Գարգար գետակ. հօրիզօնն նեղ, վիմահերձ սարսափելի խոր ձոր է քաղաքիս արևելեան և հարաւային կողմն, որից հոսում է Գարգար գետակի օժանդակն, լայնատարած վիմահերձ և խոր երևոյթ ունի արևմտեան և հարաւային կողմերի միջավայրն—քաղաքի արտաքին կողմն. իսկ սաստիկ զառիվայր է արևելեան և հիւսիսային կողմերի միջավայրի տարածութիւնն՝ պարսպից դուրս։ Այլպէս գրե-

լով երեք կողմերն բարձր քերծեր են, իսկ չորրորդ կողմն պարսպուած զառիվայրի բերանով։ Անելորդ է գրել թէ քաղաքս կոչուած է և *ըերդ, ըերդաքաղաք* և *ամրոց*, որի մակերևոյթն զգալի կերպով թեքուած է հարաւային արևմուտքից դէպի հիւսիսային արևելք և որի տարածութիւնն պակաս է քառորդ քառակուսի մղոնից։ Համարուած է այս գաւառագլուխ քաղաք, որի մէջ նստած է գաւառապետ, հաշտարար դատաւոր իւրեանց պարագաներով հանդերձ։

Քաղաքիս գլխաւոր բնակիչներն են հայ և շիա-մահմետական. վերջիններս բնակում են քաղաքի ստորին մասումն։ Մեծամասնութիւնն կազմում են առաջիններն—հայերն, որք բնակում են քաղաքի վերնամասում և ունին չորս եկեղեցի։ Բայց որովհետև հայ տարրն հաւաքուած է քաղաքս չորս տեղերից, որք են Ղազանչի, Ագուլիս, Մեղրի և Արցախի գիւղերն, վասնորոյ եկեղեցիք բացի իւրեանց օծման անուններից, սովորաբար ունին և երկրորդական տնուններ, որք նախապատիւ տեղ բռնած են՝ Ղազանչեցւոց եկեղեցի, Ագուլեցւոց եկեղեցի, Մեղրեցւոց եկեղեցի և Նոր եկեղեցի և Անապատ կուսանաց։

Ա. Ամենափրկիչ մայր եկեղեցի Ղազանչեցւոց՝ շինուած է ամբողջապէս սրբատաշ կրաքարով՝ կառուցեալ խաչաձև չորս հաստատուն սիւների վերայ, հոյակապ և բարձրաշէն, լուսաւոր և փառահեղ և միանգամայն զարդարուն ներքուստ և արտաքուստ։ Երկու փոքր խորանների վերայ ունի այլ ևս երկու խորաններ։ Նշանաւոր է փայտեայ և ոսկեզօծ խաչկալն՝ որ յիշատակ է բարեհամբաւ Ծամհարեան եղբարց։ Ունի երեք դուռն՝ հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից, որոց վերայ արտաքուստ շինուած է երեք նոյնպէս հոյակապ և գեղեցկաշէն սրահ։ Երկարութիւնն է 34 մետր 75 սանթիմ, լայնութիւն 22 մետր 70 սանթիմ։

Հարաւային դրան գլխին արտաքուստ.

«Շնորհիւ և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ կառուցաւ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ և տրօք բարե-

պաշտօն ժողովրդականաց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքիս, որոյ շինուածքն սկսեալ ի 1868 ամի յաւուրս թագաւորութեան աստուածազօր ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Ալէքսանդրի Բ.-ի և ի հայրապետութեան Գէորգայ Դ.-ի, աւարտեցաւ ի 1887 ամի ի թագաւորութեան որդւոյ Նորին օրհնաբանեալ կայսեր Ալէքսանդր Գ-ի և ի կաթուղիկոսութեան Մակարայ Ա.-նոյ՝ ի 20 Սեպտեմբերի 1888 ամի»։

Տաճարումն կան հետեւեալ զրչագրերն.

Ա.. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, գրուած նրբագրուեստ ճաշակով և ընտիր ոսկեզօծ պատկերներով, որի լուսանցքներում նկարուած են Քրիստոսի բոլոր բժշկութեանց և հրաշագործութեանց պատկերներն։ *Ցիշատակարանից.* «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ նուաստ և յետին Նիկոդայոսի մեղապարտի ի թուաբերութեանս Աւքանաղեան և Աբեթական տումարի ՌՃԴ. և ըստ նորում շրջանի ԼԴ. և ի գալստենէ Կենարարին ՌՈԾԸ. (1658) ի ստոյգ և ընտիր աւրինակէ ևս առաւել համաբայիցն (զի գաղափար սորին էր ի ղրանէ Սուրբ Յովհաննէս աւետարանչին) ի յաշխարհիս Յոնաց.. ի քաղաքս Կաֆայ (Թէոդոսիա) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին... ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Խաչատուր աւրհնեալ քահանայապետի»։

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր տասնեւմի նրբագործ և ընտիր պատկերներով, համանման ըստ ամենայնի Ա.-ին։ *Ցիշատակարանից.* «Աստուածաւանդ սուրբ աւետարանս գրեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս ձեռամբ ոգնամեղ և անարհեստ Ղազար գրչի ի թուականիս մերոյ ՌՃԵ. Աւգոստոս ամսոյ է.»։ «Ես անարժան Ղուկաս ստացայ զսուրբ աւետարանս ի դուռն սուրբ Ամենափրկչին»։ Հուսկ յետոյ աւետարանս գնած է Ղազանչեցի Նարինն, որի բարեպաշտ ժառանգներն ընծայած են եկեղեցւոյս ՌՄԾԹ, թուականին Հայոց։

Գ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերները. *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋԻԲ. ի նահանգիս Վայո ձորո ի վանս Հերմոնի ընդ հովանեաւ ամբարձուղէս (չ) և գերաշնորհ սուրբ Լուսաւորչիս և սքանչելագործ սուրբ նշանիս աւ ոտն չնորհազարդ հրաբուխոյս մերոյ Սարգիս վարդապետիս, ձեռամբ Եսայի նկարողի սորին... նաև ստացող սուրբ աւետարանս Յետկար աղէն և կողակից Խաթուն...»։ «Վերջին ստացող աւետարանիս ՌՄԱ.. թվ. Հայոց Խաչլաբակեցի Միրզանց Սահակի որդի Գեորգին...»։

Դ. Աւետարան միջակ դերքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ. *Ցիշատակարանից.* «Արդ այսմ աստուածային.. մարզարտիս ցանկացան աստուածասէր և բարեպաշտ կանայք Աղութ Խաթուն և Շահդիշէն..... Արդ յանկ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնամեղ... երիցու Վարդանայ... ի քաղաքս՝ որ կոչի Վան... ի թուականութեանս Հայոց ՋԹ....»։

Ե. Աւետարան միջակ դերքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ. «*Ցիշատակարանից.* «Արդ՝ այսմ աստուածեղէն և երկնապարգև ցանկիս և լուսափայլ մարգարտիս ցանկացող ցանկացաւ աստուածասէր կինն Մուղալ Խաթուն և քոյրն իւր Շամչիղամարն և ետուն դրել զսա յիշատակ բարի հոգւոց իւրեանց և ծնողաց իւրեանց հօր Բաղդասարին և մօրն Սուլտան Մէլիքին.....։ Եւ արդ ես... սուտանուն քահանայ Վարդան... յանձն առի զաւետարանս և ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի ի քաղաքս՝ որ կոչի Վան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Վարդան քաջ զօրավարին ի թուականութեանս Հայոց ՋԾ. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, որ մին ամ է, որ նստաւ յաթոռ սուրբ Լուսաւորչին ի յԷջմիածին»։ Աւետարանիս սկզբում. «... կամաւն Աստուծոյ ես Մաղաքիա քահանայս գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց.... և ես Էչկիջանս դուստր Համբուլին և կողակից Ումիտին իմ կամաւորութեամբ.. ձախեցի զաւե-

տարանս Մաղաքիայ քահանային։.. Թվական Հայոց ՋՂԴ. էր և տանուտէր տարւոյն Առիւծն»։ Ապա աւետարանս գնում է Մալիջանն.. «ՌԽԹ-ին»։

Զ. Աւետարան մեծադիր, գրուած թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց անճաշակ պատկեր. *Ցիշատակարանից.*

«Արդ գրեցաւ ի Թվ. ՉԿԹ. զբազմամեղ գրիչ, կազմիչ և նորոգիչ»։ Սկզբում. «Կամաւն Աստուծոյ ես Եղիայ էրեցս, որդի իմ տէր Միլիքսեթ նորոգել տուինք զսուրբ աւետարանս ի յերկիրս Մաղայոդ ի գաւղն Արտաչիսի, թագաւորութիւն Շահ Աբասին, հայրապետութիւն տեառն մերոյ Յովհաննէս կաթուղիկոսին Թվ. Հայոց ՌԿԴ»։

Է. Աւետարան միջակ դիրքով, թղթի վերայ, գրուած է Արցախի Վարանդայ գաւառի Խաչմաչ գիւղում Աղէքսանդրը եպիսկոպոսի ձեռնով ՌԾԸ. Թուին Հայոց. իսկ ստացած է Թադէոս քահանան։ Բոլորովին անճաշակ են պատկերներն։

Ը. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, անյայտ թուականաւ և առանց պատկերի, միայն յայտնի է. «ի հայրապետութեան տեառն Նահապետ կաթուղիկոսի ի առաջնորդ Մարտիրոս պարոն տէր Հազարափրկչին արդ նորոգեցաւ յիշատակարան սուրբ աւետարանիս ՌՃԽ և Ե. Թվին... սուրբ Գրիգոր եկեղեցին ի գիւղն Գոմէր ի գաւառն Շահբունեաց ի յերկիրն Նախչուան»։

Թ. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ առանց յիշատակարանի, ունի միայն չորս աւետարանչաց հասարակ պատկերներ։

Ժ. Աւետարան փոքրադիր, թղթեայ, անյայտ գրողի անուն, թուականն և տեղն։

ԺԱ. Աւետարան փոքրադիր, թղթեայ, ընկած է բուն յիշատակարանի մի մասն, բայց գրուած է յետոյ. *Ցիշատակարանից.* «.....գրեցաւ ի գառն և վերջացեալ ժամանակի, որոյ (յորում) Լեկզին եկաւ Գանջոյ, Պարտոյ, Խաչենոյ, Վարանդոյ, Շաքոյ, Շամախոյ, Վարաստանոյ, Զակամայ չորեքանկիւն երկիրն, ամեն աստատակեալ աւերեցին։ Բաղում արիւն անմեղաց եղաւ (հեղաւ) երկրի, անթիւ գիրք և անմեղ գերիք անկան ի ձեռն անօրինաց։ Եկեղեցիք խախտեալ և խաւարեալ ամայի մնացին։ Երկրորդ Օսմանլուն եկաւ կրկին, բազում արիւնհեղութիւն եղև. գերիսն անթիւ եղև ի ձեռս Օսմանցոց վասն մեր ծուլացեալ մեղացն՝ սուք մեծ եղև քրիստոնէից ազգիս.... ՌՃՀԱ. Թվին մայիսի ԺԴ-ին ի գիւղն Արգաւն էր ի դուռն սուրբ խչխանաց.....»։

ԺԲ. Աւետարան փոքր, թղթեայ, առանց յիշատակարանի։ Այսպէս և մի գրչագիր *սաղմոս* (գողացած են յիշատակարանները։

Մասունքներ.

1) Մի քառաթև արծաթեայ խաչում գետեղուած են.
«Սուրբ *Կենաց Փայտն* է.
Սուրբ *Գէորգայ* մասունքն է.
Սուրբ *Թէոդորոսի* ,,
Սուրբ *Մեռկեռիոսի* ,,
Սուրբ *Մինասայ* ,,
Թվ. ՌՃԹ.»։

2) Մասն Սրբոյն *Գրիգորիսի* Աղուանից կաթուղիկոսի՝ մի արծաթեայ ոսկեզօծեալ աջում. որ ունի այս արձանագրութիւնն. «Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսին Թուին սրբոյ Լուսաւորչին. նորոգող սորա տէր Յովհաննէս որդի Տաւուքին Թուն Պաղդասարին, որ է որդի Մէհրապ պէկին տեառն Խաչենոյ Թվ. ՌՀ.»։ «Արուեսի Գալուստ»։ Հուսկ յետոյ գրուած է. «Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյլրամ բէկ Մէլիք Ջիմշիտեան Մէլիք Շահնազարովն ՌՄԿԱ. էր»։

Աւետաբուստ. եկեղեցուս արևմտեան գաւթի ճակատին գրուած է քարից շինուած Փրկչի գեղեցիկ պատկերն, որ աղօթում է։ Իսկ տանեաց խաչաձև շինութեան չորս կողմերի բարձրութեան վերայ գրուած են արձաններ՝ շինուած նոյնպէս քարից։

Արևմտեան գագաթին վերայ Փրկիչն գրկած է Խաչափայտը։

Հիւսիսային գագաթի վերայ կանգնած է սուրբ Յովհաննէս Մկրտիչն։

Արևելեան գագաթի վերայ պայծառափայլ արձանացած է խաչափայտն.

Հարաւային գագաթին վերայ ինչնում է Հոգին Սուրբ Աստուած։

Արտաքուստ արևմտեան գաւթի հիւսիսային կողմում ամփոփուած է Անդրէաս եպիսկոպոսի մարմինն, որի տապանաքարի վերայ քանդակուած է՝ թագ, գաւազան և իւր տիտղոսների ձևերն և արձանագրութիւնն. «Վիճակաւոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս Պօլսեցի վախճանեալ է 8 Սեպ. 1882 ամի ի հասակի 48 ամաց»։

Եկեղեցիս ունի իւր արևմտեան կողմում մի եռայարկ զանգատուն. գետնայարկի չորս անկիւններում դրուած են չորս հրեշտակապետաց քարաշէն, բայց ճարտարարուեստ, մարգահասակ բարձրութեամբ արձաններն, որք ահարկու տեսլեամբ փչում են փողերը։ Այս զանգակատունն յիշատակ շինուած է հանգուցեալ բարեպաշտ Աբրահամ Խանգամիրեանցն։

Եկեղեցիս ունի չորս քահանայ։

Ունի և ամուր շրջապարիսպ։

Ի. Ագուլեցւոց Սուրբ Աստուածածին եկեղեցին, հոյակապ, կառուցեալ չորս վայելչակերտ սիւների վերայ անտաշ քարով քաղաքի կետրոնում, ունի երեք դուռն—հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից. երկու գաւիթ հարաւային և հիւսիսային դռների վերայ. երկու փոքր, բայց գեղեցիկ կամուղիկէներ տանեաց արևելեան և արևմտեան գագաթնագծի վերայ և մի փայտեայ մեծ կամուղիկէ երկոցունցս միջավայրում. մի աւագ խորան և չորս փոքր խորան միմեանց վերայ, վերնատուն կանանց. 28 մետր 90 սանթիմ երկարութիւն և 17 մետր 50 լայնութիւն։ Բայց որովհետև ճաքած է գագաթնագծի երկարութեան համեմատ, վտանգով արտաքուստ յենարան պատեր հիւսած են նորից հարաւային

և հիւսիսային կողմերից։ Հարաւային դրան ճակատակալ քարին վերայ արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ Սուրբ Աստուածածնայ աւագ [1]) եկեղեցիս կառուցին արդեամբք և ծախիւք իւրեանց իշխանք աղեցիս հարազատ ազգք Զօհրապ Յովհաննէսեան, Մարկոս և Բաբա տէր Մատթէոսեան Թառումեանց ընդ որս և որդիք նոցա Յովհաննէս ազգին և Աւետիս ազգ ի յիշատակ և ի փրկութիւն հոգւոց իւրեանց և սոցա ծնողաց, ամուսնոց, որդւոց, դստերաց իւրեանց ամենից և առհասարակ ննջեցելոցն ի Տէր ի կայանս երկնից, ի 1822 ամի Տեառն»։

Եկեղեցումն կան հետեւեալ զրչագրերն.

Ա. Աւետարան միջակ մեծութեամբ, թղթեայ գրոցն է ոմն Եսայի. գրեցաւ «ի թուին Հայոց ՌՂԴ. ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Սուրբ Նահատակիս ի յերկիս Տայոց ի գեաւղս, որ կոչի Թաւուշ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բռնացաւ անօրէնութեան չարիք ի վերայ մեր ի հինէ Պարսից լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլար յաւրէնս իւրեանց»։

Բ. Աւետարան փոքրագիր, թղթեայ, չորս աւետարանչաց պատկերներով. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուիս ՉԾԷ. յանապատիս Ասպինկայ (?) ընդ հովանեաւ սուրբ յարութեանն և Սուրբ մօրս լուսոյ Աստուածածնիս յառաջնորդութեան Ստեփաննոս վարդապետի, գրեցաւ ձեռամբ Ղազարի սուտանուն կրաւնաւորի ի վայելումն Հայրապետի»։

Գ. Աւետարանս փոքրագիր, թղթեայ և անթուական. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկրիս Աղուանից ի գաւառիս Դիզակայ, ի գեաւղս, որ կոչի Թեղասեռ ի դուռն սուրբ Սարգսիս ի Շահ Սեփու երրորդ ամին ձեռամբ փծուն և անարհաստ գրչի՝ սուտանուն Մելքիսեդ երիցու և միաշունչ եղբարս իմոյ արքամիտ և հեզահոգի տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք և աւարտեցաք»։ Աւետարանս գերի ընկած է Պարսից Թաւրէզ քաղաքն. ապա Հայոց ՌՄԾԵ. Թուին գնած և յետ բերած է Արզրումցի պ. Մկրտիչ և յանձնած է Շուշեցի մահտեսի

[1]) Մինչև Ղազանչեցւոցն շինելն՝ այս էր աւագ եկեղեցին, այժմ Ղազանչեցւոցն է աւագ եկեղեցին։

Սրապիոն Շխեանցին...։

Դ. Աւետարան փոքրադիր, թղթեայ, անյայտ թուականաւ միայն յայտնի է. «Ի թվիս Հայոց ՌՂ. և ի հայրապետութիւն Սուրբ Էջմիածնայ տեառն Փիլիպպոսի նորոգեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Սարգիս կրօնաւորի՝ աշակերտ (ի) սուրբ աւետարանիս ի Սուրբ անապատս Զարեբայ և առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Դաւիթ եպիսկոպոսի».

Ե. Աւետարան փոքրադիր, թղթեայ և պատկերազարդ. *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ վարդապիթիթ և ոսկեզօծ սուրբ և աստուածաշունչ աւետարանս ձեռամբ մեկսաներիկ և տառապեալ Բարսեղ լոկ անուամբ քահանայի ի թուականիս Հայոց ՌՃԻԹ. ամին ամսեանն Սեպտեմբերի, որոյ էին աւուրք Ժ. ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէմանին և ի հայրապետութեան տանս Ադուանից տեառն Երեմիայի Սրբազան և Նորընծայ Կաթուղիկոսի ի յերկիրս Գեանջա ի գեօղս Քարահատ [1]) հովանեաւ Սուրբ Աստուածածնիս»։

Մասունքներ.

1) Մի արծաթեայ միջակ մեծութեամբ խաչի ակումն զետեղուած է մասն *կենաց փայտի.* իսկ թևերում մասն *Ղուկաս և Փիլիպպոս առաքեալների։*

2) Մի լուսամատաձև արծաթեայ զարդի մէջ.

«*Ա. Պանդալիոնի մասն.*

Բ Օսեփ Արեմաթացւոյն մասն.

Գ. Բարթուղիմէոսի ,,

Դ. Կենաց փայտն ,,

Ե. Անդրէասի մասն

Զ. Լուսաւորչի ,,

Է. Յովհաննու Մկրտչի մասն. Յիշատակ է Զարեբու Մկրտիչ վարդապետին և իւր ծնողացն Թվին. ՌՃՁԸ. փետրվարի»։

3) Մի արծաթեայ միջակ մեծութեամբ խաչի մէջ զետեղուած է *Թադէոս, Բարդուղիմէոս, Թովմաս առաքեալների*

[1]) Գարդման գաւառի Քարհատ գիւղն։

և ուրիշ սրբոց մասունքներ։ Տաճարս ունի չորս քահանայ։

Եկեղեցիս իւր արևմտեան կողմում ունի մի նորաշէն և շքեղ զանգատուն, որի երկու յարկերն արդէն պատրաստ է և մնում է պատրաստել երրորդ յարկն։ Ունի նաև սեփական կալուածք իւր հարաւային կողմում տասներկու խանութ և հիւսիսային կողմում տասնեւհինգ։

Գ. Մեղրեցւոյ եկեղեցի Սուրբ Աստուածածնին, հիմնուած քաղաքի վերի կողմին մօտ նոյն անուն թաղում, կառուցեալ անտաշ քարով չորս սիւների վերայ. բայց ո՛չ բարձրաշէն։ Ունի երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, որոց վերայ երկու գաւիթ, կանանց վերնատուն և տասն լուսամուտ. 24 մետր 75 սանթիմ երկարութիւն և 12 մետր 77 ս. լայնութիւն։

Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ.

«1838 Մահտեսի Պապայ Հախումեանց տոհմին չ'ունէր զղաւակ մարմնաւոր ինքեան՝ նախ քան զօրհասին պատրաստեաց կտակ՝ չինել զտաճար սուրբ եկեղեցւոյ մի երկնահանդոյն, որ տայ վերճեմել մարդկային սեռից ի բարին անհուն յանուն Տիրամայր սուրբ Աստուածածնին կենաց պատճառի յիշատակ հոգւոյն ընդ անցաւորին յայսմ աշխարհի նախ քան կատարել նոր նպատակի հողացաւ մարմին, որ աստ կայ եղեալ ի մէջ տաճարիս պերճ գերեզմանիս»։

Եկեղեցումն կան հետեւեալ գրչագիրներն.

Ա. Աւետարան փոքրադիր, գրուած թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ, բայց անճաշակ գրողն է ոմն Յովսէփ քահանայ. *Ցիշատակաբանից.* «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվին Հայոց ՊԿԳ. ի գրան սուրբ Խաչին և սուրբ Կարապետին և սուրբ Գրիգոր Լուսաւորչին.. որ կոչի Կաուց... ի հայրապետութեան տեառն Հայոց կաթողիկոսի տէր Դաւթի, Սուրբ Խաչի Ալամարա (Ալմամարայ) առաջնորդի և առաջնորդութեան սուրբ ուխտին Սուրբ Կարապետին.. արհիեպիսկոպոսին Մխարա.... արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն և ի նեղ ժամանակիս որ հարկապահան...

ղի կարի ձանձրացեալ եմք յանաւրինաց բռնութենէ, ի Ջրթէ, ի Թաթարէ և յայլ ամենայն.... Ես Մարտիրոս Նոր չինախիւս զաւետարան գնեցի յիշատակ ինձ և ծնողաց իմոց»։

Բ. Աւետարան միջակ գիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ, սակայն անճաշակ. *Յիշատակարանից.* «Արդ՝ գրեցաւ սուրբ տետարանս ի յերկիրս Մոգաց 'ի գիւղս Փասավանք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Գրիգորիս և սուրբ Կարապետիս ի թուականիս Հայոց ՋԻԲ. ամին ի Ղանուխիւն Ամթեցի Յասան բէկին և Խոնդքար Ըռամցին իրար առին»։ Աւետարանիս գրողն է Իսրայէլ անուն ոմն, իսկ ստացողներն են եղբարք Մարգարայ, Կիրակոս, Յովհաննէս և Դաւիթ։

Գ. Աւետարան միջակ գիրքով, անճաշակ պատկերներով, գրուած թղթի վերայ. «Թիւն ՌՄԾԷ, տէր Մեսրոպս գրեցի»։ Զունի յիշատակարան, գրուած է վերջում այլ գրողից. «Արդ եղև նորոգութիւն կազմի սորա ձեռամբ Յակոբի ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Մովսէսի ի գեաւղն Շուխի....»։

Դ. Աւետարան փոքրագիր, գրուած թղթի վերայ, որի գրողն է Յովհաննէս աբեղայ ոմն. իսկ գնողն է Մարիամ անուն տիկին ոմն. «Ես Մարիամս սուրբ աւետարանս առի տուի տէր Մովսէս քահանային»։

Մասունքներ.

Մասն *Յովհաննու Մկրտչի* գետեղուած մի արծաթեայ խաչի մէջ, որի վերայ գրուած է. «Յիշատակ է սուրբ մասունքս Ներքին Շենացունց [1]) եկեղեցուն Յովհաննու Մկրտչին, որ այժմս պատկանի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Մեղրեցւոց 1856»։

Եկեղեցւոյս քահանայ երեք։

Դ. Եկեղեցի Նոր-Թաղի [2]) Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, խաչաձև, առանց սիւների, թաղակապ. սրբատաշ քարով, որ

[1]) Մխենցն Ներքին-շէնն է, որի բնակչաց մասին ասացինք թէ փոխադրուած են Շուշի։

[2]) Հիմնուած է քաղաքի հիւսիսային կողմում, որ կոչւում է և Վերին Թաղի եկեղեցի։

ունի երկու դուռն հիւսիսային և արևմտեան կողմերից, մի գանգատուն և մի գմբեթ խաչաձևի վերայ, երկարութիւն (գանգատան հետ միասին) 27 մետր 70 սանթիմ, լայնութիւն 10 մետր 90 սանթիմ։

Տաճարումս կայ մի փոքրիկ գրչագիր աւետարան, գրուած մագաղաթի վերայ, որ չունի պատկերներ, բայց ունի գեղեցիկ գիր, մանր և անճաշակ նկարներ, նախշեր և ծաղիկներ.

Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկրիս մերում Կեղըայձոյ ի գեղն, որ կոչի Կից. ի դրանէ ՍուրբՍտեփաննոսի 'ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տէր Եղիազարու ի հովուապետութեան Ըստաթէի տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի և սորին սպասաւոր տէր Զաքարիա վարդապետի, ամէն։ Արդ գրեցաւ սուրբ աւետարանս թվ. ՌՃԼԳ. յունվ. Ժ. աւարտ սորա ի թագաւորութիւնն Պարսից Շահ Սուլթանի (Սուլէյմանի) և դիտող յերկրիս մերում զբաքդար Սուլդանն, որում չարչարանք կորուսուց յերկիրս, որ (որում) ետ Աստուած զերեք պատուհասն Հաճի Ալի խան սարդար (փոխարքայ) եղև, եկեալ Խ. Ռ. հեծելով բնակեցաւ ի քաղաքն Կանջայ և բազում աւերութիւն արար ի Հայոց աշխարհիս և յետ նորա զմարախն և զերաշտութիւնն և բազումք կորեան վասն անհնչութեան իւրեանց.... զարձեալ յիշեցէք զՇնաթաղու քահանայ զտէր Աւաքեն և զտէր Գրիգորն, որ եղև պատճառ սորին և տանուտէր Շապանն...»։ Յետ յետոյ գրած է ուրիշ ոմն.

«Կրկին յիշատակ է սուրբ աւետարանս Անդամէջցի Ծատուրի որդի Սիրականին, որ գերի էր անկեալ (աւետարանս) 'ի ձեռս այլազգեաց, վերոյ (գրեալ) Սիրականն ազատեաց և յետ (ետ) յիշատակ Անդամիջոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցոյն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի... գրեցաւ ի թվն. ՌՄԽԵ. (1796) սէպ. ԺԵ.»։ Հուսկ յետոյ գրած է.

«Յիշատակ ետու սուրբ աւետարանս Շուշա քաղաքացի Աւագ Դանիէլեան Ղազարեանցս Սրբոյն Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն յիշատակ հոգւոց մերոց, որոյ յիշեցէք զպատճառն

սորա, ղի այլոց կալայ (գնեցի յայլմէ)... Թուական Քրիստոսի հազար ութհարիւր ութսուն երեք ամի Ֆ. մարտի»։

Եկեղեցիս ունի չորս քահանայ.

ԱՆԱՊԱՏ ԿՈՒՍԱՆԱՑ.

Հիմնուած է մի սեռի վերայ (որ գրեթէ միջավայր է Մեղրեցւոց և Նոր-Թաղի եկեղեցիների) կամարակապ՝ առանց սիւների, որ ունի երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, իւն լուսամուտ և մի եռայարկ զանգատուն՝ որ պատկից է հարաւային կողմին։ Երկարութիւն տաճարիս 20 մետր է, լայնութիւն 9 մետր 45 սանթիմ։

Հարաւային դրան ճակատակալ քարին վերայ.

«Շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Աստուածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց Կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ և Պետրոսի Գրիգորեանք Բահադուրեանց ի թվին 1816 ամի»։ Միևնոյն բազմաշխատ Կոյս Հռիփսիմէն շինել տուած է զանգատունը առանց օժանդակութեան այլոց։

Անապատումս կայ մի գրչագիր աւետարան միջակ դերքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ, *Ցիշատակարանից.*

«Հաւատարիմ տանուտէրն Յակովբ և հայր իւր պարոն Գրիգորն, որ ստացաւ զսա (աւետարանս) ի հալալ վաստակոց իւրոց..... Եւ արդ ես յետինս ի գրչաց և անարժանս ի կարգաւորաց... Մկրտիչ աբեղայ հրաման առեալ ի պատուելոյ առաքելական բանէն... գրեցաւ սուրբ աւետարանս ի յաստուածաբնակ և հրեշտակաճեմ սուրբ ուխտս, որ Սալն Անապատ կոչիւր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Կարապետիս.... ի հայրապետութեան տեառն Սարգսի կաթուղիկոսի և ի թուականիս Հայոց ՋԼԴ. ձեռամբ... հաբեղայի...»։ Աւետարանիս կողքին գրուած է.

«Ցիշատակ է սուրբ աւետարանս Մայրապետ մենաստանի Կուսանաց Շուշու Վառվառեայ Բահաթրեանցին 1888 ամի 8 (ութերորդ ամսի) 31 ի Շուշի»։

Անապատս ունի մի ազնիւ, աշխատասէր տնտեսագէտ և խնամածու աբբասուհի, երեք սարկաւագուհի և մի նորեկ միաբանուհի։

Շուշումս է թեմական առաջնորդարանն. գրեթէ Աղուանից կաթուղիկոսութեան մահից վերջն քաղաքումս նստած են Արցախի թեմակալ առաջնորդներն՝ սկսեալ Բաղդասար մետրապոլիտից մինչև ցայսօր։

Շուշում կայ հայոց ծուխ 3016, ար. 7859, իգ. 5792, ար. ծն. 325, իգ. ծն. 281, երկորեակ 4, պսակ կոյս ընդ կուսի 138, այրի ընդ կուսի 17, այրի ընդ այրւոյ 15, միամեայ վախճանեալ ար. 179, իգ. 178։

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ջ. ԴԱՍԵՆ

Թիւ համօրէն աշակերտաց .	330
Թոշակաւոր	260
Ձրիավարժ	70

Արդեանց աղբիւրներն են

1) Թոշակադրամ աշակերտներից [1])
2) Մոմավաճառութիւնից.
3) Սրբադրամից
4) Ծննդեան վկայականներից
5) Պսակադրամներից
6) Տալարանից

Ընդ ամենն մօտ . 11000 րուբլի

Ելք

Տասնևչորս վարժապետաց և մի տեսչի
Տարեկան ռոճիկ . . . 11000 ,,

Ս. Մարիամեան օրիորդ. երկդասեան ուսումնարան

Թիւ համօրէն աշակերտուհեաց մօտ 200
Թոշակաւոր 165
Ձրիավարժ 35

[1]) Երեք աստիճանի բաժանուած է թոշակների քանակութիւնն, հարուստներն տարեկան վճարում են 12 ր. միջակներն՝ 8, իսկ երրորդ դասակարգն 4 րուբլի։

Նոյն են արդեանց աղբիւրներն

Վեց վարժապետաց և երկու վարժուհեաց
տարեկան ռոճիկ . . . . 3250 ր.
Փայտի, տան վարձուց, ծառայի և սպասուհու 300

Ընդ ամեն 3550 ր.

Քաղաքումս կայ նաև Ր էալական գիմնազիա. քաղաքական ուսումնարան և Օրիորդաց վարժարան:

Քամու խաչ

Քաղաքիս ստորին մասում, Թրքաց թաղում կայ մի հին քարեայ խաչ, որ կոչուում է *Քամու խաչ*, այս է *յօդացաւ հիւանդութիւնը ըժշկող խաչ*: Ուխտագնացութեան օրն է աւագ—չորեքշաբթի: Այս օր առաւօտեանից մինչև երեկոյ անպակաս է ուխտաւորն և այն խուռն բազմութեամբ:

Նահատակ

Քաղաքում եղած Հին—Հանգստարանի վարի կողմին մօտ կայ մի գերեզման, որ կոչուում է *Նահատակ*: Սորա տապանաքարի վերայ գրուած է. «Այս է տապան Թիփլիսեցի Նահատակ Անտոնին ՌՄԽԴ. ին: Ես Թիփլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս քարս հոկացի սէրս Նահատակին»:

Հանգստարանիս հարաւային կողմում

«Յարձանիս շիրմի ամփոփեալ դնի
Մարմին իշխանին Խաչեն գաւառի,
Վեհ իշխանազնեայ Դանիէլ Բէկի
Որդւոյ Մէլիք Բէկ իշխանապետի,
Ի տանէ հայկազն մեծ Ջալալ Դօլի
Տեառն Աբցախայ Հայոց աշխարհի,
Որ Ղարապաղայ կամ Շուշւոյ նահանգ
Նա սովորաբար արդ վերաձայնի,
Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի
Նահատակի աստ յամրոցիս Շուշի
Դառն տանջանօք Իմրահիմ խանի
Որ թշնամի էր Խաչին Քրիստոսի.
Ի ՌՄԽ. կանգնեաց զայս արձան

Վչտալի որդին այս նահատակի
Բաղդասար արհին տէր Մ՝ետրապօլիտն
Հասան Ջալալեանց արքունի հովուապետն
Աղուանից երկրին, որք հանդիպիք այսմ տապանի
Տուք հօրն և որդւոյն Աստուած ողորմին ի 1851»:

ՃԳ. ԽԱՉԵՆ ԳԱԻԱՌ. Սահմաններն են Գարգար գետակն, Քիրս լեռնաշղթայի շարունակութեան գագաթնագիծն, Թարթառ գետն, որից մինչև Խաչեն գետակն ձգուած Արծաթահանքի սարի գագաթնագիծն, որ անցնում է Ղազանչի գիւղի արևմտեան կողմից. և դաշտաբերանն, Խաչեն գետակից մինչև Գարգար գետակն:

Ա. ՂԱՅԻԲԱԼԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Շուշու արևմտահիւսիսային հանդէպ, Գարգար գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, լեռնային, անջրդի և սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն ցորեն, գարի, գարնանի, հաճար, կորեկ, խաշխաշ, (հազիւ է բաւականանում իւրեանց ուտելոյ) պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանայ երկու: Ծուխ 78. ար. 320. իգ. 260:

Բ. ԿԱՐԿԱՃԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Ղայիբալու և Խանքեանդու միջև մի բարձրահայեցիկ սեռի վերայ. բնակիչք բնիկ. հողն բէկական, անջրդի, խճային և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (պատուական վարունկն, սաւէտ, տեղական թթենի) երկար կեանք 90—100. եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր, քահանան գալիս է Ղայիբալուց: Ծուխ 61. ար. 215. իգ. 190:

Գ. ԽԱՆ-ՔԵԱՆԴԻ ԱՒԱՆ. Հիմնուած մի տափարակի [1] վերայ 1847 թուին Ռուսներից՝ իբրև զօրանոց: Հետզհետէ հեռանում է զօրքն այստեղից և մնում են միայն ամուսնա-

[1] Տափարակս պատկանում է Վարար-ակն գիւղի բնակչաց, որք փոխադրուած են Շուշի. բայց գիւղի աւերակն, քարուկիր եկեղեցին և հանգստարանն ճնում են Խան-քեանդու հիւսիսային ձորակի ձախ լանջի վերայ Վարար-ակն աղբիւրի մօտ:

ցեալ ռուս գերդաստաններ, և սակաւ զինուորականներ և ղազախներ: Նուշուց, Կարկաժան, Խանածախ, Պալլուճայ, Փահլուլ գիւղերից վաթսուն հայ գերդաստաններ գալով բնակում են այժմ Խան-քեանդում. ուր կայ փոշտ և գաւառական դատարան: Խարեխառն է օդն և կլիման, բայց ոչ պատուական ջուրն, երկար կեանք 70—75. Հայոց եկեղեցին քարուկիր, անկնունք և անարձանագիր. քահանայ մի: Ծուխ 60, ար. 160. իգ. 140:

Սուրբ Գէորգեան միաբանեան ուսումնարան տղայոց. աշակերտ 35, թոշակառու 28, ձրիավարժ 7, տարեկան ռոճիկ ուսուցչի 200 րուբլի:

Դ. ՓԱՀԼՈՒԼ ՇԷՆ. Շինուած է Խան-քեանդու և Ջամիլլու շինի միջև մի ձորում, որի հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմերն սարեր են. բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, անվնաս օդն և կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին փոքրիկ, քարուկիր, քահանան գալիս է Խանածախ գիւղից: 18 ծուխ, 66 ար. 42 իգ.

Ե. ՋԱՄԻԼԼՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Փահլուլի հիւսիս—արևմտեան կողմում, Խանածախի վտակի ձախ կողմում մի հովտի վերայ. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնիքից. հողն բէկական, տեղական բերքերն նոյն: բարեխառն օդն և կլիման, գերազանց ջուրն. երկար կեանք 90. հոգևոր պէտքերն կատարուում են Խանածախի եկեղեցում: Ծուխ 13. ար. 40. իգ. 31:

Զ. ԽԱՆԱԾԱԽ ԳԻՒՂ. Հիմնուած է Ջամիլլուի հիւսիս արևելեան կողմում մի բարակ ջրաձորի երկու ափերին վերայ, բնակիչք նախ Մեծ-Սիւնեաց Խանածախ գիւղից 1686-ին [1]) տեղափոխուում են Ջրաբերդ և յետոյ բնակուելիւն հաստատում գիւղումս. հողն բէկական, սակաւ և նուազ արգիւնաբեր. տեղական բերքերն նոյն (առատ է թթենի), օդն և կլիման բարեխառն, ջուրն պատուական, երկար կեանք 100,

[1]) Գազա. Ղար. եր. 119—121: Գիւղիցս վերև Բևեռաթափ (Մխթէօքեան) սարի բարձ. 6944 ոտք:

եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն 18 մետր. 82 սանթիմ, լայնութիւն 10 մետր 60 սանթիմ. քահանայ մի [1]): Ծուխ 85. ար. 289 իգ. 274:

Եկեղեցումն կայ հետևեալ գրչագրերն.

Մի գրչագիր ճաշոց գրուած ընտիր և հաստ թղթի վերայ, գերազանց են պատկերներն, նախշերն, ծաղիկներն, թռչնագրերն, ազնիւ ներկերն և ոսկեզօծներն: Ունի Յիսուսի Քրիստոսի աւետման, ծննդեան, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, համբարձման, հոգեգալստեան (երկու պատկեր) Աստուածածնայ վերափոխման, սուրբ Խաչի և բոլոր տօնեցեալ նահապետաց, սուրբ մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, հայրապետաց, թագաւորաց, կուսանաց, ճգնաւորաց, Քրիստոսից բոլոր բժշկուածների պատկերները գետեղուած լուսանցքներում:

«Գիրքս, որ կոչի ճաշոց, յիշատակ է Առաքելին, հաւրն Ղուլուն, մաւրն Մարիամին, եղբայր Մարգարին և մեղապարտ *զբշի Փիլիպոսին* ի գիւղն Գոմորանց, ի դուռն սուրբ Հռիփսիմէին, որ է (Առաքելն) բարեպաշտ և սրբասէր, բարեբարոյ և առաքինասէր, հաւատարիմ և Աստուածասէր և ամենայն որբոց և այրեաց և կարօտելոց տէր և տիրական»: Անյայտ է բուն յիշատակարանի թուականն բայց յետոյ նորոգել տուած են ճաշոցս գիւղիս ժողովուրդն և քահանան:

Մի զբշագիր աւետարան, որ գրուած է թղթի վերայ և պահուած անխնամ, որի ստացողն է. «յիշեցէք յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զՄանուէլ փիլիսոփայն և զսրբազան քահանայն»: «Արդ գրեցաւ կենսաբեր սուրբ աւե-

[1]) Գիւղումս ծնուած է և գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Բեանդխուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիսաբէթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբարք Մկրտիչ, Սարգիս, Թէոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան. բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն և իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահզատն և Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառէն): Հանգիստ ոսկերաց Ձերոց սիրելիք իմ:

տարանս ձեռա...անիսի .....թեանս [1]) Հայոց, ի տէրութեան Կիւլիկեցւոց նահանգին երկրորդ Հեթմոյ բարեպաշտի՝ ի դառն և յանբարի ժամանակիս, յորում զհայրապետական աթոռն ամենայն սրբութեամբն և զհայրապետն ժողովրդեամբն կորուսաք..... Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի մեծահռչակ սուրբ ուխտս Դրազարկ կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին»:

Գիւղիս անդերում կան հետեւեալ հնութիւնները—

1) Շհրատեղ (Շհարատեղ—քաղաքատեղ) գիւղիս հիւսիսային կողմում, երեք կողմերից առանձնացած, միջակ մեծութեամբ տեղ, որ այժմ հերկուում է: Ելնում են խեցեղէն բեկորներ, իսկ կանխաւ գտնուած է և արծաթ ու պղինձ դրամներ:

2) Վաղեմի հանգստարան անարձանագիր քարերով գիւղիս վերի գլխին: Հանգստարանից վերև մի բարձր բլրակի վերայ *Շուղուրլուի խաչարձանն*: Ծակ քար:

3) Գիւղատեղի, հանգստարան և եկեղեցու աւերակ կան Բանւոր—նան [2]) կոչուած տեղում, որ գտնուում է գիւղից կէս ժամ տեղ վերև մի գեղեցիկ ոարահարթի վերայ. գիւղատեղի, խաչազարդ հանգստարան և եկեղեցու աւերակ Դրագետի [3]) ակունքներում, *երկու առուակների* խառնուրդում. Ջալալ-Հասանի [4]) գիւղատեղի, հանգստարան, որ սեփական գոմանոց եղած է Խանածախ գիւղացւոց 1790 թուականից վեր. նոյնպէս գիւղատեղի և հանգստարան *Մլըկևանց* շինատեղ կամ Գիւմբատեղ կոչուած վայրում, որ գտնուում է Պալլուճայ գետակի աջ կողմում Խանածախ և Պալլուճայ գիւղերի սահմանի վերայ:

Է. ՊԱԼԼՈՒՃԱՅ ԳԻՒՂ. Հիմնուած է համանուն գետակի ձախ ափի բարձրութեան վերայ. բնակիչք նախ Մեծ-Սիւնիքից տեղափոխուած Ջրաբերդ գաւառն, որից ապա և այս-

[1]) Անլայտացած են կէտադրեալ բառերն և տառերն:
[2]) Այժմ ուխտատեղի է:
[3]) Խանածախ գիւղիս վտակի անունն է:
[4]) Այժմ Ջան-Հասան՝ ըստ կրճատման օրինաց Արցախի:

տեղ Խանածախ գիւղացւոց հետ, հողն բէկական, անջրդի և միջակ արդիւնաբեր. անվնաս օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 86—90. եկեղեցին նորաշէն, Սուրբ Աստուածածին, համակ սրբատաշ կրաքարով շինուած հասարակութեան ծախքով կառուցեալ չորս սիւների վերայ, որ ունի մի կլոր գմբէթ ժողովրդեան աղօթած տեղից վերև, մի քարացեալ օձ ներքուստ հարաւային որմի վերայ երկու լուսամուտների մօտ, 20 մետր 10 սանթիմ երկարութիւն, 11 մետր 45 սանթիմ լայնութիւն. քահան. մի: Ծուխ 160. ար. 550. իգ. 432:

Գիւղիս անդերում կան հետեւեալ հնութիւնները.

1) Գիւղիս հիւսիսային կողմում հին գիւղատեղի, հանգստարան և քարուկիր եկեղեցի Սուրբ Վանէս անուն, որ մեծ ուխտատեղի է և հանգստարան, որի մէջ հանգստանում են և Պալլուճեցի քաջերի ոսկերքներն:

2) Աւերակ գիւղատեղի և հանգստարան գիւղիս արևմտեան կողմում *Ալուխանայ շէն* անուն:

3) *Թամղի եղցի* (եկեղեցի) աւերակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի այս անուամբ Յուցագետ կոչուած վտակին աջ կողմում:

Ը. ՄԷՅՏԻ-ՇԷՆ. Հիմնուած է Պալլուճայի հիւսիսային կողմում լեռների մէջ մի ձորում. բնակիչք գաղթած են Խոյից 1828-ին հողն բէկական, տեղական բերքերն նոյն. անվնաս օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 90. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, քարուկիր, քահանան գալիս է Պալլուճայից: Ծուխ 54. ար. 186. իգ. 155:

Թ. ԴԱՀՐԱՒ [1]) ԳԻՒՂ. Հիմնուած է Մէյտի-շէնի արևմտեան կողմում մի բարձր, սեպացեալ քերծի տակ. բնակիչք քնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն, պատուական օդն կլիման և ջուրն, երկար կեանք 85—90. եկեղեցին Սուրբ Յովհաննէս կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւն 17 մետր 40, լայնութիւն 8 մետր 60: Դրան ճակատակալ քարի վերայ.

[1]) Գիւղիս գլխի սարի բարձ. 4606:

«Սրբոյն Հոյաննու Կարապետին եկեղեցույն շինուելիւնս այս է 1885 ամի»։ Ծուխ 110. ար. 430. իգ. 351։

Գիւղիս հիւսիս-արևմտեան կողմում կայ երեք բեմ.

Ա. Հարաւային բեմի գոյգ խաչերի գլխակալ քարի վերայ. «Ի թվ. ՉԻԵ. ես Հասան որդի Վասակայ կանգնեցի զխաչս եղբաւր իմոյ Զուրճին Ուքանայ ի փրկութիւն հոգւոյ. ով կարդէք, յիշեցէք ի Տէր»։

Բ. Բեմի վերայ, որ քարընկէց հեռի է առաջինից, փորագրուած է.

«Թիւ ՇԻ. ես Ոհան կանգնեցի զխաչս ինձ և ամուսին իմ Թիմեղնիկայ, աղաւթս յիշեցէք»։

Գ. Բեմն կիսակործան է, որ նոյնպէս քարընկէց հեռի է երկրորդից։

Բռշնին-նահատակ [1])

Ա. Բեմից փոքր ինչ վերև քերծի տակ մի բռշնի ծառի մօտ կայ մի գերեզման, որի վերայ շինուած է մի փոքրիկ սեղան։ Գերեզմանիս շուրջն պարսպուած է պատով, որի դրան գլխի քարի վերայ գրուած է.

«Սուրբ նահատակին Փռշնին չորս կողմանն հասար քաշեցինք Անդրի, Ստեփան, Արզման Իսրայէլեանք»։

Ֆ. ՊՏՐԵՑԻՔ [2]) Գիւղս հիմնուած է համանուն գետակի ձախ կողմում, մի ջրաձորի արևելեան ափում. դիրքն հարաւահայեաց, բնակիչք բնիկ, հողն բէկական. անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (առատ է ընկուզն և խոզ) պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, թաղակապ երեք կամարների վերայ, երկարութիւն 16 մետր 75 սանթիմ, լայնութիւն 9 մետր 35 սանթիմ. քահանայ մի։ Դրան մօտ մի տապանի վերայ.

«Աղնիւ տապան Գաբրիէլ վարդապետին,
Որ է որդի Գրիգոր Այտինովին

[1]) Բռշնի ծառին մօտ եղած նահատակ։

[2]) Պարեցւոց ռարի (Դրխզըզ) բարձր. 9324, գիւղից վերս գետի ձախ կողմի ռարի 5227։

Եւ էր հայր Սրգավաք Մովսէսին
Եւ տէր Յարութիւնին
Սա էր միաբան Յակորա սրբո վանքին
Վախճանեցաւ 1860 ամի»։
Ծուխ 121. ար. 540. իգ. 442։

Բերդ. գիւղի հարաւային հանգէպ գետակի աջ կողմում մի լեռնակի գլխին փոքրիկ և հին բերդակ, որից գետնափոր ական կայ մինչև գետակն։

Ամենափրկիչ եկեղեցի.

Գիւղի արևմտեան կողմում երկու ձորակի մէջ մի փոքր հարթակի վերայ, շինուած է անտաշ քարով երկու կամարների վերայ։ Ունի երկու փոքր և մի աւագ խորան. երկու խորհրդարան, երկու դուռն և չորս լուսամուտ. 11 մետր 3 սանթիմ երկարութիւն և 9 մետր 70 սանթիմ լայնութիւն և մի երկար գրութիւն բեմի ժողովրդահայեաց երեսին վերայ. սակայն ափսոս որ եղծուած է մեծ մասամբ. ընդօրինակում ենք մնացեալը.

«Յանուն..... զեկեղեցիս զԴարապաս նկարաք..... Ուխանին Մեծունիքն. յիս տվին արդ ծննդեան Ը. աւր էր և աղուհացիկ տաւներն և ի զատկէն ինձ ու նոր կիրակին զպատարագն մեզ առնեն Դարապաս վաճառն Հուռահոա տներն եկեղեցւոյս»։

Արևմտեան դրան գլխին արտաքուստ մի սպիտակ խաչարձանի վերայ.

«Աթանաս է. Նա կաթուղիկոս է Աղբաին [1])»։ Մեծ հանգստարան պատած է տաճարիս շուրջն, որից փոքր ինչ հեռի կայ և գիւղատեղի։

Մեծ գիւղատեղի, հանգստարան և փոքր եկեղեցի կայ Պարեցիք գիւղի հարաւային հանդէպ, ջրաձորի աջ հովտում։

Օծկայ վանք

Ամենափրկչից դէպի արևմուտք՝ հիմնուած մի սարա-

[1]) Բառ արաբերէն, որ նշանակում է 4—չորս երկիրների վերայ կաթուղիկոս է։

հարթի վերայ, որի շրջապատն զառիվայր է։ Ունի փոքր դիրք և եկեղեցու ձև։ Վանքիս մօտ ևս կայ և հանգստարան և գիւղատեղի։

Ծերայ Նհատակ

–Գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի կայ գիւղիցս բաւական ներքև գետի ձախ կողմում (գետիս վերի կողմն կոչւում է Պտրեցւոյ գետ, իսկ վարինն՝ Խոջալլուի գետ), որք միասին կոչւում են *Ծերայ Նհատակ*։ Եկեղեցումս ամփոփուած է Ծեր Նահատակի մարմինն։

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ

Ծերայ Նահատակից փոքր ինչ բարձր, նոյնպէս գետակի ձախ կողմում կայ գիւղատեղի, հանգստարան և քարուկիր փոքր եկեղեցի, որի գլուխն արդէն խոնարհած է։ Այս ամենն կոչւում է նաև Խրաւանդ։

Դարապասի եկեղեցիներն

Սուրբ Յովհաննէսից վերև կայ չորս քարուկիր մատուռ, որք շինուած են մօտ առ մօտ, կայ և գիւղատեղի և հանգստարան։

Օխտը (եօթն) եղցի

Նոյն գետակի աջ կողմում մի սարահարթի վերայ մօտ առ մօտ շինուած են եօթն եկեղեցիներ, որոց մօտ կայ գիւղատեղի և հանգստարան։

ԺԱ. ԽԱՆՁՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Պտրեցիք գիւղի հիւսիսային կողմում մի հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական և նուազ արդիւնաւէտ, տեղական բերքերն նոյն, աննշդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85. քահանան գալիս է Դաշ-Բուլաղից. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, կամարակապ, երկարութիւն 19 մետր 52 սանթիմ, լայնութիւն 8 մետր 95 սանթիմ։

Դրան Ճակատակալ քարի վերայ.

«Ի Ռճիհ. թվին ես Պետրոս կաթուղիկոս Ադուանից ի գեղջէս Խանցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Աղխանն և աւաք եղբայրն իմ Իշխանն և իւր որդիքն Ովանէսն, Պապաջանն և իւր թոռ Մանկասարն և տատ Խաթունն շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց»։

Եկեղեցուս հիւսիսային կողմում.

«Թվին ՈՀԹ (1230) ես Հայրապետ, Պետրոս, Վարդան. Յոհան կանգնեցաք զխաչս մաւրն մեր, որ բալեպաշտ, աղքատասէր էր. յաղաւթս յիշեցէք»։ Ծուխ 60. սր. 233, իգ. 191։

Ջոխտակ խաչ

Գիւղիս հարաւային կողմում, ճանապարհի վերայ, մեծ ծառերի տակ կայ երկու մեծ քարեայ խաչարձան, որից միոյն վերայ.

«Յանուն Սուրբ Երրորդութեան ես Սուստանէս ու Բարսեղ կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Հայրապետայ և մաւրն մերոյ Հռոմսիմին, որք երկրպագէք, յաղաւթս ՉԲ. (1253)»։

Սուրբ Յովհաննէս

Ջոխտակ—խաչերից ներքև, առուակի ձախ կողմում քարուկիր շինուած մատուռ, որի մօտ կայ և հանգստարան։ Կայ հանգստարան նաև վարդապետի Խութում։

Անապատ

Գիւղիս արևմտեան կողմում Շուշան խութի ստորոտում կայ մի քարուկիր մատուռ Անապատ անուն, երկու մեծ հանգստարան և երկու գիւղատեղի։

ԺԲ. ԴԱՇ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒՂ. Շինուած է Խանձքի արևելեան—հիւսիսային կողմում մի ձորակի աջ կողմում, հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն նոյն (կան և ձիթահանքեր) ամրան՝ ճնշիչ օդն և կլիման, ջուրն անվնաս, երկար կեանք 80—85. եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւն 17 մետր 34 սանթիմ, լայնութիւն 8 մետր 45 սանթիմ. քահանայ մի։ Ծուխ 136. սր. 577. իգ. 547։

Սուրբ Մեսրովբեան միգասեան տղայոց ուսումնարան, աշակերտ 26, թոշակառու 16, ձրիավարժ 10. միամեայ ռոճիկ վարժապետի 300 րուբլի։

ԺԳ. ՀԻԼԻՍ ԳԻՒՂ. Շինուած է Դաշ-Բուլաղի արևմտահիւսիս կողմում երկու առուակների ջրախառնուրդում. բնակիչք գաղթած Ղարադաղ նահանգից. հողն բէկական, միջակ

արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 85—90. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, քարուկիր, քահանայ երկու։ Ծուխ 50. ար. 165. իգ. 130։

ԺԴ. ԽՆՁԻՐՍՏԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Հիլիսի արեւմտահիւսիս կողմում (ոչ այնքան հեռի, Հիլիսի հիւսիսային վտակի վերայ) դիրքն հարաւահայեաց լանջ. հողն արքունի, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն միևնոյն, օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու համարների վերայ։ Ունի 16 մետր 62 սանթիմ երկարութիւն և 10 մետր լայնութիւն, մի փոքր կաթուղիկէ, 2 քահանայ և դրան ճակատակալ քարին վերայ սոյն արձանագրութիւնը.

«ՌՄԳ. յիշատակ է Սուրբ Աստուածածին եկեղեցիս Խնձրուստանցի Մէլիք Մէղախանին և ծնողացն Այտինին և Մարիանին և կողակցուն պարուն Նանին և Հերիքին և որդուն Ալայվերտին»։

«Յիշատակ է Սրանոցս (Զիթահանքս) շինեցաւ Մէլիք Ալահվերտին, որ էր որդի Մէլիք Միրզայխանին, թվ. ՌՄԼԱ»։ Զիթահանքս, որ գրեթէ կէց է եկեղեցուս արևմտեան կողմին, աւերակ է այժմ։

Եկեղեցուս հարաւային պատի տակին արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ ամենազօրին, այս է տապան Մէլիք Միրզախանին, որ է որդի Այտինին, հայր էր Մէլիք Ալավերտին, իշխանութիւն անէր Խաչենու երկրին, որ մասկան նստաւ Խնձրստանայ գեղին, շինեց յիշատակ Աստուածածնայ սուրբ եկեղեցին ամի վախճանեցաւ ՌՄԻԶ. թուականին»։

Այստեղ են Մէլիք-Ալլահվերտու և Մէլիք-Ղահրամանի գերեզմաններն ևս։ Բայց ըստ Գաղտնիք Ղարաբաղու սոքա չեն ի շարս հարազատ մէլիքների, այլ *ճղոռ* մելիքներ են։ Ծուխ 90. ար. 227. իգ. 255։

Հանգած եղցի

Այսպէս է կոչուում այն եկեղեցու աւերակն, որ կայ

գիւղիս ստորոտում։ Աւերակիս շուրջն ընդարձակ հանգստարան է՝ լի հին ամփոփեալներով։ Մի քարեայ խաչարձանից.

«Ես Դաւիթ կանգնեցի զխաչս իմ ծնողաց թվ. ՇԵ.»։

Աւերակ եկեղեցու հիւսիսային կողմում.

«Այս է տապան Մեծ չինայցի Տէր Սարգիսի դուստր Մարեանին, որ էր կողակից Բալի որդի Խսամին, որ է եխբար ուզպաշի Պողոսին, որ էր առաջ Զալազան ուզպաշին հարսն էր. սորայ համար չատ մուվայտի [1]) վեր իկաց, յետով մենք բերինք. թվ. ՌՃՁՋ. օվ որ կարդայ. Աստուած ողորմի ասէ»։

ՊՊԷՆ ՇԷՆ (Պապուն շէն)

Աւերակ գիւղատեղի է այս, որը այժմ Խնձիրստանցիք փոխած են *Դոմեր* որոց մօտ կայ և հանգստարան։

Սուլուլ քար

Գիւղիցս վերև մի բլրի վերայ կայ մի մարդաձև քար, որ ունի իւր գլխին վերայ կաթսայի ձևով մի այլ քար։ Աւանդութիւնն այս քարի մասին տալիս է հետևեալ տեղեկութիւնը.

«Թաթարների տիրապետութեան ժամանակ հայ կին ոմն եկում է կերակուր, պատրաստում հաց, դնում գլխին կերակրով լի կաթսան, որ տանէ և կերակրէ գութանաւորները [2]։ Հանիւ թէ հասնում է կէս ճանապարհ, մի քանի Թաթարներ ընկնում են խեղճ կնոջ ետևից և հետապնդում որ հասնեն և բռնեն։ Ուրքան կարողութիւնն հասնում (որքան կարողանում է) է, վազում է խեղճ կինն, յետոյ ճարահատեալ դիմում է դէպի սարին գագաթն, բայց որովհետև իւր գլխին վերայ է լինում կերակրով լի ծանր կաթսան և չէ կամենում թափել կերակուրը և միւս կողմից *հասուահաս* [3]) էլին անիրաւ Թաթարներն, վանորոյ ի բոլոր սրտէ խնդրում է Աստուածանից քարանալ, միայն թէ չընկնիլ պիղծ Թաթարների ձեռքն. իսկոյն քարանում է կաթսայով միասին և մնում մինչև յայսօր»։

---

[1]) Նշանակում է՝ շատերն հետամուտ էին կին ածել այս հարսը։

[2]) Այժմ ևս կայ այս սովորութիւնն։

[3]) Բառ տեղական, որ նշանակում է հասնելու վերայ էին, չորս կամ հինգ քայլ միայն էր, որ հասնէին կնոջ ետևից։

ԺԵ. ՍԷՅՏԻ ՇԷՆ. Հիմնուած է Խնձիրստան գիւղի արևմտահիւսիս կողմում այն ճանապարհի վերայ, որ բանում է Շուշուց Գանձասար. բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Յովհաննէս, քարուկիր, յիշատակ Շուշեցի Մահտեսի Բալայ Զաքարեանցին, բայց վտանգաւոր կերպով վնասուած, քահանան գալիս է Խնձիրստանից: Ծուխ 45. ար. 195. իգ. 175:

ԺԶ. ՈՒԼՈՒ-ՊԱՊ ՇԷՆ. Հիմնուած է 1855 թուին Սէյտի-շինի հիւսիսային կողմում մի սարի հարթակի վերայ. բնակիչք, որ հաւաքուած են մերձակայ գիւղերից, նախ բնակած են Խաչեն գետակի աջ ափի մօտ, ապա օդի ծանրութեան պատճառաւ բարձրացած են սարահարթս, հողն վանքապատկան և հացաւէտ, տեղական բերքերն նոյն (չ'ունին թթենի և պարտէզ), գերազանց օդն, կլիման և ջուրն, եկեղեցին է Պագեսբերք (Պակի սուրբ Գէորգ) վանքն, որ է շինիս արևելեան հանդէպ բարձրագոյն սարի գագաթի վերայ: Ծուխ 20. ար. 60. իգ. 58:

ՊՏԳԵՍԲԵՐՔ ՎԱՆՔ (մօտ 4900 ոտք) (18).

Արդէն իմացանք որ Պակի Սուրբ Գէորգ էր վանքիս անունն, որի սարի գագաթն բարձր է Խաչեն գաւառի բոլոր գիւղաբնակ սարերից: Վանքս ունի միևնոյն ձևը և գրեթէ նոյն իսկ մեծութիւնը, ինչ որ ունի Գտչայ վանքն. մինչև քարերի գոյնն, կարծրութեան աստիճանն, ճարտարապետութեան ոճն նոյն և նման են միմեանց: Տարբերութիւնն այն է միայն, որ բարձր և սրածայր է Գտչայ կաթուղիկէն և ունի հին գաւիթ, իսկ ցածր է Ս. Գէորգիս կաթուղիկէն և չունի գաւիթ: Վանքիս դասումն կայ մի փոքր գերեզման, որի մասին աւանդութիւնն ասում է թէ սոյն ամփոփեալն մահմետականի որդի է լինում. քանիցս սա իւր ծնողաց հետ գալիս է ուխտի վանքս: Բայց որովհետև չ'բերք են լինում

ծնողներն և ուխտով խնդրած այս զաւակն, վասն որոյ որդին թողնում է իւր ծնողները և յտճախ դիմում վանքս և շաբաթներով աղօթում վանքումս: Ջանիցս գալիս է հայրն և իւր տուն տանում իւր որդին, սակայն կրկին և կրկին փախչում է որդին և մտնում վանքս: Վերջապէս հայրն՝ ձանձրանալով որդու արարմունքից և չ'կամենալով քրիստոնեայ տեսնել իւր որդին, գալիս է վանքս, համոզում որդին տուն տանելու: Իսկ որդին չկամենալով բնաւ տուն գնալ, մտնում է տաճարումս և չէ դուրս գալիս, հասնում է զայրացած հայրն և նահատակում այժմեան գերեզմանի տեղում, որի մարմինը ամփոփելով այս իսկ տեղում մնում է մինչև ց'այսօր. ուխտատեղի է գերեզմանս:

Ամենամեծ ուխտատեղի է վանքս, մանաւանդ ամուլ մարդոց և կանանց համար, ոչ միայն քրիստոնէից, այլ և մահմետականաց համար:

Արտաքուստ վանքիս արևելեան կողմում կայ մի անտաշ և կոպիտ մեծ քար, որի մասին աւանդութիւնն պատմում է թէ *Արջի գերեզման* է այս: Վանքիս շինութեան ժամանակ մի որձ արջ, 'ի բաց թողլով իւր գազանային բնաւորութիւնը, հեզաբար մօտենում բանւորներին և վարժուելով կրում ծանր քարերը հանքից վանքիս մօտ մինչև շինութեան աւարտն. և միշտ կերակրուում այստեղ մինչև իւր վերջին շունչն: Ասպա թաղում են այստեղ: Որքան ուշագրաւ և դուրալի է սարիս տեսարանն:

ԺԷ. ՌԵԻ ԳԻՒՂ. Հիմնուած է սուրբ Գէորգ վանքի սարի արևելեան ստորոտում. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն և տեսարանն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին վնասուած է և անգործածելի. քահանայ մի: Ծուխ 40. ար. 180. իգ. 150:

ԺԸ. ՍԱՐԳԱՐԱՇԷՆ. Հիմնուած է Ռև գիւղի հիւսիս-արևելեան կողմում մի ձորակի մէջ. բնակչաց մեծ մասն բնիկ, փոքր մասն գաղթած Խոյից, հողն արքունի, ամենայն ինչ

միևնոյն, երկար կեանք 85—90. եկեղեցին Սուրբ Գէորգ, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Նորագեղից։

Մի վաղեմի մատուռ կայ գիւղիս հին հանգստարանում, որի գոյութիւնն հին է և չէ վերաբերում այժմեան բնակչաց։ Ծուխ 40. ար. 174. իգ. 175։

Խաչեն գետակի այ կողմում, գետակահայեաց լանջի վերայ կայ գիւղատեղի և հանգստարան, որ կոչուում է Վաքա։

ԹԹ. ՂՇԼԱՂ—ԳԻՒՂ. *Հիմնուած է Սարտարաշէնի հարաւային կողմում մի ջրաձորի ձախ կողմի վերայ. բնակիչք բնիկ հողն բէկական, մասամբ ջրարբի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, (կայ և այգի, թթենի, գործարան մետաքս քաշելու), օդն, կլիման փոքր ինչ տաք ամրան, ջուրն անվնաս, երկար կեանք 80—85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ, քահանայ երկու։* Ծուխ 159. ար. 613. իգ. 483։

Ի. ՆՈՐԱԳԵՂ. *Հիմնուած այն սարի արևմտահայեաց լանջին վերայ, որ սկսած է Թարթառ գետի այ կողմից, անցած Արճաթի հանքով և Ղազանչի գիւղի արևմտեան կողմով, ընդհատուած Խաչեն գետակի հեղեղատներով, վերստին շարունակած մինչև Գարգար գետակն Ասկեարանի մօտ՝ հանդէպ Քեաթուկայ սարին։ Իսկ միւս լեռնագօտին սկսեալ Նորագեղիս հիւսիս—արևելեան կողմից ձգուած է Խաչեն գետակի եզերքով մինչև դաշտաբեղանն։ Բնակչաց մեծ մասն բնիկ. փոքր մասն գաղթած Խոյի գաւառից. հողն բէկական, կարի սակաւ, անջրդի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (այգի չունին), պատուական օդն, կլիման և ջուրն և միանգամայն տեսարանն, երկար կեանք 90. եկեղեցին Սուրբ Գէորգ, թաղակապ և գեղեցիկ, երկարութիւն 16 մետր 79 սանթիմ, լայնութիւն 9 մետր 60 սանթիմ, քահանայ մի։* Ծուխ 81. ար. 600. իգ. 475։

Հիւնի-խաչ (Հունի ծառի մօտի խաչ) *որ կայ միևնոյն սարի արևմտահայեաց լանջի վերայ գիւղիցս դէպի Ասկեարանի կողմն։ Երբ չորքոտանի ընտանի կենդանեաց պատահում է դաւթիկ* [1]) *կոչուած հիւանդութիւնն, գիւղացիք մեծ ջերմեռանդութեամբ բերում են այս խաչի տաքն և բժշկուում են անասուններն։*

ԻԱ. ՂԼԻՋՐԱՂ ԳԻՒՂ. *Հիմնուած է Նորագեղի արևելեան կողմում. միևնոյն սարի արևելահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական, նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (ունին այգի) պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն և հնացեալ. քահանան գալիս է Խանաբատից։* Ծուխ 56. ար. 242. իգ. 252։

ԻԲ. ԽԱՆԱԲԱՏ ԳԻՒՂ. *Հիմնուած է Ղլիջաղի մօտ նոյն լանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն, օդն և կլիման անախորժ և ճնշիչ ամրան, երկար կեանք 70—75. եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի։ Գիւղիս հանգստարանում կայ մի հին քարուկիր մատուռ։* Ծուխ 95. ար. 430. իգ. 370։

ԻԳ. ԽՐԱՄՈՐԹ ԳԻՒՂ. *Հիմնուած է Խանաբատի հիւսիսային կողմում, մի բարձրաւանդակի վերայ, դիրքն արևելահայեաց, բնակիչք բնիկ. հողն բէկական, տեղական բերքերն նոյն, երկար կեանք 70. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Քարագլխից։* Ծուխ 55. ար. 213. իգ. 215։

ԻԴ. ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳԻՒՂ. *Հիմնուած է Շիկաքար կոչուած քերծի գլխին։ Վիմահերձ, սեպացեալ և բարձր ապառաժներ են գիւղիս շրջապատն, ունի միայն երկու մուտք արևելեան և արևմտեան կողմերից, մէկ խօսքով գիւղատեղիս հին ժամանակներում նշանաւոր բերդ եղած է։ Բնակչաց կէս մասն բնիկ, իսկ միւս կէսն տեղափոխուած Մեծ-Սիւնեաց Արաւիւս և Դարապաս գիւղերից և Բարկիւշատից, հողն վանքապատկան (Գանձասարին) տեղական բերքերն նոյն, (չունին այգի և պարտէզ) գերազանց օդն և կլիման և*

[1]) *Սասուիկ ցաւում են կճղակներն և սկսում են կաղալ անասուններն և տանջուիլ։*

ջուրն (վերջինս խիստ պակաս է) երկար կեանք 120, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն վայտաշէն, քահանայ մի: Ծուխ 79. ար. 358. իգ. 280:

Եկեղեցուս հարաւային կողմում մի խաչարձանի վերայ.

«Ես Սումպատ կանգնեցի զխաչս Համ..մ.. կողակից իմ Հաւասայ և Հեղան»:

Հին հանգստարան

Գտնուում է գիւղիս հարաւ-արևմտեան կողմում, որի մէջ կան նշանաւոր մահարձաններ խաչագարդեալ: *Մի խաչքարի վերայ.*

«Մեք հետևիք Աստուծոյ որդիքս Պապա, Սնպատ, Սարդիս.....» (անընթեռնլի):

Մի այլ կիսատ քարի վերայ «Խաչս Մխիթարայ, Քրիստոս ողորմի նմայ»: *Այլ նշանաւոր խաչարձանի վերայ*

«Թիւ ՉԲ: Իշխանութիւն Հասանայ ես Սնպատ և եղբարք իմ կանգնեցաք զխաչս բարեխաւս առ Քրիստոս ինձ և ամուսին (նոյն) իմոյ Կատային, զոր ետ Պարոն մեզ հայրենիք և զերեզմանատեղ. Քրիստոս աւգնէ իւր որդեացն. ամէն»:

Գիւղիս հիւսիսային կողմում կայ աւերակ գիւղատեղի և հանգստարան: Իսկ հարաւային կողմում աւերակ եկեղեցի և հանգստարան:

Գիւղիս շրջապատում կան ականաւոր քարայրեր.—արեւելեան կողմում կայ երեք քարայր, մէկի առաջքն փակուած է քարուկիր պատով. մի քարայր հիւսիսային և մի նշանաւորն արևմտեան կողմում:

ԻԵ. ՓԱՌԻԽ ՇԷՆ. Հիմնուած է Խաչեն գետակի աջ կողմում, Շիկաքարի հիւսիսահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն վանքապատկան, բարեբեր և այգեւէտ, տեղական բերքերն նոյն (խաղող և թթենի առատ), վատառողջ օդն և կլիման և ոչ սննդարար ջուրն, երկար [1]) կեանք 45—50. եկեղեցին Սուրբ Աստուածածին: Ծուխ 8. ար. 12. իգ. 12:

[1]) Հաստատում են որ 100 տուն եղած է գիւղս, հետզհետէ պակասելով՝ մնացած է այժմ 8 տուն:

Շիկաքար. Այժմ և այս անուամբ է կոչուում Քարագլխի ամբողջ բնակավայրն: Բերդասարն, որի արևմտեան հիւսիսային կողմումն է Փառուխ շէնս, որի արևելեան հանդէպ քերծի մէջ է այն նշանաւոր քարայրն, որի մէջ հաւաքուելով մօտակայ ժողովուրդն պատերազմների ժամանակ, ազատ մնացած է վնասուելուց: Այժմ խիստ բարձր մնացած է քարայրիս մուտքն—բերանն—հետևաբար և վտանգաւոր՝ բարձրանալն, քանզի շատ լջած է քերծի շարունակութիւնն:

ԻԶ. ԿԻԶԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Փառուխի արևմտեան կողմում, Խաչեն գետակի ձախ ափից բաւական դէպի հիւսիս, Պագեսբերքի հանդէպ. գիրքն հարաւահայեաց և գեղեցիկ, բնակիչք բնիկ, երկու տուն եկած Առաջաձորից. հողն վանքապատկան, ամենամեծ մասամբ անջրդի, բայց հացատու, տեղական բերքերն նոյն, (չունին այգի) օդն և կլիման և ջուրն անվնաս. երկար կեանք 70. եկեղեցին Սուրբ Աստուածածին, նորաշէն, գեղեցիկ, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւն 14 մետր 20 սանթիմ, լայնութիւն 8 մետր 16 սանթիմ, քահանան գալիս է Առաջաձորից: Ծուխ 15. ար. 58. իգ. 49.

ԱՆԱՊԱՏ ԿԻԶԱՆԻ.

Շինիս արևմտեան կողմում, բերդաձև սարին վերայ շինուած է անտաշ քարով մի եկեղեցի երկու կամարների վերայ: Բոլորովին անվնաս է և կանգուն: Ունի և միաբանից համար մի քանի խուցեր, հանգստարան զարդարուած խաչարձաններով, ուր կան և վարդապետաց գերեզմանները:

ԻԷ. ԹՐԼՂՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Խաչեն գետակի և Ռոլատակ վտակի մէջ մի առուակի ձախ եզերքին, բնակիչք գաղթած Մեծ-Սիւնեաց Մաղաւուզ գիւղից, հողն վանքապատկան (գարմանալի է. այժմ բէկական), տեղական բերքերն նոյն, տեսարանն խեղդուած, օդն և կլիման ծանր ամրան. երկար կեանք 70, եկեղեցին Ռոլատակ գիւղինն է. քահանան գալիս է Ծմակահողից: Ծուխ 22. ար. 100. իգ. 102:

ԻԸ. ՔՈԼԱՏԱԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Քոլատակ վտակի ձախ ափի մօտ, բնակիչք բնիկ (մի քանի տուն գաղթած նոյն Մաղասուզից). հողն վանքապատկան (այժմ բէկականն). տեղական բերքերն նոյն, պատսական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85—90. եկեղեցին քարուկիր, կամարակապ, քահանան գալիս է Ծմակահող գիւղից: Ծուխ 41. ար. 157. իգ. 140:

Գիւղիս հանգստարանում՝ մի մահարձանի վերայ.

«Ի ՈՂԲ. Թուին Ողորմութեամբն Աստուծոյ և տէրանց Խաչենոյ ես տէր Վարդան վարդապետ Հոռոսարեցի, պարոնայքն հողն ինձ տուին, ես գնեցի զԲոռին հանդն, զԵղջատափին, Երկրի տնատեղն, տուի վասն հոգոյ իմ վախմէ ի Սուրբ Գանձասար. սոքա տուին Բ. ժամ՝ի տանի Վարդանանց: Ով զհայրենիքս հանէ՝ի սուրբ ուխտէս, ՅԺԸ. հայրապետաց նզոված լիցի և իմ մեղաց պարտական»:

Եղցուն խութ.

Գիւղիս արևելեան հանդէպ, վտակի աջ կողմի բարձր սեռի վերայ վաղուց շինուած է մի քարուկիր փոքր եկեղեցի, որի մօտ կայ և գիւղատեղի և հանգստարան:

Կոշիկ անապատ.

Հիմնարկուած է Քոլատակ գիւղից վերև համանուն վտակի ձախ կողմում: Շարքով շինուած են երեք եկեղեցաձև տաճարներ, որոց հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերն վիմահերձ և սեպացեալ ապառաժներ են, իսկ արևելեան կողմն ձոր է: Անտաշ քարով շինուած են երեք տաճարներս և, միջին տաճարի բեմի ժողովրդահայեաց երեսին քանդակուած է.

«.... Հասանայ և Մամա խաթունին թոռն Գ. հետ (անդամ) ՚ի Ղանն գնացի յամի... իմ աղջէն Թափեցի զ..... ատաստանաւ զհարկանին մեր.... Խերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր դերեզմանատունս, ես Էրիվան ..եցի զՍուրբ Ստեփաննոս [1]) և նորոգեցի զայլ եկեղեցիքս և

[1]) Երեի թէ միջի տաճարիս անունն է:

զարդարեցի Մխիթար եղբաւր իմոյ... Թ. ես Մարտիրոս. ես Սևադա տվի զԳրիգորանանց, զՄուընդանանց, զԳելմարդանց ի սուրբ եկեղեցիս.... մն. ծ. աւր ժամ Բ. Հասանա զատկին. Բ. Մամա Խաթունին՝ Վարդավառին. Ա. Ռուզու... Բ. Խերխանին յայտնութեան... կատարին, որ հակառակի կամ զրկել ջանա զայս տեղիս ի Սուրբ Գէորգա, ոսոխն նորա Աստուած եղիցի... գրեցաւ ի թվ. Հայոց ՉԾԴ.»:

Անապատս ունի և գաւիթ, որի մէջ կան էշխանազգի ամփոփեալները:

Գաւթիս որմին վերայ.

«ՈՂԳ. յանուն Աստուծոյ ես Պռոշ որդի իշխանին Վակա (Վասակայ) յուսով միաբանեցայ Կոշիկ անապատոյ, տվի խաչ, աւետարան.. նապատ, ճառ, միաբանքս տվին Սուրբ Խաչին Ջ. աւր ժամ, որչափ կենդանի եմ, իմ մաւրն, յետ ելից իմոց ինձ. կատարիչքն աւրհնին, խափանիչքն դատին յԱստուծոյ»:

«...Ես Շղել որդի.. այ իմ ընչից գնեցի հող... բնակեցայ սուրբ Նշանիս կամակցութեամբ եղբարց Կոշիկ անապատոյ, և տվին ինձ ի տարին Բ. ժամ Սուրբ Գրիգորին աղուհացն, Ա. իմ որդի Խուչախին, Ա. իւր մաւրն յետ ելից իմոց ինձ [1]):

Անապատիս մօտ կայ միաբանական աւերակ խուցեր և հանգստարան:

Ս. ՅԱԿՈՎԲ ՎԱՆՔ.

Կոչուում է նաև Մեծ-Իրանաց կամ Մեծ-Աբանց Սուրբ Յակովբ, որ շինուած է յանուն Մծբնայ Յակովբ Հայրապետին մի բարձր լեռնաբազկի սեռի հարթակին վերայ, որին մօտ է և Քոլատակ գիւղն և Թլղուն: Լեռնաբազուկս իւր սկիզբը առած է Նատարի բերդասարիցն և հետզհետէ խո-

[1]) Նախ՝ անընթեռնլի են կէտադրեալ բառերն: Երկրորդ՝ սոյն բոլոր արձանագրութիւններից ակներև երևում է, որ Կոշիկ եղած է անապատիս անունն.

Որ անապատիս գաւիթն գերեզմանատուն եղած է Զալալեան տոհմի մի ճիւղին. որ միջի տաճարն կոչուած է Սուրբ Ստեփաննոս, իսկ աջ ու ձախ կողմերինն Սուրբ Նշան և Սուրբ Գէորգ:

նարհուելով հասած մինչև Թլղու շէնի ստորոտն։ Վանքս ունի նեղ, երկար և բարձր ձև, որպիսին էր Ղևոնդեանց անապատն և շինուած է անտաշ քարով առանց սիւների։ Զունի փոքր խորաններ, այլ ունի միայն մի խորան։ Զափազանց բարձր է բեմն, որ ունի միայն մի վերելակ սանդուխ հարաւային կողմից։ Ճաճարս ունի մի դուռն հարաւային և միւս արևմտեան կողմից, մի նեղ լուսամուտ արևելեան և միւս խաչազարդ արևմտեան կողմից և մի գաւթանման շինուելիւն կից իւր արևմտեան կողմին, նոյնպէս շինուած անտաշ քարով, որի յատակն քլաչափ բարձր է վանքի յատակից։ Գաւթիս ներսի գրան երկու կողմերում ևս կան երկու քարեայ խաչարձան։ *Հիւսիսային խաչարձանի վերայ.*

«Թիւ ՈՀԲ. (1223) ես տէր Սարգիս կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմո տէր Յակովբոսի արհի եպիսկոպոսի և Մեծարանաց հայրապետին [1]) յաղաւթս յիշեցէք»։

Հարաւային խաչարձանի վերայ.

«Թ. ՈՀԴ. ես տէր Սարգիս եղբաւր որդի տեառն Գրիգորա, եղբայր տէր Յակովբոսի առաջնորդ տանս Մեծարեանց կանգնեցի զխաչս բարեխաւս մեզ առ Աստուած»։ Գաւթումս կան շատ ամփոփեալներ, սակայն մեծ մասամբ անտաշ և անարձանագիր են տապանաքարերն։ Մի մոխրագոյն տապանաքարի վերայ փորագրուած է խիստ խոշոր տառերով. «Տէր Վարդան է տապանս արհի եպիսկոպոսին»։

Տաճարիս հարաւային դրան սեմի վերայ

«Յիշխանութեան Զալալին ես Խութլու բէկ որդի Խոյդանայ միաբանեցայ սուրբ աւետիս ընծայիւք, տվին ի տարումն Ռ. աւր ժամ 'ի տաւնի զատկի, ով խափանէ, զատի յԱստուծոյ Թվ. ՉԽԲ.»։

Երկրորդ վանք, որ պատկեց է առաջի վանքին արեւելեան կողմին ունի միևնոյն հին ոճը, իւր հիւսիսային կողմում ունի նաև չորս փոքրիկ խուցեր, որք նման են ճգնաբանների, որոց մուտքն բացուած է տաճարիս միջից և որք

[1]) Գաւառիս առաջնորդին։

ունին լուսամուտներ հիւսիսային որմից։ Երկու վանքերս ևս հին և խարխուլ են և ձև ու անճաշակ շինուած. բայց ունին հարաւային կողմում երեք կամարակապ աչքերով մի սրահ։

Սրահումն կան ամփոփեալ կաթուղիկոսները.

«Այս է հանգիստ տէր Ովհանէս կաթուղիկոսին»։

«Առաքակէս կաթուղիկոս»։

«Սիմէոն եպիսկոպոս»։

«Այս է հանգիստ Սիմէոն կաթուղիկոսին Թվ. ՌԿ.»։

Երկրորդ տաճարիս դրնից վերեւ արտաքուստ.

«ՈԿԱ. Թիւ ես Խորեշահ ամուսին Վախտանգա, տէր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարի և Իւանոյ, վերստին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ Ա.. Խ. (Ա.. քառասուն) ժամ ինձ. յիշատակ իմ ծնողացն. զՎախտանգ և զիս յաղաւթս յիշեցէք»։

«Ես Մուշեղ որդի Հեջբին միաբանեցայ սուրբ ուխտիս գնեցի զսուբ..... Թվ. ՉԽԲ.»։

Վանքս ունի երեք թաղակապ հին խուց, երեք կիսաւեր խուց; շրջապարիսպ, մի թթենեաց պարտէզ, չորս հարիւր օրավար (դեսեատին) անտառ և հող [1]), Մծբնայ Յակովբ հայրապետի աջը, մի պատուական աղբիւր, որի մօտ կայ մի բազմադարեան կաղամախի ծառ, որի շրջապատի հաստութիւնն է 7 մետր 35 սանթիմ։ Վանահայրն է մի սարկաւագ։

ԻԹ. ԳԵՒՈՆԱՒԱՐ ՇԷՆ. Հիմնուած է Հաւապտուկ աւերակ վանքի արևելեան ստորոտի ձորում. բնակիչք հատուածեալ եկած են Առաջաձոր և Վանք գիւղերից. հողն վանքապատկան, բարեբեր, տեղական բերքերն նոյն, բառեխառն օդն և կլիման, գովելի ջուրն, տակաւին չունին եկեղեցի և քահանայ, վերջինս գալիս է Առաջաձորից։ Ծուխ 12. ար. 59. խգ.53։

Լ. Վանք, Վանք գեղ, Վանքի շէն։

Այսպէս է կոչուում գիւղն, որ հիմնուած է Գանձա-

[1]) Խլուած են հողերն, կոտորած անտառներն և թողած մացառոտներն։

սարի արևելեան հանգէպ Խաչեն գետակի ձախ կողմում։ Աւելորդ է յայտնել թէ իւր անունը ստացած է վանք անունից։ Սակայն հարկ է յայտնել թէ գիւղս բաժանուած է երկու թաղի, որք շատ հեռի չեն միմեանցից և որք ընդհանուր առմամբ կոչուում են Վանք, իսկ մասնաւորապէս ստորինն կոչուում է Հիւնայ—Հող, իսկ վերինն Գոմայ—կալ։ Գիւղիս բնակիչներն նախ բնակած են եղել Գանձասար վանքի մօտ, ուր մինչև ցայսօր մնում են տնաբակերն, ապա փոխադրուած են այստեղ։ Ուրեմն բնակիչք բնիկ, հողն վանքապատկան, տեղական բերքերն նոյն. բարեխառն օդն և կլիման և անվնաս ջուրն, երկար կեանք 85—90, երկու թաղի եկեղեցին է Գանձասար վանքն, քահանայ երկու։

Ծուխ (երկու թաղերում) 167. որոց հետ և Շահմասուրն. Ծուխ 180. ար. 849. իգ. 687։

Հղեգեան (5768 ոտք)

Սարումս [1]), որ գիւղիս հիւսիսային կողմումն է, կայ մի խաչարձան Նահատակ անուն կամ *Հղեգեանայ Նահատակ*։ Ուխտատեղի է, բայց ոչ ոք չգիտէ նահատակիս անունը։

Եղցուն խութ

Այսպէս է կոչուում այն քարակիր եկեղեցին, գիւղատեղին և հանգստարանն, որ գտնուում է Գոմայ—կալից բաւական վերև։ Այս տեղից շատ հեռի չէ *Ջրաղացաքարի հանքն*, որ սեփական կալուած է Գանձասարայ վանքին։

ԳԱՆՁԱՍԱՐ ՎԱՆՔ (4168 ոտք) (19)

Հիմնուած է մի գեղեցիկ, բարձր և տեսարանաւոր սարահարթի վերայ, որ կոլոլահող սարից իբրև լեռնաբազուկ անջատուած և կախուելով Խաչեն գետակի վերայ վերջացած է։ Ճաճարս, որ շինուած է ամբողջապէս սրբատաշ, տորոնա-

[1]) Լեռնաշղթաս սկսուած է Գանձասար վանքի սարից, ձգուած Շահմասուր, Ծմակահող, Առաջաձոր, Պիչան գիւղերի արևմտահիւսիսային գլուխներից, անցած Արծաթահանքի մօտով և ճիւղաւորուելով հասած մինչև դաշտաբերանն։

գոյն ազնիւ քարով, հիմնարկել տուած է Զալալ—Դօլայ իշխանն յանուն սուրբ Յովհաննէս Մկրտչի չորս հրաշակերտ կամարների վերայ։ Ունի մի աւագ և ութ փոքր խորաններ (որոց չորսն արևմտեան կողմում դրան աջ ու ձախ անկիւններում շինուած իրարու վերայ՝ հիանալի վերելակ սանդուխներով)· երկու խորհրդարան, մի դուռն արևմտեան կողմից, մի հրաշազան կամուղիկէ, ութ փոքր, երեք միջակ, չորս բոլորակ և չորս մեծ լուսամուտներ և մի աւազան։ Երկարութիւնն 16 մետր 95 սանթիմ, լայնութիւն 12 մետր 25 սանթիմ։

Վանքիս ներսում՝ աւազանից վերև.

«Յանուն սուրբ Երրորդութեան Հաւր և որդւոյ և Սրբոյ Հոգւոյն այս գիր արձանի է, զոր ես նուաստ ծառայ Աստուծոյ Զալալ Դաւլա Հասան որդի Վախտանգայ՝ թոռն մեծին Հասանայ՝ բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Սրբազնական աշխարհի, թագաւոր և ի յողնասահման նահանգի. զի հայրն իմ ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մաւր իմոյ Խորիշահի՝ որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի շինեսցուք զեկեղեցիս ի գերեզմանատուն հարց մերոց ի Գանձասար, զոր սկսեալ մեր ի ՈԿԵ. թուին Հայոց աւգնականութեամբ բարերարին Աստուծոյ. և ի խփել լուսամտին արևելից մայրն իմ կրօնաւորեալ չոգաւ յԵրուսաղէմ երկրորդ անգամ, անդէն ի դրան Յարութեան խարազնագգեաց ճգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ և անդէն պահեցաւ։ Իսկ մեր զբաղմածուփ կենցաղոյս ի մոլ եղեալ փոյթ գործոյ արարեալ աւարտումն եղև շնորհաւք ողորմութեան ամենագութ Տեառն ՈՁԷ թուին գաւէորեալ ամենազան ձեռաւք, պատկերազան յաւրինակերտ զմբէթազարդ յաւրինուածովք յաւժարութեամբ կամաց մերոց, որպէս տեսանէ Աստուած. հոգացաք զպէտս միաբանից գիւղաւրայս Մաչեղ, Հարչանտուս բոլորքոջն, մէկ լուծ Խաչենաձոր, Նորաշէնական գետն Այգեստան, Սեղնկնի, զոր իմ հայրն էր տուեալ Սահակայն, Փուրկատոստիցն, Արծա-

թենիան, որ ես տուի խաչաւք, գրաւք, մասամբք, նշխարաւք, պատուական ձուլածոյ ամենայն սպասուք և հանդերձ երեսելի զարդուք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և Աստուծով ի մեր իշխանութեան եկեղեցիքս ազատ են կամաւ տէր Վարդանայ առաջնորդի սուրբ ուխտիս և միաբանիցս գրեցաք ժամ զաւազ խորանն բոլոր տարին մեզ, և այլ ամեն եկեղեցիքս զատիկն իւր ճրագալուցովն իմ հաւրն է Վախտանգայ, Աստուածածնին Դ. աւրն իմ մաւրն Խորիշահին, և յայտնութիւնն իւր ճրագալուցովն իմ եղբաւր Զաքարէի, զաւազ սեղանն, որ իմ է, յԱստուածածնէն մինչ ի խաչն իմ պապուն Հասանայ. յիսնակամտէն մինչ ի յայտնութիւն Մամքանայ իմ կենակցին, Ուխտրէից ելիցն մինչ ի առաջաւորն հասարակաց անյիշատակաց, բարեկենդանին Ա. շաբաթն իմ եղբաւր Դաւլին, Բ. (երկրորդ) շաբաթն իմ քուերն Մարինայ, աղուհացից շաբաթ կիւրակէքն իմ եղբաւրն Իւանէին, զատկէն մինչ ի Աստուածածինն և ի խաչէն մինչ ի յիսնակամուտն ինձ Հասանայ: Աւրհնեցաւ եկեղեցիս ի ՈՁԹ. թուին ի հայրապետութեան տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի: Հաստատէ գիրս կամաւն Աստուծոյ, որ հակառակի, ոսոխն Աստուած է և իւր սուրբքն: Անտանի տաւնին մի աւր ժամ Յովասափ միայնակեցին կատարի կամաւ մեծին Հասանայ»:

Վանքս ունի, իւր արևմտեան կողմին կից և հրաշագան *Գաւիթ*, նոյնպէս շինուած սրբատաշ քարով, որ կառուցեալ է երկու միապաղաղ միջնասիւների և վեց պատկից կիսասիւների վերայ: Միմեանց միջից անցած են չորս խաչաձև կամարներ, որոց վերայ բազմած է զանգակատան գեղեցկաքանդակ գմբէթն: Գաւիթս ունի երկու դուռն հիւսիսային և արևմտեան կողմից, մի փոքր կաթուղիկէ զանգերի համար, գմբէթի գլխին, 15 մետր 52 սանթիմ (արևելքից արևմուտք) երկարութիւն և 14 մետր 65 սանթիմ լայնութիւն (հիւսիսից հարաւ չափելով):

Արձանագրութիւն գաւթիս. «Թուին ՉԾԵ. կամաւն ամենակալին Աստուծոյ ես Ջալալ Դաւլաս որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ և ամուսին իմ Մամքան թոռն Բաղուց թագաւորին, և հարազատ որդին իմ Ամբարակն յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս և բազում աշխատութեամբ աւարտեցաւ, զոր և հայցեմ անմոռաց յիշել յաղաւթս ձեր. փոքր ընծայ տուի զՄատղեոն իւր չարեքտարովն, զձեռանց իւր սահմանովն: Դարձեալ ես Ամբարակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետուփ աւետարան և պատուական սուրբ նշան, զԽրիստափորն և զմեր հայրենի հարաւակուռն զԲլրին իւր սահմանովն. և սահմանեցին զխաչի ուխտաւրէքն պատարագել զՔրիստոս: Եւ եթէ քրիստոսագաւան որ հանել ջանայ, ի փառացն Աստուծոյ մահով և կենաւք նզոված է, և յիշատակ նորա մի յիշեսցի առաջի Աստուծոյ. և թէ մահմետական որ զհողն հանէ այս եկեղեցոյս, առ հասարակ նզոված յԱստուծոյ և ի մարգարէից»:

Վանքումն կան հետեւեալ զրչագրերն.

1) Գրչագիր յայսմաւուրք գրուած թղթի վերայ, սկզբից և վերջից թափուած են թերթեր. անխնամ պահուելուց բորբոսնած և ոչնչացած է:

2) Մի Սարգիս շնորհալի, գրուած թղթի վերայ, մեծադիր, պակասաւոր սկզբից և վերջից:

3) Մի հատ մեկնութիւն նարեկի գրուած թղթի վերայ, պակասաւոր սկզբից և վերջից:

Աչեր մասունքներով.

1) Արծաթեայ, ոսկեզօծեալ աչ, որի մէջ է մասն Ս. *Յովհաննէս Մկրտչի*, շինել տուած է Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսն 1779-ին և նորոգել տուած է Բաղդասար մետրապօլիտն 1848-ին:

2) Արծաթեայ ոսկեզօծեալ աչ, որի մէջ է *Տեառնեղբայրը Յակովբ առաքեալին*, ՌՃՂԲ. թուին շինել տուած է Աղուանից Եսայի կաթուղիկոսն:

3) Արծաթեայ ոսկեզօծեալ աչ, որի մէջ է մասն Աղուանից *Գրիգորիս Ա. կաթուղիկոսին* ՌՄԳ. թուին նորոգել տուած է Բաղդասար մետրապօլիտն:

4) Արծաթեայ աչ, որի մէջ է մասն Յակովբայ գլխա-

գիր առաքեալին, ՌՃՀԶ. թուին յիշատակ է Թարխանու։

Սրբոց մասունքներ խաչերում

5) Արիւն Զաքարիա մարգարէի մի բիւրեղեայ խաչում։

6) Մասն Յակովբայ Տեառնեղբօր եւ Պանդալիոն բժշկի գետեղուած մի արծաթեայ խաչում։

7) Մասն Ս. Գէորգի, գետեղուած արծաթեայ անճաշակ շինուած խաչում։

8) Մասն Պանդալիոնի մի արծաթեայ խաչի մէջ.

9) Մի արծաթեայ, տափակ և տապանաձև զարդի վերայ գրուած է. «Շնորհիւ ամենազօրին կազմեցաւ մասնատուփս նշխարաց սրբոց *Բանտալիոնի* և *Ուհանու Գընեցոյն* ձեռամբ Առաքել վարդապետի թվ. ՌՃԾԵ.»։

Գաւթումն ամփոփուած են.

«Այս է հանգիստ մեծին Զաքարի. յաղաւթս յիշեցէք. թվ. ՊԶ.»։

«Յովհաննէս կաթուղիկոս»։

«Այս է... Գրիգոր ...ոլիկոսին ..նից (Գրիգոր կաթուղիկոսին Աղուանից) ի ՌՃԲ. թուին»։

«Այս տապան Երեմիա կաթուղիկոսին Աղուանից, որ է յազգէն Զալալ Դօլին ՌՃԽԹ.»։

«Այս է տապան Եսայի կաթուղիկոսին Աղուանից, որ է յազգէն Զալալ Դօլին ՌՃՀԷ. թուին»։

«Այս է հանգիստ Գաւիթ կաթուղիկոսի, (որ է) որդի Բաղտասար պէկին»։

«Այս է տապան Յօհաննէս Աղուանից կաթուղիկոսին, որ է յազգէն Զալալ Դօլին թվին ՌՄԼԵ. ին»։

«Այս է տապան Սարգիս Աղուանից կաթուղիկոսին թվին ՌՄՀԷ. ին»։

«Այս է տապան Մեսրոպ Հաղպատեցի մեծի արհին
Կայսեր պսակ հովուապետին
Տանս Աղուանից Հայոց ազգին,
Յազգէ Զալալ մեծ իշխանին
Տեառն Արցախական աշխարհին,
Թվին ՌՅԳ. 1854 Գ. յուլիսի»։

Գաւթի հիւսիսային դրան ճակատակալ քարի վերայ.

«Թվին ՉԻ. կամաւն Աստուծոյ ես Յովհաննէս որդի Իւանէի առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ հրամանաւ տեառն Խաչենոյ Ամիրաքին յիմ հալալ արդեանց գնեցի զվարդանայ թաղս մին չորից և գնա և այլ ընծէք տվի սուրբ կաթուղիկէս. միաբանքս տվին զՈհանու, զԱկոբա տաւնին զամէն եկեղեցիքս ինձ պատարագ...»։

Վանքիս և գաւթիս որմերի վերայ արտաքուստ փորագրուած են բոլոր շարժական և անշարժ կալուած, ինչք նուիրողաց անուններն։ Ընդօրինակում ենք այստեղ ամենը, նպատակ ունենալով ի լոյս ածել ժամանակակից անունները, նուէրները, կալուածները, հաւատքը, յոյսը, սէրը և ջերմեռանդութիւնը։

Հիւսիսային կողմում արտաքուստ.

«Ես Այտինս, Խիմչէս որդիք Ամիրաքին տվաք Ալմաճայտաք հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսիսի թվ. ՋԽԴ.»։

«Ես Սմբատ որդի Փիրհամզին տվի Բեմին հողն իմ պապից հոգուն սուրբ ուխտիս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվ. ՋԻ.»։

«Թվ. ՋՂԵ. ես Սարգիս կաթուղիկոս որդի Հատիր Մէլիքին, Թոռն մեծին Սայտունին և գնեցի զհայրենիքն ի Կասրայ ղ. ըստակն, մինակ տան դ. ըստակն ու կէսն, Առատունոյ բ. ըստակն, Կոռալանայ դ. ըստակն տվի սուրբ ուխտս Գանձասարայ. ով զայս հայրենիքս հանէ ի սուրբ եկեղեցոյս, ԳՃԺԸ. հայրապետացն նզոված է, սուրբ Ովանիսիս (Յովհ» Մկրտ.) կապած»։

«Կամաւն Աստուծոյ ես Սայտունս որդի պարոն Աղբաստի տվի իմ հայրենեացն գՏանձաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Եղիայի. սորա ետուն տարուան· Գ. ժամ. ով զայս հայրենիքս հանցէ, յեկեղեցւոյս, ԳՃԺԸ. հայրապետացն նզոված է թվիս ԹՃԶ. (1507 փրկչ. թուին)»։

«Թվ. ՊԺ. Իշխանութեամբ մեծի Իւանէի ես տէր Կոս-

տանդ մեծ փափագանաւք գնեցի զզանկականիս, սուրբ ուխտս բերի»։

«Ես Տուրսուն Թոռն մեծի Ջալալին տվի Մսերչին հողն ի սուրբ ուխտս Գանձասար առաջնորդութեամբ տէր Նէրսիսի Թվ. ՋԽԲ.»։

«Ես Պաստամ որդի մեծին Ջալալին տվի Կունճի հողին կալէն վեր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսիսին Թվ. ՋԻ.»։

«Ի Թվս. ՋԻ. ես Պուտաղս ու Վախտանգս և այլ եղբարքս միաբանեցաք ու տուաք Փոուռանց, Կակաչանց, Ծաղկավանաց Գ. ըստակն տուաք ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Նէրսիսի»։

«Յանուն Աստուծոյ ես Սանայս Հանդաբերդցի եկի մեծ յուսով ի սուրբ ուխտս Գանձասարա իշխանութեամբ Ամաքակին, զիմ հոգոյ արդիւնքն կաթուղիկէս տվի, միաբանքս տուին զծառազարդն զամեն եկեղեցիքս ինձ պատարագ. Բ. ժամ իմ կողակից Մարհանին, ով խափանէ, իմ մեղացս պարտական է ՋԻ. ֆիւ»։

«Յուսովն Աստուծոյ ես Էսուգնաս դուստր մեծ ամիր Հասանայ, յետ մահուան մեծին իմոյ սահմանեցի զնա (?) սուրբ ուխտիս և տվի ընծայ տէր Յոհաննէսին. և միաբանքս տվին Բ. պատարագ ի տանի քառասնից... Թվ. ՋԾ.»։

«Ի ՌՄԼԹ. Թուիս կամաւն Աստուծոյ ձեռամբ տեառն Յովհաննու կաթուղիկոսին ես Սպաս (Մէլիք-Աբով) ուղբաշի որդի Մէլիք Յովսեփա Թալիշու և իմ կենակից Հերիքնազ և որդիք Մէլիք Պէկլար և Մէլիք Սպաս մեր հալալ արդեանց շինեցաք սրբոյ աթոռոյս Աղուանից Գանձասարու երկու եկեղեցեաց (տաճարի և գաւթի) տանիսն և խախտեալ որմունս բազում աշխատութեամբ յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց....»։

Գաւթիս արեւմտեան կողմում արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ ես տէր Նէրսէս Ամարասայ եպիսկոպոս եկի մեծաւ յուսով ի սուրբ ուխտս իշխանութեամբ Ամաքակին, միաբանեցայ, տվի զիմ հոգոյ արդիւնս, սորա ետուն Ե. աւր ժամ... ՁԼՍ.»։

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Բարսեղ որդի Ամաջուր երիցու, ամուսին իմ Մամաք.... գնեցի զՏնկլին երկիրն, տուի ի կաթուղիկէս..... Թուին ՋԻԵ.»։

Գաւթիս եւ տաճարիս հարաւային կողմում արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ ես Վէլիջան և եղբարքս իմ որդիք Սայտունին Թոռն մեծին Ամպաստու տեարք Խաչենու տուաք Աշմանայ իւր Գ. սահմանաւն 'ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի Թվ. ՋԻԹ.»։

«Կամաւն Աստուծոյ ես Մէլիքս որդի Սայտունին Թոռն մեծին Ամպաստու չուրջառ, սկի և այլ ընծայ Կակաչանց, Փոուռանց, Ծաղկավանց.. տվի ի սուրբ ուխտս Գանձասարայ....»։

Տաճարիս հիւսիսային կողմում ամփոփուած են.

«Յովսէփ՝ գիտնական վարժապետ—վարդապետ [1]) էր Ամագեանց Արցախայոյ պերճ, տապան որպէս կարես, հանդուրժես, մեծն վարժապետն ի քեզ կրեալ գետեղես, զհինաւուրց երախտաւորն ամփոփես, զանխոս մանկունս ի սուրբ հօրէն որբ թողես, եկայք ընկերք, ո՛ դուք մուղայք սիրասունք զհօրս զմահ յորդ արտասուօք ողբասցուք, եթէ Յիսուս զիւր Ղազարոս արտասուեաց. 1847»։

«Այս է տապան Արիստակէս եպիսկոպոսին, որ էր եղբայր Երեմիա կաթուղիկոսին ՌՃԼԳ. Թուին»։

«Մովսէս խաչակիր վարդապետ վախճանեալ 1849-ին»։

«ՈՂԴ. ես Ամադ կանգնեցի զխաչս ի փրկութիւն....»։

«Թուին ՈԾԱ. ես Վախտանգ որդի Հասանայ կանգնեցի զխաչս ի տապանի..... (կտրած է)»։

«Այս է տապան Գրիգոր վարդապետին, որ է ազգէն Ջալալ Դօլին Թվ. ՌՃՂԷ.»։

«Յովսէփ վարդապետ Խորայէլբէկեան Ջալալեանց Թվ. ՌՅԺԲ.»։

Վանքս ունի մի քանի թաղակապ հին սենեակներ և ՀՀջախարիսպ, որ ունի երեք դուռն—արևելեան, հարաւա-

---

[1]) Այս է գիտնական Յովսէփ վարդապետի գերեզմանն, որ շատ տարիներ վարժապետութիւն արած է Արցախիս վանքերումն։

յին և արևմտեան կողմերից։ Վանքս ունէր ընդարձակ հողեր, կալուածներ և անտառներ, ինչպէս տեսանք արձանագրութիւններից, որք այն աստիճան յափշտակուած են, մինչև անգամ մնացած է միայն 9000 արտավար հող ու անտառ, վասն որոյ բարոյապէս և նիւթապէս քայքայուում է աննման վանքս. հետզհետէ թափուում են քարերն և ոչնչանում, կաթում է շարունակ, զի խախտուած է տանեաց սալարկն, քանդուած է պարիսպն տեղ տեղ և չունի օրինաւոր դռներ. գողացուած են այնքան ընտիր ձեռագրերն, խոնաւութեան և անխնամութեան կերակուր եղած են մնացեալ ձեռագրերն, որպէս տեսանք. ամիսներով ժամ չէ ասուում վանքումս, քանզի ո՛չ կարգացող կայ, ո՛չ դպրոց, ո՛չ միաբան և ո՛չ գոնէ փոխասաց։ Մի վանահայր վարդապետ կայ այստեղ, որ ունի մի ծառայ։

ՊԱՌԱԻԱԶՈՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

Այս տեղն, որ կոչուում է և *Քեարխանի հարթ*, գտնուում է վանքիցս վերև Խաչեն գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ։ Այստեղ կայ մեծ գիւղատեղի, հանգստարան և երկու փոքր եկեղեցիներ, որք շինուած են պատկից։ Տակաւին կանգուն են եկեղեցիներս, բայց փլած է գաւիթն, որ շինուած է եղել տաճարներիս արևմտեան կողմին պատկից. դեռ մնում են չորս պատերն։

Հարաւային եկեղեցու որմի վերայ

«ՈԼ» *Թուին և իշխանութեան Սմպատա ես Բարսեղ երէց ու Սարգիս և այլ եղբայրքս և Սանասի իրիցո որդիք մեր ժողովրդովս շինեցաք զեկեղեցիս և բերաք զջուրս, որք երկրպադէք զտեղիս, յաղաւթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ»։ Գաւթում հիւսիսային որմի մէջ հաստատուած մի խաչարձանի վերայ.*

«Թուին ՈԼԲ.»։ Սորա մօտ մի այլ խաչարձանի վերայ.

«Թուին ՈՀԵ. ես Սարգիս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ յիշատակ Բ. ժամի ի տարւոջն...»։

Հանգստարանում, որ կայ տաճարներիս արևելեան հանդեպ, մի խաչարձանի վերայ. «Թուին ՈԻԹ. ես Գրիգոր կանգնեցի զսուրբ Նշանս Վասակ.....»։

ԴԱՐՊԱՍՆԵՐ.

Ջալալեան մեծահամբաւ իշխանազն տոհմի ապարանն է այս, որ գտնուում է Վանքաշէնն գիւղի հարաւային հանդէպ Խաչեն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ և Հաւասուկ վանքի արևմտեան կողմում։ Մի ընդարձակ շինութիւն է այս, որ իւր մէջ ունի շատ սենեակներ մի քարուկիր պարսպի մէջ։ Ջալալ-Օղլայի ապարանիս մէջ աւելի ուշագրաւ է ընդունարանն և մի այլ սենեակ, որք ներկայացնում են ժամանակին ճարտարապետութեան և ճաշակին ոճը։ Բարձրաշէն, ամրապատ, թաղակապ և գեղեցկատես են սենեակներս։ Թաղերի տակ շարուած են վայելուչ և բարակ խոյակներ, որոց վերայ դարձրած ապա թաղերն կամարների վերայ, որք չեչ քարի ազնիւ տեսակից են, համակ սրբատաշ։ Առհասարակ սակաւ են լուսամուտներն և փոքր։ Չկարողացանք իմանալ սենեկաց թիւը, քանզի ծածկուած են խտացեալ մացառով, ծառերով և մորենիներով։ Անհնար է հետազօտել առանց մացառուտը հարթելու։

Ապարանիցս մի քանի քայլ վար, մի շարքի վերայ շինուած է անտաշ քարով երկու միջակ մեծութեամբ եկեղեցի, որոց հիւսիսայինն ունի մի աւագ և մի փոքր խորան իւր հիւսիսային կողմում. իսկ հարաւային կողմի պատկից տաճարն փոքր է, բայց ունի առանձին դուռն, երկու փոքր և մի աւագ խորան։ Երկու տաճարներիս արևմտեան կողմում եղած է քարուկիր և թաղակապ սրահ, որպիսին էր Պառաւաձորինն, բայց խոնարհուած է այժմ ամբողջ թաղն։ Անյայտացած են Ապարանի և տաճարներիս արձանագիր քարերն։

ՀԱՒԱՊՏՈՒԿ ՎԱՆՔ (մօտ 5000 ոտք) (20).

Աւերակ վանքս, որ Ջաջուռ իշխանի ցեղի յատուկ դամբարանն է, շինուած է Դարպասների արևելեան կողմում, մի

ձուաձև բարձրացած սարի գագաթին վերայ: Վանքիս արևելեան ստորոտումն է Գեառնաքար շէնն, հարաւային հանդէպ Խոխանաբերդն, արևմտեան հանդէպ Դարպասներն և հիւսիսային ստորոտով հոսում է Խաչեն գետակն, որ կոչւում է Խաչենագետ: Վանքս փոքր է և թաղակապ, որ ունի մի փոքր գաւիթ իւր արևմտեան կողմում և մի սրահ տաճարի և գաւթի երկարութեամբ հարաւային կողմում: Այժմ խոնարհուած են գաւթի, սրահի և փոքր խորանի թաղերն ամբողջապէս, բայց մնումեն տակաւին որմերն: *Փոքր խորանի դրան ճակատակալ քարի վերայ:*

1163 «Թիւն ՈՃԲ. էր յիշխանութեան Հասանա որդո Վախտանգա և ամուսնո նորա Մամքանա ես տէր Յոհան քվերորդի տէր Գրիգորս և Գեորգ եղբաւրորդի և այլ միաբանքս չինեցաք զեկեղեցիքս 'ի փրկութիւն հոգոց մերոց և յիշատակ ծնողաց մերոց . . . .»:

Այլ քարի վերայ.

«Յանուն Աստուծոյ ես Ամիանաս, որ զԳոդին երկիրն գնեցի 'ի Հաւուց պտուկ տվի. հայր Գեորգ և այլ միաբանքս տվին ի տարումն Ռ. աւր պատարագ Նոր կիրակէին. որ զհողն յեկեղեցւոյս հանէ, ՅՃԸ. հայրապետացն նզոված է . . . . .»:

Հանգստարանում, որ խիստ մօտ է, մի խաչի վերայ.

1224 «Թուականն ՈՀԳ. էր ես Ջաջուռ որդի Խաղբակայ կանգնեցի զխաչս 'ի տապանի որդոյ իմոյ Սմպատա, ոյք երկրպագէք . . . .»: *Մօտ սրին.*

«Ես Վասակ կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Աբու [1]) Սեդայ». Ջաջուռ իշխանն ևս իւր Հասան որդուս գերեզմանի վերայ, որ հեռի չէ Աբաս-Սեդի տապանից, կանգնած է մի գեղեցկաքանդակ խաչարձան:

[1]) Արաբերէն աբու նշանակում է հայր. իսկ Աբու-Սեդայ՝ Սեդի հայր. օրինակ Աբու Բեքր, Աբու Նուսուփ, նշանակում է Բեքրի հայր, Նուսուփի հայր: Բայց այստեղ Աբու Սեդ նշանակում է հայր Սեդ: Ինչպէս կարծում եմ Արցախեան նահանգում գործածուած ապեր բառն ճեացորդ է Արաբացւոց աբու բառին: Այժմ ևս գործ են ածում Գեաբի-ապեր, Թիւնի-ապեր, ևն:

Վանքիս արևմտեան կողմում ոչ այնքան հեռի մի կիսատ և ընկած խաչարձանի վերայ.

«Թի. ՈՂԵ. յանուն Աստուծոյ յիշխանութեան Հասանայ ես Գէլորգ (Գեորգ) կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ . . . . . »:

ՀԱՄԱՄԻ ԶՈՐ.

Զորումս, որ գտնուում է Գեառնաքարից վերև կան բաղանիքներ ջրաձորի ձախ ափում, գիւղատեղի և հանգստարան և *Ամենափառ* անուն մի հնաշէն եկեղեցի: Այս ամենի համար աւանդաբար ասում են որ պատկանում են Ջաջուռ իշխանին և սորա յետագաներին: Դեռ մինչև ցայսօր ժողովուրդն յարգանօք է վերաբերում այս իշխանական հին շինութեանց:

ԼԱ. ՇՈՀԱՄԱՍՈՒՐ ՇԷՆ. Հիմնուած է դէպի Արծաթասարն երկարաձ լեռնաշղթայի հարաւային ստորոտում Վանքաշէնի և Ծմակահողի միջև, բնակիչք տեղափոխուած են Դիզակ գաւառի Առաքել գիւղից. հողն վանքապատկան և միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն. անվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80. եկեղեցին նորաշէն, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Վանք գիւղից:

Գիւղիս ծխաթիւերը և մարդաթիւերը մտցրած են Վանքաշինի հաշուոյն մէջ:

ԼԲ. ԾՄԱԿԱՀՈՂ ԳԻՒՂ [1]). Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հարաւային ստորոտում Առաջաձոր գիւղի և Շահմասուր շինի միջև, բնակիչք բնիկ, հողն բէկական, տեղական բերքերն նոյն. սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80—85. եկեղեցին Ս. Ստեփաննոս, քահանայ մի: Ծուխ 40, ար. 226, իգ. 197:

Անկնունք եղցի.

Գիւղիս մօտ կայ մի հին եկեղեցի, որը հասարակութիւնն

[1]) Թուրքերէն Բաղարքեանդ, իսկ հին անունն՝ Վաճառ գիւղ կամ գիւղաքաղաք:

անուանում է Անկնունք, այս է ոչ օծուած է և ոչ անուն դրուած:

Վաճառ աւերակ գիւղաքաղաք.

Գիւղիս արեւելեան հանդէպ, վաճառ առուի ձախ ափի լանջի վերայ երևում են ընդարձակ աւերակի հետքեր-տնատեղեր, խանութների և այլ շինութեանց քարուկիր մնացորդներ: Այս է Զալալեան իշխանների գիւղաքաղաքն, որպէս ցոյց է տալիս և անունն և աւերակն.

Ոչինչ պակաս ընդարձակ ծաւալ ունի և Վաճառ գիւղաքաղաքիս հանգստարանն, որի մէջ սրբատաշ չեչ քարով կառուցեալ է մի եկեղեցի, որի երկարութիւնն է 9 մետր 8 սանթիմ, լայնութիւնն 6 մետր 15 սանթիմ: Հիւսիսային խորհրդարանի ետև կայ մի գաղտնի մուտք, որի ետև և մի անյայտ պահարան: Ճաճարիս հարաւային կողմում, գրեթէ պատկից շինուած է մի երկյարկանի փոքր մատուռ նոյնպէս սրբատաշ քարով: Գետնայարկի մէջ կայ մի գերեզմանի նման շէնք, որ ուխտատեղի է: Վերնայարկ մատուռն ունի սեղան և լուսամուտ և դուռն արևմտեան կողմից: Փլած է մատրանս հարաւ արևելահայեաց կողմն:

Տաճարի արձանագրութիւնն.

«Ես Մամքան թագուհի ամուսին Զալալ Դաւլին և թոռն Բաղուց թագաւորին, այսինքն Սիւնեաց, շինեցի զեկեղեցիքս և տուի ընծայ Աչնճայ հողն զիմ հոգւոյ. սպասաւորքս Ե. պատարագ առնեն ինձ, և ծննդեան ութ աւուրքն իմ ծնողաց առնեն, մինչ մեռանիմ՝ ինձ: Ով որ որ զտուածս հանէ կամ զժամս խափանէ, դատի յԱստուծոյ և՝ի սրբոց թվին Չ. (1251)»:

Դրան արեւմտեան սեմին վերայ.

«Հրամանաւ աստուածասէր իշխանին Հասանա տեառն Խաչենո ես Գրիգոր որդի քաջ զաւրականին Զաջուռա ետու զԱւանախտուին երկիրն ի Սուրբ Նահատակս. տէրս և միաբանքս տուին ինձ Սուրբ Գրիգորի տաւնն Բ. պատարագ.....»:

Տաճարիս արեւմտեան կողմում.

«Յանուն Աստուծոյ ես Սարգիս Կարնու քաղաքացի սա-

լեցի եկեղեցիս և կանգնեցի զխաչիս ինձ և աշակերտի իմո Յովհաննիսի, յաղաւթ....»:

Արդէն ընկած են խաչերն:

Փոքր մատրան արեւմտահայեաց ճակատին.

«Ես Պապաքո և Խութլաս տուաք զԳոխինեներեն ի սուրբ Նահատակս, տէրս և միաբանքս տուին Ա. ժամ, Դաւթի տաւնին աղբայրակամ, կատարիչքն...»:

Մի ընկած քարի վերայ. «..ՉԾԸ. ես Գելանշահզեցի .... Ալանջալի կամ Եղերն և տուաք Սուրբ Ստեփաննոս. միաբանքս տուին Ա. աւր ժամ՝ի տարւոջն Ադնաձոյ (գուցէ Ատոմանց) տաւնին կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

«Շնորհիւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանկայ և Խորիշահի տէր Խաչենու շինեցի զսուրբ եկեղեցիս՝ յորժամ յայտնեցաւ մասունք սուրբ Ստեփաննոսի՝ի սոյն տեղւոջս ի թուին ՈՀԸ. (1229). սահմանեցի՝ի սպասաւորացն զժամ զատկին վասն ինձ և վասն հօրն իմոյ [1])»: Մեւնոյն Զալալ—Դօլա—Հասանն է արձանագրութիւնս գրել տուողն, որ շինել տուած է Գանձասարայ հռչակաւոր վանքը, ինչպէս տեսանք:

Եկեղեցուս հիւսիսային կողմում արտաքուստ կայ մի նշանաւոր մահարձան, որի վերայ կայ երկու գեղեցկաքանդակ քարեայ խաչեր: Երկար արձանագրութիւն կայ խաչերիս պատուանդանին վերայ, թէև եղծուած են գրերից շատերն, այսու ամենայնիւ ընդօրինակում ենք եղածը նոյնութեամբ, կէտեր դնելով պակասած տեղերում.

«..... ԻՉԱ.....րդի կանգ.... աչս յիշատակ Զալալ Դաւլին..... բարեխաւս ծ..... ՚ի Քրիստոս Թ. ՈՂԹ.»:

Լ. Գ. ԱՌԱՋԱՂՈՐ ԳԻՒՂ [2]). Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հարաւային ստորոտում, բնակիչք բնիկ, հողն բէկա-

[1]) Այժմ պարզուեցաւ մթութիւնն. Արձանագրութիւնս հաստատում է, որ յայտնուած է այստեղ Ս. Ստեփաննոս Նախավկայի և Նահատակի մասունքն. հաստատուում է, որ երկյարկ մատուռներս շինուած են Փրկչական 1229 թուին և կոչուած Ս. Ստեփաննոս, իսկ եկեղեցին շինուած է 22 տարի յետոյ, Չ. (1251) թուին դարձեալ յանուն Ս. Նահատակի (Սուրբ Ստեփաննոս Նահատակ):

[2]) Զիլէթ սար 5132 ոտք Առաջաձորից վերև:

կան, անջրդի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, առատ է լուբիան, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Աստուածածին, թաղակապ երկու կամարների վերայ, երկարութիւնն 16 մետր 13 սանթիմ. լայնութիւնն 9 մետր 15 սանթիմ և մի քահանայ: Եկեղեցւոյս Հարաւային կողմում. «Թվին ՌՃԹ և Է. հայրապետութիւն Պետրոս կաթուղիկոսին, գիւղիս տանուտէրութիւն Եաղուբ (Յակովբ) պէկին, աղասխկալութիւն Պհարին ես անարժան Դաւիթ էրեցս շինեցի զեկեղեցիս 'ի յիշատակ հոգոյ մերոց, ով կարդաք, ողորմի ասէք մեղաւորիս»: Ծուխ 197. ար. 814. իգ. 687:

Եկեղեցումս կայ մի *ձեռագիր աւետարան* գրուած թղթի վերայ, միջակ գիրքով, առանց պատկերի.

Ցիշատակարանիցն. «Արդ չնորհիւն Աստուծոյ սկսեալ և ողորմութեամբն կատարեալ 'ի ձեռաց մեզ. և բիծուն գրչիս Վարանէ (Վարդանէ) եպիսկոպոսիս 'ի խնդրոյ Եմաւուն քահանայիս: Արդ գինեցի (գնեցի) զսուրբ աւետարանս 'ի հալալ և արդեանց ինչից իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց»: Մատթէոսի վերջում գրուած է. «Զատացող սուրբ գրոյս և գծրաւղ սորա գՅորդան եպիսկոպոս յաղաւթս յիշեցէք»:

Աստուածաշունչ. կայ և մի ձեռագիր սուրբ գիրք, որը գրած է Խոսրով անուն ոմն, իսկ *ստացողներն* են Մելքիսեդեկ, Յովհաննէս և Մելիտէն քահանայք. բայց յայտնի չէ գրութեան թուականն: Երկրորդ անգամ սուրբ գիրքս գնած է Վաճառ գիւղաքաղաքացի պարոն Ռուզ-բէկն և իւր կողակից Հաւրին (Հուրին): Վերջին անգամ նորոգել տուած են գիւղաքաղաքին բնակիչներն. «Զվերջին աւր նորոգել տուող սուրբ Աստուածաշունչս ես Մկրտիչ, ես Մեհրսապս, ես Շահպանդս, Վաճառի մեծն և փոքրն նորոգել տվինք սուրբ Աստուածաշունչս . . . թվ. ՌԿԶ.»:

Աստուածաշունչս գրուած է թղթի վերայ, չունի պատկերներ, նախշեր և ծաղիկներ, բայց գեղեցիկ են գրերն և դիւրաւ վերծանելի: Հոտլթի գրքի վերջում գրուած է.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, փառիշահութեան Ջայան (Ջհան) Շահիս Ուլու պէկս որդի Մէջլիսին՝ թոռն մեծին Ձալալին, ես Շահանշէս որդի Մեհրապին՝ թոռն Արղութինի մեր հայրենեացս մէջն խաւսք իլաւ (եղաւ), պարոն Ուլու պէկին թալեղ [1]) մէկ մարդ մեռաւ. Արապայ հողին վեր [2]), գինացինք [3]) պարոն Աղայպաստին մուտ (մօտ). երեք սահրատին [4]) վեր արիւն կապեց, Արապայ հողն երետ Ուլու պէկին, սահրատն չինեց Սուաջաձորայ ջուրն [5]) ու վեր գայ Ցամաք ձորն, ջուրն վեր գայ Ցեց դրած քարերն. Պզտիկ Փոսն, վեր գնայ Կապն, գեայ գինայ Արապայ ջոթերն, գինայ Արապայ հողն, գինայ ւարն, վեր գինայ Սրխէ աղբիւրի հողն վեր գինայ Սթոռ, վեր գեայ Հաւազայ խոռն [6]), վեր գեայ Խաւն, վեր գինայ Քարհատն, վեր գինայ Քարի ջաղացն, գինայ գետն [7]): Այսչանք [8]) հանդ տեղ ա Շահանշին, իւր հայրենիք է, այլուն պուն բան չկայ (այլում ոչինչ չկայ). որ այլայլում անի, այն (նա) նահլաթ իլնի [9]). այս պայմանիս կապած Եղիա եպիսկոպոս առաջնորդ Գանձասարայ վկ [10]). ես Յովհաննէս կաթուղիկոս որդի Ջալալին, թոռն մեծին Աթապէկին վկ. ես Աղապաստի որդի Ձալալին վկ. ես Աղէկս որդի Ձալալին վկ. ես Միրզալիս որդի Տուրսունին վկ. Պաստամս վկ. ես Ամիր Հասանս որդի Ձալալին վկ. թ. ՋԵ. (1456)»:

Շրկու քարեայ խաչարձան. Կայ գիւղիցս Ծմակահող տանող ճանապարհի վերայ, բերդի հիւսիսային հանդէպ, խիստ մօտ: Մարգաչափ բարձր և մեծ խաչարձաններս կանգնել տուած է իւր ծնողաց գերեզմանների վերայ Սէր անուն ոմն. «Ի թվ. ՈԶՉ. ես Սէրս կանգնեցի զխաչս ծնողին Մայր

[1]) Մի մարդ մեռաւ Ուլու պէկի կողմի մարդիկներից:
[2]) Վեր գնացինք Արապայ հողից:
[3]) Գնացինք:
[4]) Երեք սահմանների վերայ:
[5]) Դատաւորն սահման որոշեց Սուաջաձորի ջուրը:
[6]) Իջնէ Աւազի մօտն (քանդուած տեղն):
[7]) Խաչեն գետակն (Խաչենագետն):
[8]) Այսչափ անդ տեղ է:
[9]) Նզովեալ լինի:
[10]) Այս կապած պայմանիս վկայ եմ Եղիա և այլն:

Տիկին (Մայր Տիկնոջ), որք երկիրպագէք Աստուծոյ Քրիստոսի, յաղաւթս յիշեցէք»։

Ճգնաւորի հանգիստ.

Ա. Ճգնաւորի բնակարանն և գերեզմանն գտնուում է գիւղիս եկեղեցուց վերև քարայրին մէջ, որի առաջի երեսն պատած, մի լուսամուտ և մի դուռն թողուած է։ Այժմ քանդուած է պատի վերնամասն։ Ո՞վ է և ինչ անուն ճգնաւոր. —ոչ ոք գիտէ։

Բ. Համանման քարայր և ճգնաւորի գերեզման կայ նաև *ճգնաւորի ծոր* կոչուած տեղում, գիւղիս արևելեան կողմում։

Գ. Յար և նման ճգնաւորի քարայր և գերեզման կայ և գիւղիս արևելեան կողմում Անապատի մօտ։

Անապատ. Գիւղիս արևելեան կողմում, մի բարձր քերծի տակ, բարակ ջրաձորի, բարձրից թափուած ջրվէժի աջ կողմում, Նապարանց Յարութիւնի պարտիզում կայ երկու փոքր եկեղեցի, որք համարեա թէ կից են միմեանց։ Եկեղեցիներս գրեթէ մեծ մասամբ գոյացած են քարայրից, որի առաջի կողը քարուկիր պատով պատելով ձևացրած են եկեղեցիներ։

Արևելեան եկեղեցին ունի երկու խորան. մինի վերայ գրուած է. «Սուրբ Ովաննէս Մկրտիչ»։ Իսկ մուտքի արևելեան կողմում մի քարի վերայ. «Խորանք սաւրին (սորին) է, որ ղրախտի նման են, երկնաւորի Հոգուն սուրբ են՝ զաւրաւարի՝ քրիստոնէից փրկանաւորեցաւ [1]) ի փրկութիւն Կարապետս և ի լուսաւորութիւն հոգոյ նորա չինեցաւ խորանս յիշատակ սմայ»։

Իսկ արևմտեան եկեղեցին չունի գրութիւն։

Եկեղեցիներիս դռների առաջ, (հարաւային հանդէպ) մի մեծ և անտաշ քարի վերայ.

«Յորժամ նկարեցան հղաւր հանքս, թիւն ՈՂԸ. էր, ես տէր Խաչի Նոյջալա, գրեցան, նկարեցան. կատարեցաք, առաք. և էջս յանող սորա մեր որդի՝ սուրբ տնաւրէնութեամբնահրիս-

[2]) Մինչև 1 թուանշանս փորագրուած է մուտքի մի քարին վերայ, որպէս դրեցի, իսկ թուանշանից վերջն՝ մի ընկած քարի վերայ է։

տոսի ի բարեխաւս հոգոց և մարմնոց և ի պարծանս...։ Էէր Եղիա չինեց զՍուրբ Աստապատս և ի սմա յեծէ, ի սմայ թշնամին կործանեսցէ սորա. այլք բարեկամեն սմայ. սա բարեխաւս է նոցա, որք միաբան են. սոցա բարին քո Տէր առատ խաղաղութեամբ ...ցէ, մնասցէ նմա այժմ ահա և հանդերձեալն, ոչ միայն ի մի աչեալ, այլ աւրհնեալ եղիցին միաբան։ Մայր Տեառն.. միամաւր իմ, յուսացեալ ի Միածինդ քոյ, լուաւորեա ընդ սուրբս քո»։ *Քարիս արեւելեան երեսին.*

«Որ Աստուծոյ արքայ Ջալալ Դաւլայ և Ալթաբակ որդին, որ Աստուծոյ [1]) իշխան Խաչենոյ և Ըռանայ [2]), Ուբան մանուկն Հասանայ սաղաբ դոլ Աստուած ու մեծ փառշայան պարոն չահ տէր Միքան Աստուծոյ սիրուլ մեաբան նայ ի սմա ՅԼ։ (330) մեծամեծ իշխանք և զաւրքն ՌՅ. (1300) աց միահամուռ, համակից միմեանց աւրհնեալ և զաւրացեալ եղիցին ի կամս Աստուծոյ Հաւր և նմա փառք յաւիտեանս ամէն։ Տունկս բարի, ծառս ամենի, պտուղն իւր հաղար բարի, ով փափագի՝ աստ վայելէ, կենաց յուսոյն նա հասանի, ողորմի Աստուած միաբանելոցս ի սմա սիրով և արդեամբք յամենայն բարեպաշտ իշխանաց մերոց, տացէ Աստուած զբարեմտութիւն հոգոց, մարմնոց մերոց. ամէն»։

Կարմիր եղջի. Գտնուում է Առաջաձորիս հիւսիսայինկողմում. գիւղիս ձմերանոց գոմերի մօտ։ Բոլորովին կանգուն է տաճարս, որի մօտ կայ և գիւղատեղի և հանգստարան։

Նահատակ. Նոյն կողմերում քարուկիր փոքր եկեղեցի, որի մօտ նոյնպէս կայ ընդարձակ հանգստարան և մեծ գիւղատեղի։

Լ. ԿՈՃՈՂՈՒՏ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն լեռնաշղթայից (Եկեղանայ սարից) դէպի հիւսիս թեքուած մի սարահարթի վերայ. բնակիչք տեղափոխուած են Վանքաշէնից, հողն վանքապատկան, տեղական բերքերն նոյն (չունին ոչխար), ամենապատուական օդն, կլիման և ջուրն, սքանչելի տեսարանն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին Ս. Աստուածած-

[1]) Կամ որ ըստ Աստուծոյ և կամ Աստուծով և կամ յաստուծոյ։

[2]) Առանի երկրին իշխող.

ծին, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Վանք գիւղից։

Վաղուց արդէն բնակիչ եղած է գիւղումս. հին է և եկեղեցիս և հանգստարանս, որ եկեղեցուս շրջապատումն է։ Տաճարիս դրան մի խաչքարի վերայ. «ՈՂԸ. ես Սարգիս որդի Սալանայ եկի աւտար աշխարհ. կալայ հազս մայր իմ (չալակեցի մայրս) Շահհնար, յաղաւթս յիշեցէք»։

Գիւղիս և Սրուխիւնաշինի ծուխերը ձգած են Վանքաշէնի վերան։

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ.

Հիմնուած է Կոճողուտի արևելեան հանդէպ եղած մացառուտ ձորում, այն առուակի հեղեղատի աջ կողմի բարձրութեան վերայ, որ խառնուում է Թարթառին։ Վանքս ունի բոլորակաձև և բարձր շինութիւն և կաթուղիկէ և մի դուռն արևմտեան կողմից։ Քանդուած են այժմ խորանն, կաթուղիկէի սալակէն և դռնագլխի քարերն։ Հանգստարան է վանքիս շուրջն, որոց մէջ կան գեղեցիկ ու մեծ մեծ խաչարձաններ։ Վանքս ունեցած է միաբանից սենեակներ, որք կործանուած են այժմ։ Ամայի է վանքս։

Ղորաստանայ մատուռ. Շինուած է վանքիցս վերև երկու բարակ ջրերի մէջ։ Աւերակ է այժմ մատուռս, որի մօտ է գիւղատեղի և հանգստարան։

Թխախոռ. Գիւղիս արևմտեան կողմում կայ այս անուամբ գիւղատեղի, հանգստարան և աւերակ եկեղեցի.....։

Գիւղիցս վերև կայ կիսաւեր մատուռ և ընդարձակ հին հանգստարան. որի մէջ մի խաչարձանից. «Թ. ՈՀԷ. ես Սարգիս որդի Բազար (առայ) կանգնեցի զխաչս մաւր իմոյ Աղ (իղին)»։

ԼԵ. ԱՐՈՒԹԻՒՆԱՅ ՇԷՆ կամ ԿԱՐՄԻՐ-ՔԱՐ. Շինուած է մի ձորակի երկու լանջերի վերայ, նոյն լեռնաշղթայի հիւսիսային կողմում. բնակիչք տեղափոխուած են Վանք գիւղից. հողն բէկական, տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 85—90 տ. եկեղեցին, քահանան և հանգստարանն Վաղահաս գիւղինն է։

Գիւղիս արևելեան հանդէպ Երի—Հոռաթաղ [1]) կոչուած տեղում կայ գիւղատեղի. հանգստարան և կանգուն եկեղեցի, նոյնպէս հարաւային կողմում եղած անտառում կայ աւերակ եկեղեցի, հանգստարան և գիւղի տեղ։ Նոյնպէս Վարի և Վերի Ղամշուտ-ծով (Եղեգնուտ-Լիճ) անուն տեղում կան գիւղատեղեր, հանգստարաններ և աւերակ եկեղեցիներ։

ԼՋ. ՎԱՂԱՀԱՍ կամ ՎՂԱՀԱՍ ԳԻՒՂ. *Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հիւսիսարևմտեան կողմում, Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ. հողն վանքապատկան, անջրդի և բարեբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տ. եկեղեցին Մայրաքաղաք կամ Տիրամայր, քարուկիր և խիստ հին, քահանան գալիս է Վանքից։* Ծուխ 40. ար. 160. իգ. 166։

Գիւղիս եկեղեցին սովորաբար կոչուում է Մայրաքաղաք, որի շրջապատում կայ մեծատարած հանգստարան։ Եկեղեցու մեծութիւնից և գերեզմանատան ծաւալից երևում է որ ժամանակաւ հռչակաւոր, վանք եղած է մայրաքաղաքս և բազմաբնակիչ գիւղս, որ փոքր է այժմ։ Վանքս կամ եկեղեցիս, որ ամբողջապէս շինուած է տորոնագոյն սրբատաշ քարով, ունի մի մեծ գաւիթ, հարաւային եկեղեցի և գրադարան։ Ամբողջ շինութեանս երկարութիւնն (արևելքից արևմուտք) 14 մետր 45 սանթիմ, լայնութիւն 12 մետր 97 սանթիմ։ Տարօրինակ ձև ունի գաւիթս, որի արևելեան հիւսիսային անկիւնն գրադարան է, իսկ արևելեան միջին և արևելեան հարաւային մասն երկու խորաններ և արևմտեան մասն գաւիթ, որի ամբողջ կամարներն խոնարհուած են և մնում են միայն չորս պատերն։ Սակայն կանգուն են գրադարանն միջի միջակ և հարաւային փոքրիկ խորաններն։ Գաւթիս հարաւային կողմին պատկից է մի նեղ, ցածր և բարձրաշէն եկեղեցի, որ ունի մի միայն փոքր խորան հարաւային

[1]) Երի՝ նշանակում է Վերի, Վարի—Հոռաթաղն արդէն գոմանոց է, բայց կան դեռ մի քանի գերդաստան։ Հոռաթաղ՝ նշանակում է Ուռի ձառի թաղ։

կողմում և մի մեծ խորան։

Դաւթի միջի խորանի ճակատին.

«Աստուծոյ չնորհիւն ես Կոստանդին (Ա.) կաթուղիկոս ամենայն Հայոց միաբանեցայ եպիսկոպոսարանիս 'ի ձեռն հոգիւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան Մեծի Ջալալ Դաւլին և առաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից Կաթուղիկոսի, և այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցին Գ. պատարագ ի տաւնի տեառնընդառաջին Բ. ինձ, Ա. տէր Մարգարին. կատարիչքն օրհնին յԱստուծոյ։ Ով հանէ զաւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ և հանեալ 'ի փառացն Աստուծոյ. 'ի թվիս ՈՂԵ. էր»։

Խորանի աջ կողմում. «ՈԼԲ. թուականութիւն Հայոց 'ի հայրապետութիւն տեառն Գրիգորոյ ես Հասան որդի Վասակայ չինեցի զեկեղեցիս . . . . .»։

Գրադարանի հարաւային պատի ստորոտում.

«Յառաջնորդութիւն Գրիգորոյ ես Սիմէոն և եղբարք իմ ետու չինել զփունախուցս և կազմել զգրատունս և եղբարք ետուն Բ. աւր պատարագ. կատարիչքն աւրհնին . . .»։

Քանդակագրուած է գաւթիս դրան արտաքին ճակատին.

«ԶԳրիգորէս և զմայր և զամուսին իւր յաղաւթս յիշեցէք Թիւ ՋԾԷ.»։

Գաւթիս արևմտեան և հիւսիսային կողմերում արտաքուստ եղած են ընդարձակ արձանագրութիւններ, որոց մէջ յականէ յանուանէ նշանակուած է եղել վանքիս նուիրուած անշարժ կալուածների քանակութիւնները, տեղերն և նուիրողաց անուննները։ Գրուած քարերս քանդած և անյայտացրած են . . . . . այժմ բաց մնացած են քարերի տեղերն։

Վանքիս հիւսիսային կողմում մի խաչարձանի վերայ.

«Յանուն Աստուծոյ ես Յոհան գրասէր և Վախտանգս կանգնեցաք զխաչս 'ի տապանի որդւոյ իմոյ Գրիգորի . . . . . Թիւն ՈԿԲ. էր»։

Վաղահաս գիւղիս շրջակայքում. Հին Վաղահաս գիւղն գտնուում է նորիս հարաւային կողմում, որ ունի ընդարձակ

գիւղատեղի, կիսաւեր մեծ եկեղեցի և ճոխ հանգստարան և մի քարեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3 մետրից։

Կամիր-Վանք, որ բարձր է փոքր ինչ աւերակիցս, և որ փոքր եկեղեցի է առանց կաթուղիկէի, բայց իւր մօտ կայ հանգստարան։

Վահին անուամբ երկու մատուռ, որք գտնուում են Հին-Գայլ [1]) (Ղոջա-Ղուրդ) սարի վերայ։ Մատուռներիցս, որ ուխտատեղի են, մէկի վերայ երբ լցնում են ջուր, անձրև է գալիս, իսկ միւսին վերայ երբ վառում են կրակ, արև է անում։ Վաղահասցիք կատարում են այս գործողութիւնները *երաշտային և անձրևային* ատիներում։

Վաղահաս գիւղիս արևելեան կողմում կայ *Մատաղիս* անուն գիւղատեղի, որ շատ հեռի չէ և ունեցած է՝ ըստ աւանդութեան՝ 800 տուն։ Աւերակիս հիւսիս-արևմտեան կողմում, Թարթառ գետի աջ ափի մօտ կայ մի քարուկիր *կիսաւեր մատուռ*, քարուկիր կամրջի աւերակ և մեծ մեծ քարեայ խաչարձաններ։

Խունկըթալա կոչուած տեղում ևս կայ աւերակ գիւղ, եկեղեցի և հանգստարան։

Վաղահաս գիւղիս արևմտեան *Հանդէպ*, խիստ մօտ է մի հին մատուռ, որի *դուռն* և արևելեան լուսամուտ արտաքին *կողմն* քանդուած են։

ԽԱԹՐԱՅ ՎԱՆՔ ԿԱՄ ԽԹՐԱՎԱՆՔ.

(Թերեզմանատուն Դովփեանց ցեղին)

Հիմնուած է Դովփեանց Գրիգոր իշխանի գանձով Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ մի սարահարթում, որ հեռի է Վաղահասից դէպի արևմուտք $3^1/_2$ մղոնաչափ։ Կառուցեալ է չորս սիւների վերայ, որոց երկուսն միապաղաղ են և միւս երկուսն երկերկոտոր չորս կամարների գլխին բազմած է գմբէթն։ Վանքս ունի երկու փոքր և

[1]) Բարձրութիւն Գալլասարիս 7875 է։

մի աւագ խորան, մի առանձին խորան ևս հիւսիս-արևմտեան կողմում տաճարիս արևմտեան անկիւնում, մի գաղտնի պահարան հիւսիսային դասի ձեղունի մէջ [1]), *երեք դուռն հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից, 17 մետր 10 սանթիմ երկարութիւն, 14 մետր լայնութիւն։*

Արտաքուստ տաճարիս արեւելեան ճակատին.

«Ի ՈԾԹ. (1204) թուիս ես տէր Յովհաննէս չինեցի զեկեղեցիս (արդեամբ նոյն իշխանի) և ժողովեցի զխաչս և զպիրս որ ի սմա և արկի զՋոթացն այգին և զՄատաղիսն [2]) բաղում աշխատութեամբ, և ետու զվանքս իւր ամէն սահմանաւն իմ եղբաւրս (եղբօրս) Հասանայ և իւր որդեանցն Հաթերքու տեառն միջնորդութեամբ. ով խափանէ, խափանեսցի ի կենացն Աստուծոյ»։ «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ որ երբ իմ աղբերս զեկեղեցիս չինեաց ու զվանքս ինձ երեւ, ես զԽնձորոյ Բակս իւր սահմանով ի ի յեկեղեցիս տուի, ով հակառակ կայ, Աստուծոյ հակառակ կայ, ով զայս գիր խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»։

Մի չարդուած կիսատ քարի վերայ.

«Կամաւն Աստուծոյ ես Հասան և մայր իմ Շուշիկ չինեցաք զսուրբ կամար, Պետրոս հաւր իմոյ..... Թվ. ՈԿԴ.»։

Վանքիս ներսում՝ քեմի երեսին.

«Շնորհիւ Քրիստոսի ես Ասիէ [3]) դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի, թագաղարմ մաւրն իմոյ Մինա Խաթունին, նպաստ եղեալ քրիստոսապսակ զկնոջ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի՝ ի չինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս, կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննիսի՝ զիմ յարդար ընչից կանգնեցի Բեմի սեղան՝ ի պենման Քրիստոսի, զի յամենայն կիրակէ և շաբաթ տաւն ծննդեան և տեառնընդառաջին, ատկին, զվարդավառին, աստուածածնին և սուրբ

[1]) Գաղտնի պահարան կայ և աւագ խորանի գլխին։

[2]) Միանոյն Մատաղիսն աւերակ գիւղ է, որ էր Վաղահասի արևելեան կողմում։

[3]) Տես սորա մասին Գարդման դաւառի թարգմանչաց վանքի աւետարանի յիշատակարանը։

խաչի ինձ կատարի պատարագ զամեն եկեղեցիքս. որ և տուէ զմեր Խաս հողն Բլրի հանդի զսենեկպան ա. բահի ջուր, թէ որ՝ի մերոց կամ յաւտարաց զայս յայս եկեղեցւոյս հանէ կամ զպատարագն խափանէ, ՝ի փառաց որդւոյն Աստուծոյ, որոշեալ եղիցի»։

Զախակողմեան փոքր խորանի վերայ. «Այս ձախակողմ խորանի սուրբ Պետրոսիոս է, զմեծ տէր Յովհաննէս չինող եկեղեցոյս որդի Դաւիթին, եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղաւթս յիշեցէք»։ «Աջակողմեան սուրբ Մինաս, զՄինա խաթուն դուստր մեծ իշխանին Զալալին և ամուսին Տարսայիճին յաղաւթս յիշեցէք»։

Վէմ քարի վերայ.

«Աստուած ողորմեա Սմպատիս եղբաւր...»։

Հիւսիսային վերջի սիւնի վերայ.

«Աստուծով ես Աղարիա միաբանեցայ սուրբ ուխտիս, տէր Յովհաննէս և միաբանքս տուին Ա. աւր ժամ համբարձման...»։

«Կամաւքն Աստուծոյ և Հասանայ և տէր Յովհաննիսի ես Յակոբ ստացայ զսոյնս (սիւնս) հալալ արդեամբք իմովք, և միաբանքս ետուն ՝ի տաւրուջն Դ. պատարագ.....»։ Վանքս նորոգուած է ՌՃԽ. թուին Հայոց Յօհան, Բարսեղ, Աթանաս և Ղազար վարդապետների ձեռնով։

Վանքումս, մէջ տեղին մօտ, կայ մի գերեզման, որի տապանաքարի արձանագրութիւնը անհնարին եղաւ կարդալ, քանզի պատեց միգամածն, մթնեց տաճարիս ներսն, չկար մոմ վառելու, մօտենում էր երեկոն, $3^1/_2$ մղոնաչափ (մօտ 25 վերստ) ճանապարհ ունէինք գնալու և այն գազանների միջով. վասն որոյ մնաց առանց կարդալու։ Սակայն գիտենք հաստատապէս, որ բարեպաշտուհի Ասփայի մարմինն ամփոփուած է տաճարումս։ Օրհնեալ տիկինս Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանին դուստրն էր և Դոփեանց քաջ Հասան իշխանի որդի Գրիգոր իշխանին ամուսինն։ Ասփայ տիկինս վախճանուած է Հայոց ՉԿ. (1311) և ամփոփուած վանքումս (տես նոյնը Թարգմանչաց վանքի աւետ. Ա. յիշատակարանը)։

Ջանգատուն. Շինուած է [1]) վանքիս արևմտա-հիւսիսային անկիւնում արտաքուստ, երկյարկ և սրբատաշ տորոնագոյն քարով: Վանքս ունի և շրջապարիսպ, քարուկիր սենեակներ և խուցեր իւր հիւսիսային կողմում: Այժմ աւեր է պարսպի հարաւային կողմն և մի քանի խուցեր: Պարսպի մեծ դուռն, որ հիւսիս-արևմտեան կողմից է, դեռ կանգուն է իւր պատերովն: Վանքս շրջապատուած է անտառախիտ վաղեմի ծառերով:

Վանքիս կալն. Շինուած է տաճարիս արևելեան հանդէպ, ձորի աջ կողմի սեռի վերայ: Կալիցս փոքր ինչ վերև նոյն սեռի վերայ կայ մի *քարուկիր մատուռ*, որի մօտ նաև այլ կալեր:

Խաչարձան եւ կամուրջ. Վանքից ներքև Թարթառի վերայ կայ մի հին կամուրջ և կամրջիս մօտ մի խաչարձան, որի վերայ քանդակուած է. «Կամաւն Աստուծոյ եւ Աստիայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինայ խաթմունին և ամուսին հսկայազաւր իշխանին Գրիգորի որդւոյ մեծ իշխանին Հասանայ քաջի տեառն Աղուանից կապեցի պխաչս, չինեցի զկամուրջս յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից և ապագայից»:

Այլ խաչարձանի վերայ. «Յորժամ թուականն էր ՈՁ. (1201) բարեպաշտ պատրոնիկն Վասակ թոռն Իւրիկայ թագաւորին, որդի Հասանայ որդւոյ Սակռայ տեառն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին, եղբայր Վախտանկայ Նորին աթոռակալի երեր պխաչս և ոչ կարաց կանգնել վասն անպատրաստութեան. քանզի երթեալ եղև ի Գոլաշտեան և առ դնա յանաւրինաց աւգնութեամբն Աստուծոյ և բնակեցոյց անդ զորդին իւր և ինքն նահատակեցաւ 'ի վերայ քրիստոնէից և իջեալ լոյս 'ի վերայ 'ի տեսութիւն բազմաց. և յետոյ ՈԾ. թուին կանգնեցին որդիք նորա Խոյդան և Խաւչանն յիշատակ հոգւոյ նորա և յերկարութիւն կենաց իւրեանց....»:

Պէտք չէ մոռանալ իմ առաջնորդը, որ վաղահասցի մի

[1]) Շինել տուած է Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսն (տես Դաժի վանուց արձանագր. շարքում):

քաջ, սրտոտ և զուարթ երիտասարդ էր Գրիգոր Օհանեանց անուամբ և որ օգնեց ինձ ամեն կերպով:

Խոթայ վանքից ներքև, Թարթառի աջ ափերի վերայ, հետևեալ աւերակ գիւղերում կան աւեր եկեղեցիներ, մատուռներ և հանգստարաններ—*Ջոխտակ-եղջի, Վարդանայ գիւղ, Մրջման շինատեղ* (ընդարձակ աւերակ):

ԽՍՋԵՆ ԳԱԻԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ.

Ա. *Շիկաքար* (21) որի տեղն այժմ կոչուում է Քարագլուխ, իսկ սորա հիւսիսային բարձր գերծն՝ Շիկաքար (մօտ 3100): Բերդս ունի երկու մուտք—*արևելեան և արևմտեան* կողմերից. դռների կողքերն ամրապնդուած է եղել քարուկիր պատերով, ինչպէս նշմարուում է հետքերից:

Բ. Բերդն է *Ուլու-պասպի* ամրոցն, որ կայ Պագեսբերքի մօտ: Բայց ամրոցիս մէջ ևս չկայ ջուր: Այս բերդն Շիկաքարի չափ հին չէ, այլ պատկանում է Զալալեան իշխանների ժամանակներին:

Գ. *Կաչաղակաբերդ*, (5642 ոտ.) որ գտնուում է Պարեջիք գիւղի արևմտեան կողմում: Ձիով մի ժամի ճանապարհ է Պարեջիք գիւղից մինչև ամրոցս, որ արձանացած է Մեծ-Իրանաց վանքի հարաւային կողմում: Բերդակալ (22) սարն ժայռ է միապաղաղ, առանձնացած բոլորովին իւր չորս կողմերից և սեպաձև ցցուած հիւսիսից հարաւ դիրքով. որի մակերևոյթն փոքր ինչ թեքուած է դէպի հարաւ: Բերդաքարիս արևմտեան, հիւսիսային և արևելեան կողմերն գագաթներից մինչև գետինն բնութեան քարտաշն այնպէս ուղիղ կտրած է, կարծես թէ յատկապէս կանխաւ մրաթելով նշան արած լինէր: Հարաւային կողմով վիմահերձից վիմահերձ պատուած է քարուկիր պատով, նոյնպէս միւս կողմերով քերծերի եզերքներովն: Միայն հարաւային կողմից է մուտքն, որ բաւական դժուարատար է: Բաւական տարածութիւն ունի բերդիս մակերևոյթն, ուր կայ շատ բնակարանների բակեր: Ափսոս որ ջուր չկայ բերդումս, որ արժանի է *անառիկ*

տիտղոսին. բայց գրեթէ կեդրոնի մէջ ունի մի վիմափոր քառանկիւնի հոր: Պատերազմների ժամանակ ջուր բերած և լցած են հորս այն պատուական աղբիւրից, որ գտնուում է մուտքի ուղղութեամբ դէպի հարաւ փոքր ինչ հեռի: Քանի՛ գեղեցիկ տեսարան ունի ամրոցս, հարաւային կողմում երեւում են Քիրս լեռնաշղթան, Շուշին, Բողրխան, Խաչենի հարաւակողմի գիւղերն, արևելեան կողմում մօտուստ Սուրբ Գէորգ, հեռուստ Կովկասեան լեռնաշղթան, հիւսիսային կողմում Ջրաբերդի լեռներն, Առաջաձորի լեռնաշղթան, Մռաւսարն, իւր ստորոտում Աղուան [1]) պատն, իսկ իւր արևմտեան կողմում Խոխանաբերդն և Նատարի-Ղալան:

Դ. *Խոխանաբերդ* (23) կամ Թարխանայ Ղալա. (6237)

Զորս կողմերից առանձնացած և ձուաձև արձանացած մի բարձր ժայռ է մի բարձրագոյն սարի վերայ, որ կայ Գանձասարի հարաւային հանդէպ, Խաչեն գետակի աջ կողմում: Սաստիկ գառիվեր, խիստ վտանգաւոր և միշտ ահարկու կածան ժեռքարի վրայով արևելեան կողմից դէպի հարաւ արևմուտք բարձրանում է մանուածոյ ձևով: Ահա այսպիսի դժուարատար և միանգամայն սոսկալի է նեղ կածանն, քանզի, ծէրն մի՛ արասցէ, եթէ սահեցաւ բարձրացողի ոտքն կամ փոքր ինչ ծռուեցաւ նորա մարմնոյ հաւասարակշռութեան դիրքն, խպտաւ կորսուած է. վասն զի ընկնելուց յետոյ սեպացեալ ժայռերին զարկուելով պիտի գլորուի անդունդն: Բերդակիս մակերևոյթի տարածութիւնն աւելի չէ երեք կալաչափ մեծութիւնից. այսու ամենայնիւ պակաս չեն քարուկիր հին շինութեանց հետքեր: Քարուկիր պատով պատուած են տեղ տեղ ժայռիս կատարն, ոչ եթէ խպտաւ խզելու համար թշնամեաց մուտքը ամրոցիցս, այլ որպէս զի մարդ

[1]) Այս վաղեմի պարիսպն, որ ընկած է Խաչեն գետակի և Քոլատակ վտակի մէջ՝ խառնուրդի մօտ, չկարողացանք իմանալ թէ ինչ պատճառաւ կոչուում է Աղուանք, թէ և ջանքն անպակաս եղաւ մեր կողմից: Արդեօք պարսպի խիստ հեռաւոր հնութեանն պատճառաւ. թէ Աղուանից թագաւորների ժամանակից շինուած լինելու պատճառաւ—Միայն յայտնի է որ պարիսպս շինուած է ռազմագիտական դիրքով, որով արգելուած է թշնամին ջրաձորս մտնելուց: Սորա մասին տես ծանօթութիւն 26:

չընկնի վերևից վար պաշարուածներից: Արդարև *անառիկ* է ամրոցս և միանգամայն անմերձենալի և շրջապատուած վտեմի անտառներով: Բայց որովհետև այստեղ ևս չկայ ջուր, վասն որոյ պատրաստած են վիմափոր հորեր և ի պահանջել հարկին ջուր բերած մօտակայ աղբիւրից, որ գտնուում է բաւական տեղ ներքև: Թէ որքան դժուարութեամբ իջանք, թողնում ենք բարեմիտ ընթերցողաց երևակայութեանց:

Ե. *Նատարին* (24) Ղալա. (6493 ոտք) Համարեա թէ յար և նման ամրոց է այս Խոխանաբերդին: Առաջինն գտնուում է վերջնոյս հարաւային կողմում քառորդ մղոն հեռաւորութեան վերայ: Միայն թէ Նատարն բարձրանալու ուղին այնքան վտանգաւոր չէ:

Զ. *Անանուն ըերդակ.* Գտնուում է գրեթէ Առաջաձորի և Ծմակահողի միջև երկու քարեայ խաչերի մօտ: Բերդաբլուրն բոլորովին առանձնացած և ձգուած է հիւսիսից հարաւ դիրքով և միանգամայն թրաձև տեսքով. վասն որոյ նեղ և երկար է բերդակիս մակերևոյթն բլրի գագաթի ձևով: Պարսպուած է բլրիս գագաթն ամուր պարսպով, միայն հիւսիսային ու հարաւային անկիւններում շինուած են երկու բուրգեր, որք միևնոյն ժամանակ ծառայած են իբրև ջրամբար, որոց ջուրն բերուած է մօտակայ աղբիւրներից: Անպակաս են և սորա միջից քարուկիր հին տնաբակեր:

Է. *Խաթրայ ըերդ* (25) Գտնուում է Խաթրայ վանքի արևմտեան հանդէպ, ձորի ձախ լանջի գլխի քերծի մէջ: Այս ընդարձակ քարայրի նման մի տեղ է, որի առաջն պարսպուած է և որ ունի մի դժուարատար և վերելակ կածան: Այս ևս պատկանում է Ջալալեան իշխաններին: Շատ անգամ եղնորթներն գալիս և պատսպարուում են ինչպէս բերդումս, նոյնպէս և Խաթրայ վանքում:

Ը. Գ.Ա.Ի.Ա.Ն, որ ընկած է Թարթառ գետի և Եանշաղ վտակի ձախ և Թրղի գետակի աջ ափերի, Մթնաձորի [1]) և այս ձորի սարի լեռնաշղթային մէջ, որի ստորին ծայրն

[1]) Ղարանլուխ-գէրէ:

հասած է նոյն Թարթառ գետի ձախ եզրին, ստացած է *Ասիսական, Ղուտակ* և *Հաթերք* անունները։ Գաւառս հարուստ է *ջրերով, անտառներով* և *ամարանոց* պատուական լեռներով, բայց փոքր գաւառակ է։ Ըստ կարգի այժմեան դասաւորութեան մարմնաւոր կառավարութիւնն միացրած է գաւառակս Ջրաբերդի հետ։

Ս. ՀԱԹԵՐՔ ԳԻՒՂ (27). Հիմնուած է Թարթառ գետի ձախ կողմում, մի բերդասարի արևելեան ստորոտում, բնակչաց փոքր մասն բնիկ, իսկ մեծ մասն տեղափոխուած Փառուխ, Կղարծի, 2 Ճարտար, և Խաչեն գաւառի Խանճախ գիւղերից և Վանից, հողն արքունի, մեծ մասամբ անջրդի և բարեբեր, տեղական բերքերն ցորեն, գարի, գարնանի, գարնագարի, հաճար, կորեկ, կտաւհատ, սորեկ, լուբիա, բակլայ, խաշխաշ, սիսեռ, ոլոռն, տանձ, խնձոր, թուզ, կեռաս, ոչխար, տաւար, գոմէշ, ձի, խոզ. օդն և կլիման բարեխառն, պատուական ջուրն, երկար կեանք 80—90. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս կամարների վերայ առանց միջնասիւների, խիստ հին և բոլորովին անշուք, երկարութիւն 22 մետր 75 սանթիմ, լայնութիւն 9 մետր 85 սանթիմ. քահանան գալիս է Մեծ-Եէնից։ Ծուխ 70. ար. 369. իգ. 325։

Եկեղեցուս դրան արտաքին կողմում մի քարի վերայ կայ կանացի պատկեր, որի շուրջն քանդակուած է կարակնաձև.

«Կամաւն Աստուծոյ ես տէր Թաթէոս, Մարկոս եղբարքս ամեն կանկնեցինք Սուրբ Աստուածածնայ եկեղեցիս, Ընծակէս աւագ քահանայ. Տէր Աստուած ողորմեայ»։

Մուղդուսին գեղջմանոտ. Ընդարձակածաւալ, վաղեմի հանգստարան, որ կայ գիւղի արևելեան հանդէպ, ձորի միւս կողմում։

Մացառուտների մէջ խաչարձանների վերայ.

1) «Սուրբ խաչս բարեխաւս պարոն Ղալաբէկին թվ. ՌԿ.»։

2) «Սուրբ խաչս է բարեխաւս Խանխաթունին հոգուն,

Մանկասարին»։

3) «Սուրբ խաչս բարեխաւս Խաթունին հոգուն»։

4) «Կամաւն Աստուծոյ պարոն տէր Ոհանէս կանգնեցի սուրբ խաչերս. Թագաւոր Շահ Աբաղն, երկրիս պարոն տէր Ոհանէս»։

5) «Կամաւն Աստուծոյ ես Ղալաբէկի Ո... հաւր եղբայր իմ պարոն տէր Ոհանէս Ղա.... [1])։

6) «Սուրբ խաչս բարեխաւս Զիլփիխանին»։

Մի այլ խաչազարդ քարի վերայ. «Աստուած ողորմի Դէլոյիխանին, որ է որդի Սարումին»։ Սորա վերայ կայ մի գալխոնի քանդակ։

Հաթերքիս շրջակայքում կան հետևեալ հնութիւնները.

Ճատղաբլուր. Մի բլուր է, որ գտնուում է գիւղիս արևելեան հանդէպ Թարթառի ձախ կողմում։ Բլրիս վերայ կայ մի հնաշէն մատուռ, որի մէջ է մի գերեզման, որ մեծ ուխտատեղի է։ Բայց այժմ խոնարհուած է թաղն։ (28)

Քարահունջ. Խիստ մօտ Հաթերքին հարաւ-արևմտեան կողմին, կանգուն քարուկիր եկեղեցի, հանգստարան և գիւղատեղի, որի ահագին ընկուզի ծառերն ապրում են տակաւին։

Մասիս կամ Մսիս անուն ուխտատեղի աւերակ մատուռ, որ շինուած է Մռաւ սարից անջատուած մի լեռնաբազկի սեռին վերայ, Հաթերքի հիւսիսային կողմում։

Շուքավանք, որ շինուած է մի թանձր անտառի մէջ, այժմ աւերակ է վանքս, մնում են միայն չորս պատերն։

Մթնաձոր. (Ղարանլուխ դէրէ) աւերակ եկեղեցի, հանգստարան, գիւղատեղի, կալեր, մարագատեղեր։ Աւերակիս մօտ կայ մի ամենապատուական և մեծ աղբիւր։

Սուին շինատեղ, հանգստարան և գիւղատեղի, որի եր-

[1]) Հետևելով բոլոր արձանագրութեանց տեսնում ենք որ պարոն տիտղոսը կամ պատուանունը յատկացրած են միայն այն եպիսկոպոսներին, վարդապետներին և քահանաներին, որոց ծագումն իշխանական է, նոյնը տեսաւ նաև ընթերցողն։ Աւանդարար ասում են որ սոքա են Առաք. պատ. (Գ. գլ. 9 եր.) գրուած. «Ողջան քեշիշն և իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ»։ Սոքա, որք գնացած են լինում Պարսկաստան, վերադառնում են վերստին իւրեանց հայրենիքն։

կու կողմերով հոսում են ջրեր և թափուում Թրղին գետակի մէջ, որ օժանդակն է Թարթառին։

Ծոս գիւղատեղի—կալեր, ընկուզի ծառեր, կալատեղեր և այլն։

Խոտորաշէն քարուկիր տնաբակեր, ջրաղացներ, հանգստարան։ Գիւղից տեղափոխուած են գանձակի գետաշէնցիք։

Սրաշէն (Սարին շէն) քարուկիր մատուռ, հանգստարան։

Սումին շինատեղ. նոյնպէս գիւղատեղի, հանգստարան և հիմնայատակ մատուռ։

Երկու լճակներ կան Հաթերքի հիւսիսային և 2 արևմտեան կողմումն։

Ականայ աւերակ. Մեծ գիւղատեղի է Ականայ անուն վտակի աջ կողմում շինուած, որի մէջ կանգուն է տակաւին եկեղեցին որ կառուցեալ է հոյակապ վեց սիւների վերայ, բայց անմարդաբնակ։ Տակաւին մնում են ընկուզի, թթենի և դամոնի ծերունազարդ ծառեր, և ընդարձակ հանգստարան աւերակիս մօտ։

Բ. ՁԱՓԱՐ [1]) ՇԷՆ. Հիմնուած է Հաթերքի արևմտահարաւ կողմում, Թարթառ գետի ձախ ափին մօտ. եկեղեցին, հանգստարան խիստ հին են. այժմեան բնակիչք՝ մօտ ութ տարի առաջ տեղափոխուած են 20 ծուխ Ղալաղչլաղ, Ծամձոր և Տաթև գիւղերից՝ բնակութիւն հաստատած այնտեղ. ամենայն ինչ նոյն։ Ծուխ 12. ար. 35. իգ. 30։ [2])

Կայ *ալղնձահանք* Նոր-շէն աւերակ գիւղի մօտ, որ Զափար-շինի հարաւային կողմումն է, և Դադի վանքին հարաւային կողմում—Թարթառի ձորում։

Սկսեալ Զափար շինից մինչև Խոթայ վանք, մինչև Եանշաղ կան շատ աւերակներ, որոց մէջ կան աւերակ եկեղեցիներ և մօտերքում հանգստարաններ։ Գաւառումս այժմ մնացած են միայն երկու հայաբնակ գիւղ. երեսուն գիւղից աւելի է մնացեալ հայ գիւղերի աւերակներն, որոց շատերին

[1]) Զ ա փ ա ր գ ի ւ ղ անուն յիշուած է Դադի վանուց արձանագրութեանց մէջ։

[2]) Վերադարձած են իւրեանց գիւղերն 8 ծուխերն։

մէջ այժմ տեղակալած են աւազակաբարոյ Քեօլանի անուն մահմետականներ։ Այսպէս են Խոթ գիւղն և Եանշաղ վտակի մօտ եղած Եանշաղ գիւղն, որոց մէջ բնակում են մահմետականք, բայց եկեղեցիներն մնում են դեռ կանգուն։ (Եանշաղ գիւղիս մասին տես և Ջրաբերդ գաւառի Մաղավուզ գիւղի մաշտոցն)։ Ահա այսպէս թափուր մնացած է խեղճ Ղուտակ գաւառս հայ բնակիչներից։ Մի առ մի գրելով աւերակները՝ ձանձրացնում եմ իմ յարգելի ընթերցողները։ Ես չձանձրացայ մի առ մի շրջելուց, Դուք էլ մի՛ ձանձրանաք կարդալուց, ձեր հոգուն մատաղ, սիրելի ընթերցողք։ Այցելուն համարեա ամեն քայլափոխում տեսնում է խաչարձաններ, աւեր կամ կիսաւեր մատուռներ, եկեղեցիներ և վանքեր, գիւղերի և շէնների աւերակներ և՛ն. և՛ն.....։

ԴԱԴԻ ՎԱՆՔ [1]).

Վանքս գտնուում է Թարթառ գետի ձախ կողմում Խաթրայ վանքի ուղղութիւնից բաւական վերև, և ունի վաղեմի շրջապարիսպ։ Առաջին անգամ վանքս հիմնարկուած է, ինչպէս վկայում է աւանդութիւնն, Թադէոս առաքեալի Դադի անուն աշակերտի անուամբ։ Բայց անյայտ է այս շինութեան թուականն, զի հետզհետէ նորոգուած է հնութիւնս այլ և այլ ժամանակներում. վասն որոյ և գլխովին անյայտացած է հնութիւնն, միայն մնացած են նորոգութիւնները։ Ահա այս վանքիս վանահայրն էր Վախտանգ թագաւորազնի որդի Գրիգոր եպիսկոպոսն, որի մօտ գալով կրօնաւորեցան իւր եղբայր Հասան և իւր եղբայրակին Մամայ.

«Կամաւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանգայ, տէր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւրախաղացին կացի յաւագութեանս ամս Խ. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն Աստուծոյ և եղեն ինձ Ջ.

[1]) Կոչուում է և Խութայ կամ Գոթայ վանք, քանզի շինուած է մի խութի վերայ։ Խոթ գիւղն ունեցած է մօտ 300 տուն բնակիչ, որք նախ գաղթում են Երևանի կողմերն և հիմնում Ննիջա գիւղը և յետոյ տեղափոխուում են Շուլաւերի կողմերն։

(վեց) որդի, զբերդերս և զաւառս ետու նոցա և ես եկի 'ի վանս մօտ իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս և եղէ կրաւնաւոր և բերի զխաչքարս ի յԱղուայ, շատ աշխատութեամբ և բազում հնարիւք կանգնեցի սուրբ նշան հոգւոյ իմոյ։ Արդ՝ վասն ձեր հոգւոցդ, որք ընթեռնուք՝ զիս յաղաւթս յիշեցէք ՈԼԱ. Թուիս»։

«Ես Մամա թագուհի ամուսին Հասանայ՝ դուստր Կուրիկայ թագաւորին, կացաք յաւագութեան ամս Խ. ես և այր իմ, և թողեալ զհայրենիքս որդւոց մերոց եկաք 'ի վանքս մօտ տէր Գրիգորիս և որդի մեր հոմանուն նորին և զգեցաք զձև միանձանց և կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ, որք երկիրպագէք, յաղաւթս յիշեցէք ՈԼԱ. Թուիս (1182)»։

Ասպա 1214 (ՈԿԳ.) Թուին թագաւորազն Վախտանգի բարեպաշտ տիկինն չորս սիւների վերայ կառուցանել է տաւիս սրբատաշ քարով առաջնոյն—նոյն վանքի կից հրաշալի շինութիւնը որի հարաւային որմի վերայ արտաքուստ գբրուած է.

«Շնորհիւ ամենակարողին Աստուծոյ և Միածնի որդոյ Յիսուսի Քրիստոսի և պարգեւօք ամենասուրբ Հոգւոյն ես Արղու խաթուն նուաստ աղախին Քրիստոսի՝ դուստր մեծի իշխանաց իշխանի Քրդին և ամուսին Վախթանկայ թագաւորազնոյ տեառն Հաթերդոյ և ամենայն Վերին-Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթուղիկէս ի տեղւոջ հանգստարանի առն իմոյ և զաւակաց իմոց Հասանայ անդրանկին իմոյ և Գրիգորի՝ որ ի Տէր կէսաւրեայ վաղճանելոյ. զի 'ւասն մեղաց իմոց խրատեաց զիս Աստուած և երարձ ի գլխոյ իմոյ զերկոսեան պսակն վայելուչս, զի անդրանիկին իմ Հասան սպանաւ ի Թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս և զկնի երից ամաց զկրտսեր որդին իմ զԳրիգորն ի Տէր կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով վճարեաց 'ի կենցաղոյս և փոխեցաւ առ Քրիստոս՝ առ 'ի անմխիթար թողլոյ Թշուառացելոյ մաւրս իւրեանց։ Այլ զի ի կենդանութեան իւրեանց յոյս 'ի մոլ եդեալ նոցա չինել եկեղեցի յայսմ տեղւոջ և ոչ ժամանեցին վասն ապրատահաս լինելոյ 'ի վերայ նոցա մահուն. և ինձ աւանդեցին

անդարձիւ կատարել զփափագ սրտից նոցա. և իմ յանձն առեալ մեծ յուսով և շատ աշխատութեամբ շինեցի զբաւարանս ի փրկութիւն հոգւոց նոցա և իմ դստերաց և ամենայն զարմից։ Արդ աղերսիւ հայցեմ, որք երկրպագէք սրբոյ խորանիս, յիշել յաղաւթս ձեր զվերոյգրեալս 'ի սմա։ Կատարեցաւ ի Թուականութեանս Հայոց ՈԿԳ. 'ի փառս Աստուծոյ»։

Ծաճարիս խորանումն սեղանի ետեւ.

«Շնորհիւն Աստուծոյ ես Աչոտ որդի Սմբատ Հասանայ..... ած իշխանէն Պռաւշա և մայրն իմ Սճիքնի միաբանեցաք սուրբ ուխտիս և տաք... հողն ի Խաչենագետի զլ... սուրբ կաթուղիկէս տէր Աթանաս... տվին ինձ պատարագ զամեն եկեղեցիս.... թվ. ՉԻ.»։

«Կամաւն Աստուծոյ ես Սմպատ իշխան որդի մեծի Լիպարտի միաբանեցայ սուրբ ուխտիս Դատու վանաց առաջնորդութեամբ տէր Աթանասի և գնեցի զՌանտաշանց այգին և յԵղեգիս իմ գնած Զիլիճանքն և այլ արդիւնք ըստ կարի և զկանանչաւոր գեղն և այլ որ հաստատեցի ամեն խարճովն անչար և ետու 'ի սուրբ Կաթուղիկէս։ Տէր Աթանաս և այլ միաբանքս սահմանեցին մեզ զատկի կիրակի յարութեան աւրն զա-

¹) Արցախում արօրով հերկած ժամանակ լծումն են երկու զոմէշ և երկու եզներ, որ կոչւում է չորեց, չուրուց, չարկով ծագած չորս բառից։ Այժմ ևս գործածական են բառերս։ Այստեղ նշանակում է «հողերն» չորս անասուններով մի ասին։

մեն եկեղեցիքս մեզ ժամ։ Արդ ով խլէ զմեր տուածն կամ զժամն խափանէ, ՅԾԸ. հայրապետացն նզոված եղիցի, թուին ՉԾԴ.»։

Որովհետև տաճարս և գաւիթն շինել տուած էր բարեպաշտուհի Աղզու խաթունն իբր հանգստարան Վախթանկեան ցեղին, վասն որոյ ամփոփուած են գաւթումս.

Վախթանկ թագաւորազնի, իւր կնոջ
Աղզու խաթունի և սոցա որդւոց
Հասանայ անդրակի և կտրսերոյն
Գրիգորի , որ վաղաթառամ վախճանեցաւ.
Մամքանայ [1]), որ քոյր էր Աղզու խաթունիս, կին միւս քաջ Հասանին և մայր Գրիգոր իշխանին.
Զաքարիա կաթուղիկոսին.
Աթանաս ,,
Յովհաննէս [2]) ,,
Սարգիս [3]) եպիսկոպոսին.
Գրիգոր Կաթուղիկոսին մարմիններն։

ԴՈՓԻ ՈՐԴԻՔՆ ԵՒ ԹՈՌՆԵՐՆ [4]).

Դոփ բարեպաշտուհի դուստր Սարգսի իշխանաց իշխանին. սա (Դոփ) ունէր ամուսին իւր զբարեպաշտ իշխանն զՂարա Գրիգորն և որդի սոցա քաջ և յաղթող զաւրավարն և մեծ իշխանն Հասան տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթիկ, Շաղվաքու և այլ բազում գաւառաց, որ և քան զամենայն առաւել սիրէր զգեաւղն Ծար, հայրենիք և պարգևք քաջութեան, որ են գինք արեան տուեալ յաշխարհակալացն Հայոց։

[1]) «Այս է հանգիստ Մամքանայ ամուսնոյ Հասանայ դստեր Քրտին և Խորիշահի մայր Գրիգորոյ, աղաչեմ, յիշեք ՚ի բարի Թվ. ՉԽԷ.»։ Տես և արձան. Ծարայ։

[2]) «.. ի հայր ... և ՚ի երանելոյն Հաղբատայ և Դատէի և Խաթրայի աթոռակալն զտէր Յովհաննէս, եղբայր քաջ զամրականին Հասանա, և արքայաշնորհ իշխանին հարսն զինուորին Գրիգորոյ, աղաչեմ, յիշէք ՚ի բարին Թվ. ՉՉԴ.»։ Միևնոյն ցեղից է։

[3]) «Զտէր Սարգիս ... յիշեցէք ի բարի Թվ. ՉՉԲ.»։

[4]) Հատուածս ընդօրինակեցինք իշխանական շղթայի շարունակութիւնը պարզելու համար։

Սա ունէր զկին Մամքան դուստր Քրտին, և որդի սոցա զբարի Գրիգորն և ամուսինն իւր Ասփայ դուստր Կոմսի Տարսայիճին իշխողի կողմանն Սիւնեաց. և սա բազում ընչիւք և ծախիւք փարթամացոյց զսուրբ ուխտն Դատի վանս և զԽաթրի վանս, զի շինեաց զտաճարսն, որ է Դարպասներն և այլ բազում արդիւնս արար, և միւս որդին տէր Յովհաննէսն՝ որ շինեաց զսուրբ ուխտն գէտամէջ, և որդի Գրիգորի Վահրամն, որդի սորա Սարգիսն, որ զբազում արդիւնս արարեալ՝ և մի ի բազմացն այս է զգեղեցիկ զանգականին ի Դատի վանս, ի Խաթրի վանս, ի Գետամէջ, ի գեաւղաքաղաքն Ծար, և է մինչև ցայսօր։ Որդի սորա (Սարգսի) Հասան և այս Հասանէս բաժանին Դոփայ ցեղն որք են այսոքիկ.

Շահանշէն Ուլուբէկանց պապ.

Աղբուղէն Այտինցւոց պապ.

Ջհանշէն Ջհանշեցւոց պապ։ Եւ որդի Հասանայ Աղբուղէն և որդի սորա Տուրսունն, և որդի սորա Այտինն և ի ժամանակի սորա ՚ի զաւրանալ Իսմայէլացւոցն և ի նուաղիլ տանս Հայոց, ցիր և ցան լինելն իշխանացն Հայոց, յորեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին. գնաց պարոն Այտինն ՚ի գիւան և երեք ամ աշխատեաց, և բազում ինչ տուեալ՝ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զվանորայքս և զշինարէքն, զոր Տէրն ամենայնի տացէ զվարձս վաստակոց իւրոց»։

Վանքիս հարաւային որմի վերայ

«Եւ ՚ի նորոգութիւն սուրբ ուխտիս գեաւղս և ագարակս իւրեանց սահմանաւքն զԱպահէն, զԵղնարածանց, զԲչանց, զԿանաչաւորն, որ ՚ի Վայոց ձոր, Ը. տունս յԱրփա հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերագրելոցս կատարի անխափան։ Եթէ ոք այսմ վճռի հաստատնոյ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղւոյս կամ ով որ իցէ, խափանեսցի յոյս նորա՝ որ առ Քրիստոս և դատեսցի յԱստուծոյ»։

Զանգակատուն [1])

Ինչպէս տեսաւ ընթերցողս, զանգատունս շինուած է Դուքեանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի ձեռնով այն խիստ հնաձև, նեղ և երկար վանքի վերայ, որ հիմնարկուած էր յանուն Դատի առաքեալին և յետոյ նորոգուած քանիցս։

«Կամաւ ամենակալին Աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի այս մեր գիր է իշխանական հրամանի։ Ես Տուրսունս, Սէյտիս, Պռաւչս, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ Սիկիլս տուաք տէր Աւագ եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուէլ աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴատի վանս, զԽաթրի վանս, զԳետամէջն, որ մեր գերեզմանատուն է՝ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի՝ի վանօրայքս մարդ չ'կար, որ յառաջն կար և չէն պահէր և եկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երես դրաք և զայս սուրբ աթոռնին՝ի նոքա ապըսպարեցաք, և զերկու իշխանութիւնն էլ հէնց ի (նոսա) յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթուղիկոսն մեծ տէր Զաքարիային, տէր Աթանասին և տէր Սարգսին էր տուեալ զԴատի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակաւն, նոյնպէս և այս տէր Գրիգոր կաթուղիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ»։

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Սէյտիս, որդի պարոն Շանշին, թոռն պարոն Հասանայ, ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ, ես Այտինս որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին. ես Շահանշէս որդի Հասանայ, թոռն պարոն Ձհանշին. մեք չորս եղբարք տուաք մեր վանորէիցս զԱպահէն, զԽուէթ, զԽոզենակս իւր չորս սահմանովն, ի Զաւարին հան-

[1]) *Զանգակատանս մօտ, արևելեան կողմում կան երկու մատուռ, որոց մէջ կայ մի մի քարեայ, սխորագործ և հիանալի քանդուած խաչեր. մէկի վերայ. «Զաւրութեամբ Աստուծոյ ես տէր Աթանաս որդի Հասանայ կանգնեցի զսուրբ Նշանս ի յիշատակ հոգւոյ իմոյ». Իսկ միւսին վերայ «զՏէր Գրիգոր սնուցանող Աթանասայ յիշեցէք ի Քրիստոս»։*

դէն Զաղունանց ագարակ տեղովն, Բռնչի աղբիւրովն, Թաղանանց գետովն. Պետրոսաբակ, որ մեր պապերն տուեալ են զՍոխանանց, զԾովատեղն, Զաջոռանց, Զաւլբէկանց, զՑրտնոտն, զՇիւմանանց, զԳրիգորաբաղս, զԴատի վանս [1]) *իւր քաւլատակերովն (մացառուտներով) զՀերանանց Հակառակաբերդովն, Նաւի աղբիւրովն, Բերդաբարովն, Կռապաշտուցովն, Ողնովն, Խուզենակուց մեծ այգին, Մանանածովն, Ծաղիկանց, Եղնաբածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճոճաւոր էր, քանի որ իւր պէտքն է՝ վարէ* [2]) *Աստուծով ազատ է։ Իսկ եթէ այլ մարդ վարէ, տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ։ Այս եղև մեր ուխտ առաջի Աստուծոյ և սուրբ Դատի առաքելոյս։ Արդ՝ ով որ գինի այս վախմիաբներս այլայլէ կամ խլէ թէ յորդոց և թոռանց մերոց և յազգայնոց իցէ, առաջի Աստուծոյ պարտական և սևերես լինի. ՅԾԸ. հայրապետաց նզոված է.....»։*

Վասակ Նահատակի որդի Գրիգոր եպիսկոպոսն շինած է մի ուրիշ գաւիթ անտաշ քարերով։

Հասանի որդի Գրիգոր եպիսկոպոսն [3]) *շինած է մի եկեղեցի չորս սիւների վերայ, որ շատ հեռի չէ վանքերից, որ գտնուում է խղճալի անմաքուր դրութեան մէջ։ Վանքիս վանահայրն է այժմ տաթևացի ոմն քահանայ, որ մեր եկած ժամանակ նա գնացած էր իւր հայրենիք։ Ափսո՛ս, ափսո՛ս, հազար ափսո՛ս, քայքայուում և աւերուում են պատուական վանքերս, խլուեցան, ինչպէս տեսանք զանազան ժամանակներում, զանազան իշխաններից վանքերիս նուիրուած ահա-*

[1]) *Խոթայ վանքի գիւղն։*

[2]) *Նշանակում է՝ հերկել։*

[3]) *Այլ Գրիգոր եպիսկոպոս ոմն ԺԶ. դարում ասում է. «Յանուն Աստուծոյ ես տէր Գրիգորէս տղայութեամբ եկի ի դուռն եկեղեցոյս շատ աշխատանք արարի. իշխանութիւն Շահ Թահմազին էր զվանքս տուին տըհուլ, ես զարուլ չարարի, գնացի Նոր շէնն, շինեցի երեք ջաղաց, երեք բաղնայ և եկի՝ի դուռն սուրբ Առաքելոյն, շինեցի զ Խ ո ւ թ (Խոթայ վանք), որ եկեղեցոյս մալն քաշէ. զբաղուբաղճէս և զՋրաղացներս և այլ ամենայն աշխատանս եկեղեցւոյս վախմ տուի։ Արդ՝ ով որ այս գեղարանքերս և զիմ վախմերս հանել ջանայ՝ի սուրբ Առաքելոյս (Դատի վանուցս) ՅԾԸ. հայրապետացն նզոված է..... թուին ՌԷ. (1558)»։*

գին կալուածներն, անտառներն և հողերն։

Վիմափոր քարայր.

Դատի կամ Խոթայ վանքից վար Թարթառի ձախ կողմում կայ մի վիմափոր քարայր, որի մուտքն գետնի երեսից է։ Լուսահոգի Բաղդասար մետրապօլտի կենդանութեան ժամանակ Քեօլանի մահմետական ոմն որսորդ կրակում է մի քօշ, որ անյայտանում է թաւալգլոր։ Հասնում է ետևից որսորդն և տեսնում որ քօշն ընկած միջոցին ջարդուած են այրի բերանի փտած փայտերն, այրի մէջ ընկած է որսն, ուր և գարսուած են շատ գրքեր։ Որսորդն վեր է առնում գրքերից մին, աճապարում Շուշի, յայտնում Բաղդասար մետրապօլտին, որ պարգևատրում է որսորդը և Շուշի փոխադրել տալիս ձեռագրերը։ Գրչագիրներումս եղած է մի ձեռագիր ընտիր մաշտոց՝ գրուած սուրբ Մեսրոպի աշակերտ Ստեփաննոս վարդապետի ձեռնով, որ այժմ գտնուում է Ս. Էջմիածնի հնադարանում [1]։

ՎԻՄԱՓՈՐ ԴԻՏԱՐԱՆ.

Մի քերծի մէջ, որ կայ Խաթրայ բերդի հիւսիսային հանդէպ Թարթառի ձախ ափի բարձրութեան վերայ, կայ մի բնակարան, որի առաջն պատած և լուսամուտ թողուած է։ Բայց՝ այս բնակարանն մուտ գործելու համար՝ քերծի դրսից չունի վերելակ սանտուղ. իսկ ներսից անյայտ է բոլորովին մուտքի տեղն։ Արտաքուստ ակներև երևում են քարուկիր պատն և լուսամուտն, որի ստորոտով—գետահովտով ճանապարհ է։ Այս դիտարանն, մեր կարծիքով հաղորդակցական կապ ունեցած է Խաթրայ և Հաւքախաղաց բերդերի հետ և թշնամու արշաւանքը արգելելու քաղաքական նշանակութիւն։ Դիտարանիցս ներքև կայ մի քարուկիր մատուռ։

[1]) Շուշու առաջնորդարանում եղած ձեռագրերի ամենամեծ և ընտիր մասը, որը վոյթ խնամքով ժողոված էր Բաղդասար մետրապօլիտն, վաճառած է Շուշու առաջնորդներից ոմն եպիսկոպոս՝ մի թիւրիզեցու վերայ մի քանի հազար րուբլու։

Մշահանի վանք.

Հիմնուած է յանուն սուրբ Աստուածածնի մի բլրի վերայ, որ գտնուում է նոյն գետաձորում և որի գլուխն մեծ հարթ է։ Փոքր է վանքս և պատկից ունի մի փոքր եկեղեցի որ ունի մի գաւիթ, որք ամբողջապէս շինուած են անտաշ քարով։ Գաւթի որմի մէջ կայ մի ամենափոքր մատուռ։ Բոլոր շինուածքներս քայքայման վիճակի մէջ են։

Եկեղեցու պատի վերայ.

«Աստուծով ես Մլեհ տուի գիմ գնած հողն 'ի Զափարին 'ի սուրբ ուխտս. միաբանք տուին Սուրբ Յակովբի երկու ժամն Ա. ինձ. Ա. Փ.....»։

Վանքի վերայ.

«Ես Մամա խաթուն միաբանեցայ սուրբ ուխտիս, առաջնորդ Յովհաննէս և եղբարքս տուին Ե. ժամ»։

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ՀԱՒՔԱԽԱՂԱՑ (ԼԱՋԻՆ ՂԱՅԱ) (29)

Մի անտառապատ, վիմահերձ, խոր ձորերով անջատուած, բարձր սար է, որ սեպաձև արձանացած է Թարթառի ալ կողմի բարձրութեան վերայ։ Սարիս արևելահայեաց վիմահերձի մէջ կայ մի ահագին քարայր, որի առաջն պատուած է ժամանակաւ քարուկիր պատով, որով ձևացած է քարայրս անառիկ բերդ։ Արդէն աւերուած է քարայրս տանող կածանն, հետևապէս այժմ անկարելի է մուտ գործել ամրոցս։ Սարիս գագաթն գեղեցիկ և սքանչելի սարահարթ է, և բնական ամրոց ձևացած, որ նոյնպէս ունի դժուարատար մուտք, բայց չունի ջուր իւր մէջ։ Մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ բարեհամբաւ Ասլան-բէկ Ալթաբէկեանցն շարժուած հետաքրքրութենից՝ չուանով վերևից կախել է տալիս քարայրս Հաթերքեցի Գալուստ անուն սրտոդ տղամարդը։ Վերև քաշելուց յետոյ վերջինս յայտնում է թէ քարայրում կան հնուց մնացած շատ հին, ահագին և խեցեղէն ու դատարկ կարասներ։ Պատերազմի պաշարի համար պահուած են կարասները։

Բ. ՀԱԿԱՌԱԿԱԲԵՐԴ [1]) Գտնուում է Դատի վանքից վեր-
րև մի թրաձև և անտառապատ սարի վերայ: Բերդս ունի
ամուր գերք, հիանալի տեսարան և նշանաւոր ջուր: Մի քա-
րուկիր և մեծ ջրամբար է լի կենդանի ջրով, որ ո՛չ աւելա-
նում է և ո՛չ պակասում, ո՛չ ջուր է ընդունում և ոչ արտա-
հանում: Բոլորովին անջրպետուած է բերդասարս իւր չորս
կողմերից խորանդունդ և լայնգոգ ձորերով. միայն ունի մի
թեղուղի, որ մի սեռի գլխով բարձրանում է դէպի բերդն:
Ամրոցիս մէջ տեղ տեղ երևում են հին շինութեանց հետքեր:

Գ. ԲԵՐԴԱՔԱՐ [2]), որ կայ Հաթերք գիւղին կից՝ իւր
արևմտեան կողմից, որի արևելեան, հարաւային և արևմտեան
կողմերն բարձր քերծեր են. իսկ հիւսիսային կողմն պարըս-
պուած է եղել, բայց այժմ իսպառ անհետացած է պարիսպն
և հազիւ հազ է նշմարուում ուրեք ուրեք: Բերդս, որի մա-
կերևոյթն հերկուում է այժմ, չունի ամրութիւն, բայց ու-
նի մօտակայ տեղից բերուած ջուր, և ուշագրաւ տեսարան:

Դ. ԱԿԱՆԱՅ ԲԵՐԴ. Հիմնուած է անառիկ ամրոցս Հա-
թերքի հիւսիս արևելեան կողմում, Բալի սարի ստորոտում:
Խոր խոր ձորեր են բերդիս հիւսիս-արևմտեան և հարաւ-
արևելեան կողմերն. պարսպուած է եղել բերդիս մնացեալ
—վերի և վարի կողմերն: Ամրոցիս մակերևոյթն թեքուած
է ձորերի գիրքով դէպի արևելեան հարաւ. բայց սորա մե-
ծութեան ծաւալն, համեմատելով միւս բերդերի հետ, ան-
համեմատ մեծ է: Բերդիս մակերևոյթն լի է շինութեանց
աւերակներով [3]), հանգիստներով, կայ և եկեղեցու աւերակ
և ականակիտ աղբիւրի պատուական ջուր: Այժմ տեղ տեղ
աւերուած են պարսպի պատերիցն: Բալի սարի հիւսիսահա-
յեաց լանջի վերայ կայ մի աւերակ մատուռ:

Բերդիս հիւսիսային կողմում, ձորի միւս ափում կայ ե-

[1]) Անունս կայ և Դատի վանուց արձանագրութեանց մէջ. այժմ կո-
չում են Ջ ա փ ա ր ի բերդ:

[2]) Հաթերք—Դղեակ է անուանում այս Գօշ-Մխիթարն (եր. 72—73):

[3]) Կայ իշխանական բնակարանների աւերակ ապարաններ, սենեակ-
ներ և գոմեր:

րեք տարօրինակ շինուածք, որ հեռի են փոքր ինչ իրարից
և ունին իւրեանց վարի և վերի կողմերին մօտ կարակնաձև
կլորակ լուսամուտներ: Թէ ինչ եղած են շինութիւններս,
չգիտենք, զի անճանօթ է մեզ շինութեանց անցեալն:

ԺԵ. ՋՐԱԲԵՐԴ ԳԱԻԱՌ. (30)

Առ հասարակ հարուստ է գաւառս խոր խոր ձորերով,
գալարագեղ, անտառապատ, ամենաբարձր, միջակ և փոքր
լեռներով, վանքերով և ամրութիւններով և բաւարար հա-
ցով և արծաթահանքով:

Ա. ՂԱՋԱՆՋԻ ՇԷՆ, որ կայ Կիչանի արևելեան հիւսի-
սային կողմում Խաչեն և Ջրաբերդ գաւառների սահմանագ-
լուխ սարի հիւսիսային կողմում: Շինիս հարաւային, արև-
մտեան և հիւսիսային կողմերն՝ սկսեալ շինի ստորոտներից,
բարձրապատ սարեր են, միայն բաց է արևելեան կողմն. վեր-
ջապէս խոր փոսի մէջ ընկած է շէնս: Բնակիչք բնիկ, հողն
քէկական, բարելի, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գար-
նանի, կորեկ, կտաւհատ, սորեկ, որիզ, ընկուզ, տանձ, խնձոր,
տաւար, գոմէշ, խոզ, օդն և կլիման ճնշիչ ամրան եղանակ-
ներում, ջուրն պատուական, երկար կեանք 75—80 տարի,
եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, թաղակապ, երկարու-
թիւնն 16 մետր 15 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 30 սան-
թիմ. քահանան գալիս է Ջանեաթաղից (Ճանկաթաղ):

Դրան ճակատակալ քարի վերայ. «Սուրբ Գէորգ այ (է)
եկեղեցիս թվ. ՌՃԻ.»: Ծուխ 35. ար. 175. իգ. 150:

Տաճարիս արևմտեան որմին մօտ մի տապանաքարի վե-
րայ քանդակուած է մի քաջ ձիաւոր, որ հանած է իւր թու-
րը, և բարձրացրած մի այլ ձիաւորի վերայ, որ իջած է իւր
ձիուց, բռնած նորա կապը, հանած իւր թուրը, կարծես
յանձնում է զայն յաղթողին: Յաղթուածն ֆէս ունի իւր գըլ-
խին վերայ և կանգնած է խղճալի դիրքով: *Քարիս վերայ.*

«Այս է տապան Ղասպատ որդի Յովան . . . չբէ եղբարսն
զայն ստայօն, թվ. ՌՋ. եկաւ երկրիս, չաղ դեղ . . ցայք, վեր-

ջին Ղալա մէ տեսար ասգար եկաւ մեզ վերայ։ Է՛ձ. (700), Թօպկոլայ եկաւ, իմ քարէն չի կարաց օնել (յինքն ունել, դրաւել), յեդոյ մասիհադարն դան սպանեցին»։

Յաղթող ձիաւորի գլխից վերև գրուած է.

«Քարս բերաւ որ է Եղբարասաց պարոն»։

Գիւլ-Մալիք [1]) *և Կարմիր Եղցուն խումբ տեղերում, որք գտնուում են շինիս արևմտեան կողմում, կան գիւղատեղեր, հանգստարաններ և եկեղեցու աւերակներ։*

Բ. ՁԱՆԿԱԹԱՂ *կամ ըստ օտարահնչիւն ձայնին Ջանեաթաղ գիւղ. հիմնուած է մի ձորի աջ ու ձախ լանջերի վերայ (նոյն լեռնաշղթայի արևելեան կողմում) Ղազանչու հիւսիսային կողմում. բնակիչք գաղթած են Պարսկաստանի Ղարադաղ նահանգից* [2]) *Պասգևչի ժամանակ. հողն արքունի, սակաւ և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (ունին և մասնաւոր այգի), անվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 75—85. եկեղեցին Սուրբ Գէորգ, հնաշէն, կառուցեալ երեք կամարների վերայ, երկարութիւն 17 մետր 17 սանթիմ, լայնութիւն 8 մետր 82 սանթիմ. Դրան ճակատակալ քարի վերայ.*

«Թ. ՌԾԸ. յիշատակ Ղուկասի որդի Գրիգորի»։

Քահանայ մի։ Տաճարիս դրան ամփոփուած են տասնևմէ քահանաներ, որք են նախկին բնակչաց հոգևոր հովիւներն։ Ծուխ 85. ար. 390. իգ. 338։

Մեղրակեր (Ղաբարթու) կոչուած տեղում կայ հանգստարան, գիւղատեղի և եկեղեցու աւերակ։

Գ. ԳԻԻԼԵԱԹԱՂ, *որ մի սեռով միայն բաժանուած է Ձանկաթաղից, հիմնուած է վերջին գիւղիս հիւսիսային կողմում մի ձորի ձախ լանջին վերայ, որի երեք կողմերն լեռնապատ են, բայց է միայն արևելեան կողմն. բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի, բայց հացաւէտ, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90*

[1]) Նշանակում է Գայլ-Մէլիք։
[2]) Ամրաղիւլ և Քիւնի գիւղերից։

տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր կառուցեալ երեք կամարների վերայ, երկարութիւն 17 մետր 5 սանթիմ, լայնութիւն 8 մետր 40 սանթիմ. քահանայ մի։

Գիւղիս վերի կողմումն է ճրա-մէլիք-Սլահվերտու բնակարանն, որ բաղկացած է հինգ սենեկից, որից կանգուն է երկուսն և կիսաւեր երեքն։ Շինութեանս երկարութիւնն ձգուած է հիւսիսից հարաւ, որ ունի իւր չորս անկիւններում չորս աշտարակներ։ Դրան հիւսիսային սեմի վերայ.

«Այս է Մէլիք Աւուշան [ժվ. ՌՄԽԸ.»։

Ծուխ 74. ար. 327. իգ. 284։

Պղնձահանք. Գիւղիցս կէս մղոնաչափ հեռի դէպի արևմուտք կայ պղնձահանք, որ անգործածելի է այժմ։

Ծովսէփ եղցի. փոքր ինչ վերև պղնձահանքիցն, ուր կայ այս անուն եկեղեցի ջրաձորի աջ կողմում, իսկ ձախ ափին՝ գիւղատեղին և հանգստարան։

Մեհմանանց գիւղատեղի, ուր կայ աւերակ եկեղեցի, գիւղատեղի և հանգստարան։

Արծաթահանք գտնուում է Մեհմանանց գիւղատեղիցն կէս մղոնաչափ վերև նոյն սահմանագլուխ լեռնաշղթայի հիւսիսային կողմում։ Որպէս երևում է փորուածներից, գործածութեան մէջ եղած է հանքս շատ վաղուց։ 1870 թուին գալիս են Յոյներ, կապալաւ վեր առնում հանքս, բնակութիւն հաստատում հանքիս մօտ և սկսում հալել նիւթը։ Որպէս թէ կապարախառն է արծաթն և դժուարաւ է ծածկում ծախքը, վասն որոյ անգործածելի է այժմ հանքն.....։

Դ. ԿՈՒՍԱՊԱՏ ԳԻՒՂ. *հիմնուած է Գիւլեաթաղի հիւսիսային կողմում մի բարակ ջրաձորի ձախ լանջին վերայ, բնակիչք բնիկ, հողն արքունի* [1]) *անջրդի և միջակ արդիւնաբեր և միանգամայն սակաւաջուր, բայց այգևէտ. տեղական բերքերն նոյն (նաև ոչխար, ձի, այգի, բամբակ, սումաղ, սեխ, վարունկ, ձմերուկ), պատուական օդն, կլիման և ջուրն,*

[1]) Նախ եղած է մէլիքապատկան. չգիտենք ինչ պատճառաւ յետոյ փոխուած է արքունի։

երկար կեանք 100 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, վնասուած է գագաթնագծից, քահանայ երեք։

Եկեղեցուս դռնատակին մի քարի վերայ.

«Թի. ՁԾԸ. այս է հանգիստ.....»։

Դռնագլխին.

«Թիւն ՈՂ. ես Ապրել որդի Ուղտիկակա գնեցի զևսաչս ինձ ու ամուսին իմոյ, աղաւթեցէք [1])»։

Եկեղեցուս թէ ներսում և թէ դրսում ամփոփուած են շատ քահանաների մարմիններ։

Ե. ՀՈՒԱԹԱՂ, որ կից է Կուսապատի այգիներին, թէպէտ կազմում է առանձին գիւղ, սակայն ծխաթիւն անբաժան է. այսպէս և

Զ. ՄԱՐԴԱԿԵՐՏՆ, որ ունի առանձին եկեղեցի և մօտ կէս մղոն հեռի է Հոռաթաղից, հիմնուած միևնոյն Կուսապատի ձորի շարունակութեան վերայ, Ուտի առանձնակ գաւառի դաշտաբերանի մօտ, բնակիչք անջատուած Կուսապատից [2]), հողն արքունի, բազմարդիւն, օդն և կլիման ջերմագին ամրան, ջուրն ոչ այնքան լաւ, երկար կեանք ոչ աւելի 70-ից. եկեղեցին Սուրբ Կարապետ, ծածքն փայտաշէն, քահանայ մի։ *Երեք գիւղերումն* միասին ծուխ 355, ար. 1850, իգ. 1199, քահանայ 4։

Նահատակ անուն ուխտատեղի, որ գտնուում է Հոռաթաղի արևմտեան հանդէպ մի բլրի գագաթին վերայ. իսկ *Կոտրած եղջին՝* սոյն գիւղի արևելեան հանդէպ սարին վերայ.

Երի-Գիւղաթաղում՝ (Վերի-Գալաթաղ), որ գտնուում է միևնոյն ջրաձորի մէջ Կուսապատից վերև, կայ հանգստարան, գիւղատեղի և քարուկիր փոքր եկեղեցի։

Ինն-մաս անապատ—Հին-Մոխրաթաղ. Հիմնուած է Կուսապատի հիւսիսային կողմում մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորեր են։ Կառուցեալ է սրբատաշ քարով մի կամարի վերայ, որ ունի եկեղեցու և ոչ վանքի ձև, երկարութիւն 14 մետր 37 սանթիմ, լայնութիւն 8 մետր 20 սանթիմ։ Ունի միայն աւագ խորան. որի միջից հիւսիսային և հարաւային կողմերից բացուած է դռնաչափ մուտքեր իբր փոքր խորաններ.

Հիւսիսային որմի վերայ.

«Ի 1881 ամի չինեցաւ սուրբ ուխտս Ինն Մասանց տրօք ժողովրդոց 'ի ժամանակս Յովսէփ վարդապետի Փինաչեանց»։

Խորանի հիւսիսային կողմում.

«Շինեցաւ Սուրբ Ինն Մասանց սեղանն դստուիս (?) Սհար խանումին վասն հանգուցեալ Յարութիւն բէկ Ամիրէկեանի Կուսապատ գեղջ 1884 ամի»։

Տաճարիս հարաւ-արևելեան կողմում կայ և մի հին եկեղեցու աւերակ։ Հարկ է յայտնել թէ այստեղ եղած է Մոխրաթաղ գիւղն, որի բնակիչք մի քանի տասնեակ տարիներ տեղափոխուած են Նոր-Մոխրաթաղ և մնացած է այստեղ հին եկեղեցին, գիւղատեղին և հանգստարանն։

Նոր-տաճարիս հիւսիսային որմի մօտով ամփոփուած են Մելիք Իսրայէլեանների ննջեցեալները—Սայիբէկի, Սհարխանումի, Մելիք-Ադամի կին Թումար-խանումի, և այլ մելիքազուն գերդաստանների մարմիններն։

Անապատս ունի երեք սենեակ և մի աշխարհական վանահայր։

ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼԵԱՆՆԵՐԻ Ա. ԱՊԱՐԱՆՆ.

Շինուած է Անապատիս արևմտեան կողմում մի քանի տասնեակ քայլ հեռի։ Շինութիւնն ունի արտաքուստ բերդի ձև—քարուկիր բարձր պարիսպ և մի դարբաս արևելեան կողմից։ Արտաքուստ չափելով ունի 49 մետր երկարութիւն 29 մետր 25 սանթիմ լայնութիւն։ Ամբողջ ապարանն բաղկացած է տասներկու սենեկից, որք ունին զանազան ձև և տարբեր մեծութիւն, Սենեակներն եղած են ընտանեկան սենեակ, ննջարան, ընդունարան, դատարան, թոնրատուն, խո-

[1]) Անկասկած քարերս բերուած են Հանգստարանիցն.

[2]) Արքունի երկդասեան ուսումնարան կայ Կուսապատումն։

հանոց, սպասաւորանոց, գոմանոց։ Այս ամենի լուսամուտներն բացուած են բերդի ներսի կողմից։ Արևելեան կողմից հաշուելով շորրորդ սենեակն ունի քառակուսի ձև և երդիկ, ամբողջապէս քարուկիր շինուած և սոյն արձանագրութիւնը.

«Որ զորմութեամբն ամենազօրին Աստուծոյ բազում ժամանակ է յոյժ տաքնապի շինեալ գտուիս, իսկ բարերարին Աստուծոյ տուաւ ինձ կարողութիւն և զօրութիւն Սուրբ Հոգոյն՝ հանգուցեալ Մէլիք Իսրայէլի որդի ես Մէլիք Յաղամս շինեցի զդեղեցիկ կամարօք և դեղեցկանկար տունս և սարայիս բազմահանճար զորդեակն իմ Մէժլումին...ծ. Աստուծոյ, աստուածայնով բարեաւ վայելեսցէ հանդերձ մեօք ՌՄԻ.» [1]։

Հինգերորդ սենեկի վերայ.

«Տեսէք մեր հաւատոյ հայրն Աբրահամ, կեանք նորա է.. ամ, նայ ոչ շինեաց տուն և տեղի և բակ.. վրանօք շրջէր յերկրին ի Խառան.. այլ սոյն կեանք մեր կարճացեալ [illegible] Ծ. (50) ամ, համայն բոլոր երթալոց եմք մեք միւս անգամ, տեսէք ի մեր յիմարութիւնս, որ այժմուս գայ, չենք.. ազմա նման ամօք Աբրահամայ թվ. Ռ...»։

Խաչ-Խոռհատ անուն տեղում, որ կայ Հին և Նոր-Մոխրաթաղի միջև, կայ աւերակ գիւղատեղի, հանգստարան և մի քարուկիր և միջակ եկեղեցի, որ կանգուն է բոլորովին, որի երկարութիւնն է 12 մետր 23 սանթիմ, լայնութիւնն 7 մետր։

Է. ՆՈՐ-ՄՈԽՐԱԹԱՂ. Հիմնուած է Կուսապատի հիւսիսային կողմում, տեսարանն զմայլելի (դաշտահայեաց) սեռի վերայ, հողն արքունի, անջրդի, բայց բազմարդիւն. տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90—100. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն 17 մետր 95 սանթիմ, լայնութիւնն 11 մետր։ Քահանայ մի։ Դրան ճակատակալ քարի վերայ. «Ես Շուշուայ քաղաքի բնակիչ Մեսրոպ Թառումեանս կառուցի ծախիւք իմօք [2] յանուն

[1]) Անձեռնմխելի թողինք սխալները։

[2]) Հաստատապէս տեղեկացայ որ գիւղի հասարակութիւնն շինած է եկեղեցուս պատերը մինչև Թաղն։

Աստուածամօր վանն անյիշատակ հանգուցեալ եղբարցն իմոց Աբրահամայ, Գրիգորի և որդւոյն իմոց Աստուածատրի Մ. Թառումեանց ի 1883 ամի»։ Ծուխ 85. ար. 394. խգ. 349։

Ը. ՄԵԾ-ՇԷՆ. Շինուած է համարեա թէ Նոր-Մոխրաթաղի արևմտեան կողմում, մի արևելահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ (ամենամեծ մասն տեղափոխուած են Գանձակի գետաշէնի կողմերն), հողն կիսով չափ արքունի, անջրդի, բայց հացաւէտ, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90. եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն 18 մետր 25 սանթիմ, լայնութիւնն 8 մետր 67 սանթիմ։ Աւազանին վերայ «Թվ. ՌԿԹ.—Ինաս.. յիշեցէք ի Քրիստոս»։

Խորանի հիւսիսային կողմում. Սուրբ խաչս բարեխաւս Կարապետ եպիսկոպոսին, սայ է լեալ պատճառ սուրբ եկեղեցոյս (շինութեան) թվ. ՌՂԹ.»։ «Սուրբ խաչս բարեխաւս Հայրապետին եղբայր պարոն տէր (իշխանազն քահանայ)»։ Քահանայ երկու։ Ծուխ 70. ար. 309. խգ. 268։

Կարմիր աւետարան.

Եկեղեցումս կայ մի գրչագիր մեծագիր աւետարան, մագաղաթեայ, ամբողջապէս գրուած գլխատառերով։ Բոլորովին անճաշակ են նախշերն և չունի պատկերներ։ Գրուած է Մատթէոսի սկզբում խաչի տակ. «Սուրբ նշանաւ գնեաց (Յիսուս) մեղաւորիս Իգնատոսի»։ Տեղ տեղ գրուած է նաև «Զխաւշեն և զիւր ծնողսն յիշեցէք ի Քրիստոս»։ Գրուած է նաև Մարկոսի վերջում. «Յամի չորրորդի առաջնորդի (՞) ի հայրապետութեան տեառն Բարսղի [1]) Հայոց կաթուղիկոսի, ես Հայրապետ աբեղայս գնեցի զսուրբ աւետարանս ի Յոստան քաղաքի յայլազգեաց ՚ի ԻԵ. դեկ. կարմիր և ետու ի սուրբ Խաչի վանքն յիւր սեպհական տեղն, որ առնեն յամէն յամի.. Ռ. պատարագ, զտեառնընդառաջին և զկիւրղին անխափան և որ հեռացուցանել ջանայ ՚ի սուրբ Խաչէն զինչ և իցէ պատճառաւ,

[1]) Նայելով գլխագրերի ձևերին՝ կարծում ենք որ Բարսեղ Ա. հայրապետի օրով (1086 թուերում մօտաւորապէս) եղած է գնելն և ոչ թէ Բարսեղ Բի, որ գահակալած է 1557—1562։

ինքն հեռացեալ լիցի 'ի փառաց Որդոյն Աստուծոյ. ամէն»։ Իսկ ցանկից յետոյ.

«Արդ՝ ես յամենայնի նուաստ տէր Սարգիս ստացայ սուրբ աւետարանս անջինջ յիշատակ ինձ և իմ ծնողացն, որք ընթերնուք, յիշեցէք 'ի Քրիստոս»։

Յիշատակարանը գողացած է մի սարկաւագ ինչպէս վկայեցին։ Երանի թէ այս միայն լինէր գողացած....։ Աստմ են որ 900 ծուխ եղած է Մեծ-Հէնս, որպէս ապացուցանում է և մեծ անունն, քանզի այս եղած է մեծ Մէլիք-Ադամի մէլիքանիստն։ Երեք եկեղեցի եղած է գիւղումս, մէկն բոլորովին անհետացած է, միւսին աւերակն արդէն մնում է, երրորդն կանգուն է։

Գիւղումս ծնուած է Դալի-Մահրասա—Աւագ վարդապետն, որ ազգական էր այժմեան Մկրտիչ քահանայի և Անդրէաս-բէկի։

Նշանաւումը. մի թումբ է գիւղիցս վերև, որի վերայ կայ ընդարձակ գիւղատեղի, մեծ հանգստարան և կանգուն եկեղեցի։

Հարթասլտուկ. Մեծ-Հէնիս հիւսիսային հանդէպ շրջապատից առանձնացած և ձուաձև բարձրացած մի սար է, որի գագաթն պատուական հարթակ է։ Հարթակի եզերքներով պարսպուած է եղել հնուց, ինչպէս ակներև է հետքերից։ Այժմ կայ կատարիս վերայ մի ջրաւազան, հանգստարան և ուխտատեղի։ Ի նկատի առնելով շատ բերդասարեր, թուի թէ բերդ եղած է և սարիս գագաթն—Հարթապատուկն։

Թ. ՄԱՂԱՎՈՒԶ կամ Զարտախլու. Հիմնուած է Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ. Մեծ-Հէնի հիւսիսային կողմում, մի լեռնահովտում. բնակիչք շատ վաղ նախ տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Մաղավուզ գիւղիցն այստեղ, ապա այս տեղից Շուլաւէրի կողմերն, ապա վերադարձած Գետաշէն, հուսկ յետոյ վերստին այստեղ։ Հողն արքունի, անջրդի, բայց բեղմնաւոր, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90. եկեղեցին Սուրբ Գէորգ, փայտաշէն, քահանայ մի։ Ծուխ 66. ար. 254. իգ. 299։

Գիւղիս բարեկրօն Յովհաննէս քահանայի մօտ կայ մի զրչագիր մաշտոց, գրուած թղթի վերայ, գիրքն փոքր. յիշատակարանից. «Արդ գրեցաւ գիրքս այս ի թուականութեան հայկազեան տումարիս ՌԻԹ.»։ Ստացողն է Գրիգոր անուն ոմն կրօնաւոր, իսկ գրողն է ոմն Յովհաննէս Աբեղայ։ Վերջին ստացողն է. «Արդ զվերջին ստացաւղ սուրբ տառիս, որ կոչի մաշտոց.. Ովանէս էրէց... ՌԾՓԱ.»։ «Յիշատակ է բարեմիտ Յուրին, որ կողակից էի Աւագակին ի երկրէն Ծարայ ի գեղջէն Եանշաղէն. յիշատակ է այս սուրբ.. մաշտոցս հոգոյ իմոյ, տվի իմ ձեռաւս Դաւիթ քահանային, օվ որ կարդայ, Աստուած ողորմի ասէ, ամէն»։ «Ես Մրչմանցի տէր Մէլիքսեթի որդի Մարկոսըս... թվն ՌԾՀԸ. էր» (Այժմ աւերակ են Եանշաղ և Մրչման գիւղերն, ինչպէս գիտէ և ընթերցողն)։

Աւետարան փոքրագիր, գրուած թղթի վերայ առանց պատկերի։ Անյայտ է գրողն, տեղն և ժամանակն, միայն յայտնի է երկրորդ ստացողն, որ է Շաղուպատ անուն ոմն։

Նոյն բարեկրօն քահանայ Տէր-Գրիգորեանի մօտ կայ և Ա. Մէլիք-Ադամից մի թուղթ, որով յայտնում է. «Մէլիք Հաթամէս մալում լինի ձեզ Մաղավուզեցուց, մեծ և փոքր որ իմանաք Մէլքումն ձեզ քօվխայ (տանուտէր) չինեցի. պիտի որ յեսապի (իրաւացի) խօսկան դուս չի կեաք։ Դարձեալ ջամիյեաթի, թէ եղ [1]) նորայ եկիք թէ Մէլքումը մեզ հաջաթ (հարկաւոր կամ պէտք)-չի, դասուլ չի, դուք էք հաւանել, չինել թվին ՌՄԻԸ. փետրվարի ամսուն ԺԷ.» (տեղի կնքոյ որի մէջ գրուած է. «Քրիստոսի ծառայ Մէլիք Ադամ»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ.

Այսպէս է անուանում ժողովուրդն այն հանգստարանը, որ կայ Մաղավուզի արևմտեան կողմում, Թարթառ գետի աջ լանջի բարձրութեան վերայ, Երից մանկանց վանքի դէմուդէմ։ Ընդարձակ ծաւալ ունի հանգստարանս, բայց ծած-

[1]) Իմաստն է, (է դ ն ո ր ա յ) եթէ այնուհետև եկիք իմ մօտ և ասացիք թէ Մէլքումն պէտք չէ մեզ, ևն.։

կուած է գժնիկ փուշերով և մացառուտներով։ Հանգստարանումս կայ մի հնաշէն մատուռ. որ ուխտատեղի է և փոքր և շինուած անտաշ քարերով, որի գլուխն արդէն խոնարհուած է. դրան ճակատակալ քարի վերայ քանդակուած է.

«Թիւ ՁԹ. էր Կամաւն Աստուծոյ ես Խուռում (Հռիփսիմէ) շինեցի զեկեղեցիս, եղբայր իմ Վահրամ Շահ ի յիշատակ մեղ և ծնողաց մերոց 'ի յիշխանութեան Ուքանին և յամիրութեան Փախրայդինին և 'ի յառաջնորդութեան Տէր Սուքիասին. յաղաւթս..»։

Մատրանս մէջ մի խաչքարի վերայ. «Թիւ ՈՂԹ.»։

Սորա մօտ. «Ես Գր..րս սնուցած տէր Նարսի [1]) կանգնեցի զ (ի) աչերս ծնողաց իմոց և ննջեցելոց»։

Հանգստարանիս տապանաքարերի մէջ գտանք միայն հետևեալը.

Ա. «Այս տապան Քաչալ...է որդի Ապրէսին մեծի.. պապին եխպօրորդի... իմոյ պարոն Անին Թվ. Ռ.»։

Բ. «Թվ. Ռ..... որ փոխեցաւ առ Աստուած. Այս է տապան Շահփարին.... Նոյեմզարին....»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ կամ ՔՂՔԱՏԵՂ. (31)

Սևկևլասեռ կոչուած սարի ստորոտով ընկած է մի խոր ձոր գրեթէ արևելքից արևմուտք։ Մատրան կամ Հանգստարանին ստորոտից սկսեալ դէպի նոյն խոր ձորն կախուած են չորս ձորակներ, որոց վերայ վաղուց շինուած է քաղաքի նման մի շինութիւն։ Բերդավայրն ունի միայն երկու մուտք, արևմտեանն՝ խոր ձորին ստորոտովն, որ համարեա թէ հպած է Թարթառ գետի աջ եզերքին, իսկ արևելեան կողմի մուտքն նոյն ձորի վերի ծայրովն։ Երկու մուտքերն ամրապնդուած է եղել քարուկիր պատով, որք քանդուած են այժմ։ Իսկ մնացեալ կողմերն բնութենաստեղծ և անմատչելի ամրութիւններ են, այս է բարձր վիմահերձ և քարաժայռ քերծեր են և ահարկու ձորեր։ Վաղուց շինուած են երկու երկյարկ

[1]) Գուցէ «ես Գրիգոր սնուցած տէր Ներսիսի»։

քարուկիր և բոլորշի դիտարան, որոց մին քաղաքի հարաւային կողմի բարձրութեան վերայ բերդից դուրս իսկ միւսն՝ արևմտեան մոդմում քաղաքի ծայրում, բայց ամրոցի ներսումն։ Թափուած են միայն վերշնոյս որմի արտաքին մասերն տեղ տեղ։

Այժմ աւերակ և անմարդաբնակ քաղաքատեղումս մնացած են տակաւին հնութեան շատ նշաններ, ինչպէս են քարուկիր բնակարանների և այլ շինութեանց աւերակներ։ Հիւսիսային դիտարանի մօտ կայ մի մեծ շինութիւն, որ իւր արտաքին կողմում ունի երեք բուրգ, մէջ տեղում տասն մետրաչափ բարձր քարուկիր սիւն և երկու մեծ սենեակներից բաղկացած շինութիւն։ Այս է ամենից աւելի հնութիւնն, որ կարծես թէ իւր ամրագին կազմուածքովն ներկայացնում է տեղիս հին իշխողի բնակարանը, որ ունի և բնութեան հրաշալի տեսարան։

Բնակարանիս հարաւային կողմերում կան կիսաւեր քարուկիր շատ բնակարաններ, բաղանիսներ, ձիթահանք, որի բոլորաձև մեծ քարերն մնում են անվնաս և կանգուն, կամուրջներ, երեք կաղամախի ծերունազարդ և հաստ ծառեր, պառաւ ընկուզենիք, ևն։ Նշանաւոր է Շուշան աղբիւրի ազնիւ ջուրն, որ քաղաքի կետրոնում շշշռալով թափուում է ժայռից։

Բ. *Ապարան.* Մէլիք-Ադամ մեծի. երկրորդ ապարանս շինուած է արևելեան մուտքի կողմում, որի երկարութիւնն հիւսիս-արևմուտքից ձգուած է արևելեան հարաւ։ Շինութեանս գետնայարկն ծառայած է միայն տեղի զառիվայր դիրքը հարթելու. վերնայարկում կայ տասնևհինգ սենեակ, ընդարձակ դահլիճ, խոհանոց [1]), երկու պատշգամ։ Գեղեցկաձև տաշուած և նախշած ճակատակալ քարեր ունին վառարաններն (բուխարի)։ Ամբողջ շէնքն ունի 37 մետր երկարութիւն, 34 մետր 40 սանթիմ լայնութիւն, որի ծածկն

[1]) Գետնայարկով դուրս հանուած է արտաքնոցի և խոհանոցի միացեալ ոտքը։

ողջ փլած է, իսկ պատերն բովանդակ մնում են կանգուն։ Հարկ է յայտնել թէ ապարանիս կողքին է եկեղեցու աւերակն։ Բացի տասնևհինգ սենեկից, որք շինուած են մի միջնապատով, բայց երկու շարքով, կայ այլ ևս չորս պատուական, բայց կիսաւեր սենեակ և մի երկար գոմ, որի մէջ կայ տասնևվեց ձիու ախոռ, և որի երկար ախոռափայտն մնում է դեռ անփուտ։ Շատ սենեակներում արդէն բուսած են ծառեր։

Հարկ է յայտնել նաև որ Մէլիք-Ադամն [1]) նորոգած է ապարանս, որ եղած է կանխաւ, ինչպէս երևում է հին և նոր որմերի տարբերութիւնից։

Ապարանիցս փոքր ինչ վերև, արևելեան մուտքի մօտ կան վիմափոր *քարայրները*, որք եղած են գռնապանների բնակարաններ։

Քաղաքատեղիս հարաւային կողմումն է *Հին*—Մեծ-շէնի աւերակն, որի մէջ է մի աւերակ եկեղեցի և մօտերքում հանգստարան։ Մէլիք-Ադամ Բ-ի ժամանակ աւերակիս բնակիչներն տեղափոխուում են Գանձակի և Թիփլիսի կողմերն։ Յետոյ տեղափոխուածների փոքր մասն վերադառնում է, բայց փոխանակ այստեղ բնակելու, հիմնում Մեծ-շէնը և բնակում այնտեղ. քանզի երկիւղալի է լինում այստեղ բնակելն։

Ա. ՔՄՔԱՁՈՐ ՇԷՆ. Հիմնուած է Մաղավուզի արևելեան սարի ստորոտի հարթում։ Բնակիչներն մօտ քսան տարի առաջ բաժանուելով Մաղավուզից բնակութիւն հաստատած են այստեղ. միևնոյն են հողն, բերքերն, միայն աւելի լաւ է տեղիս օդն և կլիման. քահանան և եկեղեցին Մաղավուզինն է, և ծուխն հաշուած նորա վերայ։

Ա. ՕՌԱԾ [2]) ԹԱՓԷ ՇԷՆ. Հիմնուած է փոքր ինչ վար Քմքաձորից, բնակիչք նոյնպէս անջատուած են Մաղաւուզից.

[1]) Աւանդաբար ասում են թէ այս եղած է Մէլիք Իսրայէլեանների ձմերանոց ապարանն. իսկ Ինն-Մաս անապատի մօտինն՝ ամարանոց։

[2]) Արցախեան բարբառի գլխաւոր յատկութիւններից մին և այն է որ ինչ պարագայում ո ւ տառերով սկսուած անունների առաջի 2 գիրը հընջում է իբր 0. օրինակ ուռած—օռած, ուղտ—օղտ, ուրախ—օրախ, ևն. Ուռած բլուր—Օռած Թափէ։

ամենայն ինչ նոյն. Ծուխ Քմքաձորում, Օռած-Թափում և Վառնկաթաղում 30 114. իգ. 103։

Ա. ՎԱՐՆԿԱԹԱՂ կամ ԼԻԻԼԱՍԱՋ. Շինուած Թարթառի աջ ափի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ, միևնոյն հողն և բերքերն. օդն և կլիման ծանր և անախորժ ամրան. երկար կեանք 60. եկեղեցին սուրբ Մինաս. քահանայ մի։ Ծուխ 20, ար. 70, իգ. 60։

Ջոխտակ շինատեղ. աւերակ գիւղեր են, որք գտնուում են Մաղավուզի հիւսիսային կողմում, Թարթառ գետի աջ կողմի լանջի վերայ, ուր կայ և Հանգստարան։

Կթղուկոսարան (32) (Կաթուղիկոսարան), որ գտնուում է Թարթառ գետի աջ կողմի նոյն լանջի վերայ, Դոնի շէնի դիմացն։ Քարայրի նման մի բան է, որի առաջն պատելով ձևացրած են բնակարան, որի մէջ մի ժամանակ մնացած է Աղուանից Վիրոյ և այլ կաթուղիկոսներ։ Այժմ ուխտատեղի է հին աւերակս։

ՊԱՌԱՒԻ ԿԱՄՈՒՐՋ (Ղառը քեօրփի).

Աւրդէն գիտենք Թարթառ գետի վերայ շինուած կամուրջներից առաջինն էր Պարտաւի մօտ եղած բազմաչեայ կամուրջն։ Բ-ն է Պառաւի կամուրջս, որ ունի միայն մի աչք և որ շինուած է Վարնկաթաղի առաջ։ Կամրջիս երկու կողմերի հիմքերն ևս հաստատուած են վիմահերձ ապառաժների վերայ։ Շինողն եղած է հայ բարեպաշտուհի ոմն տիկին։ Գ. կամուրջն (փայտեայ) Դոնի շինի մօտ է։ Դ. կամուրջն (փայտեայ) Զրաբերդի մօտով է։ Թարթառիս Ե. կամուրջն է Սարսանքի (քարուկիր) կամուրջն։ Զ-ն, որը շինել տուած էր տիկին Ասփան Խաթրայ վանքից վար Թարթառիս վերայ։

Ա. ՆԵՐՔԻՆ-ՁԱՅԼՈՒ. Հիմնուած է Թարթառ գետի ձախ ափի վերայ դաշտաբերանի մօտ. բնակիչք 1828-ին գաղթած են Պարսկաստանի Բադրբեօվ գիւղից. հողն արքունի, բարեբեր, ջրարբի, տեղական բերքերն ցորեն, գարի, կորեկ, խաղող, գեղձ, թութ, կեռաս, բամբակ, բոժոժ և որիզ, օդն

և կլիման տենդաբեր ամրան, երկար կեանք 70. եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանան գալիս է Վերին-Զայլուից։ Ծուխ 45. ար. 142, իգ. 115։

ԺԴ. ՎԵՐԻՆ-ԶԱՅԼՈՒ. Հիմնուած նոյն գետի ձախ ափում փոքր ինչ վերև Ներքին-Զայլուից, բնակիչք գաղթած 1828-ին Ուրմիոյ Ըռհաւա գիւղից, հող, տեղ. բերքեր, օդ և կլիմայ երկար կեանք նոյն են. եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի։ (Գիւղիս մօտ կայ ընտիր գաճ)։ Ծուխ 55, ար. 255, իգ. 234։

ԺԵ. ԹԱԼԻՇ ԳԻՒՂ. Հիմնուած է Վերին-Զայլուի հիւսիսային կողմում լեռների մէջ մի սարալանջի վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական (մէլիքական), անջրդի (մասամբ ջրարբի) հացաւէտ. ջուրն սակաւ, տեղական բերքերն միայն ցորեն և գարի, բարեխառն օդն և կլիման, քաղցրահամ ջուրն. երկար կեանք 85—90. եկեղեցին նորաշէն, կառուցեալ հասարակութեան ծախքով չորս միասլաղաղ սիւների վերայ, որ ունի 21 մետր 85 սանթիմ երկարութիւն, 13 մետր լայնութիւն. երկու դուռն հարաւային և հիւսիսային կողմից. քահանայ մի։ Ծուխ 130. ար. 568. իգ. 455։

Մազաղաթեայ մեծագիր աւետարան [1]) գրուած ամբողջապէս գլխագրերով. գողացած են յիշատակարանը, վասն որոյ գրում ենք յետոյ գրուածները. «Յանուն Աստուծոյ մեք Ներքի տանուտէրքս . . . յիշէ Զաւելի դի Մոսին [2]). ես Դաւիթ իմ վանական եղբարքս (եղբարբքս) վկայ եմ այս գրոյս ’ի թուականութեանս ՇՃՉ. հաստատուն, եթէ Աստուած կամի»։ Ապա գրուած է վերջին երեսի վերայ. «ղՄաթէոս ղՅակոբ երիցու քեռին, որ յարդեանց իւրոց ծախք արար յեկեղեցիս և յեղբարքս, որք զգիրս կարդայք, զնա յաղաւթս յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք . . . հաւր Պետրոսի հրամանաւ Գրեցի»։ Յետոյ գրուած է.

«Զաստուածափառ և զաշխարհալոյս սուրբ աւետարանս որ

[1]) Մեզ անյայտ պատճառաւ գտնուում է մի աշխարհականի տան։

[2]) Ոճ լատինական, որ նշանակում է՝ Զաւելի Մովսէսեան։

ձեռաւք Հասանայ Ուղին որդոյ բերաւ ի Կեսարիոյ և նոյն Հասնայն և ամուսին Ելմի և պարծանաց. որդիք իւր Հասրմբեր և Սամնայ ետուն զսա յիւրեանց տապանատունս որ էին տեղւոյս իշխանք զտուն Շիրանշահանց Դաւթի ձեռաւք ’ի վանս Եղիշէի և հաստատի սմա բանիւն Աստուծոյ և յանուն Հասնային և Ելմոյն յետ մահու պատարագ ի Քրիստոս յամեն եկեղեցիս ’ի գատկին յարութեան աւրն, որ յարոյց ընդ իւր բաղում մեռեալք և յարուսցէ Քրիստոս փառաւք զՀասնայն և զԵլմի հանդերձ իւր ծնելաւք միւսանդամ գալստեանն։ Արդ որք խափանեն զպատարագն և կամ հանէ զաւետարանս և զՇիրանշահանց տունն ի Տապանատնէս [1]), հանեսցի նա յարքայութենէն Աստուծոյ։ Առանց աշխարհաւերի թիւն Հայոց էր ՉԺԵ.։ ՉԻԱ. չինեցաւ ժամատունս (Եղիշէի)»։

Նորոգութեան մասին. «Ի թուականութեան Հայկական տումարի հազարերորդի հարիւրերորդի ինուսուներորդի մէկումն (ՌՃՂԱ.) թուին գրեցաւ ամսեանն դեկտեմբերի Գ. հանուրց դիտապետի տեառն Ներսիսի Աղուանից Կաթուղիկոսին և իշխանութեանս երկրիս Մէլիք Թամրազին»։ Ապա գրուած է։

«Ես Մէլիքս և եղբայր իմ Նուկզար որդիք Մուրատայ ստացաք զսուրբ աւետարանս ’ի հալալ արդեանց մերոց ի յիշատակ մեզ և մեր նախնեաց հաւր Մուրատայ և մաւր Մարգարտին և որդոց մերոց Եղիշէին և այլ ամենայն արեան մերձաւորաց և ետուք զսայ ի ձեռն Ստեփաննոս ախտեալիսկոպոսին առաջնորդ սուրբ ուխտին Գանձասարայ, որ կենայ ի դրան սուրբ Յովհաննիսին յիշատակ մեզ և մերոց ամենայնի կենդանեաց և մեռելոց»։ Հուսկ յետոյ գրուած է. «Ով մանկունք Սիոնի . . . ի թուականիս Հայոց ՌՂԹ. Գանձասարայ կաթուղիկոսն Գանջայո խանն տուխտաղ էր արել (բանտարկեալ էր), մինչև հատոյց զպարտսն դահճացն, ազատեցաւ, ելեալ գնաց թէ շրջեսցէ վասն պարտուցն. մինչև Խաչեն գնացի ես ընդ նմա... Գանձասարայ կաթուղիկոսն անուն Գրիգոր կոչի»։

Գիւղումս Աբի-բէկ Մէլիք-Թամրազեանցի մօտ կան հե-

[1]) Եղիշ-առաքեալի վանքից (Ջրվշիկ)։

տևեալ հին թղթերն. «Ռձծ. Յվին Սեպտեմբերի Իթ ես Թիւրաչեցի Ատին տղայ Հայնաղարս, Հաճի Փահրատս» ծախում են սոքա իւրեանց բաղը Մէլիք-Իսախանի [1]) տղայ Յոհաննէն և սորա եղբօր Բէկլարին: Առուճախի թուղթս նախ վաւերացրած է Յովհաննէս, ապա Եսայի կաթուղիկոսն,

«Եսայի կաթուղիկոս այս գրեալ մարդկանց իղրարովն, դպրուլթիւնովն վկայեմ» կնքած է և իւր կնքով:

Երկրորդ. «Ռձկե. յունվարի ԺԸ. ն. ես Ներքին չէնացի (Կիւլստանի գաւառումն է) Եսկարին տղայ Ուհանս իմ կամով ծախեցի իմ բաժին բաղն Գրիգոր վարդապետին ախբօր Սարդսին վերայ ԺԸ. ռ. [2]): Մէլիք Թամրազ վկայ.. Եղիա վկայ... Յարութիւն քոխա վկա.»: Իւրաքանչիւր ստորագրող կնքած է և իւր կնիքը:

Երրորդ թուղթն մխիթարական կնդակ է գրուած Ալուանից վերջին Ներսէս կաթուղիկոսից առ Մէլիք-Թամրազ, որ սպաւոր եղած է իւր որդու մահուան պատճառաւ, բայց չ'ունի թուական:

Ռախտարխանա

Այս անուամբ ճանաչուում է միայն աւերակն, որ կայ Յովանակեան դաշտակի վերի բերանում, Թալիշ գիւղն տանող ճանապարհի աջ եզերքի վերայ: Հին շինութիւնս, որ ունի դղեկի ձև, ասում են, եղած է մաքսատուն Կիւլստանի Մէլիքներին. որք մաքս առած են գաւառս բերուած ապրանքներից: Ռուսաց տիրապետութիւնից յետոյ մի ժամանակ եղած է փոշտի կայարան շինութիւնս, որ այժմ բոլորովին աւերակ է:

ՀՈՌԵԿԱՅ ԿԱՄ ՀԻՒՐԵԿԱՅ ՎԱՆՔ (33).

Հիմնարկուած է Թալիշ գիւղի արևմտեան կողմում լեռների մէջ մի հիւսիսահայեաց լանջի վերայ: Վանուցս շինութիւնն ունի շատ հին ձև, քանզի խորանն, ըստ սովորութեան, կլոր չէ ներքուստ, այլ քառակուսի, և շինուած է

[1]) Երևի թէ Մէլիք-Բէկլարեանների ցեղից է Մէլիք-Իսախանն:
[2]) Հազարն արժէ մի բուրլի, ուրեմն տասնևութ բուրլի ամենն:

անտաշ քարով: Բայց յայտնէ բոլորովին մութն է, նեղ, փոքր և բարձրաշէն, որ ունի 7 մետր 60 սանթիմ երկարութիւն և 4 մետր 32 սանթիմ լայնութիւն: *Դրան վերայ.*

«Ի քահանայապետութեան Ստեփաննոսի ղվինող եկեղեցւոյս զտէր Յովհաննէս յիշեցէք 'ի Քրիստոս նաև զծնողս և զեղբարսն իւր թիւ ՉԻԸ.»: Վանքս ունի և գաւիթ, որ նոյնպէս շինուած է անտաշ քարով, որի երկարութիւնն է 7 մետր 75 սանթիմ, լայնութիւնն 7 մետր: *Գաւթիս վերայ.*

«Յաշխարհակալ տէրութեան Ասպատ խանին և 'ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին և ի պարոնութեան Նորադինին և Սրասադինին և Գուրզադինին ես տէր Յովհաննէս շինեցի զգաւիթս յիշատակ ինձ և ծնողաց իմոց ՉԼԳ.»:

Գաւթումս ամփոփուած են շատ եպիսկոպոսաց, վարդապետաց և սարկաւագաց մարմիններ, այնպէս որ ամբողջ յատակն սալարկուած է տապանաքարերով:

Վանուցս արևմտեան կողմում դեռ կանգուն են միաբանից սենեակներ, որ շինուած են բոլորովին քարուկիր և թաղակապ: Բայց այժմ վանքումս չկայ ո՛չ վանահայր, ո՛չ միաբան և ո՛չ իսկ պահապան, վասն որոյ հետզհետէ քայքայուում է ամենայն ինչ:

Գեղեցկաքանդակ տապանաքարերով և խաչարձաններով զարդարուած են վանուցս շրջապատն: Այստեղ ամփոփուած են ո՛չ միայն միաբանից, այլ և Մէլիք-Բէկլարեանց տոհմի և նոյն իսկ Թալիշ գիւղի նշանաւորներն. այժմ ևս թաղում են Թալիշեցիք: Հետևապէս խիստ ընդարձակ է հանգստարանս. որի մէջ փայլուն տեղ գրաւած են Մէլիք-Բէկլարեանց բարեհամբաւ տոհմի շիրիմներն իւրեանց գեղեցիկ արձաններով և երկար արձանագրութիւններով, և նախշած տապանաքարերով:

ՄԷԼԻՔ-ԲԷԿԼԱՐԵԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՆ.

Վանքասարիս լանջի ստորոտում կառուցեալ է Կիւլստանի իշխող մէլիքների ապարանն, որ արտաքուստ չափելով

ունի 42 մետր երկարութիւն, $36^1/_2$ լայնութիւն: Ըստ երկարութեան ներսի կողմում արևելքից արևմուտք երկու շար սենեակներ շինուած են, որոց մէջն բաց է իբրև հրապարակ: Հարաւային շարքում կայ վեց սենեակ, որք ունին ութաչեայ կամարակապ սրահ: Միջի երկու սենեակներն ընդարձակ են և գմբէթաւոր: Հիւսիսային կողմն բաղկացած է երեք մեծ սենեակներից, որոց թաղակապ կամարներն թափուած են: Ապարանս ունեցած է երկու դուռն—արևելեան և արևմտեան կողմերից. առաջինն արդէն քանդուած է իւր կողմի ամբողջ պատով և երկու բուրգով միասին. իսկ արևմտեան դուռն իւր սեմերով քանդած և տարած են Թալիշեցիք եկեղեցուն համար: Ցաւալի է տեսնել որ Թալիշի հայերն չգիտեն սրբութեամբ պահպանել իւրեանց նախնեաց թանգագին հնութիւնները:

Քառաբուրգ բերդակ.

Ապարանիս հիւսիսային կողմում, մի քանի քայլ հեռի ձորակի ձախ լանջին վերայ շինուած է քարուկիր մի դղեակ չորս ամրաշէն բուրգերով, որք արձանացած են չորս անկիւններում: Կանգուն են հարաւային, հիւսիսային և արևմտեան պարիսպներն իւրեանց երկու բուրգերով. իսկ կործանուած է արևելեան կողմի պատն իւր երկու աշտարակներով: Դղեկիս մէջ տեղումն կայ մի նուիրական ուխտատեղի, բայց յայտնի չէ իւր անունն: Հիւսիսային պարսպի ներսի կողմում կան մի քանի թաղակապ սենեակներ:

Դիւտական գիւղատեղի (34)

Այժմ ևս Դիւտական է կոչուում աւերակ գիւղատեղիս, որ կայ Թալիշ և Մատաղիս գիւղերի գրեթէ միջև: Աւերակիս մօտ կայ մի կիսաւեր եկեղեցի, որ ունի 13 մետր երկարութիւն և 7 լայնութիւն. և որ շինուած է բաւական ճաշակով: Եկեղեցուս արևմտեան և հիւսիսային կողմերն լի են գերեզմաններով. սակայն ամենամեծ մասամբ ծածկուած՝ անտառի ծառերով: Հիանալի աղբիւր, ուշագրաւ գերք, դուրալի տեսարան ունի աւերակս:

Հարկ է յայտնել բարեմիտ ընթերցողաց թէ Թալիշ գիւղն, Հոռեկայ վանքն, Ներքին և Վերին—Չայլուներն և Դիւտական աւերակս կանխաւ պատկանում է եղել Ջրաբերդի գաւառիս՝ ըստ որոշման սարերի բնական սահմանին: Ահա այս է պատճառն որ Ջրաբերդ գաւառի շարքում գրեցինք շէն և աւերակ տեղերս: Բայց մէլիքութիւնն ծնունդ առնելուց յետոյ՝ այս մասը յատկացրած են Կիւլստանի մէլիքութեան:

ԺԲ. ՄԱՏԱՂԻՍ [1]) ՇԷՆ. Հիմնարկուած է Թարթառ գետի ձախ ափի վերայ Պառաւի կամրջից փոքր ինչ վերև. խոր ձոր է գիւղիս տեղն և բարձր լեռներ շրջապատած են գրեթէ չորս կողմերն. իսկ Թարթառն վշվշալով և մռմռալով հոսում է շինիս ստորին կողմով: Բնակիչք բնիկ, հողն արքունի, սակաւ և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, եկեղեցին նորաշէն, կիսատ և դեռ անկնունք, 15 մետր 50 ս. երկարութիւն 8 մետր 50 սանթիմ լայնութիւն. քահանան գալիս է Վարնկաթաղից: Ծուխ 35, ար. 90, իգ. 75:

ԺԷ. ԴՈՆԻ-ՇԷՆ (Դանիէլի շէն) Հիմնուած է նոյն գետի ձախ կողմում Մատաղիսից բաւական վերև. բնակիչք տեղափոխուած են Մաղավուզից. հողն արքունի, լեռնային. գերազանց օդն, կլիման և ջուրն, եկեղեցին խիստ հին, փոքրիկ, Սուրբ Գէորգ, քահանայ մի: Հարկ է յայտնել որ գիւղս և եկեղեցիս և Հանգստարանս հին են, իսկ այժմեան բնակիչք շատ յետոյ եկած են: Եկեղեցիս շինուած է անտաշ քարով, որի երկարութիւնն է 6 մետր, լայնութիւնն 4 մետր 40 սանթ. դռնագլխի քարին վերայ. «Ծառայ Աստուծոյ ես Մելքիսեթիս Նորոպեցի ժամատունս յիշատակ»: Վաղեմի գերեզմաններով լի են եկեղեցուս չորս կողմերն: Ծուխ 35. ար. 134. իգ. 113:

Հին գիւղատեղի. այսպէս է կոչուում այն աւերակ գիւղատեղին, որ կայ Դոնի շինից վերև և որ ունի պատուական

[1]) Բնաւ շփոթելու չէ այս Մատաղիսը Խաչեն գաւառի Մատաղիս աւերակ գիւղի հետ:

և առատ ջուր, ընկուզի զառամեալ ծառեր, և որ պատուաճ է անտառով։

Ջոխատակ մնատուռ, Ձոյգ շինուած քարուկիր մատուռներ են, որք կան Ուղտը-կերանք կոչուած տեղում, նմանապէս գիւղից վերև։ Այստեղ ևս կան գիւղի աւերակ, քարուկիր շինութեանց հետքեր և կաղամախի ծառեր։

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ.

Վանքս շինուած է Մռաւ սարից դէպի արևելք խոնարհուած մի լեռնաբազկի հարաւահայեաց լանջի հարթակին վերայ, որի ստորոտով սրընթաց խոխոջում է Թրղին [1]) գետակն, որ ե օժանդակ Թարթառի։ Կառուցեալ է չորս սիւների վերայ փոքր դիրքով, անճաշակ ոճով, բայց հպարտ արձանագրութեամբ։ Դրան ճակատակալ քարի վերայ. «Ի թուին ՌՃՒ. ին ի ժամանակս Շահ Սուլէյմանին մեծի արքային Պարսից ես Սիմէօն Հնոլհիւն Աստուծոյ կաթուղիկոս [2]) Աղուանից չինեցի զեկեղեցիս ընդ հարազատ եղբաւր իմոյ Իգնատիոս վարդապետին, որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ շինացոյ, յաղաւթս յիշեցէք որդիք Նոր Սիւնի...»։

Խորանի ճակատին. «Կերտեցաւ այս յարկ Նուիրանաց տանն Աստուծոյ և տաճար փառաց Նորոյ ուխտի պատարագաց, զոր Տէր Յիսուս մեզ աւանդեաց, չինեցաւ յերկուց հարազատաց Սիմէօնի կաթուղիկոսի և Իգնատիոսի բարուոյ և այլ յոգուն աշխատողաց գրելոց ի դպրութեան կենաց, ի թուականիս ՌՃԳ ին աւարտեցաւ սոյն եկեղեցի ի փառս անճառ Տեառն Յիսուսի.....»։

Վանքս ունի երկու քարուկիր և թաղակապ խուցեր մին մեծ և միւսն փոքր։

---

[1]) Թրղին կամ Թորաղա գետակս առած է իւր սկիզբը Մռաւի ամենաբարձր գագաթի Գոմէշ (Կեամուշ) Սարի (որի բարձ. 12269) հարաւահայեաց լանջերից։

[2]) Նոյս է ըստ Գազանիքի Ա. ճը ռ և ինքնակոչ կաթուղիկոսն, որ շինած է տաճարս ոչ ի փառս Աստուծոյ, այլ ի յագուրդ իւր անարդ փառասիրութեան, ի դաւաճանութիւն Աղուանից հարազատ կաթուղիկոսութեան, հակաթոռ Գանձասարի.....։

ԺԸ. ԴԱՍՏԱԿԻԻ. (Դաստակերտ) (35)

Աւերակ գիւղատեղի, հանգստարան և կիսաւեր եկեղեցի, որք գտնուում են Դոնի շէնի հիւսիսային կողմում մի բարձր, տեսարանաւոր, անտառապատ, բայց ուշագրաւ տարահարթի վերայ։ Բաւական փառաւոր շինուած է եղել քարուկիր եկեղեցիս, որի գլուխն այժմ խոնարհած է, բայց տակաւին մնում են կանգուն աւագ և երկու փոքր խորանների թաղերն։ Թէև աւերակ, սակայն վսեմ տպաւորութիւն է թողում այցելուաց վերայ եկեղեցիս, որի երկարութիւնն է 13 մետր, լայնութիւնն 10։ Աջակողմեան փոքր խորանի ճակատին.

«Թւ ՉԻԵ. ՚ի վաթշահութեան Ալաղէին, յամի տէրութեան Իւանէի, ՚ի հայրապետութեան տէր Ստեփաննոսի ես, տէր Սուքիասեանց ցեղէն տէր Ներսէս հիմնադրի, տկար ոգով շինեցի զեկեղեցիս յիշատակ մեզ և մերոց, յիշեցէք ՚ի Քրիստոս, աղաչեմ»։

Աջակողմեան խորհրդարանում. «Ես Մուսէս (կանգնեցի) զխաչս Խաթունա և Մամխաչունայ»։

Եկեղեցուս դրան ճակատակալ քարի վերայ.

«Կամաւն Աստուծոյ, ի դատաւորութեան Աղուանին, ի հայրապետութեան տէր Ստեփաննոսի, ի տէրութեան Իւանէին և Սադրադինին որդոյ Փախրադինին, ես տէր Սարգիս շինեցի զժամատունս, զուղեցի զգաւազանս, զաւետարանս զըստ ողոքին...» (Անընթեռնլի)։ Այժմ չկայ ժամատունն, այլ աւերակ է։ Եկեղեցուս չորս կողմերն լի են խիտաւխիտ ամփոփեալներով։

Այժմ մի փոքրիկ շէն կայ այստեղ, որի բնակիչք տեղափոխուած են Շուշուց երեք գերդաստան, Մեծ-Սիւնեաց մի գիւղից երեք գերդաստան, Ջէյուալից չորս գերդաստան, որք զբաղուում են անասնապահութեամբ, գերազանց է օդն, կլիման և ջուրն, քահանան գալիս է Դոնի շէնից։ Ծուխ 10. ար. 50. խգ. 40։

Միայնակ խաչարձան. Դաստակերտից Եղիշ առաքեալի

վանքն տանող ուղու աջ կողմում, ոչ այնքան հեռի ուղուց, անտառում կայ մի հին խաչարձան, բայց անարձանագիր։

ԵԼԻՇ-ԱՌԱՔԵԱԼ ԿԱՄ ՋՐՎԵՇՏԻԿ ՎԱՆՔ. (36)

Մռաւ սարի քղանցքներից մի լեռնաբազուկ յանկարծ խոնարհուած է բարձրից երկու ձորերի մէջ, ուր և կազմած է իւր ծայրից մի բլրակ, որի վերայ հիմարկուած է վանքս։ Սրբավայրս շրջապատուած է աքխաղխեալ և բարձրագոյն լեռներով և անդնդախոր ձորերով և սոսկալի կիրճերով, վասն որոյ նեղ է և սեղմուած իւր հօրիզոնն։ Վանքաբլրիս հիւսիսային ծայրում բարձրացած և ցցուած է լեռնաբազուկն, արևմտեան և հարաւային կողմերում Դաստակերտի սարի շարունակութիւնն և արևելեան կողմում երկու սարերիս գրկախառնուած դիրքն։ Մի վտակ արևմտեան կողմից շրջապատելով վիժում է շատ բարձրից [1]), պատում վանքիս հարաւային ստորոտի խորագոյն ձորով, դառնում դէպի արևելք և սրընթաց վազում դէպի Թարթառ։ Վանքաբլրի հարաւային կողմն սոսկալի վիմահերձ է. իսկ միւս երեք կողմերն՝ պարսպուած քարուկիր պատով, որ ունի երեք դուռն արևմտեան, հիւսիսային և արևելեան կողմերից։

Բլրիս գագաթում հիմնարկուած է վանքն անտաշ քարերով, որի շինութիւնն շատ հին է, ճարտարապետութիւնն՝ հասարակ, բարձրութիւնն՝ չափազանց, և ոճն անճաշակ։ Այսու ամենայնիւ ազդում է այցելուաց պատկառանք և սրբութիւն։ Ունի երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, 10 մետր երկարութիւն, 5 մետր 80 սանթիմ լայնութիւն։ Որմերի վերայ տեղ տեղ գործ դրուած է և աղիւս, որի երկայնութիւնն և լայնութիւնն 30 սանթիմ է և հաստութիւնն 11 ս.։ Այժմ խոնարհուած է վանքիս ամբողջ ձեղունն և խորանի արևելեան պատն։

Մենաստանս ունի և գաւիթ շինուած միևնոյն ճաշա-

[1]) Ջրվշտիկ անունը՝ հաւանական է՝ որ վանքս սոացած լինի ջրիս այս զմայլելի ջրվէժիցն։ Վանքս կոչուած է և Ներս-Միհրի վանք։

կով և ոճով չորս սիւների վերայ, նոյնպէս անտաշ քարով, գաւիթս ունի մի դուռն արևմտեան կողմից, 9 մետր 5 սանթիմ երկարութեամբ, 8 մետր 45 սանթիմ լայնութեամբ, և սոյն արձանագրութիւնը.

«Թ. ՋԾԴ. կամաւն Աստուծոյ ես Խաչատուր չինեցի ժամատունս յառաջնորդութիւն տէր Սիմէոնի, աղաչեմ զձեզ, յիշեցէք 'ի Քրիստոս»։ Ինչպէս տաճարիս շուրջն, նմանապէս գաւթիս յատակն ծածկուած է հանգուցեալ եպիսկոպոսաց, վարդապետաց և միաբանից տապանաքարերով։ Ահա շատերից մի քանիսի արձանագրութիւններն

«Այս է հանգիստ տէր Սիմէոնի ՋԽԷ.»։
« ,, ,, ,, տէր Ովանէսի 'ի թվ. ՊՁ.»։
« ,, ,, ,, տէր Վարդանի Ե. Քս. ՋԽ.»։
« ,, ,, ,, Մատէոս եպիսկոպոսին թվ. ՋՁ.»։
« ,, ,, ,, Մելքիսէթ եպիսկոպոսին, որ է առաջնորդ սուրբ ուխտիս, որ անմեղ սպանեցին Օսմանցիք ՌԾ.»։

Մենաստանիս երկու կողմերում կան մատուռներ։

Հիւսիսային կողմում, (սկսեալ այս կողմից դէպի հարաւ)։

Ա. մատուռն ունի երկու խորան և երկու սեղան, որ շինուած է անտաշ քարով։

Բ. մատուռն, որ նոյնպէս շինուած է անտաշ քարով, ունի միայն մի խորան և մի սեղան։

Գ. մատրան մէջ, որ շինուած է միևնոյն ձևով, կայ Աղուանից Գ. Վաչական Թագաւորի գերեզմանն, որի վերայ ձգուած է մի եռանկիւնի տապանաքար, որ պատրաստուած է առանձին խնամքով և յղկուած մաքուր տեսքով, որի երկարութիւնն է 1 մետր և 60 սանթիմ. բայց չունի արձանագրութիւն։ Տապանաքարիս մօտ կայ մի քարեայ խաչարձան, որ նշանաւոր է ոչ միայն իւր խիստ հեռաւոր հնութեամբ, այլ և իւր վաղեմի քանդակագործութեան գեղարուեստի ճարտարապետութեան ձևով, այսպէս է և խորանի աջ կողմում եղածն։ Մատրանս, որ ունի մի խորան, դրան

ճակատակալ քարին վերայ քանդակուած է.

«Այս է հանգիստ Վաչական թագաւորին (37). Աստուած ողորմի Հայրապետայ և այր (իւր) ծնողացն, որ շինեց զեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմիոնի թիւ ՉԼԵ. էր»: Մատրանս դրան դիմացն է Չրաբերդ գաւառի իշխող բարձրահռչակ Մէլիք Ադամ մեծի գերեզմանն: Ցաւալի է տեսնել որ անկիրթ մահմետականներն չարդած են արձանագրութիւն կրող մարմարիոնը, որ զետեղուած է եղել մէլիքիս տապանաքարի մէջ: Այսու ամենայնիւ գաւառիս մեծ և փոքր ամենքն աւանդութեամբ գիտեն իւրեանց սիրելի իշխան մէլիքիս գերեզմանը:

Դ. մատուռն, որ կանգնած է վանքին հարաւային կողմում, երկխորան է և ունի հեռաւոր հնութիւն, որի մէջ է մի գերեզման, որի վերայ փորագրուած է. «Այս է հանգիստ տէր Մեսրոպին որդի (որդւոյն) որ է աւագ եղբայր Մելքիսէթ եպիսկոպոսին թվ. ՌՃԿԲ.»:

Ե. մատուռն, որ Դ-ից հարաւ կայ, ունի մի խորան:

Զ. մատուռս աւելի հնաշէն է, որ ունի մի սեղան և գրութիւնս. «Յանուն Աստուծոյ ես Առաքել վարդապետ, տէր Մատթէոս շինեցինք զեկեղեցիս, հաջ բերինք . . . . .»:

Է. մատուռն ունի միայն մի սեղան:

Վանքումս կայ մի հնուց մնացած և կոտրած զանգակ, որի վերայ փորագրուած է. «Յիշատակ է զանկակս Ղազարին, որ է որդի Քիրիդորին, է Թոռն Եաւրին. Յուսեփի որդի Պապէն, որ է Պողոս Թուլգէր (Տիւսն). ես Շահնա կարմրեցի (ձուլեցի). գինն է Գ. Թուման»: Բացի զանգակիցս կայ և մի այլ կոպիտ և երկարաձև զանգակ, որ աւելի հին է:

Վանքս ցարդ սրբութեամբ պահած է Գաղտնիք Ղարաբաղի հերոսներից երկու քաջերի յիշատակը, որք են Դալի-Մահրասան և Տեօնմազ: Վանքիս արևելեան պարսպի մօտ է Աւագ-վարդապետ—Դալի-Մահրասայի բնակած սենեակն, որ ունի նեղ և փոքր լուսամուտներ և ամուր դիրք: Սենեկիս մէջ տիրում է խորհրդաւոր մթութիւն [1]:

Վանքիս հիւսիսային պարսպի փակուած դրան մօտ ներքուստ փորագրուած է գլխագլուխ. «ՐՇՅՃ ես Տոնմազս բիկեցի թվ. ՌՃՀԲ.»: Գրերիս մօտ շինուած է մի *փակագիր* մեծ ձևով, որը կարդացի միևնոյն *Տոնմազ* անունը:

Մենաստանս ունի և մի քանի հին սենեակներ և գոմ պարսպի ներսում: Վանքիս գրութիւնն խիստ խղճալի է: Անդիմադրելի ժամանակն քանդում և աւերում է ամենայն ինչ: Վիճի տակ ընկած են վանքիս սեփական և անբռնաբարելի իրաւունք կալուածներն և բոլոր հողերն, սպառուել են արդեանց աղբիւրներն, վանքս կարօտ է նորոգութեան, բայց փո՛ղ չկայ փո՛ղ, զի խցուած են արդիւնք հոսող ակունքներն: Այժմ վանքումս մնում է իբրև պահապան մի տիրացու, որ շինած է վանքի ճանապարհը և նորոգած Զ. մատուռը:

Ողոի մատուռ. այսպէս է կոչուում կիսաւեր մատուռն, որ կայ վանքի մօտակայ սարի ուսին վերայ: Այստեղ կայ և գիւղատեղի և հանգստարան:

Մատուռ. այս անուամբ է ճանաչուում այն կիսաւեր, փոքրիկ և հին շինութիւնն, որ գտնուում է Եղիշ-առաքեալ վանքի և Եղակեր շինի միջև մի տեսարանաւոր բլրի վերայ: Մատրան դռնագլուխ քարի վերայ. «.. Ես Գրիդոր կանգնեցի եկեղեցիս բարեխաւս ինձ և ծնողաց իմոց»: Եկեղեցուս մօտ կայ և հանգստարան, որք ծածկուած են մացառուտներով և չունին արձանագրութիւն: Այսպիսի կիսաւեր եկեղեցի, հանգստարան և գիւղատեղի կայ նաև Թթոտ կոչուած տեղում, որ գտնուում է աւերակիս հարաւային հանդէպ վարի լայնագոգ լեռնահովտի մէջ:

ԺԹ. ԵՂԱԿԵՐ ՇԷՆ. Հիմնուած է այն սարի հարաւային լանջի խոր ձորում, որ իբրև սահմանագլուխ ձգուած է Մռաւից մինչև գաշտաբերան: Բնակիչք քսան տարի առաջ

[1]) Ժամանակի հանգամանքներից ստիպեալ ամրոցի ձև ստացած է Դալի-Մահրասայի սենեակս. լուսամուտներն ոչ եթէ իսկապէս լուսամուտներ են, այլ հրացան արձակելու տեղեր—նեղ ծակեր:

փոխադրուած են Մեծ-Սիւնեաց Տեղ աւանից այստեղ: Հողն արքունի, լեռնոտ և յարմար անասնապահութեան, տեղական բերքերն նոյն, (առատ է ոչխար, տաւար, չ'կայ այգի, պարտէզ և մետաքս), գերազանց օդն, կլիման և ջուրն, եկեղեցին Սուրբ Աստուածածին քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ և հին, երկարութիւնն 12 մետր 5 սանթիմ, լայնութիւն 7 մետր 50 սանթիմ. քահանան գալիս է Կիւլստանից: Տաճարիս մօտ կայ հնուց մնացեալ մեծ հանգստարան, որի մէջ գիր ունեցող գտանք միայն. «Այս է տապան Մխիթարի որդի Մեժլում քոխային թվ. ՌՃՂԹ»: Ինչպէս երևում է հին աւերակներից, աւելի շատ եղած է Եղակերիս նախկին բնակչաց ծխաթիւն: Այժմ ծուխ 35. ար. 100. իգ. 85:

Մռաւի սուրբ.

Արցախեան նահանգի ամենաբարձր լեռներից մին է Մռաւ սարն, որ ընկած է Ծար, Ըռստակ, Ջրաբերդ, Կիւլստան և Գարգման գաւառների մէջ: Արդէն գիտենք որ սարիս հարաւային կողմն ընկած են Ծար և Ըռստակ գաւառն, արևելեան կողմն՝ Ջրաբերդ. իսկ հիւսիսային կողմն ընկած են Կիւլստան և Գարգման գաւառներն: Մռաւիս այս ամենաբարձր գագաթն, որ սահմանագլուխ է Ջրաբերդ և Կիւլստան գաւառների, բազմած է սարիս վերայ իբրև քարաժայռ և ցից բլուր: Երկու դժուարատար, երկիւղալի և վտանգաւոր կածան կայ քարաբլրիս կատարն բարձրանալու համար, մին արևելքից՝ որ է Կիւլստանի մուտքն և միւսն արևմտեան կողմից՝ որ է Ջրաբերդի մուտքն: Քարաբլրիս գագաթի մակերևոյթն մի մեծ կալաչափ հարթակ է, որի եզերքներովն շարուած են ահագին վէմ քարեր [1]) ինչպէս պարիսպ, որպէս զի մարդ չընկնի գագաթից, նոյնպէս և տեղ տեղ մուտքերի երկու կողմերում: Ահա գագաթիս վերայ կայ մի սպիտակ, փոքր խաչքար, որի տակ աւանդաբար ասում են, թէ կայ նահատակի գերեզման, որ է *ուխտատեղի*: Արևելեան մուտքի մօտ կայ մի թոնրաչափ սառցատուն, որի միջից անպա-

[1]) Զարմանում է մարդ թէ ինչպէս բարձրացրած են այս լեռնանման մեծ մեծ քարերը այստեղ:

կաս է ամրան եղանակներում ջուր և սառն: Սրբավայր գագաթիս բարձ. է 11219 ոտք:

Ճանիր սքանչելի է տեղիս տեսարանն, քանի ուշագրաւ է բնութեան գեղեցկութիւնն, մանաւանդ երբ բոլորովին պարզ է երկինքն: Հարաւային կողմերում երևում են ի բացուստ Արցախեան բարձր լեռնաշղթան, որոց վերայ արձանացած են Ծար, Խաչեն, Վարանդայ և Դիզակ գաւառների բարձր գագաթներն. Պարսկաստանի Սաւալան սարն և Երասխըն: Արևելեան կողմերում երևում են ամբողջ Արցախի և Աղուանից դաշտերն, Կասպից ծովի հարաւային մասն, հիւսիսային կողմում Կովկասեան լեռնաշղթան, Շահ-դաղն իւր ընկերներով և Կազբէկն. իւր արևմտեան կողմում Կալենի լեռներն: Բայց մօտուստ պատկերացած են բոլոր դաշտային և լեռնային գաւառներն, տեղ տեղ բազմաճղի աղխաղխեալ լեռնագօտիներ, միայնակ կամ ճիւղաւորուած լեռնաբազուկներ, սարաւանդներ, օձաձև գալարուած, նաւաձև, նաւակաձև ձգձգուած ձորեր և ձորակներ, վիմահերձ լեռնաճակատներ, խոտադէզերի նման լեռնագլուխներ, բլուրներ և բլրակներ և միանգամայն լերկ, գալարագեղ, անտառապատ և մացառուտ սարալանջեր, սեռեր և սրածայր բլուրներ:

ՋՐԱԲԵՐԴ ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ.

Երկու են գաւառիս գլխաւոր բերդերն—*Քաղաքատեղի* կամ *մայրաքաղաք* և Ջրաբերդ: Արդէն խօսած ենք ինչպէս առաջնոյն մասին, նոյնպէս և Ինն-Մասի բերդանման ապարանի մասին, ուրեմն խօսինք վերջնոյս Ջրաբերդիս [1]) մասին»

Ամրոցս գտնուում է Մայրաքաղաքի ուղղութեամբ Թարթառի խոր ձորումն գետի ձախ ափի վերայ: Համարեա թէ ջրով շրջապատուած է բերդավայրս. որի արևմտեան ստորոտով սրընթաց խոխոջում է Թրղին կամ Թորաղա գետակն և միանում Թարթառին. ապա միացեալ ջրերս պատելով բերդին

[1]) Կոչուած է նաև Զարաբերդ, Զրաբերդ, Ջերմուկի բերդ, ղալա: Բերդս խիստ հին է. տես. Մով. Կաղ. եր 124 «հանդիպեցան յամրոցին Զաբրաբերդոյ»:

հարաւից և արևելքից՝ գառնում են դէպի հիւսիս և ապա հեռանում վշվշալով։ Ահա այսպէս թերակղզի ձևացած է բերդատեղիս։ Սակայն Թրղին և Թարթառն բաղմադարեան ժամանակամիջոցում քանդած, տարած և խոր խոր ձորեր ձևացրած են իւրեանց յատակը, այնպէս որ այժմ անմատչելի, ահարկու և բարձր վիմահերձ ժայռեր են բերդիս երեք կողմերն. իսկ լեռնակողմն վիմահերձիցն վիմահեբձ պարսպուած է ամուր պատով։ Ունի միայն մի մուտք պարսպի պատով։ Բաւական տարածութիւն ունի բերդիս մակերևոյթն, որի վերայ կան բաւական քարուկիր շինութիւններ, կան՝ որ բոլորովին անվնաս մնացած են։ Սակայն բուսած են բերդումս ծառեր, որոց հաստաբուն արմատներն հետզհետէ փորձ են փորձում քանդել շինութեանց հիմքերը։ Բայց որովհետև բերդումս չկայ ջուր, վասն որոյ բերդիս միջից դէպի Թարթառ գետն կտրած են վիմափոր ականներ, որոց միջի սանդղաձև աստիճաններով երթևեկելով ջուր մատակարարած են բերդիս պաշարման ժամանակ։ Թարթառն գործ դնելով իւր մշտագործ գործիները վերստին փորած և իջեցրած է բաւականին իւր յատակը. այս պատճառաւ ականների արտաքին բերաններն բարձր մնացած են գետի երեսից [1])։

Ինչպէս տեսանք գաւառների սահմանների բաժանմանց շարքում, հնուց մի և անբաժան եղած են Ջրաբերդ և Կիւլըստան գաւառներս։ Բայց որովհետև մէլիքութեան ժամանակ բաժանուած են իրարից գաւառս, որպէս գծուեցաւ սահմանն, վասն որոյ առանձին ենք դասաւորում գաւառիս գիւղերը, ծխաթուերը և հնութիւնները։ Նշանաւոր են Կիւլստանիս տանձն, խնձորն և ցորենն։

Ա. ԿԻՒԼՍՏԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Մռաւ սարի հիւսիսային կողմում ինչ գետակի ձախ ափի վերայ։ Լեռներով շրջապատուած է գիւղս, վասն որոյ գտնուում է այն մի փոսանման ձորի մէջ։ Բնակիչք բնիկ, հողն բէկական, բարեբեր, մեծ մասամբ անջրդի, անվնաս օդն, կլիման և ջուրն,

[1]) Բերդիս հանդէպ Թարթառ և Թրղի գետախառնուրդի մէջ է Անապատն, որ ունի և մի քանի խուցեր։

երկար կեանք 80—85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ չորս սիւների վերայ (երկու փոքր խորանների վերայ կան երկու խորաններ ևս), երկարութիւն 22 մետր 80 սանթիմ լայնութիւն 15 մետր 67 սանթիմ, քահանայ մի։ Ծուխ 56, ար. 200, իգ. 175։

Ծեր-աւետարան. երկէջ, մեծադիր, թղթեայ, որ կայ եկեղեցումս և ունի չորս աւետարանչաց անճաշակ պատկերները։ Աւետարանիս գրողն է. «ՁԳրիգոր մեղապարտ գրիչ յիշեա ի Քրիստոս»։ Գողացած են յիշատակարանը մի քանի թերթերով միասին, վասն որոյ անյայտ է աւետարանիս գրութեան թուականն և գրուած տեղն։ Տաճարիս գուբսն, արևմտեան որմի մօտ մի քարի վերայ. «Այս է տապան Օհանէսին, որ էր որդի Օսէփ բէկին և թոռն Մելիք Ստեփանին [1]) ՌՄՁԴ.»։

Գիւղիս հիւսիսային ծայրում կայ մի *հնաշէն* եկեղեցու աւերակ, որ շինուած է եղել ամբողջ սրբատաշ քարով և կոչուում է այժմ սուրբ Մինաս, որի հիւսիսային որմի վերայ. «Կամաւն Աստուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու տէր Դաւիթն, Սպարապետն, պողն (պտղաբերողքն) առ հասարակ ժողովուրդքն թվ. ՌՃԸ.»։

Գիւղումս կայ մի քարուկիր և կամարակապ ապարան, որ ունի սոյն արձանագրութիւնը. «Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ ապարանս ի թվ. ՌՄԱ. ես Յակորոս ծառայ Աստուծոյ իշխող գեղոյս որդի Աբրահամ Ըսպարապետին [2])»։ Բնակարանիս տէրն, որ այն սոյն սպարապետիս յետագայ ժառանգն է, ունի մի ապահովագիր, որով «Ծանուտէրանց Ջանի որդի Յարութիւնն» վաճառում է Ամենափրկիչ վանքի մօտ եղած իւր գետինը Աբրահամ—իւզբաշու որդի Յակովբյան իւզբաշուն 10,000 թուման։ Առուծախիս վկայ գրուած են «Հիւրեկայ առաջնորդ տէր Պետրոս. Ներսէս ճգնազգեաց վարդա-

[1]) Մէլիք-Բէկլարեանների ցեղից չէ մէլիքս, որպէս հաստատում են, մէլիքութիւնն սկսուած է իւրով Մէլիք-Ստեփանով և մեռած իւր հետ։ Բայց ինչպէս կարծում եմ, ամփոփելու լինելու է Մեծ-Սիւնեաց Մէլիք-Ստեփանեանների ցեղից։

[2]) Երևի թէ Սպարապետս եղած է Մէլիք-Բէկլարեանների զօրապետն, բայց չկայ գրաւոր և ոչինչ։

պետ, Քաջամարդիկ Մէլիք-Յոսէփ, Քաշալ Հրապետ, Կոստնց Եաւրի. Զովղուն [1]) Յարութիւն, Ուստա Բալաս» ևն. Հուսկ ուրեմն գրած է գրագիրն. «ՌՄԻԳ. մայիսի Զ. դրեցաւ Գիւլըստանին գլխին կալին Քարագլխին»:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ԿԻՒԼՍՏԱՆԻ

Վանքս գտնուում է Սուրբ-որայ (սառնագին) վտակի ձախ ափի մօտ: Ինչպ գետակի օժանդակն է Սուրբ-աւոր վտակն որ իւր սկիզբը առած է Մուսալի սրբասարի արևելեան կողմից: Մենաստանս, որ գիւղից մօտ կէս մղոն հեռի է դէպի հարաւ, կառուցեալ է անտաշ քարով չորս միապաղաղ սիւների վերայ, ունի մի գուռն հարաւային կողմից, մի մեծ, երկու փոքր խորաններ, երկու խորհրդարան և երկու նեղ լուսամուտ: Վանքս, որ ունի 23 մետր 50 սանթիմ երկարութիւն, 10 մետր 10 սանթիմ լայնութիւն, տակաւին կանգուն է, միայն ճաքուած է արևելեան պատն գագաթից մինչև գետինն և ծակուած է աւազանի եռւից, որի մօտ քանդակուած է. ՌՂ. թվ.»: Զունի ուրիշ արձանագրութիւն: Հարաւային կողմում կան ամփոփեալներ:

Մենաստանս իւր արևմտեան կողմում (խիստ մօտ) ունի երկու թաղակապ սենեակ, մէկի մուտքի սեմին վերայ. «Թիւ ՌՃԿԴ. յիշատակ է այս օթմաղս Եղիա վարդապետին»: Միաբանութեան սենեակներն, որ գտնուում են հիւսիս արևելեան կողմում (մի քանի քայլ հեռի) արդէն կիսաւեր են:

Ամենափրկիչ մատուռ. որ մօտ է վանքիս և շինուած քարուկիր, աւազանի արևելեան խաչի վերայ. «Խաչս Հիւրիա ապաշխարողին»: Սորա դրան առաջ. «Այս է հանդիստ Հիւրեղ տատին, աղաչեցէք. Թվ. ՌԿԲ.»:

Կարմիր եղցի գտնուում է գիւղից վերև Ինջայի ձախ կողմի լանջի վերայ աւերակ եկեղեցի, որ շինուած է եղել

[1]) Փոխաբերական մականուն, որ նշանակում է՝ բանականները և անասունները կոտորող կարկտաբեր կամ բքաբեր ամենաասատիկ քամի. իսկ իսաստն է քաջամարտիկ, այսպիսի մականուններ շատ կայ Դաղտնիք Ղարաբաղի մէջ:

երկայրկ, այժմ մնում է միայն գետնայարկն, որ ծառայած է լանջը հարթելու: Աւերակիս մօտ կայ գիւղատեղի և հանգստարան, որի մէջ մի մամռապատ քարի վերայ. «Այս է տապան Աւուսի որդի ՌԱ. (Թուին)»:

ԴԱՏԻ-ԲԷԿԱՆՑ ՎԱՆՔ.

Կիսաւեր վանքս գտնուում է Կիւլստան գիւղից ներքև Ինջա գետի աջ կողմում: Մենաստանիս մօտ կայ միաբանից սենեակներ և հանգստարան:

Զաքին նահատակ. Աւերակ վանքիս հիւսիսային կողմում, Պարանպատ անուն անտառում, Ինջայի ձախ կողմում կայ գիւղատեղի, հանգստարան և կիսակործան մի փոքր եկեղեցի *Զաքին նահատակ* անուն:

Հին-Խրխափոր գիւղ. հիմնուած է Կիւլստան և Նոր-Խրխափոր գիւղերի միջև մի հովտում. ուր այժմ երևում են գիւղի աւերակն, թթենի, ծիրանի, տանձի և խնձորի ծառերն և պարտէզներն. իսկ ձորի արևելեան կողմում փոքր եկեղեցին և հանգստարանն:

Բ. ՆՈՐ-ԽՐԽԱՓՈՐ. Հիմնուած է Սև-գետ—գետակի (զարչայ) աջ կողմում, Գեօրգին սարի ստորոտում, մի գեղեցիկ դաշտակի հարաւային ծայրում. բնակիչք մի քանի տարի առաջ տեղափոխուած են Հին-Խորխափորից. հողն բէկական, (մելիքապատկան) ջրարբի և բազմարդիւն, բացի սովորական բերքերից ընտիր տանձ, խնձոր, մեռաքս և բամբակ. օդն և կլիման փոքր ինչ տաք ամրան, ջուրն պատուական. եկեղեցին նորաշէն, կիսատ, կառուցեալ չորս սիւների վերայ. որ ունի երկու գուռն հարաւային և արևմտեան, վեց լուսամուտ, 16 մետր 56 սանթիմ երկարութիւն և 11 մետր լայնութիւն: Շինուում է Մէլիք-Բէկլարեանց Թալիշ-բէկի ծախքով և բնակչաց աշխատութեամբ. քահանայ մի:

Եկեղեցիս ունի մի պատկերազարդ գրչագիր, փոքրագիր աւետարան, գրուած թղթի վերայ, գողացած են յիշատակարանը, վասնորոյ անյայտ է գրողն, թուականն և տեղն. մի-

այն գրուած է Մատթէոսի վերջումն. «Ստացող սուրբ աւետարանիս Շիրվանայ Հինղարցի Մելքումն և եղբարք Սալրիսն, Փիրպուտաղն»: Իսկ Մարկոսի վերջում յիշուած են նոյն Մելքումի բոլոր ազգակիցների անուններն յականէ յանուանէ: Ծուխ 21, ար. 88, իգ. 88:

Աղբիւր. Որովհետև եղած չէ գիւղումս աղբիւր կամ պատուական ջուր, այս պատճառաւ աւագ—սարկաւագուհին համեստափայլ Փեփրոնէ կոյս Խուբեանց Մէլիք-Բէկլարեանցն՝ իւր սեփական ծախքով վերի սարիցն խեցեղէն խողովակներով շէնս բերել տուած է պատուական ջուր, որը և երկու բաժին անելով՝ մի մասը հանած է եկեղեցուս մօտ հասարակութեան համար և միւս մասը՝ մեծ. Թալիշ-բէկ Մէլիք-Բէկլարեանցի բակն: Եկեղեցու մասին աղբիւրի շինութեան վերայ փորագրուած է. «Ես կոյս աւագ սարկաւագուհի Փեփրոնեայ Խուբեանցս Մէլիք-Բէկլարեանց Խարխափուէթ (Խրխափոր) գեղջ աղբիւրն կառուցի իմով արդեամբ ի յիշատակ իմ և հանգուցեալ ծնողացս և քերց և եղբարց իմոց 1-ն մարտի 1893 թ.»:

Երկու արձանները. Կիւլստանից մինչև Նոր-Խրխափոր բարեպաշտ ոմն Հարթելով պատրաստած է կառքի ճանապարհ: Մի արձան կանգնած է Խաչ-կեադուկի [1]) մօտ և միւսն Հին և Նոր-Խրխափորի միջև: Վերջին արձանագրութիւնը. «1890 ամի ի 1-ն մայիսի ճանապարհս շինեց Գրիգոր Մէլիք-Բէկլարեան իւր հօր Բէկլար Ֆրիդոնեան Մէլիք-Բէկլարեանցի յիշատակին: Այս յիշատակի յարգողը թող ապագայում նորոգի դիրս»:

Աւերակ վանք.

Կողեր անուանեալ տեղում կայ մի աւերակ վանք, որից մնացած է միայն արևմտեան պատն և հիմքերն, այստեղ կայ և հին հանգստարան:

Գ. ՂԱՐԱ-ՋԻՆԱՐ կամ Աղջա-Ղալա. Հիմնուած է Սև գետակի աջ կողմում. բնակիչք բնիկ, հողն բէկական, ամե-

[1]) Խաչ-կեադուկումս, կայ երկու քարեայ հին խաչարձան ճանապարհի աջ ու ձախ եզերքներում, բայց գիր չունին:

նայն ինչ նոյն, երկար կեանք 65—70. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, նորաշէն, կառուցեալ չորս սիւների վերայ. քահանայ մի, կայ արքունի ուսումնարան: Ծուխ 120, ար. 405, իգ. 400:

Դ. ՆՈՐԱՇԷՆ ԳԻՒՂ. Հիմնեալ նոյն գետակի աջ կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սուրբ Մինաս, ձեղունն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 38, ար. 223, իգ. 200:

Ե. ՂԱՀՅՈՒԹ կամ ՋԷՅՈՒԱ ԳԻՒՂ. Հիմնուած նոյն գետակի ձախ կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ամենայն ինչ նոյն, չունին եկեղեցի, գի խիստ մօտ է Ղարա-Ջինարին. քահանան գալիս է Նորաշէնից: Ծուխ 11, ար. 45, իգ. 42:

Զ. ՆԵՐՔԻՆ-ՇԷՆ. Հիմնուած է նոյն դաշտակի վերի ծայրումն և նոյն գետակի ձախ ափի վերայ մի սարի ստորոտում. բնակիչք բնիկ, հողն բէկական [1]), կիսով չափ ջրարբի, ամենայն ինչ նոյն, օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 80, եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ վեց սիւների վերայ, բայց սագաշէն և ցած, խորանի հիւսիսային կամարի վերայ. «Եկեղեցիս անուանեցաւ Սուրբ Աստուածածին թվ. ՌՃԽԶ.»: Երկարութիւնն 20 մետր, լայնութիւն 9 մետր 5 սանթիմ, ճաքած է արևելեան պատն:

Եկեղեցուս գրան *ճակատակալ քարի* վերայ.

«Աստուած ողորմի Գօրեցի Գօրգինի որդի Տաւթին, որ պատճառ եղև»: «Կամաւն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ տէր Եղիային յիշատակ իւր և ծնողացն հօրն Աթին և մօրն Հռոմին և կողակցին և որդոցն տէր Դաւթին, Կոստանտին, Եսկարին . . . տացութեամբ Շիրմազանի որդի Մելքումին . . .»: Քահանայ երեք:

Եկեղեցումս կայ երկու գրչագիր աւետարան.

Ա. աւետարան փոքրագիր, անճաշակ նախշերով, գրուած թղթի վերայ. գողացած են յիշատակարանը, վասն որոյ ան-

[1]) Թալիշից սկսեալ մինչև այստեղ բոլոր հողերն պատկանում է Մէլիք-Բէկլարեանց ժառանգներին. իսկ գիւղինս Թուրք բէկի:

յայտ է գրողն, թուականն և տեղն: Մարկոսի վերջում միայն յայտնի է նախ՝ որ Յովհաննէս անուն միայնակեաց ստացած է աւետարանս իւր Յովասափ հարազատ եղբօր հետ: Երկրորդ անգամ ստացած են նոյն աւետարանը այլ հարազատ եղբարք Յունան և Դաւիթ թվ. ՌՁԷ.—ին:

Բ. աւետարան. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Որոտան, ի գիւղն՝ որ կոչի Լոր ձեռամբ անիմաստ և անարժան Աբրահամ գրչի ՌՃԻԷ. ամի.». Աւետարանս չունի ո՛չ պատկեր և ոչ չիշատակարան: Ծուխ 105, ար. 481, իգ. 372:

Հրեք մանկունք. Աւերակ վանքս, որի միայն կանգուն են արևմտեան և հիւսիսային պատերն, գտնուում է գիւղիս հարաւային կողմում, նոյն գետակի աջ կողմում շինուած մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորեր են: Զունի արձանագրութիւն, միայն աւանդութեամբ են ասում Իրեք (երեք) մանկունք: Վանքիցս վար, ձորի մօտ կայ Լիտր անուն հին գիւղատեղի, հանգստարան և երեք քարեայ խաչեր:

Անջուր կամուրջ.

Ներքի և Վերի շէներքի միջև կայ մի հնաշէն և քարուկիր կամուրջ Սև գետակի վերայ: Գետակն փոխած է իւր ընթացքը գէպի հիւսիս և անջուր մնացած է կամուրջն:

Է. ՎԵՐԻ-ՇԷՆ. Հիմնուած է նոյն հովտի վերայ միևնոյն գետակի ձախ ափումն. բնակիչք բնիկ, հողն բէկական, լեռնային, անջրդի, հացաբեր. տեղական բերքերն նոյն. գիւղն շրջապատուած լեռներով, անվնաս օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 80, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւնն 19 մետր 50 սանթիմ, լայնութիւն 10 մետր 80 սանթիմ: Հիւսիսային խորանի գլխին կայ գաղտնի պահարան: Քահանան գալիս է Ներքին-շէնից:

Եկեղեցումս կայ մի գրչագիր, մագաղաթեայ աւետարան, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերները և փոքր դիրք: Գեղեցիկ են փոքր գրերն, բայց անճաշակ և անոճ բոլոր գլխագրերն, նախշերն, ծաղիկներն և նոյն իսկ պատկերներն. գրողն է Սարգիս անուն ոմն: *Ցիշատակարանից.* «Ի ժամանակիս յայսմիկ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ի վտանգի կայր ազգն քրիստոնէից ի ազգէն անօրինաց և էր թուականն Հայոց ՋԽՒ. և ողիմբիամն, որ է նահանջ՝ ՄԼ. և դանուէիւն Հասան բէկին, որ գնաց յաշխարհն Հոռոմոց և ազգի ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց և ի կաթուղիկոսութեան Հայոց տէր Ռաստակեսի (Գ-ի) և հայրապետութեան սուրբ ուխտին գետամիջոյ տէր Սարգսի և փակալութեան տեղոյն Յովհաննէս կոյսակրաւն արեղայի: Բայց արդ գրեցաւ ոտրը աւետարանս ի գաւառիս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի, սուրբ սքանչելագործ Նշանիս [1]) Սուրբ Սարգսի և ի տէրութեան տեղոյս պարոն Վէլիջանին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: Արդ գրեցաւ սուրբ աւետարանս յաւրինակէ տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ համարաւ և կիտիւ և բանիւ և նշանագրով... ի խնդրոյ արքեպիսկոպոսի, որ վաւեալ ջահ է եկեղեցւոյ... Պարոն Տէր: Թողութիւն արարէք եղանակիս, որ գրուեցաւ. անձրև խիստ և տեղիքս գէճ և հողս ջրաշ և ես մենակ»: Ետարայարուած է յետոյ.

«Կազմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Քարթմանկեցի (Գարդմանցի) Արիստակէս երիցու որդի Վաղան քահանային ՌՃՂԸ.»: Ասպա գրուած է ի մէջի այլոց. «Ես Վերին շէնի տանուտէր Յարութիւնս առի (գնեցի) զայս Քրիստոսի սուրբ աւետարանս ի անօրինաց ձեռքէն, իբր թէ գիրի անկեալ լինելի»: Ծուխ 91, ար. 524, իգ. 454:

ՄԷԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Գիւղումս բնակում է Բէկլար-բէկ Մէլիք-Շահնազարեանց Շահփուրեանցն, որի նախնիքն ևս Մեծ-Մազրա գիւղից փոխադրուած են Արցախ, նախ բնակութիւն հաստատած Աւետարանոց աւանումն, ապա Շուշում, ապա Թիֆլիզում և հուսկ յետոյ գիւղումս: Մէլիք-Շահնազարեանների այս ճիւղի պատ-

[1]) Խաչենաձորիս վանքերն են Կոշիկ անապատն, որի մէջ գրուած է աւետարանս:

ներն. գրողն է Սարգիս անուն ոմն: *Ցիշատակարանից.* «Ի ժամանակիս յայսմիկ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ի վտանգի կայր ազգն քրիստոնէից ի ազգէն անօրինաց և էր թուականն Հայոց ՋԽՒ. և ողիմբիամն, որ է նահանջ՝ ՄԼ. և դանուէիւն Հասան բէկին, որ գնաց յաշխարհն Հոռոմոց և ազգի ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց և ի կաթուղիկոսութեան Հայոց տէր Ռաստակեսի (Գ-ի) և հայրապետութեան սուրբ ուխտին գետամիջոյ տէր Սարգսի և փակալութեան տեղոյն Յովհաննէս կոյսակրաւն արեղայի: Բայց արդ գրեցաւ ոտրը աւետարանս ի գաւառիս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի, սուրբ սքանչելագործ Նշանիս [1]) Սուրբ Սարգսի և ի տէրութեան տեղոյս պարոն Վէլիջանին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: Արդ գրեցաւ սուրբ աւետարանս յաւրինակէ տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ համարաւ և կիտիւ և բանիւ և նշանագրով... ի խնդրոյ արքեպիսկոպոսի, որ վաւեալ ջահ է եկեղեցւոյ... Պարոն Տէր: Թողութիւն արարէք եղանակիս, որ գրուեցաւ. անձրև խիստ և տեղիքս գէճ և հողս ջրաշ և ես մենակ»: Ետարայարուած է յետոյ.

«Կազմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Քարթմանկեցի (Գարդմանցի) Արիստակէս երիցու որդի Վաղան քահանային ՌՃՂԸ.»: Ասպա գրուած է ի մէջի այլոց. «Ես Վերին շէնի տանուտէր Յարութիւնս առի (գնեցի) զայս Քրիստոսի սուրբ աւետարանս ի անօրինաց ձեռքէն, իբր թէ գիրի անկեալ լինելի»: Ծուխ 91, ար. 524, իգ. 454:

ՄԷԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Գիւղումս բնակում է Բէկլար-բէկ Մէլիք-Շահնազարեանց Շահփուրեանցն, որի նախնիքն ևս Մեծ-Մազրա գիւղից փոխադրուած են Արցախ, նախ բնակութիւն հաստատած Աւետարանոց աւանումն, ապա Շուշում, ապա Թիֆլիզում և հուսկ յետոյ գիւղումս: Մէլիք-Շահնազարեանների այս ճիւղի պատ-

[1]) Խաչենաձորիս վանքերն են Կոշիկ անապատն, որի մէջ գրուած է աւետարանս:

մուքիւնն անյայտ մնայած է գրականութեան. վասն որոյ զետեղում եմ այստեղ հետևեալ վաւերաթղթերը իբրև նիւթ ապագայ պատմութեան։

Ա. «*Հ[ա]յկ[ա]կան.* 1860 ամի մայիսի 3-ին Առուստամ բէկ Բապայբէկեան Մէլիք Շահնազարեանց Շահփուրեանց, որոյ նախնիքն եղեալ են բնակիչք Գեղարքունւոյ (այլ ազգ. Գեօղչայու) բնակելով ի Ղարաբաղ ի ժամանակի նախկին տիրապետող կողմանս խանաց [1]) շահեալ է ամենայն արժանութեամբք և իրաւամբ յարգելի և մեծապատիւ բէկացն Ղարաբաղու՝ լինելով ի շարս մեծարգոյ Հայոց իշխանաց, ունեցեալ է ընդ տիրապետութեամբ իւրով զտրուկս բնակեալս ի գեղջն Մաղրայ Գեօղչայ գաւառի Ջարգրիլ [2]) մերձ Նախիջևանայ, ընծայեալ ծնողաց նորա ի Պարսից Շահայն, առ որ յիշեալ Առըստամ բէկն ունի գրովարտակս ի Շահ Ասլասէն յանուն հաւու հօրն իւրոյ Մէլիք Եաւրուն Մէլիք Շահնազար Շահփուրեանին Գեղարքունւոյ (Գեօղչայու)։ Ազգն Առուստամբէկին և ի ներկայ ժամանակիս նոյն շահի յարգելի բէկական իրաւամբք և արժանութեամբք. Առուստամ բէկն այժմ ևս գտանի ընդ որդւոց իւրոց ի շարս Ղարաբաղու բէկաց և ունի հրովարտակս ի Շահ Ասլասէն շնորհեալ նախնեաց նորա և զվկայականս ի տիրապետող խանացն Ղարաբաղու և յարգելի աղալարաց վասն մեծապատիւ բէկական իրաւանց իւրոց և վասն ծագման նորա յազգէն Մէլիք Շահնազարայ Շափուրեանց Գեղարքունւոյ (Գեօղչայու)։ Ի ճշմարտութիւն վերագրելոցն տուեալ եղև այժմ ևս մեօք այս վկայութիւն որդւոց նորա մեծապատիւ Ասլան բէկին և Բէկլար բէկին Մէլիք Շահնազար Շահփուրեանց ի հետևումն պահանջման նոցա»։

Ստորագրուած են Մուսայէլ Թօլուխանեանց, Սարգիսբէկ Մուսայէլբէկեան Մէլիք-Շահնազարեանց,
Սարգիս Բաղրբէկեան ,, ,, ,
Օվանէս-բէկ Իսրայէլբէկեան ,, ,

[1]) Ձրս խաներն։

[2]) Գտնուում է Սոթի հարաւ արևելեան կողմում, որ և տարբեր է Ծար գաւառի Ջարից և Ջրիվից։

Բ. «*Վկայական.* Ըստ հրամանի Նորին Կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց տուաւ այս ի Լուսաւորչական Հայոց կանխիտորիէս Ղարաբաղու համաձայն օրագրական տեմնանագրութեան Նորին կայացելոյ յ3-դ աւուր փետրվարի 1861 ամի հիմնեցելոյ ի վերայ խնդրագործութեան բնակչի Շուշուայ գաւառի Ջրաբերդ գաւառակի Վերին չէն գեղջ Ասլան բէկի Ռուստամբէկեան Մէլիք-Շահնազար-Շահփուրեանց վասն այն թէ արդէն երևի ի հաւաքեալ օրինաւոր ևդանակաւ հաւաստութեանց՝ ազգապետ սերնդոյ նորա է Մէլիք Շահնազար Շահփուրն, յորմէ ծնեալ են Մէլիք Եավրին և Եաւրի աղային, ի Մէլիք Եավրիէն ծնեալ է Մէլիք Աստուածատուր, յորմէ ծնեալ են Միր-Դաւիթ-խան և Բապայ բէկն, ի Եավրի աղայէն ծնեալ է Նաղտի բէկն, յորմէ և ծնեալ է Միանսար բէկն, ի Բապայ բէկէն ծնեալ են Ռուստամ բէկն և Առուշան բէկն, ի Ռուստամ բէկէն ծնեալ են Ասլան-բէկն և Բէկլար բէկն, յԱսլան բէկէն ծնեալ են Միրզաջան բէկը և Բալայ բէկն և ի Բէկլար [1]) բէկէն ծնեալ են Բալասան բէկն և Սերկէյ բէկն։ Ստուգութեան որոյ վկայէ Լուսաւորչական Հայոց վիճակային Կոնսիստորիայն Ղարաբաղու ստորագրութեամբ և դրոշմամբ արբունի կնքոյ, ի 19 Ապրիլի 1861 ամէ ի Ք. Շուշի։

Անդամ Կանսիստորիայի Տէր Իսրայէլով.
№ 871 Քարտուղար Մէլիք Շահնազարեանց»։

Մի հաստ և հին թղթի վերայ վիմագրուած է Միր-Դաւիթ-խանի պատկերն՝ Պարսից Շահիցն շնորհուած տիտղոսի ժապաւէնով և պարսկական աստղանիշ չքանշանով. Պատկերի տակ վիմագրուած է. «Միր Դաւիթ խան Ծատուրեան ի տանէ Մէլիք Շահնազարեանց Մաղրայի. ասպետ առաջին աստիճանի կարգաց Արեգական առիւծոյ Պարսից Արքային, ևն. երբեմն դեսպան ի կողմանէ նոյն արքայէ առ թագաւոր Փռանցիու 1816 թուին»։ Տպուած է նաև նոյնի Թաղ-

[1]) Բէկլար-բէկից ծնուած են (բացի Բալասան և Սերկէյ բէկերից) Ջաւատ-բէկ, Նազար-բէկ և Առուստամ-բէկ, Իսկ Ասլան-բէկից ծնուած են Պալի-բէկ և Ջիմշիտ-բէկ։

ղիերէն թարգմանածն։

Քարահունջ աւերակ կամ Բալլու ղայա կոչուած տեղում, որ գիւղից վերև է, կայ գիւղատեղի, հանգստարան և մի փոքր եկեղեցու աւերակ, որից մնում են տակաւին չորս պատերն և խորանի թաղն։

Հին-Պարիս աւերակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որ գտնուում են այն սարի գլխին, որ արձանացած է Ներքին և Վերին շէներքի և Նոր-Պարիս գիւղի մէջ և կոչուում է Շամփրապտուկ. Այժմ աւերակ գիւղումս բնակում են մալականներ։

Գիւղիս մօտ կայ մի ուխտատեղի, որը անուանում են *Նահատակ։*

Ը. ՆՈՐ-ՊԱՐԻՍ գիւղն շատ հեռի չէ մալականներից, բնակիչք տեղափոխուած են Հին-Պարիսից, հողն բէկական, ջրարբի և արգիւնաբեր, տեղական բերքերն նոյն. գերազանց օդն, կլիման և ջուրն, տակաւին չունին եկեղեցի. քահանայ մի։ Ծուխ 38, ար. 191, իգ. 165։

Թ. ԷՐՒԱՋ ԳԻԻՂ. Հիմնուած է մի խոր և հօրիզօնն նեղ ձորի մէջ, որի արևելեան, հարաւային և հիւսիսային կողմերն բարձր լեռներ են, բնակիչք բնիկ, որք մէկիքների հետ գնացած են բնակելու Բօլնիս և յետոյ վերադարձած այս տեղ. հողն բէկական, կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն գերազանց, երկար կեանք 115 տարի. եկեղեցին Սուրբ Սարգիս, հոյակապ, բարձրաշէն, կառուցեալ վեց սիւների վերայ (երկուսն միապաղաղ) երկարութիւնն 21 մետր 70 սանթիմ, լայնութիւն 14 մետր 60 սանթիմ. գրան ճակատակալ քարի վերայ. «. . . մէ յիշատակ Թվին ՌՃԿԵ.»։ Աւազանին կողմին մօտ փոքր խորանի ճակատին մի նրբագործ խաչքարի վերայ. «Թվ. ՉԹ. ես Սկոր կանգնեցի զխաչս Սարգիսա և կամ ամեն ծնողաց մերոց, Աստուած ողորմի»։ Եկեղեցուս արևմտեան պատին մօտ արտաքուստ. մի տապանաքարի վերայ «Թվ. ՌՄԿԶ. որ է Պօլնուսու գալն (վերադարձն) մայիսի Ի. (20) Քրիստոսի ծառայ տէր

Դանիէլ»։ Քահանայ երկու։

Գիւղիս արևմտեան ստորոտի խոր ձորով հոսում է *Փոքր-Կուրակ* անուն վտակն, որ է օժանդակ [1]) Կուրակ գետակին։ Գիւղիս բարեկ. Սարգիս քահանայ Տէր-Սարգսեանցի մօտ կայ.

Ա. Մի օրինակ գրչագիր, փոքրագիր, ընդհանրական գրուած թղթի վերայ, որի մէջ է Յակոբոսի, Յովհաննու և Յուդայի առաքելոց թղթերն. (անյայտացած է յիշատակարանն)։

Բ. Բացատրութիւն Հայոց ամիսների, որպէս են նաւասարդ, հոռի, ևն.։

Գ. Մարմնախաղութիւն և երազահան։

Դ. Բացատրութիւն յատուկ և հասարակ անուանց։

Ե. «Թարգմանութիւն ի Պարսիկ բառից» և ընդօրինակութիւն «ի գրոցն Վարդանայ աշխարհագրի»։

Զ. Խրատ Պլուտարքոսի, անյայտ է գրողների անուններն։

Հարկ է յայտնել որ «Պաղդասար» անուն ոմն հեղինակից գովասանական ոտանաւորներ են պարունակում Ս. Լուսաւորչի, Հռիփսիմեանց և Տրդատ թագաւորի մասին Բ. Ձեռագրումն։ Ծուխ 78, ար. 384, իգ. 364։

Ժ. ԲՕԶԼՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Էրքաջից վերև Կուրակի նոյն օժանդակի ձախ ափի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական և անջրդի, բայց հացատու. տեղական բերքերն նոյն (չունին պարտէզ և այգի), եկեղեցին Սուրբ Մինաս, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Նոր-Պարիսից։ Ծուխ 15, ար. 80, իգ. 70։

Սուրբ Մինաս. ուխտատեղի. գիւղիցս վերև նոյն, օժանդակի աջ կողմում, մի հին քարուկիր փոքր եկեղեցի է սուրբ Մինաս անուն, որի մօտ կան աւերակ գիւղ և հանգստարան։

ԺԱ. ՄԱՆԱՇԻԹ կամ Մանուշ շէն. Հիմնուած է Բօզլուխից ներքև նոյն օժանդակի ձախ կողմի բարձրութեան վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, սա-

[1]) Իր սկիզբը առած է Գոմէշ (նոյն Մռաւ) սարի հիւսիսային կողմից,

կայն արդիւնաւէտ, տեսարանն գովելի, օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 110. եկեղեցին նոր են սկսում շինել. քահանան նոյն: Ծուխ 35, ար. 218, իգ. 141:

Նահատակ. Գիւղիս արեւելեան կողմում ընկուզի ծառերի տակ մի մատուռ է Նահատակ անուն, որի մէջ կայ մի գերեզման, բայց տապանաքարի վերայ չ'կայ արձանագրութիւն:

Թեօղան աւերակ, գիւղատեղի է որ գտնուում է Ղարա-Բուլաղ գիւղն տանող ճանապարհի վերայ, մի ձորակի հիւսիսահայեաց լանջի վերայ: Քարուկիր և սրբատաշ քարով շինուած է եկեղեցին, որի գլուխն խոնարհուած է: Հարաւային կողմի փոքր խորանի վերայ. «Ժամանակս Տաճ Սեփին, խանութիւն Մուրթուզա Ղուլի խանին Թահուդ, կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին թվ. Ռ.»:

Այլ քարի վերայ. «Կամաւն Աստուծոյ ես տէր Եղիշէս շինեցի սուրբ եկեղեցիս յիշատակ հոգւոյ իմոյ, կողակցին, Եկաղին, որդիքն Ատի բէկին, Նկել»:

Թեօղանի մատուռ, աւերակիցս փոքր ինչ վերև մի քարուկիր հին մատուռ, որ ունի 5 մետր 18 սանթիմ երկարութիւն և 4 մետր 5 սանթիմ լայնութիւն, սակայն չունի արձանագրութիւն: Արտաքուստ դրան հիւսիսային կողմում պատին յենած է քարեայ մի հին խաչ, որի երկարութիւնն է 2 մետր 35 սանթիմ, և լայնութիւնն 1 մետր 5 սանթիմ. և որի ստորոտում քանդակուած է. «Ի թուին ՉԾԷ. (1308) ես Գրիգոր ու Պապաք կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութիւն ծնողաց մերոց ԷՂոր...»: Մատուռս նորոգած են Մանաւշեցիք. «Սուրբ եկեղեցիս Մանուչհոյ չինողք են Ղևոնդ, Աւետիս, Սահակ, Գրիգոր, Դանիէլ, Սարգիս Ալիբանեանց 1890 ամի»: Ուխտատեղի է մատուռս, որի շրջապատն մեծ հանգստարան է, սակայն անարձանագիր են քարերն:

ՃԻ. ՀԻՆ-ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒՂ. Հիմնուած է մի հիւսիսահայեաց լանջի վերայ, որի ստորոտով հոսում է Կուրակ գետակի աջ կողմի երկրորդ օժանդակն և փոքր ինչ յետոյ

միանում նոյն գետակի հետ: Բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, հացաէտ, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100, եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ վեց սիւների վերայ, երկարութիւն 22 մետր 25 սանթիմ, լայնութիւն 12 մետր 36 սանթիմ. քահանայ մի:

Արեւմտեան դրան ճակատակալ քարի վերայ.

«Ընորհօք ամենակալին մեր Ղարաբուլաղի ժողովուրդս մեծ և փոքր շինեցինք սուրբ եկեղեցիս յիշատակ հոգոյ մերոց և ամենայն ննջեցելոց ի հայրապետութեան տեառն Պետրոսի (Աղուանից), ի թագաւորութեան Պարսից Շահ Սիւլէյմանի խանութեան երկրիս Ուղուրլու խանին և պարոնութեան գեղիս Ֆարզալի բէկին, տարուղէն (հարկահան) Մուրթուզա Ղուլին, տանուտէր տէր Սիմէօն, տէր Յակովբ, տէր Ազարիէն, տէր Դաւիթ, Գրիգոր, Ազարիա, Շահնազար, Սարուխ Աւան, որ ջերմեռանդ սիրով աշխատեցին. ես Մեղիտիթ էրեցս [1]) գրեցի թուին ՌՃԻԵ. որ կարդաք, մէկ բերան ողորմի ասէք ամէն»:

Արձանագրութեանս աջ ու ձախ կողմերում.

«Սուրբ խաչս բարեխօս Շահնազարին»: «Ես Խօճա Անտոնս սակաւ օգնական եղէ սուրբ եկեղեցուս վարձուն յիշատակ ինձ և կողակցին Մարիանին և որդոցն Գասպարին, Մելքումին»: «Ես Սիմէօն անարժան էրեցս կանգնեցի զսուրբ խաչս և սակաւ աշխատեցի ի վերայ սուրբ եկեղեցոյս...»: Ծուխ 36, ար. 149, իգ. 147:

Կրակի դիմացող քարահանք—огнеупорная глина գտնուում է գիւղիս արեւելեան կողմում խիստ մօտիկ: Հանքիցս հանուած և բագու տարուած քարերն գործադրուում են կրակով գործող մեքենաների վառարանների համար:

Հին եկեղեցի քարուկիր, միջակ մեծութեամբ, որ գտնուում է գիւղիս վերի ծայրում ընկուզենի ծառոց հարթակի վերայ, ունի միայն մի փոքր խորան հիւսիսային կողմում և

[1]) եկեղեցուս մեծութիւնն, ութ քահանայից քանակութիւնն և գիւղիս շատ աւերակ տնարակերն ապացուցանում են թէ գիւղս մօտաւորապէս 700 ծուխ եղած լինելու է, մինչդեռ այժմ 36 ծուխ և մի քահանայ ճնացած է:

մի աւագ խորան։

Անապատ. այսպէս է անուանում ժողովուրդն այն քարուկիր մատուռը, որ կայ հին եկեղեցու հիւսիսային կողմում խիստ մօտ։ Մատրանս մէջ կայ մի հանգիստ որի տապանաքարն չունի արձանագրութիւն. հետևապէս անյայտ է մեզ ամփոփեալս։ Մատրանս և հին եկեղեցու միջավայրն ամբողջապէս հին ամփոփեալներ են։

Բրտի շինի եղցին. Գիւղիս արևմտեան հանդէպ վտակի ձախ ափի բարձրութեան վերայ կայ աւերակ գիւղատեղի և մի միջակ եկեղեցի։ Այժմ ոչ ոք չէ բնակուում այստեղ. բայց կանգուն մնացած է եկեղեցին։

Միջի վանք.

Այսպէս է կոչուում այն եկեղեցին, որ շինուած է հին-Ղարաբուլաղից վերև նոյն օժանդակի աջ կողմում։ Եկեղեցիս շինուած է միայն մի կամարի վերայ, որի վերնամասն քանդուած և եկեղեցին ճաքած է արևելքից արևմուտք ուղղութեամբ. խախտուած է և բեմն։ Շատ ջանացինք գտնել արձանագրութիւն, սակայն չ'գտանք, միայն գտանք մի խաչքարի վերայ. «Այս խաչս է Կոսին» և այլ կիսատ խաչքարի վերայ. «Այս սուրբ խաչս է տէր Աւաքելին Աստուծոյ»։ Եկեղեցուս մօտ կայ ընդարձակ գիւղատեղի և սրբատաշ տապանաքարերով և նրբագործ խաչարձաններով նշանաւոր հանգստարան, որի մէջ ամփոփուած են եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և ժողովուրդ։ Զմայլում է մարդ գեղեցկաքանդակ շիրմաքարերը տեսնելով։

Երի վանք (վերին վանք)

Միջի վանքից բաւական վերև վտակի ձախ ափում կառուցեալ է երկու կամարների վերայ մի քարուկիր տաճար, որ ունի մեծ և փոքր խորաններ, աւազան, լուսամուտներ և մի դուռն հարաւային կողմից։ Երկարութիւն 17 մետր 35 սանթիմ լայնութիւն 8 մետր։ *Հիւսիսային որմի վերջին կամարի տակ.* «Թվ. ՉԻ. Ես Տաւտար Որդի Զանասի կանգնեցի զխաչս ինձ և եղբաւր իմոյ»։ Տաճարիս մէջ տեղում

ամփոփուած է մի պատուաւոր ննջեցեալ, որի տապանաքարի վերայ փորագրուած է. «Այս է հանգիստ Սուրբ Գրիգորոյ Գանձակայ եպիսկոպոսին»։ Անվնաս մնում է տաճարս, միայն թէ գլխին բուսած են ծառեր, որք կարող են վնասել հետզհետէ մեծանալով։ Այստեղ կայ և սև գիւղատեղի վտակի ձախ հովտի վերայ և փոքր ինչ վերև հանգստարան։

ԱԼՀԱՐԱԿ ԼՃԱԿ (38)

Մղոնաչափ է Երի-վանքից մինչև լճակս, որ տաճկերէն կոչուում է Գեօգ-գեօլ և որ շրջապատուած է անտառախիտ լեռներով։ Լերանց մէջ ամենաբարձրն է Կեփաս [1]) (ըստ Տաճկ. Քեափազ) անուանած ապառաժ սարն, որ Հպարտօրէն արձանացած է լճակի արևելեան հարաւային կողմում։ Սարիս լանջերի գժուարատար տեղերով հօրաններով ճարակում են քօշեր։ Լճակս բաժանուած է երկու մասի, վերնամասն կոչուում է «Ըստծու ծով» (Աստուծոյ ծով)։ Լճակիս մակերևութի խորանարդ տարածութիւնն է 54 օրավարաչափ (դեսեատին)։

Լճակիցս, որի շրջապատում տեղ տեղ դիզուած են ահագին քարեր, ելնում են ընդհանրապէս երեք տեսակ ձկներ.

Ա. տեսակն, որ ազնիւ է միւսերից, որոշուում է իւր սպիտակութեամբ և կարմիր ու սև բծերով։

Բ. տեսակն ևս ունի սպիտակ գոյն, բայց ունի միայն սև բծեր։

Գ. տեսակն ունի սև գոյն և միայն սև ու մեծ մեծ բծեր։ Բացի հիւսիսային-կողմից ելած ձկներից ազնիւ և համեղ են միւս բոլոր կողմերից հանուած ձկներն։

Կոսի կալ

Միջի վանքի արևմտեան հանդէպ վտակի ձախ կողմի բարձրութեան վերայ մի գեղեցիկ սարահարթում կայ գիւղա-

[1]) Սարիս գլխին կայ մի գերեզման, որի տապանաքարի վերայ գրուած է թէ Կեփաս ճգնաւորի գերեզմանն է։ Հաւանական է թուում մեզ, որ Աւհարակ լեռ անուն տեղի տուած է Կեփաս անուան, որը մահմետականներն չկարողանալով ուղիղ հնչել Քեափազ են հնչում։

տեղի, հանգստարան և փոքր եկեղեցի։ Խորանի հարաւային կողմի կամարի վերայ մի խաչքարի ստորոտում. «Թվն. ՈՀԹ. է.... [1]) Աստուած ողորմի Սարգսին»։ Եկեղեցուս հարաւային կողմում հանգստարանի մէջ. «Ամփերին Մելիցրու Բուրխտ Թվին Ռ.»։ Բոլոր հին եկեղեցիներս խոզանից արած են Գեաուշէնի խոզարածներն։ Պատիւ է բերում Գետաշէնցուց...։

ՃԳ. ՆՈՐ-ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ՇԷՆ. Հիմնուած է շէնս Հին-Ղարա-Բուլաղից փոքր ինչ ներքև նոյն օժանդակի ալ կողմում. բնակիչք տեղափոխուած են Խաչակապ, Բանանց և Փիք գիւղերից, որք նախ գնած են Պաւլի-խան հայ բէկից շինատեղի և անդի հողերը, շինած բնակարաններ և ապա բնակած այստեղ։ Տակաւին չունին եկեղեցի։ Ծուխ 25, ար. 60, իգ. 55։

Նորաշէն կամ Ենիջայ աւերակ գիւղատեղի, եկեղեցի և հանգստարան, որ գտնուում է շինիցս ներքև։

ԲԵՐԴ ՄԵԼԻՔ-ԲԷԿԼԱՐԵԱՆՆԵՐԻ.

Չորս կողմերից առանձնացած, վիմահերձ սեպաձև բարձրացած և դէպի արևելք երկարած մի բարձրագոյն սար է, որ գտնուում է Կիւլստան գիւղից վերև։ Ինչ գետակն նախ հոսում է բերդիս արևմտեան կողմով, ապա հիւսիսային ստորոտով և ապա դառնում դէպի արևելք, վասնորոյ գրեթէ թերակղզի ձևացած է բերդասարս, որի գլուխն բարձրանալու համար կայ մի դժուարատար և ոլոր մոլոր կածան, որ խիստ զառիվեր է։ Բերդս ունի կրկնապարիսպ, արտաքինն՝ սարի կիսով՝ արևելքից արևմուտք. իսկ երկրորդն՝ սարի գագաթի եզերքներով, որ աւելի բրգաշատ է և անմատչելի, կարող ենք ասել, և անառիկ։ Բերդիս երկարութիւնն է 230 մետր, լայնութիւնն 20 մ., պարսպի հաստութիւնն 80 սանթիմետրից մինչև $1^1/_2$ մետր։ Բերդիս հիւսիսային կողմում կայ աւերակ եկեղեցի և շատ աւերակ տնատեղեր։ Բայց տակաւին կանգուն մնում են Մէլիք-Յովսէփի ապարանն, որ հիմնուած է բերդի հարաւային կողմում մուտքի աջ ու ձախ

[1]) Անընթեռնլի են կէտադրեալ բառերն։

անկիւններում։ Բերդս ունի երկու դուռն, որից մեծն հարաւային կողմից, իսկ փոքրն հիւսիսային կողմից որ անգործածելի է։ Ապարանն բաղկացած է երկու մասից, արևելեան և արևմտեան, խոնարհուած են երկոցունց ծածքերն ևս, բայց տակաւին մնում են պաշտելի հնութիւններն։

Բայց որովհետև խմելու ջուր չկայ բերդում, վասն որոյ բերդի վերի կողմին մօտ արևմտեան հիւսիսային կողմից մինչև գետակն շինուած է մի նշանաւոր, թաղակապ, քարուկիր և ստորերկրեայ ական իբրև ջրի ճանապարհ, որով ջուր փոխադրած են բերդիս ջրամբարներն, որք գտնուում են ամրոցի վերի կողմին մօտ, հիւսիսային պարսպի մէջ։ Այժմ գետակն քանդելով խորացրած է իւր յատակը և բարձր մնացած է ականի բերանն։

Ղալաչա

Բերդիս հարաւային հանդէպ հարթակի վերայ կայ մի դղեակ, որը տեղական անուամբ կոչուում է Ղալաչա։ Դղեակս ամուր է և քառակուսի. չորս անկիւններում ունի չորս հաստատուն աշտարակ. իսկ հիւսիսային կողմից մի դուռն և ամեն կողմերից հրացան արձակելու ծակեր, $7^1/_2$ մետր երկրութիւն, 7 մետր լայնութիւն, $4^1/_2$ մ. բարձրութիւն և 1 մ. 28 ս. պարսպի հաստութիւն։ Այս ևս պատկանում է Մէլիք-Բէկլարեաններին.

Դղեկիս շուրջն ընդարձակ, բայց աւերակ գիւղատեղի է, որն կարծես թէ, քաղաք եղած լինի, տակաւին պարզ երեւում են քարուկիր և խիտ առ խիտ շինուած շատ տնաբակեր, փոքր ինչ հեռուն ընդարձակ հանգստարան, բայց անարձանագիր։ Դղեկիս հարթակի ստորոտում շինուած են եղել նշանաւոր բաղանիսներ. որք կիսաւեր դրութեան մէջ են։

ՁԱՓԱՐԻ ՂԱԼԱ.

Մոտաւ սարից դէպի արևելք կախուած մի դալարագեղ լանջի վերայ կայ հողաբերդ, որի արևելեան կողմից հոսում է Ինջա գետակի աջ օժանդակն, որ և միանում է Ամենափրկիչ վանքից ներքև՝ Ինջային։ Բերդիս, որի շրջապատն պա-

տած է թանձրախիտ անտառներով, ասում են, բազմիցս ապաւինած է ի հնումն Կիւլստանի հայ ժողովուրդն, մանաւանդ պատերազմների ժամանակ և ազատ մնացած թշնամուց։

Ա.Ջ. ԳԱՐԴՄԱՆ ԳԱԻԱՌ, *որ ընկած է Կուրակ և Շամքոր Գետակների, գաշտաբերանի և Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի մէջ։ Ամենամեծ մասամբ անհարթ է գաւառիս մակերևոյթն։ Սարսափելի խոր խոր ձորեր, մութ մութ կիրճեր, օձապտոյտ խոխոմներ, բարձրագագաթ սարեր և բլուրներ և թանձրախիտ անտառներ գրաւած են գաւառիս մակերևոյթը։ Իսկ վերնամասն խիստ զուարճալի է լեռնահարթեր, ծաղկալի հովիտներ, մարգալի արօտներ, գալարագեղ լեռնալանջեր են գաւառիս Մռաւ և Արութիւն սարի կողմերն։*

Ա. ԳԵՏԱՇԵՆ ԱԻԱՆ. *Հիմնուած է Կուրակ [1]) գետակի ձախ ափի վերայ, խոր է գիւղատեղի ձորն և նեղ հորիզոնն. բնակիչք ամենամեծ մասամբ տեղափոխուած են Ըռստակ և Ջրաբերդ գաւառից. բնիկ է միայն ամենափոքր մասն. Հողն արքունի, մեծ մասամբ անջրեի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն ցորեն, գարի, կորեկ, կտաւհատ, գետնախնձոր, տանձ, խնձոր, դամոն, դեղձ, խաղող, ընկուզ, կեռաս, թութ, օդն, կլիման և ջուրն գովելի, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Աստուածածնին, հոյակապ կառուցեալ վեց սիւների վերայ համակ սրբատաշ տորոնագոյն քարով, երկու փոքր խորանների վերայ կայ այլ ևս երկու խորան. երկարութիւն 23 մետր 40 սանթիմ, լայնութիւն 14 մետր 30 սանթիմ։ Եկեղեցիս, որի միջից բղխում է բարեհամ ջուր, չունի արձանագրութիւն, բայց երևում է որ նորոգուած է. քահանայ 2։ Աւանումս ծաղկած է հիւսնութեան, գարբնութեան, ոսկերչութեան, դերձակութեան, թամբագործութեան,*

[1]) *Գետակս է սահմանագլուխ Արցախի և Թիֆլիսի հոգևոր կառավարութեանց թեմերին կամ Ղարաբաղի և Գանձակի։ Գետաշէնցիքս տեղափոխուած են Ըռստակի գաւառի Խոտորաշէն գիւղից, որ այժմ աւերակ է։ Գետակս իւր սկիզբը առած է Մռաւի միջնագագաթի—Բաղրկեանի—հիւսիսային լանջերից։*

սայլագործութեան, քարտաշութեան, ոստայնագործութեան և ատաղձագործութեան, և այլն արուեստներն։

Ծուխ 434, արական 920, իգական 782. արական ծննդ. 51, իգական ծննդ. 32, պսակ 31. ար. ննջեցեալ 18, իգ. 11։

Ա.ԻԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ.

Աւանիս վարի ծայրին մօտ շինուած է մի քարուկիր մատուռ, որ ունի միջակ մեծութիւն, ցած դուռն, 7 մետր 90 սանթիմ երկարութիւն, 5 մետր 45 սանթիմ լայնութիւն՝ Նահատակ անուն։ Դասամիջի ուղղութեամբ խորանի տակ կայ մի փոս, որի մուտքն բացուած է բեմի ժողովրդահայեաց երեսից, որի մասին ասում են նահատակի գերեզման. բայց անճանօթ է անունն։

Ներքուստ հիւսիսային որմում մի քարեայ խաչի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս Թանպրղուլին»։

Իսկ մատրանս դռնագլուխ քարի վերայ.

«Թվ. ՌՃԻԶ. *կամաւ ամենակալին Աստուծոյ շինեցաւ սուրբ Նահատակս ձեռամբ Սի.է.ի (գուցէ Սիմէօնի) և որդուն Քամալ բէկին, օգնականութեան (թեամբ) դիւղիս, թագաւորութեան Պարսից Շահ Սուլէման....»։ Մատրանս մէջ, որ և ուխտատեղի է, կան հետևեալ գրչագրերն և մասունքներն.*

Ա. *Աւետարան մագաղաթեայ, միջակ մեծութեամբ, արծաթապատ, ոսկեզօծեալ կողակալներով, որի մէջ կայ չորս աւետարանչաց և Յիսուսի Քրիստոսի բոլոր հրաշագործութեանց և բժշկութեանց պատկերներն։ Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ թուչնագրերն, սքանչելի ծաղիկներն, հիանալի նախշերն, ուշագրաւ նկարներն, թանկագին ներկերն, ազնիւ ոսկեզօծն և զմայլելի գեղարուեստի նրբագործութիւնն։ Մարկոսի և Ղուկասի վերջում գրուած է.*

«*Յիշատակ է աւետարանս Մատթեոսի Ջանղուլուն [1]) և ծնողացն Վէլիջանին, Համանին և կողակցուն իւրոյ Փարուն և*

[1]) *Յետոյ աւելացրած է ուրիշ գրող. «որ եղև քահանայ և եղին զանուն նորա տէր Գրիգոր»։*

եղբարց Պապին և Եոկարին և հանգուցեալ եղբոցն Միրաքին, Շահիջանին և ամենայն ազգականաց ամէն։ Ծրեցաւ սակաւ յիշատակարանս ձեռամբ Ալեքսան գրչի թվին ՌԾԹ, և եօթի և ըստ իմում չափու, ասէք ողորմի»։

Ցիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նկղս (Նիկողայոսի) մեղապարտի, ունայնագործ մելանաւորի ի թուաբերութեանս Ասքանազեան և Աբեթական տումարի ՌԾԺԶ. և ըստ նորում շրջանի՝ ՂԴ. և գալստենէն Կենարարին ՌՈՀԲ.[1]) ի յստոյգ և ընտիր աւրինակէ ևս առաւել համաբայիցն, զի գալափար սորին էր ի գրանէ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ի աշխարս Հոնաց.. աստուածապահ քաղաքն ի Կաֆայ առ ոտս Սրբոյն Սարգսի զաւրավարին ի հայրապետութեան Հայոց տեառն Յակովբայ և առաջնորդութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Մարտիրոս քաջ րաբունապետի և ի տեղապահութեան Յակովբ վարդապետի... ի թագաւորութեան Պարսից Շահ Սափին, և Նախիջևանայ խանին Ալուղուլի..... Արդ այժմ աստուածապատում և քրիստոսանդ տառիս ցանկացող եղեալ աստուածարեալ և պատուական այրս մահտեսի Ճանղուլին ետ գրել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ.... զՄէլիք Նարնսէկն... դարձեալ յիշեսջիք զՄահտեսի տէր Վարդանն, որ զաւետարանիս զմագաղաթին չնորհեաց... Դարձեալ յիշեսջիք զԴրիմեցի զլուսպարոնն և զորդեակն իւր զԴաւիթն, որ մեզ տեղ չնորհեցին, որ աւարտեցաք զսուրբ գիրքս, զի դառն մահտարաժամ եղև ի քաղաքն Կափայ և մեր տեսեալ զդառնութիւն և զալէտ մարցն, կամաւորութեամբն Աստուծոյ և հրամանաւ Նորին բնակեցաք ի Ղրիմ ժամանակ ինչ և աւարտն հասուցաք ըստ մեր տկար բնութեան և ծաղկազարդեցաք ոսկով և բազում գունզգունն որակօք.... Ցիշատակ է սա ի յեկեղեցին Ամենափրկչին ի յերկիրն Նախիջևան ի գաւառն Երնջակ ի դէմս Սուրբ Կարապետին ի գեաւղն Շահկերտ, որ այժմ կոչեն Ղազանչիլար ի

[1]) Կամ ՌԾԹԶ.-ն սխալ է և կամ ՌՈՀԲ.-ն վասն զի Կենարարին ՌՈՀԲ. թիւն հաւասար է Հայոց ՌՃԻԱ.-ի. իսկ ՌԾԹԶ.-ն հաւասար է Քրկչ. ՌՈԿԲ. թուին։

յաւաջնորդութեան յայսմ նահանգիս յԵսայեայ և Առաքել քաջ րաբունապետաց...»։

Մեզաց գրութիւնից ազատարար Յիսուսի Քրիստոսի սոյն աւետարանն գերի է ընկնում այլազգեաց ձեռքն, որը գնում է Զրաբերդի Մէլիք-Ադամ Ա.. «որ գնեաց զսա ի հալալ ընչիւք իւրովք 'ի ձեռաց այլազգեաց... նաև մաքուր արծաթիօք պատեալ զարդարեաց և ընդելուզեաց ոսկով պատուականօք և յետ (եդ) զսա յիշատակ 'ի սուրբ աթոռն Եչմիէծի առաքելոյն (Զրվըշտիկ) և սուրբ լուսաւորչին Աղուանից ձեռամբ գերիմաստ և յոգնահանճար Աւագ քաջաջան վարդապետին[1]... Յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զՄէլիք Հաթամն և հայր իւր Մէլիք Իսրայէլն և զպապն իւր Մէլիք Եսային և սորա որդոցն Ոսկեփին, Մէժլումին, Իսրայէլին ևս առաւել որդւոց սոցին Սէյրաբին, Ալլահվուլին, Ալլահվերտին և մօրն Հերիքնազին և որդոցն ծաղկելոց նորափթթիցն Իսրայէլին և Մէժլումին և ամենայն արեանառու ննջեցելոց... գրեցաւ թվին ՌՄ. երկուսին, որ ըստ փրկչականին 1753»։

Ի. Աւետարան մեծագիրը, հաստ, գրուած թղթի վերայ, որի սկզբում կայ ոտնալուսի, Յուդայի մատնութեան, Ղազարոսի յարութեան, Ծաղկազարդի, Քրիստոսի խաչելութեան, պատանքուելուն, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, աւետման, ծննդեան և չորս աւետարանչաց պատկերներն, բայց բոլորովին անճաշակ և զուրկ գեղարուեստի շնորհքից և ընտիր ներկերից։ Գողացած են և սորա յիշատակարանը, վասն որոյ մնում է անյայտ գրողի անունն, տեղն և թուականն։ Միայն գրուած է Մատթէոսի վերջում. «Յանուն Աստուծոյ ևս Յովհաննէս երէց Պետանց աբեղայս ու Բրտանց Սարգիս մեր սրտի հաւժարութեամբ աւետարանս ծախեցաք Վարդանայ և առաք ի նրանէ ա. կով, ը. կապիճ հաց, աւետարանին... Ծարեցի Զարմանին որդին Խատապայ վկայ... Նաճպատինայ որդին Վահրամայ վկայութեամբ, իմ Յոյսիկ Իրիցոյ վկայութեամբ, որ զդիրս գրեցի թվ. ՊԵ. քաղց Գ. գրեցաւ»։

[1]) Սա ինքն է Դայի մահրաստան։

Իսկ միւս թերթի առաջին երեսում գրող Կարապետ աբեղան յայտնում է թէ կազմել տուած է աւետարանս թուին «ՊԻԱ.»։ «Զաւետարանս Թագուորնայ բերուց (բերաւ) դինն առաւ, ու տարաւ»։

Գ. Աւետարան մեծագիր, մագաղաթեայ, ամբողջապէս գրուած գլխագրերով, որ ունի միայն ծաղկազարդի և չորս աւետարանչաց պատկերներ, Քրիստոսի պատկերը որ ձախ ձեռնով բռնած է աւետարանը և աջ ձեռնով օրհնում է մի վեղարաւոր և մի գլխաբաց մարդ։ Վեղարաւորի գլխից վերև գրուած է. «Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զբանաւոր զաւետարանս մեղապարտիս Սահակայ իբրև զՏէր և ողորմեա»։ Իսկ գլխաբաց մարդից վերև, «Առաքել ծառայ Աստուծոյ»։ Աւետարանիս սկզբի նախշերի գլուխներին և տակերին գրուած են սպիտակ ներկով. «Տէր Աստուած, ողորմեա Առաքելին... Տէր Աստուած զթայ ի հոգի Ռեմանոսի ծառային քո. ամէն. Աստուած իմ Յիսուս ողորմեա մեղուցեալ ոգոյս, ամէն [1])»։ Հարկ է յայտնել թէ միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, նկարներն, ծաղիկներն և ոսկեզօծն։ Համարեա թէ երեք չիշատակարան ունի աւետարանս, առաջին չիշատակարանի վերջում գրուած է. «Տէր Աստուած ամենակալ, նորոգեա ի կեանս անծերանալիս զՍահակ ստացող սուրբ աւետարանիս ԱՄԷՆ ամէն»։ Նոյն իսկ աւետարանս գրողի գրչով գրուած է և չիշատակարանս և յուշարձեն տառերս։ Երկրորդ *Չիշատակարանով* յայտնում է գրողն թէ աւետարանս ստացած է Սահակ կրօնաւորն, որ եղած էր Անեցի և աշակերտ Հաղբատալ. չիշում է նաև, թէ Սարգիս կրօնաւորն միաբան Հաղբատի, «իբրև զիմաստուն վաճառական խնդրող եղեալ պատուական մարգարտին և «գտեալ զսա (զաւետարանս) ի զաւուրն անդ Անուոյ, մեծածախ, ոսկեգիր և ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալ, ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց... և ընծայեաց զսա մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սննդեան և ի տարւոջն Ռ. աւր ժամ.... ընծայեցաւ կենաց

[1]) Գրուած է Մաթէոսի վերջում նոյն իսկ աւետարանս գրողի գրչով. «Տէր Աստուած ողորմեա Սարգսի կուսակրաւն քահանայի....»։

աւետարանս Սուրբ Գրիգորիս ի թուականութեանս ՈՀԲ. (1223) ի յիշխանութիւնս հզաւրին Հասանայ որդւոյ Վախթանգայ և ի հայրապետութեանս (Աղուանից) տեառն Յովհաննիսի։ Եւ արդ պրեցաւ սա և ծաղկեալ կազմեցաւ յամի, յորում էր թիւ համարոյ թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից և նոյնքանեաց տասանց, իսկ նորոյս շրջանի միոյ հարիւրոյ քսան և ութեակ [1]) թուոյ ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակոբայ, յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի սրբասիրի, ի թագաւորութեանն Հայոց արևմտայինն կողման Լևոնի քրիստոսասէր և յաղթող թագաւորի և մերոյ կողմանցս և Վրաց Գէորգեայ թագաւորի և ի սպարապետութեան Զաքարիա Շահանշահի.... զրովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց ծախեցաք և չինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս և անդ եդաք զսուրբ աւետարանս Աստուծոյ, որ չինեցաւ ի մէնջ ի Վանս Արջուառճի....»։

Յետոյ կազմուած է աւետարանս նախ Հռոմոսի վանքում (Օձուն գիւղի կողմերում) «Տրամանաւ հաւրն Մխիթարայ»։ Սորանից ներքև գրուած է. «Ի թվ. ՉՀԴ. կամաւ ամենակալին Աստուծոյ ես տէր Վանական գտի հնացեալ և աւերեալ զսուրբ աւետարանս և ետու վերստին նորոգել...»։ Շարայարած է *երրորդ* անգամ կազմողն. «ՊԼԲ. էր, մեհենի ամսի ԻԶ. էր, որ կազմեցաւ, որ է սուրբ աւետարանս Մեծ Կողմանց Խաչենոյ Եպիսկոպոսարանէն Մայրաքաղաքէնս [2]), իշխանութեան պարոն Զալալին, եպիսկոպոսութեան տէր Գրիգորին Գեւաքարեցին (ւոյն)...»։ Կցած է *չորրորդ* անգամ կազմել տուողն գրելով Մարկոսի վերջում ի մէջի այլոց. «Ուլախաթուն... զի յոյժ հնացեալ էր սուրբ աւետարանս, ետ նորոգել զսա ի ժամանակիս, որ է Մաւխան (՞) եկն Թաւրէզ թվ. ՋԽԶ...»։

Դ. Աւետարան մէջակ գիրքով, գրուած թղթի վերայ,

[1]) Կոչուում է այս փոքր թուական Հայոց որ շինուած է Փառիսոսցի Սարկաւագ ՅՈՎ. վարդապետն փրկչական 1116։

[2]) Հաւանական է որ այդ ժամանակներում եպիսկոպոսանիստ աթոռն եղած լինի մեզ ծանօթ Մայրաքաղաքին մէջ։

որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ, բայց անճաշակ են նոյն պատկերներն, ծաղիկներն և թռչնագրերն, միայն գեղեցիկ են փոքր տառերն։ *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ աւետարանս այս ՚ի գիւղս որ կոչի Դաստիգիւր (Դաստակիւլ) ձեռամբ Սարգիս երիցու ի Թուալանիս ՌՃԻԲ.»։ Երեք աւետարանների (բացի Յովհաննիսից) վերջերում գրուած է. «Ցիշատակ է Սուրբ աւետարանս Եարամիշին և իւր որդի Ամիրխոճին, Թումանին... Թվ. ՌՃԻԶ.»։

Մասունքներ

Ա. Մասն կենաց փայտէն զետեղուած մի արծաթեայ փոքր խաչում.

Բ. Մասն *քազվին Ղուիշ առաքեալի*, որ կայ մի արծաթեայ, ոսկեզօծեալ աջում, որի վերայ գրուած է. «Այս է աջ սրբոյն Ղուիշէի առաքելոյն, աշխատողս՝ որ այ (է) Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու (է) յիշատակ ստրա, տէր Ոսկան եպիսկոպոս»։ «Կամաւն Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս ետոյ Նորոգեցի, Աստուած ողորմի ասացէք»։ Աջիս բազկի տակի կողմի վերայ. «Կամաւն Աստուծոյ Մուրատս որդի Նիազի չինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացէք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին, Թվն. ՌԿԸ. էր»։

Գ. Մասն անյայտ սրբի, զետեղուած մի ականազարդ խաչում։

Աւելորդ է յայտնել թէ աւետարաններս և մասունքներս բերած են իւրեանց հետ Ջրաբերդից՝ ժողովրդեան հետ տեղափոխուող քահանայք։

Անապատ

Մի փոքր եկեղեցի է շինուած աւանիս վերի ծայրում գետակի ձախ ափում, քարուկիր կառուցեալ մի կամարի վերայ. որ ունի միայն մի դուռն արևմտեան կողմից, երկու նեղ լուսամուտ, մի մեծ և մի փոքր խորան հիւսիսային կողմում. 12 մետր 14 սանթիմ երկարութիւն 7 մետր 15 սանթիմ լայնութիւն։ Դռնագլխի քարի վերայ. «Այս է Մէլիք Թամրազին (Կիւլ. Մէլիք) որդի Սալուխանին եխպար Եաւրին.

Քապաճին Ալովի որդի, որ 1-ի Մէլիք Օսեփին Վէլուխոյ Պէհէզ Սարգսին, Պէհէզ»։ Անհասկանալի է արձանագրութեանս վերջին բառի իմաստն։ Գուցէ «Որ 1-ի»—Ա. Մէլիք-Յովսէփին։

Ներսում միջնակամարի հարաւային կողմի կիսապատուանդանի քարին վերայ. «Ես Աբդլեցի Գրիգորի որդի Պօղոսին մար (մայր), Եփրեմին քոր (քոյր) Թագուհին [1])»։

Շինութեան թուականն է սորանից վերև խոյակի վերայ. «Թվ. ՌՃՂԸ.»։

Անապատիս արևելեան և արևմտեան կողմերում եղած են խուցեր, գեռ մի քանիսն կանգուն են այժմ։ Հաստատում են թէ Կուսանոց եղած է այս, երկար ժամանակ նըստած են այստեղ կուսանք, որոց մէջ եղած է և մի կոյս Մէլիք-Բէկլարեանների տոհմից, որի պատճառաւ Մէլիք-Թամրազին որդին նորոգել տուած է անապատս։

Անապատիս արևմտեան կողմին խիստ մօտ է Հայոց *Ուսումնարանի* շէնքն, որ գեռ կիսատ է և ունի 34 մետր 45 սանթիմ երկարութիւն և (պատշգամով միասին) 11 մետր լայնութիւն։

ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ.

Հիմնուած է գետաշէնիս հարաւային հանդէպ եղած լեռնաբազկի սարահարթի վերայ՝ յանուն Ղուիշէի առաքելոյն։ Վանքս կառուցեալ է երկու սիւների վերայ համակ սրբատաշ քարով, որի երկարութիւնն է 12 մետր 43 սանթիմ, լայնութիւն 10 մետր 33 սանթիմ։ *Դրան հարաւային սեմի վերայ.* «Թ. ՌՃԼԵ. ես Նա..ո..ա Մովսէս էրից»։

Հիւսիսային սեմի վերայ.

«Ի հոպելիանէ Ա.պատարարէ Գ. թուահամարէ մեռասան տարեկ վեր տար (1311). ես անարժան տէր Ղազարս գրեցի»։ Երևում է որ վանքս նորոգուած է երբեմն երբեմն։ Վանքս ունեցած է շրջապարիսպ և թաղակապ, գեղեցիկ սենեակներ, յորոց այժմ եօթն կանգուն և եօթն կիսակործան են։ Նմա-

[1]) Իմաստն է. ես եմ Աբդլեցի Գրիգորի որդի Պօղոսին մայրն և Եփրեմի քոյր Թագուհին։

նապէս կործանուած են շրջապարսպի արեւելեան և արեւմտեան պատերն և վանքիս հիւսիսային որմի արտաքին երեսն։

Հին հանգստարան. Գետաշէնն աւանիս հանգստարանի հին մասումն կան շատ հին գերեզմաններ, որոց գլխակալ խաչարձաններն զարդարուած են հիանալի նախշերով և քանդակներով։ Այնքան գեղեցիկ են փորուածքներն, մինչև անգամ այցելուն զմայլում է ժամանակին քանդակագործութեան գեղարուեստի նուրբ ճաշակին և ընտիր ոճին վերայ։ Խաչարձաններից մէկի վերայ փորագրուած է. «Խաչս յիշատակ հաւրն իմոյ Խունին և մաւրն իմոյ Գուլին թվ. ՃՂԱ.»։ Կից սրան. «Ես Ետկար աղէս կանգնեցուցի. ես մեղաւորս Ադարիա»։

Այլ խաչարձանի վերայ քանդակագործուած է մի ձիաւոր մարդ, որ վահանը կապած իւր ձախ բազկի վերայ գեղարդը խրած է մի այլ փախչող ձիաւորի սնակուշտն, որ ուժասպառ եղած է։ Առաջնոյն թիկնապահն, վեր առած վահան և նետեր, վազում է իւր տիրոջ ետևից։ Փորագրուած է քաջի ստորոտում. «Թվ. ՋՂԹ. Տէն Ադաբի էչ (էջ) իւր Ր. թաւրոմն (թորոմ, թրոմ), ողորմի ասացէք»։ Հանգստարանում կան և մելիքազունների գերեզման, որք են Մելիք-Մնացականեանների ցեղից։

Մղոնիս

Գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որք կան աւանիս արևմտեան կողմում գետակին ձախ կողմի բարձր լանջի վերայ։ Արգէն գոմանոց փոխած են գիւղիս աւերակը Գետաշէնցիք, բայց քարուկիր եկեղեցին կանգուն մնում է փոքր ինչ վերև աղբիւրի մօտ, որ շինուած է մի կամարի վերայ, ունի միայն աւագ խորան, մի դուռն արևմտեան կողմից, երկու նեղ լուսամուտ, 12 մետր երկարութիւն, 6 մետր 95 սանթիմ լայնութիւն։ Խորանի վէմ քարն ունի հիանալի նախշուն քանդակներ, բայց չունի գիր։ Դրան մօտ մի խաչքարի վերայ.

«Յովհաննէսի մորն Նուրայիանին»։ Նոյն արևմտեան ար-

տաքին ճակատում. «Թվ. ՋԲ. Ես Եղահ անշահ կանգնեցի զսուրբ Սարգիսս ինձ և եղբաւր իմոյ Վարդանայ»։ Մի կարակնաձև տաշուած քարի վերայ, որ դէնագլուխ եղած է, այժմ ընկած է դրան հիւսիսային կողմում արտաքուստ. «Թվ. ՉԼԴ. կամաւն Աստուծոյ և հրամանաւ սուրբ հայրապետին Ըստեփանոսի, եպիսկոպոսութեան տէր Գրիգորի.. Սոմաճին, ես Յովակիմս... ի բարեխաւսութիւն հոգոյ իմոյ»։ Այս տեղ, դրանս առաջ մի գեղեցկաքանդակ խաչարձանի վերայ փորագրուած է. «Վանն Մկրտիչ եպիսկոպոսի հոգւոյն փրկութեան»։

Ր. ԱՐԼԱՀ ԳԻՒՂ. Հիմնուած է Գետաշէնի հիւսիսային կողմում մի ձորի մէջ. բնակչաց մեծ մասն բնիկ, փոքր մասն տեղափոխուած Հաթերքից և այլ տեղերից, հողն արքունի, մեծ մասամբ ջրարբի և արգիւնաւէտ. տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն, կլիման և քաղցրահամ ջուրն, երկար կեանք 80, եկեղեցին Սուրբ Մինաս, հոյակապ, կառուցեալ վեց սիւների վերայ, երկարութիւն 18 մետր 85 սանթիմ, լայնութիւն 10 մետր 30 սանթիմ։ *Արձանագրութիւն.* «Թվ. ՌՃՁԱ. յիշատակ է Պետրոսին, Յակոբին, Մրզին տրոզ (տրոզ) տէր Պօղոսին, որ էինք որդիք Աւետիսի՝ ազգէն Հասանայ, որ էր ժամանակն Վալի Նամատին (Նատր Շահին), որ կոչի Թահմազ, որ թագաւորեցաւ, ի երկրին Բարսից բազում գաւառս աւերեաց»։ Քահանան գալիս է Սուլուկ գիւղից։ Ծուխ 34, ար. 91, իգ. 66, ար. ծնունդ 8, իգ. 5, սպակ 3, ար. ննջ. 3, իգ. 2։

Տաճարումս կայ Գ. գրչագիր.

Ա. Աւետարան պատկերազարդ, գրուած թղթի վերայ, միջակ գիրքով, միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, նախշերն, թուչնագրերն և ծաղիկներն։ *Ցիշատակարանից.* «Եւ արդ ես մեղապարտ գծող Նիկոլայոս.. գրեցի գաւետարանս ի քաղաքս, որ կոչի Վան ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և սուրբ Վարդան գաւրավարիս ի թուականութեանս Հայոց ՋԾԲ. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի և մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարակայ տէր Յովհանիսի և ի թագաւորութեան Ջհան Շահի Միրզին»։

Յետոյ գրուած է. «Ես Փիլիպպոս կաթուղիկոս զայս աւետա րանս ետու Սոթեցի Յակոբին, որ իւրն յիշատակ դնէ»: Մարկոսի վերջում և յիշատակարանի ետև «Ես Մարտիրոս եպիսկոպոս Էջմիածնայ Պաղտխէն գնեցի զաւետարանս ու Գ. չարականոց և դրի ի գուռն սուրբ Էջմիածնայ»: Դժուարին է իմանալ թէ ինչ առթիւ ընկած է այստեղ աւետարանս:

Բ. Աւետարան մեծադիր, գրուած հաստ թղթի վերայ, առանց պատկերի, անյայտ է գրողի անունն և տեղն, գրուած է միայն յիշատակարանի տեղ. «թվկս. ԲՃԶԳ. ին». իսկ Մարկոսի վերջում. «Ի թվականիս ԲՃՂԱ. ին ես Ամիր Վահապ և Սուղի Վասիլ իշխանս չինեցի եկեղեցիս, և զաւառանս, առուն հանեցի Կինեվանուց ձորերէն ու սարերէն. բնակիչք գիւղիս խոստացան տարէնը Գ. ժամ կատարոյն Աստուծոյ աւրհնի: Դարձեալ կամուրջն չինեցի, ու կասն կապեցի. Թձ. (900) անծեն յերինջ (չծնուած երինջ) մորդեցի, ոչխարաց, ղոչից, գառնից սաւա [1]. այս եղաւ դարձեալ Բուսխանի (սառնատան) մուլքն իմն էր, ջուր չունէր, շապէնն ա. աւր ծակ քարով ջուր տվի իմ մլքի խաթրին համար»:

Աւետարանիս սկզբումն. «Շահ Ապաղն վար (որ) երեկ, Ղարապաղս կալաւ, պարոն տէր Ոհանն Գանձոյ քաղաքէն շատ գերի աղատեց, շատ գիրանք ա. չարականոց նրետ Սուրբ Եղիշեայ առաքեալին վանքն. գ. մաշտոց, ա. աւետարան, ա. սաղմոսարան, ա. աղթարք, ա. խրատագիրք տուի տէր Մելքիսեթին...: Տէր Ոհանէս Ղալապեկ [2] ես այս գիրանքս աղատեցինք անաւրինաց ձեռքէն, տվինք մեր հոգիս ա. աւետարան տվի Ոսկեան, ա. չարականոց տվի Աւանէս էրէցն Շաշվացի. թիւն ՌԾԶ. էր»:

Գ. Աւետարան մէջակ գերքով, գրուած թղթի վերայ, առանց յիշատակարանի, միայն Ղուկասի վերջում գրուած է. «Յանուն Աստուծոյ ես Մուրադչէս ծախեցի զիմ հայրենի աւետարանս քեզ Խաչատուր Իրիցիդ.. ի գաւառէն (գաւառէն) Եղիշէի առաքելոյն 'ի յամրոցն Ջրվշտակայ [1]... և սպասաւորին սուրբ ուխտին Հախբատայ.. 'ի թվ. ՊՂԷ. 'ի տրէ ամսոյ 'ի ԻԵ. Աստուած չնորհաւոր անէ. ամէն»:

Ս. Յովհաննէս ուխտատեղի. Գիւղիս հիւսիսային կողմում բարձր սարի գլխին մի փոքր խաչարձան է, որի մօտ կան մեծ մեծ հացի և կաղնի ծառեր: Խաչիս վերայ եղած է մատուռ, որ վաղուց արդէն փլած է:

Գ. ԲԱԽՇԻ կամ ՀԱՃԻ ԳԻՒՂ. Շինուած է Աբլահի հարաւ արևմտեան կողմում, մի ձորակի ձախ լանջի վերայ. բնակիչք 1870 թուին տեղափոխուած են այստեղ Հաճի-քեանդ ամարանոցից մարմնաւոր կառավարութեան հրամանաւ, հողն արքունի, լեռնային, անջրդի, միջակ արդիւնաւէտ, պատուական օդն, կլիման և ջուրն, եկեղեցին Ամենափրկիչ, քարուկիր կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւն 17 մետր 29 սանթիմ, լայնութիւն 8 մետր 29 սանթիմ: Եկեղեցուս գրան մէջ, ներքուստ արևմտեան որմի վերայ. «Սուրբ խաչս էտղար (յիշատակ) Եղիսաբէթի թվ. ՌՀԹ.»: Յայտնի է որ եկեղեցիս հնաշէն է, գիւղս արդէն աւերակ եղած է, նոր բնակչաց եկած ժամանակ. խիստ մեծ է հին հանգստարանի ծաւալն: Ծուխ 36, ար. 127, իգ. 93, ար. ծն. 5, իգ. 3, պսակ 2, ար. ննջ. 1, իգ. 1:

Գ. ՍՈՒԼՈՒԿ ԳԻՒՂ. Շատ հեռի չէ Բախշի գիւղից Սուլուկ կամ Ազատ գիւղն, որ հիմնուած է Պանդ անուն սարի արևելահայեաց լանջին վերայ. բնակիչներից բնիկ 15 գերդաստան, Խոյից գաղթած 20, Բազուխից եկած 7, իսկ Բախշի գիւղից տեղափոխուած 8 ծուխ: Հողն արքունի, լեռնային անջրդի և սակաւ արդիւնաւէտ, գերազանց օդն, կլիման և ջուրն և տեսարանն երկար կեանք 100 տարի եկեղեցին Ս. Յովհաննէս Մկրտիչ [2] քարուկիր, կառուցեալ չորս սիւների

[1] Կարծում ենք որ Ողտի-Մատուռ աւերակ գիւղացի է (գտնւում է Ջրվշտիկ վանքի մօտ) աւետարանիս ծախողն:

[2] Տաճարիս հիւսիսային կողմում, գրան վերայ բարեպաշտ ոմն շինած է երկյարկ զանգատուն. «Սուրբ Աստուածածին (սխալմամբ գրուած է) եկեղեցւոյ զանկագատունս շինեցի արդեամբ Մակի Պետրոսեան Աւալեանցի ի յիշատակ հանդուցեալ որդոյ իւրոյ Խաչատուրի 1890 յամի մայիսի 10 օրն»:

[1] Բացի ոչխարից-խոյից և գառներից:

[2] Թերևս մտահան արած չէ ընթերցողն Հաթերքեցի Տէր-Յովհաննէս Ղալաբէկը: Երևում է որ աւետարանս բերուած է Հաթերքից:

վերայ, երկարութիւն 16 մետր 80 սանթիմ լայնութիւն 10 մետր 40 սանթիմ։ *Արձանագրութիւն.*

«Ենորհօք Ամենակալին ես Մէլքէմ դամաս շինեցի եկեղեցիս յիշատակ ինձ և նախնեացս իմոց պարոն Աղային, Մէլիք Եակեարին, Մէլիք Աղապէկին, Ղամար-Սուլթանին և իւր ծնողին Մէլիք Պաղուն, Աւար խաթունին, կողակցին Սաւոյինային և եղբօրն. Պատռ պէկին, Աղասի պէկին. թվ. Ռ...»։ Ձեռագիր մի։ Ծուխ 50, ար. 192, էգ. 181, ար. ծն. 7, էգ. 6, սլսակ 2, ար. ննջ. 1, էգ. 1։

Վանք (աւանդութեամբ Երմողեայ քահանային)

Գտնուում է Սուլուկից քառորդ մղոնաչափ վերև մի սեռի բլրակի վերայ, որ կախուած է երկու առուակների մէջ։ Մատրանս, որ շինուած է հնուց անտաշ քարերով, խոնարհուած է գլուխն, մնում են այժմ միայն չորս պատերն։ *Դռնագլուխ քարի վերայ.*

«Թիւն ՉԻԸ. ես Մխիթար ու Տիրածէր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփաննոսի Աղուանից կաթուղիկոսի»։ *Փոքր ինչ վերեւ դռնագլխից.* «Աստուած Ելէ խանին ու Խարայնախին Աւառս լեղով շինեցի զեկեղեցիս»։ Մատրանս մէջ կայ մի հանգիստ, որի շիրմաքարն կոտրուած է միջից, կտորները միմեանց մօտ բերելով՝ կարդացինք հետեւեալը. «Այս է հանգիստս Սայի որդի Հասանայ վեհապիս»։ Դարձեալ ներսում մի կոտրած խաչարձանի վերայ. «Թվ. ՈՒԳ. է....»։ Այլ տապանաքարի վերայ գրսում. «Այս է հանգիստ Միսայէլայ Սանի որդի, որք կարդէք, յաղաւթս յիշեցէք Թվ. Զ.»։ Մեծ հանգստարան տարածուած է մատրանս շուրջն, յորոց շատերն ունին նշանաւոր տապանաքարեր և գեղեցկաքանդակ խաչարձաններ։ *Մի մեծ խաչարձանի վերայ.* «Կամաւն Աստուծոյ կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Մալսուկին և ծնողաց իւրոց և եղբարց իւրոց Աբթուշին, Խաչին, Շահմէլիք խաթունին Թվ. ՊՂԶ.»։ Մատրանս հիւսիսային կողմում. «Այս է հանգիստ Ջևանայ որդի Հասանայ՝ի Թվ. ՉԿԲ։»։

Մատրանս արևմտեան կողմում կայ գիւղատեղի։ Հետքերից երևում է, որ նշանաւոր գիւղ եղած է այս։

ՊԱՆԴԱԼԻՈՆ ՎԱՆՔ (39)

Վանքս հիմնուած է նոյնանուն սարի բարձր գագաթին վերայ։ Մատուռիցն մինչև սարիս գլուխն շարունակ զառիվեր է, բարձրանում է մարդ երկու ժամում և իջնում երեք քառորդ ժամում։ Ձուռձև բարձրացած է վանքաբարձ սարն [1]) և բոլորովին առանձնացած իւր շրջապատի բոլոր լեռներից։ Երկու մեծ կալատեղի չափ տափարակ է վանքասարիս կատարն, որի վերայ վաղուց եղած է մեծ վանք, շատ սենեակներն և միաբանութիւն։ Բայց այժմ մի մատուռ է շինուած հին վանքի տեղում, որն վաղուց փլած է արդէն։ Բարեպաշտ ոմն Գանձակեցի բարեկ. Սարգիս քահանայ Ագարեանց ի հիմանէ նորոգած է մատուռս և յիշատակ վախճանեալ իւր Յովհաննէս որդուն։ Իսկ մատրանս երկաթեայ դուռն յիշատակ է նոյնպէս Գանձակեցի Պ. Մկրտիչ Յովհաննիսեանին։ Մեծ ուխտատեղի է մատուռս, որի ուխտի օրն է Ս. Աստուածածնայ տօնն։

ՀԱՃԻ ՔԵԱՆԴ.

Գտնուում է Սուլուկի հիւսիսային կողմում մի անտառապատ և բարձր սարահարթի վերայ։ Ինչպէս կանխաւ իմացանք բնակում էին այստեղ Բախշի կամ Հաճի-քեանդի բնակիչներն։ Բայց 1870 թուին կառավարութեան հրամանաւ այս տեղն փոխուեցաւ *ամնարանոց* Գանձակ քաղաքի՝ միևնոյն Հաճի-քեանդ անուամբ։ Այժմ շինած են գեղեցիկ բնակարաններ, որք ներկայացնում են իբր մի կատարեալ փոքրիկ քաղաք, որի մէջ ամրան ամիսներում լինում են՝ հեռագրա-

[1]) Վանքիս անուամբ ամբողջ սարս կոչուում է Պանդալիոնի սար, որը, կրճատելով ըստ տեղական սովորութեան, Պ ա ն դ ա յ վ ա ն ք, Պ ա ն դ ա յ ս ա ր են անուանում։ «Աղուան. եր. և Դր.» գրքի 208 երեսում գրուած է. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ... Աբեթէի՝ի գեղջ Անուշ Հաւատուն Հինդուզակ՝ի դուռն.. Պանդալիոնի բժշկի, ևն.»։ Կարծում ենք, որ վերևի մատրան դիւղատեղին է Անուշ—Հաւատուն—Հինդուզակ գիւղն։

տուն, փոշտ և գատարան: Հայոց եկեղեցին այժմ փոխուած է Ռուսաց եկեղեցու:

Գիւղատեղիները եւ հանգստարանները.

Հայոց գիւղատեղի և հանգստարան կայ

Ա. Հաճի-քեանդումս:

Բ. Սորանից ներքև արևելեան ձորի մօտ:

Գ. Նշանաւոր խաչարձան Հաճի քեանդից վերև անտառի մէջ:

Դ. Դեղին Սար կամ Սարու եալ կոչուած լանջի վերայ:

Ե. Հաճի քեանդի և Մուսէթ գիւղի միջև անտառախիտ ճանապարհի վերայ ծմակի մէջ կայ մի աւերակ մատուռ Քեօշք անուն, որի արձանագրութեան քարն կոտորուած է. կէս մասին վերայ. «Ի թիւ Հայոց ՋՉ. կամաւն Աստուծոյ և ողորմութեամբ Քրիստոսի Ամենակալին չինեցի զեկեղեցիս.....»: Մատուռիցս միայն հինգ հատ կայ և պիտի աւերակ:

Ե. ՄՈՒՍԷԹ ԳԻՒՂ. Հիմնուած է Պանդալիոն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ անտառի մէջ. բնակիչք բնիկ, Հողն արքունի, լեռնային և սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն (չունին պարտէզ և այգի) պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90—95 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, փոքր և նորոգեալ ի հիմանէ, որ ունի մի քահանայ, և սոյն արձանագրութիւնը.

«Ես Գանձակ քաղաքացի Մահտեսի Քերովբէ Տէր-Մարտիրոսեան կառուցի իմով արդեամբք եկեղեցիս Մուսա գեղջ ի յիշատակ պապին իմոյ Տէր-Մարտիրոս աւագ քահանայի և ծնողաց իմոց Մկրտումի և Հռիփսիմի և կանանց իմոց Խանումի (վախճանեալ) և Սեհարի ամի Տեառն 1881»: Փորագրուած է արձանագրութեանս տակ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ». Ծուխ 30, ար. 135, իգ. 131, ար. ծն. 15, իգ. 14, պսակ 6, ար. ննջ. 2, իգ. 2:

Զ. ՈՍԿԱՆԱՊԱՏ (40) ԳԻՒՂ. Հիմնուած է Մհակ սարի ստորոտում, Գանձակ գետակի [1]) ձախ ափի բարձրութեան

[1]) Կոչուում է և Ոսկանապատի (Զուռնաբադի) գետ,

վերայ, խոր ձորի մէջ, բնակիչք բնիկ, հողն արքունի, լեռնային անջրդի և սակաւ արդիւնաբեր.. տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, գովելի ջուրն, 90 տարի երկար կեանքն. Սուրբ Յակովբ եկեղեցին, հոյակապ կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն 25 մետր 55 սանթիմ, լայնութիւն 11 մետր: Տաճարս ունի նաև Հարաւային և հիւսիսային պատերում առանձնապէս կամարներ և ոտներ, ինն լուսամուտ, երկու փոքր և մի աւագ խորան և մի գուռն: *Աւազանի մօտ հիւսիսային խոյակի վերայ.* «Ես Ովանէս, Գրիգոր կամարս բերի Գուդկան, գվիմ իմ մեր (մօր) Ուռումի (Հռիփսիմէի) հոգին համար»: *Արտաքուստ արեւմտեան ճակատին.* «Սուրբ խաչս աւգնական Տէր Ովանէսին թվ. ՈԹ.»: Քահանայ մի: Ծուխ 89, ար. 321, իգ. 275, ար. ծն. 7, իգ: 6, պսակ 4. ար. ննջ. 2, իգ. 2:

Տաճարումս կայ երկու զրչագիր.

Ա. Աւետարան մագաղաթեայ, միջակ գիրքով, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ: Ընտիր են պատկերներն, նախշերն ծաղիկներն, թռչնագրերն, ոսկեզօծն և գոյներն:

Ցիշատակարանից. «Ի ձեռն ուրումն երեր յաչխարհէն Հայոց զրեալ ոսկեզուած որակաւք ի Դրազարկն ձեռամբ Թորոսի փիլիսոփային, զոր տեսեալ տեառն Ստեփաննոսի Տարսայիճ հզաւր և իմաստուն գիտնականի վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայոյ տիեզերաքարող լուսաւորչին, որդի իշխանաց իշխանին քաջ սպառազէն մենամարտիկ զինաւորի Զալալին, թոռն մեծ Ամթաբակին Հայոց և Վրաց Վեհ Տարսայիճին, Տէր և Վերատեսուչ գահերէց և գլուխ արհի երից ամուռոցս Սիւնեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախաց քարոյ, պետ երկոտասան գաւառաց, ուրախ եղև իրրև ընծայ ի վերուստ առաքեալ: Եւ յաղագս եղբաւր իւրոյ պարոն Շահնշահի, որ կիսաւրեայ մահուամբ, տղա տիաւք, ցանկալի տեսողաց, գեղեցիկ հասակաւ, և քաղցր բարուք, աներկեան հաւատով և հաստատուն յուսով՝ ի բազմավրդով կենցաղոյս խլախոյս տուեալ առաջնոր-

դեաց խաղաղական և բարի հրեշտակաւք առ յոյսն ամենայնի և յԱստուած բոլորից, որ հանգուցանողն է ամենայն հոգւոց բարեաց, հանգուսցէ ի գոգն Աբրահամեան նովին հաւատով լցեալ։ Ստացաւ հանգերձ հոգևոր հարբ իւրով Կիրակոս վարդապետովն ի հալալ արդեանց իւրոց և ընդելուզել ոսկւով և արծաթով և ակամբք պատուականաւք յիշատակ վերստացեալ եղբաւր իւրոյ։ Եւ արդ ես նուաստ, եղկելի, թշուառացեալս Ստեփաննոս խոց լերթոց և թախիծ կսկծալի սրտիւ, հողամած դիմաւք ղդառդ սրբազանից զպատահեալզդ տիեզերաքարող աւետարանիս սրտի մտաւք յիշել զգեղաղէշ և զարեգակնափայլ եղբայրն իմ զպարոն Շահանշահ առաջի զենման Քրիստոսի... յիշել զծնողսն իմ զհայր իմ զՋալալն և զմայր իմ զամենաւրհնեալ Գոնցա և յերկար կենդանութիւնն խնդրել երկուց եղբարց իմոց պարոն Էլիկումի և Ազբուղային։ Եղև մեզ այս բաւթ տրամագիր 'ի տաւնի զատկին 'ի ՃՁ. թուականի Հայոց 'ի տրէ Գ.»։ Մատթէոսի սկզբում գրուած է ի միջի այլոց. «Ես Յովհաննէս Ոսկանապատոյ ձեռնաւորս զնեցի զաւետարանս իմ հալալ արդեամբս յիշատակ ինձ և իմ ծնողաց»։

Բ. Աւետարան, թղթեայ, միջակ դիրքով, պատկերազարդ, բայց ոչ այնքան ճաշակով գծուած, *Ցիշատակարանից*. «Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի, զմեղուցեալ գրիչս Իսրայէլ յիշեցէք.... Արդ գրեցաւ սա յարքունական երկիրն Մոկաց ի տեղիս Անապատ, որ Փասավանք կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս.. ձեռամբ յոդնամեղ և անարուեստ գրչի Իսրայէլ... 'ի թուականիս Հայոց ՋԾԲ. ամեն. 'ի խնդրոյ.. Մահդասոյն Պաւղոսի յիշատակ հոգւոյն իւրոյ»։ Յետոյ գրուած է. «Նորոգեցաւ սուրբ աւետարանս ընդ հովանեաւ աստուածընկալ սուրբ Նշանիս Վարագայ ձեռամբ Սահակ անարժան աբեղայի ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Կիրակոս վարդապետի, որ բազում ջանիւ զվանքս կրկին անգամ նորոգեաց զեկեղեցիք, զդարպաս, զտներ, զոր ի շարժմանէ ապականեալ էր, ի թուականիս ՌՂԸ. ի խնդրոյ Յոհան անուն անկեալ երիցին, որ ստացաւ զսա 'ի հալալ ընչից իւրոց և ետ նորոգել»։ Դժուարին է իմանալ թէ ինչ դիպուածով ընկած է Ոսկանապատ գիւղիս մէջ։

Սուրբ Աստուածածնայ վանք.

Հիմնուած է գիւղիս վերի ծայրում գետակին ձախ ափի վերայ, կառուցեալ երկու կամարների վերայ, որ ունի մի դուռն հարաւային կողմից և երկու նեղ լուսամուտ արևելեան և արևմտեան կողմերից և միւս ևս հարաւից։ Երկարութիւն 12 մետր 75 սանթիմ, լայնութիւն 6 մետր 75 սանթիմ։ Ունի եկեղեցու ձև և ոչ վանքի, սակայն ունեցած է միաբանից խուցեր տաճարս իւր արևմտեան կողմում, որպէս վկայում են տեսողք. բայց յորդ անձրևի հեղեղներն քանդած և տարած են սոյն սենեակները և կոյտ կոյտ խիճեր գիզած խուցերի տեղերում։ Տաճարիս հարաւային որմի մօտ արտաքուստ. «Այս է տապան Յարութիւն պապին, որ վերստին նորոգեաց սուրբ եկեղեցիս թվ. ՌՄՀ.»։

Սուրբ Սարգսի վանք.

Ս. Աստուածածնայ վանքիս հանդէպ գետակի աջ ափի վերայ, շինուած երկու կամարների վերայ, վնասուած գագաթնագծի ուղղութեամբ մինչև գետինն։ Վէմ խաչքարի ստորոտում. «Սուրբ խաչս աւգնական....»։ Աւերակ դրութեան մէջ են միաբանից խուցերն և շրջապարիսպն։

Գիւղիցս բաւական վերև, գետակիս ձախ կողմում կան հետևեալ հնութիւնները, որք շինուած են իրարից զանազան հեռաւորութեան վերայ։

Ա. Դաստափոր աւերակ գիւղ Հայոց, այժմ թրքաբնակ, բայց մնում են հանգստարանն և վեց սիւների վերայ շինուած հոյակապ եկեղեցին։

Բ. Ցնծահալ, որ նոյնպէս թրքաբնակ է, որ ունի ընդարձակ հանգստարան և մեծ քարուկիր եկեղեցի, որի գլուխն խոնարհուած է։

Գ. Գետամէջ (Գետամէջ) գիւղ. որ ունի հանգստարան և մի անսիւն միջակ մեծութեամբ եկեղեցի։ Թրքաբնակ է և աւերակս։

Դ. Պալլուջա աւերակ գիւղ։

Է. ՄԻՐԶԻԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Ոսկանապատի հիւսիսարևմտեան կողմում մի տեսարանաւոր և արևելահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ. հողն արքունի, անջրդի և լեռնային, տեղական բերքերն նոյն (առատ է տանձ, խնձոր, ոչխար) գովելի օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Գաբրիէլ, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ և խաչազարդեալ վաղեմի խաչքարերով. երկարութիւն 16 մետր 95 սանթիմ, լայնութիւն 12 մետր 10 սանթիմ։ Դռնագլուխ քարի վերայ. «Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամի»։ Հարաւային փոքր խորանի սեմին վերայ. «Կանգնեցի Սարուխանս սուրբ խաչս (բերուած է հանգստարանից) բարեխաւս Ոսկի հոգուն թվ. ՌՀԶ.»։ Եկեղեցիս ունի և փոքր գանգակատուն և մի քահանայ։ Ծուխ 60, ար. 320, իգ. 277, ար. ծն. 17, իգ. 12, պսակ 7, ար. ննջ. 2, իգ. 2։

Ովասափ մատուռ. գտնուում է գիւղիս հարաւային կողմում, մի բարձր սեռի վերայ ուղղ տակին։ Այժմ կիսաւեր է, շինուած է եղել անտաշ քարով, բուսած է խորանում մի մեծ կաղնի ծառ։

ՔԵԱՐԽԱՆԱՅ ՎԱՆՔ.

Հիմնուած է մատուռիցն վերև մի գեղեցիկ լեռնահովտի հարաւային ծայրում։ Բարձր սարեր պատած են վանքիս հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմերը (վանքիս այս կողմն ձոր է, խորանգունդ ձոր, որից հոսում է մի առուակ և միանում ստորև Գանձ. գետակին)։ Վանքս շինուած է մի կամարի վերայ տորոնագոյն տաշուած քարով, և ունի երկու փոքր և մի աւագ խորան, վեց նեղ լուսամուտ և մի գուռն արևմտեան կողմից, 12 մետր երկարութիւն, 7 մետր 70 սանթիմ լայնութիւն։ Բեմի ճակատին մի խաչքարի վերայ. «Թվ. ՌԿԴ.»։

Վանքս ունի և գաւիթ, որ շինուած է հասարակ քարով 7 մետր 30 սանթիմ երկարութեամբ և 7 մետր լայնութեամբ, որի մէջ ամփոփուած են.

«Հանգիստ հողապատեան տեառն Եղիազարու յաւէտ հանգիստ է անվշտակիր նշխար սորին, որ աստ կան, հոգին պոլով միջնորդ առ Տէր ժտական վասն իւր որդեկացս, որ եմք տատանման փորձանաց պատնի, որ օգտել փուլման զմիաբանութիւն հոգևորական, փրկել ի փորձանաց այժ և յապագայն, հանգեաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնւոյ ՌՃԿԲ.»։

«Այս է հանգիստ Զարեքու անապատի Մկրտիչ վարդապետին թվ. ՌՂԵ.»։

«Այս է տապան տանս սպասաւոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ ապա անուանի, եղբայր Թամրազ Քալանթարու Զակամ Մեծ Սահակ 'ի Ղարամուրատ գեղջէ, կոչի Աբամի, մահն դիպէ վաթսուն Բ. ամի ՌՃՂ. թուի և չամդրեա [1]) մարմին է ՂԳ. ամի»։

Վանքս ունի և կիսաւեր շրջապարիսպ և մի քանի խուցեր միաբանից համար, որք արդէն քայքայուում են հետզհետէ և մի քանի օրավար պատուական հողեր։ Վանքիս արևելեան կողմում է Քեանդակիրմազ մականուանեալ Սարգիս վարդապետի գերեզմանն։

«Այս է տապան Սարգիս վարդապետի Ազարեանց Տփխիսեցւոյ Քեանդակիրմազ մականուանեալ, որ յայտնապէս անբաստութեամբ (անբասիր) վարեաց զկարգ կրօնաւորութեան ի պահպան վանորայս Գանձակայ գաւառի աւելի քան 70 տարի և վախճանեցաւ ի հասակի 96 ամաց ի Միրզիկ գեղջ 1877 ամի»։

Վանքիս մօտ կայ վանքապատկան պարտէզ, թթենի և տանձի ծառեր, և Հանգստարան և գիւղատեղի։

Աստուածածին աւերակ մատուռ, որ գտնուում է Միրզիկ գիւղիցս վերև այն սեռի վերայ, որ կախուած է գիւղիս վերայ, իսկ երեք *քարեայ խաչարձանները* մատուռիցս վերև։

Ը. ԲՐԱՋՈՒՐ (Աղբրաջուր) ԳԻՒՂ. Հիմնուած է Միրզիկի

[1]) Գուցէ չ ա տ ա մ ե ա յ։

հիւսիսային կողմում, բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն և ամենայն ինչ նոյն, եկեղեցին Գաբրիէլ, քարուկիր. քահանան գալիս է Մերզիկից: Ծուխ 33, ար. 191, իգ. 171, ար. ծն. 8, իգ. 6, սպակ 2, ար. ննջ. 2, իգ. 1:

Գիւղիս հարաւային կողմում կայ կայծաքարի և սպիտակ քարի հանք: Վերջինս նման է Հին-Ղարաբուլաղի քարահանքի քարերին, որը տանում են ծախում Բագու քաղաքում:

Թ. ՄԵԾ-ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂ. Հիմնուած է Արութիւն (Ղոչ-Ղարա) վտակի ձախ կողմի վերայ, մի խոր և հորիզոնն նեղ ձորում (Իրաջըի արևմտեան կողմում) բնակիչք բնիկ, ամենամեծ մասամբ արուեստաւոր—արծաթագործ, ոսկերիչ, դերձակ, քարտաշ, որմահիւս, սայլագործ, վաճառական, և.ն. հողն արքունի, չափազանց սակաւ, ապառաժ և անպէտք երկրագործութեան. տեղական բերքերն ցորեն, գարի, ոչխար, տաւար. անվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Լուսաւորիչ, ընդարձակ, կառուցեալ վեց սիւների վերայ և ապառաժ սալ քարի վերայ 1863 թուին, երկարութիւն 28 մետր, լայնութիւն 13 մետր 35 սանթիմ: Քահանայ երկու: Ծուխ 263, ար. 1144, իգ. 1116. ար. ծն. 50, իգ. 44. սպակ 14, ար. ննջ. 10, իգ. 9:

Տաճարումս կան հետևեալ գրչագրերն.

Ա. Աւետարան մագաղաթեայ, մեծադիր, ամբողջապէս գրուած գլխագրերով և առանց պատկերի, որի սկզբից և վերջից թափուած են թերթեր, կամ գողացած են, վասնորոյ չունի յիշատակարան. միայն գրուած է բուն ընդօրինակողի գրով. «Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ ամենասուրբ Հոգւոյն, պահպանութեամբ սրբոյ Խաչին և աղաւթիւք ամենայն սրբոց.... ժառանգեսցէ (ջնջուած)»: Աւետարանս նախ նորոգած է Թադէոս անուն ոմն միայնակեաց, ապա Ալեքսանոս աբեղան Ջ. Թվ.». ապա նորոգուած է Ջկ. Թուին. ուր և գրուած է. «Կամաւ Ամենակալին Աստուծոյ ես Կոչ որդի Սեթիկին, Թոռն Թադէոսին, աւետարանս իմ պապեց վնուած էր. եկի, դաւի արարի, էլ բարիշեցաք և սազեցաք. Ե. եղն

ինձ ծառայութիւն, ես էլ դիր տուի և զաւետարանիս դաւէն (կռուելէն) անցայ: Էլ ոչ ես և ոչ իմ որդին էլ դաւի չանէ. ՅԾԸ. հայրապետաց անիծած է.... Մուրատ փաշէն վկայ, Ջանդարն վկայ, Մուրատ բէկն վկայ»: Հուսկ յետոյ գրուած է. «Զվերջին նորոգիլ տուող սուրբ զաստուածաշունչ ծիր աւետարանիս Պանանցայ.... ճամահամին թվին ՌՀԴ. էր. նորոգեցաւ ձեռամբ Շատախեցի Յովհաննէս երիցու... Ո՛չ հանդիպողք, խիստ դառն, նեղ ժամանակ այսմ տարոյս, Շահ Աբասն բազում խան ու իշխանք ուղարկեց Վրացստան ի քաղքն Տպղիս՝ ընդ ձեռամբ իշխանին անուն Մովրով, սպանեց հնարաւք Ղարչղա խանն, որ իշխանութեամբ ստրատելատ էր և այլ սիրելի խանն Յուսուբ սպանաւ ընդ նմա. մեծ դառնութիւն եղաւ ի մէջ Պարսիկ ազգին. վերջն Աստուած գիտի թէ ինչ կուլի»:

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, որ ունի իւր սկզբում աւետման և չորս աւետարանչաց պատկերները, որք այնքան գեղեցիկ չեն: Մատթէոսի վերջում. «Զստացող սուրբ աւետարանիս զՆերսէս սրբասէր քահանայ զծնողսն... և զմուսին իւր Մարմէլիք»:

Ցիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղապարտ և փծուն գրչի Խաչատուր անպիտան քահանայի ի թուականութեանս Հայկազեան տումարի Ջ. և ծ. ի հայրապետութեան տեառն Գրիգորի և յաշխարհակալութեանն Ջահան Շահի, որ տիրեաց բազում աշխարհի և գաւառի բռնութեամբ... (գրեցաւ) ի գիւղաքաղաքն, որ կոչի Ուրծ. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Ստեփաննոս Նախավկային»: Վերստին կազմուած է Հայոց ՌԻԹ. թուին:

Գ. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ: Հասարակ են պատկերներն, թուչնագրերն, ծաղիկներն և նախշերն. սակայն գեղեցիկ են փոքր գրերն: Անյայտ է գրողի անունն, միայն յայտնի է ստացողն, որ է Պապճան անուն ոմն, որ գրած է. «Արդ.. նախ և առաջ եկն ի վերայ մեզ խաչանց մահ, որ ա-

նաստունքն կոտրեց վասն մեր ծովացեալ մեղացէս... եկաւ ի վերայ մեզ մեծ նեղութիւն, մուրեախն և Թրթռուն Դիզակ և Վարանդ, Խաչեն, Զորաբերդ, որ շատ ժամանակ չրջեց ի վերայ երկրիս... վա՜յ մեզ, եկեալ ի վերայ աշխարհիս սով սաստիկ ի վերայ երկրիս վասն մեր մեղացէս, վա՜յ մեզ, չիմացանք գինչ գործենք կամ գինչ աշխատեմք, մարմնով չարչարեցանք, հոգով հիւանտացանք, մտօք հեռացանք. վա՜յ մեզ, մենք ասէինք թէ պրծանք. այլ գինչ կը տեսնունք. եկեալ ի վերայ մեզ մահտարաժամ, մեծ և սաստիկ և անո՜ւն, որ պովանդակ աշխարհն պատեալ էր, օր մի վաթսուն և եօթանասուն մեռանէին: վա՜յ մեղաւորաց, որ չմնաց քահանայ պատարագին, կամ աշխարհական իւր պսակին, հայր լաց իլաւ (լացաւ) իւր ա՜յ իմ որդին, մայր լալով կոծէր դստան (դուստր) ի վերայ գերեզմանին: Վա՜յ ինձ, գինչ էինք և գինչ տեսաք. Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ի գիօղն, որ կոչի Պալլուջա [1]) ի հայրապետութիւն տեառն Եսայի.. կաթուղիկոսի ամենայն աղուանից, գրեցաւ ՌՃԿԶ. թվ.»: Յետոյ շարայարած է այլ գրիչ. «Արդ ի ժամանակս պռնակալութեան Գանձայու քաղաքիս Ուղուրլու խան, որ է որդի Քալալալի խանին և իշխանութեան ի Ոսկանապատու Ծորոյս Տէր Մէլիք Յովսէփին, որ է որդի Մէլիք Եաւրին ի Ոսկանապատ գեղջէն....»: Աւետարանս յետոյ ստացած է Բանանցեցի Եսայի քահանան ՌՄԾԲ. թվին:

Դ. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, առանց պատկերի, անճաշակ նախշերով, ծաղիկներով և գլխագրերով՝ որի գրողն է. «Փծուն գրիչ սուտանուն Յովսէփ ի թվին Զ.»:

Ե. Աւետարան թղթեայ, փոքրագիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ, բոլորովին անճաշակ, գրուած է Մեծ-Սիւնեաց Տաթևի վանքում ՌԼԴ. թուին Յովհաննէս եպիսկոպոսի ձեռնով:

Զ. Աւետարան թղթեայ, նմանապէս ամենայն ինչ անճաշակ: *Ցիշատակարանից.* «Գրեցաւ թվ. ՌՄԾԱ. ի բառնալ թագաւորութեան արևելեան երկրիս Ելիմացւոցն այլազգեաց.... ղի բազում քաղաքս և գիօղս քայքայեցին և աւար

[1]) Ոսկանապատից վերև Դաստափոր գիւղի մօտ, գետակի ձախ կողմում, այժմ Թրքաբնակ գիւղ:

արարին յԱղուանս հայս, ղի զօրք եկեալ յԱլանաց և յԵլիմաց ի Շօշ քաղաքէ մինչ ի քաղաքն Գանձակ, որ է շահաստան, և ընդ այնմ մնացեալ հեծելազօրքն, ղի իշխանքն Պարսից անօրինաց ոչ ուրեք հնազանդեալ և ոչ միաբանեալ կամաց իրարաց՝ սուր հասեալ ընդ ամենայն տեղիս ի տեառնէ»:

Է. Աւետարան թղթեայ, փոքրագիր, ամենայն ինչ հասարակ: *Ցիշատակարանից.* «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ.. անարուեստ գրչի Գրիգորի արեղայի ի սուրբ և ի հոչակաւոր ուխտս ի Հաղբատ ի թուականութեան Հայոց ՋԹ. ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորի և յառաջնորդութեան տեղոյս տէր Աստուածատրոյ արքեպիսկոպոսի ի Ղանութեան Տաճկաց (Պարսից) Ջհան Շահի, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ ի խստութենէ այլազգաւան սեռի որ յահէ և յերկիւղէ նոցա մաշեալը և հալածականն լինէաք, փախստեայք և մոլորեալք, գերեալք և տատանեալք: Ի յառաւել խստութենէ հարկապահանջութեան և ի հոլովութենէ գերելոցն և ի չքաւորութենէ ընչից ոչ կարէր օգնել եղբայր եղբօր և ոչ ողորմէր ազգս ազգիս... Եւ ես անարժան և տառապեալ ծերունիս Գրիգոր՝ երերուն տատանեալ չրջեցայ... ուխտիս Հաղբատայ և տէր Աստուածատուր եպիսկոպոս սիրով ընկալաւ զմեզ»: Բայց թէ ինչ դիպուածով ընկած է աւետարանս եկեղեցուս մէջ, անյայտ է մնում:

Ը. Աւետարան թղթեայ, փոքրագիր, ըստ ամենայնի հասարակ: *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ Սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋՀԳ. ձեռամբ.. Ալեքսանոս արեղայի ի սուրբ ուխտս Մաքենացւոց [1]) ի դուռն սուրբ տաճարիս Աստուածածնիս»:

Թ. Աւետարան թղթեայ, փոքրագիր և առանց պատկերի: *Ցիշատակարանից* «Ընորհօք և օժանդակութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւարտեցաւ նոր կտակարանս.. ձեռամբ.. Մխիթարի ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի, հարիւրերորդի, քսաներորդի...

[1]) Գանուում է Սևանայ լճակի հարաւային ափից մղոնաչափ հեռի—Բասար—Կեչարից ոչ այնքան հեռի:

ի յայս ամի սաստիկ մահ յերկիրս Վերին Ջակամայ, որ օր մի 'ի տան միում եօթն հոգի վախճանեցաւ... ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան նահանգիս Մինաս վարդապետի և ի տէրութեան Պարսից Շահ Սուլէիմանին ի յերկիրս Վերին Ջակամայ 'ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի խնդրոյ բարեմիտ Եւային և այրն (առն) իւրոյ Ոսկանին...: Արդ ես Եւայս ստացայ զայս աւետարանս և ետու վախմ ի դուռն Ղարամուրատ Կուսանաց անապատի Սուրբ Աստուածածնի»: Հուսկ յետոյ գրուած է այլ գրչից. «Զվերջին ստացող զսուրբ աւետարանս... Մէլիք Սարգիս և ծնողացն հայրն իմոյ Ովանէսն... Թվին ՌՃՀԸ»:

Ա. Աւետարան Թղթեայ, միջակ գիրքով, առանց պատկերի, ամենայն ինչ հասարակ: Ցիշատակարանից. «Ի ՌՃԱ. Թուականիս Հայոց և ի յամսեանն մարտի ԻԱ. աղուհացից պահոց առաջին չարաթին երկուշաբաթ օրն եղև սկիզբն գրութեան սուրբ աւետարանիս և կատարեցաւ ապրիլ ամսոյ ԺԵ. յաւուր մեծի հինգշաբթին [1]... արդ գրեցաւ սա ի յերկիրս Ջակամ ի գիւղս Մէլիքզատայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և Սուրբ Թովմայ և այլ սուրբ նահատակի, որ աստ է, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յակովբայ յետնեալ քահանայի»: Աւետարանս ստացած է Կերակոս երէցն, ապա Մէլիք Ովանէս, «Արդ ես Մէլիք Ովանէսս ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնողացն.. հայրն Միրզախան, և որդիքն իմ Մէլիք Մատթէոսն»: Եւ ապա գրած են Մէլիք-Մատթէոսի թոռներն. «Արդ ես Մէլիք Մատթէոսի թոռն Աղաջանս և Սարգիսն ի թուին Հայոց ՌՄԽԴ. ն էր, որ Չէղոք (Ներքինի Աղա-Մամատ) Շահն Պարսից եկն ի քաղաքն Թիֆլիզ Սուրբ Խաչի պահոց երեքշաբաթի օրն, առաւ, աւերեց և ցիրուցան արար զամենայն, կոտրեաց ավելի քան ԺՌ. (12000) մարդ և զայր ու զկին ամեն

[1]) *Սխալ է երևում «մարտի ԻԱ.» ամսաթիւս, քանզի երբ աւագ հինգշաբթի օրն լինի ապրիլ. 15, ի շ. (Մեծի պահոց) Ա. օրն եղած կը լինի մարտի (Ա.) վասնորոյ գրած է գուցէ Մարտի 'ի Ա.:*

կերի արարին և բաղում նշխարս սրբոց և զսպաս եկեղեցեաց աւար առին, դարձան յետս նոյն ամի: Երկրորդ թուին (ՌՄԽԵ.—1796) մեծի պահոց միջոցն Թիֆլիզու էրէկլայ (Հերակլ) արքայն վրաց եկն 'ի վերայ Կանձակու հանդերձ Շամշադինու զօրօք և Շուշու Իբրահիմ խանն հանդերձ Լազկիւն. տեղոյս իշխող Ջաւատ խանն էր. մաղապուրծ եղեալ ի Ղալային բաղում պատերազմ արարին, ոչ կարացին յաղթել նմա. հրաման արարեալ եկն 'ի սար գիւղօրայս Սուլթան Շամշադին զօրօք իւրովք և սուտ երդմամբ հանեալ զմեզ կերի վարեցին և սրախողխող արարին և մնացեալոցն այսր և անդր ընթանալով ոչ գտաք հանգիստ ոտից մերոց: Յետոյ զօրքն Վրաց հանդերձ լազկիւն եկն և զմնացեալսն կերի արարին և Բանանց գիւղս ամեն այրեցին հրով: ԽՋ. (ՌՄԽՋ.—1796) թվին սով և մահն եկն ի վերայ մեր. Կորեկ ալիւրի լիտրն (18 ֆունտ) Թ. ապասի դժուար գտանելով, վասն որոյ ուրացեալ այր զկին և կին զայր իւր, հայր 'ի որդոյ և որդի 'ի հօրէ, մայր 'ի դստերէ և դուստր ի մօրէ իւրմէ բաժանեալ, ոչ գտանէինք հանգիստ ոտից մերոց. զի կերակուր մեր էր կաղինն և կաղնի քէպ (կեղևն) և մեր առեալ զայս սուրբ աւետարանս մեծաւ զգուշութեամբ և բաղում տառապանօք, չնորհօք սուրբ Հոգոյն հասուցաք մինչև ցայսօր: Իսկ ի թվին մերոյ ՌՄԿ. էր, եկն ի վերայ մեր ժանտամահն. առաջ Ռուսի մէջն անկաւ, շատ կոտորեց, յետոյ Թուրք ազգի մէջն անկաւ, յետոյ Ֆիլիսա-Քեանդըն [1]) և Նորաշէնն [2]) անկաւ, յետոյ սար կեղօրայք և Բանանց կիւղս անողորմ կոտորեց. շատ մարդ առանց կին մնաց, և շատ կին առանց այր, շատն առանց որդի և շատն առանց դուստր: բազումք առանց քահանայի թաղեցին, բազում տունք աւեր մնացին: Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Սոյն ժամանակ Դաւիթ վարդապետն սաղն (կենդանի մնացածները) վեր առաւ գնաց Ֆինֆիք-Բանանց [3]) որ է Դամ-

[1]) *Մինչև ցայսօր Ֆիլիսա-Քեանդ է կոչւում Գանձակի Հայոց Ս. Յովհաննէս եկեղեցու թաղն:*

[2]) *Նոյն քաղաքի Հայոց հիւսիսային թաղն:*

[3]) *Փոքր-Բանանց այժմ աւերակ գիւղն կայ՝ Բանանց գիւղից վերև Ա-բութիւնի վտակի և Քարհատի առուի խառնուրդի հարաւային լանջի վերայ:*

սրբլաձոր, որ կնաց կումերն, որն կնաց պաղերն, փորը ինչ հանդարտեաց ցաւն. վայ մեզ, իմացանք, թէ պրծանք ցաւէն. աստուածասաստ բարկութիւնն հասեալ, գազան մի աւերեալ և բազում մնաս արար և քանի մի անձինք չարաչար մեռան... սոյն ժամանակիս նորոգել տուինք սուրբ աւետարանս յիշատակ մեզ և ծնողաց մերոց, մեր պապ Մէլիք-Մատթէոսին.:... գրեալ ի մատեանս ՌՄԿԳ. ի տիրապահ գիւղս Բանանց ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եկեղեցոյն: ՌՄԾԲ. ին Ռուսըն եկաւ Կանջու վերայ, մէկ ամիս նստաւ, մէկ սհաթումն առաւ. սհաթուկէս ԳՌ. (3000) մարդ կոտորեց»:

ԺԱ. Աւետարան թղթեայ, փոքրագիր, անլիշատակարան, անյայտ գրողի անուն և ամենաստոր չորս աւետարանչաց պատկերներն և ամենայն ինչ:

ԺԲ. Աւետարան թղթեայ, փոքրագիր, ամենայն մասամբ ստոր: *Ցիշատակարանից.* «Գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն ժամանակիս ի լաւ ընտիր օրինակէ ի յերկիրս Վերին Զաւամ ի Ղարամուրատի Հարանց անապատիս ձեռամբ մեղօք զառածեալ Աւետիս աբեղայի, որ եմ յերկրէն Տաւուշու ի գեղջէն Քամալու. հ. ի թուականիս Հայոց ՌՃԻԸ:»:

ԺԳ. Աւետարան փոքրագիր, գրուած գեղեցիկ թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ: *Ցիշատակարանից.* Աւրհնեալ է Աստուած, թվին ՌՃԺԹ. յուլիսի Ե. աւարտ եղաւ»: «Արդ ես Կարմիր Ծատուրենց Զուղայեցի մեղապարտ Աւետիքս եկի ի քաղաքն Տփղիս ... գտայր աւետարանս ետու յիշատակ ի դուռն Բեդղահեմու Սուրբ Աստուածածնին թվին ՌՃԻԶ.»: Ապա գրուած է այլ գրչից. «Գրեցաւ թուականիս ՌՄԽԹ. յունվարի Ե. որ ես Սարգիսս Կանջայու ի գիւղն որ կոչի Գետաշէն, ի ժամանակին Զաւատ խանն էր»: Աւետարանիս սկզբում յայտնուած է, որ նոյն Գետաշէնցին յիշատակ տուած է աւետարանս Բանանց եկեղեցուն:

Գիւղումս կայ տղայոց միգասեան ուսումնարան, ուր ուսանում են 55 աշակերտ, թոշակատու 48, ձրիավարժ 7, միամեայ ռոճիկ ուսուցչի 350 րուբլի:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՆԱՊԱՏՆ.

Ելնուած է Բանանց գիւղին հարաւային հանդէպ, Արութիւն վտակի աջ կողմում և կոլորած առուակի աջ ափի բարձրութեան վերայ: Անապատս, որի տեղն գեղեցիկ հարթակ է, կառուցեալ է մի կամարի վերայ անտաշ քարով, որ ունի մի-այն մի փոքր խորան հիւսիսային կողմում և մի աւագ, չորս նեղ լուսամուտ, երկու դուռն—հարաւից և արևմուտքից, 15 մետր 55 սանթիմ երկարութիւն 9 մետր 25 սանթիմ լայնութիւն բացի գաւթից: Հարկ է յայտնել, որ ճաքած է գագաթնագծի ուղղութեամբ երկար:

Արևմտեան դրան վերայ. «Ելնեց սուրբ եկեղեցիս Միքայաւճայ Աղիզն թվ. ՌՀԹ.»: «Սուրբ խաչս Ովանէսին»: *Նոյն դրան հիւսիսային սեմի վերայ.* «Սուրբ խաչս Փարին, Շահումին»: «Սուրբ խաչս բարեխաւս Հռոմոսիմին ՌՀԸ.»:

Ունի և մի փոքր գաւիթ և գանգատուն հարաւային դրան վերայ, որի մօտ մի տապանաքարի վերայ. «Այս է տապան Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ եպիսկոպոսին, 60 ամ վանահայր էր սա անապատիս, 96 ամեայ էր որ փոխեցաւ առ Քրիստոս $18\frac{2}{13}31$ ՌՄՁ.»: Զանգատան գետնայարկի հիւսիսային ոտքի հարաւահայեաց ճակատին. «Ես Պաղտասարի որդի Մահտեսի Ներսէս և Օսէփս տվինք սուրբ անապատիս ա. թուման վախմ. սոքա տվին մեզ տարին դ. ժամ. եթէ որ խափանի, պարտական լինի առաջի աստինին Քրիստոսի. թվ. ՌՃԽԴ.»: Զանգակին վերայ. «Յիշատակ է Ապովի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին թվ. ՌՃԺԶ.»: Անապատիս գլխին, արևելեան կողմի գագաթնագծի վերայ դրուած է մի քառակուսի քար, որի չորս երեսին քանդակուած է չորս խաչ և մէն մի խաչի տակ մի մի անուն, որք երևի թէ չորս անձինք կամ չորս եղբարք եղած են նուիրաբերներն. ահա «Սուրբ խաչս բարեխօս տէր Եղիշէին, Անտունին, Գրիգորին և Եղիսէին»: Իսկ արևմտեան գագաթնագծի վերայ եղածին գրուած է միայն «Տէր Եղիա»:

Անապատիս արևելեան կողմում, շրջապարսպի ներսում

կան իննն թաղակապ խուցեր, որք ցարդ մնում են անվնաս և անապատիս կալն: Իսկ արևմտեան հանդէպ ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ կայ մի աւերակ մատուռ, որի մէջ դրուած են ութ հնաձև քարեայ խաչեր: Անապատս ունի ընկուզի շատ ծառ իւր հարաւային ձորում: ամայի անապատս և անմարդաբնակ:

Երկու կամուրջ, յորոց մին շինուած է քարուկիր և գեղեցիկ Արութիւն վտակի վերայ և միւսն նորա օժանդակին, որ հոսում է Անապատին արևմտեան ձորով:

Փոքր Հանանց Դամբլաձոր. Գտնուում է Մեծ-Հանանց գիւղից մղոնաչափ վերև նոյն վտակի աջ կողմի բարձրութեան վերայ, ուր կայ աւերակ գիւղատեղի և կիսաւեր եկեղեցի, որի աւազանին վերայ. «Մեհրի ճան, տարան ա՜....»: Մի կիսատ խաչարձանի վերայ. «Ես Դաւիթս կանգնեցի....»:

Նահատակ

Աւերակներիցս ներքև ձորի մէջ կայ մի մեծ քար, որի տակից բղխում է յորդ աղբիւր: Քարիս արևմտահայեաց երեսին շինուած է հնուց մի խաչ, որ է ուխտատեղի: Ամեն տարի շրջակայ գիւղերից խռնուում է այստեղ մեծ բազմութիւն աւագ չորեքշաբթի օրում, մանաւանդ բորոտութեամբ վարակուածները, որք լողանալով աղբիւրումս բժշկուում են:

Ճգնաւորի տեղ. Նահատակիս հանդէպ ձորի ձախ ափումն է մի քարայր, որի մէջ—ասում են երկար ժամանակ ճգնած է ոմն ճգնազգեաց ճգնաւոր:

Թագաւորաշէն կամուրջ. Ջրաձորիս ստորոտում, Արութիւն վտակի վերայ կայ մի քարուկիր և հնաշէն կամուրջ, որի մասին, ասում են թէ շինած է Կիւրիկէ Թագաւորն: Մի քանի քայլ վերև Խաչակապ գիւղացիք շինած են այլ նոր և գեղեցիկ կամուրջ, որի երկարութիւնն է 12 մետր, լայնութիւնն 4 մետր 50 սանթիմ:

Ծ. ՔԱՐՀԱՏ ԳԻԻՂ (Դաշքեասան). Հիմնուած է մի խոր ձորում, որի արևելեան, հարաւային և արևմտեան կողմերն պատած են բարձրագոյն սարեր. բնակիչք բնիկ. հողն ար-

քունի, ապառաժուտ և խիստ սակաւ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն ըստ Մեծ-Հանանց, անվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 76, ար. 486, իգ. 393, ար. ծն. 20, իգ. 14, պսակ 9, ար. ննջ. 7, իգ. 5:

Երկաթահանք, պղնձահանք եւ քարահանք (41)

Արդէն խօսած եմք հանքերիս մասին իւր տեղումն. իսկ այստեղ միայն ասում ենք ջրաձորիս աջ ու ձախ կողմերն լի են երկաթի, պողպատի, պղնձի և զանազան պատուական քարի հանքեր: Մեծ-Հանանց բնակիչներն շարունակ գործ ածած են երկաթահանքերս մինչև անտառների վերայ տուրք կապելն, քանզի անմաքս եղած են անտառների փայտերն: Հալած և շինած են գուրձանի խոփ, ձևիչ, ճամբարակ, արօրի խոփ, եռոտանի և առատ երկաթ: Բայց անտառների վերայ տուրք գնելուց յետոյ այլ ևս խափանած են գործածութիւնը սակայն մեծ վնասներով:

Խաչ-աղբիւր (Խաչ-Բուլաղ), աւերակ գիւղ Հայոց, որ գտնուում է Քարհատի հարաւային կողմում: Աւերակիս մէջ կայ մի նշանաւոր եկեղեցի [1]), շինուած սրբատաշ քարով 4 սիւների վերայ, որ ունի «ՌՃԾԹ.» թուականը: Իսկ փոքր ինչ հեռի է հանգստարան: Այժմ մահմետականք են բնակում գիւղումս, ուր կայ շուկայ և առուճախ է լինում՝ մահմետականներն ձմերանոցից ամարանոց չուելուց յետոյ: Խաչաղբիւրիցս շատ հեռի չեն պատուական ամարանոցներն:

ԾԱ. ԿԻՐԱՆՑ ԳԻԻՂ. Հիմնուած է Քարհատի հիւսիս արևմտեան կողմում, Արութիւն վտակի հիւսիսային կողմի վերայ. բնակիչք բնիկ, հողն սեփական, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սուրբ Աստուածածին, փայտաշէն, քահանան գալիս է Խաչակապ գիւղից: Ծուխ 44, ար. 224, իգ. 223, ար. ծն. 11, պսակ 4, ար. ննջ. 3, իգ. 3:

Կանգնեալ խաչ.

Գիւղիս մօտ կայ այս անուամբ մի փոքր մատուռ, որի

[1]) Եկեղեցուցս փոքր ինչ ներքևից բղխում է մի յորդառատ աղբիւր, որ ունի մի խաչաձև աւազան, որից առած է Խաչաղբիւր անունը:

խորանի տակ ամփոփուած է ոմն պատուական անձի սուրբ մարմինն, որի մասին աւանդաբար ասում են թէ «Գարդմանի պատուիռ իշխող Խուրս իշխանի դերեզմանն է, որին պատկանում էին ամբողջ հանքերս»: Մեծ ուխտատեղի է այս: Մատրանս մօտ կայ և մի փոքրիկ վանք, մնացեալ խիստ հնուց, բայց այժմ վերնամասն փայտաշէն:

ԾԻ. ԽՍՉԱԿՍՊ ԳԻՒՂ. Հիմնուած է Կիրանցի հիւսիսային կողմում, մի առուակի ձախ կողմի վերայ: Գիւղս ևս շրջապատուած է լեռներով. բնակիչք բնիկ. հողն արքունի, ապատաժուտ և նուազ արդիւնաբեր, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սուրբ Աստուածածին, կամարակապ չորս սիւների վերայ, որ ունի մի փոքր զանգատուն, 18 մետր, 90 սանթիմ երկարութեամբ, 12 մետր 28 սանթիմ լայնութեամբ:

Արձանագրութիւնն. «Արդեամբ Խաչակապայ ժողովրդոց չինեցաւ 1650 ամի, նորոգեցաւ 1864 ամի»: Դրան շուրջն. «Եկայք առ իս ամենայն....»:

Արձանագրութիւն Զանգատան. «Արդեամբ չինեցաւ զանգակատունս 1864 ամի Վերտի Յարութիւնեան Տուտղեանց»: Քահանայ մի:

Գիւղիս ստորոտում կայ մի անտաշ քարով շինուած մատուռ, որի մէջ ամփոփուած է ոմն սուրբ անձի մարմինն: Մատուռս կոչուում է *Խաչ-Քցի*. գերեզմանիս վերայ վիճակ են ձգում երիտասարդներն և օրիորդներն: Ահա *վիճակարկութիւնս* է Խաչ-Քցի կոչուելու պատճառն:

Համանման մատուռ, միջումն ճգնաւորի գերեզման, *Ծիրանաւոր* անուանեալ, կայ գիւղիս միջում: Երկու մատուռներս ևս ուխտատեղի են, երկոցունց ծածքն փայտեայ և երկու ամփոփեալների անուններն և անձնաւորութիւնները անյայտ: Ծուխ 104, ար. 699, իգ. 631, ար. ծն. 30, իգ. 27, պսակ 20, ար. ննջ. 7, իգ. 5:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ (1)

Հիմնուած է գիւղիս հիւսիսային կողմում, ոչ այնքան հեռի, մի գեղեցիկ, տեսարանաւոր և հարաւահայեաց սարա-

հարթի վերայ: Ունի խաչաձև շինութիւն, երկու փոքր և մի աւագ խորան, մի կաթուղիկէ, տասն լուսամուտ, երկու խորհրդարան, մի դուռն, չափաւոր բարձրութիւն, 11 մետր երկարութիւն, 10 մետր 25 սանթիմ լայնութիւն և հիմնարկութեան սոյն թուականը ՆԼԸ. (989): Վանքս ունի և գաւիթ կառուցեալ երկու խաչաձև կամարների վերայ, երկարութեամբ 7 մետր 75 սանթիմ, լայնութեամբ 6 մետր 60 սանթիմ: «Գաւիթս այս կառուցաւ ի վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի 1800 ամի»: Ունի և զանգատուն «Զանգակատունս կառոյց Գանձակեցի Պօղոս Ամիրխանեանց ի 1856 ամի»: Գաւթումս ամփոփուած են սուրբ տաճարիս ծառայող եպիսկոպոսների և վարդապետների մարմիններն. ինչպէս են Սամուէլ եպիս. Դատեանց, միւս Սամուէլ եպիս. Եփրեմ և Խաչատուր վարդապետների ևն.:

Վանքումս կայ մեծագիր, մագաղաթեայ և ընտիր ձեռագիր մի աւետարան, ամբողջապէս գրուած գլխագրերով: Ունի Յիսուս Քրիստոսի ծննդեան, մկրտութեան, յարութեան, ընթրեաց, աւետեաց, դժողքի աւերման, Աստուածածնայ ննջման և չորս աւետարանչաց ընտիր պատկերներն: Ընտրելագոյն են պատկերներն, նկարներն, նախշերն, ծաղիկներն և թռչնագրերն. հիանալի են առհասարակ բոլոր գծագրութիւններն, անկեղծ ներկեր, վայելուչ գոյներն և ամենաընտիր ոսկեզօծն: Վերջապէս մի մագնիսական զօրութիւն, որ իրեն է քաշում այցելուաց ուշադրութիւնը, գեղարուեստի այն նրբագործութիւնն է, որի նմանն հազուագիւտ է հին ձեռագրաց մէջ: Սակայն հարկ է յայտնել որ պահպանուած չէ խնամքով: Սկզբում մանր գրերով բացատրուած է համեմատութեանց գործածութեան կերպի եղանակն և տուած գեղեցիկ տեղեկութիւններ չորս աւետարանչաց մասին:

Գրուած է *Մատթէոսի վերջում*:

«Յանուն առատապարգևին Աստուծոյ, որ միշտ ներգործէ յարարածս բարիս քաղցրութեան կամաց իւրոց: Արդ որպէս յամենայն դարու, նոյնպէս և ի մերս նուաղեալ ժամանակիս

յարոյց զքրիստոսասէր և զփառաւոր պարոնն զաւրհնեալն ի կանայս Աստիայ դուստր Տարսայիճին տեառն Սիւնեաց յազգէ Ուրպէլեանց, որ էր ամուսին Մեծ և փառաւոր իշխանաց իշխանին պարոն Գրիգորին։ Սա ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ, զարդարեաց զանազան սպասուք և շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեայց, ստացաւ և սուրբ աւետարանս յարդար ընչից իւրոց և ընծայեաց ի սուրբ ուխտն Խադարի (Խաթրայ) վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դոփեանց և ինքն կարճաւրեայ կենաւք փոխի մահուամբ յաշխարէս առ Քրիստոս և դնի ի Դամբանի ի նոյն ի վերասացեալ սուրբ ուխտն. իսկ ըստ մարմնոյ գլուխ նորին և այր մեծ իշխան Գրիգոր զարդարեալ պճնէ զսա ոսկւով և արծաթով ի յիշատակ հոգւոյ սուրբ ամուսնոյն իւրոյ Աստիային և յերկարութիւն կենաց իւր և քրիստոսընծայ զաւակաց իւրոց, որոց յիշատակն նոցա եղիցի աւրհնութեամբ»։

Մարկոսի վերջում. «Ամեղապարտ գծիչս զՏիրացու յիշեցէք ի Տէր»։ *Ղուկասի վերջում.* «Զմեծ և զամենաւրհնեալ պարոնաց Պարոն զԳրիգոր որդի Դոփին և զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զՊարոն Աստիայն զստացողք և զարդարիչք սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»։

Ցիշատակարանից. «Ի ժամանակս և ի դարս աւուրց տիեզերակալութեան և արքայութեան բոլոր աշխարհաց ազգին Նետողաց, որ տիրէ ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կազբից և յԵփրատ գետոյ մինչև յանկոյս լերանցն Կովկասու, որոց գլուխ և ինքնակալ կանն աշխարհակալ Խարպանդայ կոչեցեալ ի թվ. Հայոց ՉԿԱ.։։ Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն մեծ և երևելի տոհմային պայազատութեամբ ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց Գրիգոր մեծ իշխան Հայոց, տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ և Ականայ և Բարձր (Մռաւ և Գեղամեան մեծ լեռնաշղթան) ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուաղայ, ամուսնացեալ ընդ դստեր Տարսայիճ իշխանին ընդ ամենաւրհնեալ պարկեշտ տիկնոջն Աստիայի։ Ծնանի ի նմանէ ուստերս

և դստերս. իսկ զմինն, որում անուն էր Սարգիս, Նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ Հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան՝ հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան Խաչենոյ, ընդ մարմնական տէրութեան. զոր ունէր ի հարանց ստացեալ, ընգալաւ և զհոգևոր պետութիւն։ Արդ յայսմ ամի, որ էր թիւս ՉԿ. փոխեցաւ յաշխարհէս Աստիայն առ Քրիստոս և եղաւ ի շիրմի ի սուրբ ուխտն Խադարի վանս, վաստորոյ և մեծ Պարոն Գրիգոր Նուիրէ գերեզմանի նորա ընծայս յոլով, գեղորայս, այգիս, և անդաստանս և զարդարէ զսուրբ ուխտն զանազան սպասուք և հանդերձիւք, ընդ որս պճնեալ շքեղացոյց և զսուրբ աւետարանս [1]) ոսկենկար կազմածով և շնորհեաց գերեզմանի նորա և իւր նախնեացն յիշատակ, որում բարձաւղք և ընծերցողք սուրբ աւետարանիս յիշեցէք զԱստիայն ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ»։ Ապա յաւանէ յանուանէ յիշուած են այն գաւառների և բերդերի անուններն, որք սեփական ժառանգութիւն են Գրիգոր իշխանիս Դոփեանց։

«Եւ գաւառք մեր յանուանէ այս է Սոթ, Գլուխ, և Բերդաձոր և Ձոխանց, Հոսաբակս, Ատրենիս, Կալեր, Ուռեաց Փոր և Խորուազետ, Գվալանոց, Երքն Մաիւելանց և այլ իւրեանց միջոց Մազրովն ի մեր նախնեաց մնացեալ հայրենիքս է իւրեանց չորս սահմաններովն ստոյգ և ճշմարիտ գրեալ ի յաւետարանիս»։

Վանքս ունի ամուր շրջապարիսպ, ութ խուց, պարտէզ, մեղուանոց, կամուրջներ և պատուական աղբիւր։ Իմ շրջած և տեսած բոլոր վանքերից պայծառ է վանքս։ Նորոգուած է վանքս, գաւիթն շրջապարիսպն, խուցերն, և նորինորոյ շինուած կամուրջներ։ Այս բոլոր նորոգութիւնները, պայծառութիւնը և վերակենդանութիւնը պարտական ենք Գանձակեցի մեծ. Ներսէս-բէկ Աբրահամեան Տէր-Ներսիսեանցին [2])։

Ա.Գ. ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ ԳԻԻՂ. (Զովգաւ) Հիմնուած Մլըզնաբերդ կոչուած սարի հիւսիս արևմտեան կողմում, որ

[1]) Այժմ զարդարանք չկայ աւետարանիս վերայ։
[2]) Չկարողացանք իմանալ քանի օրավար է վանքիս հողն։

թարգմանչաց անապատի հիւսիսային կողմումն է, մի բարձր և տեսարանաւոր սարահարթի վերայ, որի եռև կայ մի լեռ [1]), բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի լեռնային, բայց հացաւէտ. տեղական բերքերն նոյն, գերազանց օդն, կլիման և ջուրն, սքանչելի տեսարանն, եկեղեցին Սուրբ Յովհաննէս, կառուցեալ չորս սիւների վերայ, որ ունի իւր հարաւային կողմում գաւիթ և զանգատուն. քահանան գալիս է Խաչակապ գիւղից: Ծուխ 94, ար. 246, իգ. 226, ար. ծն. 22, իգ. 27, պսակ 15, ար. ննջ. 15, իգ. 12:

Եկեղեցումս կայ մի սպիտակ փոքր և հին խաչարձան, որ բերուած է Մլզնաբերդից, որ զարմացնում է այցելուներըը իւր գեղարուեստի նրբագործ քանդակներով, որ ունի. «Թվ. ՈԴ. Անուամբն Աստուծոյ ես Մարդարիտ դուստր Ուխտիկայ կանգնեցի զսուրբ նշանս ի փրկութիւն հոգւոյն Զարմաբերին և Զարդազունին, Մխիթարայ և Կանանին. որք յաղաւթըս յիշէք և զԱտոմ, որ գործող էր խաչիս»:

Կայ և մի ձեռագիր աւետարան, մագաղաթեայ, միջակ դիրքով, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ: Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ պատկերներն, ծաղիկներն, նախշերն և թուչնագրերն: *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՝ի ՈՀ. ՝ի մայրաքաղաքս Տարսոն, յորում ամենայն ոք տատանէր,... յետ մահուն աստուածասէր Թագաւորին մերոյ Լեւոնի. վշտատես ազգս Հայոց վշտանայր. չարն տեղի տայր, որոշեցան ոմանք ՝ի սուրբ ուխտէն և ի միմեանց միաբանութենէ, և որպէս է սովորութիւն ազգիս՝ ամենայն ոք զինքն յառաջ կոչէր և չհաւանեալ միմեանց՝ լինէր արեան ճապաղիս ՝ի բազում տեղիս. և գաւազք և գեղք քանդէին և եկեղեցիք աւերէին: Ի յայսմ դառն և ի չփոթման ժամանակիս աւարտեցի զդիրս սուրբ: Աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և լուսաւորիք յաստուածային բանիցս, յիշեսջիք... զնախասացեալ տիկին Աւիւծ և զբարի ծնողն իւր զՇուշան

[1]) Սարիս վերայ կայ կռապաշտ և քրիստոնեայ տարերից ՃՆացած շատ հանգիստներ. գուցէ այս պատճառաւ կոչուած է Հարց-հանգիստ:

Թագուհի (Լևոն Թագաւորին).... և զմեղապարտ գրիչս զԳրիգոր սարկաւագ»: Ունի նաև այլ յիշատակարաններ, որք գըրուած են հետզհետէ:

Ա. Վերջին երեսում ՋԽԹ. Թուին.
Բ. ,, ,, երկրորդ անգամ ստացած է Շաքեցի Զալալի խոջէն ՊՁԴ. Թվին.
Գ. Սկզբում ՌԽԸ. Թվին.
Դ. ,, ՌԾԵ. ,,

ՄԼԶՆԱԲԵՐԴ ՎԱՆՔ (Մածնաբերդ վանք)

Հարցհանգիստ գիւղիս հարաւ արևելեան հանդէպ, ոչ այնքան հեռի, արձանացած է մի սար, որ բոլորովին առանձնացած է իւր չորս կողմերից և բարձրացած ձուաձև: Սարիս կատարն 12 կալաչափ հարթակ է, որի գրեթէ մէջ տեղում, նախկին վանքի տեղում, շինուած է երկու երկաթակապ կամարների վերայ մի փոքր եկեղեցի, որ ունի մի դուռն, երկու լուսամուտ, մի զանգատուն, 12 մետր 12 սանթիմ երկարութիւն, 6 մետր 72 սանթիմ լայնութիւն: *Դռնագլխին.* «Հնադարեան ուխտատեղիս յանուն Սուրբ Սարգսի որ է Մլզնաբերդ, հիմնովին նորոգեց Գանձակեցի Սողոմոն Յար. Նալչապաիեանցն ծախիւք իւրովք ի յիշատակ իւր կնոջն Բալախանումի, որդւոյն Լեւոնի և համայն ննջեցելոց իւրոց ՝ի 1891 ՌՅԽ. ամի»: Վանքաբարձ սարիս գագաթի եզերքներով պարսպուած է եղել վաղուց ամրագին պատերով իբրև անմերձենալի ամրոց, որ այժմ կիսաւեր է: Պարսպիս ներսում կան շատ գերեզմաններ և միաբանութեան խուցերի մեծ աւերակներ, (միայն կանգուն է երկու սենեակ): Հանգստարանս ծածկուած է կաղնի, տախկի, ճըռ տանձի և այլ ծառերով:

Վսկաթել (Ոսկեթել) *մատուռ.* Գտնուում է գիւղիս հիւսիսային անգնդախոր ձորում, որի միջով հոսում է Հարցհանգիստ առուակն: Փոքրիկ մատուռ է, ձեղունն փայտաշէն, որի մասին ոչ ինչ չկայ գրաւոր. միայն աւանդութեամբ ասում են թէ «Մի Վսկաթել կոյս աղջիկ նահատակուած է այստեղ»: Մատրանս ստորոտից բղխում է մի նշանաւոր աղբիւր:

Բահչիկ աւերակ. Ընդարձակ աւերակ գիւղ, մեծ և հին հանգստարան և եկեղեցի, որ շինուած է վեց սիւների վերայ, որի երկարութիւնն է 20 մետր 2 սանթ. և որի գլուխն խոնարհուած է այժմ։ Աւերակս գտնուում է Հարցհանգիստի հիւսիսային հանդէպ, խորանգունդ ձորի ձախ կողմի բարձրութեան վերայ։

Պտկեսքերը (Պակի Սուրբ Գէորգ) կայ աւերակիս արևելեան հանդէպ կանգնած մի սրածայր սարի գլխին մի խաչարձան, որ ուխտատեղի է։ Վաղուց եղած է այստեղ անապատի նման մի մատուռ, որ աւերուած է յետոյ։ Ահա այս է Պակի Սուրբ Գէորգն։

ԺԴ. ՆԻԿՁԱՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Սուրբ Գէորգ սարիս հիւսիսային և Շամքոր գետակի հարաւային կողմի սարահարթի արևելահայեաց լանջի վերայ. բնակիչք Ցիցիանովի ժամանակ գաղթած են Երևանեան նահանգի Ձաթղուան, Ձուրվիզ և Քանաքեռ գիւղերից. հողն արքունի, անջրդի սակայն հացաւէտ, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90—100. եկեղեցին Սուրբ Գէորգ, հիմնուած մի կամարի վերայ, որ ունի միայն մի փոքր խորան հիւսիսային կողմում և մի աւագ, 18 մետր 20 սանթիմ երկարութիւն 9 մետր 5 սանթիմ լայնութիւն։ Շինուած է գիւղիս նախկին բնակիչներից։ Քահանայ մի։ Ծուխ 70, ար. 360, իգ. 323, ար. ծն. 17, իգ. 13, պսակ 9, ար. ննջ. 2, իգ. 2։

Գիւղիս հին հանգստարանում, որ մի քանի քայլ հեռի է եկեղեցուց, կայ մի հին *մատուռ*, շինուած անտաշ քարով, ծածքն փայտաշէն, քարեայ հին խաչերով զարդարեալ բեմի ժողովրդահայեաց երեսն։ Մատրանս մօտ *մի շիրմաքարի* վերայ. «Այս է հանգիստ Գրիգորոյ Թվիս ՉԽԷ.»։

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ՆԻԿՁԱՐԻ ՄՕՏ

Հիմնուած է գիւղիս հարաւ-արևմտեան կողմում մի լանջի վերայ, որ նայում է Շամքոր գետակի ձորին, այժմ աւե-

րակ է և մնում է միայն խորանի կամարն, վէմ և սեղան քարերն։ Ունի միայն մի փոքր խորան աւագ խորանի աջ կողմում, մի փոքր գաւիթ, որի ճեփի վերայ գրուած է. «Ես Դաւիթ եպիսկոպոս Նորոգեցի զեկեղեցիս այս Թվ. ՌՃԻԸ.»։ Եպիսկոպոսիս մարմինն ամփոփուած է խորանի տակ։

Աւերակ դրութեան մէջ են և վանուցս շրջապարիսպն և միաբանից խուցերն, բայց մնում է հանգստարանն, վանուցս հիւսիսային կողմում մի բլրակի վերայ։

ԾԾԵՐ

Ամենափրկչիցս փոքր ինչ ներքև ձորի մէջ կայ մի ապառաժ քերծ, որի ստորոտով վազում է մի առուակ։ Քերծիս ստորին մասն ձևացած է ինչպէս քարայր, որի առաստաղից կախուած են (բնական գոյացած են) ամենատեսակ ծծեր—մարգոյ, ոչխարի, խոզի ևն,։ Ծծերի ծայրերից կաթկաթում են ջրեր և թափուում աւազանին մէջ, որ տակին է։ Ջրիցս խմում են կաթն պակաս մայրեր և աւելանում է կաթն. հաւատքով լողանում են աւազանիս մէջ և բժշկուում տեսակ տեսակ ախտաժէտներ։

Կարմիր եկեղեցի (կամ Հռոմաշէն) (42)

Շամքոր գետակի աջ ափի մօտ ճանապարհի վերայ հիմնուած է տաճարս, որ փոքր, խաչաձև, բարձրաշէն և ամբողջապէս սրբատաշ կարմիր քարով շինուած է, վասնորոյ կոչուում է *Կարմիր եկեղեցի*։ Տաճարս [1]) ունի գեղեցիկ և սրածայր կաթուղիկէ, միայն աւագ խորան, որի հարաւային անկիւնում մի փոքր և մութ խորան։ Աւելի վանքի ձև ունի տաճարս, քան թէ եկեղեցու, ունի և գաւիթ, որի մէջ ամփոփուած են շատ ննջեցեալներ, որոց քարերն չունին արձանագրութիւն. ունի և բաւական խուցեր միաբանից համար և հանգստարան և քարուկիր շրջապարիսպ, որք կիսաւեր են և ենթարկուած քայքայման վիճակի։ Վանքս իւր հիւսիսային արտաքին կողմում, սալակից ներքև ունեցած

[1]) Կոչուում է և Դասան։

է հայերէն երկար արձանագրութիւն, որի մէջ յականէ յանուանէ նշանակուած է եղել վանուցս անշարժ կալուածներն։ Մի քանի տարիներ առաջ Գանձակեցի ոմն անազնիւ հայ ջարդում է արձանագրութիւն կրող քարերը և նենգութեամբ իւրացնում կալուածները։

Ձե. ԿԻՒԼԱՄԲԻՒՐ ՇԷՆ. Մի քանի գերդաստան հատուածեալ Նիւկզար գիւղից եկած և բնակութիւն հաստատած են շինում, որ կայ Կարմիր եկեղեցուց վերև. Շամքոր գետակի աջ ափի մօտ։ Ծուխերն և ամեն ինչ հաշուած է Նիւկզարի վերայ. ունին գեղեցիկ այգիներ։

Գետակիս աջ ու ձախ հովտում կան աւերակ գիւղեր և հանգստարաններ։

Ձջ. ՆՈՐ-ՓԻՓ ԱԻԱՆ. Հիմնուած է Շամքոր գետակի աջ կողմում, մի լայնագոգ սարի արևմտահայեաց լանջի վերայ։ Գիւղն շինուած է երկու սեռի և երկու ձորակի վերայ Կիւլամբիւրից շատ վերև, բնակիչք բնիկ, հողն արքունի, լեռնային, անջրդի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն—աւելի ոչխար, տաւար, գոմէշ, խոզ, հիանալի տեսարանն, օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, կամարակապ վեց սիւների վերայ, ունի մի կաթուղիկէ դասի վերայ և մի փոքր զանգատուն եկեղեցուս արևմտեան ծայրում տանեաց վերայ. 22 մետր երկարութիւն 12 լայնութիւն, քարեայ խաչկալ և սոյն արձանագրութիւնը. «1849 ՌՄՂԸ. Թվին»։ Քահանայ 2։ Ծուխ 301, ար. 1641, իգ. 1407, ար. ձն. 72, իգ. 58, պսակ 35, ար. ննջ. 15, իգ. 13։

Եկեղեցումս կան հետևեալ *ձեռագիրները*.

Ա. Աւետարան մագաղաթեայ, միջակ դիրքով, առանց պատկերի, նկարի, նախշի և ծաղկի։

Ցիշատակարանից. «Եւ արդ ես անարժան գրիչս Աթանաս զծոյլս ի բարեաց, որ անարժան ձեռաւքս գրեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋԼԷ. ի սուրբ ուխտս Աւ-

ծոլոյ [1]) ի դուռն Սուրբ Աստուածածնին. յիշատակ Գասպարին և ծնողաց իւրոց»։

Բ. Աւետարան թղթեայ, պատկերազարդ, բայց բոլորովին անճաշակ, անարուեստ և անախորժ գոյներով։ *Ցիշատակարանից*. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի գեաւղս, որ կոչի Արտամէտ ձեռամբ... Կարապետ երիցու ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Ստեփաննոս Նախավկային և Ամենափրկչին ի դառն և ի նեղ ժամանակիս, որ կամք գերի ի ձեռս այլազգեաց, որ պիղծ, ժանդ և արհանարբուն Կարապետ Նեռին և որդին կորստեան Սարտար Ջղալ աւղլին ի Ըստամբուլայ երեք ի Վան և արար ժողով իւր հեծելին և երկու դարբայ (անգամ) հարիւր հազար մարդ ժողովեաց և գնաց ի վերայ Շահ Աբասին և Աստուած գնորա բանն ոչ յաջողեաց, այլ փախեաւ և եկաւ աւերելով ի Վան և աւերեաց զՎանայ աշխարհն զամեն, որ սովն կալաւ զարարածս, որ եղ(և) քիլայ ցորեն ի ութ ախասի, ապա գնող կեր և ծախող չկեր։ Որ ի սովու կերան զշուն և կատու, էշ և ձի և կաշի և ապրատն ժողովէին զերիք և չորս տարու չոր ոսկրներն և սղկէին [2]) և ուտէին և կուտուց կուտուց [3]) մեռանէին։ Որ կերաւ մայրն զորդին և հայրն ծախեց զորդին ք. կորիք հացի, որ մեռան ի սովու հազարք հազարաց և բիւրք բիւրոց։ Եւ այն որ մնաց, փախեան ի Զղիրէն, ի Բաղդատ և յԱլարաստան, ի Թաւրէզ, ի Ղազուին և ի Խորասան և Գուրջստան և ամենևքեան մեռան ի գարիպութիւն, որ ի խազարէն մէկ չի դարձ (աւ) ի յետ։ Որ ի Զաղիրէն ի քաղաքն միայն երիցներն (երիցունք) խսսալ (հաշիւ) արարին ամենքն զիւրեանց թաղածն, խս։ (40000) մարդ էր մեռէր, թող գայն որ ի բուքն խեղդեցան և կամ ի պետն անգան և թող գայլ քաղքունէքն, որ ի Սալամաստայ մինչև Գուրջստան և մինչև յԸստամբուլ և հիւսիսակողմով մինչև յԱմիթ, յԱլաղ եղև անմարդաբնակ, որ առջք և

[1]) Ծոլ էր կոչուում ի հնումն այժմեան Դիլիջանի ձորն, իսկ Աստուածածնայ վանքն այժմ անմարդաբնակ է, որ կոչուում է Ջոխտակ վանք։

[2]) Մանրել, ջարդել, փոշիացնել։

[3]) Կերակուր ի բերան մեռնիլ։

խողք և մարդակեր գայլքն և շունք ի չուռ գային և այն անաւրէն և պիղծ գազանաբարոյ ազգն Հոռոմեցիքն բռնէին զմարդիկն և չարչարէին, զնոցա ամաւթն ծամէին և ասէին թէ մեզ հաց և զահրայ տուէք և նոքա ոչ ունէին զատ (իր ինչ), որ տային նոցա և չարաչար մահուամբ սպանանէին..... յառաջն երեր (Աստուած) զխաչանց մահ, որ երեկ յարևելից և գնաց մինչև ի մուտս արևու, ի հիւսիսոյ ի հարաւ.....: Եւ յետոյ երեր զմարդկային պատուհասն, որ ի սովու կերան զմիմեանս, որ եթող հայրն զորդին և մայրն զդուստրն, եղբայրն զեղբայրն և ուտէին կենդանի (ք) զմեռեալն և ամենեքեան յայլ աշխարհ գնային, և որն որ մեռան և որն որ թուրքացան և այլ ոչ դարձան ի յիւրեանց տեղն վասն ծովացեալ մեղաց մերոց: Եւ մին ի բազմաց եղկելի գործողս էր, որ առի զընտանիքն իմ և գնացի ի Զմիւրէն և մեռան անդ զընտանիքն իմ, կին իմ և դստերքն իմ և մէկ որդին իմ Մկրտիչն և հարսներն իմ և եղբայրն ի Տէր Աստուծն, որ զայս աւետարանս ծաղկեց և ամենեքեան մեռան ի գարիպութիւն.... գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌԾԴ. ամի յիշատակ Գուլիարին և Սաղաթեարին և Սպադիարին....»:

Գ. Աւետարան Թղթեայ, անթուական և անյայտ գրողի անունն և տեղն:

Դ. Աւետարան Թղթեայ, որի մէջ կան Քրիստոսի բոլոր բժշկութեանց և չորս աւետարանչաց պատկերներն, վերջից ընկած են յիշատակարանն և շատ թերթեր:

Գիւղիս հին եկեղեցու, որի ծածքն փայտաշէն է, փայտեայ սիւնի վերայ. «Իշխանութեան Մէլիք Հախնազարի, պապեր ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն, որդիք Պալին Սարգիս, հանգուցեալ որդին Տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն թվ, ՌՃԼԶ.»: *Արձանագրութիւն* «Սուրբ Աստուածածին բարեխօս տէր Ըստեփաննոսին թվ. ՌՃԹ.»:

Սուրբ Գէորգեան միգասեան ուսումնարան, աշակերտք 40, թոշակատու 36. տարեկան ռոճիկ վարժապետին 350 րուբլի:

Շիպլի հանք—Ամբողջապէս շիպահանք է գիւղիս հարաւային կողմի ահագին լեռն, որից ելած շիպաքարերը փոխադրում էին գործարաններն, որ գիւղիս հարաւ արևմտեան ծայրումն են: Ապա քարերը վառարաններում այրում էին կրաքարի պէս, յետոյ ջարդում այրուած քարերը և լցնում էին աւազանների մէջ, ջրով լցնում աւազանները, թողնում ամսաչափ, յետոյ հանում աւազաններից, մեծ կաթսաներում եփում զանգուածը. թափում հորերի մէջ, որոց մէջ մնալով լինում էր շիպ: Բայց մի քանի տարի է որ այլ ևս չեն շինում Փիփեցիք շիպ. այլ դադարեցրած են կառավարութեան հրամանաւ:

Քարահատի խաչ. Նոյն Շիպասարի վերայ մի մատուռ է, որի ծածքն փայտաշէն է և որի մէջ ամփոփուած է ոմն յարգելի անձի մարմինն, բայց անյայտ է սուրբ ամփոփեալի անունն: Ուխտատեղի է:

Սվրեցիք. աւերակ գիւղատեղի Փիփիս արևելեան հիւսիսային կողմում, որ գտնուում է մի դալարագեղ և բարձր սարահարթի վերայ: Շամքոր գետակի աջ կողմի բարձրութեան վերայ: Տակաւին կայ ընդարձակ եկեղեցու աւերակն, որից մնում է կանգուն միայն խորանի թաղն և երկու փոքր խորաններն: Խորանի *լուսամտի հարաւային* կողմում. «Թվ. ՋԻԲ. ես Համզա կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Պապի»: «Ես Համզա կանգ. զխաչս որդոյ իմոյ Էվատին»:

Աւերակից ներքև, ձորի ձախ կողմում կայ հանգստարան, ուր մի գեղեցկաքանդակ խաչարձանի վերայ. «Սուրբ խաչս Թումանին Պէկաջին Թվ. Պ.»: Աւելի ուշագրաւ է սորա մօտ եղած մի խաչարձան. որ ունի գեղեցկաքանդակ պատուանդան [1]), որի վերայ քանդակուած է մի գութան իւր մաճկալով, մաճկալեղբայրով և հօտաղներով, եզներով և գոմէշներով, և մի ճաշաբեր հարսն, որ կերակրով լի կաթսան իւր գլխին դրած, գութանաւորների համար կէսօրուան ճաշ է բերում: Սորա խաչարձանի վերայ.

[1]) Երկարութիւնն 1 մետր 10 սանթիմ, լայն. 95 ս.։

«Սուրբ խաչս բարեխաւս Գիշնին. կանչնե....» (43) Ափսոս որ եղծուած են կէտադրեալ բառերն: Այլ քարի վերայ. «Սուրբ խաչս Հուռիփսիմի Մարտիրոսին»:

Մաղթում զատէ. Հանգստարանից ներքև նոյն ձորի աջ կողմում, գետակահայեաց լանջի վերայ, մի տեսարանաւոր սարահարթում հանգստարան և աւերակ մատուռ: Մատրանս մէջ, որ բուսած է մի տխկի ծառ, կայ երկու խաչքարձան. մէկի վերայ. «Սուրբ խաչս բարեխաւս Խամբկի ՆՀԳ.»:

Խորհրդաւոր մահարձան. Հանգստարանումս մի գերեզմանաքարի վերայ շինուած է գութան իւր պարագայիւք, սազ ածող, թմբուկ զարկող. սեղան պատրաստող կին, պարող մարդիկ. գինու կուլան ձեռնին, իսկ իշխան ոմն իւր աջ ձեռնով բռնած բազէն և ձախովն գինու թասը: Սորա մօտ կոնգ, գինաման և կենդանի խոյ: Քարիս արևելեան երեսին կայ մի ահագին արձիւ, որ բարձրացնում է մի գառն: Ափսոս միայն որ չունի արձանագրութիւն: Սորա մօտ այլ քարի վերայ. «Ես Եղում կանգնեցի խաչս Նատարին»:

Րուսկան (գուցէ Ոսկան) *նահատակ.* Փայտաշէն մատուռ Փիփի հիւսիսային կողմում, գետակահայեաց լանջի վերայ: Մատրանս մէջ կայ տապան, որի վերայ կանգնած է մի մեծ քարեայ խաչքարձան, որ ուխտատեղի է:

Հին-Փիփ գիւղ.

Շամքոր գետակի աջ կողմում, աւերակ է այժմ: Այս տեղից խոխաղրուած են Փիփի բնակիչներն Նոր-Փիփ. բայց անարատ մնում է եկեղեցին, որ շինուած է երկու կամարների վերայ: Աւագ խորանի աջ ու ձախ կողմերում կան երկու ծակեր, որք գաղտնի պահարաններ են: Հոյակապ տաճարիս [1]) երկարութիւնն է 26 մետր 35 սանթիմ, լայնութիւնն 12 մետր 70 սանթիմ, պատի հաստութիւնն 2 մետր 40 սանթիմ: *Աւագանի վերայ.* «Յիշեցէք ի Քրիստոս Ծատուրն և կողակիցն իւր Մարեան թվ. ՌՃԺԹ.»: Հիւսիսային փոքր խորանի դռնագլխին. «Յիշեցէք ի Քրիստոս Գաւրկին և

[1]) Սուրբ սանս հիւսիսային կողմումն է հանգստարանն:

Ծատուրն... Աւաքեան և որդին իւր Յովհան»:

Դրան վերայ. «Կամաւն Աստուծոյ մեր Փիփեցոց ժողովուրդս միաբան շինեցաք զեկեղեցիս ՚ի հայրապետութեան տեառն Պետրոսի (Ալուանից) ձեռամբ Սարգիս վարդապետին, յիշխանութեան Մուրթուզա-Ղուլի խանին. յիշեցէք ՚ի Քրիստոս տանուտէր Վարդանէսն և կողակից Մարեան»:

Բարսամ Ճգնաւորը. Այսպէս են անուանում մատուռը, որ կայ եկեղեցուն հարաւային կողմում: Մատրանս մէջ կայ երեք գերեզման, երկու տապանաքարերի վերայ չկայ արձանագրութիւն. միայն երրորդի վերայ. «Ես Մաղապայ եպիսկոպոս կանգնեցի զիսաչս հաւր.. եղբարն իմոյ տէր Պար..մարն եպիսկոպոսին թվ. ՋՉ.»:

Օխտը եղցի կամ Քարահերծ (44)

Շիպասարիցն դէպի Շամքոր գետակն երկարած է մի լեռնաբազուկ, որի հիւսիսահայեաց ծայրի քերծի ճակատում փորուած են եօթը քարայրներ և քարուկիր պատով պատուած բաց տեղերն: Քերծս և քարայրներս շրջապատուած են թանձր անտառներով: Քարայրներս բոլորն էս եկեղեցի չեն, այլ միայն երկուսն, որոց մէջ մնում են վէմ և սեղան քարերն ցարդ: Վիմահերձի ճակատով շինուած է ուղի, որ տանում է այրերն: Ուղիղ Չարեք բերդի հարաւային հանդէպ են քարայրներս, որոց արևելեան կողմում կայ պատուական աղբիւր, որից խմած և գործածած են այրերումս նստող կաթուղիկոսներն:

Աղիւսաշէն. Մի գիւղատեղի, հանգստարան և կիսաւեր եկեղեցի է այս անուամբ, որ գտնուում է Քարահերձից վերև նոյն լեռնաբազկի վերայ:

ԳԱՐԴՄԱՆ ԱՒԱՆ (45)

Գտնուում է Աղիւսաշէն աւերակի արևմտեան հանդէպ Գարդման վտակի [1]) ձախ կողմում: Այս էր ահա Գարդման գաւառիս գաւառագլուխն, որի անուամբ ամբողջ գաւառս

[1]) Այս է Շամքոր գետակի արևելեան մեծ օժանդակն. որ խառնուում է Չորեք բերդի ստորին կողմում:

կոչուած է Գարդման, և գաւառիս իշխանաց աթոռանիստ աւանն: Այժմ աւերակ է աւանս և թրքաբնակ և կոչուում է Գրթմանիկ: Կիսաւեր եկեղեցու արևելեան որմի արտաքին երեսին վերայ քանդակուած է մի խաչքար: Իսկ հարաւային կողմում՝ մի քանի քայլ հեռաւորութեամբ՝ գտնուում են 7 հատ ցից, ահագին և նշանաւոր մահարձանները, որք միատեսակ են և մօտ առ մօտ. յորոց միոյն վերայ փորագրուած է. «Կանգնեցաւ խաչս Քրիստոսի թ. ՌՄՂԱ.»: Եղծուած են գրեթէ և անընթեռնլի մնաս 6 մահարձանների գրութիւնները:

Սրբլթոն. Գարդման աւանիս հարաւային կողմում փոքր ինչ հեռի կայ մի ուխտատեղի Սրբլթոն անուն, որ մի փոքրիկ մատուռ է և որն բնաւ չունի արձանագրութիւն: Բայց մատրանս մօտ կայ մի մահարձան, $3^1/_2$ մետր բարձր, որի վերայ փորագրուած է «Այս է տապան սուրբ Սրապիոնի թոռն մեծին Սամորին մեծին Սատին [1]) թ. ՉՁ.»: Լաւնաճաւալ հանգստարան կայ մատրանս մօտ, որի մէջ են գեղեցիկ մահարձաններով զարդարուած շատ գերեզմաններ:

Դղումբլուր. (Ղաբաղ թափէ) ընդարձակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որք կան Գարդման աւանից բաւական վերև: Դեռ կանգուն է ընդարձակ եկեղեցին, որ կառուցեալ է 4 սիւների վերայ: Տաճարիս, որի դուռն հարաւային կողմից է, մի սիւնի վերայ գրուած է. «Ես Խոսրով թվ. ՌՃԽԱ.»: Միւս սիւնի վերայ գրուած է. «Ի թ. ՌՃԾԵ.»: Տաճարս հոյակապ է, որ ունի 21 մետ. երկ. 13 լայն.: Այժմ մահմետականներ են բնակում գիւղումս:

ԱՐՈՒԹԻՒՆԱՅ (46) ՍԱՐ (տճկ. Ղոչ-ղարա) 11085 ոտք

Մի հսկայ, բոլորակաձև և գեղեցիկ սար, որ գրեթէ Մռաւեան և Գեղամեան բարձր լեռնաշղթայի խառնուրդի շարքից դէպի հիւսիս դուրս ելած, առանձնացած է, բայց մի հսկայ լեռնասեռով կցուած է նոյն լեռնագօտու խառնուրդին և վեհանձնաբար արձանացած Գարդման գաւառիս լեռնամասում: Համարեա թէ իւր շրջապատի բոլոր բարձր լեռներից ամենասիրունն է: Հինգ ժամ է տևում մինչև սարիս գագաթն բարձրանալն և երեք ժամ՝ իջնելն: Զորս կալչափ տեղի մեծութեամբ տափարակ է սարիս կատարն, որի վերայ կայ մի գերեզման, որի շուրջն շարուած են շատ քարեր: Այս երևոյթն ենթադրել է տալիս թէ մատուռ եղած լինելու է վաղուց այստեղ: Գերեզմանիս մօտ կայ մի լճացեալ ջուր, որ անկասկած գոյացած է ձիւնից և անձրևից. սակայն անպակաս է ամառ. ձմեռ ջուրն լճակիցն: Քանի՛ ուշագրաւ է գագաթիս տեսարանն, քանի՛ գեղեցիկ և անբացատրելի է դիրքն. անթերի՛ զուարճութիւնն և բարձրաթռի՛չ այցելուի սլացող միտքն . . . .:

Սարիս լանջերից և ստորոտներից բղխում են հետևեալ գետակների բուն սկզբնական ակունքներն:

Ա. Գանձակ գետակի մի մասն:

Բ. Սրուքիւնայ վտակն, որ հոսում է Բանանց գիւղի մօտով:

Գ. Գարդման վտակն:

Դ. Փառիս վտակն, որ հոսում է փառիսոսի վանքի արևելեան կողմով, բաժանում Գարդման և Փառիսոս գաւառներն իբր սահմանագլուխ և ապա միանում Շամքոր գետակին Զոխտակ կամրջի (Ղօշա քեօրփի) մօտ:

Աղի շէն. այժմ աւերակ է, բայց եկեղեցին կանգուն է: Աւերակ գիւղս, եկեղեցիս և հանգստարանս գտնուում է Փառիսոսի վանքի արևելեան հանդէպ, Փառիսոս վտակի աջ կողմի բարձրութեան վերայ:

ԳԱԻԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. *Ղալա* անուն բերդակ, որ կայ Ոսկանապատից մօտ մի մղոն վերև նոյն գետակի ձախ ափին: Քարուկիր և գրեթէ քառակուսի է բերդակս, որ ունի չորս աշտարակ և մի դուռն: Փոքր է, բայց ունի գեղեցիկ դիրք, հաստատուն

[1]) Գուցէ Սաղունին:

պարիսպ և յարմար տեղ։ Երևի թէ գետակի կողմում ունեցած է կրկնապարիսպ, որ փոքր ինչ ցած է բուն պարսպից և ունի քարուկիր շինութիւն և բնակարան իբր տուն։

Բ. *Մզնաբերդ կամ Մածնաբերդ* (47)

Գտնուում է համանուն վանքի հիւսիսային հանդէպ, ձորի միւս կողմում։ Իր շրջապատից առանձնացած է նաև բերդաստրա, որի հարաւային և արևելեան կողմերն վիմահերձ և բարձրագոյն ապառաժներ են, հիսիսային կողմն անմերձենալի սարալանջ, իսկ արևմտեան կողմն ունի հաստատուն պարիսպ երեք ամուր աշտարակներով։ Ունի միայն մի դուռն արևմտեան կողմից և բաւական մեծութիւն, որի մակերևոյթն թեքուած է հարաւից հիւսիս։ բերդիս վերնամասում [1]) կայ հանգստարան և բնակարանների շատ աւերակ։ Ստորին մասում կայ յատկապէս միջնաբերդ, որը տեղացիք անուանում են *Նարին-Ղալա*, որ ունի առանձին պարիսպ և մուտք։ Մեծ ուշադրութեամբ ամրափակուած են քարուկիր պատերով կասկածաւոր տեղի կիրճերն. վերջապէս նշանաւոր ամրոցներից մին է բերդս և շատ հին։ Բերդիս հիւսիսային մասում կայ մի բարակ ջուր, սակայն երևի թէ բնակիչք չեն բաւականացած ջրովս, այլ խեցեղէն խողովակներով ջուր բերած են արևմտեան կողմից։ Կարծես թէ եղած է և քաղաք։ այժմ հերկում են Հարցհանգիստ գիւղի բնակիչներն բերդիս մէջը և հետզհետէ քայքայւում են պատերն։

Գ. *Ղըզ-Ղալա* բերդակ, որ կայ Նիւկզար գիւղի արևելեան կողմում, մի սարի վերայ, որ բաւական հնաշէն է։

Դ. *Կեռատավանք ըստ.*

Հիմնուած է Շամքոր գետակի աջ կողմի բարձրութեան վերայ Ռուսկան նահատակից փոքր ինչ ներքև։ Բերդիս տեղն թեքուած է դէպի գետակն, իսկ երկու կողմերն՝ ձորեր են։ Ունի շրջապարիսպ, որից այժմ տեղ տեղ քանդուած է կամ լաւ ևս է ասել մնում է պարսպի ստորին մասն և քարու-

[1]) Բարձր են վերնամասիս հարաւային և հիւսիսային ծայրերն, իսկ միս միջավայրն։

կիր շինութեանց բեկորներ։ Ոմանք կարծում են թէ *վանք* եղած է այս, իսկ այլ ոմանք թէ՝ *ըստ*։ Մենք հաւանական ենք համարում վերջին կարծիքս. քանզի ժամանակաւ մեծ ճանապարհ եղած է գետակիս ձորովն Գեղամայ լճի արևելեան ափի վերայ, վասն որոյ Զարէք բերդն շինուած է գետակիս ձախ և բերդս աջ ափերի վերայ՝ թշնամեաց մուտքը արգիլելու համար։

ԺԷ. ՓԱՌԻՍՈՍ ԳԱԻԱՌ.

Գաւառիս սահմաններն են արևելքից Շամքոր գետակն և Փառիս օժանդակն, հարաւից՝ Գեղամեան լեռնաշղթայի գագաթնագիծն, արևմուտքից՝ Տաւուշ գետակի արևելեան օժանդակն և հիւսիսից գաշտաբերանն։

Այցելու սուրբ (Փիրնազար) երկու աւերակ եկեղեցիներ, որք կան Տանձուտից բաւական վերև։ Մերձաբնակ պարսիկ բնակիչներն մեծ յարգանքով են վերաբերուում *ուխտ* անելով և *մոմեր* վառելով աւերակներիս քարերին և յարգանքով արտասանում *Փիր-Նազար*։

Տանձուտ աւերակ. Գտնուում է Փառիս վտակի ձախ ափի վերայ, Ատի շէն աւերակի հանդէպ։ Խիստ ընդարձակ է գիւղիս աւերակն և հանգստարան. ևս առաւել եկեղեցին, որ հիացնում է այցելուները իւր հոյակապ շինութեամբ և մեծութեամբ։ Կառուցեալ է վեց սիւների վերայ. ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու գեղեցիկ խորհրդարան, երկու դուռն հարաւից և հիւսիսից. 27 մետր երկարութիւն, 15 մետր 60 սանթիմ լայնութիւն։ Այժմ խոնարհուած է աւագ խորանն, ձախակողմեան դասի կամարով միասին և փոքր ինչ տեղ տաճարիս արևմտեան հիւսիսային անկիւնից (ձեղունից). չունի արձանագրութիւն։

ՓԱՌԻՍՈՍԻ ՎԱՆՔ.

Հիմնուած է Տանձուտից փոքր ինչ վերև մի պատուական և անտառապատ սարահարթի [1]) վերայ։ Արևմտեան

[1]) Սարահարթս ունի բոլորակ ձև, միջակ մեծութիւն։

կողմում բարձրացած է Հովուի սարն (Զօպան-դաղի) սարահարթից վերև, որի եզերքներով շրջապատուած է ամուր պարիսպ, որ այժմ կիսաւեր է, որի մէջ կայ երեք եկեղեցի։

Ա. շինուած է արևելեան կողմում. Բ-ն՝ մէջ տեղում. Գ-ն՝ արևմտեան կողմում, համարեա թէ մի շարքի վերայ։ Բ. և Գ. տաճարներն ունին երեք սիւնով կամարակապ գաւիթ. իւրեանց հարաւային կողմում, իսկ Գ. տաճարն իւր դռնագլուխ քարի վերայ ունի. «Մուսէս երէց»։ Միջի եկեղեցին աւելի մեծ է միւսերից։ Երեքն էլ հին շինուածք են, որոց դռները բացուած են հարաւային կողմից։ Արևելեան տաճարս էլ ունի փոքրիկ գաւիթ, որի մօտ է զանկատունն, որ շինուած է սրբատաշ չիչ քարով. չիչ քարով շինուած են բոլոր տաճարների և սրահների անկիւնաքարերն և կամարները. իսկ մնացեալ մասերն անտաշ քարով։ Բ. և Գ. տաճարներն ունին 25 մետր երկարութիւն և 11 մետր 70 սանթիմ լայնութիւն։ Ամբողջապէս կանգուն են տաճարներս. բայց աւերակ են միաբանից բոլոր խուցերն։ Շատ գերեզմաններ կան թէ պարսպիս ներսումն և թէ դրսումն, սակայն չգտանք գրութիւն։ Վանքիս մօտ երևում են ջրաւազան և խեցեղէն խողովակների հետքեր, արևմտեան կողմի աղբիւրի ջուրն բերուած է վանքս։

Ջոխտակ-կամուրջ. Գետաբակի երկաթուղու վերջին կայարանն է այս, որ կայ Փառիսոս և Շամքոր վտակների խառնուրդի մէջ։ Կայարանումս դիզուած են խարոյկներով փայտ և ահագին ամբարներով ածուխ, որք հետզհետէ փոխադրւում են Գետաբակի և Փառիսոսի գործարաններն պղնձաքարերը հալելու։

Երկաթուղու գիծն վերջացած տեղի արևելեան հանդէպ, վտակի աջ կողմի բարձրութեան վերայ կայ մի եկեղնցի, որի գլուխն խոնարհուած է։

ՓԱՌԻՍՈՍ ՓԱՂԱՔ (Ղալաքեանդ) (48)

Շինուած է Շամքոր գետակի աջ ու ձախ ափերի լանջերի վերայ Ջոխտակ կամրջից մօտ երեք մղոն վերև։ Բաւական ընդարձակ է աւերակիս ծաւալն. բնակչաց որքանութիւնը մօտաւորապէս գիտենալու համար՝ բաւական է յայտնել, թէ աւերակ քաղաքումս կայ տասնևմի եկեղեցի, երեքն գետակի աջ ափի վերայ, յորոց մին կանգուն է և երկուսն կիսաւեր. իսկ ութն շինուած է գետակի ձախ կողմումն, որից կանգուն են՝ երկուսն և աւերակ՝ վեցն։ Աւերակների հիմքերն պարզապէս երևում են և շատ տարի չէ որ քանդած են, ինչպէս վկայում են ականատեսներն։ Մայր եկեղեցին հիմնուած է գետակի ձախ ափի վերայ, որը մի քանի տարի առաջ քանդած [1]) և սորա քարերով շինած են խանութներ։ Աւերակ տաճարիս երկարութիւնն է 15 մետր, լայնութիւնն 11 մետր 50 սանթ. և գտնուում է այժմեան խանութների մօտ։ Դեռ պարզապէս նշմարուում են խիտ առ խիտ տնաբակեր և քարուկիր շինութեանց շատ հետքեր։ Աւագ եկեղեցուս արևմտեան կողմում, ոչ այնքան հեռի, երկաթուղու գծի տակ կայ երկու քարեայ խաչարձաններ. արևելեան խաչարձանի վերայ.

«Թվին ՉԻ. յանուն Աստուծոյ ես Հայրապետ . . ւա . . . եղբայր Փա կանգնեցաք զխաչս յիշատակ հաւր մերոյ Խորենայ, մաւր մերոյ Շաղակվոյ ու եղբաւր մերոյ Խայոմթենչայ, ով զայս գիրս կարդայ . . . [2])»։

Արևմտեան խաչարձանի վերայ. [3])

«Թվ. ՉԼ. յանուն Աստուծոյ ես Սահնայս կանգնեցի զխաչս 'ի տէրութեան ժամանակի իմոյ՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամուսնոյն իմոյ Սիրունիկայ և որդւոյ իմ Սարգիսայ և դստերն իմոյ Մամա Խաթունայ, Նփաղհաճայ եղբաւրն Սիրունիկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց։ Ով կարդայ այս. Դաւիթս յիշեսցէ առ Աստուածջրհեց.... (չինող վարպետի անունն է Դաւիթն)»։

Այժմ անմարդաբնակ է քաղաքս, բայց ամրան երեք ամիսներում հաւաքուում են այստեղ մի քանի վաճառական-

---

[1]) Տակաւին ճնում են հիմքն և խորանի կլորակն

[2]) Անընթեռնլի են կետադրեալ բառերն

[3]) Ունի 2 մետր 75 սանթ. երկար. 1 մետր. 22 սանթ. լայնութ.

ներ՝ դարբին, պայտառ, դերձակ և այլ արհեստաւորներ՝ ամարանոց բարձրացողների պէտքերը հոգալու և շահուելու համար։

Սուրբ Յովհաննէս. Քարուկիր փոքր եկեղեցի, որ կայ Փառիսոս քաղաքի աւերակի արևելեան հանդէպ գետակի աջ կողմի բարձրութեան վերայ, մի գեղեցիկ հարթակի վերայ։ Տաճարիս երկարութիւնն է 8 մետր 27 սանթիմ, լայնութիւնն 5 մետր 5 սանթիմ։ Փոքր ինչ ծակուած է հարաւային գասի առաստաղից։ Արտաքուստ արևմտեան մի կանաչագոյն խաչքարի վերայ. «Թվ. ՇԾԵ. (1106) ես Վա..... (անընթեռնլի)»։ Դրան մօտ այլ խաչքարի վերայ. «Թվ. ՋԻ.»։ Ունեցած է և շրջապարիսպ և միաբանից խուցեր, բայց կործանուած են, մնում են միայն գերեզմաններ։

Եկեղեցուս արևմտեան կողմում, փոքր ինչ վար լանջի վերայ կայ մի փոքրիկ մատուռ շինուած անտաշ քարով, որի մէջ կայ մի գերեզման, բայց անարձանագիր է քարն, որ կոչուում է *Ճգնաւորի գերեզման*։

Աւերակ *գիւղատեղիներ, եկեղեցիներ* և *հանգստարաններ* կան Ղարա-Իուլազ, Սաբէթ-Կէչմազ և Ձալ-գազ կոչուած տեղերում, որք գտնուում են Փառիսոս քաղաքիս հիւսիսային կողմում։

Գարգար աւերակ գիւղ Փառիսոս քաղաքի հիւսիս-արևմտեան կողմում, ջրաձորի աջ լանջի վերայ, ուր կայ կիսաւեր եկեղեցի և հանգստարան։ Այժմ մահմետականներ են բնակում այստեղ և կոչում են գիւղս *Գեաուգեաո*։

Փոքր-Ղարա-Մուրատ [1])

Գարգար գիւղիս արևմտեան հանդէպ, վտակի ձախ կողմի բարձրութեան վերայ Հայոց գիւղ, այժմ թրքաբնակ, բայց կայ կիսաւեր եկեղեցի և հանգստարան։

Մեծ-Ղարա-Մուրատ, որ կայ նոյն վտակի ձախ կողմի լանջին վերայ։ Այստեղ կայ երկու եկեղեցի, մինն խիստ ընդարձակ, հոյակապ, կանգուն և միւսն փոքր և կիսաւեր՝

[1]) Գիւղերիս բնակիչներն Վրաց վերջին Հերակլ թագաւորի օրով գաղթած և բնակութիւն հաստատած են Շուլաւերում։

մօտ առ մօտ։ Վեց սիւների վերայ շինուած է մեծ եկեղեցին, որի մէջ մնում են վէմ և սեղան քարերն։ Խորանի ճակատին. «Շինեցաւ սուրբ տաճարս ձեռամբ անարժան Զուլայեցի ուստա Մուսէսին որդի Եսկարին զաւակ Սողոմոնին՝ հրամանաւ Փիլիպոս կաթուղիկոսին եկի շինեցի սուրբ եկեղեցիս Ղարամուրատին Հայոց թվին ՌԶՂ. ով կարդաք, ողորմի Մովսէի յիշեցէք 'ի Տէր, Աստուած ձեզ յիշէ, ամէն»։ Ձախ փոքր խորանի ճակատին. «.... թվին ՌԶՂ. էր... և եկեղեցի.։. Սաւիկն և հայրն Վելիճանն և որդին Ղարա մուրատն, Ղուկասն և դուստրն իւր Գուլաղէն, Զաքարի հայրն Վելիճան, կողակիցն իւր Գուլդանէն, որդին իւր Աջամն, Հախնազարն, Ովանէսն յիշեցէք և Աստուած ողորմի ասէք»։ Փոքր ինչ սորանից ներքև. «Սուրբ սեղանի քարն յիշատակ է Ըռըստիմին, իւր եղբայր Էլազին, Պարոնին, իրենց մայր Խաթունին թվ. ՌԶՂ»։ Գիւղիս, եկեղեցուս և հանգստարանիս ծաւալից այցելուն եզրակացնում է թէ Մեծ-Ղարա-Մուրատս գիւղաքաղաք եղած է։ Այժմ թրքաբնակ է և այս։ Խոնարհուած է փոքր եկեղեցու առաստաղն։ Դրան վերայ. «Ընորհիւ Աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս (անապատ կուսանաց) արդեամբ գուիք (գոյիւք) ամենայն քրիստոնէից՝ յիշատակ ինձ և ծնողացն իմոց և ամենայն աշխատողաց 'ի մայրապետութեան անապատիս Թագուհւոյն և Կայինային 'ի ՌՃԾ. թվ.»։

Կիսաւեր Անապատ Մեծ Ղ.-Մուրատիս արևելեան հանդէպ վտակի աջ կողմի հարթի վերայ, որի մօտ կայ հանգստարան և խուցերի աւերակ և մի երկար քարեայ սիւն, որ ընկած է գետնի վերայ, բայց կրում է խաչ նշան և հակիրճ արձանագրութիւնս «Սուրբ Սարգիս»։

ԽԱՄԵԻ ՎԱՆՔ (49)

Հիմնարկուած է աւերակիս կամ սիւնիս արևելահիւսիս կողմում մի ձորահովտում։ Կառուցեալ է սրբատաշ քարով երկու սիւների վերայ սագաշէն, որ կանգուն է բոլորովին և

որի երկարութիւնն 15 մետր 5 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 60 սանթիմ է։ Դրան վերայ արտաքուստ. «Սուրբ խաչս Մար..... (եղծուած է)»։ Սորա հիւսիսային կողմում. «սուրբ խաչս Ամիրխանին»։ Վանքս իւր հիւսիս-արևելեան անկիւնում ունի երկյարկ զանգատուն շինուած համակ սրբատաշ քարով։ Թափուած են ինչպէս վանքիս տանեաց նոյնպէս և զանգատանս սալկախներն։ Վերջնոյս գետնայարկում աստիճանաւոր պատուանդանի վերայ հաստատուած է մարգաչափ բարձրութեամբ մի քարեայ խաչ՝ յոր և նման Յիսուս Քրիստոսի խաչափայտին, որի հարաւային և հիւսիսային թևերի վերայ. «Յիսուս Քրիստոս» և գագաթինահայեաց ստորոտում. «Թվ. ՌԶԸ.»։ Անյագ նայում է այցելուն, զմայլում և միանգամայն զարմանում խաչիս նուրբ քանդակագործութեան գեղարուեստի ճարտարութեան վերայ։ Խաչիս մօտ մի այլ քարի վերայ կայ երկար արձանագրութիւն, բայց մահմետականք ջարդած են քարս և արած միջից երկու բաժին։ Անկարող եղանք գտնել կէսը, որ միմեանց մօտ բերէինք և ընդօրինակէինք։

Վանքս ունեցած է և շրջապարիսպ, միաբանից սենեակները, որք աւերուած են այժմ, միայն մնում հանգստարանի տապանաքարերն։

Փնտխլու կամ Նոր-Սարաթովկա, գիւղս մինչդեռ կանխաւ եղած է հայաբնակ, այժմ մալականաբնակ է և հիմնուած Զակամ գետակի արևմտեան օժանդակի ձախ ափին։ Սակայն մնում է հանգստարանն, որ ունի խիստ երկար (մի քար 3 մ. երկար է) տապանաքարեր և կիսաւեր եկեղեցին, որի երկարութիւնն 18 մետր, լայնութիւնն 11 մետր է։

Գիւղիցս Բաշ-գեղ տանող ճանապարհի վերայ կան հետևեալ հնութիւնները.

Ա. Մի փոքր եկեղեցի, հանգստարան և գիւղատեղի կայ ճանապարհի արևելեան եզրի մօտ։ (Դուցէ այս է Սուլթանէ գիւղն, որի մասին տես Բանանց գիւղի Թ. աւետարանի յիշատակարանը)։

Բ. Սորանից գրեթէ նոյնչափ վերև ճանապարհի արևմտեան եզրում է Մէլիք-գատա գիւղի աւերակն, մի մեծ և մի փոքր կիսաւեր եկեղեցի և խիստ լայնածաւալ հանգստարան (50)։

Գ. այլ անանուն գիւղատեղի, հանգստարան և աւերակ եկեղեցի, որ կայ Բաշ-գիւղից ներքև։

Ա. Բաշ-գեղ. Հիմնուած է մի սարի [1]) հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են այստեղ Զորաթան գիւղից, հողն արքունի, սակաւ, լեռնային, անջրդի, բայց հացատու և յարմար անասնապահութեան, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, հաճար, ոչխար առատ, կով, եզն, գոմէշ. գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 112 տարի. եկեղեցին նորաշէն, Սուրբ Մինաս, ծածքն փայտաշէն, «Անուն Սրբոյն Մինասայ շինեցաւ եկեղեցիս արդեամբ ժողովրդոց Բաչքանդի 1872 ամի մայիս 5-ին»։ Քահանայ 2 ծուխ 115, ար. 804, իգ. 639։

Գիւղիս նախկին բնակչաց եկեղեցին Սուրբ Յովհաննէս անունն, ծածքն փայտաշէն, որի մէջ փոքր խորանում. «Թվ. ՌԾԶ.». Այս է եկեղեցուս շինութեան թուականն։ Մի կիսատ խաչքարի վերայ. Սիմոն, Տէր Մխիթար, Զանէ հանդուցեալ ի Տէր»։ «Սուրբ խաչս բարեխաւս Սահակի կին Եղիսաբէթին»։ Նախկին բնակչաց հանգստարանում կայ մինչև 700 տարուան, այս է Հայոց ՈՒԳ. թուականից արձանագրութիւն։

Գիւղիս շրջականերում կան հետևեալ աւերակներն.

Ա. *Փարա-գիւղ*, որի մէջ կայ և եկեղեցի և մօտն հանգստարան՝ Բաշ—գիւղիս արևելեան կողմում։

Բ. *Աղքիլիսա* (սպիտակ եկեղեցի), ուր կայ գիւղատեղի, հանգստարան և մեծ եկեղեցի։ Աւերակներումս, որ գտնուում են գիւղիս հարաւային կողմում. բնակում են մալականներ։

Գ. Փոքր և աւերակ եկեղեցի, որ գտնուում է Աղ-քիլիսայից փոքր ինչ հեռի։

[1]) Սարս գրեթէ գտնուում է Զակամ գետակի և Տաւուշ գետակի արևելեան օժանդակի (Ախնջի) միջև։

Դ. *Կարմիր վանք* (Ղզըլ-քիլիսա), որ շինուած է կարմիր քարով Աղ-քիլիսի հարաւային կողմում. Բաբաջան անուն վտակի ձախ ափում. մի բարձրագոյն ժայռի վերայ:

Ե. Այլ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի Կարմիր վանքի արևմտեան կողմում:

Զ. *Բաբաջան* գիւղատեղի, եկեղեցի և հանգստարան, Կարմիր վանքից ներքև նոյն վտակի ձախ կողմում:

Է. *Շմող գիւղատեղի*, հանգստարան և եկեղեցի, Բաշգեղի արևմտեան կողմում Շմղ կոչուած տեղում:

ՀԻՆ-ԳԵՏԱԲԱԿ

Հիմնուած է Շամքոր գետակի ձախ կողմում մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ, որի նախկին բնակիչներն առհասարակ եղած են հայ: Այժմ ևս այստեղ է Հայոց սուրբ Գէորգ եկեղեցին, մեծ հանգստարանն, շուկան, խանութներն և շատ կանգուն տուներ: Այստեղ եղած է և ուրիշ մի եկեղեցի Հայոց, որը քանդել տուած է պղնձահանքի կապալառու պ. Քելլ գերմանացին և քարերը գործ դրած այլ շինութեանց համար: Նոյն պ. Գերմանացին շինել տուած է ինչպէս այստեղ, նոյնպէս և Փառխոս քաղաքի ստորոտում շատ գործարաններ, բնակարաններ և զանազան շինութիւններ (բոլոր գործարանների և երկաթուղու գործիքներ շինելու համար) այս տեղից մինչև Ջոխտակ կամուրջ երկաթուղի և հեռագիր: Վերջապէս այստեղ են *պղնձահանքերն*: (որոց արտադրած պղինձներն աւելի ընտիր են) տեսակ տեսակ շոգեշարժ մեքենաներ, վառարաններ, պղնձաբովեր, ձուլարաններ, գտարաններ, և.ն. և.ն.: Մօտ 800 մարդ է բանում օրական թէ այստեղ և թէ Փառխոսի գործարանում: Պղնձաքարերը հանում են հանքերից—լեռների տակերից, նախ գտում վտերը լաւերից, վտերը դիզում լեռնաձև, այրում ածխով կամ փայտով, ապա ջարդում և լցնում բովերի մէջ, վերստին հալում, գտում և հուսկ յետոյ կոտոր կոտոր ձուլում կաղապարներում: Ընտիր պղնձի հետ ելնում է և ոսկի: Բայց անտանելի է սաստիկ մուխն և ծծմբահոտն, որք գի-

շեր և ցերեկ Եգիպտոսի խաւարի նման թանձրակոյտ և մառախլապատ տարածուած են ոչ միայն գետաբակիս վերայ, այլ և ծածկում են մերձաւոր շրջակաները: Այժմ այստեղ բնակում են վաճառականներ, արուեստաւորներ, ծառայողներ, հայ, ռուս, գերմանացի գործավարներ և մշակներ, որոց մէջ կան և մահմետականներ: Երևի թէ շրջապարիսպ ունեցած է Հին-Գետաբակս իբր ամրոց, բայց անհետացած է այժմ:

Բ. ՆՈՐ-ԳԵՏԱԲԱԿ գիւղ, Հիմնուած է Հին-Գետաբակի արևելեան կողմում—սեռի ետևի արևելահայեաց լանջի վերայ. բնակիչք 1863 թուին տեղափոխուած են Ղազախի Կոթ, Ղալաչա և Ոսկեպար գիւղերից այստեղ, նախ բնակութիւն հաստատած Հին-Գետաբակում, ապա տէրութեան հրամանաւ փոխադրուած Նոր-Գետաբակս: Տեղական բերքերն նոյն, հողն արքունի, բայց խիստ սակաւ և միանգամայն ապարդիւն. անվնաս օդն, կլիման և ջուրն, եկեղեցին նոյն—է Սուրբ Գէորգ, քահանայ մի: Ծուխ 33, ար. 215, իգ. 202, ար: ծն. 25, իգ. 22, պսակ 6, ար. ննջ. 7, իգ. 5:

Սուրբ Սարգիս. Ուխտատեղի է և փոքրիկ մատուռ Հին-Գետաբակի արևելեան հանդէպ ջրաձորի աջ կողմի բարձր և գեղեցիկ սարայարթում. ունի և փայտաշէն սրահ և անտառապատ շուրջ: (Այս տեղ բնակած է Յովհան—Մայրագոմեցի գիտնական վարդապետն):

Զարէքայ անապատ

Հիմնուած է Շամքոր գետակի ձախ ափի վերայ: Գրեթէ սագաշէն և փոքր եկեղեցի է կառուցեալ քար սիւների վերայ, ունի և գաւիթ, որ շինուած է տաշուած քարով: Արտաքուստ հարաւային դրան վերայ.

«Ի թվին ՌՃԼԳ. չնորհաւք ամենակալին Աստուծոյ կառուցաւ յանուն փրկչին վերնատուն տեղի Հոգւոյն ճշմարտի եկեղեցիս սուրբ և գաւիթ գովելի. չինեցաւ ձեռամբ տեառն Ներսիսի հանդերձ եօթանասուն եղբարց ամենի փրկութեան.»..»:

Արտաքուստ արևմտեան դրան սեմի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս տէր Մովսէսին Ներսէսեանց վանն փրկութեան հոգւոյ Բարխուտարին, որք բաղում սիրով եռուն չինել զդաւիթ սուրբ եկեղեցւոյն»:

Անապատս ունի և փոքր զանգատուն, որի վերայ.

«Ի թուին ՌՃԸ. կամաւք Աստուծոյ չինեցաւ զանգակատունս յանուն Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի ի հայրապետութեան Պետրոսի սրբազան կաթուղիկոսին տանն Ադուանից և յառաջնորդութեան սուրբ ուխտիս և անապատիս Զաքէքայ Սարգիս վարդապետի ձեռնտուութեամբ և աղաւթիւք եօթանասուն միաբանից կատարումն եղև խորանիս ի փառս Աստուծոյ, արդ ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետ և աղաւթաւոր եղբարքս չինեցաք զսուրբ կաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց և ամենայն հետևողաց, որք ընթեռնուք, յիշեցէք զմեզ ի Քրիստոս»:

Փոքր ինչ դէպի արևելք *Հարանց մատուռ*, որի վերայ. «Ի թուին Հայոց ՌՃՃԶ. ի հայրապետութեան տեառն Պետրոսի կաթուղիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց տէր Յաւանէսին, Եղիսաբեթին և միաբանից, որք աստ կան հանգուցեալ և ամենայն ողորմածաց մերոց.....»: Անապատս ունի և միաբանից խուցեր և ամուր շրջապարիսպ, որի դրան ճակատին. «Ի թուին ՌՃԿԳ. ես Մկրտիչ վարդապետս չինեցի պարիսպս, որ եղև խարջ ԻԸ, թուման. Ովանէս վարդապետն տուաւ Ճ. թուման. չինեցաւ...»: Մատրանս մէջ ամփոփուած են Դաւիթ եպիսկոպոսի և Կիրակոս, Սահակ և Սարգիս վարդապետների մարմիններն: Վանքս ունի վանահայր և մի քանի ծառաներ:

Յունիսայ վանք.

Հիմնուած է Նոր-Գետաբակի արևելեան հանդէպ, Գետաբակ անուն վտակի ձախ կողմում, մի հարթակի վերայ, որին մօտ է Մօղլաղու թրքաբնակ գիւղն: Փոքր վանքս ունի կաթուղիկէ և գեղեցիկ շինութիւն. բայց այժմ անմարդաբնակ:

Ջոխտակ եկեղեցի. մօտ առ մօտ կանգնած են երկու եկեղեցիքս Նոր-Գետաբակի արևելեան հիւսիսային հանդէպ մի դալարագեղ լանջի վերայ, որոց մօտ կայ գիւղատեղի և հանգստարան: Բայց անարձանագիր են տաճարներն և հանգստաքարերն:

Սուրբ Ստեփաննոս. Ջոխտակ եկեղեցու արևելեան կողմում, նոյն սարի արևելահայեաց լանջի վերայ, Տանձուտ կոչուած տեղում (այլ է Տանձուտս նախորդիցն) կայ մի աւերակ եկեղեցի, որի քարերը քանդած և տարած են մերձաբնակ Սաւեանկա գիւղի բնակիչներն [1]: Այժմ մնացած է միայն աւագ խորանի կլորակ մասն: Հարաւային փոքր և աւագ խորանի մէջ եղած պատում մի խաչքարի վերայ.

«Եկեղեցիս Սուրբ Ստեփան. ես Մովսէս....»: Այստեղ կայ մեծ գիւղատեղի և հանգստարան:

Գ. ԳԱՌՆԱԿԵՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Եամքոր գետակի ձախ ափին. խորագոյն ձոր է գիւղիս տեղն, վասն որոյ և խեղդուած տեսարանն. բնակիչք բնիկ, հողն արքունի և նուազ արգիւնաբեր և սակաւ, տեղական բերքերն նոյն և այլ—գինի, օղի, սեւկեվել, գեղձ, տանձ, խնձոր, ոչխար, փոփոխական օդն, տենդաբեր կլիման, 65—70 տարի երկար կեանքն. եկեղեցին Սուրբ Աստուածածին, կառուցեալ երեք կամարների վերայ 1838-ին. ունի մի աւագ և մի փոքր խորան (հիւս. կողմում). երկարութիւն 12 մետր 35 սանթիմ, լայնութիւն 8 մետր 20 սանթիմ. քահանայ մի: Ծուխ 80, ար. 618, իգ. 533, ար. ծն. 29, իգ. 23, պսակ 12, ար. ննջ. 4, իգ. 3:

Քարոզ գրքեր. Ա.-ն գտնուում է Փիփեցի պ. Յովհաննէսի մօտ, որ նօտարագիր է և պարունակում է *առաքինութեանց և մոլութեանց ծառեր*: Բայց թափուած են ձեռագրիս սկզբից և վերջից թերթեր: Ե-ն բարեկրօն Յովսէփ քա-

---

1) Աղանդաւորներիս բնակութեան տեղին ևս աւերակ գիւղ եղած է այդց, որի մէջ եղած է եկեղեցի և հանգստարան:

հանայ Բալեանցի մօտ, որ պարունակում է զանազան խրատական բաներ, որը գրած է «ամենախոնարհ ծառայ Աստուծոյ Եսայիայ գպիր տէր Խաչատրեանց 1848»։

Ծաղկոց վանք. Հիմնարկուած է Շամքոր գետակի ձախ ափի վերայ մի ժայռի գլխին, որ փոքր ինչ վերև է գիւղից։ Մենաստանս ոչ սիւներ ունի և ոչ կամարակիկ, այլ ունի սովորականից շատ մեծ դուռն, բարձրագոյն շինուած և նեղ նեղ լուսամուտներ, 9 մետր 25 սանթիմ երկարութիւն և 6 մետր 40 սանթիմ լայնութիւն։ Անյայտ է վանուցս շինութեան թուականն։

Դրան ներսում հիւսիսային կողմում. «Սուրբ խաչ տէր Ուհան պարոն Գաբրիէլին քաւարան թիվ. ՌՃԼԸ.»։ Մենաստանս ունեցած է և փայտաշէն գաւիթ, որը, հնութեան պատճառաւ քանդած են Գառնակերցիք յորդորմամբ նոյն Յովսէփ քահանային, այժմ շինում են նորը, որի պատերն քարուկիր են, իսկ ծածքն փայտաշէն (գի փայտով)։ Գաւթումս կայ երկու գերեզման, տեղացիք աւանդաբար *ճգնաւորների գերեզման* են անուանում. տապանաքարերն անտաշ են և անարձանագիր։

Հրեշտակապետաց վանք.

Մենաստանիցս փոքր ինչ վերև է Գաբրիէլ և Միքայէլ Հրեշտակապետաց անուամբ շինուած վանքն, որ նոյնպէս գետակին ձախ ափին է և սագաձև կառուցեալ ինչպէս պարզ եկեղեցի։ Ունի երկու փոքր և մի աւագ խորան (աւագ խորանի միջից բացուած է հարաւային փոքր խորանի դուռն և շինութեան կարգից բոլորովին դուրս հանուած է հիւսիսային փոքր խորանն) 10 մետր 65 սանթիմ երկարութիւն, 8 մետր լայնութիւն, և այս արձանագրութիւնը. «Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ Սուրբ Միքայէլ և Գաբրիէլս ձեռամբ Յովհաննէս վարդապետի և Մահտեսի Յովհաննէսի հանդերձ միաբան եղբարբք թիվ. ՌՄԿԵ.»։ Վանքս ունի նաև քարուկիր գաւիթ, որի մէջ ամփոփուած են ննջեցեալներ։ Մի *շիրմաքարի վերայ.* «Այս է հանգիստ ճգնաւոր Յոհաննէս վարդապետի շինող վանիս Մաղաքի որդի. թիվ. ՌՄՀԷ.»։

Վանքումս կայ մի ձեռագիր աւետարան, որ գրուած է հասարակ թղթի վերայ. չունի յիշատակարան, անճաշակ է ամեն ինչ։

Մի տպ. *ձայնքաղ շարականի* սկզբի թերթի վերայ.

«Տեղի աղօթք. Սուրբքն Սուրբ ինքն և Սուրբասանք. իժ մի ժանի և էր իբրև վարազին. կամին սպանանել զնա և ասէ. «Մինք սպանանել զնա, երդնում զնոյն Կենդանին, որ տարածեցաւ ի վերայ խաչին, որ տեղ որ յիշէին, այլ ոչ մերձենան ի տեղին, ջերմին և սարսափելոյն, զի հեռասցէ Ծառայս Աստուծոյ *այս ինչ անուն*»։

Մենաստանս ունի հին հին խուցեր, որք ունին նեղ լուսամուտներ և ցած դռներ և մի այգի, որի մէջ կան բաւականին պատուաստեալ թթենիք, որթ, կեռասի, ընկուզի և բանջարանոց։

Հարանց. վանուցս արևմտեան հանդէպ մի քանի քայլ հեռի կայ մի հին հանգստարան, որի մէջ կան ճգնաւորաց, վարդապետաց և միաբանից շատ հանգիստներ։

Ճգնարան. Ահա այս է Հարանցն։ Վանքիս արևելեան հանդէպ գետակի աջ ափի քերծում մի քարայր է, որի մէջ կայ երեք պատուական խաչքար և որի մէջ, աւանդաբար ասում են, ճգնած են ճգնազգեաց անձինք։

Կաղնի խաչ. Գիւղիս արևմտեան հիւսիսային կողմում, ձուաձև բարձրացած երկու սարերի մէջ ընկած մի սեռի վերայ կայ երեք հնագարեան խաչարձան, որ իբր ուխտատեղի յարգուած է հասարակութիւնից։

Ծիրանաւոր. Կաղնի խաչից բաւական վերև, նոյն ճանապարհի աջ կողմում կայ աւերակ եկեղեցի, գիւղատեղի և հանգստարան։

Նահատակ. Գառնակերի հիւսիս արևելեան կողմում, նոյն Շամքոր գետակի աջ ափի վերայ կայ մատուռ, ձեղունն փայտաշէն, որի մէջ կայ մի գերեզման. որ է անունն անյայտ նահատակի գերեզմանն։

Դ. ԲԱՐՍՈՒՄ ԳԻՒՂ. Հիմնուած է Եամքոր գետակի ձախ ափի վերայ Գառնակերից մօտ մի մղոն վար. բնակիչք գաղթած են Անի քաղաքից, հողն արքունի, անջրդի, շիկահող, և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն, խոր ձոր է գիւղի տեղն, նեղ հովիտներն, խեղդուած տեսարանն, երկար կեանք 80 տարի, եկեղեցին նորաշէն, կիսատ, չորս սիւների վերայ. երկարութիւնն 22 մետր, լայնութիւնն 11 մետր 40 սանթիմ. քահանայ մի: Ծուխ 154, ար. 614, իգ. 472, ար. ծ. 28, իգ. 21, պս. 10, ար. նն. 10, իգ. 8:

Գրչագիր աւետարան, թղթեայ, անարուեստ են չորս աւետարանչաց պատկերներն, նկարներն, և կեղծ գոյներն: Ցիշատակարանից. «Եւ արդ դրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՌԻԸ. ձեռամբ մեղուցեալ և անարժան Յովհաննէս եպիսկոպոսի 'ի գերահռչակ ուխտիս Եւստաթէոսի սուրբ առաքելոյն ԹՌԸՃ. (9800) սուրբ նչխարացս որ աստ կան հաւաքեալ ի մէջ տաճարիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին 'ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի Սղուանից կաթուղիկոսի....»: Ստացողն է «Յակովբ էրեց»:

Գիւղիս մօտերքում կայ երեք եկեղեցի և երկու վանք:

Ա. քարուկիր և փոքր եկեղեցի, որ կայ գիւղիս հարաւային հանգստարանի տակ՝ փայտաշէն ծածքով. դռնագլուխ փայտի վերայ. «Թիվ. ՌՃԵ. էր»:

Բ. Գիւղիս հին եկեղեցին, որ կայ հիւսիսային հանգստարանի մօտ, նոյնպէս փայտաշէն ծածքով:

Գ. Թռան (բարձր տեղ թառած) եղջի վերջին հանգստարանիս մէջ մի սեռի վերայ: Կանգուն մնում են միայն չորս պատերն, միջումն բուսած է մի բռշնի ծառ:

Ա. Վանքն կայ գիւղիս արևելեան կողմում այգիների մէջ, որի չորս պատերն քարուկիր, ծածքն փայտաշէն, անունն անյայտ, մեծութիւնն միջակ:

Բ. Վանքն Սուրբ Հռիփսիմէ, որ կայ այգիներում *Ակուրանց ընդում*: Ամբողջապէս քարուկիր եղած է վանքս, խոնարհած է առաստաղն, որ փայտաշէն է այժմ: Այս է

Գօշ-Մխիթարի ակնարկած Հռիփսիմէի մենաստանն: Համարեա թէ ընդարձակ հանգստարաններով շրջապատուած է գիւղս: Տեղացի ծերունիք այս երևոյթը բացատրում են հետևեալ կերպով. «Լաղկին (Լեկզի) քանի հետ (անգամ) եկած, սարսափելի պատերազմներ արած, թալանած, կոտորած և գերիներ տարած է, մանաւանդ այստեղ մեր Ձորն հաւաքուած հայոց հետ: Քանի հետ զալապատղ արած են Եամքոր գետիս աջի ձորում [1]): Ձորս կողմի հայերն հաւաքուած են ձորս պատերազմների ժամանակ. կռիւներում նահատակուած բոլոր հայերն թաղուած են այս հանգստարաններումս, սրան համար էլ չտացալ ա մեր դերեզմանուտը»:

Ներքին-Ղօթիւլ. Գիւղատեղի հանգստարան և եկեղեցի, որք են Եամքոր գետակի աջ ափի վերայ, ուր կայ և հնուց մնացեալ այգիներ:

Մէլիք-Առստամի ծագումն.

(Պատմական աւանդութիւն) «Բարսում գիւղացի Մէլիք-Առստամի նախնիքն ծագած են Բագրատունի թագաւորաց սերնդից, այս է Կիւրիկեան թագաւորների յետագաներից»: Կիւրիկեան Բագրատ Բագրատունի իշխանն գինուորական ծառայութեան է մտնում Վրաց մի թագաւորին մօտ, բայց անբաւականութեան պատճառաւ մի ժամանակից յետոյ ելնում է նոյն ծառայութիւնից և գիմում Պարսից Շահ-Աբաս առաջնոյն: Նախ ներկայանում է Պարսից նախարարական ժողովին, ծանօթացնում իւր Բագրատունի լինելը և փափագ յայտնում գինուորական ծառայութեան մէջ մտնելու: Շահ-Աբաս իւր նախարարներից իմանալով Բագրատի նպատակը՝ ընդունում է զինքը գինուորական ծառայութեան մէջ, այնուհետև հետզհետէ փորձով տեսնելով Բագրատի հաւատարմութիւնը և կամենալով վարձատրել նորա ծառայութիւնը՝ Շահ-Աբաս խանութիւն է տալիս նրան: Բագրատ

[1]) Ձորս, ծածկուած է մշտադալար դի ծառերով, բաւական խոր ահարկու, դժուարամատչելի և ապահով է պատսպարուելու համար: Այս տեղ կայ հարկ եղած անհրաժեշտ պիտոյք—պատուական ջուր, վառելափայտ, ջրաղաց: Մուտքն գետակի աջ կողմից է:

խանից ծնուում է Աւստամ-բէկն, Աւստամ-բէկից՝ Այտին-բէկն, Այտին-բէկից՝ Աւստամ-բէկ բ. որ ստանալով մէլիքութեան հրովարտակ գալիս է նախ Կուսապատ աւանն, ամուսնանում Ալբէս-աղայի Վարդխաթուն դստեր հետ, ապա գալիս Գանձակ Շահվերտի խանին մօտ ներկայացնում շահական հրովարտակը և այնուհետև բնակութիւն հաստատում, իր նախնիքներից ժառանգութիւն մնացած, Բարսում գիւղում և տիրում Մլզնաբերդից մինչև Եօթն-աղբիւր (Եօտիբուլաղ)։

Կիւլստանի Մէլիք-Աբով Գ. ամուսնանում է Մէլիք-Աւստամիս դստեր հետ և հաստատում սերտ բարեկամութիւն։ Մէլիք Աւստամիցս ծնուում է Ստեփան-աղան. իսկ սորանից ծնուում են Գրիգոր, Աւագ, Աւետիս, Յարութիւն, Ստեփան, Աւստամ, Յովսէփ և Մկրտիչ աղաներն։ Մէլիք-Աւստամն մինչև իր մահն ապրում է քաջութեամբ, տիրում իր սեփական ժողովրդեան, որ գաղթած է Անի քաղաքից և բնակութիւն հաստատած Բարսում գիւղում և իշխում Մլզնաբերդին և ի թիւս այլ գիւղօրէից Քարատակ [1]) Համշափոր [2]), Վերին-Ղօթիւլ [3]) և Ներքին-Ղօթիւլ [4]) գիւղերին։ (Աւերակներս ընկած են Գարդման գաւառի արևմտահայեաց ծայրում։

Մէլիք-Աւստամիս գերեզմանն գտնուում է Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու գաւթի հարաւային կողմում, որի տապանաքարի վերայ քանդակուած է.

«Անմոռաց յայս տապան քաջ անուանի
Հանգչի մարմին Մէլիք-Աւստամի [5]),
Յաղթէն Բագրատունի Հայկազանց տոհմի,

[1]) Այժմ աւերակ գիւղ, եկեղեցի և հանգստարան, որ կան Նիւկղարից նոր-Փիփ տանող ճանապարհի վերայ։

[2]) Նոյն այժմ աւերակ, որի մէջ կայ և եկեղեցի և հանգստարան, որ կան նոյն ճանապարհի արևելեան կողմում, Քարատակից մղոնաչափ վերև։

[3]) Նոյն ճանապարհի արևմտեան կողմում եկեղեցի և հանգստարան։

[4]) Բարսում գիւղիս հարաւային հանդէպ, գետակի աջ ափի վերայ. ՅՇում է եկեղեցին, որի շուրջն հանգստարան է։

[5]) Մէլիքիս ծագման և իրաւանց և գործնէութեան մասին գրած է Գերազնիւ պօլկովնիկ Յ. Դաւթեան Լազարեանց տպ. ի Թիֆլիս 1877 Կովկաս. գլխաւոր Կառ. տպարանում ռուսերէն լեզուաւ։

Տիրող Բարսում, Գանձակ նահանգի,
Ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի»։

Ե. ՋԱԿԻՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Բարսումի հիւսիսային կողմում, մի տեսարանաւոր տեղում. բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80—90. եկեղեցին Սուրբ Աստուածածին. քահանայ մի։ Ծուխ 110, ար. 459, իգ. 349, ար. ծն, 22, իգ. 18, պսակ 10, ար. ննջ. 9, իգ. 5։

Զ. ՁԱՐՏԱԽԼՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Ջակիրի արևմտեան կողմում մի հարթավայր տեղում. որի բարձ. 5181, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի, հացաւէտ. տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80—90 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, քահանայ մի։ Ծուխ 200, ար. 770, իգ. 550, ար. ծն. 40, իգ. 31, պսակ 20, ար. ննջ. 15, իգ. 10։

Տղայոց միդասեան ուսումնարան. աշակերտք 35, միամեայ ռոճիկ վարժապետին 300 րուբլի։

Գիւղիս մօտ է *Ոսկան նահատակ* անուամբ ուխտատեղին, որ *Բուլանլուղ* ևս է կոչուում։

Է. ՊԱՏԻ ԳԵՂ. Հիմնուած է մի բարձրահայեաց (4973 ոտք) տեղում. բնակիչք եկած են Զրաբերդից, Փամբակից և Ղարա-Մուրատ գիւղերից. հողն արքունի, անջրդի, բայց բարերբեր. տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի։ Ծուխ 245, ար. 735, իգ. 713, արակ. ծն. 50, իգ. 48, պս. 28, ար. ննջ. 15, իգ. 14.

Ը. ՂՈՒԼԱԼԻ ԳԻՒՂ. Հիմնուած է մի խոր ձորում Տաւուշ գետակի օժանդակի (Ախնջի) վտակի աջ ափի վերայ, որ սահմանագլուխ է Փառիսոս և Քաւս գաւառների. (նախկին բնակիչք գերի տարուած են Պարսկաստան). այժմեան բնակիչք նախ՝ Փառիսոս քաղաքից տեղափոխուած են Մեծ-Ղարա-Մուրատ գիւղն, ապա այստեղ. հողն արքունի, սակաւ,

միջակ արդիւնաբեր. օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանքն 80—90 տ. եկեղեցին Սուրբ Յովհաննէս, ծածքն փայտաշէն, քահանայ մի, որ եկած է Բաշ գեղից: Ծուխ 114, ար. 742, իգ. 601, ար. ծն. 31, իգ. ծ. 26, պս. 15, ար. նն. 8, իգ. 6:

Եկեղեցումս կայ չորս գրչագիր.

Ա. Աւետարան թղթեայ, փոքրագիր. անճաշակ են չորս աւետարանչաց պատկերներն և նկարներն, բայց գեղեցիկ են փոքր տառերն: *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ սայ 'ի թուաբերութեանս Հայոց ՉԾԴ. յԱրարատեան գաւառիս ի տեղիս որ կոչի Նորագեղ»: Անյայտ է գրողի անունն, նախկին տացողն է Սիմէօն անուն ոմն քահանայ, երկրորդ տացողն է Թանում Հայոց ՋՂԹ.-ին:

Բ. Աւետարան թղթեայ, փոքրագիր, բազմապատկեր, սակայն անարուեստ, անճաշակ և առանց յիշատակարանի:

Գ. Աւետարան թղթեայ, փոքրագիր, գրուած Հերմինէ վանքում, չունի թուական, անյայտ է գրողն:

Դ. Աւետարան փոքրագիր, թղթեայ. *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌՃԾԸ. ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի կաթուղիկոսին, թագաւորութիւն Պարսից Շահ Սիլէմանին գրեցաւ ձեռամբ . . Յովհաննիսի 'ի յերկիրս Գանձակու 'ի գեաւղս, որ կոչի Հարցոակիս(տ) 'ի դրան Սուրբ Մլոնաբերդին. ի դառն ժամանակիս աւարտեցաք որ հարկապահանջութիւն բազմացեալ էր և անօրէնքն յամենայն ժամ խրոխտային 'ի վերայ քրիստոնէից ազգին»:

Խորանաշատ վանք (51)

Հիմնուած է նոյն օժանդակ վտակի աջ կողմում, Ղուլալի գիւղի արևելեան կողմում, մի գեղեցիկ հովտի մէջ: Արևմտահայեաց ձորակիս աջ կողմում կառուցեալ է վանքս համակ տորոնագոյն սրբատաշ, պատուական քարով չորս կամարների վերայ, որոց գլխին կանգնած է մի գեղեցկաձև կաթուղիկէ: Տաճարս հրաշալի է Գանձասարից յետոյ. ունի

մի աւագ և չորս փոքր խորան (իրարու վերայ) երկու խորհրդանոց, երկու դուռն, 13 մետր երկարութիւն, 10 մետր 55 սանթիմ լայնութիւն: Աւագ խորանի ստորոտով, գաւառահայեաց կլոր երեսին վերայ շինուած ին տասն փոքրիկ, գեղեցիկ և խորանաձև կերտուածներ: Փորագրուած է խորանի մօտ.

«ՈԿԹ. ես Աւետիք Սրուժեցի միաբանեցայ Խորանաշատ Սուրբ Աստուածածնին (ս) և ետու զծախս այսմ խորանիս յիշատակ ծնողաց և եղբարց իմոց Շաւուրին և Ասլիբատին և վարդապետն հաստատեաց Բ. ժամ յայսմ խորանիս, Ա. ի տանէն Վարդավառին և Ա. Վարագայ խաչին անխափան. հաստատ է կամաւն Աստուծոյ»: Աւագ սեղանի ետև փոքրիկ խորաններէն գլխին. «Անդրէաս ՈԿԷ.» «Յովսէփ քահանայ ՈՀԱ.»:

Հիւսիսային փոքր խորանի վերայ.

«ՈԿԵ. ես Աբրահամ Կանաչհողեցի [1]) և ամուսին իմ միաբանեցաք Խորանաշատու Աստուածածին (նին), ետու զծախս խորանիս և վարդապետն հաստատեաց ինձ Բ. ժամ ի տանէն Սուրբ Գրիգորի անխափան»:

Վանքս իւր արևմտեան կողմին կից ունի հրաշազան գաւիթ կառուցեալ չորս միատաղաղ և կլոր սիւների վերայ՝ նոյնպէս շինուած սրբատաշ քարով: Գաւիթս ունի 16 մետր 6 սանթիմ երկարութիւն, 15 մետր 90 սանթիմ լայնութիւն և չորս փոքր խորան, որոց երկուսն իրարու վերայ դրան հարաւային կողմում և միւս երկուսն հիւսիսային: Տաճարիս արևելեան որմի վերայ արտաքուստ. «Յանուն Աստուծոյ ես Գրիգոր որդի Վասակայ Միջկա շինեցի զԿաւշկակերանց [2]) և տուի ի Սուրբ Աստուածածինս Խորանաշատու. վարդապետն հաստատեց մեզ Բ. պատարակ ի տանէն Հոգեզալստեան Ա. ինձ և Ա. ամուսնոյ իմոյ, կատարիչքն...»:

Գաւթի հարաւային որմի վերայ կայ արևի ժամացոյց: Այժմ տեղ տեղ քայքայուած են վանքիս և գաւթիս սալկախներն և շրջապարսպի պատերն. մի վանք, որ զարմաց-

[1]) Կանաչ-հողեցի: [2]) Կոշկակերանց:

նում է այցելուները իւր երկնանման շինութեամբ և լացացնում իւր անցեալի փառքով և ներկայիս աւեր և ամայի դրութեամբ։

Մենաստանս ունի և շրջապարիսպ, որի ներսում, տաճարի հարաւային կողմում կայ մի փոքր մատուռ՝ շինուած սրբատաշ քարով, որը տեղացիք անուանում են *Սուրբ Կիրակի*։ Այստեղ կայ մի կիսաւեր մատուռ ևս՝ շինուած հասարակ քարով, որի մէջ կան ամփոփեալներ։

Երրորդ մատուռն, որ շինուած է սրբատաշ քարով, պարսպից դուրս արևելեան կողմումն է, միաբանից հանգստարանում։ Խոնարհուած է մատրանս գլուխն, որի մէջ, ասում են, է Վանական վարդապետի գերեզմանն. որպէս վկայում է և Կիրակոս, բայց տապանաքարն չունի արձանագրութիւն։

Վանքս ունեցած է մեծ կալուածներ և հողեր, որովք ապահոված է եղել վանիս ապագան. այժմ միայն մնացած է 15 օրավար անվիճելի հող, մի աւերակ ձիթահանք, ծերունազարդ ծիրանի և ընկուզի ծառերով լի խոպանացեալ պարտէզ և պատուական քարահանք։

Աւերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարաններ կան վանքիս հեռաւոր և մերձաւոր շրջապատում *Բլուվիկ, Ձիլքինլու, Ղօշաջի, Աղ-Բուլաղ, Իրիցի շէն, Սղնախ եւ Ձինաղի* [1]) կոչուած տեղերում։

Ղուլալի գիւղից վերև, գետակի աջ կողմի լանջի վերայ կայ մի քարուկիր մատուռ, որի մէջ—ասում են Վանական վարդապետն բնակած է մի ժամանակ ստիպեալ Թաթարների երկիւղից։ Մատրիցս փոքր ինչ վերև կայ *գիւղատեղի*, աւերակ *եկեղեցի* և *հանգստարան*։

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ.

Ա. ՓԱՌԻՍՈՍ ԲԵՐԴ [1]). Համանուն աւերակ քաղաքին

[1]) Մի քանի գերդաստան հաստատելով Ղուլալի գիւղից բնակութիւն հաստատած են գիւղումն, որ կայ Խորան. վանքից ներքև Իւրեանց մայր գիւղի հաշուի մէջ է և սոցա ծխաթիւն և ամէն ինչ։

Հիւսիսային լանջին կից՝ բարձրացած է մի քարաժայռ սար, որ բաղկացած է կրաքարից և բոլորովին առանձնացած իւր երեք կողմերից։ Սարիս, որ համարեա թէ ձգուած է արևելքից արևմուտ դիրքով, արևելեան և հարաւային կողմերն վիմահերձ ապառաժներ են և լայնագոգ ու խոր խոր ձորեր, հիւսիսային կողմն ամենաստափակ զառիվայր լանջ և լայնագոգ ձոր. իսկ արևմտեան կողմից բերդատարս հաղորդակցութիւն ունի մի երկարաձիգ և թրաձև սեռով Ղանղալ սարի հետ։ Քարուկիր, բրգաշատ և ամուր պարսպով պարսպուած է ոչ միայն հիւսիսային և արևմտեան կողմերն, այլ և բարձր քերծերի գլուխներն։ Ամրոցիս երկարութիւնն է 100 մետր, լայնութիւնն մօտ 80 մետր. ունի մի դուռն արևելեան կողմից, տասներկու աշտարակ, 3 մետր 75 սանթիմ պատի հաստութիւն։ Բերդիս մէջ լի է աւերակների հոծ բեկորներով, որոց մէջ կայ երկու քարուկիր մատուռ, որոց գլուխներն խոնարհած են և չունին արձանագրութիւն։ Բերդս ունեցած է *անառիկ* բառի բուն նշանակութիւնը, սակայն այժմ տեղ տեղ քայքայուած են պարսպի պատերն։

Նշանաւոր է ամրոցիս ամենապատուական և յորդառատ ջուրն որ զարմացնում է այցելուները իւր ազնուութեամբ և առնութեամբ և հնարագէտ շինուածով։

Հիւսիսային պարսպին կից՝ ներքուստ շինուած են երկու պատկից քարուկիր և թաղակապ ստորերկրեայ սենեակներ, որք իրարու հետ հաղորդակցութիւն ունին մի մեծ դռնով, որ բացուած է միջնապատից։ Ա. սենեակն գրեթէ կիսով չափ լցուած է հողով. իսկ Բ-ն լի է ջրով։ Ասում են որ ջուրը ստորերկրեայ ականով բերած են Ղանղալ սարից՝ *հաղորդակից սեռովն*։ Պատմում են թէ հետաքրքիր անձինք ջրաւազանիս մէջ լցրած են յարդ, որ ելած է Ղարա-Բուլաղ անուն մեծ աղբիւրից՝ որ բերդիս հիւսիսային ստորոտի ձորումն է և դարձնում է երկու ջրաղաց։ Փորձով, որպէս

[1]) Արութիւնայ սարի հարաւային կողմում է Գինալ սարն 11057 ոտք. ապա Գեղամայ լճի և գաւառիս մէջ բնկած են իրր սահման Օկրուջա 11986, Սև խաչ (Ղարա խաչ) 10081 սարերն։

թէ իմացած են, որ մեծ աղբիւրն կապ ունի ջրաւազանիս հետ։

Բերդիս հարաւային քերծում կան վիմափոր այրեր, որոց մէջ կայ վիմափոր աննշարան։ Մուտքն ոչ եթէ բերդիս միջովն է, այլ արտաքուստ քերծի տակովն (52)։

Բ. ՄԱՄՈՒԻՏ ԲԵՐԴ (53). Հիմնուած է Զարէք անապատից վար Շամքոր գետակի և Գետաբակ վտակի ջրախառնուրդում։ Բերդավայրն թեքուած է դէպի Շամքոր գետակի ձախ ափն։ Բերդս ունի ամուր բուրգերով շրջապարիսպ, իսկ արևելեան կողմից կրկնապարիսպ. ունի չափաւոր մեծութիւն, ամուր դիրք, իւր միջում մի կոնաձև բլուր, զանազան մեծութեամբ քարայրներ և քարուկիր շինութեանց շատ փլատակներ։ Այժմ համարեա թէ անտառապատ և մացառուտ է ամրոցս և որջ եղած աւազակների. ահարկու են քարայրներն և սոսկալի անտառիս մէջ մտնելն։

Ջուր չկայ բերդումս, վասն որոյ ունի ստորերկրեայ ական, որով ջուր փոխադրած են բերդս Շամքոր գետակից։ Հետզհետէ քայքայուելու վերայ են տեղ տեղ ամրոցիս պարիսպներն։

Գ. Վահրամ իշխանի *ընդղաքաղաք* ամրոցն (այժմ կոչուում է *Ղալա-Բոյուն*), որ հիմնուած է մի ձկնաձև սարի վերայ։ Սարս գտնուում է Զակամ գետակի ձախ կողմում, որի դիրքն ձգուած է հիւսիսային արևմուտքից հարաւային արևելք։ Ահա սարիս վերայ է բերդն, որ միևնոյն ժամանակ եղած է և քաղաք ինչպէս ակներև երևում է խանութների, տների և եկեղեցիների աւերակներից։ Արդէն յայտնի է երեք եկեղեցու աւերակն, իսկ եթէ եղած է և այլ եկեղեցի, ոչինչ յայտնի չէ։ Շրջապարիսպն, որ տեղ տեղ կիսաւեր է, տեղ տեղ քայքայուելու վերայ, ձգուած է սարի դիրքի ձևով։ Բերդիս մօտ կայ և հանգստարան (54)։

Դ. Դղեակ, որ կոչուում է (Ղըզ-ղալա) որ գտնուում է Ղուլալի գիւղից բաւական վերև նոյն օժանդակի (Ախնջի) ալ ափի վերայ։ Ջրեզերքումս ցցուած է մի բարձր և սրածայր ժայռ, որ իւր արևելեան կողմից ունի մի գժուարատար և ոլոր մոլոր կածան։ Հազիւ թէ կալաչափ մեծութիւն ունի ժայռիս գագաթն, որի շուրջն տեղ տեղ նշմարուում են տակաւին քարուկիր պատերին հետքերն և ջրաւազանի վիմափոր փոսեր։ Դղեկաբարձ ժայռիս արևելեան ստորոտի հարթակում կայ մի եկեղեցի և հանգստարան (55)։

ԺԸ. ՓՈՒՍՏԻ կամ ՓԱԻՍ ԳԱԻԱՌ.

Ա. *Ղըղի* (ղարա-ղայա) *գիւղ*. Հիմնուած է նոյն (Ախնջի) օժանդակի ձախ կողմի բարձր սարի արևելահայեաց լանջին վերայ. բնակչաց մի մասն բնիկ և միւս մասն տեղափոխուած Ղարա-ղայա գիւղից (գտնուում է Թարսայ գետակի վերայ)։ Հողն արքունի, լեռնային և միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, գարնանի, ոչխար, տաւար, գոմէշ, խոզ, տանձ. խնձոր, պատուական օգն, կլիման և ջուրն, ուշագրաւ տեսարանն, 90 տարի երկար կեանքն, սուրբ Յովհաննէս Եկեղեցին, որ նոր կառուցեալ է վեց սիւների վերա, քահանան գալիս է Նորաշէնից։

Ծուխ 84, ար. 541, իգ. 449.

Կիսատ-խաչարձան. Ղըզ-ղալա-դղեկի հիւսիսային հանդէպ, նոյն օժանդակի ձախ ափում ճանապարհի վերայ ընկած մի կիսատ խաչարձան, որի արձանագրութիւնը, թէև եղծուած է տեղ տեղ, այնու ամենայնիւ արժան համարեցինք նոյնութեամբ ընդօրինակել. «. . . . . ուԹեամբ ողորմեալ ես . . . Կիւրիկէի, զԱբասայ աւագան է . . . որդեկիլը և զտէր Յովհաննէս և . . . . սի արձան շին . . իյո տափին աւետարան . . . ի ձորի բերաք աշխատութեամբ խաչս կանգնեցաք հանդիսիւ բարեխաւս առ Քրիստոս Յիսուս յահեղ աւուրն դատաստանի»։

Ջօլաւոր. Ղրղի գիւղիս արևմտահարաւ կողմում հարաւահայեաց մի խոր ձորի հարաւահայեաց լանջի վերայ կայ գիւղատեղի, հանգստարան և փոքր եկեղեցի, որի մօտ մի կոտորուած խաչքարի վերայ.

«Ես Յոհան հայր և եղբայր իմ Տիրածէր կանգնեցաք զխաչերս, Ք[ր]իստոս Աստուած ող. . . »: Հանգստարանում մի խաչքար տապանաքարի վերայ. «խաչս ոե. [Թիւ տէր Ա]թանասի. . . . »:

Եկեղեցուցս փոքր ինչ հեռի կայ մի հանքային *թթու ջուր*, որ յար և նման է Նուշուց վեր եղած թթու ջրին:

Վանական վարդապետի քարայրն (56)

Զօրաւորի հիւսիս-արևմտեան կողմում մի բարձր քերձի գլխին կայ մի քարայր, որի մէջ է մի վիմափոր փոքրիկ եկեղեցի և որի մէջ կայ մի գերեզման: Քարայրիցս հեռի չէ աւերակն, որի մէջ կայ եկեղեցի և հանգստարան: Աւերակս այժմ կոչուում է Շլորուտ (սալոր-սալորուտ): Ահա այս է Կիրակոսի «Ոլորուտ» անուած գիւղի աւերակն:

Բ. ԶՈՐԱԹԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Ղրղի գիւղի հիւսիսային կողմում, մի տեսարանաւոր տեղում. բնակիչք բնիկ, հողն բէկական, անջրդի, բայց հայաւէտ. տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 90—100 տարի. եկեղեցին սուրբ Յովհաննէս, ծածքն փայտաշէն և առանց փոքր խորանի, երկարութիւնն 18 մետր, լայնութիւնն 9 մետր 65 սանթիմ: Արտաքուստ դրան արևմտեան կողմում. «Թվ. ՌՃԼԲ. յանուն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովանէս եպիսկոպոսին Խորանաշատու»: Խորանի հիւսիսային կողմում. «Սուրբ խաչս բարեխօս Ովանէս եպիսկոպոսի աշակերտ տէր Դաւթի»: Քահանան գալիս է Մովսէս գիւղից:

Գրչագիր աւետարան թղթեայ, անճաշակ պատկերներով և անազնիւ գոյներով, գրուած է ոմն Սարգիս անուն անձի ձեռնով. «Արդ գրեցաւ սայ ի յերկիրս Աղուանից ի գաւառս Մաղաւուզայ ի գիւղս, որ կոչի Վաղազուն ի դուռն սուրբ ուխտիս Թվիս ռղա.»: Սառցողն է Մանկասար անուն ոմն: Իսկ գիւղիս Հանգստարանում, որ արևմտեան կողմումն է, կայ մի մատուռ *Բարձրեալ* անուն, որ ուխտատեղի է:

Ծուխ 28, ար. 198, իգ. 170.

Գ. ՄՈՎՍԷՍ ԳԻՒՂ. Հիմնուած է Տաւուշ գետակի ալ

կողմում մի ձորի մէջ. բնակիչք բնիկ, հողն արքունի և բազմարդիւն. տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն անվնաս, տեսարանն խեղդուած, երկար կեանք 80 տ. եկեղեցին սուրբ Գէորգ, քարուկիր, կիսատ. քահանայ երկու:

Ծուխ 74, ար. 507, իգ. 488.

Դ. ՆՈՐԱՇԵՆ ԳԻՒՂ. Հիմնուած Զօրաթանի արևմտեան կողմում մի փոքր ձորակի ձախ լանջին վերայ. բնակիչք բնիկ. հողն արքունի, անջրդի, հայաւէտ, տեղական բերքերն նոյն. անվնաս օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 80 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն 19 մետր 75 սանթիմ, լայնութիւնն 10 մետր 45 սանթիմ. քահանայ մի:

Ծուխ 38. ար. 351, իգ. 262.

Միջազեան ճխական ուսումնարան, աշակերտք 40, թոշակառու 35, տարեկան ռոճիկ վարժապետի 300 րուբլի:

Ե. ԿԱՐՄԻՐ-ԱՂԲԻՒՐ. (*զգըլ-բուլաղ*) գիւղ. շինուած է մի սարահարթի վերայ Նորաշէնի արևմտեան կողմում. բնակիչք բնիկ. հողն արքունի և միջակ բարեբեր. տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 88—95 տարի, եկեղեցին սուրբ Յովհաննէս ծածքն փայտաշէն. «Ես տէր Վարդանս շինեցի զեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ. ռճծ.»: «Սուրբ խաչս Խանաղին»: «Ովանէս եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս ձեռամբ տէր Գրիգորին»: Քահանայ մի: Ծուխ 105, ար. 602, իգ. 494.

Զ. ԲԵՐԴ-ԳԻՒՂ. (*Թովուզ-դալա*). Շինուած է Տաւուշ գետակի ձախ ափի վերայ. բնակիչք բնիկ. (մասամբ եկամուտ), հողն արքունի. անջրդի և միջակ բարեբեր, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն, կլիման և ազնիւ ջուրն, երկար կեանք 85 տարի. եկեղեցին սուրբ Գրիգոր (կանխաւ շինուած է եղել չորս սիւների վերայ, բայց խոնարհած է գլուխն), ծածքն փայտաշէն. երկարութիւնն 21 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 10 մետր 62 սանթիմ: Ներքուստ արևմտեան որմի վերայ:

«Անուն Աստուծոյ ես Թիվլիզեցի Չիլթախչից մղտեսի խոճա Սուլիս չինեցի եկեղեցիս, խորանս Շաղուոյին (՞) սրբազան եպիսկոպոսին Թաւուզա երկրիս Մէլիք-Ղորխմազին[1]) կամակցութեամբ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոյ Թաղի և Էկիսուլթանի և կողակցին իմոյ Դարիճանին և որդոյ իմոյ Ստեփանին և կողակցին Աւլիզատին, Յարութիւնին և կողակցին Էկիսուլթունին և Պօղոս Սարկաւագին և դստերացն իմոյ Ապաչխարող Աննային և Հռիփսիմէին, Շահրուպանին և իւր դուստր Քեոժվանին, փեսայ Մելքոնին և իւր դուստր Էկիսուլթանին»: Քահանայ մի:

Ծուխ 101, ար. 598, էգ. 458.

Գիւղիս արևմտեան կողմում կայ *Սուրբ Սարգիս ուխտատեղի* քարուկիր մատուռ, որի մօտ կայ ընդարձակ հանգստարան:

Սուրբ Սարգսից վերև *Աւազ-Սուրբ-Նշան* քարուկիր մատուռ, որի մօտ կայ մանր խուցեր և որ ուխտատեղի է:

Գիւղիս հարաւային կողմում, գետակի աջ ափի վերայ մի ծառի տակ կայ մի վարդապետի գերեզման:

Է. ՆԱԻՈՒՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Բերդի արևմտեան կողմում. բնակիչք հաւաքածոյ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն պատուական, երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին. քահանայ մի: Գիւղիս մօտերքում կան մանր լճակներ և գեղեցիկ խաչարձաններ.

Ծուխ 34, ար. 253, էգ. 205.

Ը. ՏԱՒՈՒՇ ԳԻՒՂ (57) Թովուզ. Հիմնուած է Բերդ գիւղի հիւսիսային կողմում, մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք հաւաքուած[2]) զանազան տեղերից. հողն արքունի

[1]) Անկարելի եղաւ իմանալ թէ սա ինքն միայն իշխած է Տաւուշի ձորիս, թէ եղած էն և այլ իշխողներ. մէլիքութիւնը իւր նախնիքներից ժառանգած է թէ իրանից սկսուած է, յետագայ իշխող մէլիք ժառանգ ունեցած է թէ ոչ: Միայն յայտնի է, որ հայ եղած է և մականուն է ՂՈՐԽՄԱԶՆ և ոչ մկրտութեան:

[2]) Աւանդաբար ասում էն «ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԳԵՐԻ ՏԱՐԱԾ ԵՆ ԳԻՒՂԻՍ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ»:

և սակաւ արդիւնաւէտ. տեղական բերքերն նոյն (կայ և այգի). անվնաս օդն, կլիման, պատուական ջուրն, նեղ հորիզոնն, խեղդուած տեսարանն. 80 տարի երկար կեանք, սուրբ Աստուածածին եկեղեցին, ծածքն փայտաշէն, բեմն և ժողովրդա հայեաց երեսներն խաչազարդ, որք բերուած են հին հանգստարանից, մի քանիսին վերայ կայ արձանագրութիւն.

«Սուրբ խաչս է Վանէսին և Հռիփսիմեայ և Գոհարին և ի վեր Քրիստոս Աստուած, վաշ վաշ... Վարդան կազմող (խաչիս) ՌԿԷ.»:

«Սուրբ խաչս բարեխաւս Փարուն»:

« ,, ,, ,, Մխիթար... Քիրամ կազմող թվ. ՌՀԹ.»:

Եկեղեցուս հիւսիսային կողմում կայ մի առանձին փոքր խորան (բացի փոքր խորանից) որ ուխտատեղի է. ոչ ոք չգիտէ գիւղացիներից թէ ինչ ուխտատեղի է: Քահանան գալիս է Բերդից:

Ծուխ 95, ար. 663, էգ. 502.

Գիւղիս անդերում կան հետևեալ աւերակներն.

1) ԽԱՉԱ ՂԲԻԻՐ գիւղիս հիւսիսային կողմում, որի մօտ կան խաչարձաններ:

2) ՔԱՐՈՒԿԻՐ ՄԱՏՈՒՌ Դռընկեանայ բերդի հարաւային ստորոտում, որ ուխտատեղի եղած է կանխաւ (գիւղիս արևելեան կողմում):

3) ՍՈՒՐԲ ԿԻՒՐԱԿԻ մատուռ (գիւղիս հարաւային հանդէպ Կածարէթի լանջի վերայ) որի մէջ կայ քարեայ խաչարձան՝ մնացեալ ի հնուց՝ և որ ուխտատեղի է:

4) ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ՄԱՏՈՒՌ (Կածարէթի մօտ հարթակի վերայ հին հանգստարանում, գիւղիս հարաւային հանդէպ), որի ծածքն փայտաշէն է և ունի խորանումն մի խաչարձան:

5) ՉԻՆՉԻՆ. Գեղեցիկ ցանքսերով զարդարուած բարձր սարահարթ (գիւղիս արևմտեան կողմում), ուր կայ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որի ծածքն փայտաշէն է:

6) ՂՈՉԱՆԱՅ ՇԻՆԱՏԵՂ. *Չինչինի արևմտահիւսիս կողմում, ուր կայ Հանգստարան և մի աւերակ եկեղեցի, որից մնացած է միայն սեղանի կլորակ թաղն։*

7) ԿԱՊՏԱՎԱՆԻ. *որ գտնուում է Ղոզանայ շինատեղի արևմտեան կողմում մի անտառապատ սարահարթի վերայ, որի հիւսիսային խորանդունդ ձորով հոսում է Հախում վտակն։ Վանքս շինուած է կապտագոյն*[1]) *մեծ մեծ և անտաշ քարերով։ Վանքս կառուցեալ է չորս կամարների վերայ, որոց ոտքերն զետեղուած են պատերում։ Մենաստանս ունի խաչաձև շինուածք, մի աւագ խորան, չորս փոքր խորաններ, երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, մի գեղեցկաձև կամուղիկէ, 11 մետր 50 սանթիմ երկարութիւն, 9 մետր լայնութիւն և երկու խորհրդանոց։* *Արեւմտեան ղրան վերայ.*

«Ա. աւր պասխային նոր կիւրակին ես Հանէս արդեամբ կառուցի եկեղեցիս Հոգոյ իմոյ. . . . Թվ. Ո.»։ *Հարաւային ղրան վերայ.*

«Անուամբ Աստուծոյ ես Աջիշէր որդի Գորգորոյ ըմբերիս միաբանեցայ այս եկեղեցիս. բնակիչք եկեղեցուս զրեցին Բ. պատարագ յայտնութեան ճրագալուցին ինձ, միւսն ամուսնոյն իմոյ, կատարողք աւրհնեալ եղիցին»։ Սորա մօտ. «ՈՁԳ. ես Աբլհասնն միաբանեցայ այս եկեղեցիս և հայրս և միաբանքս զրեցին մին աւր պատարագ սուրբ խաչին. . . . »։

Մենաստանս ունեցած է մի քանի խուցեր և ընդարձակ. բայց այժմ տեղ տեղ թափուած են կամուղիկէի և տանեաց սալկաններն, միջից ջարդուած է սեղան քարն, քայքայուած են Ղազարեի հարաւային և արևմտեան վերնամասերն, ընդարձակ և խուցերի ամենամեծ բաժիններն։ Բայց կան ամփոփեալ միաբաններ վանքիս մօտերքում։

Մենաստանս իւր հարաւային կողմում ունի մի նշանաւոր աղբիւր, որի ջուրն՝ իւր հազուագիւտ ազնուութեամբ,

[1]) Դուրէ այս յատկութիւնից ստացած լինի ԿԱՊՏԱՎԱՆԻ անունը կամ ԿԱՊՏԵԼ բայից կազմուած։

ասես՝ թէ անմահական է։

Թ. ԹԱԹԼՈՒ ԴԻՒՂ. *Հիմնուած է Տաւուշ գիւղի հիւսիսային կողմում Հասան վտակի աջ ափում. բնակիչք բնիկ (նախ բնակած են եղել Պառաքար կոչուած տեղում, որ գտնուում է միևնոյն անդում, ապա փոխուած են այստեղ) հողն արքունի, սակաւ և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն, օդն և կլիման ծանր ամրան և տենդաբեր. երկար կեանք 70 տարի, եկեղեցին սուրբ Յովհաննէս, ծածքն փայտաշէն. քահանայ մի։*

Ծուխ 96, ար. 519, իգ. 415.

Ժ. ՀԱԽՈՒՄ ԴԻՒՂ. *Հիմնուած է Թաթլուից վերև նոյն վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք հաւաքուած են զանազան տեղերից. հողն արքունի և միջակ արդիւնաբեր. ջրարբի են վտակահովիտներն. տեղական բերքերն նոյն. համարեա թէ նոյն են օդն և կլիման, ջուրն պատուական, երկար կեանք 75 տ. եկեղեցին Սուրբ Նշան. ծածքն փայտաշէն, քահանայ մի։*

Ծուխ 82, ար. 448, իգ. 379.

Ցամաքումն կան հետեւեալ աւետարաններն.

Ա. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, անյայտ գրողի անունն, ժամանակն և տեղն։

Բ. Աւետարան թղթեայ, մեծագիր. Ցիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն և ի նեղ ժամանակիս ի լաւ, ընտիր աւրինակէ ի յերկիրս վերին Ջաղան 'ի գիւղս՝ որ կոչի Շաքար բէկ ձեռամբ մեղաւք զառածեալ Յովհաննէս իրիցու, որ եմ ի յերկրէն Գանջայոյ 'ի գեղէն Շատախոյ, որդի մահտեսի Դաւիթ քահանայի 'ի հայրապետութեան սուրբ Ամոռոյն Էջմիածնայ տեառն տէր Մովսէսին, որ կրկին լուսաւորեաց զՀայաստան աշխարհս և յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, հայրապետութիւնն Աղուանից տէր Յովհաննիսին, որ մատնեցաւ ի ձեռն պարսիկ ազգին, տարան ի դուռն Շահին, վերջն Աստուած գիտէ և եպիսկոպոսութեան պարոն

տէր Բարսեղին ի թուականիս հայոց ՌՁՒ. ի ժամանակս Տաճ Աբասին....»: Յետոյ գրուած է կարմիր թանաքով. «Աստուածաշունչ աւետարանս վախմ 'ի արէ 'ի դուռն սուրբ Աստուածածնի տաճարիս, որ է հարանց անապատ Ղարամուրատու... առաջնորդ սուրբ ուխտիս Յովհաննէս եպիսկոպոս հարանց անապատիս Ղարամուրադու թիւին ռճիգ.-ին գրեցաւ ձեռամբ անարժան Եղիա աբեղային...»: Հուսկ յետոյ շարայարուած է. «Ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ սուրբ աւետարանս 'ի դուռն Եղնասարա անապատն... Պետրոս սարկաւագին ՌՁՂ. ապրիլ ա.»:

Գ. Աւետարան թղթեայ, միջակ գիրքով, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ, բայց չունի ոչ յիշատակարան և ոչ թուական:

Դ. Աւետարան թղթեայ, փոքրագիր. *Յիշատակարանից.* «Արդ գրեցաւ սայ յամի թուաբերութեանս Հայոց ՋԾԴ: ի վանս Գլակայ ի դուռն սուրբ Կարապետի ձեռամբ.. Մարտիրոսի, որ մականուն աբեղայի, ի հայրապետութեան տէր Սարգսի Հայոց Կաթուղիկոսի...»:

Ե. Աւետարան թղթեայ, պատկերազարդ. (խիստ անճաշակ և անարուեստ). «Արդ գրեցաւ աւետարանս յընտիր աւրինակէ ի թուիս Հայոց ՈԼԵ. ի գեաւղն՝ որ կոչի Դմնիկ ի դուռն սուրբ Սարգսին ձեռամբ Ներսէս գրչի» (գրուած է Ղուկասի վերջում): Տաճարումս ամփոփուած է Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանի մարմինն:

Պառաւաքար. Այս անուն ուխտատեղի կայ Հախումի հիւսիսային հանդէպ համանուն վտակի ձախ կողմում, մի բերդաձև սարի գլխին: Չորս քարով պատուած է ուխտատեղուս շուրջն, որի մէջ կայ չորս խաչաքար տապանաքարով գերեզման. և այլ համանման *գերեզմանները:*

ԵՒԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ:

Հիմնուած է Հախում գիւղից բաւական վերև, Հասան վտակի ձախ ափին, մի բարձր և ցից ժայռի ներքև, ճանա-

պարհի տակ: Վանքս կառուցեալ է խաչաձև, տաշուած մոխրագոյն չիչ քարով. ունի մի աւագ և չորս միմիանց վերայ շինուած փոքր խորան, երկու դուռն արևմտեան և հարաւային կողմերից, երկու խորհրդարան, մի գեղեցիկ կամարակապ: 9 մետր երկարութիւն, 7 մետր 40 սանթիմ լայնութիւն: Հարաւային դրան վերայ եղած է գաւիթ, որ փլած է այժմ: Գաւթիս արևելեան կողմում կայ խորան, որի ճակատակալ քարին վերայ.

«Յամի Կ երորդի, և, երորդի նորո չրջակայիս[1]) ես տէր Գրիգոր շինեցի խորանիկս Աստուածաբնակ հրամանաւ Սադրնոս մեծի իշխանի վասն յիշատակի ննջեցելոց իւրոց և յաւետենականութիւն անձին իւրոյ, որք սպասաւորէք ի սմա, գիս զտէր Գրիգոր և զծնողս իմ յաղաւթս յիշեսջիք ընդ նմին և այլ զաղգատոհմն».

Տաճարիս հիւսիսային փոքր խորանի ճակատին.

«Յանուն Աստուծոյ ես Դանիէլ և Այլարայ միաբանեցաք վանքս և տուաք յայտնութեամբ Ծամհերայ տղին.....»: Ուշագրաւ է այն երևելի խաչարձանն, որ կանգուն է տաճարիս հարաւ-արևմտեան կամարակալ ոտի ճակատին. այո՛, ասում եմ որ իւր գեղարուեստի նրբաքանդակ ճարտարութեամբ զարմացնում է այցելուները: Վանքիս բուն արձանագրութիւնն կայ արևմտեան գռնագլուխ քարի ճակատին, որը անկարելի եղաւ կարդալ:

Վանքս ունի և երկրորդ գաւիթ իւր արևմտեան կողմում, որի վերնամասն-թաղն-շինուած է սրբատաշ չիչ քարով՝ երկու սիւների վերայ և որի երկարութիւնն հիւսիսից հարաւ 10 մետր, արևմտից արևելք 9 մետր 40 սանթիմ է: Այժմ խոնարհուած է գաւթիս գլուխն, որ իւր մէջ ամփոփուած ունի շատ ննջեցեալներ, բայց անարձանագիր են

[1]) Փառիսոսցի Յովհաննէս-սարկաւագ վարդապետն շինած էր մի նոր տումար փրկչական 1116-թուին, որ կոչում է նոր թուական, երբ սարկաւագապիր 1 թուականս հաւասար է փրկչ. 1116-ին և Հայոց ՇԿԵ.-ին: Ուրեմն 65 (կէ.) «ՆՈՐՈՑ ՇՐՋԱԿԱՑԻՍ» հաւասար է փրկչ. 1181-ին, որ է վանքիս հիմնարկութեան թուականն:

տապանաքարերն: Ճաճարս ունեցած է շրջապարիսպ և միաբանից խուցեր, սակայն քանդուած են այժմ: Վանքիս տանեաց վերայ բուսած են ծառեր: Վանքիս արևելեան կողմում, ոչ այնքան հեռի, կայ գիւղատեղի և Հանգստարան Եխմուրատ անուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԱՒԵՐԱԿՆԵՐ. վանքիցս բաւական վերև վտակաձորիս ձախ կողմում կայ *Քարագեղ, Աղ-սու* եւ *Խաչքուլաղ* անուն գիւղատեղի, Հանգստարան և կիսաւեր ու աւերակ եկեղեցիներ:

ՋԻՆԱՐԻ կոչուած տեղում, որ կայ Հախումեցւոց գոմերի մօտ, կայ գիւղատեղի և սուրբ Գէորգ անուն մի մատուռ, որի մէջ կան խաչարձաններ և որի ծածքն փայտաշէն է:

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՎԱՆՔ (58)

Հասան վտակի ձախ կողմում մի տեսարանաւոր սարահարթի վերայ հիմնարկուած է հրաշալի վանքս, որ շրջապատուած է թանձր անտառով: Շինուած է յար և նման Գանձասարի ձևով, բայց երկնագոյն սրբատաշ քարով, որ ունի մի աւագ և ութ փոքր խորան (չորսն արևմտեան կողմում) մի գեղեցկաձև կաթուղիկէ, երկու գուռն հարաւային և արևմտեան կողմերից. 15 մետր 60 սանթիմ երկարութիւն 10 մետր 70 սանթիմ լայնութիւն: *Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ.* «Շինեցաւ եկեղեցիս ձեռամբ Յովհաննէս վարդապետի հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց իշխանի Վասակայ որդւոյ... պոռնկի բարսաւ (?) և սահնակեցար չարաչար» (թերիմաստ է բանս):

Տաճարիս հիւսիսային դրան վերայ ներքուստ.

«Ի թվ. ՈԶ. (1231) ընդ այլ աշխարհս հոլովս հարաւ գաւազան և ցասումն Աստուծոյ գաւառն Խլաթա ի ձեռն Խորազմին և Թամթարին, ընդ որս և մեծահռչակ սուրբ ուխտս Վարագային շինեցեալ վասն մեղաց մերոց յայսմ ամի. ես Ղուկաս հայր Վարագայ առեալ զտիեզերահամբաւ սուրբ

նշանն զնորհեալն յԱստուծոյ ի փառս մարդկան ի ձեռն Պատրոնիկեայ և սուրբ Հռիփսիմեանց և Թոդկաւս վեց ամ շրջեցայ թափառեալ ի տեղւոյ ի տեղ. ապա ի կամն Աստուծոյ ամենատես խնամոյ տեառն հասի ի նոր բերդն առ Քրիստոսասէր իշխանն Վասակ յաստուածարնակ անապատ կոչեցեալ վանքս և ազդումն հնչեալ առիս հաճոյանալ սուրբ նշանիս ի տեղւոջս. նկարեցի և զպեզազէշ եկեղեցիս արժանի հանգստեան սորա և մեծարեալ ի քրիստոնէից՝ առի զվանքս և ետու զնաչս եկեղեցիս այս միջնորդութեամբ և վկայութեամբ տեառն Յովհաննու չինողի եկեղեցւոյս՝ առաջի հրեշտակաց և մարդկան և հաստատեցաւ լինի ի տանի սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի, Յակովբայ և Յովհաննու յամենայն եկեղեցիս պատարագ: Սրդ եմէ որ հանել ջանայ աստի, կապանս և անէծս ժառանգեսցէ ի հոգի և ի մարմին անբժշկելի ի սուրբ Նշանէս և յամենայն սրբոց Աստուծոյ: Որչափ այս եկեղեցիս չէն է, մի՝ որ իշխեսցէ *զնաչս* [1]) հանել և զիմ չիշատակս խափանել, ապա թէ ոչ, նախ զինքն ջնջեսցէ ի կենաց գրոցն և ի չիշմանէ Աստուծոյ. ասասցին հրեշտակք և մարդիկ, եղեցի՛ եղեցի՛»: *Արեւմտեան դրան ճակատակալն վերայ.*

«Ի թվին ՈԶԶ. (1237) ես վասակ որդի Դաւթի, որդւոյ Վասակայ, ի տանէ Բագրատունի ի տոհմէ Դաւթայ մարզպէնին ի վաղս Աստուծոյ կառուցի զեկեղեցիս, զոր չինեցի ի ձեռն Յովհաննու և ընծայեցի զԾաղկագուղի իւր կոզարովն ի վանս ի Քրիստոս և հաւանութեամբ եղբարցս հաստատեցաւ լինի պատարագ յայտնութիւն և զատիկն չիմ չինեալ մեծ եկեղեցիս, որպէս իմ հաւրն չիւր չինեալ փոքր եկեղեցին գրեցաւ և կնքեցաւ, անուամբ Աստուծոյ յաւուր՝ յորում Վարագայ հայրն Ղուկաս զսուրբ Նշանն եդ յեկեղեցիս: Արդ թէ որ զմեր տուեալ զիւղերս ի մեր եկեղեցւոյս հանել ջանայ և զմեր չիշատակն խափանել, թէ քրիստոնեայ է՝

[1]) Վանքումս չէ կենաց փայտի մասն, զի այժմ անմարդաբնակ է մենաստանս:

ի Քրիստոսէ և յիւր ընտրելոցն է նզոված, և թէ յայլազգեաց՝ յԱստուծոյ և 'ի դենէ և յառաջնորդաց իրեանց և մեր մեղացն պարտական է յաւուրն դատաստանի և ասասցէն ամէն, եղիցի, եղիցի»։

Վանքս ունեցած է և հրաշալի գաւիթ, որի գլուխն փլած է այժմ և որի երկարութիւնն է 14 մետր 50 սանթիմ և լայնութիւնն 13 մետր 20 սանթիմ. և ունի սոյն արձանագրութիւնը. «Թվ. ՉԾ. կամաւ Աստուծոյ ես Հայրուստ վայելեալ զձիավարժ իշխանութեան և հասեալ յայս տեղի՝ զարհուրեցայ 'ի սպառնալեաց և դիմեցի յեղբարանոց անապատիս առ ոտս տեր Յովհաննէս չինողի սուրբ ուխտիս և ստացայ զտնակս սակս յիշատակ ինձ և իմոցն....»։

Մենաստանիս հարաւային կողմին կից է մի այլ վանք իւր գաւթով միասին։ Այս է Վասակի հայր Բագրատունի Դաւիթ իշխանի շինել տուածն, ինչպէս իւր արձանագրութեանց մէջ յիշեց արդէն Վասակ իշխանն։ Այժմ խոնահած է և գաւիթս գլուխն։

Իսկ իւր հիւսիսային կողմին կից՝ մեծ վանքս ունի մի առանձին խորան, որ քայքայուելու վերայ է։ Ունեցած են վանքերս և շրջապարիսպ, և միաբանից խուցեր, որք բոլորովին քանդուած են այժմ։ Վանքերիս վերայ գործ դրուած են տորոնագոյն, երկնագոյն եւ կանաչագոյն քարեր, որոց հանքերն գտնուում են վանքիս հարաւ արևմտեան կողմում ոչ այնքան հեռի։

Երևում է թէ վանքս բերուած է խողովակներով այն ջուրն, որ հոսում է հարաւային ձորով. այժմ յայտնի է ջրաւազանն և ուրեք ուրեք աւերուած խողովակներն. ջուրն ընդհատուած է և վանքս անմարդաբնակ։

Կայ այլ ևս երկու մատուռ մին վանքի հարաւային և միւսն հիւսիսային կողմում։ Այս կողմումն է և միաբանից հանգստարանն։

ՅԱ. ԱՇՈՒՂԻ կամ ԼԱԼԻ գեղ. Հիմնուած է Ազատև գետակի աջ կողմում. Վարագեան լեռնաբազկի հիւսիսահայեաց լանջի մի սեռի վերայ. բնակիչք տեղափոխուած են Խաչեն և Ջրաբերդ գաւառներից. հողն արքունի և կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն նոյն, պատուական տեսարանն, բարեխառն օդն և կլիման, և բարեհամ ջուրն, երկար կեանք 85 տարի. եկեղեցին նոր սկսեալ. քահանան գալիս է Ուզուն-թալայից։

Ծուխ 30, ար. 140, իգ. 113.

Ա. ԴԻՏԱՐԱՆ կամ ԴԻՏԻԻԱՆ. Հիմնուած է Ղազախ քաղաքից վերև, նոյն գետակի և արքունի ճանապարհի աջ կողմում մի բլրակի վերայ, որ ունի բոլորշի ձև, և քարուկիր շինութիւն, որի գոյութիւնն շատ հին չէ։

Բ. ԴԻՏԱՐԱՆ շինուած է թրծեալ աղիւսով և կրացեխով եռայարկ, նոյնպէս բոլորշի, որ կայ Ուզուն-թալա կայարանի հանդէպ գետակի աջ կողմի ափի վերայ։ Շատ հին չէ և այս, որ ունի վերնայարկում հրացան արձակելու ծակեր և որն ճեղքուած է վերից վար։

ԺԲ. ՈՒԶՈՒՆ-ԹԱԼԱ գիւղ. Հիմնուած է Վարագեան լեռնաբազկի հիւսիսահայեաց լանջերի և սեռերի վերայ. բնակիչք կիսով չափ բնիկ և կիսով չափ տեղափոխուած Խաչեն և Ջրաբերդ գաւառներից, հողն արքունի, արդիւնաւոր և կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն նոյն (ունի այգի և պարտէզ). օդն, կլիման և ջուրն սննդարար, երկար կեանք 90 տարի. եկեղեցի երկու, արևելեանն՝ Ամենափրկիչ. քարուկիր, կառուցեալ չորս բոլորշի սիւների վերայ, որ ունի 17 մետր երկարութիւն 11 մետր լայնութիւն. մի քահանայ։ Իսկ արևմտեանն՝ Ս. Աստուածածին, նոյնպէս կամարակապ չորս սիւների վերայ, որ ունի 15 մետր 15 սանթիմ երկարութիւն, 9 մետր 15 սանթիմ լայնութիւն և մի քահանայ։ Երկու թաղերում միասին քահանայ 2.

Ծուխ 133, ար. 650, իգ. 500.

Միդասեան ծխական ուսումնարան. աշակերտք 50, տարեկան ռոճիկ վարժապետին 300 րուբլի։

ՍՐՎԵՂ ՎԱՆՔ (1)

Հիմնուած է Համզա սարից դէպի Ուզուն-թալա խոնարհուած լեռնաբազկին հարթակին վերայ, որ անտառապատ է և ուշագրաւ։ Մենաստանս շինուած է թրծեալ աղիւսով և կրացեխով բացի հիմունքներից, որք քարաշէն են։ Վանքս ունի չորս փոքր և մի աւագ խորան, երկու լուսամուտով մի վեղարաձև կամուղիկէ, երկու դուռն հիւսիսային և արևմտեան կողմերից, բարձրագոյն շինուածք, 15 մետր 60 սանթիմ երկարութիւն, 10 մետր 22 սանթիմ լայնութիւն։ Վէմ քարի վերայ.

«Կանգնեցաւ սուրբ Նշանս ՚ի բարեխաւսութիւն Ո. ամի»։ Հիւսիսային որմի վերայ աւազանից արևմուտք. «Թիւ ՈՍ. ես Աբտաւազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննիսի..»։ Վանուցս արևելեան-հիւսիսային կողմում արտաքուստ. «ՈԾ. թուին ես Անանիաս որդի սուրբ ուխտիս բարեխաւսութեամբ աւրն աղաւթ... երկրպագէք»։

Վանքս նորոգուած է զանազան ժամանակներում. զորօրինակ երևում է շինութեան նշաններից և ծեփի հետքերից։ *Արևմտեան դրան վերայ.*

«Ես Աստոն տղայ Մխիթարս սուրբ Սրվեղի Բ. դուռս շինեցի (նորոգեցի), ով կարտայ, ողորմի ասի Քվ. ՌՃԽՍ..»։

Բոլորովին աւերակ են մենաստանիս խուցերն և շրջապարիսպն և Ջիթահանքն և բուսած են վանքի տանեաց վերայ մի քանի հացի և բուշնի ծառեր և վնասուած են հիւսիսային կողմի ձեղունն և արևմտեան հիւսիսային անկիւնն։

Մենաստանիս հիւսիսային կողմում, պարսպի ներսում կայ սուրբ Աստուածածին անուն մի եկեղեցի, որի ծածքն

1) Բացատրում են երկու տեսակ իմաստով. Ս. վեղարի նման սրածայր կամուղիկէ ունեցող վանք։ Բ. Սարու հող—շիկահող—վանքատեղ։

փայտաշէն է և ուխտատեղի։

Խեցեղէն խողովակներով վանքս բերուած է վաղուց Կեռիւր (Յորդ) աղբիւրն, այժմ չէ հոսում ջուրն, բայց կայ ջրաւազանն և խողովակների հետքերն։

Վանքիս շրջապատում կան երեք *Գիւղատեղիները* և *Հանգստարանները*, որք ծածկուած են թանձրախիտ անտառներով։

Վանքիս հիւսիսային կողմում, ճանապարհի վերայ կան *կարմիր, կանաչ* և *դեղին* գոյնով հեղեր, որովք գիւղացիք ներկում են *կարմիր, կանաչ* և *դեղին* գունով թելեր։

Սուրբ Նշան մատուռ, որ գտնուում է Ուզուն-թալա և աշուղի գիւղերի մէջև։ Քարուկիր է, հնաշէն և անարձանագիր. որի մօտ կայ *գիւղատեղի, հանգստարան* և գեղեցիկ ծառեր։

Ձ.Գ. *Ուեւազլու շէն*. Հիմնուած է Ուզուն-թալալի արևմտեան կողմում նոյն սարի (Համզալի) հիւսիսային ստորոտում, նոյն գետակի աջ ափի բարձրութեան վերայ. բնակչաց կէս մասն բնիկ, միւս կէսն փոխադրուած Սոի գիւղից. հողն արքունի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն. եկեղեցին սուրբ Գրիգոր, ծածքն փայտաշէն, քահանայ մի։

Ծուխ 22, ար. 107, իգ. 98.

Ուեազլու և Խաչթառակ գիւղերի մէջև կայ մի ընդարձակ *Գիւղատեղի*, երկու *հանգստարան* զարդարուած խաչարձաններով, ձիթահանքի քարեր և խաղողի որթեր։

Ձ.Գ. *Խաչթառակ գիւղ* (Սարհատլու). շինուած է նոյն սարի ստորոտում, բնակչաց մի մասն բնիկ և միւսն տեղափոխուած Չրաբերդի և Կիւլտանի գիւղերից, հողն արքունի և սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն, օդն և կլիման նոյն, երկար կեանք 85—90 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանան գալիս է Հաչա-ջուր գիւղից։

Ծուխ 60, ար. 410, իգ. 342.

Ղամիշ-կեօլում, որ կայ գիւղիս արևմտեան կողմում, կան զիւղատեղի և հանգստարան և եկեղեցի, որից մնացած է այժմ խորանի գլխի թաղն։

ՄՈՐՈՅ ՁՈՐՈՅ կամ ԾՈՎՋԻ ՎԱՆՔ

Հիմնուած է գիւղիս, գրեթէ հարաւային կողմում, Ծովից կոչուման գոմերի մօտ, ձորի աջ կողմում։ Կառուցեալ է խաչաձև սրբատաշ չիչ քարով։ Վանքիս երկարութիւնն է 7 մետր 20 սանթիմ, լայնութիւնն նոյնչափ։ Այժմ քանդուած են արևմտեան կողմի կամարն, արևելեան կամարի կէսն և կաթուղիկէի սալկախն։ Խորանի հիւսիսային կողմում։

«Թ. ՈԿԶ. ես Մխիթար և ամուսին եմ միաբանեցաք եկեղեցւոյս և ետուն մեզ ժամ Աստուածածնին բ. մին ինձ, Ա. (միւսն) Հարկևորին, ով խափանէ, մեր մեղաց պարտական է, գրած աղին արծաթագին»։

«Յանուն Աստուծոյ ես Սանայս միաբանեցայ իմ որդւոքս Մորոյ-ձորոյ Աստուածածնիս և հայրս Գրիգոր և այլ միաբանքս ետուն ինձ տարին Բ. ժամ զՎարդավառին շաբաթաւրն և զկիւրակէն Ա. աւրն ինձ, Ա. Տուշանկան . . .»։

Հիւսիսային կողմում. «Անուամբ ամենակալին Աստուծոյ ես Գեաւրկի (Գեօրկի) Թագաւորայ[1]) թագաւոր ետու զՄորոյ Ձորոյ վանն հայր Յովհաննէս և արարի ազատ յամենայն հարկէ. ամիր Քրտին հոգացողութիւն (թեամբ) որ ինձ աղաւթս անեն. որ մեր հրամանացս հակառակ լինի, Աստուծոյ հրամանին է հակառակ, հաստատ է գիրս անուամբ Աստուծոյ»։

Կաթուղիկէի արևմտեան կողմի վերայ արտաքուստ. «Ես հայր Գրիգոր... վանքս շինեցի Աստուածածին.... (անընթեռնլի)»։ Արգէն հերկուած են միաբանից խուցերի և շրջապարսպի տեղերն, որոց արևելեան կողմում կայ *Գիւղատեղի և հանգստարան*։

ԾԵ. *Կարվանսարա* գիւղ. (կարաւանի իջևանելու տեղ).

---

[1]) Վրաց Գէորգի Թագաւորն և Թամար Թագուհու հայրն, որ Թագաւորեց 1156—1184 Թուականն վրկչին։

շինուած է Աղտաև գետակի աջ ափի վերայ, Աղտան վտակի աջ ու ձախ կողմերի վերայ. գիւղիս նախկին բնակիչներն գերի տարուած են Պարսկաստան և ցրուած են մնացեալներն։ Այժմեան բնակիչք տեղափոխուած են Երևանի Ղըրխ-Բուլաղ, Արզն և Կեամրիս գիւղերից (անյայտ է տեղափոխուելու ստոյգ Թուականն), հողն արքունի, մեծ մասամբ անջրդի, նուազ արգիւնաւէտ, բայց այգևէտ. տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 90—100 տարի. եկեղեցին Ամենափրկիչ, ծածքն փայտաշէն, քահանայ երեք։

Ծուխ 115, *ար.* 751, *իգ.* 613.

Տղայոց միդասեան ուսումնարան, ուր ուսանում են 77 *տղայք, Թոշակաւոր* 68, *ձրիավարաժ* 9, *տարեկան ռոճիկ վարժապետին* 310 *րուբլի։*

Եկեղեցումն կան հետեւեալ գրչագրերն.

Ա. Աւետարան մեծադիր, թղթեայ, պատկերազարդ. միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, ծաղիկներն, թուչնագրերն և նկարներն։ Փտած և թափուած են յիշատակարանի կէսն, միայն մնացած է. «..... Գրեցաւ Հայկական թուականիս չՀա. յանապատս Աղուանաձոր (Վանայ կողմերում) ընդ հովանեաւ սրբուհւոյ մաւրս լուսոյ Աստուածածնիս և Վասիլ Թագաւորի սուրբ Նշանիս և այլ և այլ հաւաքեալ սրբութեանցս 'ի զանուածեան Բյուտիտին (?) և 'ի քահանայապետութեան տեառն Զաքարիայի ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչի Յակոբայ մեղապարտ... հանդէպ սրբարար ծովուն, ուր մանր ձկունք ելանեն..... ստացող սորա Մոսէս կրաւնաւոր հանդերձ ծնողիւք և եղբայրք կենդանեաւք....»։

Վերջին *յիշատակարանից*. «Գրեցաւ 'ի Թուին հայոց ՊԵ. են 'ի դուռն սուրբ Նախավկային ձեռամբ սրբոյ Էջմիածնի նուիրակ Սիմէոն վարդապետի յաւաջնորդութեան սուրբ սքանչելագործայ տեառն Ներսիսի եպիսկոպոսի, վկայութեամբ բազմայ ժողովրդոց . . .»։

Բ. Աւետարան փոքրագիր, թղթեայ, ամբողջապէս գլխագրով գրուած, որի սկզբից պակաս են թերթեր, վանորոյ չունի յիշատակարան: Սակայն նայելով գլխագրերի ձևերին՝ 800 տարուայ գրուած լինելու է աւետարանս:

Գ. Աւետարան միջակ գիրքով, թղթեայ, որ ունի միայն չորս աւետարանչաց անճաշակ պատկերներ. *Ցիշատակարանից.* «Եւ ես յետինս ի կրաւնաւորաց . . . Գրիգոր եպիսկոպոս . . . . գծեցի զսա մեղսամած մատամբ իմով ի Բջնի ընդ հովանեաւ երկնանման աթոռոյ սուրբ Աստուածածնիս ի հայրապետութեան տեառն Սարգսի (Բ-ի) Հայոց վերադիտողի ի թուաբերութեանս Հայոց ՋԻԷ . . . . Եւ արդ ես պատրոնս և ամուսին իմ Մէլիքխաթուն ստացաք զսուրբ աւետարանս ի յարդար վաստակոց մերոց և տուաք ընծայ ի դուռն սուրբ Ամենափրկիչ Աչտարակու և սուրբ Մարիամին և սուրբ Կամբրաւորին ի վայելումն մանկանց սոցա»:

«. . . և ես տէր Գրիգոր եպիսկոպոս աչտարակեցի նստեալով եպիսկոպոս իմ ի սուրբ աթոռս ԹԷ. ամ և Զ. ամիս գրեցի զսուրբ աւետարանս . . . . .»:

Դ. Աւետարան փոքրագիր, թղթեայ, պատկերազարդ, որք նկարուած են ճաշակով, արուեստով և ընտիր գոյներով, ընկած է յիշատակարանի կէսն, վասն որոյ մնում է անյայտ գրողի անունն, տեղն և թուականն: Միայն գրուած է Մատթէոսի վերջում. «Ձստացող սուրբ աւետարանիս զբարեմիտ և հաւատարիմ տանուտէր Յովհաննէսն և զեղբայրն իւր զՄարտիրոսն, որ ստացաւ զսուրբ աւետարանս . . . . . թվ. ՌՃԻԱ..»:

Ե. Աւետարան միջակ գիրքով, թղթեայ, պատկերազարդ (անճաշակ են). *Ցիշատակարանից.* «Արդ գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Միջագետաց յԱմիթ մայրաքաղաքի ընդ հովանեաւ Թէոդորոսի դինուորին և ամենասրբուհի կուսին Մարիամու Աստուածածնի և սուրբ Կարապետին Յովհաննու և Գէորգայ զաւրավարին ի հայրապետութեան տեառն Կոստանդնի Վահկեցոյ և ի վերադիտողութեան

Ամիթ Տահաստանի տեառն Մկրտչի աստուածարան վարդապետի և արքեպիսկոպոսի ամենայն միջագետաց և երկցխոյանի Կամուղիկոսի ամենայն Հայաստանեայց և մինչ ի ծայրս արևելեան իշխանդպի, և ի թագաւորութեան ամենայն Միջագետաց պարունայց պարոնի, որ կոչի Տահ Ալիման պահաճուր ի թվ. Հայկականս տումարի ՊՅ. երորդի, յորում ամի մերկացաւ սուրն վաղակաւոր յազգերէ իւրմէ և վասն ծառացեալ մեղաց սուր պատուհասի Աստուծոյ տարածեցաւ տարաժամ մահ ընդ ամենայն երկիր և առաւել ևս բարկութիւնն Աստուծոյ տեղեաց յԱմիթ մայրաքաղաքի և իսպառ կոտորեաց զամենայն առհասարակ առաւել քան զանդրանկածանն Եգիպտոսի, որպէս յանապատի զԻսրայէլ և յաւուրս Դաւթի ՀԷ. հազարացն. զի անկաւ ի ժողովրդենէն ՋՌ. (6000) արանց միայն, զորս ի թիւ արկին, թող զանհամարսն և զայն որ արտաքոյ բաղաքին ի Գաւառսն և ի գեաւղսն որ և բաղում աւանս անմարդաբնակ արար, մինչ զի չորքոտանիքն յամայի չդիմէին և ամենայն հայրենիք կողոպուտ եղեն յարքունեան: Եւ արդ ոչ որ կարէ ընդ գրով արկանել կամ լեզուաւ ճառել զալէտս կսկծանաց և զողբս տարակուսանաց և զհառաչանս սրտից և զզործս տարակուսանաց, որ գործեցան ի միջի մերում, զի բարկութիւն Աստուածային էր և սաստիկ էր հրաման . . . . . յամենայն ուրեք ողբ հառաչանաց և յամենայն տուն գործս տարակուսանաց լալումն որբոց և աղաղակ այրեաց, կսկիծ ծերոց և մաղկատումն մանկամեռ մարց, յամենայն լեզուէ վայ և յամենայն բերանոց ապաշաւանք . . . . . Մայտեսի Աղիզն . . . որ ստացաւ զսուրբ աւետարանս . . . և ընծայեաց սուրբ աւետարանս նուիրէք սուրբ Թորոս զաւրավարին . . . և կայցէ սուրբ աւետարանս յիշատակ անջնջելի . . . . յիշեցէք ի Քրիստոս . . զԳրիգոր գրագիրս, որ գրեաց զսա յընտիր աւրինակէ այլև զԱբրահամ վարդապետ, որ զարդարեաց զսա ծաղկով»:

«Նորոգեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՌԽԴ. ի քաղաքն յԱմիթ ի դուռն սուրբ Կիրակոսի, ի յաւաջնորդութիւն Ամ-

Թէայ Ղուկաս քաջ բարեւնապետին. . . . ի դառն և ի նեղ ժամանակիս, որ քրիստոնեայքն խիստ նեղութեան կային. հարկապահանջութիւն չատացեր էր ի վերայ քրիստոնէիցն. մէկ խարաջ մի Գ. Դ. ղուրիչ կառնին, հաճոյ (այնպէս) թանգութիւն, որ չարէք ցորեն ՃԳ. չահի կու առնեն. այս տարի մեռաւ Խոնթքար Մուրատն և թագաւորեց որդի Մահմուտ փաշան. . . . »:

Սուրբ Գրիգոր մատուռ, շինուած անտաշ քարով, խոնարհուած է ծածքն, որ գիւղիս արեւելեան կողմումն է: Գեղեցկաքանդակ խաչարձաններով զարդարուած է մատրանս ներսն և ուխտի օրն է Աստուածածնայ վերափոխումն:

Խոզ-մարագ կոչուած տեղում կայ Գիւղատեղի և հանւ զատարան:

ՃՉ. Վերին-Աղդան. Շինուած է Կարվանսարայի հարաւային կողմում Աղդան վտակի աջ ու ձախ ափերի վերայ: Գիւղս բաժանուած է երեք թաղի *Ներքին, Միջին եւ Վերին.* բնակիչք տեղափոխուած են Ներքին-Աղդանից, հողն արքունի, լեռնային և միջակ արդիւնաբեր, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին երկու, Ներքին թաղինն՝ Աստուածածին[1]) Վերի թաղինն՝ Նորաշէն (գեռ չունի անուն). քահանայ մի: Ծուխ 90, ար. 686, իգ. 638:

Գիւղիս արեւելեան կողմում, սարի ստորոտում կայ ընդարձակ *հանգստարան*, որի մէջ կան խիստ հին ամփոփեալներ: Տապանաքարերից շատերն ունի խաչարձաններ: Մի անտաշ քարի վերայ, որի խաչարձանն չկայ. «Խաչս բարեխաւս Սուլթանի Նաւին»: Այլ քարի վերայ. «Խաչս բարեխաւս Աստղտէրին ամենայն ննջեցելոց» (բազմախաչ է տապանաքարս):

[1]) Եկեղեցումս կայ մի մասունք արծաթեայ աջի մէջ, որը՝ հերկելու ժամանակ՝ գութանն հանած է հողի տակից, յայտնի չէ՝ թէ որ սրբի մասունքից է:

«Սուրբ խաչս Աւաքին ամուսին»: տորանից փոքր ինչ վերև է *գիւղատեղին* և եկեղեցու աւերակն, որ շինուած է եղել մի սեռահարթի վերայ, որի շուրջն պարսպուած է եղել ահագին քարերով: Այժմ մնացած են միայն եկեղեցու և պարսպի աւերակները:

ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿԻ ՄԱՏՈՒՌ

Մի միապաղաղ քարի վերայ շինուած է մատուռս, որ կայ եկեղեցու աւերակի հարաւային հանդէպ, ձորի ձախ կողմի սեռի վերայ: Մատուռս, որի չորս պատերն շինուած է անտաշ և թաղն տաշուած քարով, ունի մի խորան, երկու խորհրդարան, չորս լուսամուտ, մի դուռն արեւմտեան կողմից և մի կամարակապ և 14 մետր շրջապատ, արտաքուստ չափելով:
Դրան ճակատակալ քարին վերայ.

«Կամաւն Աստուծոյ, պանուելիւն Արղունին, թագաւորելիւն Դեմետրի ես Մկրտիչս շինեցի զեկեղեցիս ծնողաց իմոց և վասն թողութեան մեղաց իմոց. ամեն. թիվ. ՉԼԵ.»: Հիւսիսային սեմ խաչարձանի ստորոտում. «Աստուծով ես Ալափես եաու զմարանս Մարկոս. Մխ. (իմար) քահանա ետ ա. պատարագ զզաւիթիս ի սուրբ խաչին» (տօնին): Մատրանս շուրջն հանգստարան է, իսկ հիւսիսային կողմում խիստ մօտ կան խուցերի աւերակներ:

Անանուն մատուռ շինուած միևնոյն սեռի վերայ, փոքր ինչ վերև մացառուտների մէջ, որ աւերակ դրութեան մէջ է այժմ.

Քոսի աղբիւր. երկու պատուական ջրով աղբիւրներ են, որք բղխում են աւերակ մատրան ստորոտի ձորից և հոսում սուրբ կիրակի մատրան հարաւային ձորով: Աղբիւրներիս ակների մօտ կայ մի տորոնագոյն խաչարձան, որի մօտ լուացուելով սրբուում են բորոտութիւնից:

ԼԱՋԻՆ-ՂԱՅԱԻ-ՁՈՐ.

Գտնուում է Վերին-Աղգանի հարաւային սարի մէջ մի ջրաձորի վերի մասումն։ Այս մի խորագոյն, հորիզոնն նեղ, անտառապատ, ահարկու և մթնագին ձոր է, որ ունի միայն մի մուտք ջրաձորով-Հիւսիսից հարաւ։ Վերնամասն գոգաւոր է և ամեն կողմերից անմատչելի։ Սոյն մասում կան քարայրներ, բայց մին անմատչելի է այժմ քանզի աւերուած է վերելակ կածանն և ոտից կռուաններն։ Ահա այս ձորում և այրերում պատսպարուած են շրջաբնակ հայերն և ազատ մնացած Լեկզիների աւերիչ արշաւանքներից և գերեվարութիւնից։ Երեք տարի առաջ ձորից գտած են տասներկու պղնձեայ ափսէ և երկու արոյրէ աշտանակ։

Անապատ. Մրզուզ սարի արևմտեան ստորոտում, *Սալա գիւղի* մօտ (այժմ թրքաբնակ է որ կանխաւ եղած է հայաբնակ) կայ մի փոքր վանք անապատ անուն, շինուած սրբատաշ քարով։ Բացի անապատից՝ գիւղումս կայ քարուկիր մեծ *եկեղեցի* և ընդարձակ *հանգստարան*։

Գետաշէնում (*Զայքեանդ*), Թարսա-չայի աջ կողմում, կայ մեծ *եկեղեցի* և *հանգստարան*։ Մինչդեռ կանխաւ հայաբնակ եղած է, այժմ թրքաբնակ է։

Հանքային ջուր, որ գտնուում է մօտ կէս մղոնից աւելի վերև նոյն ջրի ձախ ափումն և կոչուում է տաճկ. Ղոթուր-բուլաղ։ յար և նման է ըստ ամենայնի ջուրս Շուշուց վերև եղած թթու ջրին։

ԺԷ. *Ներքին-Ճամբարակ.* շինուած է նոյն վտակի (Թարսայ-չայի) աջ ափում, հանքային ջրից վերև, բնակիչք բնիկ, հողն արքունի և խիստ սակաւ արդիւնաբեր, քանզի մօտ 8000 ոտք բարձր է ծովա բնակութեան և ցանքսերի տեղերն. տեղական բերքերն ցորեն, գարի, ոչխար, տաւար և գոմէշ. գերազանց օդն, կլիման և ջուրն ամրան. եկեղեցին սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Վերին-Ճամբարակից։

ԺԸ. *Վերին-Ճամբարակ.* շինուած նոյն վտակի աջ կողմում մի առուակի աջ ափի վերայ. ամենայն ինչ նոյն. եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր և հին, քահանայ մի։

Ծուխ (երկու գիւղերում միասին) 67, ար. 550, իգ. 440.

Գիւղիս արևմտեան հանդէպ վտակի ձախ կողմի բարձրութեան վերայ կայ *գիւղատեղի, հանգստարան* և եկեղեցու *աւերակ*։

Վիմափոր խաչարձանները, Գօշ առուի ձախ ափում, Թարսա-չային խառնուրդին մօտ, ճանապարհի գլխին, ապառաժ քերծի ճակատին փորուած է երեք խաչ, երկուսն մեծ և մին փոքր։ Մեծերի գլխին. «Գրիգորոյ է». իսկ տակին. «ՈՁԳ. Թուին հայոց»։

ԺԹ. *Ղօշայ-վանք-ձէն.* շինուած է Թարսա-չայի ձախ կողմում Հովուի սարի (Զօբան-դաղի 8435 ոտք) ստորոտում, մի արևելահայեաց լանջի վերայ. բնակիչք 1855-ին տեղափոխուած են այստեղ Զաւէ գաւառի Կոթ, Դոստլու, Գվեզ և Սոի գիւղերից. հողն վանքապատկան, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն պատուական, քահանայ մի, հոգևոր պէտքերն կատարուում են վանքումն.

Ծուխ 25, ար. 140, իգ. 130.

ԳՕՇ-ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՆՔ (59)

Հիմնարկուած է շինիս մէջ մի գեղեցիկ հարթակի վերայ. բարձր և անտառապատ լեռներ պատած են վանքիս և շինիս հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերը, բաց է միայն արևելեան կողմն և գոգաւոր խոր փոս վանքիս և շինիս տեղն։ Մենաստանս շինուած է յանուն սուրբ Աստուածածնայ ամբողջապէս տորոնագոյն տաշուած քարով և հոյակապ կառուցեալ չորս բարձրաշէն կամարների վերայ Գանձասար վանքի իսկական ձևով։ Վանքս ունի չորս փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, տասներեք լուսամուտ, մի վեղարաձև կաթուղիկէ, երկու գուռն արևմտեան և հիւսիսային կողմերից. 15 մետր 75 սանթիմ երկարութիւն, 11 մետր 50 սանթիմ լայնութիւն։ Շարժից

վնասուած են արտաքուստ արեւելեան որմն, կամարիկէն և տեղ տեղ սալկախն. իսկ ներքուստ արեւմտեան և հարաւային կողմերն։

Աջակողմեան դասի Բ. խորանի ճակատին.

«՝ի ՈՒ. Թուին զկնի չորս ամաց առնլոյ զԵրուսաղէմ Սալահադինին՝ սկսեալ եկեղեցիս սուրբ ի նորս Գետիկ և կատարի ամս է, ՝ի խանգար զատկին յունաց ձեռամբ վարդապետին Մխիթարայ ՝ի հայրուքեան Վարդանայ, ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ և նորին զուգակցին Արզու խաթունին, և նորին եղբարցն Սմբատայ, Վասակայ և խորնին[1]) Գրիգորոյ և նոցին զաւակացն։ Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ՝ի տաճնի սուրբ Աստուածածնին Գ. աւուրն. բայց զԱ. Հասանայ հարն Վախտանկայ. Ա. մարն նոցին Մամին և Ա. հարն Արզու խաթունին Քրդին բարեպաշտի անխափան»։

Ձեւագ խորանի վերայ

«Յուսով ողորմութեան Աստուծոյ ես Ձարս որդի պարոն Ումիկին, Թոռն Ձարին, աշխարհաւ Մանածկերտացի յաշխարհակալութեան Ղարա Նուին ՝ի թագաւորութեան վրաց Դեմետրի Բագրատունոյ իմ հայրն Ումիկ գնեալ էր զԳետիկ ՝ի ԽՌ. կարմիր տուգատի. ես Ձարս դրեցի զՀովս (դեղս) իւր ամեն սահմանաւք ի դառն ժամանակի, որ հայրենիքն աժան էր և ոսկին Թանկ. ԴՌ. կարմիր տուգատ տուի Գետկայ Աստուածածնին իմ հոգոյ տանս յիշատակ անջնջելի իմ ծնողացն Ումիկին և Թագուհւոյ, ինձ և իմ որդեացն Արզումին և իւր եղբարցն, առաջնորդութեամբ Ղասապ վարդապետին. և միաբանքս սահմանեցին զաւագ Ե. չարաքի աւրն, և զատկի աւրն զամէն եկեղեցիքս պատատագ որչափ մեք կենդանի ենք՝ մեր ծնողացն լինի, և յետ եղից մերոց յաշխարհէս՝ մեզ լինի։

[1]) «Վախթանկայ Խաչենոյ տեառն Հաթերքոյ, և եղբարց իւրոց՝ Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյդանայ և Վասակայ» (Կիր. եր. 125 տպ. ՝ի Մոսկ. 1858)։

Արդ՝ ով այս գեղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս, կամ զիմ յիշատակն խափանէ ով որ և իցէ, որ լինիցի ի ծննդոցն Ադամայ, եղիցի նզովեալ չլը.»։

Վանքս ունի և գաւիթ, որ կառուցեալ է չորս մեծապաղաղ և բոլորակ սիւների և ութ կիսասիւների վերայ տաճարի արեւմտեան կողմին կից նոյնպէս սրբատաշ քարով։ Գաւթի կեդրոնի ուղղութեամբ շինուած է մի ութանկիւնի գմբէթ երը երդիկ։ Գաւիթս ունի սՀրս խորան. տասնեմի լուսամուտ, մի երդիկ, երկու դուռն, 15 մետր 79 սանթիմ երկարութիւն (հիւսիսից հարաւ) 13 մետր 40 սանթիմ լայնութիւն։ *Արեւմտեան դրան վերայ.* «..... Եցի ես որդի Գայլաձագին միաբանեցայ սուրբ Աստուածածնիս. հաստատեցին մեզ Ղ. պատարագ ի տաճնի Յովհաննու Կարապետին զկնի յայտնութեան զԱ. իմ հարն Գայլաձագին, զԱ. իմ մարն Մամաքին. զԲ. իմ եղբարցն Բուսլանին և Աղբերկանն. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ ի թվ. ՉԽԲ.»։

Երկրորդ վանք. որ կոչուում է սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, պատկից է գրեթէ սուրբ Աստուածածնին վանքին հարաւային կողմին։ Շինուած է յար և նման մեծ տաճարի ձեւով, բայց առանց գաւթի։ Սուրբ Գրիգորս ունի 11 մետր 90 սանթիմ երկարութիւն, 9 մետր 12 սանթիմ լայնութիւն, բայց քանդուած է ամբողջ կամթուղիկէն, խորանի կամարի վերի քարերից մի քանիսն, հարաւային կողմի երկրորդ կամարի քարերից մի քանիսն և սալկախներ։ *Ձեւագ խորանի վերայ.*

«Շնորհիւն Աստուծոյ և կամակցութեամբ եղբարցս և միջնորդութեամբ տէր Գրիգորիսի գրեցաւ յիշատակ եղբարս մերոյ Պետրոն Արտաւազայ. միաբանք սուրբ ուխտիս սահմանեցաք ՝ի տաճնի Գաւթի և Յակոբայ մատուցանել պատարագ ամենայն եկեղեցիքս զկէսն Արզաւազայ և զկէսն ամուսնոյն իւրոյ Սւթային, որ խափանէ, դատի ՝ի տեառնէ»։

Հիւսիսային փոքր խորանի դրան վերայ

«Ի տաճնի սուրբ խաչին Ա. աւրն պատարագ Խաչատուր

վարդապետին և եղբարց իւրոց և ծնողացն, զի նոցա ընչիւք շինեցաւ խորանս»։

Հարաւային փոքր խորանի դրան վերայ

«Ծառայն Աստուծոյ Գերգ (Գէորգ) և ամուսին իւր Կատայ և զաւակունք նոցին շինեցին իւրանց ընչիւք զխորանս. Բ. աւր պատարագն նոցա է՝ի տաւնի սրբոյն Գէորգայ. խափանողքն դատին ի Տեառնէ»։

Տաճարիս դրան ճակատակալ քարին վերայ

«Յուսովն Աստուծոյ Բ. եղբարքս Մարտիրոս և Գրիգոր, և ամուսին Թամար միաբանեալ Եփրեմաւ շինեցաք զեկեղեցիս, վասն որոյ տնկեցաք և զայգիսն. տէր Յովհաննէս և միաբանքս ետուն նոցա պատարագ զեկեղեցիս Բ. տաւնն սրբոյն Գրիգորի զԵ. խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փիրաժի, Թամարին, Նազխամձունին և Մատթէոսի անխափան. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ ՈՁ»։ (Աւրևի ժամացոյց տաճարիս հարաւային արտաքուստ որմի վերայ)։

Երրորդ տաճար Սուրբ Կարապետ, որ համարեա թէ կից է մեծ տաճարի գաւթին հարաւային որմին։ Այս ևս շինուած է համակ սրբատաշ քարով մի կամարի վերայ։ Քանդակազարդ են բեմն և խորհրդարաններն և զոյգ լուսամուտներ ունի մեծ խորանն։ Տաճարս ունի երկու փոքր և մի մեծ խորան , հինգ լուսամուտ, մի դուռն, 6 մետր 90 սանթիմ երկարութիւն, 5 մետր 38 սանթիմ լայնութիւն։

Տաճարիս հարաւային որմի վերայ արտաքուստ

«Ի ՈՁՋ. ես Գրիգոր որդի Ս.... միաբանքս ետուն զաւազ խորան եկեղեցւոյս ինձ պատարագ....»։ Խախտուած են սուրբ Կարապետիս հարաւային որմի արտաքին երեսի քարերն և թափուած մի քանիսն սալակախի հետ։

Սուրբ Կարապետիս դրան աջ ու ձախ կողմերում արտաքուստ դրուած են երկու քարեայ ականաւոր խաչարձան-

ներ, որք գրաւում են այցելուների ուշադրութիւնը իւրեանց *մեծ* քանդակազործութեամբ։ Հարաւային կողմինն կոտորուած է ստորոտի մօտից. անվնաս է հիւսիսայինն, որի ստորոտում քանդակուած է. «Պաւղոս» որ է շինող վարպետի անունն։

ՁԱՆԳԱՏՈՒՆ

Եռայարկ և բարձր շինութիւն է, որ գրեթէ պատկից մեծ տաճարի գաւթի հիւսիսային կողմին։ Մարանատուն է գետնայարկն, որ պատերի արտաքին երեսներն շինուած են ահագին անտաշ քարերով։ Միմեանց միջով անցած են չորս կամարներ, որոց ոտքերն հաստատուած են չորս պատերի մէջ գետեղուած ութ կիւսասիւնների վերայ հիանալի ճարտարապետութեամբ։ Գետնայարկս, որի յատակն լի է ահագին քարուկիր հորերով-տաքարներով, ունի վեց լուսամուտ և մի դուռն։ Միջնայարկն *զաղտնի պահարան է*։ Խաչաձև շինուած է վերնայարկն, որ ունի մի դուռն հարաւային կողմից, երկու փոքր սեղաններ Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետաց անուամբ արևելեան կողմում մի լուսամուտ (միջնասիւնով զոյգ լուսամուտ) հիւսիսային և մի արևմտեան կողմից։ Մուտքի առաջ կայ մի ծակ, որից ներս մտնելով մարդ գտնում է գինքը թանձրամած խաւարի մէջ։ Ահա այս է միջնայարկ գաղտնի պահարանի դուռն։ Այժմ խոնարհուած է գանգատանս կաթուղիկէն։

Արձանագրութիւն. «Կամաւն Ամենակալին Աստուծոյ ի թվիս ՁԽ. մենք երկու եղբարքս Դաստպետ վարդապետ և Կարապետ եղաք հիմն և՝ի վերայ եդաք զանդակատուն և եկեղեցի յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի սակաւ ընչիւք մերովք և քեռոյն մերոյ Իգնատիոսի. արդեամբք բազմաւք եղաք և պարիսպ շուրջ եկեղեցեաւքս և այլ աշխատութիւնս ըստ մերում կարի։ Սարգիս վարսապետն հայր վանիցս և միաբանքս հաստատեցին զատկին և ճրագալուցին պատարագ, յոր եկեղեցին Դաստպետ վարդապետին և Կարապե-

տին սահմանեսցին։ Արդ ապաչեմ զամենայն ժառանգաւորսդ յիշման արժանի արարէք զամենայն աշխատեալսն ՚ի սմա, ևս առաւել Զաքէոսն և Գրիգորն»։

Սեղանատունն. որ ընդարձակ շէնք է և որի գլուխն ամբողջապէս խոնարհուած է այժմ. պատկից է զանգատան գետնայարկի արևմտեան և ոեւթին հիւսիսային կողմերին։ Ջորս պատերն շինուած են անտաշ մեծ մեծ քարերով. երկարութիւնն է 17 մետր և լայնութիւնն 12։ Ուսանողաց և միաբանից թիւն թէ որքան մեծ եղած է, դիւրաւ կարելի է մակաբերել սեղանատանս մեծութիւննէն։ Այժմ քայքայուած են միաբանից բոլոր սենեակներն և շրջապարիսպն թողլով միայն իւրեանց տխուր հետքերն և աւեր հիմքերն։

Շատ տապանաքարեր կան բոլոր տաճարների արևմտեան կողմերում և սակաւ արևելեան։ Իսկ մեծ տաճարի արևելեան կողմում կայ մի փոքր մատուռ շինուած սրբատաշ քարով, որի մասին ոմանք կարծում են թէ գրադարան եղած է։

Սուրբ Հռիփսիմէ մատուռ

Այսպէս են անուանում մատուռը, որ շինուած է համակ սրբատաշ քարով նախորդ տաճարների ձևով, որ գտնուում է շինամիջում և որ ունի 5 մետր 70 սանթիմ երկարութիւն և նոյնչափ լայնութիւն։

Ներքուստ հարաւային որմի վերայ

«Ի տանի սուրբ Գէորգայ Ա. պատարագ Շերանշահին է անխափան»։

Կաթուղիկէի վերայ. «Ջ. Տէր Աստուած ողորմեա Խաչատուր վարպետին և Բարսղին շինողաց եկեղեցւոյս և ամենայն աշխատողացն ի սմա»։ Մատրանս մօտ ևս կան ամփոփեալները։

Հոգին սուրբ մատուռ

Սուրբ Հռիփսիմէ մատուռից վերև է շինի գլխին, որ ունի և գաւիթ։ Մատուռը և գաւիթը նորոգած է Պ. Սմբատ Փարսատանեանն։ Գաւթումս կայ երկու տապանաքար. հիւսիսային շիրմաքարի վերայ փորագրուած է. «Մխիթար»։ Ահա այս է Գօշ-Մխիթարի գերեզմանն, որի գլխատակի հողը բժշկութեան համար՝ հաւատով այնքան տարած են որ մեծ փոս ձևացած է։ Իսկ հարաւային տապանաքարին վերայ. (Գրիգոր քահանայ)։ Մատրանս և գաւթիս շուրջն լի է խիտաւխիտ գերեզմաններով։ Մատրանս հարաւային կողմում կայ պատուական խաչարձանով մի տապանաքար, որի վերայ քանդակուած է. «Ոգոյն հարազատ եղբարք Պաւղոս և Յովհաննէս երկորեակ նշանքս աւծելոյն Յիսուսի, ծնողաց մերոց, որք երկրպագէք . . . մի թուի . . . .» (եղծուած է և անընթեռնլի)։

Հազար ափսոս, հետզհետէ բոլորովին ոչնչանում են այս պատուական տաճարներն. կարծես են նորոգութեան, բայց նորոգող չկայ. խղճալի գրութեան մէջ են, բայց նայող չկայ. բոլոր տաճարներս յանձնուած է մի անհասկացող քահանայի, որ իսպառ անհոգէ։

Յափշտակուած են[1]) վանուցս բոլոր կալուածները, որովք 700 տարի շէն, պայծառ կեանք և կենդանութիւն ունեցած են վանքերս. այժմ գոհ են գնում անհոգութեան։

Վանքիցս փոքր ինչ ներքև է *Ուռելանջ* գիւղն, որ այժմ աւերակ է, բայց կայ իւր հանգստարանն և կիսաւեր եկեղեցին։ Իսկ վանքիս հարաւային կողմումն է *Ցզրկածով* անուն գիւղն, որ այժմ թրքաբնակ է։ Բայց յայսցանէ լճակի հարաւային կողմում է *Աղ-քիլիսա* անուն գիւղն, որի մէջ

[1]) Ինչպէս երևում է արձանագրութիւններից, վանքերս ունեցած են սեպհական շատ անշարժ կալուածներ-այգիներ, ջրաղացներ, գիւղեր, վարելահողեր, անտառներ և ամարանոցներ։ Սակայն այժմ յափշտակուած են անտիրութեան պատճառաւ։

կայ և փոքր եկեղեցի և հանգստարան. այլ այժմ թրքաբնակ։

Հին-Շար-խաշ

Վանուցս հիւսիս-արևմտեան կողմում, սարի հիւսիսահայեաց լանջի վերայ կայ մի աւերակ գիւղ և հանգստարան։ Երկոցունցս մէջ տեղում, այս է աւերակի և հանգստարանի միջև, կայ մի բարձր ժայռ, որի հարաւային և արևմտեան երեսների վերայ շարքով շինուած են քսանևվեց հատ մեծ և փոքր խաչեր։ Հաստատում են թէ սոյն հանգամանքից ստացած է Շար-խաշ անունը հին գիւղս. որ անցած է և նորի վերայ։

Աշուղի գիւղատեղ. գտնուում է նոյն սարի ստորոտում, մի առուակի ձախ կողմին ուր կայ և հանգստարան։ Սորանից փոքր ինչ վերև է *Եղջու-Թալա* կոչուած տեղն, ուր է գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի։ Այս տեղից շատ հեռի չէ *Գէորգ Ճգնաւորի* քարայրն և գերեզմանն։ Իսկ սոցանից փոքր ինչ ներքև Աղստև գետակի աջ ափի վերայ կայ մի *կիսաւեր եկեղեցի*, որ է Հին-գետակի վանքի աւերակն. մեր համեստ կարծիքով։

Ի. ԴԻԼԻՋԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի (Եղջերուասար[1]) Մարալ-դաղի) արևմտահայեաց լանջի վերայ, նոյնպէս Աղստև գետակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք տեղափոխուած են Սև-քար, Հաչա-ջուր գիւղերից և Ջրաբերդի գիւղերից. հողն արքունի, անջրդի, սակաւ և նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն. գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, հնաշէն (պատրաստուում են շինել նորը). քահանայ մի։

Ծուխ 100, ար. 537, իգ. 474.

Միքայեան երկսեռ ուսումնարան, (գեղեցիկ է մանաւանդ օրիորդաց ուսումնարանի շէնքն) ուր ուսանում են 60

[1]) Կոչուում է և Մայմեխ սար, որ ունի 8435 բարձր.։

աշակերտ և 25 օրիորդ. թուշակաւոր 70 (երկսեռ միասին). տարեկան ուսուցչաց 1015 րուբլի։

ԱԻԵՐԱԿՆԵՐ

Գիւղիս արևելեան կողմում, ճանապարհի վերայ է *Դի. լի* անուանեալ աւերակ գիւղն, *եկեղեցին* և հանգստարանն։ Դիլիջան գիւղիս մէջ է մի *հին եկեղեցի* (բանանց գիւղացի Զղեթանց Ալեքսանի խանութի դիմացն), որի երկարութիւնն է 14 մետր, լայնութիւնն 6 մետր 80 սանթիմ, և ընդարձակ հին հանգստարան։

Բախտիարի գիւղատեղի և հանգստարան Աղստևի աջ ափի հովտում. *կիսաւեր եկեղեցի*, որ գտնուում է Աղստև գետակի և Դիլիջան վտակի խառնուրդի մէջ, որի մօտ բնակուում են այժմ Մալականներ.

Գաւառիս Բերդերն

Ա. ԵՐԳԵՎԱՆՔ ԲԵՐԴ (60)

Գտնուում է Ղուլալի գիւղի արևմտեան հանդէպ Տաւուշի օժանդակ (Ախնջի) վտակի ձախ կողմի բարձր սարի վերայ։ Տակաւին երևում են պաբսպի պատերն և տեղ տեղ աւերուածների հետքերն։ Թէև ցից ցից ժայռեր, նեղ նեղ կիրճի և մացառուտ ձորեր են բերդիս շուրջն, այսու ամենայնիւ այնքան ապահով չէ։ Ջուրը ամաններով բերած են իւր արևմտեան ձորում եղած աղբիւրից, որի մօտ կայ ընկուզի մեծ մեծ ծառեր, գիւղատեղի և հանգստարան։

Բ. ՏԱՒՈՒՇ կամ ԹՈՎՈՒԶ բերդ, որ կայ նոյնանուն գետակի աջ ափը բարձր սարի վերայ, Բերդ գիւղի արևելեան հանդէպ։ Բերդավայրը սարս բոլորովին առանձնայատ է իւր շրջապատից-արևելեան և հիւսիսային կողմերից անջրպետուած է լայնագոգ ձորերով. հարաւային և արևմտեան կողմերն ահագին վիմահերձ և բարձր ապառաժներն են, որոց ստորոտը քերելով խոխոջում է Տաւուշ գետակն։ Բեր-

դա ունի կրկնապարիսպ, որոնց մին սարիս ստորոտով, որ սկսուած է սաստիկ զառիվայր հարաւային կողմից և հասած մինչև արևմտեան վիմահերձն. իսկ միւսն բրգաշատ, որ ձգուած է վերնաբերդի արևելեան և հիւսիսային կողմերով: Ստորին բերդում երևում են տնաբակեր և քարուկիր կիսաւեր եկեղեցի. իսկ վերնաբերդում, որ գրեթէ անառիկ է, երևում են քարուկիր շինութեանց հիմունքներն միայն և ջրաւազաններ: Բերդումս չկայ ջուր, վասն որոյ խորագոյն ականով և խեցեղէն խողովակներով ջուր են բերած ի հնումն Կիլիկիան կոչուած առուակից մինչև ստորին բերդն, որից ամաններով փոխադրուած են վերնաբերդիս ջրաւազաններն:

Գ. ԿԱԾԱՐԵԹ ԴՂԵԱԿ. որ կայ Տաւուշ գիւղի հարաւային հանդէպ եղած սարի վերայ: Սարիս բերդաբարձ մասն միապաղաղ և ապառաժ քար է, որի հարաւային և արևմտեան կողմերն վիմահերձ են. իսկ արևելեան և հիւսիսային կողմերն խիստ զառիվայր լանջեր: Միապաղաղ քարաժայռիս գագաթի շուրջն պարսպուած է քարուկիր պատով և ձևացրած փոքրիկ դղեակ, որի երկարութիւնն է 50 մետր և լայնութիւնն 20: Դղեկիս արևելեան մասում պատի ներսում կայ վիմափոր մի ջրաւազան, որի ջուրն բերուած է՝ ի պահանջել հարկին արևմտեան կողմից-ձգնաւորի աղբիւրից-խեցեղէն խողովակներով մինչև դղեկիս ստորոտն, որից և ջրաւազանս: Երբեմն երբեմն ելնում են խողովակներից գերեզման փորելու ժամանակ, քանզի մօտ է սուրբ Գէորգ մատուռն և հանգստարանն. (տես Տաւուշ գիւղի շարքում): Վիմափոր քարայր է դղեկիս տակն, որ մի մուտք միայն ունի հիւսիս-արևելեան կողմից: Այցելուն ներս մտնելով՝ նախ տեսնում է մի փոքր քարայր, որից մի այլ մուտք տանում է վիմափոր քարայրն: Այժմ հող լցուած է թէ առաջին և թէ երկրորդ մուտքն, վասն որոյ դժուարութեամբ է մուտ գործուում ներս:

Դ. ԴՈՒԼԿԵԱՆԱՅ ԲԵՐԴ. գտնուում է Տաւուշ գիւղից

վար Համանուն գետակի ձախ կողմում. Օքսուզլու թրքաբնակ գիւղի մօտ մի բարձր բլրի գլխին: Պարսպուած է սարիս վտանգաւոր կարծուած տեղերն և կիրճերն: Ունի նշանաւոր ամրութիւն, բարձր դիրք, գուարճալի տեսարան և ջրամբարներ: Ջուրն բերուած է ամաններով մօտակայ ջրից:

Ե. ՅԻՑ ՔԱՐ կամ ՆՈՐ-ԲԵՐԴ (61) Ձուաձև բարձրացած և միապաղաղ արձանացած ժայռ է, որի կատարը դղեակ ձևացրած են հնուց՝ պատելով հարկ եղած տեղերը: Ջուր չկայ դղեկիս մէջ, երևի թէ բերած են մերձակայ աղբիւրից: Դղեակս գտնուում է Վարագայ վանքի և Սչուղի գիւղի միջև եղած սեռի վերայ. ըստ նոր բաժանման սեռիս գաւթնագիծն է սահման Շամշադին և Ղազախ գաւառների:

Զ. ՃՇԱՔԱՐ. Ուևազլու շինի արևելահարաւ կողմի բարձր քերձի մէջ կայ մի քարայրանման տեղ, որի մակերևութի տարածութիւնն մօտ երեք կալաչափ է: Քարայրիս առաջքն պատուած է քարուկիր պատով և ձևացած անմատչելի բերդ, որ ունի մի գժուարատար, սանդղաձև և երկիւղալի կածան: Այստեղ ևս չկայ ջուր, բայց երևի թէ սափորներով ջուր բերած և կարասների մէջ լցրած են: Դղեակս կոչուում է և *Ճգնաւորի քար*. զի այստեղ կայ և երկու գերեզման (62):

Է. ՂԸԶ-ՂԱԼԱ. գտնուում է մղոնից փոքր աւելի վերև Կարվանսարայից Աղստև գետի աջ կողմի բարձրութեան վերայ մի ժայռի գլխին, որ առանձնացած է իւր շրջապատից: Կամենալով յարգել հանգուցեալ Մարտիրոս Սիմոնեանցի յիշատակը, գետեղում ենք այս տեղ նորա իսկ հետազոտութիւնը, որ տպուած է Ղըզ-ղալայիս մասին «Մեղու Հայ..» մէջ 1874 ամի 31 թուահամարում: «Մենք հասանք բերդի պատերին և նորա միակ մուտքով, որ քարից ու կրից շինած կիսաւեր կամար էր և երկու կողմից մարտկոցներ և բուրջեր, ներս մտանք բերդը, բարձրացանք նորա ամենաբարձր կէտը....., ժայռի գագաթին գտանում է մի բառակուսի հրապարակ, որի երկարութիւնը.. և լայնութիւնն է մօտ 15 սաժէն.... մի ընդհանուր պարապով շրջապատուած է այդ

հրապարակը... Պարսպի անկիւններում գտանվում են բոլորակ բուրջեր.... Ներսը գտանվում են մեծ և փոքր սենեակների աւերակներ, ոմանք երկյարկ։ Դէպի հիւսիս գտանուող բուրջը չունէ ոչինչ արհեստական մուտք.... մի աւերակ.. ընդարձակ սենեակ, որի չորս պատերը կանգնած էին առանց առաստաղի և.. երկյարկ էր եղած... ամենից մեծ սենեակի (մէջ) ներսը դուրս էին եկած մեծամեծ ծառեր։ Հարաւային կողմում գտանվում էին... երկու.. նեղ և ձիգ սենեակների աւերակ... երդիկի տակ գտանվում էր... մեծ ծառ, որ գլուխը դուրս էր հանել երդից... Այդ սենեակից մի դուռը տանում էր դէպի ներսի կամարակապ սենեակը, որ բացի այդ դռնից ոչինչ մուտք և երդիկ չունէր.... ժայռի մէջ փորած գտանվում էր.. մի երկայն սենեակ, որ ունէր մի մուտք... ժայռից կտրած սանդուխտ...։ դա ւլտանվում էր ամբողջովին, կային և մի քանի այլ շինուվիններ... կան և բաց դեղնագոյն սրբատաշ քարեր, որոնք գործ են դրուած դռների, երդիկների և կամարների համար։.... Ամբողջ մնացած շինուվիններից ոմանց ներսը գտանվում էր կամիր ներկ քսած. Իսկ մէկի պատի վերայ մի տող գրուածքի տեղ էր, որ աւերվել էր, և միայն կարողացանք պարզ որոշել տողի սկզբի հայերէն տառերը «Ա.Ծ» (Աստուած)»։

Ը. ՇՆՔԱՐ կամ ՍՂՆԱԽԻ ՁՈՐ. Գտնուում է Թարսա չայի արևելեան և Աղստև գետակի աջ կողմում։ Ձորիս գիրքը ընկած է դէպի արևելք, որի միջով հոսում է մի առուակ և թափուում Աղստևի մէջ։ Ձորիս աջ կողմում շինուած են վաղուց չոր քարով մեծ մեծ սենեակներ. կան և քարայրեր, որոց առաջի կողմերը ամրացրած են հնուց պատերով և ձևացրած մի մի ամրոցին դղեակ։ Այս տեղերքումս ևս ամբանալով բազմաթիւ հայեր ազատ մնացած են Լեկզիների գերեվարութիւններից։ Աւելորդ է գովել ձորիս յարմարութիւնները—ամուր գիրք, ապահով պատսպարան, առատ վայտ, պատուական ջուր, ահարկու մուտք և սոսկալի նեղուց։

ԺԹ. ՁԱԻԷ ԳԱԻԱՌ (Ղազախ)

Ա. ՊՕՂՈՍ-ՔԻԼԻՍԱ. ԳԻՒՂ. Հիմնուած է Դիլիջանի հիւսիս արևմտեան կողմում, Աղստև գետակի ձախ կողմում մի լեռնալանջի վերայ. բնակիչք գաղթած են Երևանի Աբգնի և Կամբիս գիւղերից Հասան խանի ժամանակ. հողն արքունի, լեռնային և միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն—ցորեն, գարի, գարնանի, ոչխար. տաւար—պատուական օդն, ջուրն և կլիման, երկար կեանք 115 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին, հնաշէն, համարակապ. քահանայ մի։

Ծուխ 74, ար. 501, իգ. 408.

Գիւղումս կայ մի միդասեան ուսումնարան, աշակերտ 25, վարժապետին տարեկան 300 րուբլի։

ՂՈՒՇ-ԴՈՂԱՆ կոչուած տեղում, գիւղիս հիւսիսային կողմում կայ աւերակ եկեղեցի գիւղ և հանգստարան։

ՋՈԽՏԱԿ-ՎԱՆՔ

Գտնուում է Պօղոս-քիլիսայի արևմտեան կողմում երկու առուակների մէջ ընկած մի անտառապատ հովտում։ Երկու վանքեր են մօտ ու մօտ շինուած։

Արևելեան վանքն[1]) կառուցեալ չորս կամարների վերայ, որոց գլխին բազմած է կաթուղիկէն, ունի չորս փոքր և մի աւագ խորան. ութ լուսամուտ, երկու խորհրդարան, մի դուռն արևմտեան կողմից և երկու ճգնարան. 9 մետր 78 սանթիմ երկարութիւն, 7 մետր 57 սանթիմ լայնութիւն։ Գեղեցկաքանդակ խաչերով զարդարուած են երկու վերին և փոքր խորաններ և սոցա ժաղովրդահայեաց երեսներն։ Այժմ խոնարհուած է ամբողջ կաթուղիկէն, հարաւային լուսամտի շրջանակ անկիւնաքարերն, դրան սեմերն և գլխի քարն և բուսած են տանեաց վերայ ծառեր։ *Վանքիս հա-*

[1]) Արձանագրութիւնից երևում է որ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ է անուն։

ըաւայինն կողմում՝ արտաքուստ։

«Կամաւն Աստուծոյ ես Տալիթայս միաբանեցայ սուրբ Գրիգորիս. միաբանքս ետուն Ա. պատարագ ՚ի տաւնի ծառազարդին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»։

Աւագ խորանի հիւսիսային կողմում՝ ներքուստ.

«Այս իմ գիր է Բէկիս և Բարինիս, որ գնեցաք զաջոյ խորանս հանապազ մեզ պատարագ. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ»։

Արեւմտեան վանք. շինուած է այս եկեղեցու ձևով մի կամարի վերայ, որ ունի երկու փոքր և մի աւագ խորան չորս լուսամուտ և մի դուռն արևմտեան կողմից, 8 մետր 62 սանթիմ երկարութիւն, 6 մետր 40 սանթիմ լայնութիւն։ Ամբողջապէս կանգուն է վանքս և անվնաս. միայն բուսած են տանեաց վերայ ծառեր։

Դրան ճակատակալ քարի վերայ.

«ՈԾ. Հայոց . . ամիրութեան Լաչայի, ՚ի տէրութեան . . խանին ես Հայրապետ առաջնորդ ուխտիս որ կոչի Պետրոսի վանս, շինեցի զսուրբ Աստուածածինս և յուսով կարգեցի զճրագալոյցն Ե. խորանն ինձ պատարագ առնել և Ա. իմ եղբարն Շմաւոնին և . . զամեն եկեղեցիս իմ ծնողացն... մակաց. կատարիչք գրոյս աւրհնեալ... խափանիչք դատապարտին.. մեղայս տէր է առաջի Աստուծոյ» (կէտադրեալ բառերն եղծուած են)։

Հիւսիսային փոքր խորանի դրան վերայ.

«Ի թվ. ՈԾԶ. ես Մայրացեալս շինեցի զխորանս ՚ի հալալ արդեանց իմոց և առաջնորդք սորա ի տուն ՚ի տարումն.. ժամ տեառնընդառաջին. խափանողքն դատին ի Տեառնէ»։

Հարաւային փոքր խորանի դրնազլխին.

«Յայսմ խորանի Ա.. ժամ ի տաւնի սուրբ Սարգսին՝ Սարգսին արասցին, զի նորա արդեամբք շինեցաւ խորանս, ով զժամս խափանէ, դատի ի Տեառնէ»։ Կային արձանագրութիւններ և վանքիս արևելեան արտաքին կողմում. բայց մեծ մասամբ եղծուած, վասն որոյ թողինք։

Վանքերիս շուրջն լի է գերեզմաններով։ Միաբանից սեներականերն շինուած են եղել գետնափոր, վիմափոր և փայտեայ։ Իսկ շրջապարսպի հետքերն անգամ անկարելի եղաւ գտնել։

ՄԱԹՈՍԻ ԳԻՒՂԱՏԵՂ.

Ջոխտակ վանքին հարաւային հանդէպ, մի առուի աջ կողմի բարձրութեան վերայ, մի կանաչազարդ սարահարթում, որի հարաւ-արևելեան ծայրումն է հանգստարանն և եկեղեցին, որ փոքր է և կառուցեալ մի կամարի վերայ։ Վերից մինչև վար քանդուած է խորանի լուսամուտն իւր կողերի պատերով միասին. և բուսած տանեաց վերայ ծառեր։ Եկեղեցիս ունի և գաւիթ, որի երկարութիւնն ձգուած է հիւսիսից հարաւ մի միջնակամարով։ Գաւթումս ամփոփուած են շատ ննջեցեալներ։

Եկեղեցւոյ դրնազլխին վերայ,

«Կամաւն Աստուծոյ (ես) տէր Յորդանան շինեցի զեկեղեցիս ՚ի թվին ՈՂԶ. իշխանութեան Աւագին ողորմութեամբ և տրաւք Պղնձահանացն Աստուածածնի և առաջնորդութեամբ Պետրէի և Համազասպա, որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս զծնողք մեր զԵնոք և զՄարթա իւր և զՄխիթար, զՄեհաւոս, զոր (զին) Նահանաէլն Յորդանանս Հոռիմսիմի....»։ «Աստուած ողորմի Խաչատուրին» «Տէր Աստուած ողորմի Աղբաղին և Անդաւին»։ *Հարաւային սեմի վերայ.* «Ես Պետրէ և

Համաղասպ համարեցաք զԾովքն. եդաք սահման ժողովուրդ Աստուածածնիս, ով որ խափանէ, դատի ի տեառնէ, ամէն»։

Եկեղեցուս հիւսիսային որմի մօտ արտաքուստ կայ խաչարձան, որի երկարութիւնն առանց պատուանդանի է 2 մետր 50 սանթիմ և լայնութիւնն 1 մետր 20 սանթիմ. որի վերայ քանդակուած է։

«Ընորհիւ Աստուծոյ ես Մխիթար և Արուեր (կանգնեցաք) սուրբ խաչս բարեխաւս մեզ [թվ. Ջ.]»։

Սուրբ *Սարգիս մատուռ*. Պօղոս Քելիսայի արևմտեան կողմում մի տեսարանաւոր բլրի վերայ։

ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ (63),

Հիմնարկուած է Պօղոս-Քիլիսայի հիւսիսային կողմում, մի խոր ձորի ձախ լանջի հարթակի վերայ։ Վանքիս հարաւային ձորով հոսում է Հաղարծին վտակն, և արևելեան ձորով մեծ աղբիւրի ջուրն, որ դարձնում երկու ջրաղաց։ Երկու ջրերս միանալով վանքից փոքր ինչ վար խառնուում են Աղստևին։

Ա. ՎԱՆՔՕՑ, որ անուանուած է սուրբ Աստուածածին, շինուած է խաչաձև չորս *կամարների վերայ* սրբատաշ մոխրագոյն քարով, որոց վերայ բազմած է գեղեցկաձև կաթուղիկէն. ունի մի աւագ, երկու փոքր խորաններ, երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, հինգ լուսամուտ, (և մի գոյգ լուսամուտ մեծ խորանի ետև), երկու խորհրդարան, 14 մետր 50 սանթիմ երկարութիւն, 11 մետր լայնութիւն. (երկու փոքր խորանների դռներն բացուած են աւագ խորանի միջով)։

Վանքիս *հարաւային ղրնագլխի վերայ՝* խոշոր գրերով.

«Թվ. ՇԻ.»։ Միւս կողմում «ՋԼ.»։ Դրանս արևելեան կողմում կայ մի գեղեցկաքանդակ խաչարձան պատուանդանով հանդերձ, որի մօտ մի քարի վերայ քանդակուած է երկու վեղարաւոր վերդապետների պատկերներ, որք փիլոն ձածկած և բարձրացրած են Հաղարծին վանքիս կաղապարը։ Խաչարձանիս կից է մի մեծ և լայն տապանաքար, որն բաժանուած է միջից մի գծով. այս քարիս տակ ամփոփուած են երկու հոգևոր եղբարք, որք միացած են եղել հոգւով, սրտով, համամիտ և համակամ գործով։ Զոր օրինակ մի հոգւով բնակած են երկու մարմնոց մէջ կենդանութեամբ. նոյնպէս մի քարի տակ բնակած են մահուամբ երկու մարմնով։

Ներքուստ տաճարիս հարաւային որմի վերայ.

«Ընորհիւն Աստուծոյ ես Բէկս որդի Աչոտոյ յաղթէ Հարբանց և ամուսին իմ Բորոնա և եղբայր իմ Սմբատ միաբանեցաք ի սուրբ ուխտս, որպէս և հայրս իմ և տվաք գինս չինութեան»։

Վանքս նորոգած են Թիփլիսեցի Զիլթախեաններն. «ես Թիֆլիզեցի Զիլթաղի որդի Թաղայ, որդի մահտեսի Սուլխանս և եղբայրն իմ Զալն և մեր որդիքն Ստեփաննոսն և Թաղին և Փահրապատցի Խոճա Գուլին և իւր որդի Յարութիւնն մեծաւ յուսով՝ որ առ Քրիստոս վերստին նորոգեցաք զՀաղարծինոյ զեկեղեցիսն զսուրբ Աստուածածինն և սրբոյն Գրիգորին՝ յիշատակ մեզ և համօրէն ննջեցելոց մերոց՝ ի թվ. ՌՃԼ. Հայոց»։

Վանքիս ունի և մեծ գաւիթ, որ շինուած է կաթնագոյն չիչ քարով և ունի 15 մետր 30 սանթիմ երկարութիւն, 13 մետր 82 սանթիմ լայնութիւն։ Ամբողջապէս խոնարհուած է գաւթիս գլուխն։

Բ. ՎԱՆՔ *Սուրբ Գրիգոր*, որ շինուած է մեծ վանքի հարաւային կողմում միևնոյն ձևով, բայց կաթնագոյն չիչ քարով և որ ունի չորս փոքր և մի աւագ խորան[1]), մի դուռն, ինն լուսամուտ, երկու խորհրդարան, մի կաթուղիկէ, 9 մետր երկարութիւն, 7 մետր 90 սանթիմ լայնութիւն։ Վանքս ունի հրաշալի գաւիթ, որ կառուցեալ է չորս

[1]) Բեմի մէջ տեղից է խորանս բարձրանալու սանդուղն։

միապաղաղ սիներէն և տասներկու կիսասիներէն վերայ։ Առաստաղի մէջ տեղում բազմած է կամարներէն վերայ մի ութանկիւնի գմբէթ, որ ունի նոյն ձևով երդիկ։ Երկարութիւն հիւսիսից հարաւ 14 մետր 30 սանթիմ, լայնութիւն արևելից արևմուտք 11 մետր 50 սանթիմ։

Դրան վերայ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր պիր յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդոց մերին Սարգսին յազգէ Բագրատունեան Իւանէի և Զաքարէի. յորժամ նախախնամութիւնն Աստուծոյ ետաս յարարածս և ետ տիրել սեփհական ժառանգութեան նախնեաց մերոց, ետ՝ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զԱնբերդ և զքաղաքն Անի և ապա զամուրն Բջնի. զՄարանդմինչն Գաւազան[2]) ՝ի Թավրէզ, ՝ի Կարնոյ քաղաքէն մինչև ՝ի Խլաթ, զՇաքի և զԵրուան, զԲարտա մինչև ՝ի Պէլուկան և այլ բազում իւրեանց սահմանաւքն, զոր աւելորդ համարեցաք յիշատակել։ Այլ և անբարկանալին Աստուած սիրեաց զքաջ պարծանաց գլխոյ իմոյ Զաքարիային և կոչեաց առ ինքն, որոյ ձեռն եղև արիութիւն։ Եւ ես չինեցի ՝ի մեր վանքս Հաղարծին ժամատուն վիմարդեան, համարակապ ՝ի դրան սուրբ Գրիգորիս և այլի յԵրևան ետու վասն յիշատակի եղբարն իմոյ. և պարտին սպասաւորք սորա զաւազ խորանի պատարագն Զաքարէի մատուցանել անխափան։ Կատարիչք գրոյս աւրհնեալ լինին յԱստուծոյ, ամէն»։

Գաւթումս.

«Ի թուին ՈԾԵ. յաշխարհակալ տէրութեան Զաքարէի և Իւանէի, յառաջնորդութեան Ստեփաննոսի ես Խալթի որդի Սմբատս իմ զեղն Քանաքեռ Սկանդարեանց զհողն գնեցի և ՝ի Հաղարծինս ետու վասն իմ հոգւոյս և վասն յերկարութեան

[2]) Գովզան գետ Պարսից, որ այժմ կոչուում է Կզլ-Օզան և որ հոսում է Պարսկաստանի հիւսիսային կողմից և թափուում Կասպից ծովի մէջ. (Ց. Թագ. ժէ. 6. և Ա. Մնաց. ե. 26)։

Շահանշի և Աւագին։ Եւ միաբանս զծառազարդարին զերկրորդ գալստեան ժամն ինձ ետուն զամենայն եկեղեցեացս, ով զայդին աստից հանցէ կամ զիմ ժամն խափանէ, իմ մեղաց տէր է և Յուդայի մասնակից եղիցի»։

Գաւթիս հիւսիս-արևելեան կողմում երկու քարերի վերայ քանդակուած է մի թագաւորի և մի վարդապետի պատկերներ, որոց շրջապատում կայ գրուածքն, բայց գրեթէ անվերծանելի։

Տաճարիս նորոգութեան մասին.

«Ի թուին ՈԴ. ՝ի Թագաւորութեան Աւխազաց Գաւր գհայ, ՝ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորիսի ես Խաչատուր վարդապետ և Սուքեաս նորոգեցաք զսուրբ Գրիգորիս հրամանաւ թագաւորին և իւր մեծ իշխանին Սարգսի ամիր սպասալարին՝ գհին և զնոր կազմութիւնս գրով ետ ՝ի սուրբ Գրիգորս զայգին Միջնաչինին ջրին, զՏեառն խաչ Կոպալանից ՝ի միջին գՔուրդ գեղանն, զԱբասաձորն, զՏանձուտն. և հրամայեաց թագաւորն զսուրբ Խաչն տանն յիւր յիշատակ կատարել։ Արդ՝ որք հակառակ կան և հանել ջանան, քակեսցին տամբք և որդւովք և ազգայնովք. նզովեսցին ՝ի վարձէ Աստուածածնէն և ՅԺԸ. հայրապետաց և ջնջեսցին յայսմ կենաց. ամէն»։

Գաւթիս մէջ կան շատ ամփոփեալներ։

Սուրբ Գրիգոր վանքիս հարաւային կողմին կից շինուած է համակ սրբատաշ քարով թագաւորաց Դամբարան մատուռն, որ ունի երկու խորան։ Հիւսիսային խորանի առաջ եղած տապանաքարի վերայ քանդակուած է։

«ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ»։ Իսկ հարաւային.

«Հանգիստ.. ա. թագաւորին Գագկայ»։ Խոնարհած է մատուռներիս գլուխներն և սոցա գաւթի թաղն։

Գ. ՎԱՆՔ *սուրբ Ստեփաննոս.* շինուած է սուրբ Գրիգոր վանքի արեւելեան կողմում, խիստ մօտ. միևնոյն ձևով, ոճով և ճաշակով: Փոքրիկ, գեղեցկագոյն և ուշագրաւ վանք ունի չորս փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, իննլուսամուտ, մի կաթուղիկէ, մի գուռն արևմտեան կողմից, 6 մետր 38 սանթիմ երկարութիւն, 5 մետր 80 սանթիմ լայնութիւն: Կաթուղիկէին վերայ. «Ի թվ. ՈՂԳ. իշխանութեան Իւանէի և առաջնորդութեան Խաչատուր վարդապետի ես Խալիճ որդի Հարբայ շինեցի զեկեղեցիս վասն իմ հոգւոյս փրկութեան. և ամենայն միաբանիս գյայտնութեան ճրագալուցին ժամն ինձ հրամայեցին և զգատիկն որ անխափան առնեն. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ»:

Հարաւային *որմի վերայ արտաքուստ.* «Ի թուին Հայոց ՌԾ..... այ Շահ Սուլէմանին որդոյ փորը Շահ Ապասին և տէ... Ս. իշխանին և մէլիքութեան պարոն Շահնազարին և Ի հայրապետ.. Զուղայեցւոյ և առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Յակովբայ եպիսկոպ.. տէր Պետրոս աշակերտի նորին. ողորմութեամբ Աստուծոյ մեք յետինքս Ի կրօնից Թխիկիզեցի հոգեչան որդիքս Պարոս, Մխիթարս, Սափարս և Զալիս և որդիքն տէր Գասպարն, Հոգեչանն, Բաղդասարն և Մելքոնն զմեր հոգոյ արդեամբքն նորոգեցաք զսուրբ Ստեփաննոս, որ յոյժ խախտեալ էր՝ վասն փրկութեան հոգւոց մերոց և երկրութեան կենաց որդոց մերոց. և միաբանք սորա հաստատեցին յայտնութեան և յարութեան պատարագն զմիշ յիշատակել և մեք խոստացաք որ զկանթեղ սորին միշտ Ի վառ պահել որդէց որդի, կատարողքն օրհնին յԱստուծոյ ամէն»:

Սեղանատուն

Շինուած է Մեծ Վանքի փլած գաւթի հիւսիս-արևմտեան կողմում տաշուած չիչ քարով երկու սիւների և տասներկու կիսասիւների վերայ, այնպէս որ առաստաղն ունի չորս չորս խաչաձև կապուած կամարներ, երկու երդիկ, երկու լոսամուտ, մի գուռն, 23 մետր երկարութիւն, 10 մետր լայնութիւն.

Հարաւային որմի վերայ

«Ի թվ. ՈՂԷ. յառաջնորդութեան Յովհաննէսի վարդապետի շինեալ.....[1])»:

Հարկ է յայտնել որ քանդուած խախտուած են վանքերիս սալկախներն և տեղ տեղ որմերից քարեր: Բոլոր վանքերի շրջապատում կան գերեզմանները: Վանքս ունեցած է և շրջալարիսպ, որ այժմ խպտած աւերուած է, և միաբանից սենեակները, որք հասած են եղել քայքայեալ դրութեան: Մօտ տասն տարի է որ արժանապատիւ Պօղոս վարդապետ Մարգարեանցն արիւն քրտինք թափելով ճգնում է պայծառացնել վաներս: Նորոգել տուած է մի քանի խուցեր, որոց առջև տեսլեամբ գտած է մի պղնձեայ ահագին կաթսայ, ապա փորելով գիտինը հանած է նոյն կաթսայն և ղրկած Մայր աթոռի սուրբ Էջմիածնի տաճարի պահարան, որ ունի ձուլածոյ շինուածք 21 փութ և 26 ֆունտ ծանրութիւն, երեք հնաձև ոտք, չորս ամուր կանթեր և այս արձանագրութիւնը. «Ի թ. ՈՁԱ. ես Զոսիմա բահանայ միաբանակից անձամբ ստացա զքորս յարդեանց իմոց. միաբանքս էտուն ինձ Ի տարին Ա, ժամ Գորգա (Գէորգայ) զատրավարի տաւնին»: Կաթսայի հետ գտած է նաև մի զանգակ, որ ունի 2 փութ 2 ֆունտ ծանրութիւն: Արժանապատիւ Հայր-սուրբն մաքառելով ամեն տեսակ նեղութեանց, աղքատութեանց և թշուառութեանց հետ պահպանում է վանքերս և ցարդ հազիւ կարողացած է վանքապատկան անել 5000 օրավար հողերից միայն 1105 օրավար (դեսեատին) հող, և այս ևս տակաւին վճռուած չէ վերջնականապէս:

Վանքերս, իւրեանց արևմտեան կողմում, ունին կալ, քարուկիր մարագ, կալապան և ահագին ցորենահոր. ունին նաև վարելահող, անտառ, խոտահարք, թոնրատուն, ջրաղաց, գոմ և անասուն: Այս ամենի վերակենդանութիւնը պարտական ենք Պօղոս Հայր-սրբին:

Վանքիս արևելեան կողմում կայ երեք քարուկիր մա-

[1]) Եղծուած են բոլոր կէտադրեալ բառերն:

տուռ։—Կիսաւեր է Ա. մատուռն, որ շինուած է մի մեծ պաղաղ քարի վերայ։

Բ. Մատուռն փոքրիկ է և ունի գաւիթ։

Գ. Մատրան, որ նոյնպէս ունի գաւիթ, փլած է թաղը։ Երևի թէ յատուկ դամբարաններ եղած են մատուռներս, որոց գաւիթներում և շրջապատում կան գերեզմաններ։—շատ հեռի չեն վանքերիս քարահանքերն։

Վանքերիս շրջապատներում

Խազինա-քար. վիմահերձ ապառաժ քարայր, որ գտնուում է վանուցս հիւսիս արևմտեան կողմում։ Վիմահերձս իւր հիւսիսային կողմով ունեցած է միայն մի դժուարատար մուտք, որ աւերուելով ժամանակի մաշիչ բռնութիւնից, այժմ եղած է անմատչելի։ Աւանդաբար ասում են թէ *վանքիս գանձն պահուած է քարայրումն։* Մի քանի տարի առաջ Լօռիցի ոմն երիտասարդ *Դալլաք—Յովսէփ* անուն կտրում է երկար և բազմաճղի ծառեր, շարում քերձի ճակատին, բարձրանալով վերեւակ ճղներով մտնում ներս և տեսնում որ Խազինաքար ասուածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի *քարայր*, որի առաջի բաց կողմը քարուկիր պատով պատած են ժամանակաւ և ձևացրած մի փոքրիկ բերդակ։ Նոյն դալլաքն (սափրիչ) հանած է այրից միջից գորգի, կարպետի և այլ բրդեղէն կարասեաց փտած մանրուքներ։ Քարայրիս վերևում քերձի գլխին կայ մի խորագոյն *հոր*, որի բերանի լայնութիւնն մօտ մի մետր է։ Շատերն կարծում են թէ հորս հաղորդակցութիւն ունի քարայրին հետ և գուցէ մի ժամանակ հորովս ել և էջ արած լինին մարդիկ։

Մեծ—աղբիւր. Քարայրիս ստորոտից բղխում է յորդառատ ակն, որ բանեցնում է երկու ջրաղաց։

Անյայտացած ջերմուկ. Պատմում են թէ տաք ջուր եղած է վանուցս արևմտեան կողմում. բայց վանքերս անմարդաբնակ մնալուց յետոյ՝ բնակում են սրբավայրերումս մահմետականները, որք անյայտացնում են *տաք ջուրդ*՝ կաս-

կածելով թէ ջրին պատճառաւ քրիստոնեայք շինութիւնները կը շինեն ջրին մօտ և իւրեանց ձեռքերից կը խլուին շատ բարիքներ։ Մի քանի տարի առաջ մի խոզարած տեսնում է որ իւր խոզերից մին ընկաւ մի փոքրիկ լճակի մէջ, իսկոյն աղիողորմ խանչեց խոզն և առժամայն թափուեցան խոզին մազերն։ Խոզարածն փորձելու համար ձեռնը մտեցնում է ջրին և իսկոյն զգում որ սարսափելի տաք է այն։ Խոզարածս խոստանում է ցոյց տալ լճակը արժ. Պօղոս վարդապետին, բայց անսպասելի մահուամբ վախճանուում է և վերտին անյայտ է մնում ջերմկի տեղն։

Աւերակ Հաղարծին գիւղ. Վանքերիցս քառորդ մղոնաչափ վար, ճանապարհի վերայ, Հազարծին վտակի ձախ ափին է գիւղի աւերակն, ուր կայ և հանգստարան և կործանեալ եկեղեցի։

Բ. ՆՈՐ-ՇԱՐ-ԽԱՉ ԳԻՒՂ. Հիմնուած է Հազարծին աւերակից մղոնաչափ վար Աղստև գետակի ձախ ափի լանջի վերայ. բնակիչք նախ Ջրաբերդի գիւղերից տեղափոխուած են Հաչա-ջուր, ապա Նոր-Շար-Խաչ գիւղս. հողն արքունի և սակաւ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն. բարեխառն օդն, կլիման, և անվնաս ջուրն. երկար կեանք 80—90 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի։

Ծուխ 55, ար. 504, իգ. 483։

Հախկահսլու կոչուած տեղում, որ բաւական վար է Նոր-Շար-Խաչից, կայ աւերակ գիւղատեղի, կանգուն մատուռ և հանգստարան. այժմ մահմետականաբնակ է։

Գ. ՔՐԴԵԻԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Կայենի[1]) լեռնաբազուկների մէկի հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք նախ Արցախի գաւառներից տեղափոխուած են Սև—քար գիւղն,

[1]) Հայերէն Կայենի սար (տաճ. Դայի դաղ) է կոչուում լեռս, որ կայ Նոր-Շար-Խաչի հիւսիսային կողմում և ունի 8741 ոտք բարձրութիւն։ Տէրն մի՝ արաւել, եթէ շրջակայ գաւառներումս կարկուտ իջնելու լինի, փորձով հաստատուած է, որ կարկուտն նախ գոյանում է սարիս վերայ դիզուած ամպերի բովի մէջ, թերևս այս վատ յատկութեանց համար անուանած են ԿԱՅԵՆԻ ՍԱՐ։

ապա այստեղ. հող, արքունի, հացատու, բայց բազմիցս կարկտահար. տեղական բերքերն նոյն. գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 110 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին։

Ծուխ 32, ար. 255, իգ. 233.

Դ. ԹԱԼԱ ԳԻՒՂ. Շինուած է Ազատև գետակի ձախ կողմում, մի սարի ստորոտում. բնակիչք տեղափոխուած են Խաչէն և Ջրաբերդ գաւառներից. հողն արքունի. տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն անվնաս, երկար կեանք 80 տարի, եկեղեցին սուրբ Նշան. ծածքն փայտաշէն, քահանայ մի։

Ծուխ 40, ար. 268, իգ. 230.

Ե. ԽԱԻԱՐԱԶՈՐ շէն (Ղարանլուղ գերէ). Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմի խոր ձորի բերանի հովտում, բնակիչք տեղափոխուած Արցախի նոյն գաւառներից. հողն արքունի, տեղական բերքերն՝ խաղող. թուէթ, ոչխար, տաւար, խոզ. վատառողջ օդն և կլիման, երկար կեանք 55—60 տարի, եկեղեցին սուր Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Հաչա-ջրից։

Ծուխ 15, ար. 82, իգ. 67.

Զ. ՆԵՐՔԻՆ-ԱՂԴԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Ազատև գետի ձախ կողմում. խճուղու գլխին. բնակիչք փոքր մասամբ բնիկ. հողն արքունի և նուազ բարեբեր, տեղական բերքերն նոյն, վնասակար ամրան օդն և կլիման. երկար կեանք 54 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին. քահանան գալիս է Թալալից։

Ծուխ 20, ար. 127, իգ. 100.

Է. ՆՈՐ-ՀԱՋԱ-ՋՈՒՐ ԳԻՒՂ (Աչա-սու) Հիմնարկուած է նոյն գետակի ձախ կողմում, երկու առուակներ մէջ. բնակչաց մեծ մասն բնիկ, իսկ փոքր մասն տեղափոխուած Արցախի լիշեալ գաւառներից. հողն արքունի և բարեբեր, գինևէտ և ուրեք ուրեք ջրարբի. տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, պատուական ջուրն, երկար

կեանք 80—85 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին. նորաշէն, կառուցեալ չորս սիւների վերայ. երկարութիւնն 21 մետր 40 սանթիմ, լայնութիւնն 13 մետր 25 սանթիմ. քահանայ երկու։ Եկեղեցւոմս կայ մի ձեռագիր յայսմաւուրք, բայց թափուած են թերթեր, պակասաւոր է, և անյայտ գրողի անունն ևն.

Ծուխ 151, ար. 1007, իգ. 890.

Նահատակ. անունն անյայտ ուխտատեղիս գտնուում է գիւղիս հիւսիսային կողմում մի բարձրակատար սարի վերայ. անտաշ քարով շինուած քարուկիր մատուռ է, որ ունի սքանչելի տեսարան։

Սուրբ Յովհաննէս. Քարուկիր մատուռ, ուխտատեղի գիւղիս արևմտեան կողմում, որի մօտ կայ Հանգստարան։

Հին-Հաչա ջուր. Գիւղիցս վերև, ջրաձորի ձախ կողմում, Մակարայ վանքի հիւսիսային հանդէպ, ուր կայ գիւղատեղին և հանգստարանն։

ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔ (64)

Հիմնուած է Հին-Հաչա-ջրի հարաւային հանդէպ, մի գեղեցիկ և բարձրահայեաց սարահարթի վերայ։

Ա. Հին-Վանք սուրբ Աստուածածին ամենից առաջ շինուած կիսատաշ քարերով, խաչաձև, որ ունի չորս փոքր, մի աւագ խորան, վեց լուսամուտ, մի դուռն, 11 մետր երկարութիւն 8 մետր 10 սանթիմ լայնութիւն և մի գաւիթ իւր արևմտեան կողմին կից, որ կառուցեալ է չորս սիւների և տասն կիսասիւների վերայ։ Մէջ տեղում չորս կամարների վերայ եղած է մի հրաշալի գաւիթ, որ խոնարհած է այժմ։ Միապաղաղ են և բոլորշի տաշուած սիւներն[1]) և կիսասիւներն, որք ունին և գեղեցիկ պատուանդաններ և խոյակներ։ Գաւիթս իւր հարաւային կողմում ունի երկու փոքր խորան իրարու վերայ. հիանալի է քանդակագործ սանդուղն, որ

[1]) 2 մետր 71 սանթիմ է սիւների հաստութիւնն։

տանում է վերի խորանն. իսկ իւր հիւսիսային կողմում ունի մի մեծ սենեակ, որ եղած է մատնատուն (նշխար գործելու տեղ). որի մէջ կայ վառարան (բուխարի)։ Գաւիթս ունի նաև երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերից, վեց լուսամուտ. 14 մետր 10 սանթիմ երկարութիւն և նոյնչափ լայնութիւն։

Գաւթիս ղրան սեմի վերայ

«ՈՂ. թիւս. Թամելս մեծ յուսով միաբանեցայ Աստուածածնիս և ետու (զարդիւնս) յուսովն Աստուծոյ»։

Սորանից ներքեւ. «Ես Սերոբ և Թոմա քահանայք և եղբարք զմեր հոգոյ արդիւնս տուաք ի սուրբ Աստուածածինս. հայրս Յովհաննէս և միաբանքս ետուն մեզ Ր. պատարագ Թոմային ի տաւնի Անտոնի. որ խափանէ, մեր մեղացն պարտական է և դատի յԱստուծոյ թվ. ՉԲ.»։

Բ. ՆՈՐ-ՎԱՆՔ. Շինուած է ամբողջապէս սրբատաշ պղնձագոյն քարով կից հին վանքին և գաւթին խաչաձև, չորս բարձրակառոյց կամարների վերայ. բայց խոնարհուած է այժմ սորա կաթուղիկէն։ Վանքս որ շինուած է Գանձասարի ճաշակով, ոճով և ճարտարապետութեամբ, ունի եօթն քոքր և մի աւագ խորան, տասն և մի լուսամուտ (երեքն կլորակ է), երկու խորհրդարան, երկու դուռն հիւսիսից և արևմտքից. 15 մետր 30 սանթիմ երկարութիւն և 11 մետր 10 սանթիմ լայնութիւն։ Աւագ խորանի կլորակի վերայ շինուած է տասներեք հատ ամենափոքր, բայց ամենագեղեցիկ խորաններ, որպիսին տեսանք միայն Խորանաշատ վանքի աւագ խորանում։ Վերին փոքր խորանների մուտքն բացուած է աւագ խորանի միջով։ Հրաշալի և ուշագրաւ է բեմի ժողովրդահայեաց ճակատն, որ շինուած է գոյնզգոյն քարերով և զարմանազան նրբաքանդակ նախշերով։

Հարաւային փոքր խորանի դրան վերայ.

«Կամաւն Աստուծոյ ես Դաւիթ առաջնորդ սուրբ ուխտիս կամակցութեամբ եղբարցս գրեցաք զՏեառն ընդառաջ աւրն զամեն եկեղեցիքս, որ Վահրամա լինի պատարագ, որչափ ի շինութեան է սուրբ ուխտս, ով խափանէ...»։

Հարաւային որմի վերայ, ներքուստ, նոյն խորանի մօտ.

«Անուամբն Աստուծոյ այս մեր գիր է Դաւթի և այլ միաբանացս որ գրեցաք վասն Յովսէփայ, որ ետ ոսկի ի գին եկեղեցւոյս և մեք տուաք Ա. պատարագ ի տաւնի քառասնից»։

Արեւմտեան լուսամտից վերեւ, արտաքուստ.

«Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա Իւան Շահին և ամուսնոյն ՈՂԲ.»։

Արտաքուստ հարաւ. որմի վերայ արեւի ժամացուցի տակ.

«Յուսով Աստուծոյ ես Յովանէս քահանայ էտու զիմ հոգոյ արդիւնս և գնեցի յԱրտաւազայ իւր ամեն որդեանցն զայգին և ընծայեցի Աստուածածնիս. Յովանէս առաջնորդ և միաբանքս էտուն Ր. ժամ ի տաւնի աշխարհամատրան. Ա. ժամ ինձ և Ա. ժամ իմ մաւրն Զուզին. ով զայգին խափանէ, ՅԱՀ. հարապետացն անիծած է թվ. ՉԹ.»։

Գ. ՓՈՒՐ ՄԱՏՈՒՈՒ. շինուած է վանքերիս արևելեան կողմում և ունի սոյն արձանագրութիւնը «Ի թուին ՈՒԽԷ. Հայ (ոց) ես յամենայնի մեղապարտս Յովհաննէս՝ ամեն միաբան եղբարցս կամակցութեամբ և ձեռնտուութեամբ՝ զեկեղեցիս՝ յիմ ծնողացն և եղբարցն, որ այժմ ննջեցեալ են, յանուն շինեցի Վասակայ, Շուշիանն, Հասանա և Վաչէի, և խնդրեմ մեծ յուսով և հաւատով և զԱստուածածնին և զՔրիստոսի չարչարանն բարեխաւս ունիմ, որ յետ իմ սպասաւորին տեղոյս,

զի զատկի աւրն նոցա արասցեն ժամ, որ խափանէ, նղով աւցէ. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»։

Այժմ աւերուած են վանուցս շրջապարիսպն և միաբանից սենեակներն և խուցերն և տեղ տեղ թափուած վանքերի սալկաններիցն և որմերից քարեր։ Գերեզմաններ կան գաւիթներում, վանքերիս արևմտեան կողմերում և դռների առաջ։

Հարկ է յայտնել որ Ե. վանքի արևելեան արտաքին որմի վերայ կայ մի երկար արձանագրութիւն, որի մէջ յիշուած է միայն Մակարայ վանք անունն։ Անմարդաբնակ են վանքերս։

Հին-Պիսպիս գիւղ. Այժմ աւերակ գիւղ, սուրբ Աստուածածին անուամբ կանգուն մատուռ և Հանգստարան վանքերիս հարաւային կողմում։

Քոլամիջի խաչ. Մակարայ վանքից վար, ճանապարհի հարաւային կողմում (և Հաչա-ջրից վերև) *գիւղատեղի*, Հանգստարան և փոքր եկեղեցի սուրբ Աստուածածին անուն։

Ը. ՍԵՒ ՔԱՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Հաչա-ջրի հիւսիսարևմտեան կողմում, մի հովտի մէջ. բնակիչք տեղափոխուած են Կիւլստան և Ջրաբերդ գաւառներից, հողն արքունի, ջուրն սակաւ, տեղական բերքերն նոյն, պատուական օդն. կլիման և ջուրն, երկար կեանք 90—95 տարի, եկեղեցին սուրբ Պետրոս, ծածքն փայտաշէն, քահանայ երկու։ Եկեղեցումս կայ երկու ձեռագիր աւետարան, որք պակասաւորք են, և չունին յիշատակարան.

Ծուխ 175, ար. 1306, իգ. 1116.

Թ. ՆՈՐԱԳԵՂ. Սև գեղ կամ Ղլիջ-քեանդ. Հիմնուած է մի սեռի վերայ Սև-քարի հիւսիսային կողմում, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի և միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, պակաս ջուրն, երկար կեանք 80—85 տարի, եկեղեցին սուրբ Յովհաննէս, ծածքն փայտաշէն. քահանայ մի։

Ծուխ 77, ար. 411, իգ. 342.

Ժ. ՄԷԼԻՔ ԳԻՒՂ. Հիմնուած է մի տեսարանաւոր հարթի վերայ. Սև գիւղի արևմտա-հիւսիս կողմում. բնակիչք բնիկ. հողն արքունի, անջրդի. միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրը, երկար կեանք 90—100 տարի. եկեղեցին սուրբ Յովհաննէս. ծածքն փայտաշէն, քահանայ մի։

Ծուխ 38, ար. 262, իգ. 175.

ԺԱ. ՆՈՐ-ՊԻՊԻՍ կամ Ջողազ. Հիմնուած է Ոսկեպար[1]) (ըստ տաճկ. Ասկի փարա) վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ, հողն կիսով չափ արքունի, տեղական բերքերն նոյն. անախորժ ամրան օդն, կլիման և ջուրն, և տենդաբեր, երկար կեանք 50 տարի, եկեղեցին սուրբ Գէորգ. ծածքն փայտաշէն. քահանան գալիս է Մէլիք գիւղից։

Ծուխ 35, ար. 177, իգ. 174.

ԺԲ. ՆՈՐ-ԿՈՒՆԷՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Նոր-Պիպիսի արևմտեան կողմում այն սեռի վերայ, որ ընկած է Ոսկեպար վտակի և Կունէն առուակի մէջ. բնակիչք գաղթած Երևանի Նորք և Կողթ կամ Շամշատին գաւառի Կռզեն գիւղերից. հողն կիսով չափ արքունի. տեղական բերքերն նոյն, օդն կլման և ջուրն ոչ այնքան գովելի, երկար կեանք 60—70 տարի, եկեղեցին սուրբ Երրորդութիւն, քահանան գալիս է Ոսկեպար գիւղից։

Ծուխ 34, ար. 185, իգ. 156.

Սուրբ Աստուածածին մատուռ. Գիւղից վերև Կունէն[2]) առուակի աջ ափի բարձրութեան վերայ. շինուած անտաշ քարով մի կամարի վերայ։ *Դրան գլխի քարին վերայ.* «Թվին ՌՃԽԹ. ես Մէլիք-Շահնազարս... ամուսին Խանդատէն շինեցինք սուրբ Աստուածածին ձեռամբ Յակոբին»։ Մեծ Հանգստարան շրջապատած է մատրանս շուրջն։

Հին Կունէն աւերակ, որ կայ մատրանս հիւսիս-արևմտեան հանդէպ առուի ձախ ափին։

---

[1]) Վտակիս ջուրն միանում է Աղստևին Ղազախ քաղաքի հանդէպ։ Գիւղիս մօտ կայ մի ուխտատեղի Պիպիս կամ Ջողազ անուն. ուխտի օրն է զատիկ օրերն։

[2]) Խառնուում է Ոսկեպարին։

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ 1)

Հին-Կունէնից փոքր ինչ վերև, նոյն առուակի ձախ կողմում մի լեռնաբազկի վերայ։ Հիմնուած է չորս կամարների վերայ, որ ունի մի աւագ խորան (առանց փոքր խորանի), չորս լուսամուտ, երկու խորհրդարան, մի կաթուղիկէ, մի դուռն արևմտեան կողմից, 10 մետր 25 սանթիմ երկարութիւն, 7 մետր 45 սանթիմ լայնութիւն։ Որմերի ներսի երեսները շինուած են անտաշ, իսկ դրսի երեսները՝ սրբատաշ քարով։ Մենաստանս ունի և գաւիթ, որ կից է իւր արևմտեան կողմին, կառուցեալ ութ կիսասիւների վերայ, երկարութիւն (հիւսիսից հարաւ) 10 մետր 40 սանթիմ, լայնութիւն 9 մետր 50 սանթիմ։ *Գաւթիս դրնագլուխ քարի վերայ.* «Ի թվին ՈՂԴ. կամաւ բարերարին Աստուծոյ և ողորմութեամբ՝ Աթաբագ ամիր սպասալար Խութլու փուղին (Խութէ ու Բուղին) ես Գրիգոր թոռն Խաչենիսենց ապաւինեցայ սուրբ առաքելոյս իմ հալալ արդեամբ և քնակիչք սուրբ ուխտիս ետուն Ք. պատարագ 'ի տանի սուրբ Գրիգորի գիւտի նշխարացն-. կատարիչքն աւրհնին Աստուծոյ և խափանողքն դատին 'ի Տէր»։

Արտաքուստ տաճարիս հարաւային որմի տակ կայ մի նշանաւոր խաչարձան, որի երկարութիւնն 2 մետր 50 սանթիմ է (առանց պատուանդանում գետեղուած մասին) լայնութիւնն 1 մետր 10 սանթիմ։ Խաչարձանիս վերին մասումն քանդակուած է Յիսուսի Քրիստոսի պատկերն[2]), որը բռնուած են երկու հրեշտակներ։ Իսկ Յիսուս Քրիստոս բռնած է իւր ձեռքում մի թուղթ, *որի վերայ* քանդակուած է,

«Ես եմ լոյս աշխարհի....»։ Իսկ *ստորին մասում.*

«Ով քառաթև սուրբ պանծալի,
Փրկագործող մարդկան աղդի,

[1]) Հիւսիսային պատում կայ մի գաղտնի պահարան, որի ճանապարհն գաւթի տանեաց վերայովն է։

[2]) Փորագրուած է պատկերիս կողքերով. «Բանն Հայր
Բարձրեալ անսկզբնական
Կարապետին լեր աւդնական»։

Տեսիլ փառաց անճառելի,
Գերապայծառ և սխրալի,
Յորժամ փայլես ընդ ամպս երկնի,
Լեր բարեխաւս Տեառն Յիսուսի,
Կարապետին քո աւգնողի,
Ալմկանին իւր կենակցի,
Եւ զաւակացն գովելի,
Համայն աղգացն, որ 'ի կամս Հայր ննջեցին»։

Խաչարձանիս վերայ փորագրուած են նաև ուրիշ խօսքեր աւելի խոշոր գրերով, սակայն անընթեռնելի են, քանզի եղծուած են։

Մենաստանս ունի ամրոցի նման ամուր պարիսպ՝ շինուած լեռնաբազկի գիրքով, որ ձգուած է գրեթէ հիւսիսից հարաւ և ունի հաստատուն և բարձր բուրգեր։ Պարսպի ներսում կան միաբանից խուցեր, պալատանման բնակարաններ, սենեակներ և գոմեր։ Վանքիս արևելեան կողմում, հովտի մէջ կայ, գիւղատեղի, ձիթահանքեր և հին շինութիւններ։ Իսկ հարաւ արևմտեան կողմում, ձորի միւս լանջի վերայ, հանգստարան և մի քառաթև և բարձր խաչ, որպիսին տեսանք Խամշի վերքի մօտ։

Կերանց վանք.

Հիմնուած է Առաքելոց վանքից բաւական վերև նոյն վտակի ձախ ափի մօտ։ Տաշուած մոխրագոյն քարով շինուած են դռներն և հիմքից բարձր երկու շար քարերով շրջապատն. իսկ մնացեալ բոլոր մասերն շինուած են թրծեալ աղիւսով։ Մենաստանս կառուցեալ է երկու սիւների և երկու կիսասիւների վերայ, խաչաձև է ներքուստ, բայց եկեղեցու ձև ունի արտաքուստ։ Ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, երկու դուռն (հարաւից, արևմուտքից) ութ նեղ և երկար լուսամուտ, մի բարձրագոյն և գեղեցիկ կաթուղիկէ[1]). 17 մետր 60 սանթիմ երկարութիւն, 12 մետր

[1]) Կաթուղիկէիս արտաքին երեսն շինուած է մանր և գոյնզգոյն եփած աղիւսներով։

15 սանթիմ լայնութիւն: Բարձրում նկարուած են սրբոց պատկերներ, բայց ոչ հայկական ճաշակով և ոճով, այլ յունական. սակայն պատկերների ստորոտում կան հայերէն գրեր, զորս անհնարին եղաւ մեզ կարդալ խիստ հեռաւորութեան պատճառաւ: Հիւսիսային փոքր խորանի միջից կայ մի վերելակ, նեղ և մութ սանդուղ, որ տանում է մի գաղտնի պահարան:

Բեմի դասահայեաց ճակատն չէ շինուած աղիւսով, այլ քարերով, որոց վերայ կան նրբագործ քանդակներ, ծաղիկներ և նախշեր. գեղեցկաքանդակ են և դռների սեմերն:

Մենաստանս ունի երկու գաւիթ. արևմտեան դրան վերայ եղած գաւիթն շինուած է տաճարիս լայնութեան չափով. իսկ հարաւային դրան վերայ եղածն՝ ըստ երկարութեան: Տաճարիս հիւսիսային կողման կից կայ մի մատուռ, որի ստորին մասն շինուած է քարով, իսկ վերնամասն՝ աղիւսով: Տաճարիս արևմտեան գաւթից մի քանի քայլ դէպի արևմուտք, երեք կամարի վերայ շինուած է մի ընդարձակ շինութիւն, որ ունի երկու դուռն արևելքից և արևմուտքից: Կարծում ենք թէ սեղանատուն է այս կամ ուսումնարան:

Տաճարս ունեցած է քառակուսի ձևով շրջապարիսպ, որ սկսուած է սեղանատուն կարծուած շինութեան հիւսիսային ժայռից, պատած հարաւային և արևելքից հասցրած նոյն ապառաժ ժայռի ծայրին, որ քանդուած է արդէն: Ունեցած է և սենեակներ և խուցեր, որք աւերուած են այժմ: Տաճարիս հարաւային և արևելեան արտաքին որմերի տակերն լի են գերեզմաններով:

Պարսպի շուրջն լի է տնատեղի բակերով. իսկ գիւղիս հանգստարանն գտնուում է հիւսիսային հանդէպ եղած մօտ բլրակի վերայ:

Դեղձնուտի վանք

Հիմնուած է Կերանց վանքի հարաւ-արևելեան կողմի անտառապատ լեռների մէջ: Հարաւային կողմից միանում է

Կունէն վտակի մի այլ առուակ, որի ջրաձորի արևմտեան կողմում բաւական վերև շինուած է Դեղձնուտ անուն վանքն *Դեղձնուտ* կոչուած տեղում: Վանքս ամբողջապէս շինուած է սրբատաշ քարով, որ գրեթէ ունի Մակարայ վանքի մեծութիւնը և մի գաւիթ, որ շինուած է շատ յետոյ: Տաճարս ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, մի դուռն արևմտեան կողմից: Գաւթումս ամփոփուած են մի քանի ննջեցեալներ, սակայն աւելի ուշագրաւ են երկու գեղեցկաքանդակ խաչարձաններն, որոց գեղարուեստի նրբագործութիւնն ներկայացնում է ժամանակին ճարտարապետութեան արտափայլումը: Հարկ է յայտնել թէ խախտուած է վանքիս գաւիթն, որի մօտերքում կան գերեզմաններ:

Սամսոնի վանք. Կառուցեալ է Խնձորկուտի ջրաձորում, մի տափարակ տեղում, անտաշ քարով: Փոքր վանքս, որ ներսից խաչաձև է, ունի կամարակէք, աւերակ խուցեր և հանգստարան:

ԺԹ. ՆՈՐ-ՈՍԿԵՊԱՐ (Աքսիպար). Հիմնուած է Կունէն գիւղի հիւսիսի-արևմտեան կողմում Ոսկեպար վտակի աջ կողմի բարձրութեան վերայ, բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, ոչ այնքան գովելի օդն և կլիման ամրան, երկար կեանք 75 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի:

Ծուխ 35, ար. 172, իգ. 121.

Հին-Ոսկեպար. Ընդարձակ աւերակ, Նոր-ին հանդէպ, վտակի ձախ կողմումն, որի մէջ կայ կիսաւեր մեծ եկեղեցի և հանգստարան, բաղանիս և փլատակների տակ ծածկուած շէնքեր: Փորուածքներից գտնում են սակեղէն, արծաթեղէն և պղնձեղէն զարդեր և անօթներ և երկաթեայ խոփ, ձևիչ, ճամբարակ: Այս տեղից փոխադրուած են Նոր-Ոսկեպարի բնակիչներն. բայց այժմ թրքաբնակ է աւերակս:

Աշտարակ. Աւերակ Ոսկեպարից վերև կայ մի քարուկիր բարձր աշտարակ նոյն վտակի ձախ կողմում, որը անուա-

նում են Ղըզ-Ղալա: Մի գիտարան է այս:

Ջոխտակ եկեղեցի. Մօտ մղոնաչափ վերև կայ աւերակ հայկական *գիւղ. Հանգստարան* և երկու մօտ առ մօտ կիսաւեր *եկեղեցիներ*: Ահա այս է նոյն անունը կրող աւերակն, որ այժմ թրքաբնակ է:

Աւերակ *Գիւղատեղի, Հանգստարան* և *եկեղեցի* կայ Նոր-Ոսկեպարի հիւսիսային հանդէպ վտակի ձախ կողմում:

ԺԴ. ԲԱՂԱՆԻՍ ԳԻՒՂ. Հիմնուած է այն լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ, որ սկսուած է արևմտեան լեռներից, անցած ձչեվանք, Բաղանիս և Ղոշղոթան գիւղերի հիւսիսային կողմով դէպի Գաւարգին: Բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, երկար կեանք 85 տարի, եկեղեցին փայտաշէն և վնասուած, քահանան գալիս է Ղոշղոթան գիւղից, որ խիստ մօտ է:

Ծուխ 47, ար. 239, իգ. 183.

ԺԵ. ՂՈՇՂՈԹԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Բաղանիսի հիւսիս-արևելեան կողմում. բնակիչք բնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Յովհաննէս, ծածքն փայտաշէն, քահանայ երկու:

Ծուխ 89, ար. 575, իգ. 450.

ԺԶ. ՃՁԵՎԱՆՔ ՇԷՆ. Բաղանիսից վերև մի անտառապատ ձորի ձախ լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են այստեղ Ջալու և Հաղբատ գիւղերից. հողն արքունի, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն, եկեղեցին նորաշէն սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Պարանայ գիւղից. Ծուխ 17, (արականք և իգականք հաշուած են Ղոշղոթանի վերայ):

Վեղայ սուրբ Սարգիս վանք.

Հիմնարկուած է մի անտառապատ եւ խոր ձորի աջ լանջի հարթակի վերայ, որի հիւսիսային կողմն վիմահերձ

ապառաժ է: Մենաստանս շինուած է ամբողջապէս սրբատաշ քարով, բայց եկեղեցու ձևով և ունի երկու փոքր, մի աւագ խորան, մի առանձին խորան ևս հիւսիսային որմի մէջ, մի գուռն հարաւային կողմից, մի քանի լուսամուտ, մի զանգատուն, որ բազմած է աւագ խորանի գլխին, 11 մետր 80 սանթիմ երկարութիւն, 7 մետր 80 սանթիմ լայնութիւն: Հնաշէն են աւագ խորանն և հիւսիսային երկու խորաններն, իսկ նորոգուած են մնացեալ բոլոր մասերն:

Հարաւային կամարի վերայ «Շինեցաւ յատակս սուրբ սեղանոյս արդեամբ Խաչատուր և Դարչօ Հախվերտեանցի»: *Դրան ճակատին:*

«Ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ եկեղեցիս յանուն սրբոյն Սարգսի տրովք բարեպաշտից, ջանիւք և վերակացութեամբ տփխիսեցի Եսայեան Նուրենց, զոր յիշատակէ Տէր յաւուրն վերջին: Հիմնարկեցաւ 'ի 1845 և աւարտեցաւ 1849 ամի Տեառն»:

Վանքիս հիւսիսային կողմում կայ մի մատուռ սուրբ *Կիւրակէ* անուն: Մատրանս հիւսիսային խոր ձորում ժայռից բղխում է մի պատուական ջուր, որը անուանում են *Օրհնած աղբիւր:*

Ոմանք թխփւեցիք շինած են վանքիս մօտ մի քանի սենեակներ, ուխտի օրերն են ամեն գատկին. մեծ բազմութիւն է լինում այստեղ ուխտաւորաց:

ԺԷ. ՆՈՐ-ՊԱՐԱՆ կամ ԱՊԱՐԱՆ գիւղ. Շինուած է սուրբ Սարգսի արևմտեան հիւսիսային կողմում մի ջրաձորի արևելահայեաց լանջի վերայ. ամբողջ ձորն զարդարուած է այգիներով, բնակիչք տեղափոխուած են այստեղ Ապարանից, վասնորոյ և պահած իւրեանց նախկին բնակավայրի անունը-Ապարան—, որը կրճատելով կոչած են Պարան: Հողն արքունի, լեռնային, սակաւ, բայց արդիւնաւէտ, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման և ջուրն գովելի, երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Սարգիս. ծախքն փայտաշէն, քահանայ երեք:

Ծուխ 95, ար. 573, խգ. 441.

Աւերակ գիւղ, հանգստարան և եկեղեցի կայ *Հին-Պարանում*, որ գիւղից վերև է և *Մկնաձորում*: Իսկ Պղնձահանք, որ կայ *Միսխանա* կոչուած տեղում, աւելի վերև է Հին-Պարանայ աւերակից:

ԹԸ. ՆՈՐ-ԿՈՂԲ ԳԻՒՂ. Շինուած է Պարանայի արևմտեան կողմում (խիստ մօտ) մի ջրաձորի արևմտահայեաց լանջի վերայ, բնակիչք տեղափոխուած են Արարատեան նահանգի Կողբ գիւղից, վասն որոյ պահած են միևնոյն գիւղանունը, բարբառը և սովորութիւնները. հողն արքունի, տեղական բերքերն նոյն, գովելի օդն և կլիման, բայց ոչ ջուրն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ վեց միապաղաղ սիւների վերայ, երկարութիւն 22 մետր 35 սանթիմ, լայնութիւն 13 մետ 5 սանթիմ, քահանայ երկու: Եկեղեցումս կայ մի *զբաշազիր* աւետարան, որ պակասաւոր, անպատկեր և թղթեայ է, որը գրած է Սարկաւագ Նասիլն Դիզակ գաւառին Տագ գիւղումն Հայոց ՌԺԲ. թուին:

Ծուխ 160, ար. 979, խգ. 814.

Միգասեան ուսումնարան, որ ունի գեղեցիկ շինութիւն, յարմար դասարանները և սոյն արձանագրութիւնը. «Կանգնեցաւ ուսումնարանական շինութիւնս ՚ի սեպհական տեղոջն սեպհական արդեամբ կամ ծախիւք Կողպա բնակիչք պ. Բէկլարի և որդոց նորա Սարգսի և Մարտիրոսի Տէր-Բարսեղեանց ի յիշատակ նոցա և որդոց նոցա ի թուականին Փրկչին 1892-ին և Հայոց ՌՅԽԱ.»:

Աշակերտք 30. համարեայ թէ ամենքն ևս Ձրիավարժ են. տարեկան վարժապետին 250 րուբլի:

Սուրբ Աստուածածին մատուռ. Գիւղիս հին հանգստարանում սրբատաշ մոխրագոյն քարով շինուած է կիսաւեր մատուռս, որի վերայ. «Ես Ասլան և Սար... զերկին խաչին զ... յեկեղեցիս և տվաք Ե.. սուրբ Աստուածածին Բ. աւր ժամ.. տարումն կարգեցաք լոյս.. Ադիլին և Աբևտեղին. ով

այլ հակառակեսցէ, Կայենին և Յուդային մասն ժառանգեսցէ»:

Մատրանս մօտ (արևելեան կողմում) մի խաչարձանի վերայ.

«Ի թուիս ՈՂԳ. ես Սարգիս քահանայ կանգնեցի զխաչս ի յիշատակ ինձ և որդոց իմոց Եպիփանայ, Եփրեմի և եղբարց Ունձ Ալէքսիոսի, Իգնատիոսի և հաւրեղբաւր իմոյ Ոհաննին, արդ որք երկրպագէք, յիշեսջիք զմեզ առ Քրիստոս»: Շարայարուած է. «ԶԱբել և տէր Աւագ կազմող խաչիս յիշեցէք ի Տէր»:

Սուրբ Նշան ուխտատեղի. Գտնուում է գիւղիս հարաւային կողմի բարձրագոյն սարի արևմտահայեաց սեռի վերայ, փայտաշէն է, որի մէջ մի կիսատ խաչքարի վերայ. «Ես Բենիամին վարդապետ Հայոց արարի յիշատակ ինձ սուրբ զբեմս, որ է հիմն հաւատոյ և պատուանդան սուրբ Նշանիս տեղի աղաւթից երթևեկաց և յոյս, որ գնան արդարութեամբ յերկրի»: Այլ քարի վերայ. «Յանուն սրբոյն Գիսայ (գուցէ Սարգիսայ) ես հայր Գրիգոր կանգնեցի նշանս Քրիստոսի աւգնական մեր ի Տէր և որք Տեառն են»:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ (65)

Սուրբ Նշանից փոքր ինչ վերև մի զմայլելի սարահարթի վերայ կառուցեալ է վանքս համակ սրբատաշ, սպիտակ, տորոնագոյն և երկնագոյն քարերով մի կամարի վերայ, որ ունի չորս փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, չորս լուսամուտ, մի դուռն, 12 մետր երկարութիւն և 8 մետր լայնութիւն: Հիանալի քանդակներով զարդարուած են բեմի և խորհրդարանների քարերն:

Դրան գլխի քարի վերայ.

«Ես Ռըստակէս և այլ միաբանքս հաստատեցաք ՚ի տարին Բ. ժամ. Ա.. Աբեսալայ, Ա.. Աղբղին ՚ի տաւնի քառասնից, որ խափանէ, մեր մեղացս տէր է առաջի Աստուծոյ»:

Տաճարիս արևմտեան կողմին կից է քառակամար և գեղեցիկ գաւիթ, որ կանգնած է երկու միապաղաղ սիւների և վեց կիսասիւների վերայ։ Գաւիթս ունի երկու փոքր խորան, երկու գեղեցկաքանդակ խաչարձան, երեք լուսամուտ, մի դուռն, 14 մետր 85 սանթիմ երկարութիւն 13 մետր լայնութիւն։ *Հարաւային խորանի վերայ* «Տէր Աստուած ողորմեայ յԱզատին և իւր ծնողացն ամեն ՈՂՋ.» *Հար. խաչարձանի վերայ.* «Տէր Աստուած ողորմի Աւմ Տողմիշին, Դաւիթին, Խոյտանին»։

Հիւսիսային խաչարձանի վերայ. «Տէր ողորմեայ Թաշտին և իւր ծնողաց, որ զխաչս կանգնեաց 'ի թվիս Հայոց ՉԽ.»։ Գաւթիս յատակն լի է տապանաքարերով, որք են գերեզման եպիսկոպոսաց և վարդապետաց։

Տաճարիս հարաւային որմի վերայ արտաքուստ, արևի ժամոցոյց. «'Ի թուակ Է՛ձԲ. (ՉԲ.) ես Վասակ, Սիսխալժունս էգի ետու Աստուածածնիս. Ուրստակէս և միաբանքս տվաք Գ. ժամ աւետեացն տաւնին. ով զիրուր տայ (խառնէ), յԱստուծոյ անիծած եղեցի»։

Վանքիս արևելեան կողմում (արտաքուստ) ընկած է մի կոտրած տափակ քար, որի վերայ գծուած է տասն և ինն կարակնաձև գծեր, որոց մէջ գրուած են հայոց թուեր-ա՝ բ. գ. դ. ե. զ. ևն. *Թուերն նման են տարեզրի, վերադրի, եօթներեակի.* երևի թէ դաս տալու համար շինուած է։ Քարիս ստորոտում քանդակուած է.

«Շարադրութիւն Գրիգորոյ»։ Շատ չանացի ընդօրինակել նոյնութեամբ, բայց որովհետև եղծուած են շատ գրեր, վասնորոյ թողի ականալից և հեռացայ։ Վանքիս շուրջն լի է գերեզմաններով, այս տեղ կայ և գիւղատեղի, որ կոչուում է *Վանք*։ Անյայտ են միաբանից խուցերի տեղերն։

Վանքիս *արևմտահիւսիս* կողմում, քարընկէց հեռի կայ մի *մատուռ*, որ շինուած է սրբատաշ քարով, իսկ հարաւ արևելեան կողմում, փայտաշէն ծածկով *Բարձրեալ* անուն այլ մատուռ։

Անշարժ խաչարձան. Վանքիս աղբիւրից վերև, քարահանքում վանքաշէն վարպետներն տաշած են քարահանքի ճակատը, նախ շինած մի մեծ խոնչայ և ապա խոնչային մէջ մի հիանալի խաչարձան։

Հին-Կողբ. աւերակ գիւղատեղի, կիսաւեր եկեղեցի և հին հանգստարան, որք կան Նոր-Կողբից վերև համանուն վտակի աջ կողմում։

Ցւարայ եղցի. աւերակ գիւղատեղի, հանգստարան և կիսաւեր ընդարձակ եկեղեցի, Հին-Կողբից մօտ քառորդ մղոն վերև նոյն ջրաձորի ձախ ափի վերայ։

Մխիթար վարդապետի մատուռ. Նոր-Կողբի այգիների գլխին, ջրի ձախ ափին, ծածկն փայտաշէն մատուռ, որի մէջ ամփոփուած են երկու վարդապետի և երկու քահանայի մարմիններ։

Սուրբ Առաքել. Գիւղիս արևմտա-հիւսիս հանդէպ սարի վերայ քարուկիր մատուռ, որից մնում են միայն չորս պատերն. որի մօտ կայ *գիւղատեղի* և հանգստարան։

Ամուրիներ (Ազափլար). մատրանս հարաւային կողմի բարձրութեան վերայ՝ խաչարձաններով գերեզմաններ, որոց մասին աւանդաբար ասում են. թէ երեսուն հայ ամուրի երիտասարդներ քաջութեամբ պատերազմում են Լեկզիների հետ և յաղթում նոցա հրոսակներին, բայց յետոյ նահատակուում են օժանդակ եկան Լեկզիներից և ամփոփվում են իւրեանց ընկած տեղերում և խաչեր կանգնում գերեզմանների վերայ և անուանում *Ամուրիներ*։

Վարդի գիւղ. Գիւղիս արևմտեան կողմում աւերակ *գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի*, որից մնում են չորս պատերն և վէմ քարն։ Հանգստարանումս կայ *սուրբ Գէորգ* անուն մի մատուռ.

Բարսում գիւղատեղի, հանգստարան և մի մատուռ, որի միջի գերեզմանը անուանում են *Բարսում ճգնաւոր*։

ԺԹ. ՇԷՆ կամ ՇԻՆՈՂ գիւղ. Հիմնուած է Զորագետի աջ կողմի բարձրութեան վերայ և բաժանուած երկու թաղի։

Հիւսիսային թաղն արդէն եղած է բերդաթաղում, որի շրջապատն անմատչելի վիմահերձներ են. այս բերդիս հիւսիսային կողմով հոսում է Ձորագետն, արևմտեան՝ Տինող գետակն, հարաւային աղբիւրաջրեր, արևելեան կողմն պարսպաւած է վաղուց, որ ունի և ամուր բուրգեր, այնպէս որ բերդավայրն բարձրացած է իւր չորս կողմի ձորերից։ Ամբոցս ունի երկու մուտք արևելեան և հարաւային, առաջի մուտքով ել և մուտք են անում սայլեր և անասուններ. իսկ երկրորդով ընդանիք ջուր են բերում աղբիւրներից, քան զի նեղ, զառիվայր և դժուարատար է։ Բոլորովին հարթ է բերդիս մակերևոյթն, որ ունի բաւական մեծութիւն և գեղեցիկ տեսարան։ Եկեղեցին սուրբ Գէորգ[1]) Նորաշէնն. հոյակապ, որ ունի 16 մետր 30 սանթիմ երկարութիւն, 9 մետր 82 սանթիմ լայնութիւն, քահանայ մի։ Բարեկրօն Ալեքսան քահանայի մօտ կայ մի ձեռագիր շարական, գրուած թղթի վերայ փոքրատիր։ *Ցիշատակարանից*։

«Արդ եղև աւարտ պրչութեան.. ի շրջակայութեան Հայկազեան տումարի հազար հարիւր և չորս ամի ի դառն և ամբարի, վշտաշատ ժամանակի, որ երերուր և տատանեալ աղգս Հայոց ի ձեռն այլազգեաց և անօրինաց և յանիրաւ պահանջողաց, ի հայրապետութեան տեառն Պետրոսի Նորընծայ և սրբազան կաթուղիկոսի և առաքելական աթոռ սորին Գանձասար կոչի և ի խանութեան երկրիս մերում Մուրթուզա խանին ի սուրբ և ի վերահռչակ ուխտիս որ կոչի.. Զարեքայ անապատ... բայց եղև սկսանել շարականոցիս ի երկրին մերում վերին Զակամ ի հայրենական գեօղն իմ անուն Պապաջան և այժմ օտարացեալ և վախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերոյ գրեցաք, ի գիւղս որ կոչի Խաւունիս, որ եղև աւարտ շարականոցիս, զի ի չէնս այս կայ պատուական Ջուխտակ

[1]) Բերդիս մէջ արևմտեան կողմում կայ մի հին եկեղեցի, որ կանգուն է ամբողջութեամբ։ Արևելեան կողմում, արտաքոյ բերդին, մի քարուկիր մատուռ սուրբ Աստուածածնին անուն, որի մօտ կայ և հանգստարան և քարայրներ, որք փոխուած են դոմերիս։ Իսկ բերդիս հիւսիսային քերթի քարայրներից ելնում է բորակ։

եկեղեցիս[1])... Գերեցաւ ձեռամբ ամենամեղ., զրչի Աւետիս անպիտանի քահանայ կոչի»։

Հարաւային թաղն կոչուում է Նորաշէն, որի բնակիչներն մօտ քառասուն տարի առաջ հատուածելով Տնողից հիմնարկուած են բերդի հարաւային հանդէպ։ Թաղս ևս ունի իւր յատուկ եկեղեցին սուրբ Սարգիս, հոյակապ կանգնեալ չորս սիւների վերայ, քահանայ երկու։ Երկու թաղերիս բնակիչներն ևս գաղթած են Արցախի մէլիքների գաւառներից, հողն արքունի և նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, բարեխառն օդն և կլիման, պատուական ջուրն. 85—90 տարի երկար կեանք։ երկու թաղերում միասին։

Ծուխ 197, ար. 961, իգ. 826.

Ղարախանի հանգստարան (Նորաշէնի արևմտեան կողմում) որի մէջ կայ մինչև 900 տարուայ խաչարձան և իւր մօտ գիւղատեղի և աւերակ եկեղեցի։

Բուրայ եղջի. որ կայ Ղարախանի հանգստարանի հարաւային կողմում, որի մէջ տարին մի անգամ պատարագ են մատուցանում *Բուրայ քահանայի* ոտնին, որի մարմինն ըստ աւանդութեան ամփոփուած է եկեղեցումս, որ նորոգուած է։

Տինու Սարկաւագ. մի աւերակ մատուռ, որ կայ Բուրայ եկեղեցու արևմտեան կողմում։ Աւանդաբար ասում են, «Մատրանս մէջ ամփոփուած է Տինու սարկաւագի մարմինն»։ Ուխտատեղի են երկոցունցս գերեզմաններն ևս—քահանային և սարկաւագիս—.

Ակեղցու ղաշ. Ղարաքեօթիւկ, Թեղուտ և *Ձորագեղ* կոչուած տեղերում ևս կան աւերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարաններ։

Մանստաւի վանք. Ձորագեղից հարաւ, Տինող վտակի վերայ սրբատաշ քարով շինուած վանք, որի տանեաց վերայ դրուած է մի խոյ (քարեայ արձան) որի գլուխն երևում է արևելեան կողմում. իսկ դմակն՝ արևմտեան կողմում։ Մե-

[1]) Թերևս ընթերցողն մտահան արած չէ Նոր-Գետաբակի արևելեան հանդէպ եղած ՋՈՒԽՏԱԿ ԵԿԵՂԵՑԻՆ, որի մօտ եղած աւերակն է ԹԱԻՈՒՆԻՍ գիւղն։

նաստանս ունի միաբանից խուցեր և հանգստարան։

Ի. *Արծէշ գիւղ.* Հիմնուած է Տինոզի կամ Տինու արևելեան կողմում, մի գեղեցիկ տեսարան ունեցող լանջի վերայ, բնակիչք տեղափոխուած են Տինոզ գիւղից. հողն արքունի. տեղական բերքերն նոյն, գովելի օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տարի. եկեղեցին սուրբ Յակովբ. ծածքն փայտաշէն, քահանայ մի, որի մօտ կայ մի ձեռագիր նարեկ, բայց սկզբից և վերջից թափուած են թերթեր։

Ծուխ 61, ար. 234, իգ. 202.

Սուրբ Յակովբ մատուռ. այս է նախկին բնակչաց փոքր եկեղեցին, գիւղիս վերի կողմին մօտ։

Ուղտըքամակ կոչուած ձորում, որ կայ գիւղիս արևելեան կողմում, կայ գիւղատեղի, հանգստարան և աւերակ մատուռ։

Ճգնաւորի գերեզման. գիւղիս հարաւային կողմում կայ մի հին եկեղեցի, որի շուրջն լի է հին ամփոփեալներով, որոց մէջ կայ ճգնաւորի գերեզման անուն մի հանգիստ, որը այնքան յարգում է ժողովուրդն, մինչև անգամ զգուշանում է երդուել նոյն գերեզմանով։

ԻԱ. Լճկաձոր շէն. Հիմնուած է Արճէշի արևելեան և Ձորագետի աջ կողմում մի հիւսիսահայեաց խոր ձորի մէջ. բնակիչք նախ Խոյից գաղթած են Ուլաշլու, որ մօտ է Բօրչալու կոչուած բերդին, ապա տեղափոխուած Թարգևին[1]) ապա ճալու և հուսկ յետոյ Լճկաձոր, հողն արքունի, անվնաս օդն, կլիման և ջուրն. եկեղեցին նորաշէն և կիսատ, քահանան գալիս է Արճէշից։

Տինումս կայ 12 ծուխ, որք արականով և իգականով հաշուած են Արճէշի ծխաթուղն հետ։

ԻԲ. ԲԵՐԴԱ-ԳԻԻՂ (Ղալաչայ) Տինուած է կողք գիւղից փոքր ինչ վար նոյնանուն վտակի աջ ափում։ Բաժանուած է երկու թաղի—Արևելեան և Արևմտեան թաղ. բնակիչք

[1]) Ձորագետի աջ կողմում են ՈՒԼԱՇԼՈՒ կամ ՂՈՒՇՁԻՇԱՐ, ԹԱՐԳԵՒԻՆ, ՃԱԼՈՒ աւերակ գիւղերն և հանգստարանները։ Թարգևին գիւղում ՃՈՒՄ է կանգուն ՍՈՒՐԲ ՆՇԱՆ եկեղեցին։

բնիկ, հողն արքունի և բարեբեր (առատ են այգիները) տեղական բերքերն նոյն, ամրան ճնշիչ ձորի օդն և կլիման, երկար կեանք 60 տարի. Արևելեան թաղի եկեղեցին սուրբ Գէորգ, քարուկիր. Արևմտեան Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանայ մի։

Ծուխ 160, ար. 614, իգ. 461.

Օղարկու (Քեաքլիկ) գիւղիս հիւսիսային կողմում մի ձուաձև, բարձր և գեղեցիկ բլուր, որի գագաթի վերայ կայ մի աւերակ մատուռ *Սուրբ Աստուածածին* անուն, որի մօտ կայ մի մոխրատանձի։

Ձուլոյի գերեզման (Խազնագաշ). Օղարկուի արևմտեան կողմում, մի ձորի արևելեան լանջին վերայ է աւերակ գիւղն, իսկ նոյն ձորի արևմտեան կողմում, ճանապարհի տակին է խաչարձաններով զարդարուած հանգստարան, որի մէջ և *Ձլոյի* գերեզմանն։ Մերձաբնակ մահմետականներն ջարդած են գեղեցկաքանդակ խաչարձաններից շատերն։

Ղեասի գիւղատեղի. Ձլոյի գերեզմանի արևմտեան կողմում, խոր ձորի ձախ լանջի վերայ է այս գիւղատեղին, հանգստարանն, աւերակ եկեղեցին և նշանաւոր ջուր ունեցող *աղբիւրն*։

ԻԳ. ԴՎԵՂ կամ ԴՈՎԵՂ գիւղ. Տինուած է Դվեղայ սուրբ Սարգիս վանքից վար, նոյն ձորի ձախ լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են Բերդագիւղից, հողնար քունի, տեղական բերքերին նոյն, բարեխառն օդն, կլիման, երկար կեանք 85 տարի եկեղեցին սուրբ Սարգիս, նորաշէն, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Պարանից։

Ծուխ 30 Բերդագեղի վերայ հաշիւ արուածէ ծխաթիւ և գլխաթիւերն։

ԻԴ. ԴՈՍՏԼՈՒ ԳԵՂ. Տինուած է Դվեղի արևելեան կողմում, նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակիչք բնիկ. հողն արքունի, լեռնային անվնաս օդն և կլիման. երկար ձեանք 75—80 տարի, եկեղեցին սուրբ Գէորգ. ծածքն փայտաշէն, քահանայ մի։

Ծուխ 72, ար. 322, իգ. 301.

Ամենափրկիչ կամ Բարձրեալ. Մին հին, խարխուլ, քարուկիր մատուռ, որ կայ գիւղիս արևմտեան կողմում։

Ին. ԿՈԹԻ ԳԻԻՂ. Շինուած է մի խոր և լայնագոգ ձորում Գագայ սուրբ Սարգսի արևմտեան կողմում. բնակիչք բնիկ. հողն արքունի, տեղական բերքերն նոյն. պատուական օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանայ երկու. «Այս Աստուածածին եկեղեցին յիշատակ է Կոթի Գիւղայ հասարակութեան 1850 ամի»։

Ծուխ 200, ար. 961, իգ, 826.

Գիւղումս պ. Տէր-Սահակեանցի տան կայ երկու կոնդակ ուղարկուած Եփրեմ կաթուղիկոսից[1]) որ արտայայտում է իւր շնորհակալութիւնը սուրբ Էջմիածնի համար ղրկուած գորգերի մասին և օրհնում է ղրկողները։

Գիւղիս արևմտեան կողմում, գիւղիցս սուրբ Սարգիս վանքն տանող ճանապարհի վերայ կայ մարգաչափ բարձրութեամբ իմ արձան, որ խիստ հին է։ Մարգարձանս, որ ներկայացնում է մի երիտասարդի հայկական տիպը, կերպարանքը, զգեստը, գուցէ դարերով ծածկուած է լինում բարձրակոյտ հողերի տակ։ Ոմն երիտասարդ քանիցս երազում տեսնելով, որ ոմն անձանօթ անձն հրամայում է քանդել և հորելով երևան հանել մարգարձանը։ Ահա այսպէս գտնուած է։ Ձեմ կարող վճռաբար ասել թէ որ դարու գործ է այս. բայց կարող եմ վստահութեամբ ասել թէ խիստ հին է ըստ երևութին։

Գաւառիս ըերդերն

Ա. Շար-խաչ Գիւղի հիւսիս արևմտեան կողմում, մեծ քերծից վար կայ մի հին և փոքր բերդ, որի արևելեան և

[1]) Սոյն երջանկայիշատակ կաթուղիկոսիս օծման հանդիսի առթիւ Կարբեցի Յովսէփ վարդապետ Մարուքեանցն 1824 Նեմբ. 9-ին խօսած է մի ձառ, որով յայտնում է Հայաստանեայց եկեղեցու ուրախութիւնը։ Ընագիր ճառը յանձնեցի Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնիս Մատենադարանին։

հարաւային կողմերն վիմահերձ ժայռեր են, իսկ մնացեալ կողմերն պարսպուած են քարուկիր պատով։ Այժմ շատ տեղեր քայքայուած են պարսպից։

Բ. ՄԱՆԹԱՇ ՂԱԼԱ. «Ղզղալայի հանդէպ ճանապարհի Աղստև գետի միւս (ձախ) կողմի լերանց շղթայումը գտանվում է Մանթաշղալան, մի սուր սուր ժայռի գագաթին։ Թէպէտ նրան շատ մօտենալը հեշտ է և չէ ներկայացնում առանձին դժուարութիւն, բայց նոյնիսկ գագաթին մօտ նոյնպէս դժուար է բարձրանալ։ Մանթաշ ղալայի շինութիւնների թիւն աւելի փոքր է և աւելի աւերակ, այնպէս որ այն տեղ ոչինչ շինութիւն չկայ ամբողջ մնացած, ինչպէս Ղզղալայում։ Աւերակների միւս մանրամասնութիւնները ներկայացնում են միևնոյն դրութիւնը՝ ինչ որ Ղզղալայինը։

Այդ երկու ղալաների Աղստափայ գետի ափին.. գտնվում է մի փոքրիկ աւերակ քարուկրից շինած, որ, ինչպէս պատմում են տեղացիք, բաղնիք է եղել։ Այն կղզին... այժմ և կոչվում «Համամի ճալա» այսինքն բաղնիքի կղզի[1])։

Ղզղալայի, Մանթաշղալայի և աւերակ բաղնիքի մասին ժողովրդեան մէջ մնացել է նոցա մէջ ընդհանրացած աւանդութիւն։ Ասում են.. Եղել է մի հերոսուհի գեղեցիկ աղջիկ, որ ունեցել է իր զօրքը։ Շատ իշխաններ գրաւվելով նորա գեղեցկութիւնց՝ ցանկացել են ամուսնանալ նորա վերայ՝ բայց նա մերժել է բոլորի առաջարկութիւնը, կամենալով կոյս մնալ։ Երբ ոչինչ միջոցով հնար չէ եղել մամոզել նորան, այն ժամանակ այդ բախտախնդիր իշխանները կամեցել են ուժով տիրանալ նորան։ Իշխանուհի հերոսը իւր կուսութիւնը պահպանելու համար ժողովում է իւր ձեռքի տակի եղած մարդկանց և զօրք կազմելով.. շինելով Ղզղալա ամրոցը, ապահովութիւն գտանում այդ տեղ։ Նորա վերայ սիրահարուած իշխաններից աւելի զօրեղը և համարձակը.. չէ կամենում ձեռնաթող անել իւր սիրոյ առարկան։ Աղջկայ քաջագործութիւններն աւելի և աւելի վառում են Մանթաշի

[1]) ՁԱԼԱ նշանակում է հովիտ և ոչ թէ կղզի.

սրտումը սիրոյ կայծը և նա Ղզղալի հանդէպ շինում է Մանթաշ ղալէն և այնտեղից երբեմն երբեմն յարձակմունքներ է անում Ղզղալի վերայ, ի զուր է անցնում նորա ջանքը, միշտ յաղթող է հանդիսանում աղջիկը:

Վերջապէս միանգամ աղջիկը իւր գօրքը տալիս է իւր զօրավարի ձեռքը և ուղարկում է Մանթաշ ղալի վերայ: Այդ կուռւմ, ու ինքն աղջիկը անձամբ չէ զօրավարում, յաղթւում է նորա զօրքը և Մանթաշը դորանից յետոյ հեշտութեամբ կարողանում է ձեռք ձգել աղջկան: Դորանից յետոյ կայանում է նոցա մէջ հետևեալ դաշը-որ նոցանից ամեն մինը կենայ առանձին իւր ղալայում, միայն ի նշան բարեկամութեան շինում են գետի ափին վերոյիշեալ բաղանիքը, որ այդ լինի նոցա միմեանց այցելութեան տեղը: Դոցանից յետոյ, ասում են, նոքա երկու ժայռերի գագաթից նշաններով խօսում էին միմեանց հետ և արտայայտում իրանց մտքերը և սէրը[1]:

Գ. ՄԹՆԱՁՈՐ (ղարանլուի դէրէ): Խորագոյն անտառապատ, հորիզոնն նեղ, սոսկալի ձոր, որի մէջ կան քարայրներ և պատսպարուելու տեղեր և պատուական ջուր: Այստեղ պատսպարուած են Լեկզիների արշաւանաց ժամանակ շրջակայ գիւղերի բնակիչները, ինչպէս պատմում են ծերունիք:

Դ. ԿԱՅԵՆԻ ԲԵՐԴ. Գտնվում է Մակարայ վանքից բաւական վերև Պայտաթափ (Նալբեօքան) սարի հարաւային կողմում: Առանձնացած է իւր չորս կողմերից բերդակիր սարս և անջրպետուաց ձորերով: Ամբողջ քարերով, պարսպուած է սարիս գլուխն գագաթի դիրքով, բայց անպարիսպ են տեղ տեղ վեմահերձերի գլուխները: Բերդիս մակերևոյթն թեքուած է դէպի արևելահարաւ, որի մէջ երևում են բնակարանների աւերակները և կուտակ կուտակ քարեր և տեղ տեղ ջրաւազաններ, որն բերուած է արտաքուստ մօտակայ աղբիւրից: *Աւերակ մատուռ.* բերդիս հիւսիսային կողմում արտաքուստ, որի մէջ կայ չորս կտոր եղած խաչարձան:

Ե. ԲԵՐԴԱՓԱՐ. Գտնուում է Դեղձնուտի և Սամսոնի վանքերի մօտերքում, Խնձորկուտ անուանեալ ջրի աջ կողմում: Իւր շրջապատից առանձնացած և բարձրացած է Բերդաքարս, որի կատարի մեծութեան ծաւալն հազիւ լինի հինգ կալաչափ տեղի տարածութեան: Քարուկիր պատով պարսպուած է քարագլխի եզերքին: Ունի միայն մի դժուարատար, խիստ սառիվեր և միանգամայն վտանգաւոր կածան, որ առաջնորդում է տղեակն: Կայ յատուկ շինուած ջրաւազան, բայց ջուրն բերուած է ի պահանջել հարկին դղեկիս հարաւալի և հիւսիսային սառոյտներում եղած աղբիւրներից:

Զ. ԳԱԻԱՐԶԻՆ ԱՄՐՈՑ. Ոսկեպար կա Ջողազ վտակի ձախ կողմում արձանացած է մի բարձր. միապաղաղ, գորշագոյն, զարմանալի և միանգամայն ահարկու ժայռ, որի արևելեան սառոյտով շինած են հնուց պարիսպ, որի ներսի կողմում կան սենեակներ և խուցեր, որոնցից միոյն մէջ կայ ջրհոր և ջուր: Ժայռիս գագաթին բարձրանալու համար կայ միայն մի դժուարատար, սոսկալի, նեղ, չափազանց զառիվեր, և միանգամայն վտանգաւոր կածան հիւսիսալին կողմից: Գագաթն համարեա թէ հարթակ է մօտ երկու կալաչափ, որի վերայ բուսած են թըլղի, հմմառկի թուփեր, և բոշնի, ջաղանի և վայրի դեղձի ծառեր: Ահա այս է Գաւարզինբերդ հռչակուածն, որի վերայ երկու տեղ շինուած է վիմափոր ջրաւազան, ջուրն բերուած է յիշեալ ջրհորից:

Ժայռիս արևմտեան կողմում, բաւական բարձր երևում է մի մեծ ծակ, որի ետև, ասում են կայ մի մեծագոյն քարայր, որի ճանապարհն անյայտացած է այժմ: Երբեմն երբեմն արծիւներն այրից հանում են գորգի և կարպետի փտած կտորներ և ձգում վար:

Գաւարզնի հարաւ-արևելեան կողմում, Ոսկեպար վտակի ափի վերայ *Դաշիրըչիլար* գիւղն, որի մօտ է մեծ հանգստարան և եկեղեցու աւերակն. բայց այժմ մահմետականաբնակ է գիւղս և այլ մի քանի գիւղեր, որի կանխաւ եղած

[1]) Ղզղալա և Մանթաշ ամրոցներիս մասին հանդուցեալ Մարաիրոսի գրածները ստացած եմ շնորհիւ իմ աղնիւ բարեկամ դիւտ քահանայ Ադանեանցի նեղսակիր ջանից.

են հայաբնակ և որք կան Դամերչիլարիս շրջակայքում։

Է. ԳԱԳԱՅ ԲԵՐԴ (66) Կոթի գիւղի արևելեան և Գաւարզնի հիւսիս-արևելեան կողմում արձանացած է Գագ անուն մի սար, որի հարաւային, արևելեան և հիւսիսային կողմերն դաշտալեզուներ են[1]։ Գագ սարիս գագաթի եզերներով պարիսպ ձգուած է վաղուց և ձևացրած մի անմատչելի բերդ, զի առանձնացած է սարս։ Բաւական ամուր է բերդս, ափսոս,, որ ջուր չունի իւր մէջ, վասն որոյ փորուած են մի քանի վեմափոր աւազաններ, որք բազմիցս լի են լինում անձրևաջրով։ Համարեա թէ 20 ից աւելի վիմափոր այրեր կան յատկապէս պատրաստուած, որք ի հնումն գուցէ ծառայած են իբրև զօրանոց, յորոց մի քանիսն ունին երդիկներ։

Գագայ վանք—Սուրբ Սարգիս. Բերդիս մէջ, սարիս ամենաբարձր գագաթին վերայ, շատ վաղուց շինուած է սրբատաշ կաթնագոյն քարով մի փոքր վանք։ Ժամանակի երկարութիւնն մաշած լինելով վանքիս շինութիւնը՝ վասն որոյ քանիցս նորոգուած է։ Սակայն վերջին անգամ վերանորոգած է վանքս Կոթի գիւղացի պ. Արգուման Խաչատրեան Տէր-Սարգսեանցն միևնոյն գումով տաշուած քարով։ Վանքիս ուխտագնացութեան ժամանակներն են սուրբ Սարգսի և զատկի օրերն։

Վանքիս մօտ՝ նոյնպէս շինուած սրբատաշ քարով՝ կայ մի մատուռ *սուրբ Կիւրակէ* անուն։

Ը. ԲԵՐԴԱՏԵՂ. Պարանայ և Կողբ գիւղերի միջև կայ այս անուն մի սար, որի կատարի վերեայ նշմարուում է բերդի նշաններ։ Վաշուց պարսպուած է եղել սարիս գլխի հարթակի շրջապատն, այժմ թէև աւերուած է պարիսպն, բայց ոչ հիմունքներն, որք դեռ մնում են հողի տակ։ Փոքր է դշեկիս ծաւալն, այսու ամենայնիւ պարսպին ներսից փորած, գտած և հանած են մեծ մեծ կարասներ, որք

[1]) Գարգարացւոց մեծ դաշտի շարունակութիւնից երկու դաշտալեզուներն ևս, յորոց մեծն բնկած է Գագ լեռնաշղթայիս և Կուր գետի աջ ափերի մէջ և հետզհետէ նեղանալով վերջացած Կոտրած-Կամրջի մօտ. իսկ փոքրն բնկած է նոյն Գագ սարի արևմտահիւս լեռնաշղթայի և Ոսկեպար վտակի մէջ և դամ քան ղդամ սեղմուելով վերջանում Նոր-Գիւղիս մօտ։

պահուած են եղել այստեղ իբրև պաշար ջրի, քանզի ջուր չկայ այստեղ։ Բացի կարասներից դղեկիս արևելեան կողմում կայ մի հոր, որ բաւական խոր է. կարծում ենք, որ այս ևս ջրի համար է։

Թ. Բերդագիւղի մօտ եղած *Դղեակն*, որ շինուած է գիւղիս արևելեան թաղի հիւսիսային ծայրում մի բլրի վերայ։ Դղեակս ունի քառակուսի ձև, աշտարակներով պարիսպ և մի փոքր դուռն, որ այժմ ևս կանգուն է և անվնաս։

Ժ. ՂԵԱՍԻ ԲԵՐԴ, որ Ղըզ-ղալա ևս է կոչուում. Ղեաս աւերակ գիւղի արևմտեան եզրից բարձրացած է մի սար, որի երկարութիւնն ձգուած է արևելքից արևմուտք և բոլորովին առանձնացած։ Ամրոցիս մուտքն արևմտեան կողմից է, որ բարձրանում է սարի գլուխն, ուր կայ մի խաչարձան։ Սարիս գլխի վերայ կայ երկու սարաբլուր, որք բարձրացած են ուղտի մէջքից բարձրացած աւելամսերի նման, բայց փոս մնացած է երկու սարաբլուրների մէջ տեղն։ Ահա երկու բարձրութեանցս վերայ հիմնուած են երկու ամրագին դղեակներ։ Առանց աշտարակների են պարիսպներն, որ տեղ տեղ բոլորովին կանգուն են և տեղ տեղ կիսաւեր։ Արևմտեան դղեակն մեծ է քան արևելեան։ Երկուցունց մէջ ևս չկայ ջուր, որը բերած են Ղեաս աւերակին մօտի պատուական աղբիւրից և ամբարած կարասներում։

Արևելեան դղեկիս տակի արևելեան բարձր քերծի մէջ կայ մի մեծագոյն քարայր, որ ունի նեղ, բայց երկար և բարձրագոյն դիրք։ Քարայրիս առաջքը պատած են ժամանակաւ և ձևացրած բերդակ. որի մուտքն բարձրանում է սանդղաձև աստիճաններով և մտնում քարայրս յատուկ շինուած դռնով։ Քանի՞ ահարկու է այրիս արձագանքն, մանաւանդ խորքերում։ Այստեղ ևս չկայ ջուր, բայց կան հացի տաշտերի նման աւազաններ։ Այս ևս պատկանում է Ղեասին (Ղուկասին),

ԺԱ. Բերդն է *Շինողն*, որի մասին խօսած ենք։

ՃԱ. ԲՈՐՋԱԼՈՒ ԲԵՐԴ. Գտնում է Խրամ և Ձորագետ ջրերի միախառնուած տեղից վերև, Ձորագետի աջ կողմում մի բլրի վերայ։ Բերդիս հիմունքներն շինուած են քարուկից, իսկ գետնից վերև թրծեալ աղիւսով և կրաշաղախ ցեխով։ Բերդս փոքր է, իւր ներսում ունի թաղակապ սենեակներ, բայց չունի ջուր։ Սակայն բերդիս մօտ կայ մի փոքր լճակ, որից արտահոսում են երկու ջրաղաց դարձնելու չափ (վնասակար Ղարասու) ջուր։ Երևի թէ ջրից գործ ածած են բերդումս, որ կիւսաւեր է այժմ։

Հնադարեայ ամրոց Կուր և Խրամ գետերի մէջ ընկած է մի շատ հին ամրոց, որի երկարութիւնն ձգուած է գրեթէ արևմուտքից արևելք։ Բերդավայրի մեծ մասի մակերևոյթն թեքուած է Կուր գետի կողմից դէպի Խրամն. իսկ ստորին մասինն՝ խոնարհուած է դէպի գետախառնուրդն։ Բերդավայրիս երկու ջրերի մէջ մտած մասն ստացած է սուրանկիւն ձև, միջի մասն՝ լայն ձև և վերի մասն նեղ ձև. քանզի Խրամն արմունկ տալով նեղացրից է այս մասը։ Մակերևութի երկարութիւնն այժմ քառորդ մղոնաչափ է և լայնութիւնն՝ մի տասն և չորսերորդ մղոնաչափ։ Հարկ է յայտնել որ թէ՝ երկարութիւնից և թէ՝ լայնութիւնից շատ պակասեցրած են գետերն, մանաւանդ Խրամն, ինչպէս ակներև է։ Գետից գետ փորուած լայն և խոր խրամով բաժանուած է երեք մասի, *Ստորին, միջին* և *վերին* ամրոց։ Միջավայրի բարձրութեան վերայ կրացեխով և թրծեալ աղիւսով շինուած է մի ամրոց, որ ունի չորս աշտարակ իւր չորս անկիւններում և 120 մետր շրջապատ (արտաքուստ չափերով)։ Կործանուած է այժմ ամրոցս՝ բայց դեռ մնում են աշտարակների մնացորդներն և պարսպի հետքերն։ Ամրոցիս Կուրի գետահայեաց կողմերն յատուկ պատրաստուած անպիսի լանջեր են, որից անհնար է թշնամուն բարձրանալ. երևի թէ այսպէս պատրաստուած է եղել և Խրամահայեաց լանջերն, սակայն յորդած ժամանակ գետն երկար դարերի ընթացքում քանդած և տարած է։

Բոլոր բերդամասերի երեսներն լի է վաղեմի աղիւսների, յախճապակեայ անօթների, խեցեղէն կոպիտ և հաստ կարասների, սափորների և ամանների բեկորներով և շինութեանց հետքերով։ Թուի թէ ներկայ դարուս առաջին և երկրորդ քառորդում հերկած են ամրոցներիս մակերևոյթը, մանաւանդ վերնամասերն։

Երկու տեղ երևում են հանգստարաններ, մին ամրոցիս արևմտեան կողմում, փոշտի հին ճանապարհի տակին և միւսն՝ Խրամի ձախ ափերի վերայ։ Մեր կարծիքով երկու հանգստարաններս միացած են եղել, այս է Կոտրած կամրջի մօտից մինչև Կուրի հանդէպն ամփոփեալ են ննջեցեալները, բայց տապանաքարերը տարած են և գործ դրած ուրիշ շինութեանց համար։ Ի նկատի ունենալով այդ բոլոր յատկութիւնները, կարծում ենք որ այս է Հնարակերտ ամրոցն (67)։

Կոտրած-կամուրջ. Շինուած է Խրամի վերայ Նոր-Կամրջից փոքր ինչ վար։ Տակաւին երևում են Խրամի աջ ու ձախ ափերի վերայ ոտքերի անքակ մնացեալ մասերն։

Նոր-Կամուրջ. Հիմնուած է Կոտրածից փոքր ինչ վերև, որ կառուցեալ է կրացեխով և թրծեալ աղիւսով և ունի չորս աչք, ամենամեծն է հիւսիսային աչքն։ Երկու եզերքների ոտքերի մէջ շինուած են երկու մեծ սենեակներ, իսկ մէջ տեղի մօտ, կամրջի երեսի արևելեան կողմից կայ մի մուտք, որ սանդղներով իջնում է մի այլ սենեակ, որ շինուած է մի ոտքի մէջ։ Երևի թէ պահապանի տեղեր են սենեակներս։ Կամրջիս երկարութիւնն է 160 մետր և լայնութիւնն՝ 7. որի երկու եզերքներով հաստատուած են երկաթեայ վանդակներ։ Կամրջիս շինութիւնն թերևս հին է. բայց նորոգութիւններ եղած են Ռուսաց երկրիս տիրելուց յետոյ։

Հարաւային կամ վերին գաւառներ

Ի. Բերձոր կամ Բերդաձոր գաւառ, որի բնակչաց ամե-

նամեճ մասն այժմ մահմետականներ են: Հետևեալ գիւղերն, որ կանխաւ հայաբնակ եղած են, այժմ մահմետականաբնակ են, որոց մէջ կան եկեղեցիներ և հանգստարաններ: Սկսեալ Երասխի ձախ ափից մինչև Ղալաղչլաղ գիւղն.

1) Դիրի՝ Երասխի ձախ ափում կամրջի մօտ Դիրի սարի տակ.
2) Թամաս գիւղում եկեղեցին աւերակ.
3) Բայաթ այժմ Բաշարաթ ,, ,,
4) Հին-փոքր Թաղլարում ,, ,,
5) Հորնաւոտում ,, ,,
6) Հատք գիւղում ,, կիսաւեր
7) Դաշտահատ գիւղում ,, աւերակ.
8) Զէք ,, ,, ,,
9) Փարաջան ,, ,, ,,
10) Հին-Մեծ Թաղլարում [1]) ,, ,,
11) Եաւրին-խուլթ (մերձ կոզառ) ,,
12) Երկաթաւոր (Դամիրլու) ,,
13) Սափիան գիւղում ,,
14) Թումասլու ,, կիսաւեր.
15) Ամուտուկա ,, ,,
16) Խոջիկ ,, ,,
17) Պատար ,, ,,
18) Սարգիս ,, ,,
19) Ջղջիկ այժմ Ջաղջիկ.
20) Սպիտակ շէն.
21) Ջամին-գիւմ (գոմ).
22) Գառնակաշ.
23) Ծակարի.

Հայաբնակ են այժմ միայն հետևեալ գիւղերն.

Ա. ԴՈԼԱՆԼԱՐ. Շինուած է Հին-Մեծ-Թաղլարի հարաւային կողմում մի սարի վերայ. բնակիչք գաղթած են Ղարագաղից. հողն արքունի, լեռնային և նուազ հացատու. տեղական բերքերն ցորեն, գարի, գարնանի, հաճար, սորեկ, ոչխար, տաւար, այծ, խոզ, գոմէշ. կերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տարի. եկեղեցին սուրբ Աստուածածին. ծածքն փայտաշէն քահանայ մի:

Ծուխ 29, ար. 123, իգ. 117.

Բ. ԽԱՆՁԱՁՈՐ գիւղ. Հիմնուած է Ծամ-ձոր գիւղին արևմտեան կողմում. բնակիչք գաղթած են Ղարագաղից, հողն բէկական. տեղական բերքերն միևնոյն. գերազանց օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 100 տարի, եկեղեցին սուրբ Յովհաննէս:

Ծուխ 57, ար. 287, իգ. 222.

Գ. ՅԱՐԱՐ ԳԻՒՂ. Շինուած է Խցաբերդի արևմտեան կողմում բնակիչք գաղթած են Ղարագաղից, հողն բեկական, տեղական բերքերն միևնոյն, գերազանց օդն, կլիման և ջուրն երկար կեանք 100 տ. եկեղեցի չունին, քահանայ մի:

Ծուխ 134, ար. 532, իգ. 482.

Դ. ԽՅԱՒԵՐԴ ԳԻՒՂ. Շինուած է Դիզափայտի արևմտահայեաց լանջին վերայ. բնանկիչք գաղթած են Ղարագաղից. հողն արքունի, լեռնային, (6000 ոտքից աւելի բարձր է) գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 100 տ. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի. Ծուխ 50, ար. 166, իգ. 158:

Ե. ՂԱԼԱ-ՂՇԼԱՂ. Հիմնուած է (Սաղսաղան 7083 ոտք) բարձր սարի հարաւային լանջի վերայ. բնակիչք քնիկ, հողն արքունի, տեղական բերքերն նոյն. գերազանց օդն, կլիման և ջուրն. երկար կեանք 110 տ. եկեղեցին սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանայ երկու:

Ծուխ 337, ար. 1436, իգ. 1175.

[1]) Նոր-Թաղլարեցիք նախ Պարսկաստանից գաղթած են այստեղ և մի ժամանակից յետոյ տեղափոխուած են Նոր-Թաղլար աւանն:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ԱՄՈՒ ՏԵՂ ԱՄՐՈՑ. Շինուած է Հակարի գետի ձախ կողմում համանուն սարի վերայ (որի բարձր. 4131 ոտք): Քարուկիր պատով պարսպուած է վաղ ժամանակից

սարիս գլուխն, որ ունի բաւական մեծութիւն, ամուր դիրք, պատուական տեսարան, և բարեխառն կլիմայ: Ամրոցիս մակերևոյթն լի է շինութեանց բեկորներով, որոց մէջ տակաւին կանգուն է մի քարուկիր մատուռ, որ ուխտատեղի է և որի շուրջն ամփոփուած է հնուց եննջեցեալներ: Մատրանս հիւսիսային կողմում կայ երկու այլ գերեզման, իսկ արևմտեան կողմում կայ մի վիմափոր աւազան, որ միշտ լի է ջրով. գալիս են կաշուի հիւանդութիւն ունեցողներ (ինչպէս է բորոտութիւն ևն.) լողանում ջրումս և աղօթում մատրանս մէջ և վերադառնում առողջացած:

Բ. ԹՈՄԱՍ ԲԵՐԴ. Հիմնուած է համանուն սարի վերայ (որի բարձր. 5230 ոտք) որ կայ Ամու տեղի հարաւ արևելեան կողմում: Թոմաս սարս առանձնացած է իւր ամեն կողմերից և բարձրացած ձուաձև, որի վերայ է ամրոցն: Այս ևս ունի քարուկիր պարիսպ, նշանաւոր ամրութիւն, սքանչելի տեսարան և մի աւերակ փոքր եկեղեցի:

Գ. ՂԱԼԱԼՈՒ ԲԵՐԴ. որի սարն արձանացած է Բաշարթի սարի արևմտեան հանդէպ և Բազմին (Բեզմին) սարի հարաւային հանդէպ: Առանձնացած է իւր շրջապատից և բերդասարս, որ ունի մօտ 3600 ոտք բարձրութիւն և որի շուրջն ահագին քերծեր են: Հնուց պարսպուած են մուտքի կողմերն և հարկ եղած տեղերն: Ամրոցիս մէջ ևս կան հին շինութեանց շատ բեկորներ և աւերակ մատուռ:

Դ. ԽՅԱԲԵՐԴ. որի մէջ արդէն բնակում են հայեր, ուր կայ և եկեղեցի, ինչպէս գիտենք: Ամրոցս, որի բարձրութիւնն պակաս չէ 6000-ից, ունի ամուր պարիսպ, բերդակալ սար. ազնիւ ջուր, զմայլելի տեսարան և ամեն ընտիր յատկութիւն: Հարկ է յայտնել որ հետզհետէ քայքայուում են բոլոր բերգերիս պարիսպներն:

ԻԱ. և ԻԲ. Գաւառներն են *Հարծլանք* և *Վակունիք*: Առհասարակ լեռնուտ են երկու գաւառներս ևս, որոց մէջ են Արտաշաւի սարն 4456 ոտք, Տղիկ կամ Տղայ՝ 5180, Լաչին՝ 6328, Սարի պապ (Սարի պապա) 7574, Կարմիր

քար (Ղըլ-դաշ) 6552, Բաբադէմ՝ 6006, Փինկան՝ 7903, Յուշարձան (Վանքասար) 1861, Տէրտէրի սար (Քէշիշ-դաղի) 7560, Ներքին-Բևեռաթափ (Մխիթեօքան) 6944, Աղչկայ բերդ (Ղըզ-ղալա) 9324, Դիւրին (Դիւրու դաղ) 6914, Սպիտակ քերծ (Ալա կայա) 7672, Չիլ-կեազ (Չիլկեազ) 7777, Սահմանասար՝ 8687, Վանքա սար (Քիլիսա-դաղի) 7553, Երկաթաղբիւր (Դամիւր-բուլաղ) 7639, Կովսար (Ինաք-դաղի) 8583, Հին-գայլ (Ղոչա-ղուրդ) 7675, Սարի աղբիւր (Սարի բուլաղ) 9898, Պել-սար (Դալի-դաղ) 11907, Վերին-Բևեռաթափ (Մխիթեօքան) 11851, Աղխասար (Ախիա-դաղ) 8364: Սքանչելի ամարանոցներ են լեռներս:

Երկու գաւառներումս կան մօտ վաթսուն գիւղ, որ կանխաւ եղած է հայաբնակ, բայց այժմ մահմետականաբնակ են, որոց մէջ սակայն անպակաս են հայկական հնութեանց հետքեր—կամ կիսակործան, կամ հիմնայատակ կործանուած և կամ կանգուն տաճարներ, եկեղեցիներ, մատուռներ և հանգստարաններ: Ահա այն գիւղերից մի քանիսն:

Զերդի (Զարդ) Տիկ, Բաբադէմ, Նիլջան, Ենկիջա, Ղարաչամ, Արտաշաւի, Վաղազին, Հաճի, Հոչազ, Հաճի Սամլու, Խալիփալլու (Առաջնորդապատկան), Սուաթ, Մարջանլու, (Մունջուխլու), Հաթամլար, Հաճիլար, (Հարճլանք), Զուրման, Եամքեանդի, Կարաբայնի (Կարաբաց), Կարաչանի, Լիլօ-Բաղր (Լիլաբակ), Ալակչի (Մաղագործ), Թուրքիշվան (Թրքաշվանթուր քաշող և հալածող գիւղ), Եուքարան, Աղան, Ասրիկ (Իսրայէլի գիւղ), Աղջաքանդ (Ըղկաքանդ—Աղկայ քանդած), Ալուխան, Սևանդ (Սև Հանդ), ևն.:

Միայն մի հայաբնակ գիւղ մնացած է այժմ Հարճլանք գաւառումս, որ է:

Ալղուլի, Հիմնուած է Արտաշի սարի հարաւային կողմում. բնակիչք բնիկ, հողն արքունի, օդն, կլիման և ջուրն պատուական, կրկար կեանք 95—105 տ. եկեղեցին սուրբ Աստուածածին. քահանայ մի:

Ծուխ 74, ար. 372, իգ. 286.

Մի բերդ կայ միայն երկու գաւառներումս Աղջկայ—բերդ (Ղըզ-ղալա) անուն, որ գտնուում է Ղըրխ-ղըզ (40 օրիորդ) սարի հիւսիսային կողմում և ունի 9324 ոտք բարձրութիւն: Հարկ է յայտնել թէ այնքան տմուր տեղեր կան գաւառներումս, մինչև անգամ կարօտութիւն չկայ բերդերի:

ԻԳ. *Սիսական—Ոստան, Սիսական, Ծար, վերին-Խաչին, այժմ Զառ կամ Զար գաւառ:*

Գաւառս ևս, որ կանխաւ եղած է հայաբնակ, այժմ թրքաբնակ է ամբողջապէս, այսուամենայնիւ կան կանգուն, կիսաւեր կամ հիմնայատակ կործանեալ եկեղեցիներ, վանքեր և հանգստարաններ հետևեալ գիւղերում:

Լև (Լևոնի գիւղ) Ջամիլ, Եղջերուագոմ (Մարալ դամի), Դամիրչիլար (Դարբնոց), Աղալար, Քիլիսաքեանդ (եկեղեցաձոր), Ղամիշլու (Եղեգնուտ), Չիլքին, Ալլահվերսի (Աստուածատրի գիւղ), Շահքեանդ (Շահնշէի գիւղ), Լև ղալա, Զափնի, Քիլիսալու, Ալխասլու, Չայքեանդ (Գետաշէն) Քալուաջար, Բաշքեանդ (Գլխաւոր գիւղ), Միլլի, Ջոմարդ, Շահդամ, Հաճի-Բաբա, Շեռթիկան, Խաչպարալի (Խաչ-պարան), Ուլուխան, Փիրխանալի (Սրբադուն) Թարխանլու, Խալիւտցոկ (Հայոց ձոր), Զակլիկ. Զախմախ, Զրիլ, Ղարախաչ, Զիբախ, Մամատ-Սափի, Իսոի սու (Ջերմուկ), Բաղասաղ, ևն.:

Գաւառիս իշխանանիստ գիւղաքաղաքն եղած է Ծարն, որ կայ մի լեռնահովտում: Գիւղաքաղաքիս չորս կողմերն ի բացուստ շրջապատած են, բարձրագոյն, ձիւնապատ, կարակնաձև և շղթայաշար լեռներ սկսեալ արևելքից մինչև հիւսիս, որք են. սարի աղբիւր (սարի-բուլաղ) 9900 ոտք, Տաք ջրին սար՝ 7240, Սև խաչ 9000, Քիթ (Քեթի) 11284, Կուէթ, սար՝ 9000 ոտք. Վիմահերձ և բարձր քերծեր են գիւղաքաղաքիս հիւսիսային, արևելեան և հարաւային կողմերն, որոց միջից հոսում են սրընթաց Թարթառ գետի վտակներն և միանում գիւղաքաղաքիս ստորոտում. իսկ արևմտեան կողմով՝ վիմահերձից վիմահերձ ձգուած է պա-

րիսպ. այնպէս որ միանգամայն նշանաւոր ամրոց դարձած է Ծարս: Գիւղաքաղաքիս մակերևոյթն հարթ է (ստորին կողմն փոքր ինչ թեքուած է դէպի արևելք) և ունի մեծ տարածութիւն, որ լի է աւերակ շինութեանց կոյտ կոյտ բեկորներով, մատուռներով և խաչարձաններով:

Ա. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ *մատուռ, քարուկիր, կանգուն և շինուած Ծարիս հարաւային եզրում, որ ունի 7 մետր 15 սանթիմ երկարութիւն, 4 մետր 75 սանթիմ լայնութիւն:*

Արտաքուստ դրան գլխին խաչքարի վերայ.

«Սուրբ Սարգիս»: Ապա «Քրիստոս որդի Դաւթի աւդնէ վանս Հասանայ անարժան ծառայիս յաւուրն ատենի ամէն թվ. ՉԻԹ.»: Մատրանս դրան հարաւային կողմում արտաքուստ կայ երկու նշանաւոր և գեղեցկաքանդակ խաչքարձան՝ զետեղուած աստիճանաւոր պատուանդանների վերայ: *Հիւսիսային խաչարձանի վերայ,* (որի երկար. 2 մ. 60 ս. լայն. 1 մ. 10 ս.) «Թվիս Հայոց ՉԼԸ. Աստուծով ես Գրիգոր որդի Հասանայ քաջ և յաղթող զաւրավարին և մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթիից, Շողգահո և այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս որ կոչի Ծար սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք և պարգև քաջութեան»:

Հարաւային խաչարձանի ճակատի վերի կողմում քանդակուած է սուրբ Աստուածածնայ պատկերն, որ գրկած է մանկացեալ Յիսուս Քրիստոսը: Տէրունական պատկերիս շուրջն պատած են քառակերպեան կենդանիք, սուրբ Հոգին, արեգակն և մի թռչուն: *Խաչարձանիս ստորոտում.* «Սուրբ Աստուածածին Քրիստոս Աստուած... ես Մամքան դուստր Քրդին ու Խորիշահի, ամուսին Հասանայ կանգնեցի զխաչս»: Կան ուրիշ շատ տապանաքարեր և պատուական մահարձաններ, բայց անիրաւ քրդերն որը կոտրած են և որի գրերը ջնջած: Մամքան տիկնոջ կանգնած արձանի համանմանն ամենայն մասամբ կայ փոքր ինչ հեռի դէպի արևմուտ (5 քայլաչափ), որի վերայ փորագրուած է:

1289

«Ք[ր]իստոս Աստուած. Նշանս բարեխաւս Դաւլաթին. Աստուծով ես Դաւլաթս, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան Խիկար, որդիքս իմ Տաւիտ բէկ, Մէլիք պէկի գանգնեցին զխաչս փրկութիւն հոգոյ ի տանէն Գեղամայ. դուստր Մէլիք Ղուկասին թ. ՋՂԸ.»: *Սորա մօտ.*

«Այս է հանգիստ պարոն ձհանկիր բէկին թվ. ՌՃԻԵ.»: «Այս է հանգիստ Մէլիք Պէկին կողակից Շայամին, որ հանգուցաւ (ի) տապանս թվ. ՌՃԿԶ.»: Այստեղ են նաև Շահփարու և Վահրամի տապանաքարերն: Մատրանս *հիւսիսային կողմում*. «.... Միրզա ձհան կանգնեցաք զխաչս բարեխաւս եղբարն իմ պարոն ձհան Բնուր (?) Շահիճանին... թվ. ՋԿ.»:

Բ. Մատուռ *սուրբ Սարգիս*, քարուկիր, որ հիմնարկուած է գիւղաքաղաքիս միջում, արտաքին որմերի կէսն շինուած է սրբատաշ քարով և միւս կէսն (ստորին մասն) անտաշ. երկարութիւնն 6 մետր 65 սանթիմ, լայնութիւնն 4 մետր 6 սանթիմ:

Դրնագլուխ քարի վերայ

«Թվ. ՋԻԸ. ի հայրապետութեան տէր Աթանասի, ի պարոնութեան Դուփին որդոյն Ուհան երէցու, Ուհանէս շինեցաք զսուրբ Սարգիս կենաց բարեխաւս, հոգոյ փրկութիւն, ով կարդ....»: Դրան հարաւային կողմի շարխաչերի տակ. «Ես հայր Անտուն տվի սուրբ Սարգիսս Համարբակի հողին... Ա. ժամ տվին գծառազարդին»: Մատրանս դրան վերայ. «Շահանշահ կանգնեց խաչս որդոց..... (եղծուած է»:

Մատրանս հարաւ արևելեան կողմամբ արտաքուստ. «Յանուն Աստուծոյ մեք Խաչատուր, Զաքարէս կանգնեցաք սուրբ խաչ բարեխաւս հաւրն իմոյ և եղբարց Վելին, Ովանէսին, Մարգարէին, Միրաքին.. թվ. ՋԼԳ.»:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Համարեա թէ պատկից է Բ. մատրանս հիւսիսային

կողմին և կիսաւեր. բայց ունի 26 մետր 10 սանթիմ երկարութիւն և 11 մետր 55 սանթիմ լայնութիւն: Հարաւային դրան վերայ մի խաչքարի ստորոտում. «Ի թուին ՈՀԴ. ես Մելքը հոգևորդի իմ Ակուտին ու Մխիթար եղբայր կանգնեցաք զխաչս»:

Գ. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ *մատուռ, խիստ մօտ մայր եկեղեցու արևելեան կողմին, շինուած անտաշ քարով, երկարութիւնն 6 մետր 40 սանթիմ, լայնութիւնն 4 մետր 40 սանթիմ: Դրան ճակատակալ քարին վերայ. «Խորք տէր (ս) շինեցի սուրբ Գրիգոր ի հալալ արդեամբ ինձ, ամուս (ն)ոյ, իմ որդոյ Մարգարէին, յիշէք 'ի Տէր թվ. ՋԻԳ.»: Դրանս հիւսիսային քարին վերայ. «Յանուն Աստուծոյ Կուկս միաբանեցայ սուրբ Գրիգորիս (տվի) իմ հողն Սոսթանիսի տէրն այլազ հինզշաբաթի աւր ժամն...»:*

Մատրանս հարաւային որմին վերայ կրկին արտաքուստ:

«Աստուծով մեք Տարբերի որդիքս տվաք զմեր Կապին հողն ի սուրբ Գրիգորիս. Սոսթանէս ետ Ղազարու տաւնին Ա. ժամ.....»: *Սորա մօտ.*

«Գրիգոր Ջաջուռ կանգնեցաք խաչս մեզ և ծնողաց մերոց. Աստուած ողորմի Շ.»:

Բոլոր մատուռների շուրջն լի է խիտ առ խիտ գերեզմաններով և խաչարձաններով:

Սուրբ Աստուածածին վանք

Սրբատաշ քարով շինուած տաճարս, որ կանգուն է նոյնութեամբ, գտնուում է Ծարի Հարաւային վիմահերձի տակ երկու ջրախառնուրդի մօտ, որք են տաք-ջրի և Զբիւլ գիւղի վտակներն: Մենաստանս թէ և փոքր է, բայց շատ գեղեցիկ է ամեն մասամբ: Վանուցս *արձանագրութիւնն*:

«Ի ժամանակին յորում տիրեալ աղգն Նետոզաց բազում աշխարհաց և մինչև յՈվկիանոս ծով և Ստամպալն, ի

Պոնտոս և մինչև ցգետն Եփրատես տիրելով գոռոզաբար և ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան՝ զմեծամեծս և զփոքունս ՚ի մահ և ՚ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան որ էաք մեք տէր Յովհաննէս Դոփեան տրուսլ և նուաստ և տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն առաջնոյ յաթոռն հռչակելի Հախպատ. զարձ արարեալ ՚ի մեր հայրենական և բնիկ տունս հարազատ աւագ եղբաւր Հասանայ քաջ զաւրականին և հռչակաւոր արիացելոյն, որ և որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցոյ և քահանայից և ամուսինն իւր բարեհամբաւ Ասիայ դուստր մեծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն սիւնեաց՝ և մեր հայեցեալ ՚ի ձորակս, զի հոսէին ջուրք աստի և անտի և միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, ես հաճեցայ ընդ սա և մտայ յանապատս և սկսայ շինել մատուռ մի և յայնմ խորհրդի եկն Գրիգոր եղբաւրորդի մեր և իշխան գաւառիս և այլ շատ շատ կողմանց իշխեցող և կամեցաւ շինել զսուրբ Աստուածածինս ի բարեխաւս մեզ և ամենայն քրիստոնէից. ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինուածեան եկեղեցոյս ՚ի թուին ՉԾ.»։

Տաճարիս մօտ եղած սքանչելի խաչարձանի վերայ.

«Աստուծով ես Սայտի որդի պարոն Շանշին քաջ և յաղթող զաւրավարին և մեծ իշխանաց յազգէն և ի թուին ՊՀԹ. տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ՚ի Շաղվաքայ՝ կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Շանշին....»։

Կայ և մի այլ փոքր վանք Ծարիս արևելեան ստորոտում—երկու ջրերի խառնուրդում։

Տաք-Ջուր. Բղխում է այս Ծարի հարաւային կողմի ջրաձորից. նշանաւոր է ծծմբային ջուրս իւր տեսակին մէջ և առատ։ Միայն ափսոս որ իւր մօտ չկան պէտք եղած շինութիւնները և խիստ խոր է ջերմուկի ձորն և նեղ հօրիզոնն։ Այսու ամենայնիւ բազմաթիւ յաճախորդներ են հա-

ւաքուում այստեղ ամրան երեք ամիսներում շրջակայ գաւառներից, որք և պատսպարուում են վրաններում։

ԴԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա-ն Բերդն է Ծարն, որին արդէն ծանօթացանք, որի մէջ այժմ բնակում են *Փարիկեան* ցեղից քուրդեր։

Բ-ն է Ղըզ-ղալա կոչուած բերդն, որ գտնուում է Ծարի հիւսիսային կողմում և Սոթի ու Զարգըխլի արևելեան հանդէպ արձանացած սարի վերայ, որ մօտ 9000 ոտք բարձր է և միանգամայն սահման Արցախի և Գեղամայ կամ ասել Ծար և Սոթ գաւառների։

Գ-ն է բոլորից նշանաւորն, որ է Հանդաբերդն և որն այժմ կոչում է Լևա ղալա։ Բերդս հիմնուած է մի միապաղաղ և ձուաձև բարձրացած ապառաժի վերայ, որ առանձնացած է իւր չորս կողմերից։ Բերդաբարձ ժայռիս հիւսիսային խորանդունդ ձորով հոսում է Թարթառի մի օժանդակն, (որի ակունքներն առած են իւրեանց սկիզբը Ղըզ-ղալա. Ռմբասար, Գինալ 11051 ոտք և Մանուշակ (Բանովշալի) 10100 խաչենահայեաց լանջերից և միացած նոյն խորանդունդ ձորում։ Արևելեան կողմում, ձորի աջ կողմի հարթակի վերայ երևում է Զափնի աւերակ գիւղն և կիսաւեր եկեղեցին. ոչ ինչ պակաս խոր ձոր է և հարաւային կողմն. միայն մի թրաձև սեռով բերդաժայռս հաղորդակցութիւն ունի իւր արևմտեան կողմի սարի հետ, որի վերայ է Լևա գիւղի աւերակն։ Այսու ամենայնիւ բուն բերդաժայռն շատ բարձր է սեռից։ Մի նեղ, գառիվեր և երկիւղալի կածան, որ փորուած է քարից, առաջնորդում է արևմտեան կողմից. անցնում հիւսիսային վիմափոր և քարուկիր, բայց *կիսաւեր դռնից*, որի մօտ է դռնապանների վիմափոր այրն և ապա հիւսիս արևելեան կողմով մօտենում բերդի դրան։ Հարկ է յայտնել որ *կիսաւեր* դուռնս և պատս ծառայած են ինչպէս *արտաքին* պարիսպ և դուռն,

որոց Համանմանն կայ և բուն բերդի Հարաւ արևելեան կողմում:

Ներքին բերդն ունի ամուր շրջապարիսպ, շատ բուրգեր, 100 մետր երկարութիւն, 80 մետր լայնութիւն, 6 մետր 10 սանթիմ պարսպի բարձրութիւնն և միայն մի դուռն հիւսիսային կողմից: Ամրոցիս մակերևոյթն զգալի կերպով թեքուած է դէպի արևելք, որի վերնամասն կազմուած է առանձին ամրոց, որ ունի միայն մի դուռն, նշանաւոր ամրութիւն և պալատաման ձև: Մակերևութի վերայ կայ ցորենի և գրի ամբար, հաց եռելու փուռն և այլ շինութեանց հետքեր [1]: Ամենայն ինչ կատարեալ է, միայն ափսոս որ ջուր չկայ բերդումս: Սակայն կան եօթն վիմափոր, բոլորշի և խոր հորեր, որոց հինգն արևմտեան և երկուսն արևելեան կողմում: Նեղ են բոլոր հորերի բերաններն, լայն և բոլորակ մէջերքն և տակերն և մօտ 5 մետր խորութիւնն: Ջուրը բերած են մօտակայ աղբիւրից և լցած հորերիս մէջ 'ի պաշար պատերազմի: Այժմ բերդումս բուսած են ծառեր և հետզհետէ ժամանակի մշտագործ մուրճն քանդում է ամրոցիս քարերը. (68):

Ձուկն եւ Ձկնեղէն

Կուր գետից, որի մէջ թափուող Հարաւային գետերից

[1]) Գաւառիս իշխողներն թէ և տիրապետած և իշխած են նաև Սոթքի Շաղուաքայ գաւառների վերայ ևս զոր օրինակ տեսանք արձանագրութեանց մէջ, սակայն մենք չուզեցինք շեղուել Սարգիս Ա. ընդհանրական կաթուղիկոսի Հայոց ՆԾԵ, և փրկչ. 1006 թուի որոշած սահմանից, միայն բարւոք համարեցինք ներկայացնել աղնիւ ընթերցողաց Մեծ և Փոքր Սիւնեաց մէջ ընկած բնական սահմանագիծը, որի վերայ հիմնուած է և հանդուցեալ հայրապետի որոշումն: Սահմանագիծն սկսեալ Գինալ (11057), Ռմբասար (7760), Ղըզ-ղալա (9000), Կարմիր-կումուր (8000), Քեթ-Քիթ-11284, Քեթի—(10000), Սարմուսաղ, Զինկիլ (9980) Կալին սար-Ղալին-դալա—(11002), Գել սար-Դալի-դաղ (11907), Մեծ բևեռաթաւ-Մխթեօքան (1185), սահմանն սարերիս գագաթնագծերովն հասած է Հակարի գետի ակունքներին, որ առած են իւրեանց սկիզբը Գել-սարի հարաւահայեաց լանջերից:

և գետակներից և նոյն կողմերում եղող լճերից ելնում են.

	Սալիանի վերի կողմից		Սալիանի վարի կողմից.	
		Փութ.		Փութ.
1) Սպիտակ ձուկն (Ռուս. Բելուգա)		150		3154
2) Թարթ » (Օսետր, կամ շիպա)		21538		29773
3) Երկարաքիթ ձուկն (Սևրուգա)		139098		564048
4) Կարմրախայտ » (Լօսոս)		419		15820
5) Շարմագի կամ շամահի (շեմահի)		27958		325870
6) Լոքո — — (Սոմա)		29556		70646
7) Մէջքն ոսկորոտ միջակ[1]) (Սուտակ)		8998		204000
8) Թեփամորթ (ոչ այնքան քաղցր)		6174		755236
» » (Լեշչ)				
9) Խաշամ — — (Խաշամա)		20699		271318
10) Դասիչ — — (Կութում)		741		66831
11) Օձաձուկն — (Մինոկի)		1500		3300
12) Սաղան — (Սաղան)		126606		1,006,300
13) Օձաձուկն — (Բալիկ)		78748		16017
Սպիտակ, Թարթ և երկարաքիթ ձկներից միայն ելնում են.				
Ձկնհատիկ — (Իկրա)		6064		17109
Սոսինձ — —		438		1675
Փորաթել — [2]) (Վեզիկա)		838		2075
Թմրկի երեսի համար փար:				
Վերջին 3 ձկներից շինում են նաև զիւրկեար և դէօշ մեծ քանակութեամբ:				
Լոքո ձկնից ելնում է և այլ սոսինձ		356		546
Գետերից և գետակներից այլ և այլ մանր ձկներ —		21423		607246

Արցախեան նահանգի բոլոր գետերից և գետակներից ելնում են չորս տեսակ մանր ձուկն--*բազմափուշ* կողակ, *սակաւափուշ* կողակ, կարմրախայտ և երկարաքիթ կամ Բեղլու: Ա. տեսակն ելնում է միայն Թարթառ և Հակարի

[1]) Միջակ մեծութեամբ ձուկն: Թուանշաններդ ներկայացնում են տարեկան ելած ձկների քանակութիւնը:

[2]) Գործ է ածուում կերակրի մէջ:

գետերից, որ համեմատաբար մեծ մեծ են լինում քան թէ գետակներից ելածներն։

Իսկ Բ. և Գ. տեսակներն ելնում են բոլոր գետակներից և վտակներից, որք համեմատաբար մանր և քաղցր են լինում քան Մարթաւ և Հակարի գետերից ելածներն։ Բայց քաղցր են միայն Հակարուց ելած մեծ կարմրախայտն, որ Երասխով գալով մանում է Հակարու մէջ. այսպէս են և Երասխից ելածներն։ Համարեա թէ միևնոյն տեսակ ձկներ ելնում են և Կասպից ծովից և Դարբանդի կողմերում Մեծ—Սամուր գետից։

Վ Ե Ր Ջ

Ծանօթութիւններ.

1) Նշանաւոր տեղ գրուած է Մուղանի դաշտն ոչ միայն Հայոց, այլ և օտարազգի պատմութեանց էջերում։ 50 մղոնից աւելի է դաշտիս երկարութիւնն Երասխի ձախ ափից մինչև Կուրած կամրջի մօտերքն և 2-23 լայնութիւն Գազայ սարից և Հատրութից մինչև Կուր։ Դաշտս կոչուած է Դարդարացւոց, Մուղանի և Արցախի դաշտ։ Ըստ ասութեան հմուտ երկրագէտների աւելի բարձր է Սև ծովի մակերևոյթն Մուղանի դաշտիս մակերևութիցն, այս իսկ է պատճառն, որ դաշտիս վերայ, մանաւանդ Կուր գետի եղերքներում տեղ տեղ լճանալով անշարժ մնացած են բաւական ջրեր։ Աղուանից թագաւորների և իշխանների ժամանակ ղրախտի նմանութիւն ունեցած է դաշտս, քանզի ահագին առու հանած են Երասխից և Ջրարբի արած ընդարձակ դաշտիս ամենամեծ մասը. վասն որոյ դաշտս լի եղած է ամենայն բարութեամբ, ինչպէս գրում է Կիր (եր. 137) «Եւ ապա եկին հասին (Թաթարք) յաշխարհս Աղուանից ամենայն աղխիւք բազմութեամբ իւրեանց և ի բերրի և յարգաւանդ դաշտին, որ կոչի Մուղան, լի ամենայն բարութեամբ, ջրով և փայտիւ, մրգով և որսով, անդ հարին գխորանս իւրեանց»։ «Ու զարձան յերկիրն Մուղանայ, որ միշտ կանաչ լինի խոտն ամառն և ձմեռն վասն պարարտութեան երկրին» (Վարդ. պատմիչ եր. 18)։ Այս տեղ ձմերանոց հաստատեցին Թաթարներն. դաշտիս ստորին մասում թագ կապեց Նաաիր-Շահն։ Դաշտումս ներկայացաւ Աղուանից Ներսէս Կաթուղիկոսն Թաթարաց զօրագլուխ Սարթախին (Կիր. եր. 215 216). Վարդան բարձր բերդին (ՁԾԳ.ին 204-209) Հուլաւու-Էլղանին Սարգիս և Գրիգոր վարդապետների հետ, և Հայոց Կաթուղիկոս Աբրահամ Կրետացին Նադիր-Շահին թագադրութեան ժամանակ։ Բայց այժմ ոչ Ջուր կայ դաշտումս և ոչ բնակիչ, ոչ ծառ կայ և ոչ միրգ կամ պտուղ, այլ ամրան սարսափելի տաք, թունաւոր և ահարկու օձեր. կատաղի կաբիճներ և մորմեր և քառասնոտնեայ մահաբոյն զեռուններ։ Գուցէ աւերակ քաղաքիս և բերդերիս մասին է նոյն Վարդ. Բարձ. (եր. 198—199) «Դարձաւ Հուլաւուն յիջևանս ի ձմերոցս ի դաշտն Մուղանայ և ի կայս ամարայնի ի Դաւռին (?) կոչեցեալն կամ ըստ այլոց ի Դարան դաշտ, զի այրք և բերդուկք քարանց կան անդ շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում։ Եւ խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր, մարդ և անասուն փայտս ծանուցս ի հեռաստանէ բերելով»։

2) Զորս գաւառներս ևս կազմում էին Ուտի նահանգի մասն, բայց պատկանում էին Հայոց թագաւորութեան Արցախի հետ, որից

անբաժան եղած են ամեն ժամանակ, ինչպէս և Աղուանից թագաւորութեան ենթարկուած ժամանակ և յետոյ։ Այժմ մի տուն անգամ հայ չկայ գաւառներումս, մինչդեռ կանխաւ մի տուն անգամ մահմետական եղած չէ։ Եկեղեցեաց աւերակները և հանգստարանների քարեր բոլորովին անհետացրած են մահմետականները։

3) Աւանդութիւն. Տիգրանակերտ գաւառի Հովուասարի մասին. Մի աղքատ մարդ ոչխարի կաթ է խնդրում մի հարուստ հովուից, բայց հովիւս կաթ չէ տալիս։ Իսկոյն չոքում է նեղասրտած աղքատ մարդն և անում այս աղօթքը։ «Աստուած, եթէ մի հօտ ոչխար տաս ինձ, ամեն խնդրողի կաթ կտամ ես». Լսում է ամենաբարի Յիսուս Քրիստոս և իսկոյն ոչխար փոխում մօտի բոլոր սպիտակ քարերը։ Աղքատն այնքան ուրախանում է. որ կարծես թև է տռնում որ թռչի, որովհետև մի հօտ ոչխարի տէր եղաւ յանկարծ, և ոչխարները քշում է դէպի սարն։ Յիսուս Քրիստոս ուրախութեան ծերունու կերպարանքով մօտենում է նոր հարստացած հովուին և աղերսելով խնդրում. «Հովիվջան, որդիս. սիրտս կաթ է ուզում, խնդրեմ էս սև ոչխարը կթես, ինձ տաս խմեմ և օրհնեմ քեզ»։ Ինչքան աղաչում է, հովիւն չէ տալիս կաթ, էս պատճառաւ խաչակնքում է ձէրը և իսկոյն էլի քարանում են ոչխարներն և հովիւն։ Էն օրից մինչև էսօր հայերէն Հովուի սար է ասում էս սարն, թուրքերն էլ Զոբան դաղի Ամեն ժամանակ գայլերն անպակաս են սարիցս»։ Այժմ մի խաչարձան է քարացեալ հովիւն համանուն սարի վերայ անկուած։ Սարիս բարձրութիւնն է 2316 ոտք։

Սարիս հետ հողորդակցութիւն ունի հիւսիսային կողմից Վանքասարն, որ թուրքերէն կոչում է Բէշիկ-դաղի (օրօրոցի սար) և գրեթէ ունի միևնոյն բարձրութիւնն, որի վերայ Աղուանից Վաչէ Բ. շինած է մի խաչաձև մենաստան, որի գլուխն այժմ խոնարհուած է ամբողջապէս։ Բ. Աւանդութիւն. «Մի չքերք (ամուլ) կին ուխտ է գալիս վանքս և խնդրում մի արու զաւակ. Միւս տարում ուխտի եկած ժամանակ ծնում է մանուկը վանքումս, բայց որովհետև արար է լինում կինն և մկրտում է ութ օրից վերջն իւր մանկան հետ, այս պատճառաւ արաբացիք աշխատում են բարձրանալ վանքն, սպանել կինն էլ մանուկն էլ։ Կինն աղօթք է անում. «Ձէր իմ Յիսուս, փրկիր ինձ»։ Փրկիչն հրամայում է օձերին, որ հաւաքուում են լցուում սարս, խածնում բարձրացողներին և մինչև ցայսօր լիքն է այս սարն օձերով։ Կինն էլ մի քարի օրօրոցում մեծացնում է վանքիս մէջ իւր մանուկը. սորա համար իրը թէ Բէշիկլու են անուանում սարս»։

4) Աղուանից Ա. մայրաքաղաքն էր Զողա [1]). բայց որովհետև յաճախակի արշաւանքներ էին գործում հիւսիսային խուժադուժ ազգերն Զողայի վերայ, վանորոյ հարկ եղաւ տեղափոխել թուգաւորանիստ աթոռը։

Պարսից չար Պերոզ թագաւորին հրամանաւ Աղուանից Վաչէ Բ. բարեպաշտ թագաւորն չինում է Պարտաւ քաղաքս Գարգարացւոց դաշտի վերայ։ „Եւ ի հրամանէ Պերոզի Պարսից արքայի չինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաք, որ այժմ կոչի Պարտաւ» (Մով. Կաղ. եր. 33)։ Փրկչ. 551 և Հայկական 1 թուականին Զողայից քաղաքս է փոխադրուում նաև Աղուանից կաթուղիկոսական աթոռն. „Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք։ Ապա յորժամ սկիզբն հայ թուականին եղև, ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեան Աղուանից ի Զողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահաստատ արշաւանաց թշնամեաց Խաչին Քրիստոսի, և նստուցին հայրապետ զտէր Ներսես ի գաւազանն Մեծ Իրանաց“ (Մով. Կաղ. եր. 91)։ Քաղաքիս պարիսպն ունեցած է չորս դուռն երբ Խազիրներն պաշարում են քաղաքս, որի բնակիչք „Եւ դէմ եղեալ առհասարակ ընդ չորս դրունս քաղաքին աճապարէին անկանիլ ի լեռնակողմն Արցախական գաւառին“ (նոյն եր. 104—107)։

Քաղաքիս մէջ գահակալած են Աղուանից Վաչէ Բ. և Վաչական Գ. բարեպաշտ թագաւորներն, չատ կաթուղիկոսներ, Վարագ-Դրիգոր, Ջուանշիր (2) և Վարագ-Տրդատ իշխաններն նոյնպէս Վաչական Գ. Շուփահղիշոյ կաթուղիկոսի հետ (Մով. Կաղ. եր. 65—69)։

Պարտաւիս մէջ ժողով գումարեց Հայոց Եղիա կաթուղիկոսն Փրկչ. 709 թուին և դահընկեց արաւ Աղուանից Ներսես Բակուր կաթուղիկոսը (նոյն եր. 238)։ Բ. ժողովը գումարեց քաղաքումս Հայոց Սիոն կաթուղիկոսն փրկչ. 768-ին և եկեղեցու բարեկարգութեան համար հաստատեց 24 կանոն։ Քաղաքս եկած են նաև Հայոց Եսայի կաթուղիկոսն (Մով. Կաղ. եր. 262) և Գէորգ Բ. կաթուղիկոսն (Մովղաղ. եր. 268-269։ Քաղաքումս վերականգնեց Համամ իշխանն Աղուանից կործանեալ թագաւորութիւնը (նոյն. եր. 268-269. Ասող եր. 161. Ստեփ. Օր. եր. 43)։

Քաղաքիս վերայ արշաւած են Պարսիկք, Խազիրք, Հոնք, Արաբացիք, Դէյլէմէնկ (Մարաց ցեղի մի տեսակն. տես Սեբ. դպ. Գլ. ԼԷ.),

---

1) Որի մասին տես «Աղուանից Երկ. և Դր.»։

2) Սորա անուամբ Ջուանշիր կոչուած են գաւառներս Ուռեաց հետագաներից են Ուտի-Առանձնակ գաւառի և բոլոր հայազաւան գիւղերի բնակիչներն։

Ռուսք (Մով. Կող. 270). Վրացիք, Թաթարք, վերստին Պարսիկք, Օս. մանցիք և Լէկղիներն (Ես. կաթ. եր. 21-40)։ Վերջապէս ամեն բարբարեամբ լի և վաճառաշահ եղած է քաղաքս, այս պատճառաւ իրաքանչիւր արշաւող ազգ ճգնած է իւրացնել այս իւղալի պատառը։ Ազուանից Ես. Կաթ. գրուածներից (եր. 31-32) երևում է որ Հայոց Ռճէ. (փրկչ. 1721-ին) թուին Պարտաւն տակաւին կորուսած չէր իւր քաղաք լինելու փառքը (1)։ Երևի թէ այնուհետև աւերակ դարձած է քաղաքս։

Մահմետականաց աղօթարանս Իմամզատէ եղած է Պարտաւի մայր եկեղեցին Սուրբ Գրիգոր անուամբ, որի մէջ ամփոփուած են երկու նահատակուղ եղբարք-Մանկիկ և Մերդազատ Հայոց ՃԿ. (711 թուին (Մով. Կաղ. եր. 259)։ Ուշիմ ընթերցողն այժմ իմացաւ թէ իմամզատէում եղած զոյգ տապանաքարերն են երկու եղբարց վերեզմաններն։ Պարտաւումս նահատակուած են այլ ևս երկու հարազատ եղբարք-Արծրունի իշխանք Սահակ և Համազասպ, որոց յիշատակութիւնն կատարում է Հայաստանեաց եկեղեցին իշարս սրբոց (Յայտմ. Տէր-Իսրայ. հատ. Ա. եր, 155)։ Բայց սոցա մարմինքն շարժանացան հողին, այլ այրեցին և մոխիրը գետին մէջ թափեցին (Ղևոն. եր. 162—165 Հայոց ՄՂԲ. թուին)։

5) Բազմաշխատ Ղ. Վ. Ինճիճեան իւր Հնախ. Ա. հատ։ եր. 329-332 (առնելով օտարազգի պատմութիւններից) գրած է թէ Սկիւթացիք զօրանալով մեծ ցեղ դարձան և առաջ բերին թագաւորներ. «յորոց ծնան Սակք և Մազքութք». և թէ «ի սկզբանէ, անդ Չակք անուն ժողովուրդ հայկական բնակեալ անդ յՈւտի Նահանդին մերում. որոց և գլխաւորի անուամբ կոչեցաւ գաւառն Շակաշէն». (Սակ-Չակ-Շակաշէն)։ Որպէս թէ տակաւին չհիմնարկուած Գանձակ քաղաքն Շակաշէն էր կոչում գաւառս։ Խորենացին անուանում է գաւառս Շիկաշէն, իսկ Կաղականդուացու հեղինակներն 141 և 251 եր. Շակաշէն. իսկ 170 և 265 եր. Ըշակաշէն են անուանում Գանձակի միևնոյն գաւառը։ Աւելի ուղիղ և հայկական է թուում Շիկաշէնն, քանզի շէկ բառով բարդուած շատ անուններ ունինք նոյն իսկ Արցախում և Կաղական. պատմութեան մէջ, ինչպէս է Շիկաշէն. Շիկատափ, Շիկահող, Շիկահեր են։ Եւ զոր օրինակ տեսանք փոփոխութեանց ենթարկուած բոլոր գաւառների անունները, անհաւանական չէ եթէ փոխուած լինի և Շիկաշէնն յԱրշակաշէն։

Բազդատի խալիփայի հրամանաւ և արքունի զանձով փրկչ. 836 թուին գալիս է արաբ Խազը-Փատկոսի որդին և հիմնարկում Գանձակ քաղաքը Շիկաշէն գաւառումն «իսկ նորա որդին (Խազը-

1) Վկայում է և Ծարեցի Յովհաննէս վարդապետն (Սամ. ան. եր. (189.

Փատկոսին). . . . եկեալ արքունի հրամանաւ և զանձուք շինեաց զԳանձակ քաղաք յԱրշակաշէն գաւառի» Մով. Կաղ. եր. 265)։ Այնուհետև Պարտաւի փոխարէն ամիրայանիստ քաղաք է դառնում Գանձակն, ուր փոխադրուում է և Աղուանից Կաթուղիկոսարանն (Մատ. Ուր. եր. 278). սակայն այս Գանձակն կործանուում է փրկչ. 1139 թուին մեծ չարժով. «Ի Շ2Ը. թուականին եղև չարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ և տապալեցան շինուածք որ ի նմա ի վերայ բնակչաց իւրոց. և եկն թականդն Վրաց Դեմետրէ հայրն Դաւթի և Գէորգեայ և տարաւ զգրուն քաղաքի յաշխարհն իւր». (Դիր. եր. 65 և Վարդ. Բարձր. 162)։ Վերստին շինում են Գանձակ քաղաքը նոյն իսկ փլած տեղում։ Սակայն 1235 փրկչ. թուին [1]) դարձեալ աւերուում է նոյն քաղաքն. «երևեցան յառաջագոյն նշանք աւերման. . . որպէս ի վերայ երուսաղէմի յառաջ քան զաւեր նորա, նոյնպէս և այսմ քաղաքի (Գանձակի), քանզի յանկարծ պատառեալ երկրի և արտաքս ելեալ ջուր սեաւ . . . և յանկարծակի հասին զօրք Թաթարին և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց . . . . իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր այրեաց ի վերայ իւր զչինուածն, զի մի անկցի ի ձեռս թշնամեացն. . . . . և այսպէս ամայի եկաց քաղաքն ի չորս ամս և ապա հրամայեաց հաւուն շինութեան քաղաքին» (Դիր եր. 137-138)։ 1239-ին շինուած Գանձակն ևս կործանում է Ա. Շահ-Արասի հրամանաւ 1606-ին և շինում այժմեան քաղաքն Գեանջա անուամբ։

Ահա այսպէս կործանուում է և երբորդ անգամ շինուած Գանձակ քաղաքն։ Բայց տակաւին երևում են Հին-Գանձակի աւերակներն նորից բաւական վար համանուն գետակի աջ ու ձախ ափերի վերայ-անների, շուկաների, բերդերի, աշտարակների, կամուրջների բեկորներն և հետքերն։ Այժմ երևում են իրարից զանազան չափով հեռու երեք բաղմաշեայ, բայց փլած կամուրջներ, որոց Ա-ն այժմեան կամուրջից վար, Բ-ն երկաթուղու կամուրջից վերև, իսկ Գ-ն սրանից վար։ Գետակի աջ ու ձախ կողմերում դեռ երևում են բերդերի աւերակներն որք հաղորդակցութիւն ունեցած են միմիանց հետ ստորին կամուրջներովս, որոց մօտ գետակի ձախ ափի բերդն եղած է բաւական ընդարձակ. որի աշտարակներից մի քանիսն կիսակործան են։ Գետակի աջ կողմում նախ ընկած են վերևոյիշեալ քաղաքի և շուկայի աւերակներն. որոց ստորոտում աւերակ բերդն, որ միացած է եղել երկու դուղահեռական պատերով և բաժանուած երկու միջնորմ պատերով,

1) Վարդ. Բարձ. եր. 189։

այժմ երևում են միայն բերդերիս հիմքերն։ Այս բերդերից փոքր ինչ վար եղած է Հայոց թաղն և եկեղեցին, որի մէջ ամփոփուած ս Խոսրով նահատակի մարմինն [1])։ Պարսիկներն եկեղեցիս փոխած են մզկիթի, որը անուանում են Գ և օղ-իմամ։ Խոսրովի գերեզմանն ևս զարդարուած է թանգագին կերպասներով։ Չինուհիներս ամեն մասամբ նման է Պարտաւի Իմամզատէին, տարբերութիւնն այն է միայն որ Գեօղ-Իմամիս գաւիթն լի է գերեզմաններով և սորա գմբեթի արտաքին կողմն խաչազարդարուած է գոյնզգոյն մանր աղիւսներով։

Հին-Գանձակումս ծնած և սնած են Գօչ-Մխիթարն և պատմաբան Կիրակոս Գանձակեցին։ Գանձակումս Կաթուղիկոս օծուեցան ի չարս այլոց մանկահասակ Յովհաննէս և Գագիկ (Կիր. եր. 105 և 116)։

Իսկ Նոր-Գանձակիս վերայ եղած են Ռուս-պարսկական պատերազմները, նախ 1804-ին դեկտ. 3-ին Ռուսներն յաղթում և գրաւում են քաղաքս, որը և Ելիսաւէտապօլ անուանում ի պատիւ Ելեսաւէտա Կայսերուհւոյն Ռուսաց։ Երկրորդ 1826-ին այս պատերազմում վերջնական կերպով յաղթումն Պարսիկներն։

6) Կաղթ գաւառիս մէջ այժմ ևս գտնում են ջարդուած քարերում, քարախունկ, ինչպէս ակնարկում է Խորենացին։ Գտնում են քարերը ջարդած ժամանակ. բայց խիստ սակաւ։

Շամքոր և Զակամ գետակների պատճառաւ երկու գլխաւոր մասերի բաժանուած է գաւառս և ստացած յետոյ երկու առանձին անուն- Շ ա մ ք ո ր և Զ ա կ ա մ։

7) Կողթ գաւառիս արևելեան մասում չինուած է Շամքոր [2]) քաղաքն Ձ. դարում որպէս թէ յանուն Ջաթ-Խազրի (Կիր. եր. 113-114)։

Բագրատունի Աշոտ Գ. Ո ղ ո ր մ ած թագաւորի կրտսեր որդին Գուրգէն Թ. դարի վերջին քաջութեամբ սիրում է ի միջի այլոց Սևորդեաց ձորին, Կայան և Կայծոն բերդերին (Վարդ. Բարձ. 122)։

Գուրգէն այս գործողութեամբ գնում է հիմը մի առանձին թագաւորութեան։ Գուրգենիս որդի Դաւիթ- Անհողին Ժ. դարի առաջին քառորդում յաջորդելով իւր հօր աւելի ընդարձակում է իւր սէրութեան սահմանները. հնազանդեցնում Թիֆլիսի ամիրան, յաղթում Գանձակի Փալտուն ամիրային սրախողխող և գետաւէժ անելով նորա զօրքերը, սիրում Ջաւէ և Կայենի և Քաւս կամ Քուստի և կողթ

1) Բնիկ Գանձակեցի է Խոսրով նահատակս, որը, զԲրիտոաս չուրանալու համար կապեցին ԹԹևնի ծառից և նահատակեցին, որի մարմինը ամփոփեցին հայք եկեղեցումս. (նոյն յայտմ. հատ. Բ. եր. 5)։

2) Քաղաքումս ժողով գումարեց Աղուանից Միքայէլ կաթուղիկոսն (Մով. Կաղ. եր. 258)։

գաւառներին և սոցա բոլոր բերդերին և ժառանգում թագաւորական անունը։ (Ասող. եր. 257), Այնուհետև Դաւիթ թագաւորն յաղթում է Պարսից Ապուսուարի 100,000-ից բաղկացած զօրացն և տիրում Արցախի Գարդման գաւառին ևս և չատ բերդերի (Մատ. Ուռ. եր. 92-96)։ Աղուանից թագաւոր կոչուեցաւ նաև Կիւրիկէ Ա. որդի Դաւիթ Անհողինի, որովհետև տիրում էր Աղուանից երկրի հարաւ արևմտեան մասին այն է իւր հօր տիրած բոլոր գաւառներին և բերդերին։ Այս պատճառաւ Մատթ. Ուռ. (եր. 278) գրում է. «և թագաւորք Աղուանից Գագիկ (Գուրգէն) և Դաւիթ և Կորիկէ (Կիւրիկէ) [1]) որք նստէին այժմուս ի Լօռէ քաղաք»։ Ջարունակաբար տիրեցին և սոցա որդիքն և թոռներն։ Յետոյ նոյն գաւառները գրաւեցին Սելճուկեաններն պարսիկ զօրքով. ապա «Այսպէս և միւս իշխանն Զաքարէ անուն և եղբայր իւր Սարգիս հայրն Ջալալէի և Իւանէի, տղղականք մեծ իշխանացն . . . առին բազում գաւառս ի Պարսից և զբերդս ամուրս զԴարդման, զՔարահերձ, և զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածաբէթ և զՏէրունականն, զԳագ և զՉամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ հայր Աղպուղին, պապն Վահրամայ և Զաքարէի և Իւանէի [2])» (Կիր. եր. 95)։ «Եւ ապա ձեռն տուեալ (Իւանէ եղբայր Սպասալարին) ազգայնոյն իւրոյ Վահրամայ որդւոյ Զաքարի հայ. առնու զՉամքոր» (Վարդ. Բալձր. եր. 184)։

1235-ին Թաթարներն գրաւում են նախ «առին զնա (զՉամքոր) . . . և այրեցին զչինուածն, որ ի նմա. ապա յարձակեցան ի վերայ այլ բերդիցն, որ ընդ իշխանութեամբ Վահրամայ ի Տէրունականն և յԵրգեվանքն, և ի Մածնաբերդն. զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի որդի Աղսարթանայ և ի Գարդման և յայլ կողմանս և ի Զարեք և ի Գետարակս . . . ի Տաւուշ և ի Կածաբեթ և ի Նոր բերդն և Գագ» (Կիր. եր. 141-142)։ Յետոյ զարձեալ ծաղկում է քաղաքս։ Վերջապէս քաղաքիս հայ բնակչաց մեծ մասն փոխադրվում է Թիֆլիս

1) Աշոտ-Ողորմածի որդի Գուրգենից ծնուած էր Դաւիթ-Անհողին Թագաւորն, որից Կիւրիկէ Թագաւորն և Կիւրիկէից Արաս Թագաւորն, որ տիրում էր Գարդման գաւառին և Մածնաբերդին, այսպէս և իւր հետագաներն մինչև Մէլիք-Աստամ Բարսում գիւղի։

2) Սպասալար Զաքարէն և Իւանէն չեն սոքա, այլ ազգական են սոքա նոցա։ Սպասալարների համար գրած է Կիր. եր 94 Զաքարէ և Իւանէ էին „Որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարեայ որ հաւատացեալ ի Քրիստոս ի Բարիրական խելէն (եկն ի Հայաստան)». Իսկ միւս Զաքարէի և Իւանէի մասին որոշ գրում է նոյն Կիր. եր. 95. Թէ միւս իշխաններն Զաքարէ և Սարգիս եղբարք էին բայց ազգական Սպասալար եղբարց։ Զաքարէ իշխանիցս ծնուած էր Վահրամ, որ հայր էր Աղպուղիին, և պապ Վահրամին և Զաքարէին և Իւանէին։ Վահրամ իշխանս էր վերև յիշուած բոլոր բերդերի տէր Թաթարաց եկած ժամանակ։

և չինում իւր համար առանձին եկեղեցի, որ կոչուում է Ջամբորցւոց թաղ և Ջամբորցւոց եկեղեցի։ Իսկ Ջամբոր աւերակ քաղաքում մնացեալ նշանաւոր և աղիւսաշէն և բարձրադոյն դիտարանն կոկծանուում է 1840 թուականին մեծ չարժով։

Գաւառիս երկրորդ մասն էր Ջակամ. որ կրկին է. Ստորին-Ջակամ և Վերին-Ջակամ։ Երկու Ջակամներս միասին Ադուանից Եսայի Կաթուղիկոսն (եր. 23) անուանում է «Ամիրշամ Ջատինլու որ են Ջակամներն»։ Իսկ Առաք. պատ։ (եր. 9) որոշակի գրած է «Մելքիսեթ եպիսկոպոսն ի Վերին Ջակամայ»։

Համարեա թէ Ջակամներիս արևմտեան մասն այժմ կոչուում է Շամշատին, որ կարծում ենք, ունի մի ներքին կապ Ամիրշամ Շատինլու անուան հետ։ Հաւանական է թուում մեզ, որ Արաբացւոց ժամանակից մնացած լինին անունս գաւառիս վերայ, վասն զի արաբական բառ է Ամիր-Շամ (Դամասկոսի հրամանատար) անունս։

8) Կողթ գաւառիս մէջ է և Խաղխաղ քաղաքի աւերակն, ինչպէս գիտէ ընթերցողն։ Բոլորովին անյայտ է մեզ քաղաքիս հիմնարկութեան և աւերման տարեթիւերն և չինողի անունն, միայն յայտնի է որ քաղաքս ձմերոց էր Ադուանից Թագաւորներին [1]։

Համոզուած ենք որ աւերակս է Խաղխաղ քաղաքն և Ջակամ գետակս է Լոփնաս գետն։ Մեր Համոզմունքն հիմնուած է հետև եալ կէտերի վերայ։

—Ա. Որ Խաղխաղ քաղաքն գտնում էր Կուր գետի ալ կողմում։

Բ. Որ խաղխաղ քաղաքս մօտ էր Վրաց սահմանին, քանզի Կուր գետի ձախ ափն պատկանում էր Վրաց։

Գ. Որ պատերազմն եղած է Խաղխաղ քաղաքի դիմացն և Պարսից յաղթուած զօրքն ոկսած է Լոփնաս գետովն ի վեր փախչիլ դէպի ամուր անտառներն։ «Սերուխտ. . . . ոչ եկաց մնաց ի կողմանս ձորայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն և պատահէր նմա (Վարդանայ) մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի. . , ։ Անցանէր, բովանդակեր ամենայն զօրօք իւրովք, ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր» (Եզիշ. եր. 140. Մով. Կաղ. եր. 87)։ «Ընդ այն ժամանակս (Ե. դարի երկրորդ քառորդում) Թագաւորն Ռոմոոոքեան իւրովք զօրօք և Թորելեան զնդիւն գումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Էանց յայս կոյս Կուրական

1) Եղիշէ եր. 140 „Ձմերոց էր Թագաւորացն Ադուանից“. Մով. Կաղ. եր. 87. „ „ Թագաւորութեանն „ „“

գետոյն... Նստուցանէր զղակիշ իւր մերձ ի Խաղխաղ քաղաք» (Մով. Կաղ. եր 73)։

Պատմարաններիս մատնանիշ արած բոլոր յատկութիւնները մենք գտանք միայն աւերակիս մօտ, որք են դաշտ, Վրաց սահմանի մօտ, գետակ. որի եզերքով ճանահապարհ կայ, որ խոր և անտառապատ ձորերով առաջնորդում է մինչև ձմերաբակ գիւղն։ Չորրորդ և գլխաւոր փաստն այն է, որ ցարդ Խալխալ է կոչուում քաղաքիս աւերակին վերայ եղած թրքաբնակ գիւղն։ Դաշտիս վերայ չկայ մի այնպիսի աւերակ քաղաք, որ ունենայ այդ բոլոր յատկութիւնները և անունը բացի Խաղխաղ աւերակիցս։

9) Ջաբրայէլ անունը կարծում ենք թէ գաւառս ստացած է Ջաբրայէլ հայ իշխանի անունից, ինչպէս Ջուանշիր իշխանից Ջուանշիր գաւառ (Գաղտ. եր. 201 և 182)։

10) Անյայտ է մեզ բերդիս չինողի անունն, չինութեան տարեթիւն և միանգամայն սորա անցեալն։

11) Անծանօթ է մեզ և այս բերդիս անցեալն, միայն տակաւին թարմ է հասարակութեան մէջ Աւան-իւզբաշու աւանդութիւնն և կենդանի սորա անունն և քաջութեան համբաւն։ Հարկ է յատնել թէ այս կողմերում բնակած է և Աւան անուն իշխան և Մէլիք-Աւան (Գաղտնիք եր. 201)։ Թէ երկաքիգս որն հիմնած է բերդս չգիտենք։

12) Ինչպէս միւս բոլոր բերդերն, նոյնպէս և բերդս պատկանում է Արցախի իշխաններին։ Եւ ինչպէս Գիւչ է կոչուում Դողայ մօտին վանքն նմանապէս Գիւչ է կոչում և վանքիս մօտի բերդն։ Ամրոցի մասին գրում է Թովմայ Արծրունին (եր. 177-185) թէ Ադուանից հայ իշխաններից Ապումուսէ ոմն, հաւաքում է երկրի բազմութիւնը և «լեգէոնս զօրականաց զսակաւս (ամրանայ) ի լեառնն ամուր անուանեալն Քթիլ»։ Իմանալով Բուղա ոստիկանն մեծ զօրքով յարձակուում է Գիւչ բերդի վերա, բայց յաղթուում է չարաչար.։ Վերջապէս «եղև թիւ պատերազմաց նոցա (Բուղայի և Ապումուսի) ԻԸ. (28) անգամ և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռուի»։ Բուղան ակամայից ստիպեալ գրում և յայտնում է ամիրապետին, որից հրաման է ստանում ընդունել զԱպումուսէն մեծ պատուով իբրև յաղթող զօրավար։ Վասնորոյ Բուղան «եհան ընդառաջ նորա (Ապու-Մուսէի) զունդս զունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարբօք և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս և երգեցիկս և զովասացս են»։ Բերդումս պատերազմեց և Դիզակի Մէլիք-Եսային և յաղթեց Իբրահիմ ձըռ-խանին։ Արդէն յայտնի է, որ Դող աւանիս շրջապարիսպը չինած են Դողայ մէլիքներն և նորոգած Դող կամ Գիւչ բերդիս պարիսպը։

13) Դեղափայտ սարիս բարձրութիւնն է 8186 ոտք։ Սարիս կատարի վերայ եղած է Կատարոյ անուն նշանաւոր Վանք։ Մենաստանիս մէջ ապաստանարան գտած էին Սանեսան Թագաւորի երեք որդիքն Մովսէս, Դանիէլ և Եղիա 3870 մարդով, որք հաւատացած էին Յիսուս Քրիստոսին Ս. Գրիգորիսի քարոզութեամբն։ Գալիս է Սանեսան Թագաւորն զօրքով [1]) նահատակում իւր որդիները և հաւատացեալները սրով։ Այսպէս նահատակուում են նաև Ռոսմոսոր Թագաւորի Թէվոփիլէ սուրբ զօրավարի որդիք-հաւատացեալ Մովսէս և Աներողոգէս Ագիսարոսեան գնդով միասին (Մով. Կաղ. եր. 73-78)։

Անծանօթ է մեզ Դեղափայտիս մօտ եղած բերդի անցեալն։

14) Ինչպէս տեսանք Հերհերի եկեղեցու արձանագրութեանց մէջ (որ Հովարան էր Ամարասայ վանքին) Քոչիզ կոչուած է ծովատեղ Գիւղս և եղած մելիքանիստ աթոռ Մելիք-Փաշայեանց ազնիւ տոհմին մինչև Մելիք-Շահնազարեան Մելիք-Բաղու ժամանակներն։ Առաք. պատմագիրն (գ. գլ.) յիշում է գրելով. «Մելիք Փաշիկն ի Քոչիզ գեղջէ»։

15) Պատմութիւններից որոշակի երևում է մանաւանդ Մով. Կաղականդացուց, որ Ամարաս գիւղաքաղաքն (ոմանք ա ւ ա ն են անուանում և ոմանք գ ի ւ ղ ա ք ա ղ ա ք) չինուած է եղել Ամարասայ այժմեան վանքի մօտ։ «Երթեալ լուսաւորէր զՎրաց և զԱղուանից աշխարհն (Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ)։ Եւ երթար ի Հարանդ Գաւառ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ և արկանէր հիմն եկեղեցւոյ ի գիւղաքաղաքին Ամարասայ, և կացուցանէր զդործունեայս և հրամանատարս չինել զեկեղեցին». . . յետոյ գրած է. «Զոր (զսուրբ մարմինն Գրիգորիսի) բարձեալ աշակերտացն բերէին յԱմարաս գիւղաքաղաքն... անդ եղեալ առ եկեղեցւոյն հուպ ի բեմն ի հիւսիսոյ կողմանէ (մի և նոյն տեղումն է և այժմ)» (Մով. Կաղ. եր. 28-31)։ Հաւանական է թուում մեզ, որ օդի ծանրութեան պատճառաւ գիւղաքաղաքի շինութիւնները փոխադրած լինեն յետոյ վանքիս մօտիցն հանդիպակաց սարին հիւսիսահայեաց լանջի վերայ, որի մեծ աւերակն մնում է արդէն, և որի մասին գրած ենք։ Աղուանից Վաչական Գ. թէ ինչպէս եկաւ գտաւ Սուրբ Գրիգորիսի դերեզմանը, ով ցանկանում է թող կարդա Մով Կաղ. գատ. Ա. գլ. ԺԹ-ԻԴ.»։

1) Յառաջ քան զտեսչասուրբն տեառն Աբրահամ ի թշնամանաց հրդեհեցան ի Դեղափայտ լերին ի Կատարոյ վանս . . . . Սուրբն Մովսէս, սուրբն Դանիէլ, սուրբն Եղիա. առքա որդիք գոյով Սանեսանայ արքային Մասքութաց, որ աշակերտեալ սրբոյն Գրիգորիսի և երէց հազար ութ հարիւր և եօթանասուն այր ընդ նոսա Ամենեքեան առքա ի լեառնն Դիզափայտ . . արիւնաբրուն Սանեսան խուռ սուսերի արկ զնոսա (Մով. Կաղ. եր. 92)։

16) Քարայրներս նշանաւոր դիր կատարած են ժամանակին. մէն մի անառիկ բերդի չափ օգնած է Արցախի Հայոց։ Տակաւին անհետացած չէ ժողովրդեան յիշողութիւնից և աւանդութիւնից քարայրներիս պատմութիւնները։ Հունոտի քարայրում նախ երկար ժամանակ մնացած է Աւան-Իւղբաշին, որոյ անունը գովութեամբ է յիշում Աղուանից Եսայի կաթուղիկոսն (եր. 47)։ Ապա 1826 թուի ռուս պարսկական պատերազմի ժամանակ բնակում է քարայրումս Թարխանեան Սափարի իւղբաշին իւր քաջերով և չարունակ ալիւր հասցնելով Շուշին ազատումս նովից (Գաղտ. եր. 362-366)։ Ահա այսպէս օգտակար եղած են քարայրներն. այսպէս և Աւանայ և Ամարաթներն այլերն։

17) Արդէն յայտնի է գրականութիւնից Աւետարանոցի և Շուշու բերդերի պատմութիւններն. բայց անհայտ են Բրդահանջի բերդի անցեալն, միայն յայտնի է որ շինուած է Աղուանից իշխաններից։ Ղալի-Խութ բերդի մասին գրած է Մով. Կաղականդուացու շարայարողն (եր. 264) «Էանց Բարան զգետովն Երասխ ի Պարսից և յԱմարաս գաւառ բնակեցաւ, բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի 'ի հնազանդութիւն նմա եկեսցեն (պաշարեալ հայք) . . . . . ել տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին։ Ցայնժամ ապաւինեալ բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի . . . ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդն և զերծեալք յայնմանէ զՔրիստոս փառաւորէին». Անծանօթ է մեզ նաև Աղջկաբերդի անցեալն։

18) Վանքս չինուած է Հայոց 2ԺԲ. Թուականին Աշոտ Թագաւորի որդի Շահանշահից, բայց նորոգուած է մերթ ընդ մերթ։ Ոմանք կարծում են թէ վանքս չինուած է ոմն Յովհաննէս անուն վարդապետից, որի գերեզմանն կայ հիւսիսային փոքր խորանի մէջ և որի անունն գրուած է նոյն խորանի առաստաղի ծեփի վերայ. և ոմանք կարծումն թէ չինուած է Յովսէփ անուն վարդապետից։ Սակայն վարդապետներս նորոգած են միայն։ Բայց հազար ափսոս, որ քայքայուում է հետզհետէ, զի փոքր ինչ խախտուած է տանիքից։

19) Վանքս չինուած է Ջալալ-Թօլան իւր բարեպաշտ հօր Վախթանկ իշխանի կտակի համաձայն, իսկ հրաշագան գաւիթը չինուած են ինքն Ջալալ-Թօլան, իւր ամուսին Մամբան և իւր որդի Աթաբակն իրր Դամբարան իւրեանց ցեղի համար։ «Շինեաց (Ջալալ-Թօլայն) եկեղեցի մի գեղեցկագործ յօրինուածով գմբէթայարդ երկնանման տաճար փառացն Աստուծոյ.... որ կոչի Գանձասար. հանդէպ Խոխանաբերդոյ 'ի տեղի շիրմի իւրեանց և յոլով ամս աշխատ եղեն ի նմա։ Եւ իրրև առ զաւարտումն, արար նաւակատիս մեծահանդէս առ 'ի յօրհնել զեկեղեցին, անդ էր և կ ա թ ո ւ ղ ի կ ո ս ն Աղուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք, այլ և մեծ վարդապետն Վանական,

յոլով բարունիք. անդ էին և սուրբ վարդապետքն Խաչենոյ Գրիգորիս և տէր Եղիա հարազատք միմեանց, զոր զարդարեալ էր Աստուած երկուց մարդով . . . և բազում քահանայիւք (700), և իրրև կնքեցաւ օծմամբ, ճաշ մեծ յօրինեալ ինքնին իսկ (Ջալ. Դօլ.) ձեռովք իւրովք պաշտէր զրազմեալսն . . . և եղև այս 'ի ՈՀԹ. Թուին Հայոց յաւուր մեծի տօնի, վարդաւառին» (Կիր. եր. 159)։ Ջալալ-Դօլաս Ղազուինում նահատակուում է Արղունին անօրէն հրամանաւն Հայոց ՀԺ. Թուին, որի մարմինը բերել տալով իւր որդի Աթաբակն ամփոփել է տալիս Գանձասարի գաւթում տաճարի դրան մօտ (Կիր. եր.234-236)։ Հարկ է յայտնել որ ականատես իշխանս Ջալալ-Դօլայ նահատակուած է ՉԺ. Թուին, իսկ սորա գերեզմանի շիրմաքարն կրում է Հայոց ՊՅ. Թիւը։ Ցայտնի է թէ («Այս է հանգիստ մեծին Ջալալի. յաղաւթս յիշեցէք Թվ. ՊՀ.») տապանաքարս կամ նահատակութիւնից 170 տարի յետոյ ձգուած է և կամ փոխուած է հին տապանաքարն և ձգուած նորս և կամ այլ է Ջալա-Դօլայի և այլ Ջալալի գերեզմաններն, բայց տապանաքարն միայն մի հատ է։

20) Մենաստանումս յիշատակ դրուած էր այն ձեռագիր աւետարանն, որ այժմ գտնուում է Շաքուայ Գեօգ-Բուլաղ գիւղում։ Բակ իշխանն (Եղիշ. Է. եղ. եր. 233) «եաւթն հարիւր արամբ գնաց փախստեայ . . . յամուրն Արցախայ և կեցեալ բարեպաշտութեամբ . . . . մինչև յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ և 'ի ոմին սրդի Այեսալ քրիստոսասէր Վանինի, որ և ստացաւ զայս աստուածախաւս աւետարանս յիշատակ և փրկութիւն հոգւոյ հաւր իւրոյ բարեպաշտ իշխանին Ջաջռոյ և ետ 'ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւասպտուկ, որ է շինեալ յանուն սուրբ Աստուածածնին և է բնական տուն և շիրիմ Ջաջուռ իշխանին և նախնեաց իւրոց և է ի գաւառին Արցախայ, որկոչի Խոխտնաբերդ» (Ադ. երկիր և Դրաց եր. 234-235)։

21) Բերդս շատ հին է և, ինչպէս կարծում ենք, շինուած է Հայոց թագաւորներից և յետոյ ենթարկուած Աղուանից իշխանութեան։ Որպէս ակներև է Քարագլխի Հին-Հանգստարանի արձանագրութիւնից՝ Հասան մեծն բերդս տուած էր Սմբատ անուն ոմն իշխանազնի իւր հայրենիք և գերեզմանատուն։ Բերդիս մասին գրում է Աղուանից պատմիչն (Մով. Կաղ. եր. 263) «եկին գաղտարար 'ի Գարտաւայ արք ընտիրք 'ի Տաճկաց և յաւարի առին զԱմարաս գաւառ՝ զերի առեալ իրրև ոգիս հազարս և 'ի Մեծիրանաց սահմանի ամրացեալք 'ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար։ Ցայնժամ արի և չքեղատեսակն Սահղի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազօր եղբարք իւրովք և զօրօք 'ի լուսանալ առաւօտուն 'ի վերայ յարձակեալ առհասարակ դիաթաւալ զնոսա

ցիր և ցան կացուցանէին և որպէս յառիւծոյ ժանեաց զգերեալսն ի բաց կորզէին»։

22) Հին է Կաչաղակաբերդիս շինութիւնն, որ կոչուում է և Խաչենոյ բերդ։ (Մով. Կաղ. եր. 272-273) «առեալ զմնացեալ դուստրն Սպրամ . . . մտանէ 'ի բերդն Խաչենոյ և . . ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրնեսեհի Սահլի որդւոյ»։ Բայց յետոյ պատկանում էր Ջալալեաններին։

23) Ինչպէս Ուլու-պապ, նոյնպէս և Խոխանաբերդն պատկանում է Ջալալեաններին։ Գրում է Կիրակոս (եր. 185) վերջին բերդիս մասին. Ջալալ-Դօլայ «իրրև եառս զյարձակումն անօրինաց (Թաթարաց) ամրացոյց զընակիչս իւոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խոխանաբերդ . . . Եւ իրրև եկին պաշարել զնա, տեսին զի ոչ էր հնար առնուլ զամուրն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս և նա իմաստնաբար հաճեաց զմիտս նոցա»։ 24 և 25 Երկու բերդերս և Անանուն (Առաջաձորի մօտի) բերդն ևս պատկանում են Վախթանկեան-Ջալալեաններին. սակայն պատմութեանց մէջ չկայ տեղեկութիւն մէջ չկայ սոցա մասին։

26) Արդէն իմացանք որ Աղուանք էր կոչուում պատս։ Մովսէս (եր. 65 և 66) գրած է. «Ապա կամ եղև արքայի առնել ժողով յԱղուէն բազմամբոխ առեան . . Ես Վաչական (Գ.) Աղուանից արքայ և Շուփհաղիշայ . . . . և ազատ մարդիկ և նահապետք Արցախայ . . . և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին 'ի հանդէս ի հովոցի տեղւոջս Աղուէնն»։ Արդ ժողովրդեան բերանում ցարդ մնացեալ Աղուանք և «ի հովոցի տեղւոջս Աղուէնն» կարծել են տալիս մեզ հաւատալ թէ ժողովն եղած է պատիս մօտերքում, թէ պատս է Աղուէնն, և ոչ թէ Աղուէ գաւառն, քանզի եթէ Աղուէ գաւառում եղած լինէր, կյիշէր պատմարանն Գաւառ բառը. մանաւանդ թէ Աղուէ Գաւառում չկայ Հովաւուն տեղ։

27) ԺԲ. դարում նշանաւոր էր Հաթերքս, այստեղ էին նստում Վախթանկեան իշխաններն։ Բայց որովհետև այս թագաւորական և իշխանազն ցեղի մէջ եղած են ժամանակից շատ Վախթանկներ և Հասաններ, վասն որոյ հարկ համարեցինք որոշել այստեղ, որպէս զի առիթ չտալ շփոթութեանց։

Ա. Վախթական Սմբատեան, որից ծնուած է Հասան, որի մասին գրած է Ս. Օրբել. (Բ. հատ. եր. 79-81) թէ սիւնեաց Գրիգոր թագաւորն և իւր եղբայր Սմբատն անզաւակ էին. «բայց միայն մի դուստր ունէր Գրիգոր (թագաւորն) Կատայ անուն . . . . բայց Գրիգոր որ իշխէր Բաղաց. ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի

Հասան անուն 'ի Գեռաքարեցեացն և ետ զ դուստր իւր Կատայն նմա 'ի կնութեան և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ, և ինքն և եղբայր իւր Սմբատ . . մեռանի 615 թուին (Հայոց)։ Մինչ զբերդն կամէին առնուլ (Տաճիկքն) Հասան կացոց բերդապահս և ինքն առեալ զկին իւր և զընտանիս 'ի գիշերի ել 'ի բերդէն և անց գնաց 'ի գաւառ իւր 'ի տուն 'ի Խաչէն»։ Հասան թագաւորից ծնուի է Ղարա-Դրիգորն, որի կինն լինուի է Դօփ դուստր իշխանաց իշխանի Սարգսին, սոցանից ծնուի է Քաջն-Հասան, որի ամուսինն է Մանքան դուստր Քրդին, սոցանից ծնուի է Դրիգորն, որի կինն է Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի դուստր Ասֆան։ Դրիգորից ծնուած է Վահրամ իշխանն։ Այս ցեղին է վերաբերում Վերին-Խաչէնն, Հանդաբերդն, Ծարն իւր վանքերով և Խաթրայ վանքն։

Բ. Հասան, որից ծնուում է Վախթանկ Սակառն [1]). Վախթանկ Սակառնի ամուսինն է Խորիշահ (քոյր է սա Սպասպալար Զաքարէի և Իւանէի), որի սոցա Զալալ-Դօլայ-Հասան, որի ամուսինն էր Մամքան թոռն Բաղուց թագաւորին, սոցա որդին Աթաբակ ևն։ Այս ցեղին է պատկանում Վաղահասի եպիսկոպոսանոցն, Գանձասարայ և Սուրբ Յակովբայ և Վաճառի վանքերն և հանգստարաններն և Ականայ Խոխանայ, Նատրայ, Կաչաղակայ և Անանուն բերդերն։

Գ, Վախթանկ թագաւորազն, որի որդին է Հասան, որի կենակիցն էր Մամա դուստր Կիւրիկէ թագաւորին (սոքա այր և կին կրօնաւոր եղան Դատի վանքում), սոցանից ծնուում է Վախթանկ, որի ամուսինն էր Արզուխաթունն-Քուրդ իշխանաց իշխանի դուստրն, և քոյրն Դաւիթ և Սադուն իշխանների (Կիր, եր, 125)։ Այս ցեղին է պատկանում Դատի կամ Խոթա վանքն, Հաթերք-դղեակն և աւանն. Հաւքախաղացն և Հակառակաբերդն։ Գերդաստանիս մասին գրում է Գոշ-Մխիթարն (եր. 68-73) «բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն (Դատաստանագիրք գրելն) եղև ի թուականութեանս Հայոց ՈԼԳ, . . յայսմ անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջուց, ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ և որդւոյ նորա Վախտանգայ 'ի դղեկին, որ անուանի Հայթերք»։

28) Աստղաբերի մատենս մէջ ամփոփուած է թագուհի անուն նահատակուհու մարմինն, որ Աղուանից երկրի Ուտի գաւառի բնիկ Բագնաց գիւղից էր և իշխանական ցեղից։ Նահատակուած է Հոնաց կամ Ռասմոսոքեան զօրաց Ագիստրոսեան գնդի գնատպետ Թէոփիլոս իշխանի հրամանաւ (Մով. Կաղ, եր. 73-77) նաև (եր. 160-164)։

1) Կոչուում է և Տանկիկ (տես Կիր. եր. 158)։

29) Հաւքախաղաց բերդս չինած է Աղուանից Ատրներսեհ իշխանի որդի Գրիգոր իշխանն (Մով. Կաղ. եր. 273)։ Իսկ թէ ով չինած է Հաթերք-դղեակը և Հակառակաբերդը-անյայտ է մեզ։ Միայն յայտնի է որ թագաւորներն չափազանց մարդ կոտորած են Հաւքախաղացը գրաւելու ժամանակ (Կիր. եր. 157-158)։

30) Կանխաւ միացած է եղել Խաչէն գաւառի հետ Զրարերդ գաւառիս այն մասն, որ ընկած է Թարթառ գետի, Խաչէն Ձգետակի և դաշտաբերանի մէջ։ Բաժանումն տեղի ունեցած է մելիքութեան ժամանակ։ Մայրաքաղաքի հանգստարանի մատրան արձանագրութիւնից երևում է, որ փրկչ. 1260 թուին իշխում էր Զալալ-Դօլի թոռն Ուքան իշխանն. (Տես Առաջաձոր գիւղի Անապ. արձանագ. մէջ)։

31) Թէ որից և երբ չինուած է քաղաքս չունինք հաւաստի տեղեկութիւն։ Միայն գիտենք որ մի ժամանակ եպիսկոպոսանիստ աթոռ եղած է։

32) Խաղիրներն պաշարում են Պարտաւը, ամեն ոք աճապարում է փախչել և պատսպարուիլ Արցախեան լեռներում։ Աղուանից Վիրոյ Կաթուղիկոսն ևս փախչելով տպաստանում է քարայրիս, որը գուցէ չինած լինին այն ժամանակ և որը Կողթ ագարակ է անուանում Մով. Կաղկանդուացին (եր. 104-129)։ Խեղճ կաթուղիկոսն այստեղ ևս նեղուելով խուզարկու թշնամիներից, աճապարանօք փախչում է Զարաբերդ ամրոցն Թարթառի ձորով։

33) Եղիշ-առաքեալի գլուխը գողանալով բերած և թաղած էին այստեղ Վաչական Գ. Թագաւորի ժամանակ, վասն որոյ կոչում էր Գլխոյ վանքն. «Ասպա հրաման տայր յուղարկել զնա . . . ի վերնակողմ գաւառն Մեծ-Կուէնից 'ի բարձրավանդակ լեառն, 'ի տեղի մենաստանի նորա ի Գլխոյ վանս» Մով. Կաղ. եր. 169 տես և 186)։ Բայց թէ երբ Հիւրեկ կամ Հուռեկ փոխուած է վանքիս անունն անյայտ է։

34) Այս գիւղն առանձնապէս սեպհական էր Աղուանից թագաւորներին իբրև ամարանոց։ Վաչական Գ. յատկապէս չինել տուած է այս փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցին յանուն Պանդալեոնի, որի մէջ պահուում էր և դնուած մասունքներն (Մով. Կաղ. եր. 49 և 62)։

35) Վաչական Գ-ի թագուհու անունն Շուշանիկ էր (Մով. Կաղ. եր. 46), որդու անունն Պանդալիոն (եր. 47) և աղջկայ անունն Խնչիկ (եր. 62)։ «Եւ դուստր մի Խնչիկ անուն տղայ հասակաւ յոյժ սիրելի արքայի, (Վաչականայ), որոյ անուամբ չինեալ էր Դաստակերտ մի՝ տայ նմա մասն մի 'ի սուրբ Նշխարացն, և 'ի նմին Դաստակերտի մեծապէս կատարի յիշատակ սրբոյն (Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի) պատուով» (Մով. Կաղ. եր. 62)։

36) Աւանդութեամբ ասում են որ վանքս հիմնարկուած է նոյն բարեպաշտ Վաչական Գ. Թագաւորից։ Մենաստանս, որ նախ կոչուած է Ներսմերհայ (տպ. ի Փարիզ Ներս-Միհրայ) ուխտ, յետոյ կոչուեցաւ Ջրվէժիկ։ Բայց առաքեալիս սուրբ մարմինը որ նախ ամփոփած էին Հիւրեկայ (Մով. Կաղ. եր. 9-10 Ուռհկան) վանքում, Վանքս շինուելուց յետոյ ապա փոխադրում են այստեղ, որ այժմ կոչուում է Եղիշառաքեալ։

37) Այս ամենաբարեպաշտ Թագաւորիս մասին գրուած է (Ս. Օրբել. Ա. հատ. եր. 128) «Ապա մեռան ՚ի Բարկուշատ Թագաւորքն Վաչական և Աբլ-Աբաս (փնտայ Վաչական Թագաւորիս)»։ Երևի թէ մեռնելուց յետոյ բերած և այստեղ ամփոփած են նոյն Թագաւորի մարմինը։

38) Լճակս առաջ եղած չէ, այլ գոյացած է 1139-ին. «՚ի ՇՀԸ. Թուականին եղև չարժ սաստիկ և կործանուեցաւ քաղաքն Գանձակ . . . . փլաւ և լեռան Ալհարակ ի չարժմանէն և արգել զձորակն որ անցաներ ընդ մէջ նորա, և եղև ծովակ, որ է մինչև ցայսօր, լինեն ՚ի նմա ձկունք աղնիւ» (Կեր· եր· 65)։

39) 5000 ոտքից պակաս չէ գրեթէ սարիս բարձրութիւնն որի գագաթին վերա եղած մատրան տեղում շինուած է եղել մեծ վանք։ Վանքումս գրած է Հայոց Ռճէ-իր Գանձակի Համամինա գուղացի Ղազար քահանան այն աւետարանը, որ այժմ կայ ձալէթի ՚վանքում (տես Աղ, եր. և գրացիք եր. 251)։

40) Առաքել պատ. (եր. 9) Մեծ-Շահ-Աբասի օրով Աղուանից երկրից Ասպահան գաղթած ժողովրդոց չարքում դնելով գրած է «գնացին Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն յՈսկանապատ գեղջէ»։

41) Արդէն իմացանք որ այստեղ կան պղնձահանք և երկաթահանք, որք պատկանում էին Գարդման գաւառիս իշխաններին։ Աւանդաբար ասում են թէ Սուրբ Մեսրոպ պղնձահանքի ձորումս պատահած է Գարդմանայ Խուրս իշխանին և աղանդաւորներին։ Աւանդութիւնս արդարացնում է Խորենացին (գիրք Գ· գլ· կ·) գրելով. «ինքն (Սուրբն Մեսրոպ) գառնայ զԳարդմանաց ձորովն, զի և ի նմա լուաւ լինել յընկերաց նոցին աղանդոյն։ Զորս գտեալ, ածէ և զնոսա ՚ի դիտութիւն ճշմարտութեան հանդերձ վերստին ուղղութեամբ իշխանին Գարդմանայ, որում անուն էր Խուրս։

42) Ինչպէս երևում է Գօչ-Մխիթար իւր դատաստանագրքի նախաղրութիւնը (եր. 69-74) սկսած է վանքումս և վերջացրած Սուրբ Հռիփսիմէի վանքում (վերջին վանուցս մասին տես Փառիսոս գաւա-

ռի Բարսում գիւղի նկարագրութեանց մէջ)։ «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև ՚ի թուականութեանս Հայոց ՈԼԹ..... յայլխարհիս Սառանայ ՚ի Նահանգիս որ կոչի Մայրաքաղաքիս Գանձակ՝ յանապատս և յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ՚ի լեռնակողմն մենաստանի կոչեցելոյ Հոռոմաչէն ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսանացն յիշեցելոց»։

43) Աւանդութիւն. Հետաքրքրութեան և ուշադրութեան արժանի վիպասանութիւնն, որ կապուած է այս գուգանի հետ։ «Մի շատ հարուստ մարդ է լինում Գիչին Սավար գիւղիս իշխանը։ Եօթն գուգան է ունենում մեր Գիչին իւր տանից պտկուած (գոյացած). ամեն մի գուգան ունենում է մի գունով եղներ. առաջի գուգանի եղները բոլորն էլ սև են լինում. Բ. գուգանին՝ բոլորն էլ սպիտակ. Գ-ինն՝ կարմիր, Դ-ինն՝ մոխրագոյն, Ե-ինն՝ մոգ կարմիր, ևն.։ Մեր Գիչին ունենում է անհատապ ոչխար, տաւար, գոմէշ, այծ, եզնը, հերինջ, աչառ (արջառ)։ Իւր կալումն աշ ու ձախ չուռ է տուել 12 չոխտ եզնը և կամնը։ Ունագին են Գիչու ցորենի և գարու հորերը։ Գիչու կալի մեծութեամբ կալ [1]) եղած չէ, տան մեծութեամբ՝ տուն ապրանքի մեծութեամբ՝ ապրանք, հարստութեան մեծութեամբ՝ հարստութիւն։ Էս սարիս երի (վերևի) կողմում եղած է ամառ ժամանակներում Գիչու ապրանքը. սարի գլխից մինչև Գիչու կաթնատունն շարած է եղել թիւնկ (խեցեղէն խողովակ). սարի գլխին կթել են կովերը, ոչխարները և էշերը և կաթները լցած թիւնկերի մէջ և էշերը հաւաքուած են բոլոր կաթները էս տեղ իւր կաթնատունն։ Գիչին ունեցած է 12 տղայ. սրանցից ամեն մէկը մին բանի պահապան է եղել. օրինակ մին ոչխարի հօտին վերայ, մին տաւարի նախրներին, մին՝ գոմէշների, մին՝ ձիերի, ևն.։ Էնից համարի թա Գիչու տարեկան ծախած ոչխարի, բրդի, գոմշի, եզան, մսացուքի, ձիու փողը կէս մլեօնի (միլեօնի) է հասել։ Գիչին մի անգամ գնում է Գեանջա՝ տան համար հագուստեղէն առնելու, խանութպաններն աղքատ համարելով ծաղրում են։ Գիչին բարկանալով առնում է (գնել) մի խանութում գտնուած ամբողջ ապրանքը և տալիս է փողերը և զարմացնում ամբողջ քաղաքը։ Շահ-Աբասը լսելով Գիչու անունը՝ ղոնաղ է գալիս, մի շաբաթ մնում Գիչու տանն, ամեն օր ուտում. խմում իւր ղօրքերով միասին. օրական 100 ոչխար և 25 հերինջ են մորթում ամենը կերակրելու համար. դու տես թէ հաց որչափ գնացած կլինի։ Շահ-Աբաս այս սարերը շահական ֆերմանով պարգևում է Գիչուն և շնորհակալութիւն յայտնելով հեռանում։

---

[1]) Արգարև չափազանց մեծ է Գիչու կալն և բակն.

44) Քարայրիս [1]) մասին գրած է Կերակոս (եր. 103 և 105) «Բնաջինջ եղաք ի թագաւորաց և յիշխանաց. կաթուղիկոսունքն Աղուանից այսր անդր յածելով, վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ: Եւ եղև նոցա գալ ի քարայր մի 'ի սահմանս բերդին՝ որ կոչի Ջարեք և անդ դադարիլ և անդուստ հովուել զհօտ իւրեանց»: «Եւ կալաւ զաթոռն Աղուանից տէր Յովհաննէս զամս բազումս: Սա հաստատեաց զաթոռ իւր 'ի սահմանս Ջարեքին ի քարի անդ՝ զոր ասացաք վերագոյն»:

45) Ոչ մի գաւառ զարդարուած չէ այնքան քարեայ խաչարձաններով, որքան Գարդման գաւառս և նոյն իսկ Գարդման աւանս: Գեղեցիկ խաչարձաններով զարդարուած են աւանիս գերեզմանները. թող այն, որ բաւականին ևս կոտրտած և ջարդած են մահմետականք:

46) Սարիս անունը յիշում է Ուխտանէս եպիսկոպոսն (եր. 96) «Բայց է բլուր մի յաչխարհին Ուտիացւոց՝ մերձ առ ստորոտով լերինն, որ կոչի Ուրաթիւն, որ դեռ ևս կոչի բլուրն այն Բարսղաբլուր» (այժմ կոչուում է բլուրս Դդում (Ղարաղ-Թափէ):

Երբ երաշտ են լինում տարիները, բարձրանում են սարիս գադաթին սրբասէր քահանայք, վեր առնում լճացեալ (գերեզմանի մօտից) ջրից մի մի փոքր քար և բերում գիւղերն, անում պատարագ. թափորով մի մաքուր և ջրալի ամանի մէջ ձգում քարը և ապա գալիս է անձրև:

Ուանդուբիւն. «Սուրբ ճհնաւոր եղած է Ուրուբիւնս, որ ձմեռներն բնակած է բարձր սարիս գլխին, իսկ ամառներն իջած՝ Կուր գետի եզերքն. որպէս զի իւր տնձն ճնշէ ամրան տաքութեամբ, մոծակներով, ճանճերով և բոռով, իսկ ձմրան՝ սարիս գագաթի անտանելի սառնամանիքներով»:

47) Այս բերդն պատկանում էր Արցախի Գարդման գաւառի իշխաններին՝ սկսեալ Ուանչահիկ կամ Եուանշահիկ իշխանների օրից վեր: Մեր կարծիքով այս իսկ է Գարդման բերդն. իսկ սորա մօտինն՝ Մլզնաբերդն, որի մէջ վաղուց եղած է վանք. իսկ այժմ նորաշէն և փոքր եկեղեցին, որի մասին գրած ենք արդէն: Մեր համեստ կարծիքով. կրկնում ենք, այս է Գարդման բերդն, որի մասին գրած է Յովհան. կաթողիկոսն (եր. 162) (Գնայ Բուղա ի գաւառն Գարդմանայ և պատնէշ և պաշարումն չուրջ զԳարդման բերդիւ եղեալ ըմբռնէ անտի և զիշխանն Գարդմանայ զԿարիճն»: Բերդիս խիստ մօտ է և Հարցհանգիստ գիւղն, որի հարաւային մօտից բարձրացած սարի վերայ ամփոփուած են գաւառիս կռապաշտ իշխանաց մարմինները, թերևս այս պատճառաւ կոչուած է Հարց-Հանգիստ-Հարցհան-

[1]) Քարահերձ է անուանում Կիրակ. (եր. 95)

գիստ: Վարդան պատմիչն ևս գրած է. «Եւ յետ երեց ամաց անցելոց (սկզ. 1117-ին) դարձեալ եկն Տաթարն և էառ զԴանձակ չահաստան.... զՍագամ (Ջակամ) զՔարահերձ, զՏէրևին (Տէրունական և զմեծ դղեկն թագաւորանիստ զԴարդման, զերգեւանք, զՄածնաբերդ ...(տպ. Երուս. 1870):

Կիւրիկեան թագաւորներն հետզհետէ իւրացնում են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի և Ջաւէ գաւառները և տիրում սոցա բոլոր բերդերին, ինչպէս գրած ենք կանխաւ: Որ այլ է Մածնաբերդն (այժմ Մլզնաբերդ) և այլ Գարդման բերդն, որ երկու ամրոցներս գտնուում էին, Գարդման գաւառում, որ Մածնաբերդին իշխում էր Աղսաբեթան և Գարդման բերդին Վահրամ իշխանն, որոշակի յայտնում է Կիրակոս (եր, 89—80) «Աղսաբեթան, որ եղև ժառանգակալ Մածնաբերդոյ..... Գարդմանայ և Երգեվտնիցն և Տէրունականին և Տաւուշոյ և այլ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանի»: Գաւառներս բերդերով միասին գրաւում են Վրացիք և Վրացիների ձեռքից՝ Պարսիկներն և սոցանից՝ Զաքարէ և Սարգիս իշխաններն. «Զաքարէ... և եղբայր իւր Սարգիս.... առին բազում գաւառս 'ի Պարսից և զբերդս ամուրս զԳարդման, զՔարահերձ (միևնոյն քարտյրն է, որի մէջ նստում էին կաթուղիկոսներն, որը այստեղ անուանում է Քարահերձ) և զերգեվանք, զՏաւուշ, զԿածարեթ և զՏէրունականն, ևն.:»—(Կիր. եր. 95): Այժմ պարզ է որ Մածնաբերդն մնացած է նոյն Աղսաբեթանի ձեռքում, իսկ Գարդմանս՝ Վահրամին:

Անծանօթ են գաւառիս Ա. Ֆ. Դ, բերդերի բուն անուններն և անցեալն:

48) Թէ ով չէնած է քաղաքս և որ թուին—անյայտ է մեզ. միայն յայտնի է որ քաղաքումս նստում էին հայ իշխաններ: Ժ. դարի վերջերում մահմեդական բարեկամութիւն և սերտ սէր հաստատուած էր Աղուանից և մեծ—Սիւնեաց իշխանների և թագաւորների մէջ:

Մեծ-Սիւնեաց Սմբատ Բ. թագաւորի կինն Շահանդուխտ Աղուանից Սևադայ իշխանի դուստրն էր: Սևադայ իշխանիս որդի Սենեքերիմն եղաւ թագաւոր Մեծ-Սիւնեաց: Այս պատճ. Մեծ-Սիւնեաց Սենեքերիմ թագաւորն պայծառացնում է քաղաքս եկեղեց. և բերդով. և կոչուում թագաւոր Փառիսոսի. նոյնպէս և իւր որդի Գրիգորն..քանզի նոյն իսկ ժամանակներում բուն Աղուանից յարութիւն տուած թագաւորութիւնն հաստատուած էր Դարբանդում: Սեմիքերիմ թագաւորս նահատակուում է Բաղաբերդում: Գրիգոր թագաւորից յետոյ Փառիսոս քաղաքս մնում է հայ իշխանաց ձեռքում, ինչպէս տեսանք Փառիսոսի խաչերի արձանագրութեանց մէջ: «Ի՛ շհը. Թվին փոխի յոչխարհէս մեծ վար դապետն Սարգիս, որ է 'ի «Փառիսոյ» (Ս. Անեցի եր. 128). Քաղաքումս ծնուած էր նաև Յովհաննէս սարկաւագ վարդապետն:

49) Կիրակոս Դանձակեցին (եր. 105—106) Փառիսոս և Քաւս կամ Քուստի գաւառներիս վերին մասերը միացնելով՝ անուանում է Միափոր գաւառ (այս է լեռների մէջ ընկած և լայնագոգ ձև ստացած գաւառ). իսկ Ղարամուրատիս վանքը՝ Խտմշի։ Քարահերձում բնակող Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսն՝ նեղուելով այլազգիներից՝ դիմում է Ջաքարէ և Իւանէ իշխաններին. «Եւ նոքա (նոյն իշխաններն). մեծաւ պատուով ընկալան, և բնակիցոյց ղնա Իւանէ ի Գաւառն Միափոր ի վանքն, որ կոչի Խամշի։ Սա(Յովհանն. կաթուղ.) սկսաւ չինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի (որ է այժմետն վանքն) և մինչև աւարտեալ էր, խափանումն եղև. զի եկն Սուլթանն Խորասանայ՝ Ջալալատդին կոչեցեալ և եհար զթագաւորութիւնն Վրաց» Այնուհետև վանքումս էին բնակում Աղուանից կաթուղիկոսներն. (կիր. եր. 171) որք յետոյ լրացնում են վանքիս պակասնորդը։

Երկու Ղարա-Մուրատ գիւղերիս հայ բնակիչներն տեղափոխուած են Ղուլաւերի կողմերն։

50) Աւերակ գիւղիցս էր Մելքիսեթ եպիսկոպոսն, որ գաղթող ժողովրդի հետ գնաց Ասպահան, որի մասին դրում է Առաք. պատ. եր. 9. «Մելքիսէթ եպիսկոպոսն ի Վերին—Ջակամայ ի Մելիքզատա դեղջէ»։ Ահա այսպէս միևնոյն Փառիսոս գաւառի վերնամասն յաճախակի փոփոխութեանց ենթարկուելով կոչուում է Միափոր, ապա Վերին—Ջակամ և ապա Շամշադնի գաւառ։

51) Վանքիս մասին գրում է Կիրակոս (եր. 142) որ աշակերտ եղած էր Վանտկան վարդապետին, թէ մի անգամ չինած էր Վանական վարդապետն մի վանք այժմեան վանքի տեղում, որ աւերուած էր Ջալտլադին Սուլթանից։ Սպա գրում է 208—209 երեսում. «առ Տէր փոխեցաւ (Վանական)... ի Վանսն, զոր իւր չինեալ էր, որ կոչի Խորանաշատ վասն յոլով եկեղեցեացն՝ որ ի նմա՝ ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երգեվանից Բերդին և ի թիկանց Գարդմանայ. առնէր չինուածս երևելիս. գաւիթ չինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ չինեալ էր. և զբան վարդապետութեան ուսուցանէր այնոցիկ, որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց . . . . . և տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն յարևելից կուսէ, մօտ ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանք աղքատացն, զի ինքն (Վանական) այսպէս հրամայեաց. . . . . Եւ այս եղև յշ. (1251) թուին»։

52) Գրաւոր ոչինչ տեղեկութիւն չկայ բերդիս շինողի մասին, բայց աւանդաբար ոմանք ասում են թէ Սենեքերիմ թագաւորն չինել տուած է բերդս. ոմանք՝ թէ միայն նորոգած է։

53) Անյայտ է և բերդիս չինել տուողի անունն և տարեթիւն։

Ջարեքայ (¹) բերդ է անուանում կիր. (եր. 103—105և 142) ամրոցս, որ կայ ուղիղ Քարահերձին հուսիսային կամ հիւսիս-արևմտեան հանդէպ, Ջամքոր գետակի ձախ ափում։ Ինչպէս Փառիսոս բերդն, նմանապէս և այս պատկանում էր գաւառիս հայ իշխաններին, բայց ազատ մնացած չէր Թաթարների ճանկից, ինչպէս Ջարէք ամրոցս նոյնպէս և Գետաբակ աւանն, որը բերդ է անուանում Կիրակոս (եր.31)։

Հին—Գետաբակի արևելեան հանդէպ կայ սուրբ Սարգիս անուն մի մատուռ (տես նոյն աւանի նկարագրութեան շարքում), որի մէջ, ասում են, բնակած է Յովհան—Մայրագամեցի մականուանեալ վարդապետն։ Հաստատում է այս Կիրակոս (եր. 31) գրելով. «նա (Եզը կաթ.) ոչ տարաւ ընդ իւր արս իմաստունս, մանաւանդ զՅոհան վարդապետ Մայրավանեցի, որ յոյժ տեղեակ էր աստուածային գրոց.... իսկ նա (Եզր) փոխանակ զղջալոյ՝ Հալածեաց զսուրբն (Յոհան) առ նարգանօք Մայրագոմեցի կոչելով . . . . Եւ երթեալ Յոհաննու ընտրեաց իւր տեղի լռութեան 'ի կողմանս Գետաբակս Բերդոյ։»

54) Վահրամ իշխանիս մասին արդէն տեղեկութիւն տուած ենք 7-րդ Ծանօթ. մէջ։

55) Անծանօթ է մեզ բերդիս անցեալն և անունն. կայ և մի խիստ հին և աւերակ բերդանման շինութիւն Գատի գեղի արևմտեան կողմում և եկեղեցաձորի արևելեան կողմում՝ Օհանի բերդ անուն (Աղան—ղալա), որի շրջապատն գիւղեր են թրքաբնակ։ Վարդ. բարձրբերդցի (եր. 134—135) գրում է. «Ի սոյն աւուրս կին մի՝ Մամ անուն՝ գայ 'ի Պարսից երեք որդովք ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր փառաւոր իշխանն։ Եւ տան որդիքն պատանդ զմայրն և առնուն զՀօթս զբերդն Ջամիրամայ, և անտի ընտանեցեալ ընդ Ալաղիզ ամիրայն Գանձակայ՝ սպանին զնա և առին զԳանձակ . . . և սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպէ որդի Գրիգորոյ, ըմբռնէ զնա 'ի կապանս զկնի մահուան հօրն և առնու ի նմանէ զՇաշուաշ և զՀօթս»։ Փառիսոս Գաւառիս բերդերն են Փառիսոս, Գետաբակ, Ջարեք կամ Մամռուտ, Վահրամ իշխանի բերդ, Օհան-բերդ և Աղջկայ բերդն, ընդ ամենն վեց բերդ։ Գոնէ մենք կարծում ենք, որ Ղզղալա կոչուածն է Ջամիրամայ (²) բերդն, Օհանինն՝ Հօթն և Վահրամինն՝ (Ղալաբոյուն) Շաշուաշն։

56) Քարայրիս մասին գրում է Կիրակոս (եր. 142—148) «մեծ վարդապետն Վանական, իւրովք աշխատութեամբ փորեալ էր իւր

---

¹) Առաքել վարդապետ (եր. 193) գրում է «Դաւիթ եպիսկոպոսն, որ էր 'ի Շամքոռ ձորէն և 'ի ցեղէ իշխողաց, զոր Ղարամանենց կոչեն.... 'ի ձոր Շամքոռ ... շինեաց անապատ, զոր կոչեն Ջարեքի անապատ»։

²) Շմևղ է կոչում բերդս Վարդան պատմիչն (եր. 18)։

քարայրս 'ի կատարս բարձրագոյն քարի միոջ, որ կայ հանդէպ գեղջըն որ կոչի Ոլորուտն, 'ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. և չինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ և անդ դադարէր գաղթութեամբ»: Ապա պատմում է Կիրակոս թէ քարայրից գերի բռնուեցաւ թաթարներից Վանական վարդապետն և ինքն, որ աշակերտ էր նոյն Վանականին. . . . . :

57) Գիւղս նշանաւոր մարդիկներ տուած է թէ՛ հայ եկեղեցականութեան և թէ՛ գրականութեան: Տաւուշեցի էր Յովհաննէս վարդապետն, որ եղած է վարժապետ Գօշ-Մխիթարի և քարոզիչ: (Կիր. եր.121). Գիւղից էր և Վանական վարդապետն, որի իսկական անունն է Յովհաննէս (Ցառաջ. Գօշ. դատ. եր· 85). Գիւղից է և Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանցն, որ նշանաւոր է իւր գրականութեամբ:

58) Վանքից մասին գրած է Կիրակոս (եր. 89—90) Վասակ իշխանն Բագրատունի, «որ չինեաց զեկեղեցին հրաշագան 'ի վանքն' որ Անապատ կոչի՝ հուպ 'ի Նոր բերդն առաջնորդութեամբ և ձեռնտուութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննիսի Տուեցոյ քաղաքին Շամքորոյ և Գարդմանայ և Երզեվանիցն և Տէրունականին և Տաւշոյ . . . Եւ աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն սուրբ Աստուածածնի՝ 'ի ոձթ. թուականին Հայնոց»: Երևի թէ Վարագ անունը ստացած է վանքս Կենաց փայտի այստեղ բերուելուց յետոյ:

59) Վանքիս մասին գրում է Կիրակոս (եր. 122—126) թէ եղաւ սաստիկ շարժ, կործանեցաւ Հին—Գետիկ վանքն, որ կար Կայենի գաւառում Ողտև գետի աջ կողմի վերայ. Այնուհետև Գօշ—Մխիթարն սկսում է շինել Նոր—Գետիկ վանքը (որ է այժմեանն): Տանձուտի ձորում: Ա. Վանքն օծուում է յանուն Ս. Լուսաւորչի. Բ. յանուն Ս. Կարապետի: Ապա գրում է. «Ցայսմ ամի (ոխէ.) եղև աւարտ հռչակաւոր և խնդրատես եկեղեցւոյն (Նոր) Դետկայ, զոր չինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօք ձեռնտուութեամբ Վաղթանկայ խաչենեցւոյ տեառն Հաթերքոյ և եղբարց իւրոց Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյդանայ և Վասակայ և այլոց իշխանաց բարեպաշտաց որդոց Քրթին Դաւթի և Սադունին, նաև քոյր նոցա Ըրզու խաթուն (1) կին Վաղթանկա Հաթերքեցւոյ. սա բազում ինչ օժանդակ եղև, (Արզու խաթուն) արար և վարագոյր գեղեցիկ դատերօք իւրովք ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց ներկեալ պէսպէս և դանազան, դործ քանդակակերպ և ներկեալ պատկերօք, ճշդրդագոյն հանուածովք տնօրինականօք Փրկչին

1) Միևնոյն օրհնեալ տիկինն է, դուստր Քրթին, քոյր Դաւիթ և Սադուն իշխաններին և շինող Դատի վանուց հրաշագան Գաւթին:

և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողն . . . . . արար ծածկոյթ՝ այլ և այլոց եկեղեցեաց, Հաղբատայ և Մակարայ վանից և Դատի վանայ . . . . . և օծեալ կնքեցաւ եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնին»:

60) Ինչպէս տեսանք 51-րդ ծանօթութեան մէջ Երգեվանք բերդս գտնուում է խորանաշատ վանքի արևմտեան հանդէպ: Երգեվանք և Տաւուշ և Կածաբեթ (դ. Բերդ Դրբըկեան—որ է Տէրունական) բերդերս պատկանում էին տեղական իշխաններին, ոակայն ենթարկուելով փոփոխութեանց հետզհետէ անցան ձեռքից ձեռք այլ և այլ տիրապետողներին, ինչպէս տեսանք բոլոր քաղաքների և բերդերի անցքերից: Տաւուշ բերդերիս մասին գրում է Անեցին (եր. 133) «Ի . . ղող . . . ամի եկն Զօլի ամիրապետն և պաշարեաց զՏայուշ զաւուրս խ. և էառ զնա հանելով զթագաւորն Աբաս»:

61) Ամրոցս խիստ մօտ է Վարագայ մենաստանին, որի հիւսիսային հանդէպ արձանացած է բերդաքարս, որի մասին գրում է Կիրակոս (եր. 89): «Ընդ սա (ընդ Աղասարթան) խոբէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նոր բերդին զի էր և նա յազգէ Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանի, որ չինեաց զեկեղեցին (վարագ). . . հուպ ի Նոր բերդն» (որ է ցից քարի բերդն):

62) Անծանօթ են մեզ քարայրիս, ամրոցիս և ճգնաւորիս պատմութիւնն, ժամանակն, անուններն և գործերն:

63) Ընդհանուր ընթերցողն տեսաւ որ անյայտ է սուրբ Աստուածածնին մեծ վանք չինել տուողի անունն, միայն յայտնի է որ չինուած է Հայոց չի. և փրկչ. 1071 թուին: Այստեղ ամփոփուած է Խաչատուր Վարդապետ Տարոնեցին, որ մի ժամանակ վանահայր եղած է վանքիս, որի մէջ իսկ յօրինած է Խորհուրդ խորի հրաշալի երգը, որը նախ երգեց Լոռի քաղաքի Ջաքարէ Սպասալարի ժողովում և ապա վանքումս: Վանքումս ամփոփուած են Անի քաղաքում թագաւորող Բագրատունի թագաւորներից Սմբատ և Գագիկ թագաւորների մարմիններն: Սեղանատան մասին գրած է Կիրակոս (եր. 130) «տէր Յովհաննէս Արմանեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ . . . . չինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի . . . . Խաչատուր վարդապետն, և եղբայր իւր Բարսեղն (ոորա են մի պատանաքարի տակ հանդիստ և գրկախառնուած քնացողներն) չինեաց եկեղեցի մի մի երեք խորանի հանդէպ վանիցն գմբեթաւոր յանուն սրբոյ Գէորգայ» Վանքերիս արևելեան կողմումն է սուրբ Գէորգ, որ է երեք մատուռներից մին:

64) Նախ հարկ է խոստովանել որ տկարանում է այցելուի գրիչն նկարագրել ճշտիւ այն ամեն քանդակները, նախշերը, աստիճանների շրթունքների փորուածքները՝ ամեհի առիւծը, որ

իւր ճանկերի մէջ ջախջախում է կատաղի ցուլը և վերջապէս տկարանում է գրիչն ներկայացնել սիրելի ընթերցողաց գ ե ղ ա ր ու ե ս տ ի այն ամեն սքանչելի նրբագործութիւնները, որք զրոշմուած են տաճարներիս քարերին վերայ։

Երկրորդ նոր վանքս չինուած է զանազան անձանց մասնաւորնուերով։

Երրորդ անյայտ է հին տաճարիս չինել տուողի անունն և չինուելեան ժամանակն։

Չորրորդ յայտնի է որ վանքս կրում է ս. Ա ս տ ու ա ծ ի ն անունը, թէ երբ փոխուած է Մակարայ վանք կամ ինչ դիպուածից կամ պարագայից ստացած է վերջին անունս, անյայտ է։

65) Որոշակի յայտնի չէ վանքիս շինողի անունն և շինուելեանն իսկական տարեթիւն, վասնորոյ ոչ ինչ չունինք ասելու վանքիս մասին։

66) Դաւարղին և Գագ բերդերի մասին գրած է Վարդ. Բարձրբերդցի (եր. 190). «Իսկ Մոլար Նուիննն . . . նախ առնու զՉամքոր հնարիւք . . . . . զՑաւուչ, զԿածարեթ, զՏէրունականն . . . զնորբերդն, որ էր Վասակայ Թագաւորին և զԴաւարղին անմատչելի ամրոցն և զԳագ անուանի բերդ և գաւառ ի Գ ա կ ղ ա յ Թ ա գ ա ւ ո ր է շ ի ն ե ա լ, ուր կայր հռչակաւոր Ուխտն յերևանի աշխարհի խաչ և եկեղեցի կազմեալ և օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպայ վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ ի Գլուխս և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած և զայլ ամրոցս և զայրն վիմփոր»։ Իսկ 160—161 եր. Գրած է նոյն Վար. բարձ. «Ի չհթ. Թուին . . . . . յորում ժամանակի լցաւ դաշտն Գագայ անթիւ և անհամար հեծելովք յամենայն ազգաց յանօրինաց հաւաքեալ որք կամեցան այրել զսուրբ խաչն, որ յանուն զօրավարին Սարգսի։ Եւ ի բավկսէթենէն Տեառն խելացնորեալ կոտորէին զմիմեանս»։

67) Մեր կարծիքը հիմնած ենք հետևեալ կէտերի վերայ։

Նախ հնարքով չինուած ա մ ր ո ց լինելու էր Հնարակերտն։

Երկրորդ Սիսական առանի և Շարայեան Գուշարայի միջև ս ա հ մ ա ն լինելու էր Հնարակերդն, որ հաստատուած էր Հայոց Վաղարշակ Թագաւորից (Խոր. բ. գիրք ը. գլ.).

Երրորդ Հնարակերտ ամրոցն լինելու էր Վ ր ա ց ի ա բ ն ա կ և ս ա հ մ ա ն ա գ լ ու խ Հայոց և Վրաց։ Հայոց Աբրահամ Կաթուղիկոսն Է. դարու սկզբում իւր առ Կիւրիոն գրած նամակում Թուարկելով Վրաց եպիսկոպոսները և եպիսկոպոսանիստ քաղաքները, ի Թիւս որոց ասում է «Իստահակ եպիսկոպոս Հնարակերտի» (Ուխտ հատուած բ. եր. 86)։

Չորրորդ ակներև է որ Է. դարում քաղաք ամ տեղ չունէին Վրացիք Խրամի և Չորագետի աջ կողմում։

68) Ծարի բոլոր ամրոցներից նշանաւորն է Հանդաբերդն, որի մասին գրած է Ադուանեց պատմչի շարայարողն (եր, 273) «Ատրներսէհ չինէ զբերդն Հանդու և զապարանս իւր տանէ ի գիւղն, որ կոչի Վակունիք, ուր և բազանիքն են արքունականք . . . . . կոչի Վակունիք, ուր և բազանիքն են արքունականք . . . . . Լինին սորա (Ատրներսեհի) որդիք Գրիգոր և Ապու-Սէթ. Գրիգոր չինէ զՀաւախաղացին բերդն և յայն կողմն ձգէ զձեռն իւրոյ իշխանութեան. և Գրիգորի լինին որդիք հինգ, յորոց էրէց որդին Ապուլի սպանանի . . և միւս որդին Սահակ որ և սևագլա կոչեցաւ, տյր քաջ և յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ և յայլոզ, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ դաւառաց, այլ և աւագակապետաց Չորագերոյն բովանդակ եղև իշխան»։

Ծանօթութեանցս վերջում յայտնում ենք որ Սալիան գիւղաքաղաքի հիւսիսային հանդէպ Կուր գետի ձախ կողմում կայ մի աւերակ քաղաքատեղի Ղ ը ր խ-Ձ ր ա ղ անուն։ Աւերակիս ծաւալի մեծութիւնն կարծել է տալիս մեզ թէ այս եղած լինելու է Փայտակարան քաղաքն, որի հարաւային ստորոտով ի հնումն հոսած է Կուր գետն, բայց յետոյ փոխելով իւր ընթացքը հոսում է ալժմ Սալիանի մօտով։

ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ:

Արլահ գիւղ 267
Արլահասան (Կապտաւանքի) . 332
Արու-Մուսէ որդի Գագկայ . . 79
Արրահամ սպարապետ . . . 241
Ագուլեաց եկեղ. Շուշուայ . . 142
Աղոխ գիւղ 5, 87
Աթանաս վարդապ. Չարաբերդցի 38
Ալամանց գոմեր 93
Ալի որդի Ջենորին 91
Ալլահվուլի-Սոլթան Մէլիք Ջրաբերդին 122
Ալհարակ լճակ 255
Ալղուլի գիւղ Հարճլանքի. . . 403
Ախիջան որդի Ջալալ իշխանի . 67
Ախնջի օժանդակ Տաուշ գետակի. 10, 24
Աղահէճ կամ Հարճլանք գաւառ 25, 26, 402, 403
Աղ-բուլաղ գիւղ Դիզակի . . 70
Աղդան սար Շամքորի . . . 56
Ալեքսանդր Բ. կայսր Ռուսաց . 45
Աղեքսանդր եպիս. Խաչմաչ գիւղի 140
» Խահակեան . . 49
Աղթամարայ վանք . . . 145
Աղուանից երկիր 143
Աղուանոյ գետ . . . 2, 25
Աղուանք անուն պարիսպ . . 198
Աղուէ գաւառ . . . 22, 28
Աղութ-խաթուն և Շահդիշի . . 139
Աղչկայ բերդ կամ Ղզղալա գիւղ . 135
Աղստև գետ 10, 57
Ամարաս վանք . . . 27, 113
Ամարասայ գաւառ, տես Վարանդայ.
Ամիրխան 42
Անդամէջցի Թաւուրի որդի Սիրական 147
Անկնունք եղցի 183
Աշան գիւղ 121
Աշոտ և սևադայ մեծ իշխան Մեծ-Սիւնեաց 1
Աշուղի կամ Լալի գիւղ . . . 339
Ապարան Մէլիք-Ադամի. . . . 223
Առան Սիսական 1
Առ աջաձոր գիւղ 185
Առստամ-աղա Ափանասեանն 43, 50
Աստուար որդի Աջամի իշխանի . 67
Ավտուռ գիւղ 127
Արանռոտ գաւառ . . 13, 22, 27
Արծաթահանք սար . . . 215
Արկաթալու շէն 132
Արճէշ գիւղ 390
Արութիւնայ շէն 190
Արութիւնայ սար . . . 3, 9, 302
Արջաքար օժանդակ . . . 19
Արջի կոխեր 19
Արտաշիսի 140
Արցախ . . 1, 2, 3, 9, 15, 17, 21
Աւետարանոց աւան . . . 6, 94

Բ

Բազկանք կամ Պանծկանք գաւառ 23, 60, 85
Բախշիկ գիւղ 269
Բաղդասար մետրապօլիտ . 155, 176
Բամբակի լեռներ 10
Բելուկան կամ Բայաթ . . . 28
Բելուկան Հակարի գետի մօտ . 25
Բանաղուր գիւղ 64
Բանանց գետակ կամ Արութիւնայ գետակ 9, 19
Բանանց կամ Մեծ-Բանանց գիւղ 19, 55, 278
Բարակ կամ ինջա օժանդակ Կիլստանի. 9
Բարկիւշատ 68
Բարսում գիւղ 318
Բերդագիւղ կամ Ղալաչա . . 390
Բերդ գիւղ 329

Բերդաձոր կամ Բերդձոր գաւառ 1, 2, 5, 25, 399, 402
Բերդաքար Հաթերքի . . . 212
Բինեաթլու շէն 63
Բիլոր-բիւթի 19
Բլրլակ շէն 103
Բողրխան սար 4
Բողրխան վանք 109
Բրաջուր գիւղ 55, 277
Բօզլուխ գիւղ. 251
Բօրոմի աւերակ 35

Գ

Գագայ դաշտ 4
Գանձակ գետակ 9
Գանձակ-հին քաղաք . . . 9
Գանձակ-նոր քաղաք 23, 45, 54, 55, 140
Գանձայ կամ Ելիսաւէտապօլ, տես Նոր Գանձակ . . . .
Գառնակեր գիւղ . . . 10, 315
Գարգարացիք 21
Գարգար գետակ . . 6, 7, 23, 24
Գարգարացւոց կամ Արցախի դաշտ 4, 5, 17
Գարդման աւան 301
Գարդման գաւառ Արցախի 2, 3, 18, 24, 258
Գարդման վտակ օժանդ. Շամ. գետ. 9
Գեառնաքար շէն 171
Գեղամայ լեռնաշղթայ . . 9, 10, 24
Գետաշէն աւան . . 12, 55, 258
Գէօրգի Թագաւոր Վրաց . . 42
Գէորգ դ. կաթուղիկոս Հայոց . 45
Գինալ սար 9
Գիշի և իւր ամուսին Հռիփսիմէ . 300
Գոիչ կամ Գոտայ և կամ Գոչայ վանք 80, 82
Գրիգորեան ուսումնարան Սարուշէնի 102
Գրիգոր-աւագ քահանայ Թումանեանց 48
Գօշայ վանքեր . 13, 20, 349, 356

Դ

Դալի-Մահրասա-Աւագ վարդ. գերեզմանն 38
Դալի մահրասայի սենեակն 236, 237
Դահրազ գիւղ. 129
Դահրաւ գիւղ 155
Դամբարան Աստղարեանց . . 67
» Դողալ մէլիքաց. 75, 77
» Աւետարանոցի մէլիքաց 95, 98
Դամբարան Մէլիք-Փաշաեանց 106, 108
» Ջալալեան դոհմի 176, 179
» Կաթուղիկոսաց ոմանց 170, 171
» Հասանայ որդւոց 168, 169
» Դրիգոր իշխանի Դոփեանց 194, 296
Դամբարան Վախթանգեան իշխանաց և կաթուղիկոսաց ոմանց 204, 205
Դամբարան Մէլիք - Խոսրէվեանց 217, 236
» Վաչական գ. Թագաւորին Աղուանից. . . . 239
Դամբարան Իշխանացն Ծարայ 405, 408
» Թագաւորացն Բագրատունեանց 361
Դամբարան Մէլիք-Բէկլարեանց . 227
Դանիէլ-Բէկ Ջալալեանց . 150, 159
Դանիէլի ղաշ. 19
Դաշրուլաղ գիւղ . . . 20, 159
Դաստակիւլ կամ Դաստակերտ . 234
Դարպասներ կամ Ապարան Ջալալեանց 181
Դաւէ չիչակ աղբիւր . . . 118
Դիզակ գաւառ 2, 3, 14, 20, 23, 60, 143
Դիզափայտ լեռնաշղթայ . 6, 14, 23
Դիզափայտ սար . . . 3, 85
Դիլիջան գիւղ . . . 14, 356
Դոզ աւան 6, 7, 75
Դոնի շէն 8, 231
Դոստլու գիւղ 391
Դռնավարդ գիւղ 130
Դվեղ կամ Դովեղ գիւղ . . . 391

Դրազարակ անապատ . . . 41
Դովի որդիքն և թոռներն . . 206

Ե

Եանշաղ վտակ . . . 8, 24
Եարմջան գիւղ . . . 34, 121
Եգիպտոս 8
Ելենդորֆ 54
Ելենու որդի 49
Եղակեր գիւղ 48, 237
Եղիազար կաթուղիկոս Հայոց . 147
Եղիա վարդապետ Եղնասարի . 265
Եղիշեայ կոյս 115
Եմիշջան գիւղ 121
Եղիշ առաքեալի վանք . . . 234
Ենկիջա շէն 110
Եսայի աւետարանագիր . . 42
Եսայի Նկարիչ Վայոցձորեցի. . 139
Եսայի կաթուղիկոս Աղուանից 22, 23, 28
Եսայի ոմն 42
Երասխ գետ . 1, 14, 22, 25, 61
Երեմիա կաթուղիկոս Աղուանից 73, 144
Երեք մանկունք 232
Երկաթահանք Բանանց գիւղի. . 11
Երկաթահանք Բովերի . . . 20
Երկաթաջուր 11
Եսկար աղա 139
Երևան քաղաք 46
Երուսաղէմ . . . 38, 45, 49, 50
Եփրեմ կաթուղիկոս Հայոց . . 37

Զ

Զակամ գետակ . . . 57, 59
Զակամ-Ներքին . . 23, 57, 55, 60
Զակամ-Վերին . 5, 57, 308, 313
Զաւէ գաւառ կամ Ղազախ 2, 4, 11, 25, 361, 398
Զաքարէ և Իւանէ սպասալար . 19
Զաքարիա կաթուղիկոս Հայոց . 139
Զոհրապ աղա. 143
Զոհակ 41
Զուլկատարեան եղբարք . . 58

Է

Էջմիածնի վանք . . . 48, 51
Էրքաջ գիւղ 250
Էօրան ղալա 27

Ը

Ըխեցիք 71
Ըռմբի խոռ կամ Ըռմբասար սահման 2, 7, 8, 26
Ըստիսական կամ Ըռստակ գաւառ 2, 5, 24, 199, 213
Ըստծու (Աստուծոյ) ծով . 12, 255

Թ

Թագաւորաշէն կամուրջ . . 31
Թագաւորի աղբիւր . . . 79
Թագաւորի գերեզման . . . 79
Թագաւորի պալատ . . . 79
Թաթլու գիւղ 333
Թալա գիւղ 372
Թալիշ գիւղ 226
Թահմազ խան Պարսից . . . 66
Թաղասեռ կամ Թղասեռ գիւղ 69, 143
Թաղլար աւան . . . 4, 85
Թաղլարի կամ Ղուրու չայ գետակ 5
Թաղոտ 6, 73
Թառնագիւտի բերդակ . . . 28
Թարթառ կամ Տրտու գետ 7, 8, 14, 20
Թարսա.չայ գետակ . . 5, 10, 11
Թաւրիզ քաղաք 42
Թլղու շէն 167
Թթու ջուր 11
Թիլի-Արղումանի գերեզման . 38
Թիփլիզ կամ Տփխիս . . . 68
Թովմայ մեծոպեցի . . . 21
Թորոս փիլիսոփա 41
Թուումէ աւետարանագիր . . 40
Թրղին գետակ 8

Ժ

Ժամհարեան եղբարք . . 69, 137

Ի

Իմամ-զատէ 30
Իսրայէլ Մէլիք-Ադամեանի գերեզման 36
Իտելեցիք 71
Իւան Շահ 375

Լ

Լամբրոն դղեակ 39
Լաչին զայա ձոր 348
Լևոն Թագաւոր Հայոց . . . 39
Լղար էրեց 37
Լուսաւորչի սար 115

Խ

Խանածախ գիւղ խաչենի . 152, 154
Խանապատ գիւղ 165
Խանձք գիւղ 158
Խանքեանդի աւան . . 151, 152
Խաշտարակեցի Գևօրգի . . . 139
Խաչակապ գիւղ . . . 9, 288
Խաչատուր եպիսկոպոս . . 138
Խաչենագետ կամ Խաչեն գետակ 7
Խաչեն գաւառ 2, 3, 4, 6, 20, 24, 151, 199
Խաչթարակ գիւղ 341
աչմաչ գիւղ . . . 99, 140
Խարմանկուղ 70
Խաւարաձոր շէն 372
Խերխան շէն 108
Խնձրաւան գիւղ . . . 160
Խուդափիրին կամուրջ . . . 62
Խունըշինակ գիւղ 118
Խրամ գետ . . 2, 10, 25, 398, 399
Խրամորթ գիւղ 165

Ծ

Ծակառաշէն 48
Ծակուռի կամ Ծկոի . . . 72
Ծամձոր գիւղ 63
Ծար գաւառ 1, 2, 3, 7, 11, 13, 25, 42, 404, 410
Ծձեր 295
Ծձերի առուակ 10
Ծմակահող գիւղ 183
Ծովատեղ գիւղ և լճակներ . 13, 106
Ծուռ սար (Այրիճա) . . . 10

Կ

Կախեթ 42
Կայենի կամ Ղազախի գաւառ 4, 11, 25
Կարավանսարայ գիւղ . . 11, 342
Կարավանսարայ վտակ . . 10
Կարկաժան գիւղ 151
Կարմիր-աղբիւր 329
Կարմրագուճ գիւղ 69
Կաւաք սար 71
Կաֆա քաղաք Լեհաստանի . . 138
Կևռան Թագուհին Լևոն Թագ. Հայոց 39
Կեփաս ապառաժ սար . . 255
Կեփաս ճգնաւոր 12
Կիշի գիւղ 4, 120
Կիչան շէն (Բալլու զայա) . . 167
Կիսապատ կամ Կուսապատ . 48, 215
Կիրակոս վարդ. վանահայր Եղիշառ 49
Կիրանց գիւղ. 267
Կիւլամբիւր շէն 296
Կիւլստան գիւղ . . . 2, 9, 240
Կիրակոս և Յուղիտա (սուրբք) . 52
Կիւնի-ձարտար գիւղ . . . 117
Կղարծի գիւղ 111
Կոթի գիւղ 392
Կողբ Արար. նահանգի . . . 20
Կողթ գաւառ կամ Շամքոր կամ Ներքին-Զակամ . 2, 20, 23, 55
Կոճողուտ գիւղ 189
Կ. Պօլիս 138
Կռվ (Ինակ) սար 19
Կորկի Մէլիք-Մնացականեան . 38
Կուրակ գետակ . . . 9, 24
Կուր գետ . 1, 2, 4, 5, 6, 9, 16, 25, 54
Կողեն գիւղ 59
Կտուց անապատ 145
Կորիս գիւղաքաղաք Մեծ-Սիւնեաց 25

Հ

Հարանդ կամ Վարանդայ գաւառ 2, 3, 4, 6, 20, 93
Հարուլի, ... 40
Հազարագետ 5
Հաթերք գաւառ, տես Ըստիսական
Հաթերք գիւղ . . 3, 48, 200
Հախում գիւղ 333
Հակարի գետ . . . 2, 5, 25
Հաղարծին վանք 11, 12, 20, 364, 370
Հաղարծին վտակ 10
Հաճի-Սամլու 26
Հաճի քեանդ 271
Համամի ձոր 183
Հանդին ձեռք 10
Հաչա ջուր վտակ 10
Հասան-զայա գիւղ 32
Հասան վտակ 10
Հաւրութ աւան . . 4, 23, 68
Հարաւ գիւղ . . . . , 109
Հարճլանք գաւառ 1, 2, 5, 25, 402, 403
Հարցհանդիստ գիւղ. 34, 45, 55, 291
Հացի գիւղ 124
Հեթում Թագաւոր Հայոց . 39, 41
Հերմոնի վանք Վայոց ձորում . 139
Հիլիս գիւղ 159
Հիրհեր գիւղ 104
Հիւնայ հող 172
Հիւնոտ շէն 133
Հիւքիւրաթաղ 71
Հկակու շէն 73
Հղորդի գիւղ 108
Հնարակերտ ամրոց . 1, 398, 399
Հոռաթաղ գիւղ 216
Հովուի սար Տիգրան. գաւառի . 28
Հուրի տիկին Մէլիք-Եոայուն . 43

Ձ

Ձորագետ, . . . 2, 5, 10, 25

Ղ

Ղաղախ Նոր քաղաք . . 60, 61
Ղաղանչեցւոց եկեղեցի . . 137
Ղաղանչի գիւղ Հին-Նախիջևանի . 74
Ղաղանչի գիւղ Ջրաբերդ գաւառի 213
Ղաղար գղիչ 138
Ղաղար կրօնաւոր 143
Ղահտութ կամ Զէյւա գիւղ . 9, 245
Ղահրիլար կամ Խորոզլու . 32, 34
Ղամշուտ ծով 13
Ղալիբալի գիւղ 151
Ղարաբուլաղ գիւղ Վարանդալի . 93
Ղարաբուլաղ մեծ աղբիւր » . 11
» » » Փառիսոսի 10, 11
Ղարադաղ գաւառ Պարսից . 63, 68
Ղարադաղլու կամ Խանքեանդ գիւղ 53
Ղարամանլու 33
Ղարաչինար գիւղ Կիւլստանի 9, 244
Ղաւախան գիւղ 110
Ղափան (Բաղք Մեծ-Սիւնեաց) . 63
Ղևոնդեանց անապատ . . 6, 92
Ղզ-ղալա գիւղ 4, 122
Ղիլքաղ գիւղ 165
Ղլղլաղ գիւղ 164
Ղոզլու վտակ 5
Ղոթր-բուլաղ 11
Ղոշղոթան գիւղ 382
Ղուզի-ձարտար գիւղ . . . 117
Ղուլալի գիւղ . . . 10, 321
Ղուշչիլար գիւղ 65
Ղուրու չայ 23, 26, 80
Ղրղի (Ղարաղայա) գիւղ . . 327
Ղօշա վանք շէն 349

Ճ

Ճամբարակ-Ներքին գիւղ . 11, 348
Ճանկաթաղ գիւղ . . . 48, 214
Ճգնաւորի հանդիստ . . . 188
Ճչեվանք շէն . . . . , 382

Մ

Մաղան-Նանէ ուխտատեղի . . , 62
Մագի կամուրջ 6
Մահտեսի Ազաջան Խաչատրեան . 37

Մահտեսի Պապա Հախումեան . 145
» Տէր Գէորգ . . . 37
» Քերոբէ Տէր-Մարտիրոսեան 45, 272
Մաղաքիա քահանայ . . 139, 140
Մաղաւուզ կամ Զարտախլու գիւղ 220
Մամատաձոր գիւղ 72
Մայրաքաղաքի հանգստարան . 221
Մալիլեանց Ղահրաման և ծնողք իւր 37
Մանաշիթ կամ Մանուշ շէն . . 251
Մաշատի շէն 108
Մատաղիս գիւղ Ջրաբերդի . 8, 231
Մարալեան-Մարով գիւղ. 32, 33, 34
Մարաղա գիւղ 34
Մարանդ գաւառ 53
Մարդակերտ գիւղ 216
Մարդ. ընկեր, Բագաւայ . . 69
Մաւաս շէն 102
Մեծ Բանանց 278
Մեծ-իրանց կամ Մեծ-Արանց գաւառ, տես Խաչէն գաւառ . .
Մեծ-կողմանք կամ Մեծ-կուանք, տես Նիլստան գաւառ . .
Մեծ-շէն 219
Մեծ-Սաղիր 19
Մեծ-Սիւնիք 1
Մէհմանայ գիւղի ածաքահանք . 18
Մեհրիզատ Մկրտչեան . . . 40
Մէլիք-Ադամ մեծի գերդաստանի անուններն 43
Մէլիք-Բաղի կամ Բաղիր . . 96
Մէլիք-Բէկլեանների ապարան . 229
Մէլիք գիւղ 377
Մէլիք-Իսրայէլեանների Ա. ապարան 213
Մէլիք-Շահնազար-Շաֆուր . . 247
Մէլիք-Ջհանկիր Կազենի . . 59
Մէլիք-Սիմաւոն 45
Մէլիքջանլու 70
Մէյտի շէն 155
Մթնաձոր Ջաւէ գաւառի . . 10
Միլին քաղաք. . . . 68, 69
Մինկեաչէւիր անցք (հուն) Կուր գետի 35
Միրզիկ գիւղ . . . 48, 55, 276
Միրիշալլու գիւղ 127
Մկրտիչ աբեղայ 147
Մոշ-խմհատ գիւղ 91
Մջկապատ (մէջքը պատած) գիւղ 112
Մոխրենիս գիւղ . . . 6, 78
Մովսէս գիւղ . . . 10, 59, 328
Մովսէս կաղականդուացի 2, 5, 22, 23
Մովսէս խորենացի . 2, 23, 26
Մուխանք գաւառ . . 2, 22, 26, 27
Մուղալ-խաթուն և Շամշի-Ղամար 139
Մռաւ անուն մարդ . . . 40
Մռաւ սար. . . 3, 7, 8, 9, 238
Մռաւեան լեռնաշղթայ . . . 24
Մռւէթ գիւղ 272
Մամնայ գիւղ 108
Մրղուղ սար . . 4, 10, 19, 348

Յ

Յակովբ դ. կաթ. Ջուղայեցի . 39
Յակովբ ե. կաթ. Հայոց . 39, 138
Յակովբ վարդ. Թաղլարեցի . . 73
Յակովբ վարդ. Ուզբաշեանց . . 93
Յարարի Ջուր 5
Յարութիւն վարդ, Մռւէթ անապատի 38
Յնդու սար 73
Յովհան գրիչ 42
Յովհան աղա Մնացականեան . 50
Յովհաննէս եպիս. որդի Սուրապի 67
Յովհաննէս կաթ. Աղուանից որդի Ջալալին 140
Յովհաննէս Միրիմանեանց . . 51
Յովսէփ փիլիսոփայ . . . 41

Ն

Նաբաթեան եղբարք . . . 52
Նադիր-Շահ 76, 77
Նախիջևանիկ գիւղ . . . 128
Նահապետ կաթուղ. Հայոց . . 140
Նաւուր գիւղ 19, 330
Ներսէս եպիս (յետոյ կաթ.) աշտարակեցի . . . 37, 49
Ներսէս վերջին կաթուղ. Աղուանից 36, 43
Ներքին-Աղդան գիւղ . . 10, 372
Ներքին-Զայլու 225
Ներքին-Քաղավարդ . . . 89
Ներքին-Ձամբարակ . . . 348
Ներքին շէն Նիլստանի . 4, 9, 245
Ներքին-Սղնէք 99
Նիկղար գիւղ 294
Նիկողայոս աւետարանագիր (Շուշու 138
Նինկի գիւղ 109
Նորագեղ Խաչենի . . . - 164
Նորագեղ կամ Սոի գեղ Ջաւէի . 376
Նորաշէն գիւղ Դիզակի . . 66
Նորաշէն գիւղ Նիլստանի . . 245
Նորաշէն գիւղ Քուստի գաւառ . 329
Նոր-Առաքել գիւղ . . 62, 63
Նոր-Գետաբակ գիւղ . . . 313
Նոր-Գիւլնաբադ 214
Նոր-Դրախտիկ 88
Նոր-Խրխռփոր գիւղ . 9, 62, 243
Նոր-Նորգ գիւղ 384
Նոր-Կունէն գիւղ 377
Նոր-Ղարարսլաղ գիւղ . . . 256
Նոր-Հաչա-Ջուր գիւղ . . . 372
Նոր-Մոխրաթաղ գիւղ . . . 218
Նոր-Շար-Խաչ գիւղ . . . 371
Նոր-Շէն Վարանդայի . . 4, 124
Նոր-Ոսկեպար գիւղ . . . 381
Նոր-Պարան կամ Ապարան . . 383
Նոր-Պարիս 250
Նոր-Պիպիս կամ Ջողազ . . . 377
Նոր-Փիլ աւան . . . 9, 296
Նոր-Ռեաբուկ 129

Շ

Շահ-Բուլաղ, որ է Շահանշահի աղբիւր 28
Շահ-Աբաս Ա. 35
Շահմասուր շէն 183
Շահ-Սիւլէյման 144
Շաղախ գիւղ Դիզակի . . . 64
Շամախի 140
Շամքոր գետակ . . 9, 23, 55, 56
Շաքի և Շրուան (Շամախի) . . 140
Շեխեր շէն 89
Շէն կամ Շինող . . . 10, 387
Շիկաշէն գաւառ 2, 23, 35, 53, տես և Գանձակի գաւառ . . .
Շիկաքար (տես Քարագլուխ և Շիկաքար ամրոց) . . . .
Շինող վտակ 10
Շիրազ քաղաք Պարսից . . . 58
Շուշեցի Աւագ Դանիէլեան . . 147
Շուշի քաղաք. . . 6, 11, 20, 136
Շռւթ գիւղ 131

Ո

Ողբ գիւղ 71
Ոսկանապատ (Ջուռնապատ) գիւղ 9, 48, 55, 272
Ոսկեպար վտակ . . . 4, 9, 10
Ոսկի գուսար Մուսէի . . . 79
Ովանէս (Յովհաննէս) կաթուղ. Աղուանից 37
Որդնաշատ գիւղ Դիզակի . . 69
Ուղուն-քալա գիւղ 339
Ուլուպաղ շէն 162
Ուղուրլու խան Գանձակի . 43, 45
Ուտի Նահանգ . . . 2, 23
Ուտի Առաքելական գաւառ. 2, 21, 23, 29

Զ

Զալազան իւղրաշի 161
Զալապար-Հաճի-կարամ . . 62
Զարարեւդցի Աթանաս վարդապետ 38
Զարտախլու գիւղ Ջրաբերդի. . 48
Զարտախլու գիւղ Փառիսոսի . 321
Զափար շէն 202
Զորաթան շէն 328
Զոչռ մեծ աղբիւր 11

Պ

Պաղկանք կամ Դիզակ գաւառ. 3, 60
Պալլուջա գիւղ 154
Պանագուրցի Ալլահվերտի քոխա . 43

Պանդալիոնի վանք . . . 271
Պանդ կամ Պանդասար . . . 271
Պառաւաթումբ գիւղ . . 4, 111
Պառաւի կամուրջ 225
Պատի գիւղ 321
Պարտաւ Ք. քաղաք Աղուանից 29, 31
Պետրոս կաթուղիկոս Աղուանից 26, 42, 43, 45, 158
Պէշգինայ դոմեր 47
Պլըր-Պուղու գերեզման . . 132
Պիան գաւառ . . . 2, 22, 26
Պլեթանց 70
Պղնձահանք Գետաբակի. . .
Պղնձահանք (Միսխանա) . . } 19
Պղնձահանք Դիլիջանի . . .
Պղնձահանք Խոթա . . .
Պղնձահանք Ղամբասարի . . 18
Պղնձահանք Քարհատի . . . 18
Պտկեսբերք վանք . . . 4, 162
Պտրեցիք գիւղ 156
Պօղոս-Փիլիսա . . . 10, 25, 361

Ջ

Ջարրայէլ գիւղաքաղաք. 11, 22, 61
Ջալալ իշխան Դիզակի և հայր Ախիջանի 67, 68
Ջակիր գիւղ 321
Ջրաղացներ գիւղ 94
Ջամիլլու շէն 152
Ջաւատ-խան Գանձակի . . . 36
Ջարկեալար կամ խոյլուլար գիւղ. 53
Ջիլան գիւղ 63
Ջոխտակ վանք 10
Ջրաբերդ գաւառ . . 20, 213, 239
Ջրակոյս կամ Ջրակուս գիւղ. 5, 72
Ջրաղացի քարահանք Գանձասարի 20, 172
Ջրվշտիկ, կամ Եղիշ առաքեալի վանք 48, 49, 234

Ռ

Ռախտարխանա . . . , 282
Ռև գիւղ 163
Ռևազլու շէն 341
Ռոցպատեան գաւառ . 2, 22, 28

Ս

Սահակ-Սևադայ իշխան Աղուանից 25
Սամուէլ Անեցի . . . 2, 21
Սարգիս Ա. կաթուղ. Հայոց . . 1
Սարգիս և Վրդանէս եպիս. Գուչայ 80, 81, 82
Սարգիս կրօնաւոր . . . 114
Սարգսաշէն 93
Սարդարաշէն 163
Սարով գիւղ Շիկաշէն գաւառի . 53
Սարով գիւղ Ուտի-առանձնակ 33, 54
Սարու շէն գիւղ 100
Սաւարշէ 40
Սեբէոս պատմագիր . . . 28
Սև-քար գիւղ 376
Սև գետակ 4, 9
Սև որդեաց ձոր կամ Երկիր . 25
Սէյսուլան 34
Սէյտի շէն 162
Սիմէօն բարձունի 78
Սիսական-Ոստան կամ Ծար 2, 5, 26 404, 410
Սիւլիւկնածով Նինկի գիւղի . . 13
Սխտորաշէն 103
Սկևռայ ուխտ 39
Սղնախ գիւղ 99
Սոլթանբուտ 28
Սուլթանի կամուրջ . . . 59
Սուլու քար. 161
Սուլուկ գիւղ . . . 48, 55, 269
Սուրբ Կիրակոս և Ցուղիտա . . 52
Սպիտակ շէն (Աղքեանդ) . 1, 120
Ստաթէի վանք տես Տաթևի վանք.
Ստեփաննոս վարդ. Նախավկայի վանից 38
Ստեփաննոս քահանայ սկևռացի . 39
Սրբոց Յակովբեանց վանք Երուսաղեմի 45
Սօս գիւղ 115

Վ

Վէլիջան իշխան Դիզակի (վախթանկեանց ցեղից, որի մասին տես ծանօթ 27) . . . .
Վակունիք կամ Վերին Վակունիք գաւառ . . . 1, 5, 26, 402, 404
Վահրամ Շահ (իշխան) . . 208, 222
Վահրամ իշխան Շամքոր և Ղալաբոյուն բերդերի 19
Վաղաղնագետ 5
Վաղահաս գիւղ 191
Վաղարշակ Թագաւոր Հայոց . 1
Վաղարշապատ 48
Վանական (Յովհաննէս) վարդապետ 324, 328
Վան քաղաք 139
Վանք գիւղ Դիզակի . . . 66
Վանք գիւղ Խաչենի . . . 171
Վասակ եղբայր Աբու-Սեդի . . 182
Վասակ Թագաւոր Մեծ-Սիւնեաց . 1
Վարազաբուն գիւղ . . . 127
Վարանդայ գաւառ 2, 3, 4, 6, 20, 85, 136
Վարդանակերտ գաւառ . 22, 26
Վարդան երէց 139
Վարդապետի տափ . . . 124
Վարնկաթաղ կամ Լիլաստաղ . 225
Վերին-Աղդան գիւղ . . . 346
Վերին-Թաղավարդ գիւղ . . 90
Վերին-Խաչէն, տես Ծար գաւառ.
Վերին-ձամբարակ գիւղ . . 349
Վերին-շէն Կիլստանի . . 9, 246
Վերին-Զայլու 226
Վերին-Սղնէք գիւղ . . . 99
Վիմափոր դիտարան . . . 0
Վնէտայ սար 83
բաստան 42
Տադ գիւղ 66
Տարսոն գաւառ 39
Տաւուշ կամ Թովուզ գետակ 10, 19 24, 25, 59
Տաւուշ կամ Թովուզ գիւղ. . 143, 330
Տաք Ջուր Ծարից ներքև. . . 7
Տաք Ջուր Ծարից վերև . 7, 12
Տեօնմազ հերոս (Դազտնիքի) . 236
Տղրկածով Գօշայ վանի մօտ . . 13
Տղրկածով Լև գիւղի . . . 13
Տէր Մեսրոպ քահ. 40
Տէր Մեսրոպ գրիչ 146
Տիգրանակերտ գաւառ . 2, 20, 22, 28
Տիգրանակերտ քաղաք Հայաստանի 58
Տիրացու Պողոս Ջառապետեան . 49, 51
Տորոս լեռ 39
Տումի գիւղ. 6, 78
Տուչքատակ գաւառ, տես Տիգրանակերտ գաւառ . . . .
Տոի գաւառ 22, 27

Ց

Ցոր գիւղ 65
Ցեց քար, տես Նոր բերդ . .
Ցուցակ աւերակ գիւղօրէից . . 447
Ցուցակ բերդօրէից. . . . 453
Ցուցակ վանօրէից . . . 454, 456

Փ

Փաթալի-Խան ուրմեցի . . . 123
Փահլուլ շէն 152
Փանոս, Մռաւ, Ամիր, ևն . . 40
Փառնէս, Փառիս և Փառիսոս գաւառ 2, 3, 11, 19, 24, 25, 305, 327
Փառիս վտակ. 9
Փառուխ շէն 166
Փասայ վանք Մոգաց . . . 146
Փարաւօն վարդ, Երուսաղէմի . 38
Փաւստոս Բուզանդ. . . . 23
Փեփրոնէ աւագ-սարկաւագուհի Խուբեանց 244
Փիլիպպոս կաթուղիկոս Հայոց . 48
Փիր-ձամալ գիւղ 128
Փոքր-Շահ-Աբաս . . 42, 43, 45

Ք

Քաղամարտիկ Մէլիք Յոսէփ, Քահանայ Հրապետ, Կոստանց Եաւրի, Զավդոն Յարութիւն, Ուստա Բասլաս 242
Քառասնի գիւղ կամ Քառասնի 20, 130
Քարագլուխ գիւղ Դիզակի . . 64
Քարագլուխ գիւղ Խաչենի . 165, 166
Քարահունջ գիւղ 112
Քարաւազի կամուրջ . . . 2
Քարին տակ գիւղ . . . 133, 134
Քարհատ գիւղ Գարդման գաւառի 9, 18, 20, 144, 286
Քարհատի հանքեր . . . 18, 20
Քեաֆուկ սար 4
Քէթի սար 3
Քերթ գիւղ 113
Քերովբէ Տէր-Մարտիրոսեան . 45
Քեօղալան գետակ . . 6, 93
Քիթ սար 3, 11
Քիլիսա-քեանդ (Ս. Յովհաննէս Հկեղեցու թաղ Գանձակի . 35, 36
Քիրս լեռնաշղթայ. . . 6, 23
Քիրս սար 3, 6, 99
Քմքաձոր 224
Քոլատակ գիւղ 168
Քոլատակի Հանգստարան . 168
Քոչրէկ գիւղ 70
Քոչիզ, Քովատեղ գիւղի Նախկին անուններ . . . . .
Քոսի աղբիւր 347
Քուստի կամ Քաւս գաւառ 2, 3, 4, 19, 25, 327, 360
Քրդեվան գիւղ 371

Օ

Օձաձ-Թափէ շէն 224
Օսմանցիք . . . 77, 213, 214

ԱՒԵՐԱԿ ՔԱՂԱՔՆԵՐ ԱՐՑԱԽԻ.

Խաղխաղ քաղաք 58
Պարտաւ քաղաք . . . 29, 30
Բելուկան կամ Բայաթ քաղաք . 28
Շամքոր քաղաք . . . 55, 56
Փառիսոս քաղաք . . 9, 10, 11, 306
Քաղաքատեղ կամ Քաղաք Ջրաբերդի 222, 223

Աւերակ գիւղաքաղաքներ Արցախի.

Աղջապատի.
Լամբարան.
Աղուէ (Այուանդ) 28
Տիգրանակերտ աւերակ աւաններ 11, 20, 28
Բօրում 35
Վափանլու աւերակներ . . . 54
Նազէն 59
Սմարտս 115
Վաճառ 184
Հաթերք 200
Ջրաբերդ 239, 240
Կիւլստանի դալաչան . . . 257
Հին-Գետաբակ . . . 312, 313
Վահրամ իշխանի գիւղաքաղաք 222, 224
Գարդման (այժմ Քրթմանիկ) 301, 302
Հին-Ոսկեպար 381
Բելուկան Բերդաձոր գաւառի (Փարաչան 400
Ծար գիւղաքաղաք եր. 7, 11, 404, 409
Ղալա-Բոյուն (Վահրամ իշխանի) . 326

Աւերակ կամ մահմեդաբնակ հայ գիւղ

Պազկաճի կամ Դիզակ գաւառում.

Գիւղաանվեր Ջարբալէլից Ներքև. 61

Մաղան-Նանէ 62
Հաճի-Կարամ . . . . . —
Հին-Առաքել 63

Վարաճղայ գաւառում.

Մար-Խաթուն 87
Իշխանի գիւղատեղ . . . —
Խզակուց կամ Հալկաղն. . . —
Հանդած եղջի . . . . —
Հին-Դրախտիկ. . . . 88
Հին-Ներքին Թաղավարդ . 89
Ղարալի. 93
Հին-Քեաֆուկ . . . 129
Ննանուն (Խաչմաչի մօտ) . 100
Հին-Քեաֆուկ. . . . 129
Հին-Ղարա-Բուլաղ. . . 229
Սպիտակ-Հէօլ. . . . 129
Զինաւոր . . . . . —
Աղին-գիւղատեղի կամ Նահ . 130
Ներքին-Շէն . . . . —
Սողոմոն-Շէն . . . . —
Ջառխա (Ջարուալու) . . 134

Խաչեն գաւառում.

Վարար-ակն 151
Ջալալ-Հասան (Ջան-Հասան) 154
Շհարատեղ . . . . —
Մլըկիւնց շինատեղ . . . —
Բանուր-Նան շինատեղ . . —
Ալուխանայ շինատեղ . . 155
Թամղի-եղջի . . . . —
Սուրբ Վանէս . . . . —
Մեծ գիւղատեղի . . . 157
Վերայ Նահատակ . . . 158
Ս. Ց. Մկրտիչ Թրաւանդ. . . —
Դարբասի աւերակ . . . —
Օխտը-եղջի . . . . —
Պալէն (Պապին) Շէն. . . 161
Քարագլուխ աւերակ . . 165
Եղջուն խութ 168
Եղջուն խութ Գոմա-կալի . 172
Հարչանաուս . . . .
Նորաշէն . . . . .
Այգեստան . . . . .

Մարդեղ . . . . .
Ձռանց . . . . .
Վարդանաթաղ . . . .
Պառաւաձորի աւեր . . . 180
Համամաձորի աւերակ . . 189
Կարմիր-եղջի . . . . —
Նահատակ . . . . —
Հին-Կոձողուտ. . . 189, 190
Թխախոռ 190
Երի-Հոռաթաղ 191
Ներքի-Հոռաթաղ . . . . —
Ղամշուտ ծով . . . . —
Անտառի աւերակ . . . . —
Հին-Վաղահաս. . . . 192
Մատաղիս Վաղահասի . . 193
Խունկը թալա . . . . —
Վարդանայ գիւղ . . . .
Մրջման շինատեղ . . . .

Ըռստակ գաւառում.

Չկան հաթերքի Նախկին բնակիչք
Քարահունջ 201
Մթնաձոր . . . . . —
Սոխն շինատեղ . . . 201, 202
Ծոս գիւղատեղի . . . . —
Խուտրաշէն . . . . . —
Սրաշէն . . . . . —
Իրիցի շէն . . . . .
Սումին շինատեղ 202
Ականայ աւերակ . . 48, 202
Նախկին բնակիչք Զափար գիւղի. —
Եանշաղ գիւղ 203
Խոթ գիւղ 209
Կանաչատոր գիւղ . . . .
Գրիգորաթաղ . . . .
Գէտամէջ գիւղեր 48

Ջրաբերդ գաւառում.

Գիւլ-Մալիք 214
Կարմիր-Եղջուն խութ . . . —
Մեղրակեր . . . . . —
Յովէփ-եղջի 215
Մեհմանանց . . . 18, 48, 215
Մալաթկան 48

Վերին-Շնաթաղ . . . 48
Ափիտուլա . . . . . —
Սահելապատ . . . . . —
Հատիս . . . . . —
Էյիրլօղա. . . . . —
Երի-Փիլաթաղ . . . 48, 216
Հին-Մոխրաթաղ . . . —
Խաչ-Խուռհատ 218
Եղցաթումբ 220
Հին-մեծ-շէներ . . . 48, 224
Աւերակ շինատեղի . . 231, 232
— մօտ Դիւտակ . . 230
Նախկին Բնակիչք Դոնի-շինի .
Ջոխտակ մատուռ 232
Դաստակերտ կամ Դաստակիլ . 233
Ուղտակաւ կամ Կակայ . . . 48
Թթոտ դիւղատեղի . . . . —
Նախկին բնակիչք Եղակերի . 237, 38

Կիլսաեանում.

Կարմիր-եղցի (այլէ) . . . 242
Ջաքին Նհատակ 243
Հին-Խրխափոր. . . . . —
Լիար դիւղատեղի 246
Քարահունջ (այլէ) 250
Հին-Պարիս . . . . . —
Սբ. Մինաս 251
Թէօղան 252
Բրուտի շէն 254
Կոսի կալ . . . . . —
Աւերակ շինատեղ . . . .

Պարդմաճ գաւառում.

Մրցունիս 266
Նախկին Բնակիչք Բախշիկ դիւղի. 269
Ծակառաշէն 48
Քօշկայ . . . . . —
Համասրաբակ . . . . . —
Շատախ 279
Աւերակ Սուլուքից վերև . . 270
Հաճի-Քեանդ 48
Սորա արևելեան կողմում . . 272
Քեօշք 48
Դաստափոր 275
Ցնծահալ. 48, 275
Գետամիղ (մէջ) . . . . —
Քարխանա (աւեր դիւղ) . . 277
Սուլթանեցիք. . . . . .
Պալլուջա (Դաստափորի մօտ) . 276
Փոքը-Բանանց 286
Խաչ-Բուլաղ 287
Բախշիկ աւեր 294
Կիւլամբիւր 296
Սվրեցիք 299
Ներքին-Ղօթիւլ 319
Հին-Փիփ դիւղ 300
Աղիւսաշէն 301
Սրբլթան 302
Գարդման աւան . . . 301, —
Դդում-բլուր . . . . . —
Աղի շէն 303

Փառիսոս գաւառում.

Փիր-Նազար (Այցելու սբ.) . . 305
Տանձուտ . . . . . —
Ղարա-բուլաղ . . . . . —
Սարէթ-կէչմազ . . . . . —
Ջալ-Դաղ . . . . . —
Գեարդեար (Գարդար) . . . . —
Փոքր-Ղարամուրատ . . . . —
Մեծ-Ղարա-Մուրատ . 10, 308, 309
Փնդխլու 310
Սուլթանէ . . . . . —
Փոքր-եկեղեցի և դիւղ . . 311
Մէլիք-Ջաուէ աւերակ . . . --
Անանուն . . . . . —
Փարայ դիւղ . . . . . —
Շաքար աւեր. դիւղ . . . —
Աղ-քիլիսա (ապիտակ եղցի). . —
Այլ դիւղ կարմիր վանքի մօտ . 312
Բարաջան դիւղատ. . . . . —
Շմեղ . . . . . --
Ջոխտակ-եղցի. 315
Տանձուտի Ս. Ստեփան . . . —
Սլաւեանկայ . . . . . —
Միրանաւոր 317
Բլովիկ 324

Ղազանչի 58
Քեշիշ-քեանդ . . . . . —
Զիրքինլու 324
Խոշաջի . . . . . —
Աղ-բուլաղ . . . . . —
Իրիցի շէն . . . . . —
Սղնախ . . . . . —
Զինարի . . . . . —
Եկեղեցաձոր (Քիլիսա-Դարա) .
Անյայտ անուն աւերակ .

Քուսի գաւառում.

Ղարա-դայա 327
Զօրաւոր . . . . . —
Ոլորուտ կամ Շլորուտ . . . 328
Նախկին բնակիչք Տաւուշ դիւղի . 330
Զինչին 331
Ղոզանա 332
Նախկինք բնակիչք Հախումի . 333
Շամուրատ աւերակ դիւղ . . 336
Քարադիւզ . . . . . —
Աղ-սու . . . . . —
Խաչ-բուլաղ (այլէ) . . . —
Զինարի (այլէ) . . . . —
Ա. աւերակ Սրվեղի մօտ . . 341
Բ. — — — . . —
Գ, — — — . . —
Ընդարձ. աւերակ Ռևազլուի մօտ . 341
Ղամիշ-կեօլ 342
Նախկին բնակիչք Կարավանսար. 342
Խոզ-մարադ 346
Նախկին բնակիչք Վերին-Ադանի —
Այլ աւերակ դիւղիս մօտ . . —
Սալա դիւղ 348
Գետաշէն Թարսա-չայի մօտ . . 346
Աւեր. դիւղ Վերին.ձամբարակի մօտ 349
Ուռեանջ 355
Տղրկածով . . . . . —
Աղ-քիլիսա . . . . . —
Հին-Շար-Խաչ 356
Աշուղի գիւղի աւեր . . . —
Նախկին բնակիչք Դիլիջանի. . —
Եղցու Թալա . . . . . —
Դիլի աւեր. դիւղ . . . . —
Բախտիարի դիւղատեղ . . . 357
Աւեր. Երզեվանք բերդի մօտ . —

Ջաւէ գաւառում.

Ղուշ-դողան 361
Մաթոսի դիւղատեղ . . . 363
Աւերակ Պօղոս քիլիսայի մօտ . 361
Հաղարծին դիւղատեղ . . . 371
Հախկախլու 371
Հին-Պիպիս 376
— Հաչա-ջուր 373
Քոլամիջի-Խաչ 376
Հին-Կունեն 377
— Ոսկեպար 381
Աւեր. Առաքելոց վանքի մօտ . 379
— Կիրանց — — . 380
Ջոխտակ եղեցի 382
Հայկական աւեր. Նոր-Ոսկեպարի հիւսային հանդէպ . 382
Մին-Պարան 384
Մկնաձոր . . . . . —
Վանք. աւեր. դիւղ . . . 386
Հին-Կողբ , ... 387
Տաւարա եղցի. . . . . —
Սուրբ Առաքել. . . . . —
Վարդի դիւղ . . . . . —
Բարսամ դիւղ. . . . . —
Ս. Աստուածածին մատուռ և աւերակ դիւղ 384
Նախկին բնակիչք Շինողի . 387, 388
Ղարախանի հանգստար. և դիւղ . 389
Սկեղցու ղաշ . . . . . —
Ղարա-քեօփուկ . . . . . —
Թեղուտ . . . . . —
Զորագեղ. . . . . —
Ուղտքամակ ձոր . . . , 390
Ուլաշլու. 391
Տարկևին . . . . . , —
Ձալու . . . . . —
Զոլի գերեզման . . . . . —
Ղևասի դիւղատեղի . . . —
Դամիրչիլար . . . . . .
Սալահլու. . . . . .

աւերակներ Սալահդուի և Աղտաևի մէջ

Բերդձոր գաւառում.

Դիրի աւերակ 400
Թոմաս — . . . . —
Բաշարաթ . . . . —
Հին-փոքր-Թաղլար . . . . —
Հորնաւուտ . . . . —
Հատք . . . . —
Դաշտահատք . . . . —
Զէք . . . . —
Փարաջան . . . . —
Հին-Մեծ-Թաղլար . . . . —
Եաւրին խութ . . . . —
Երկաթաւոր (Դամիրլու) . . . —
Սահեիան (Սաֆիան) . . . —
Թոմասլու (այլէ) . . . . —
Ամուտուկայ . . . . —
Խոջիկ . . . . —
Պատար . . . . —
Սարդիս . . . . —
Ջղջիկ (այժմ Ջաղջիկ) . . . —
Սպիտակ շէն . . . . —
Ջամին դիւմ (դոմ) . . . . —
Գառնակաշ . . . . —
Հակարի . . . . —
Գետաշէն (Զայլու) . . . . —

Հարճլաճիք եւ Վակունիս գաւառ.

Զերդի 403
Տիկ . . . . —
Բարա դէմ . . . . —
Նիլջան . . . . —
Նորաշէն (Ենկիջա) . . . . —
Ղարաչամ . . . . —
Արտաշաւի . . . . —
Վաղագին . . . . —
Հաճար (Հաճի) . . . . —
Հոչազ . . . . —
Հաճի-Սամլու . . . . —
Առաջնորդապատկան (Խալիփալլո —
Ջրացան (Սուաթ) . . . . —
Մալջանլու . . . . —
Հաթամլար . . . . —
Հարճլանք (Հաճիլար) . . . —
Զորման . . . . —
Շամ-Քեանդի . . . . —
Կառապանի (Կարաբանի) . . —
Կեռաչանի (Կարաչանի) . . —
Լիլօ-Բաղր . . . . —
Մաղազործ (Ալակչի) . . . —
Թուրքիշան 403
Շուքրան . . . . —
Աղան . . . . —
Ասրիկ . . . . —
Վակունիք . . . . —
Սպիտակ-շէն (Աղջա-քեանդ) . . —
Ալուխան . . . . —
Սև.-Հանդ . . . . —
Սև-քար (Ղարա-Դաշ) . . . —

Սիսական գաւառում.

Լև դիւղ եր. 8, 13
Ջամիլ 404
Եղջերուագոմ . . . . —
Դարբնոց (Դամիրչիլար) . . —
Աղալար . . . . —
Քիլիսա-քեանդ . . . . —
Ղամիշլու . . . . —
Զիլքին . . . . —
Սլլահվերտի . . . . —
Շահ-քեանդ . . . . —
Հանդաբերդի դիւղ . . . . —
Զափնի . . . . —
Քիլիսալու . . . . —
Քիլիսալու . . . . —
Ալխասլու . . . . —
Զալ-քեանդ (Գէտամէջ) . . . —
Քալուաջար . . . . —
Բաշ-քեանդ . . . . —
Միլլի . . . . —
Ջոմարդ . . . . —
Շահ-դամ . . . . —
Հաճի-Բարա . . . . —
Շոռթկան . . . . —
Խաչ-պարան . . . . —
Ռուլուխան . . . . —

Սրբատուն (Փիր-խանա) . . 404
Թարխանլու . . . . —
Հայոց-ձոր (Խալիւտցոկ) . . —
Շիպագիւղ (Զակլիկ) . . . —
Կայծահան (Զամամա) . . . —
Ջրիլ դիւղ Ծարայ եր. . . 11 —
Ղարա-Խաչ . . . . —
Ճրագ (Զիրախ) . . . . —
Մամատ-Սաիի . . . . —
Տաք-Ջուր . . . . —
Բաղարսաղ . . . . —
Իրիցի շէն եր. . . . 13 —

Ծուցակ բերդօրէից

Մուխաճիճ գաւառում.

Աւերակ Բերդ. 27

Տիգրանակ. գաւառում.

Սոլթանապատ հողեայ բերդ. . 28

Ուտի առաձն. գաւառում.

Պարտաւ Ջ. 29, 30

Ճիկադէճ գաւառում.

Հին-Գանձակ. Ջ. . . . . .

Կողբ գաւառում.

Շամքոր Բերդեր. . . . 55, 56
Շահ Փեքեար դղեակներ . . 58
Հողարերդ Կողնի մօտ . . 59

Դիզակ գաւառում.

Վէլիջան իշխանի բերդ . 82, 83
Վնէսայ դալայ 83
Դող աւանի բերդ 77
Դող կամ Քիթիշ բերդ . . 83, 84
Դիզափայտի բերդ. . . . 85

Վարաճոայ գաւառում.

Բերդաճոնջին դալա . . 134, 135
Աւետարանոց . . . 96, 135

Ղալին խութ 135
Աղջկայ բերդ . . . 135, 136

Խաչեճ գաւառում.

Շիկաքար 197
Պարեցիք դիւղի հանդէպ . . 157
Ուղու-պապ 197
Կաչաղակաբերդ . . . 197, 198
Խոխանաբերդ 198
Նատարին-դալա 199
Աղուանք 198
Անուան բերդակ Առաջաձոր դիւղի մօտ 199
Խաթրայ Բերդ . . . . —

Ըռստակ գաւառում.

Հաւքախաղայ 211
Հակառակաբերդ 212
Հաթերք դղեակ . . . . —
Ականայ ամրոց . . . 212, 213

Ջրաբերդ գաւառում.

Բաղտքատեղի 222
Ջրաբերդ 239, 240
Հին-Մոխրաթաղի դղեակ. . 217, 218

Կիւլտաճ գաւառում.

Ուրեկայ ամրոց . . . 229, 230
Բերդ Մելիք-Բէկլեաններուն . 256, 257
Ղալաչա դղեակ 257
Զափարի դալա . . . . —

Գարդման գաւառում.

Ղալա անուն բերդակ . . . 303
Մածնաբերդ կամ Մլղնաբերդ . 304
Մլղնաբերդ վանքի ամրոց . . 293
Կեռատավանք բերդ . . . 304

Փառիսոս գաւառում.

Փառիսոս բերդ . . . 10, 324
Հին-Գարտեակ 312

Մամռուտ կամ Զարէք . . . 326
Վահրամ իշխանի բերդ . . —
Ղըզ-ղալա (Շամիրամի դղ. . . —

Քուսի կամ Քաւս գաւառում.

Երգեվանք Բերդ 357
Տաւուշ կամ Թովուզ . . 357, 8
Կածարեթ դղեակ. . . . 358
Դռըկեան (Տէրունական) . . —
Ցից-քար (Նոր-Բերդ) . . . 359
Ճշաքար . . . . . —
Ղըզ-Ղալա 359, 360
Շնքար կամ Սղնախի ձոր . . 360

Ջաւէ գաւառում.

Նոր-Շար-Խաչի Բերդակ . 392, 393
Մանթաշ-ղալա . . . 393, 594
Մթնաձոր 394
Կայենի բերդ . . . . . —
Բերդաքար 295
Գաւարդին . . . . . —
Գադայ բերդ. 396
Բերդատեղ . . . . . —
Բերդադիւղի դղեկ. . . . 397
Ղեասի (Ղուկասի) բերդ. . . —
Շինող բերդ 397, 398
Բորչալուի բերդ 398

Բերդաձոր գաւառում.

Ամու (ր) տեղ ամրոց . . 401, 2
Թովաս բերդ 402
Ղալալու բերդ . . . . . —
Խցաբերդ . . . . . —

Հարճլաճի եւ Վակուճիի գաւառներում.

Ղըզ-ղալա 404

Ծար գաւառում.

Ծար 409
Ղըզ-ղալա . . . . . —
Հանդ-աբերդ 409, 410

Ցուցակ կաճգուճ, կիսաւէր եւ աւերակ վաճքերի եւ մատուռների

Դիլգակ գաւառում.

Սպիտակ տղայ մատուռ . . 65
Անապատ կամ Ս. Լուսաւորիչ . —
Հանդին ձեռք մատուռ . . . 64
Սպիտակ խաչ վանք . . . 66
Կուսանաց անապ. Դողայ . . 77
Գոիչ կամ Դուչայ վանք . . 80
Կաւաք (Յակովք և Իրաւախ) . 71
Դիզափայտ մատուռ . . . 85
Կարմիր եկեղց. Տումու. . . 79

Վարաճկայ գաւառում.

Բրդահոնջին եղցի 90
Ջոխտ-Պառաւածառ . . 90, 91
Կախան 88, 89
Ջոխտակ եղցի 91
Ղևոնդեանց անապատ . . 92, 93
Կուս. անապատ Աւետար. . 95, 96
Շօշկայ վանք 100
Բողրխանայ (Պրոխորոնի) վ. . 109
Մամախէի վանք 103
Սուրբ Լուսաւորիչ 111
Ամարաս վանք . . . 113. 114
Եղիշայ կուսի վանք . . 115, 116
Ջարկեա մարագ 121
Մեծ-Նահատակ Ղըզ-ղալի . . 124
Փոքր-Նահատակ Ղըզ-ղալի . . 123
Բոի եկեղեցիք . . . 124, 125
Աղին Նահատակ 131
Սպիտակ-հեօղ 129

Խաչեն գաւառում.

Ամենափրկիչ եկեղեցի . . . 157
Սուրբ Վանէս Պալուջայի . . 155
Օծկայ վանք 157, 158
Պահեսբերք վանք . . 162, 163
Անապատ Կիչանի 167
Կոշիկ անապատ . . . 168, 169
Սուրբ Յակովբ Մեծ-իրանաց. 169, 170
Հաւապատուկ 181

Գանձասարայ վանք . 20, 172, 180
Ս. Սահփաննոս Վաճառի . 184, 185
Անապատ առաջաձորի . . . 188
Ամենափրկիչ Կոճողուտի . . 190
Խորատանայ մատուռ . . . 190
Մայրաքաղաք Վաղահասի. . 191, 192
Կարմիր-վանք 193
Վահին մատուռ . . . . —
Խաթրայ վանք . . . 193, 196

Ըռասական գաւառում.

Աստղարլուր 201
Դատի կամ Խոթա վանք . 203, 210
Մշահանի վանք 211
Շուքավանք 201

Ջրաբերդ գաւառում.

Իննմասանապատ . . 216, 217
Հուրեկայ վանք . . . 228, 229
Երից մանկանց վանք . . . 232
Եղիշ-Առաքեալ վանք . . 234, 237
Ողտի մատուռ 237
Մռաւի սուրբ 238

Կիւլսաեան գաւառում.

Ամենափրկիչ վանք Կիւլստանի . 242
Դատի-Ռէկանց վանք . . . 243
Ջաքին Նահատակ . . . 243
Կողեր աւեր. վանք . . . 244
Իրեք-մանկունք աւեր. վանք . 246
Նահատակ Հին-Պարիսի . . 250
Նահատակ Մանուշի . . . 252
Թեօդանի մատուռ. . . . —
Անապատ-Հին-Ղալա-Բուլ. գիւղի . 254
Միջի վանք . . . . . –
Երի-վանք-Ղալա-Բուլ. գիւղի 254, 255

Գարդմանի գաւառում.

Եղնաասար վանք . . . 265, 266
Աւազ-Սուրբ-Նշան . . . 259, 264
Անապատ 264
Սուրբ Յովհաննէս ուխտատեղի . 269
Սուլուկի վանք 270
Պանդալիոնի վանք . . . 271
Ովասաի մատուռ 276
Քեօշկ մատուռ 272
Ս. Աստուածածն. վանք Ոսկանապ. 275
Ս. Պարգսի վանք Ոսկանապ. . 275
Քեարխանաց վանք . . 276, 277
Թարգմանչաց անապատ Մեծ-Բանանց 285
Նահատակ 286
Խաչ-քցի մատուռ 288
Երրանաւոր մատուռ . . . —
Կանդնեալ-Խաչ մատուռ . 287, 288
Հնաշէն վանք սուրբ մօտ . . 288
Թարգմանչաց վանք . . 288, 291
Մլզնաբերդ վանք . 43, 45, 293
Վակաթել մատուռ . . . 293
Պահեսբերք մատուռ . . . 294
Ամենափրկիչ վանք Նիկզարի 294, 295
Հոռոմաշ. Կարմիր եկեղ. վանք 295, 296
Մաղթում-զատէ 300
Բուսկան Նահատակ . . . —
Օխտը-եղցի-Քարահերձ . . . 301
Բարսում ձգնաւոր . . . . —
Սրբլխոն (Սրապիոն) . . . —

Փառիսոսի գաւառում.

Փիրնազար 305
Փառիսոսի վանք . . . 305, 306
Կիսատեր անապատ . . . 309
Ս. Յովհաննէս մատուռ . . . 308
Ձգնաւորի գերեզման. մատուռ . —
Խամշի վանք . . . 309, 310
Կարմիր վանք. 312
Զարեքայ անապատ . . 313, 314
Կուսանաց անապ. . . . .
Հարանց անապ. Ղ. Մուրադ . . 314
Ս. Սարգիս մատուռ . . . 313
Զարեք անապատ 144
Հարանց մատուռ 314
Խունիսայ վանք 314
Ծաղկոց վանք 316
Հրեշտակապետաց վանք . 316, 317
Նահատակ Գառ 317
Ա. վանք Բարսում գիւղ. . . 318

Բ. վանք Ս. Հռիփսիմէ . . 318, 319
Ոսկան Նահատակ-Բուլան . . 321
Խորանաշատ վանք . . 322, 324
Ս. Կիւրակի մատուռ . . . 324
Վանական վարդի բնակ. մօտ . 324

Գուսպի գաւառում.

Կապուտ վանք 332
Շամուրատայ վանք . . . 334
Վարագայ Ս. Նշան վանք . . 336
Բարձրեալ մատուռ Զորաթան . 328
Ս. Սարգիս մատուռ բերդի . . 330
Վանական վարդապետի քարայրն 328
Աւագ. Ս. Նշան մատուռ. . . 330
Ս. Կիւրակէ մատ. Տաւուշի. . . 331
Ս. Գէորգ մատ. Տաւուշի. . . —
Մատուռ վարագայ վանքի մօտ . 338
Սրվեզ վանք . . . 340, 341
Ս. Նշան մատուռ 341
Մորոյ Մորոյ կամ Մռավզի վանք . 342
Ս. Գրիգոր մատուռ . . . 346
Ս. Կիւրակէ Մատուռ Վերին-Աղդն. 347
Անանուն մատուռ սոյա մօտ . —
Անապատ Մրուզի մօտ . . . 348
Գօշայ վանք 349, 254
Ս. Գրիգոր վանք. 351
Ս. Կարապետ վանք . . . 252
Հոգին Ս. մատուռ. . . . 355
Ս. Հրիփսիմէ մատուռ . . . 354
Հին-գեաիկ վանքի աւերակն . 356

Ջաւէ գաւառում.

Ջոխտակ-վանք, . . . 361, 363
Ս. Գրիգոր վանք . . 10, 361
Պետրոսի վանք 362
Հաղարծին վանք . . . 364, 370
Ս. Սարգիս մատ. Պօղ. Բիլիս. . 364
Երէք մատուռ ի Հաղարծին . . 370
Մակարայ վանք . . . 373, 376
Նահատակ մատուռ . . . 373
Ս. Յովհան. մատուռ . . . —
Մակարայ վանքի մատուռ . . 375
Պիպիս ուխտատեղի . . . 376
Ս. Աստուածածին մատուռ . . 377
Առաքելոց վանք 378
Կիրանց վանք . . . 379, 380
Դեղձնուտի վանք . . . 380, 381
Սամսոնի վանք 381
Վիճակ Ս. Սարգիս վանք . 382, 383
Ս. Կիւրակէ մատուռ . . . 383
Բարձրեալ մատուռ . . . 386
Ս. Նշան ուխտատեղի . . . 385
Ս. Աստուածածին վաճ. . 385, 386
» » մատուռ . 384, 385
Միխթար վարդապետի մատուռ . 387
Մանուսեի վանք 389
Բուրայ եղցի . . . . —
Շինու սարկաւագ . . . . —
Ս. Յակովբ. մատուռ . . . 390
Ձգնաւորի գերեզման . . . —
Օղարկու մատուռ 391
Ամենափրկիչ մատուռ . . . 392
Աւերակ մատուռ 394
Գագայ Ս. Սարգիս վանք (մատուռ) 396
» » Սարգսի մօտ Ս. Կիւրակէ 696

Բերդաձոր գաւառում.

Ամու տեղի մատուռ . . .
Թոմաս Բերդի եկեղեցի . . 400
Ղալալու Բերդում աւեր. մատուռ . 402
Վար գաւառում. . . .
Ս. Աստուածածնայ Վարայ 20, 409
Փոքր վանք Վարայ . . 407, 403
ս. Սարգիս մատուռ Վարայ . . 405
Բ. Ս. Սարգիս մատուռ Վարայ . —
Ս. Գրիգոր մատուռ Վարայ . . 407

ՅՈՒՑԱԿ ՔԱՐԱՅՐԵՐԻ

Վարաճդայ գաւառում.

Վծախաչ (Շմանէք) քարայր. . 87
Որվան Աղոխի մօտ . . . 88
Հիւնուսի կարան 133
Աւանայ կարան (քարայր) . . 134
Ակիքսանայ կարան (քարայր) . —
Նուղունիկի — — . —

Խաչեն գաւառում.

Վակ-քար 154
Շիկաքարի 3 քարայրներ . . 167

Ղուսակ գաւառում.

Հաւքախաղաց Բերդի քարայր . 211
Դիտարանի քարայր . . . 210

Գարդմաճ գաւառում.

Քարահերձ 301

Փառիսոս գաւառում.

Ձգնաւորի քարայր . . . 117
Վիմափոր քարայր Փառիս. Բերդի
քեփսում 326
Մամռուտ Բերդի քարայրներ . . —

Գուսպի գաւառում.

Վանական վարդապետի քարայր . 328
Լաչին-Ղայալի ձորի քարայրներ . 348
Գէորգ Ձգնաւորի քարայր և գե-
լեզման 35
Կածարևքի քարայր . . . . —
Ձլաբար 359
Շնքար կամ Սղնախի ձոր . . 360

Ջաւէ գաւառում.

Խաղինա քարայր Հաղարծնի . 370
Ղևասի քարայր 397

ՁԵՌԱԳԻՐ աւետարան 100 հատ, տատուածաշունչ 2 հատ, ճաշոց 1 հատ, յայսմաւուր 1 հատ, մաշտոց 3 հատ, Սարգիս-Չնորհալի 1 հատ, մեկնութիւն նարեկի 1 հատ, բացատրութիւն Հայոց սիմեոների 1 հատ, ընդհանրական Ներ. չնորհալու 1 հատ, մարմնամարզութիւն եւ երաժշտան 1 հատ, բացատրութիւն յաւուրք եւ հասարակ անուանց 1 հատ, թարգմանութիւն ի պարսիկ բառից 1 հատ, իրատ Պլուտարքոսի 1 հատ, Քարոզ գիրք 1 հատ, չարական 1 հատ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ...

ԱՄՓՈՓԱԴՐԱԿ

Գիւղ.	Տուն.	Մարդկանց թիւը							
		Ընդհանուր.	Արական.	Էգական.	Ամուսնացած.	Այրի.	Ապրող ծնողներով.	Ծնեցեալ.	Գիւղացի.
Ուտի Առանձնակ	8	1320	410	8	14	20	8	8	4
Գանձակ քաղաք		4751	1600	103	138	226	103	4	12
Շիկաչէն գաւառ	3	321	150	3	8	12	3	3	1
Կողբ »	1	90	30	3	3	3	1	1	
Վարդան պրպատեան		121	60	2	2	6	2	1	1
Զարդալէն »		73	21	1	1	3	1		
Վրկան գաւառ	33	8772	2051	52	69	127	32	32	24
Վարդանայ գաւառ	61	24,193	7003	181	201	500	58	66	66
Շուշի քաղաք		8729	3056	170	179	283	5	16	16
Ջրաբերդ գաւառ	36	8292	2395	109	150	355	29	21	21
Ջրաբերդ »	2	404	82	2	2	8	2	1	1
Կիւրինեան »	29	4712	1430	40	67	171	16	15	15
Վարդանեան »	13	3048	679	29	37	84	12	10	10
Վարդ ձոր »	16	7097	1717	90	90	276	14	13	13
Փառիսոս »	8	4957	1051	71	77	211	8	8	8
Գաւս »	20	8647	1305	70	87	200	21	19	19
Ջաւէ »	25	107,15	1921	71	90	215	27	26	26
Հերդաձոր »	5	2544	607	31	40	110	4	5	5
Հարթլանք »	1	372	80	4	5	8	1	1	1
	251	99,158	25,648	1012	1254	1716	246	243	243

ԿՈՒՅՆ

ԲԱԺՆ.	ՏՈՂ.	ՍԱՀՄԱՆ.	ՕՐԻՆԱԿ.
Բ.	5	Զօր օրինակ	Զար օրինակ
19	35	Հաստատութիւնք	Հաստատութիւնք
28	31	Անկանիս	Անկանիս
39	6	Ընդհանուր	Ընդհանուր
39	12	Պահեստական	Պահեստական
41	12	Հայր	Հայր
51	4	Հարստահարիչ	Հարստահարիչ
52	2	արեան	արեան
65	Ծ ա ր ա ֆ.	տա վիպակ	տա վիպակ
69	16	Մխ	Մխիթ
75	10 11	փրկիչ Ճշմ.	Ճշմ.
81	15	ոնաց	Ի գործ (հսկիչ)
91	13	Խզ խիզ	Խզ ի ջուր հզ
91	32	Լ՝ձգ	Լ՝ձգ
93	9	Փրկիչ Լ՝ձգ	Ընկոյզ ի ձառ
94	4	Ճանապարհ	Ճանապարհ ի գործ
95	11	Նյ գրչէ	Նյ գրչէ
104	32	Հաստատմէ	Հաստատուն
120	15	Հաստատուն չև	Հաստատուն չեմ
125	8	Ծամբոց	Ծամբայ
125	28	Հաստատ	Հաստատ
127	8	Հիմիայն	Հիմիայն
132	15	Ճաստատ	Ճաստատ
134	3	Ընտրատարդը	Ընտրատարդի
151	32	Ընդունը	Ընդունի
156	33	Փրկիչ վերջ	Փրկիչ վերի
160	15	Ընդհատեցին	Ընդհատելին
164	2	Կորպեցին	Կորպեցի
164	23	Դանդատարդը	Դատարդի
169	32	Որ ատեաստուն	Երկրին որ ատեաստուն
170	26	Ընդունը	Ունին
172	21	Հատիր	Հատուկիր
180	29	Ճաշատարդ	Ճաշատարդ, որ
188	Ծ ա ր ա ֆ.	Ստաւ	Ստաւր
188	32	Տեսչութեան	Ընկոյզ ի վերջին
194	99	Ընկոյզ	Ջատիր
195	28	Հարձակարար	Ընտիր, արկեցուցանող ի գործ
196	21	Իրիկուայ	Ի գործի իշխանի
196	—	Ոչ.	Ոճ.

203	29	Կամ Գոթայ	Կամ Խոթայ
206	30	Ջամրականին	Ջաւրականին
224	7	Դևծ	Դեռ
324	2	Ծանօթ. ինչ	ինչ ինչ պարադայում
225	2	30, 114	30, արւական 114
225	23	Շինողն	Շիննել տուողն
241	24	Որ այն սոյն	Աւելորդ է այն
249	16	Բէկը	Բէկն
252	18	Փոքր ինչ վերև	Փոքր ինչ վերև կայ
258	5	Գետակների	Գետակների
258	Ծ ա ն օ թ.	Ըռստակի	Ըռստակ
261	3	Գրութիւնից	Գերութիւնից
262	27	Հաղբատամալ	Հաղբատայ
264	2	Նոյն	Նոյնպէս
266	18	Ազարի	Ազարի
267	18	Տրոպ	Տրուպ
268	21	Շարականոցներտ	Շարականոց երեւ
275	5	Կառուցեալ	Կառուցեալ
276	3	Է.	Ե.
279	7	Ոչ հանդիպողք	Ով հանդիպողք
280	10	Աշխարհն	Աշխարհս
283	11	Ոչ	Աւելորդ է ոչ բառս
283	13	1796	1797
285	5	Ամալի	Ամալի է
286	10	Փոքր բանանց	Փոքր, Բանանց կամ
287	30	Ար. ծն. 11	Պակաս է իգ. ծն. 11
290	25	Կանն	Խանն
292	9	Ար. ննջ. 15	Ար. ննջ. 12, իգ. ննջ. 15
293	20	Նալչագաիան	Նալչագարեանց
294	24	Իգ. 323	Իգ. 313
308	28	Ալէմ	Ալժմ
315	10	Սլաւեանկայ	Սլաւեանկա
315	Ծ ա ն օ թ.	Ալոց	Հայոց
316	25	Հարաւալկն	Հարաւային
317	19	Շատ հանդիսաններ	Աւելացնելու է Ա հ ա այս է Հ ա բ ա ն ց ն, որ սխալմամբ տեղափոխուած է տակի տողն
317	20	Ձդնարան	Աւելորդ է. Ա հ ա այս Հ ա բ ա ն ց ն
321	7	Սուրբ Աստուածածին	Պակաս մնացած է, ծ ա ծ ք ն
332	6	Հախում վտակ	Հասան վտակն
332	22	Արհաննն	Արհասան
333	24	Զական	Զակամ
342	21	Վասն	Վասն ի հայր Յովհաննէս
343	1	Աղատև գետակի	Աղատև գետի
351	8	Ոչրս	Զորս
354	6	Ագթին	Գաւթին
356	18	Հին գետակի	Հին Գետակայ վանքի

357	20	Կիճի	Կիրճեր
357	25	Ավը	Ավի
359	33	Պարապով	Պարսպով
362	26	Ի տուն	Եռուն
366	8	Մերին	Մերին
367	17	Զսուրբ Խաչն	Զսուրբ Խաչի
372	29	Գետակի	Գետի
		Առուտկներ	Առուտկների
379	20	Վերքի	Վանքի
387	23	Եկան	Եկած
391	24	Բերքերին	Բերքերն
		Ձեանք	Կեանք
392	18	Իմ	Մի
392	18	Ըորելով	Փորելով
395	12	Կա	Կամ
400	27	Ծակարի	Հակարի
403	25	Թրքաչվան Թուր	Թուր քաղող
410	10	Եռելու	Եփելու
412	5	Մարթառ	Թարթառ
413	7	Գաշտ	Դաշտ
413	19	Դւ	Եւ
420	19	Խաղռազ	Խաղխաղ
425	34	Վախթական	Վախթանկ
427	4	Թագաւորներն	Թաթարներն
428	17	Կեր	Կիր (ակոս)
428	20	Իր	Ին

ՀՀ Ազգային գրադարան
NL0353447